Հավելված 1
ՀՀ Արագածոտնի մարզի
Ապարան համայնքի ավագանու 2026
թվականի հուլիսի 24-ի թիվ 152-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԱՐԱԳԱԾՈՏՆ 1

Ք. Ապարան, գ.գ. Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ,Ծաղկաշեն, Կայք, Հարթավան, Ջորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ, Քուչակ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԵՎ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԵՐ

Պատվիրատու՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պատվեր՝ *N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/37-1*

ՏՆՕՐԵՆ՝ Ա.ՀԱԿՈԲՅԱՆ

Երևան 2020-2022

ԳԻՐՔ 1
ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ
Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ 7

Գլուխ 1 11

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ 11

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ 11

1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը 11

1.2. Բնակլիմայական պայմաններ 14

1.2.1. Կլիմայական պայմաններ 14

1.2.2. Բնական պայմանները և հարստությունները 14

1.2.2.1. Կլիմայաբուժության պայմաններ 15

1.2.2.2. Ռելիեֆի նկարագիրը 15

1.2.2.3. Զբոսաշրջության ռեսուրսները 16

1.2.3. Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները: 16

1.2.4. Օգտակար հանածոներ 18

1.3. Ջրային պաշարներ 25

1.4. Ինժեներաերկրաբանական պայմաններ 26

1.5. Էկզոգեն երկրաբանական երևույթներ 26

1.6. Հիդրոերկրաբանական պայմաններ 26

1.7. Ինժեներաերկրաբանական շրջանացում 26

1.8. Ջրագրություն 28

1.8.1. Գետեր 28

1.8.2. Լճեր, ջրամբարներ 28

1.8.3. Ջրամբարներ 29

1.8.4. Ջրանցքներ 32

1.8.5. Ջրվեժներ 32

1.8.6. Աղբյուրներ 33

1.9. Գեոմորֆոլոգիական պայմանները 33

1.10. Երկրաբանական կառուցվածքը 33

1.11. Սեյսմատեկտոնական պայմանները 34

1.13. Բնակչություն և ժողովրդագրության վերլուծություն 37

1.14. Տրանսպորտ 39

1.15. Ջրոսաշրջություն 40

1.16. Հուշարձաններ 44

1.17. Քաղաքային զարգացում 45

1.17.1. Կրթական հաստատություններ 46

1.18. Տնտեսություն 47

Գյուղատնտեսություն 50

Ջրոսաշրջություն 52

1.19. «Արագածոտն-1» միկրոռեգիոնի բնակավայրերի առկա վիճակի վերլուծություն 53

1.19.1. Ընդհանուր դրույթներ 53

1.19.2. Քաղաք Ապարան 55

1.19.3. Արագած, ... 58

1.19.4. Արայի, ... 60

1.19.5. Ափնագյուղ, ... 61

1.19.6. Եղիպատրուշ, ... 62

1.19.7. Երնջատափ 63

1.19.8. Թթուջուր 65

1.19.9. Լուսագյուղ 66

1.19.10. Ծաղկաշեն 67

1.19.11. Կայք, ... 68

1.19.12. Հարթավան 69

1.19.14. Նիգավան 71

1.19.15. Շենավան, ... 72

1.19.16. Շողակն, ... 73

1.19.17. Չքնաղ 74

1.19.18. Ջրամբար, ... 75

1.19.19. Սարալանջ 75

1.19.20. Վարդենիս, ... 76
1.19.21. Վարդենուտ, ... 78
1.19.22. Քուչակ, ... 79
Գլուխ 2 80
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 80
2.1. Սոցիալ տնտեսական զարգացում 80
2.1. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը 81
2.1.1. Զբոսաշրջային ոլորտ 81
2.2. Հեռանկարային հատակագծային զարգացում 85
2.3. Տարածքային զարգացման հիմնական սկզբունքները 85
2.4. Հատակագծային կառուցվածք (առկա և հեռանկարային) 86
2.5. Հասարակական սպասարկման ոլորտ 87
2.6. Բնապահպանական/կանաչապատման խնդիրներ 87
2.7. Կանաչ միջանցքներ և բաց տարածքների ցանց (կանաչապատման համակարգ) 88
2.8. Քաղաքի տարածքի գործառական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ 88
2.9.1. Արտաքին տրանսպորտ 91
2.9.2. Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցք 91
2.9.3. Փողոցային ցանց և ներքին տրանսպորտ 92
2.10. Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ 93
2.1. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 153
2.1.1. Ջրամատակարարում 153
2.1.2. Ջրահեռացում 157
2.1.2.1. Կենցաղային և արտադրական կոյուղի 157
2.1.2.2. Հեղեղատար կոյուղի 159
2.1.3. Ոռոգման խնդիրները 161
2.1.3.5. Տեխնիկական այլ առաջարկություններ 166
2.1.4. Էներգամատակարարում 169
2.1.4.1. Էլեկտրամատակարարում 169
2.1.5. Գազամատակարարում 175

2.1.5.1. Ջերմամատակարարում 177
2.1.5.2. Գազի հեռանկարային ծախսը 177
2.1.5.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ 179
ԳԼՈՒԽ 3 188
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 188
3.1. Ներածություն 188
3.2. Արագածոտնի մարզի Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներին սպառնացող բնածին վտանգների վերաբերյալ 190
3.3. Արագածոտնի մարզի Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների քաղաքացիական պաշտպանության գոյություն ունեցող և նախատեսվող կառույցների և միջոցառումների վերաբերյալ 191
ԳԼՈՒԽ 4 192
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ 192
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ..... - 4 -
Օգտագործված գրականության ցանկ ..... - 5 -

ԳԻՐՔ 2

ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Միկրոռեգիոնի բնակավայրերի համակցված

1. Հենակետային հատակագիծ Մ 1:25 000
2. Տարածքի համալիր գնահատում Մ 1:25 000
3. Տարածքային զարգացման հատակագիծ/հիմնական գծագիր/ Մ 1:25 000
4. Տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ Մ 1:25 000

Միկրոռեգիոնի առանձին բնակավայրերի.

1. Հենակետային հատակագիծ Մ1 : 5 000
2. Տարածքի համալիր գնահատում Մ 1 : 5 000, 1:10 000
3. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գծագիր Մ1 : 5 000
4. Հողատեսքերի բաշխումն ըստ սեփականության սուբյեկտների Մ 1:5 000
5. Հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր Մ1 : 5 000
6. Տարածքի զարգացման հատակագիծ/հիմնական գծագիր/ Մ1 : 5 000
7. Քաղաքաշինական գոտիավորման նախագիծ Մ1 : 5 000

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացվող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն: Դրա հետ կապված առաջացել է անհրաժեշտություն փաստաթղթերի մշակման նոր տիպի նպատակային ծրագրի, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին և կներառի տարածական պլանավորման հիերարխիական երեք մակարդակ՝ մարզի (տարածքային հատակագծման նախագիծ), համայնքի (գլխավոր հատակագիծ) և բնակավայրի (գոտևորման նախագիծ):

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիրի իրականացմամբ:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Արագածոտն-1՝ ք. Ապարան, գ.գ. Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ,Ծաղկաշեն, Կայք, Հարթավան, Ջորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ, Քուչակ) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/37-1, 20 դեկտեմբերի 2019թ.) և վերջինիս կողմից տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Մշակվող միկրոռեգիոնալ մակարդակի փաստաթուղթն իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որի հիմնական նպատակը համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումն է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմանն ուղղված միջոցառումների առաջադրմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հասարակության հետխորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունները շոշափելի փոփոխություններ մտցրեցին նաև քաղաքաշինական գործունեության մեջ: Պետությունը դադարեց անշարժ գույքի և ֆինանսական միջոցների միահեծան սեփականատերը լինել, ներկայումս որպես կառուցապատող, ներդրող (այսինքն՝ քաղաքաշինական գործընթացի առավել ակտիվ մասնակիցներ) հանդես են գալիս բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Հետևաբար, արդի՝ նոր սերնդի քաղաքաշինական փաստաթղթերում հարկ է կանոնակարգել քաղաքաշինական գործունեության իրականացման մեխանիզմները՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և ապահովելով

տարածաշրջանի կայուն զարգացում: Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.

- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներա-տեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը:

Հայեցակարգային դրույթներ

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրութային փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում կարտացոլվեն միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, այն է՝

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրների բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

<u>Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.</u>

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- ՀՀ հողային օրենսգիրքը:
- Հայաստանի Հանրապետության օրենքը Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261)
- «ՀՀ ջրային օրենսգիրք

- ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (2014 թ. հունիսի 21, ՀՕ-110-Ն)»
- ՀՀ օրենքը <<Բուսական աշխարհի մասին>> (1999)
- ՀՀ օրենքը <<Կենդանական աշխարհի մասին>> (2000)
- «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2011 թ. հունվարիի 27, N 75-Ն:
- ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781 որոշում:
- Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշում:
- ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը:
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը:
- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 72-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշումը:
- Հայաստանի Հանրապետության կառավարություն N 855-ն որոշումը (18 օգոստոսի 2016 թվականի) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին:
- Կարգ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման (հաստատված ՀՀ Կառավարության 02.05.03թ. N 625 – Ն որոշմամբ):

Վերոշյալ նորմատիվ իրավական փաստաթղթերը կանոնակարգում են համայնքների քաղաքաշինական զարգացումը՝ հիմնված հետևյալ հիմնական փուլերի վրա.

- համայնքներում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտում ու վերլուծությունը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու սահմանազատումը:
- առաջնային սպասարկման և սոցիալական ենթակառուցվածքի անհրաժեշտ կազմի առաջադրումը և տեղաբաշխումը,
- համայնքի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- միասնական քաղաքաշինական միջավայրի ձևավորմանը միտված՝ համայնքների տարածքում կառուցապատման սահմանափակումների և չափորոշիչների համակարգի մշակումը:

<u>Նախագծում հաշվի են առնվել նաև.</u>

• Նախագծային տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մարզի առանձին բնակավայրերի գլխավոր հատակագծերը: ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ կադաստրի կոմիտեի, ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, Արագածոտն 1-ում ներառված բնակավայրերի ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:

• ՀՀ կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները:

• «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և կառավարության կողմից հաստատված (10.04.03 N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթները:

Նախագծում հաշվի են առնված ՍԵՄԱԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայր ցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.

- Տնտեսության կայուն զարգացում՝
  - Արդյունաբերություն,
  - Գիտատար արդյունաբերական արտադրություն,
  - Ագրոարտադրական համալիր,
  - Ռեկրեացիա, հատկապես տուրիզմ,
  - Փոքր և միջին բիզնես,
  - Բնապահպանական միջոցառումներ:

- Քաղաքաշինության կայուն զարգացում՝
  - Բնակելի շինարարություն,
  - Բնակելի-կոմունալ շինարարություն,
  - Լանդշաֆտի ռացիոնալ օգտագործում,
  - Բնապահպանական միջոցառումներ:

- Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների կայուն զարգացում՝
  - Տրանսպորտ,
  - Ջրամատակարարում, ջրահեռացում,
  - Էներգամատակարարում,
  - Թափոնների օգտահանում,
  - Բնապահպանական միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքներ

1) Միկրոռեգիոնի և մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
3) Արդյունաբերության զարգացում
4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
5) Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում
6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում

9) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
10) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում
11) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

Գլուխ 1
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Նախագծի շրջանակում միկրոռեգիոնների տարածքները դիտարկվում են որպես քաղաքաշինական ընդհանուր հիմնախնդիրներով շաղկապված տարածական միավորներ և որպես միասնության անբաժանելի մասեր կազմող վարչատարածքային միավորների՝ համայնքների համախումբ, որոնք ընդհանուր հիմնախնդիրների շարքում, պահանջում են ընդհանրությունից և յուրահատկությունից բխող համապատասխան քաղաքաշինական լուծումների առաջադրում:

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,
- Սահմանվել են տարբեր նպատակային նշանակության հողօգտաործումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրը,
- Վերլուծվել են ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրարգրերը և դրանց իրականացման գործընթացը:

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ

1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը

ՀՀ Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևմտյան մասում՝ զբաղեցնելով երկրի տարածքի 9,3 %-ը; Իր մեջ ընդգրկում է Աշտարակի, Թալինի, Ապարանի և Արագածի տարածաշրջանները:

Մարզկենտրոնն Աշտարակ քաղաքն է:

Անցյալում ընդգրկել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո մաս է կազմել Երևանի նահանգի, 1918 – 1920 թթ Հայաստանի Հանրապետության՝ Էջմիածնի և Ալեքսանդրոպոլի նահանգների:

Մարզի աշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ գտնվում է մայրաքաղաք Երևանի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթի՝ Արագածի միջև: Կիսաօղակաձև գոտևորելով Արագած լեռնազանգվածը՝ մարզի տարածքը արևմուտքում ձգվում է մինչև Թուրքիայի

հետ պետական սահմանը (35 կմ), հյուսիսից սահմանակից է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ ՀՀ Կոտայքի մարզին, հարավ-արևելքից՝ մայրաքաղաքին և հարավից՝ ՀՀ Արմավիրի մարզին:

ՀՀ Արագածոտնի մարզն իր աշխարհագրական դիրքով, տնտեսական և քաղաքական, պաշտպանական նշանակությամբ, բնակլիմայական պայմաններով միշտ էլ կարեւոր դեր է ունեցել հայոց պատմության բոլոր ժամանակներում:

Մարզում պահպանվել են դեռևս նախնադարյան մարդու բնակության, կիկլոպյան ամրոցների հետքեր, պաշպանական ու պաշտամունքային հնադարյան բազմաթիվ կառույցների մնացորդներ:

Մարզը գտնվում է Արագած լեռնազանգվածի լանջերին, իր մեջ ներ է առնում նաև Փամբակի ու Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև ընկած տարածքը:

Այնտեղ մարդու կենսագործունեության, հատկապես տնտեսության վարման համար բավարար պայմաններ կան: Եվ պատահական չէ, որ պատմության բոլոր ժամանակներում մարզի տարածքը միշտ իրեն է գրավել ոչ միայն ժողովրդի հոծ բազմություններ, այլեւ եղել է հայոց արքունական եւ ամառանոցային և որսորդական տարածք:

ՀՀ Արագածոտնի մարզը հիմնադրվել է 1996 թվականին: Մարզի տարածքը 2 756 քառ.կմ է:



ՀՀ Արագածոտնի մարզն ընդգրկում է Աշտարակ, Ապարան, Արագած և Թալին տարածաշրջանները: Բնակչության թվաքանակը 2019 թ.հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 161774 մարդ: Մարզում կա 72 համայնք: ՀՀ մարզերի շարքում տարածքի մեծությամբ միջին տեղ է գրավում, իսկ բնակչության թվով գերազանցում է միայն ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Տավուշի մարզերին:

Աշտարակի տարածաշրջանը և Թալինի տարածաշրջանի մի մասը գտնվում են նախալեռնային գոտում, իսկ Ապարանի և Արագածի տարածաշրջանները ու Թալինի տարածաշրջանի մի մասը՝ լեռնային գոտում, ծովի մակերեւույթից 2000-2500 մետր բարձրության վրա: Մարզի 19 համայնքներ ունեն լեռնային, իսկ 40 համայնքներ՝ բարձր լեռնայինի կարգավիճակ:

Մարզի հարավում լեռնալանջերը ձուլում են Արարատյան դաշտին, հյուսիսում ձգվում են մինչև Արագածի լեռնագագաթը: ՀՀ Արագածոտն մարզը ՀՀ այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները (950 մ-ից մինչև 4090 մ բացարձակ բարձրությունները): ՀՀ Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090 մ) և Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ), Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները: Մարզի ռելիեֆը գրավիչ է ինչպես դահուկային սպորտի, այնպես էլ լեռնագնացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար: Մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ:

ՀՀ Արագածոտնի մարզում աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Արագածոտնի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Արագածոտնի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր:



Սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական

ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն։

1.2. Բնակլիմայական պայմաններ

1.2.1. Կլիմայական պայմաններ

Մարզն աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների բազմազանությամբ։ Ըստ բարձրության տարեկան միջին ջերմաստիճանը և տեղումների քանակը խիստ տարբեր են։

Կլիմայական տեսակետից տարածքը գտնվում է մեղմ ցուրտ, անբավարար խոնավ գոտում, որին բնորոշ է տաք երկարատև ամառ և ցուրտ ձմեռ։

Ձմեռը երկարատև է։ Ձյան ծածկույթի կայունությունը պահպանվում է մոտ 3-4 ամիս։ Ձյան ծածկույթի հզորությունը հունվար ամսին հասնում է մինչև 60սմ-ի։ Օդի միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է -5-ից մինչև 9.6oC, նվազագույն ջերմաստիճանը -35-ից մինչև -41oC։

Գարունը հով է և երկարատև, սկսում է մոտավորապես ապրիլ ամսվա երկրորդ կեսից և վերջանում է հունիս ամսվա երրորդ կեսին կամ երրորդ տասնօրյակի վերջում։ Մայիսը տարվա ամենաանձրևոտ ամիսն է։ Ամսվա տեղումների գումարը տատանվում է 70-100մմ սահմաններում։ Ողջ գարնանային ցրտահարություններն ընդհատվում են մայիսի երկրորդ կամ երրորդ տասնօրյակին, սակայն որոշ տարիներ ցրտահարությունները տեղի են ունեցել անգամ հունիսի երկրորդ կեսերին։

Ամառը մեղմ շոգ է և տևում է երեք ամիս՝ հունիս, հուլիս, օգոստոս. գերակշռում են պարզ եղանակները։

Օդի միջին ջերմաստիճանը հուլիս ամսին տատանվում է 13-17oC սահմաններում, առավելագույնը աճում է մինչև 31o-32oC։ Ամսվա տեղումների քանակը տատանվում է 30-70մմ-ի սահմաններում։

Աշունը հով է։ Աշնանային առաջին ցրտահարությունները միջին հաշվով լինում են հոկտեմբերի առաջին և երկրորդ կեսերին, սեպտեմբերի առաջին տասնօրյակում։

Անսառնամանիք ժամանակաշրջանի տևողությունը կազմում է 120-150օր։

Մակերևույթի բարձրությունների մեծ տատանումների շնորհիվ մեծ են ցածրադիր և բարձրադիր մասերի կլիմայական պայմանների տարբերությունները։ Արագածի գագաթամերձ շրջանում տեղումները տարեկան հասնում են 850-900 մմ, իսկ համեմատաբար ցածրադիր (1000 մ) բարձրություններում՝ 300մմ։ Եթե տարվա ամենատաք ամսվա՝ հուլիսի միջին ջերմաստիճանը լեռան ստորոտում լինում է 24°C-ից ոչ պակաս, ապա բարձր լեռնային գոտում չի բարձրանում 6°C-ից։ Արագածի մերձգագաթային հատվածում նույնիսկ ամռանը կարելի է հանդիպել ձնաբծերի։

Արարատյան դաշտավայրին հարող հատվածներում ամռանը տաք է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ։ Այստեղ լավ պայմաններ կան ջերմասեր մշակաբույսերի՝ խաղողի, ծիրանի, դեղձի, բանջարանոցային եւ բոստանային մշակաբույսերի մշակության համար։ Դրանք մշակվում են Աշտարակի ողջ տարածաշրջանում և Թալինի տարածաշրջանի հարավ-արևմտյան հատվածում։ Թալինի տարածաշրջանի հյուսիսային հատվածը, Ապարանի եւ Արագածի տարածաշրջանները հարմար են հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի մի քանի տեսակների արտադրության համար։ Բնական լանդշաֆտային գոտիներից մարզում հանդիպում են կիսաանապատային, չոր լեռնատափաստանային, ալպյան և նիվալ գոտիները[1]։

1.2.2. Բնական պայմանները և հարստությունները

[1] Մանրամասն տրված են Հավելված 1-ում

Արագածոտնի մարզն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիս-արևմտյան մասը (950 մետրից մինչև 4090 մ բացարձակ բարձրությունները)։ Հարավում լեռնալանջերը ձուլում են Արարատյան դաշտին, հյուսիսում ձգվում են մինչև Արագածի լեռնագագաթը։

Մարզի մակերևույթի մեծ մասը կազմված է տարբեր տիպի ու բնույթի երիտասարդ հրաբխային լավաներից։ Այստեղ են գտնվում Թալինի, Կարմրաշենի, Ապարանի սարավանդները, որոնց մակերևույթին բնորոշ են խարամային կոները, տուֆային դաշտերը, քարակարկառները։ Այստեղ է գտնվում Փոքր Սիփան լեռը (հայտնի է նաև որպես Սիփան)։

Բարձրալեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ, որոնք հաճախ ընդմիջվում են քարակարկառներով ու լերկ ժայռերով։ Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ անտառակներ։

Մարզի ռելիեֆը գրավիչ է ինչպես դահուկային սպորտի, այնպես էլ լեռնագնացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար։

1.2.2.1. Կլիմայաբուժության պայմաններ

Մարզի հյուսիսային մասը՝ Արագածոտնի տարածքը, բարձր լեռնային է, աչքի է ընկնում արևափայլ մեծ տևողությամբ (2360 ժամ/տարի)։ Տարեկան միջին ջերմաստիճանը 3.3o, օդի խոնավությունը 75%, տեղումների քանակը՝ 535մմ։

Ապարանի տարածքը նույնպես աչքի է ընկնում արևափայլի տևողությամբ (2396 ժամ/տարի), որի առավելագույն քանկը դիտվում է հուլիսին (308 ժամ), նվազագույնը՝ հունվարին (86 ժամ)։ Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 651մմ, առավելագույնը դիտվում է գարնանը (204մմ)։

Ամառային եղանակների բնույթը (արևափայլի տևողությունը, մթնոլորտի թափանցիկությունը, մաքուր թթվածնով հագեցած օդը) ստեղծում է օպտիմալ պայմաններ կլիմայաբուժության համար։ Բացակայում են շատ շոգ եղանակները, ամպամած և անձրևային օրերի թիվը նվազագույն է։ Սկսած հունիս ամսից մինչև սեպտեմբեր կարելի է կազմակերպել կլիմայաբուժություն։ Սահմանափակող գործոն է քամիների առկայությունը (2.0-2.8մ/վրկ), որի ազդեցությունը, կարգավորող միջոցառումներով վերացնելուց հետո, կլիմայաբուժության հարմարավետության պայմանները (ԷԷՋ՝ 16oC-22oC) մեծանում են և կազմում ամիսը 18-20 օր ամառային ժամանակահատվածում։

Ամառային կլիմայաբուժության կազմակերպման համար ակտիվ գործոն է նաև Ապարանի ջրամբարի առկայությունը։

Ձմեռային ամիսներն աչքի են ընկնում նշանակալի սառնամանիքային (միջին օրական ջերմսատիճանը՝ -12.5oC-ից մինչև -22.5oC) և սառնամանիքային (միջին օրական ջերաստիճանը -2.5oC-ից մինչև -12.5oC) եղանակների կրկնությամբ (ամսական 15-20օր), մեծ է ձմռանը թթվածնի կշռային քանակը (240գ/մ3)։ Ձմեռային եղանակները սահմանափակում են այդ ժամանակահատվածում կլիմայաբուժության կազմակերպման պայմանները։

1.2.2.2. Ռելիեֆի նկարագիրը

Ապարան քաղաքի և կից բնակավայրերի տարածքը տեղադրված է Արագած լեռան հարավային փեշերին. Քասախ գետի վերին հոսանքում, բացարձակ բարձրությունները տատանվում են 1880-1942մ (ներառած արտադրական գոտին), միջին բարձրությունը 1891մ է։

Տարածքը հյուսիսից եզրափակված է Փամբակի լեռնաշղթայի լանջերով, արևելյան կողմը՝ Ծաղկունյաց լեռնաշղթայով, իսկ արևմտյան և հարավարևմտյան կողմից Արագած լեռան թեք լանջերով: Փամբակի լեռնաշթայի լանջերը տարբերվում են համեմատաբար ցածր հարաբերական բարձրություններով և մեղմ լանջերով, իսկ Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերը ենթարկվում են ինտենսիվ ֆիզիկական հողմահարման: Արագածի նախալեռներն ունեն կտրուկ արտահայտված բլրակաձև ռելիեֆ: Այդ ռելիեֆը ձգվում է մինչև Քասախ գետի հարթավայր, որտեղ մոտակա լճերի հետ շփումից առաջանում են Ապարանի հզոր աղբյուրները: Տարածքի մակերևույթը լի է խոշոր քարերի կույտերով և բլրակներով: Քասախ գետն, անցնելով քաղաքի տարածքով, սկիզբ է առնում առվակներից, որոնք հոսում են Արագած լեռան հյուսիսարևելյան լանջից և Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջից: Գետի ակունքից մինչև Ապարան ընկած հունը 8 ամսվա ընթացքում չոր է, իսկ քաղաքի հատվածից, որը գտնվում է Ապարանի հզոր աղբյուրներից ներքև, գետն ունի անընդհատ հոսք: Գետն առուների տարածքում ունի խորը և նեղ հուն: Ապարանից փոքր-ինչ հյուսիս ձորն ավարտվում է և դառնում հարթավայր: Գետի սնուցումը խառն է՝ առվակներ, ձյուն և անձրև: Գետը և նրա առվակները տարբերվում են զուտ արտահայտված գարնանային ձնհալքերի վարարումներով տարվա մնացած եղանակներին: Վարարություն սկսվում է ապրիլի կեսերից և շարունակվում է մինչ հուլիս ամիսը, ձնհալքը տևում է մոտ 4 ամիս:

Գետի բարձրադիր մասում նոյեմբերի վերջում և դեկտեմբերի սկզբում առաջանում են ափասառույցներ, իսկ հունվարին և փետրվարին գետը ծածկվում է սառույցի բարակ շերտով: Գետի տարիների միջին օգտագործումը Ապարանի տարածքում կազմում է 0.7մ³/վրկ:

1.2.2.3.Ջրոսաշրջության ռեսուրսները

Արագածոտնի մարզը հարուստ է զբոսաշրջության ռեսուրսներով, բազմաբնույթ պատմամշակութային, բնական հուշարձաններով, ինչպես նաև ձմեռային սպորտի կազմակերպման հնարավորություններով: Մարզում բարենպաստ են ձմեռային սպորտի (լեռնադահուկային սպորտ, ալպինիզմ) կազմակերպման պայմանները՝ հիմնականում Արագածի լանջերին, Ապարանի, Թալինի սարահարթերում:

Մարզի տարածքով մեկ ցրված են միջնադարյան բազմաթիվ կառույցներ՝ կանգուն կամ ավերակ վիճակում: Հայտնի են հատկապես Ամբերդը, Թալինի, Սաղմոսավանի, Աշտարակի եկեղիցիներն ու վանքերը:

«Քասախի կիրճ» բնապատմական հուշարձանը գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում:

Քասախի կիրճի համայնապատկերը Սաղմոսավանքի մերձակա տափարակից

1.2.3. Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները:

Արգելավայրեր

Հայաստանում ներկայումս գործում են 27 արգելավայրեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 114812.7 հա կամ հանրապետության տարածքի 3.95 %-ը:

Մարզի տարածքում է գտնվում «Արագածի ալպյան» արգելավայրը և 23 բնության հուշարձաններ:

«Արագածի ալպյան» արգելավայրը բնության հատուկ պահ պանվող տարածք է, Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 300 հա տարածք: Գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Արագած լեռնազանգվածի 3200-3500 մ բարձրություններում:

Ստեղծվել է սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը (Հիմք ընդունելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրքը:

Երկրաբանական հուշարձաններ

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում
9.	«Չինգիլային դաշտ»	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ»

	քարե կուտակումներ	տանող ճանապարհին
10.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ

Ջրաերկրաբանական հուշարձաններ

1.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870 մ բարձրության վրա
2.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
3.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա
4.	«Ձաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

1.	«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
2.	«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
3.	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
4.	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ

Բնապատմական հուշարձաններ

1.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
2.	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
3.	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին
4.	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
5.	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

1.2.4. Օգտակար հանածոներ

Օգտակար հանածոները բազմազան չեն, բայց պաշարները մեծ են: Դրանք հիմնականում հրաբխային ապարատեսակներին են՝ բազմագույն տուֆերը, բազալտը, պեռլիտը, հրաբխային խարամը, որոնք իրենց գոյությամբ պարտական են Արագած լեռան հրաբխային ժայթքումներին և ծառայում են որպես որակյալ շինանյութ: Պեռլիտը հանդես է գալիս ավազի ու խճի տեսքով: Հանդիպում են գրանիտի, մարմարի և այլ հանքավայրեր, որոնք հիմնականում շահագործվում են: Ներկայումս ՀՀ Արագածոտնի մարզի

տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ 2 ոչ մետաղական: Օգտակար հանածոներից շահագործվում են նաև արծաթի (Ag), ոսկու (Au), և այլ հանքեր: Միևնույն ժամանակ առկա են նաև դեռևս չշահագործվող հանքավայրեր:

Մարզում են գտնվում նաև Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050մ), Արտենի (2047մ) հանգած հրաբուխները:

Տեղեկատվություն
ՀՀ Արագածոտնի մարզում
օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված
ընդերքօգտագործման իրավունքների մասին

h/h	Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրի հասցեն	Թույլտվության համարը, տրման ա.ա.տ.	Գործողության ժամկետի ավարտը	Պայմա նագրի համարը, տրման ա.ա.տ.	Լեռնահատկացման ակտի համարը, տրման ա.ա.տ.
1	2	3	4	5	6	7
1	<ՄՈՒԴԱՄ> ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայրի հյուսիսային տեղամաս	ՇԱԹ-29/011 01.08.12թ	01.08.2027թ	Պ-011 01.08.12թ	Լ-011ա 27.08.13թ
2	<ՓԵՏԱՐ> ՍՊԸ	Կաթնաղբյուրի տուֆ /Արևելյան տեղ./	ՇԱԹՎ-29/037 31.10.12թ	25.01.2032թ.	Պվ-037 31.10.12թ	Լվ-037 31.10.12թ
3	«ԿԱՐՄԻՐ ԱՎԱԶ» ՍՊԸ	Աշտարակի հրաբխային խարամ	ՇԱԹՎ-29/073 30.08.12թ	20.07.2032թ.	Պվ-073 30.08.12թ	Լվ-073 30.08.12թ
5	<ԱՐԳԻՇՏԻ > ՍՊԸ	Կարմիր հողերի տուֆ	ՇԱԹՎ-29/083 20.10.12 թ	09.02.2034թ	Պվ-083 20.10.12թ	Լվ-083 20.10.12թ
6	<ՇԵՆԻԿ> ԱԿ	Արուճի տուֆ	ՇԱԹՎ-29/098 20.10.12թ	08.03.2021թ.	Պվ-098 20.10.12թ	Լվ-098 20.10.12թ
7	<ՍԱՖԱՐԴԱՅ> ՍՊԸ	Եղնիկի տուֆ	ՇԱԹՎ-29/105 20.10.12թ	28.10.2066թ.	Պվ-105 20.10.12թ	Լվ-105 20.10.12թ
8	<ԱՐԳԱՍ> ՍՊԸ	Շղարշիկի տուֆ	ՇԱԹՎ-29/142 20.10.12թ	22.06.2063թ	Պվ-142 20.10.12թ	Լվ-142ա 01.07.13թ
9	<ԱՐԹՈՒՐ-91> ՍՊԸ	Արթիկի տուֆ /Հարավային տեղ. XXX1V-Ա բլոկ/	ՇԱԹՎ-29/144 06.11.12թ	24.11.2063թ	Պվ-144 06.11.12թ	Լվ-144ա 30.10.13թ
10	<ԲԱԶՄԱԲԵՐԴ > ՍՊԸ	Վերին Բազմաբերդի տուֆ (2-րդ տեղ.)	ՇԱԹՎ-29/154 20.10.12թ	10.04.2023թ	Պվ-154 20.10.12թ	Լվ-154 20.10.12թ

11	<ԿՐԵԴՈԱՐՄ> ՍՊԸ	Եղնիկի տուֆ /2-րդ տեղ./	ՇԱԹՎ-29/155 20.10.12թ	06.04.2035թ	ՊՎ-155 20.10.12թ	ԼՎ-155 20.10.12թ
12	<ՀԱՍԱԿ> ՍՊԸ	Վ.Բազմաբերդի տուֆ /2-րդ տեղ./	ՇԱԹՎ-29/164 22.11.12թ	25.10.2027թ	ՊՎ-164 22.11.12թ	ԼՎ-164 22.11.12թ
13	<ՄՈՒՇԵՂ և ՄԱՐԻՆԵ> ՍՊԸ	Եղնիկի տուֆ /1-ին տեղ./	ՇԱԹՎ-29/175 06.11.12թ	05.09.2033թ	ՊՎ-175 06.11.12թ	ԼՎ-175 06.11.12թ
14	<ԸՆԿՈՒՋՆՅԱԿ> ՍՊԸ	Վ.Բազմաբերդի տուֆ	ՇԱԹՎ-29/179 31.10.12թ	10.04.2023թ	ՊՎ-179 31.10.12թ	ԼՎ-179 31.10.12թ
15	<ՄԵԳՈ ԳՈԼԴ> ՍՊԸ	Թուխմանուկի ոսկի	***ՇԱԹՎ-29/184*** 28.12.12թ	21.07.2040թ.	***ՊՎ-184*** 28.12.12թ	***ԼՎ-184*** 28.12.12թ
16	<ՀՈՎ> ՍՊԸ	Կաթնաղբյուրի տուֆ	ՇԱԹՎ-29/210 20.10.12թ	08.04.2021թ	ՊՎ-210 20.10.12թ	ԼՎ-210 20.10.12թ
17	<ՍԻՄ> ՍՊԸ	Կաքավաձորի տուֆ	ՇԱԹՎ-29/214 20.10.12թ	07.06.2040թ.	ՊՎ-214 20.10.12թ	ԼՎ-214 20.10.12թ
18	<ԱՎԱԳ և ԱՇՈՏ> ՍՊԸ	Կաքավաձորի տուֆ /2-րդ տեղ/	ՇԱԹՎ-29/215 20.10.12թ	24.05.2025թ	ՊՎ-215 20.10.12թ	ԼՎ-215 20.10.12թ
19	«ԽԱՐԱՄ» ԱԿ	Աշտարակի հրաբխային խարամ	ՇԱԹՎ-29/218 23.10.12թ	23.12.2027թ.	ՊՎ-218 23.10.12թ	ԼՎ-218ա 30.10.13թ
21	<ՆՈՒՌ-ՀԵՐՄԱՆ> ՍՊԸ	Լուկաշինի տուֆ /10-Cı բլոկ/	ՇԱԹՎ-29/244 28.12.12թ	01.12.2025թ.	ՊՎ-244 28.12.12թ	ԼՎ-244 28.12.12թ
22	«ՎԻ ԸՆԴ ԷՅ ՏՈՒՐ» ՍՊԸ	Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրի 3-րդ հրաբխային Կոնի տեղամաս	ՇԱԹՎ-29/282 27.03.2015թ.	17.03.2033թ.	ՊՎ-282 27.03.15թ.	ԼՎ-282 27.03.15թ.
23	<ՀԱՆՔԱՂԲՅՈՒՐ> ՍՊԸ	Շղարշիկի տուֆ	ՇԱԹՎ-29/299 05.12.12թ.	02.10.2031թ	ՊՎ-299 05.12.12թ	ԼՎ-299 05.12.12թ
24	«ԼԵՎԱԴԱՆ» ՍՊԸ	Արագածա վանի պեռլիտ	ՇԱԹՎ-29/301 31.10.12թ	05.12.2026թ.	ՊՎ-301 31.10.12թ	ԼՎ-301 31.10.12թ
25	<ՉՈՐՍ ՎԱՍԱԼ> ՓԲԸ	<Կապս-1> տեղամասի դոլերիտային բազալտ	ՇԱԹՎ-29/315 31.10.12թ	26.06.2033թ.	ՊՎ-315 31.10.12թ	ԼՎ-315 31.10.12թ
26	<ԱՐՀԱԳ> ՍՊԸ	Կոշի տուֆ	ՇԱԹՎ-		ՊՎ-334	ԼՎ-334

			29/334 05.12.12թ	16.07.2032թ	05.12.12թ	05.12.12թ
27	<ԵՐՀԱԿ> ՍՊԸ	Կոշի տուֆ /Երիակ տեղ./	ՇԱԹՎ-29/335 05.12.12թ	26.05.2033թ	Պվ-335 05.12.12թ	Լվ-335 05.12.12թ
28	«ԱՐԱԳԱԾ – ՊԵՌԼԻՏ» ԲԲԸ	Արագածի պեռլիտ	ՇԱԹՎ - 29/348 05.12.12թ	08.03.2041թ.	Պվ-348 05.12.12թ	Լվ-348 05.12.12թ
29	<ՎԱՀՐԱՄ ՊԱՊԻԿՅԱՆ>ՍՊԸ	Աղավնասարի տուֆ /ABCD եզրագծով տեղամաս/	ՇԱԹՎ-29/381 28.12.12թ	18.05.2025թ	Պվ-381 28.12.12թ	Լվ-381 28.12.12թ
30	<ԿԱՐՎԱՀԵ> ՍՊԸ	Ապարանի մարմարի հանքավայրի 1-ին հանքամարմնի հարավ-արևմտյան տեղամաս	ՇԱԹՎ-29/394 31.01.13թ	20.05.2030թ	Պվ-394 31.01.13թ	Լվ-394 31.01.13թ
31	<ՄԱՐՄԱՐ> ՍՊԸ	Ապարանի մարմար	ՇԱԹՎ-29/395 31.01.13թ	05.07.2031թ	Պվ-395 31.01.13թ	Լվ-395 31.01.13թ
32	<ՄԵՁ ՄԵՍՐՈՊ> ՍՊԸ	Կաքավաձորի տուֆ /բլոկ 1-Ա/	ՇԱԹՎ-29/414 11.02.13թ	29.06.2026թ	Պվ-414 11.02.13թ	Լվ-414 11.02.13թ
33	<<ԹԱԼԻՆԻ ԱՏՃ>> ՓԲԸ	Թալինի անդեզիտադացիտ	ՇԱԹՎ- 29/ 453 16.05.13թ	05.04.2026թ	Պվ-453 16.05.13թ	Լվ-453 16.05.13թ
34	<ԹԱԼԻՆԻ ԱՏՃ> ՓԲԸ	Արագածա վանի անդեզիտա բազալտ	ՇԱԹՎ- 29/ 464 16.05.13թ	22.05.2027թ.	Պվ-464 16.05.13թ	Լվ-464 16.05.13թ
35	«ՀՈՎՍԵՓ-ԱՐՄԱՆ» ՍՊԸ	Աղավնատան տուֆերի հանքավայր /հարավ-արևմտյան տեղամաս/	ՇԱԹ-29/467 25.02.14թ	25.02.2034թ	Պ-467 25.02.14թ	Լ-467 25.02.14թ
36	<ԱՐՏՄԵՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ> ՍՊԸ	Ներքին Բազմաբերդի տուֆ	ՇԱԹ-29/482 27.11.13թ	27.11.2038թ	Պ-482 27.11.13թ	Լ-482 27.11.13թ
37	«ՄԱՐՏԻԿՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ	Կոշի տուֆի հանքավայրի «Կոշ-2» տեղամաս	ՇԱԹ-29/496 25.02.14թ	25.02.2054թ	Պ-496 25.02.14թ	Լ-496 25.02.14թ
38	«ՍԼՈԲԵՐ» ՍՊԸ	Սասունիկի բազալտի հանքավայր	ՇԱԹ-29/499 29.02.2016թ.	29.02.2066թ.	Պ-499 29.02.16թ.	Լ-499 29.02.16թ.

39	«ԱՇՏԱՐԱԿ ՔԱՐՀԱՆՔ» ԲԲԸ	Բյուրականի տուֆի հանքավայր	ՇԱԹ-29/510 27.08.2014թ.	27.08.2064թ.	Պ-510 02.10.14թ.	Լ-510 27.08.14թ.
40	«ՏԱԳԱՌ» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամաս	ՇԱԹ-29/545 02.09.2016թ.	02.09.2037թ.	Պ-545 02.09.2016թ .	Լ-545 02.09.2016թ
41	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Ոսկեհատի բազալտի հանքավայր	ՇԱԹ-29/552 25.02.2017թ.	25.02.2067թ.	Պ-552 13.04.2017թ.	Լ-552 25.02.2017թ
42	«ՄԽԻԹԱՐ ՊԱՊԻԻ ԹՈՌՆԻԿՆԵՐ» ՍՊԸ	Ակունքի տուֆի հանքավայր	ՇԱԹ-29/553 22.02.2017թ.	22.02.2067թ.	Պ-553 07.03.2017թ.	Լ-553 22.02.2017թ
43	«ԱՐԻՆՋՈ» ՍՊԸ	Ակունքի տուֆերի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամաս	ՇԱԹ - 29/560 17.07.2017թ.	17.07.2067թ.	Պ-560 14.08.2017թ.	Լ-560 17.07.2017թ
45	«ՀԻԴԴԵՆ ԳՈԼԴ» ՍՊԸ	Արագածի պեռլիտի հանաքավայր	ՇԱԹ - 29/565 23.09.2017թ.	23.09.2067թ.	Պ-565 24.10.2017թ.	Լ-565 23.09.2017թ
46	«ԱՌԱՔԵԼ-ՍԻՄՈՆ» ՍՊԸ	Հարոյան եղբայրների տուֆի հանքավայր	ՇԱԹ - 29/573 01.12.2017թ.	01.12.2067թ.	Պ-573 01.12.2017թ.	Լ-573 01.12.2017թ
48	«ԱՐԿԻ» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայրի Պարտիզակ տեղամաս	ՇԱԹ - 29/575 31.01.2018թ.	31.01.2068թ.	Պ-575 31.01.2018թ.	Լ-575 31.01.2018թ
49	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Աշտարակի հրաբխային ավազի հանքավայրի Կոն-2 տեղամաս	ՇԱԹ - 29/584 26.06.2018թ.	26.09.2060թ.	Պ-584 26.06.2018թ.	Լ-584 26.06.2018թ
50	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի հարավային տեղամաս	ՇԱԹ - 29/590 15.10.2018թ.	15.03.2061թ.	Պ-590 15.10.2018թ.	Լ-590 15.10.2018թ
51	«ՔԱՐՀԱՆՔ» ՍՊԸ	ՈՒջանի պիրոկլաստիկ տուֆերի հանքավայր	ՇԱԹ - 29/591 09.11.2018թ.	09.06.2060թ.	Պ-591 09.11.2018թ.	Լ-591 09.11.2018թ .

Ռեկուլտիվացիա

2016թ.-ի հոկտեմբերի 18-ին ընդունվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-161 օրենքը, ինչի արդյունքում կանոնակարգվել են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման ու վերամշակման բնագավառի իրավահարաբերությունները: Մինչ նշված օրենքի

ընդունումը «ընդերքօգտագործման թափոններ» հասկացությունը սահմանված չէր, տարանջատված չէին ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման ոլորտում ՀՀ պետական կառավարման մարմինների և ընդերքօգտագործողների պարտավորություններն ու իրավասությունները: Վերնոշյալ օրենքի ընդունմամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 60.10 հոդվածում ամրագրվել է, որ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն իրականացնում է ընդերքօգտագործման թափոնների փակված (այդ թվում՝ լքված) օբյեկտների գույքագրումը, ինչի նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 06.07.2017թ.-ի N 774-Ն որոշմամբ հաստատվել է ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգը: Համաձայն հաստատված կարգի, գույքագրման ընթացքում նախատեսվում է իրականացնել ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների տարածքում շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի որոշում, շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատում և մշակել աղտոտվածության նվազեցման, չեզոքացման կամ վերացման միջոցառումներ:

Ստորև ներկայացվում է ֆոնդային և հրատարակված նյութերի (հաշվետվությունների), ինչպես նաև դաշտային տեղազննումների արդյունքում ստացված օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ արտադրական լցակույտերի, թափոնների փակված օբյեկտների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունն ըստ մարզերի:

Արագածոտնի մարզ ՄԻՐԱՔԻ ՏԵՂԱՄԱՍ (ԱԳ-1) Արագածոտնի մարզում ֆոնդային և հրատարակված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է ընդերքօգտագործման թափոնների մեկ տիրազուրկ լցակույտ՝ Միրաքի տեղամասում:

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտի տեղադիրքը - Ապարան քաղաքից մոտ 4կմ արևմուտք-հյուսիս-արևմուտք, Միրաք գյուղից 2.5կմ արևելքհարավ-արևելք): Ընդերքօգտագործման թափոնները ձևավորվել են Թուխմանուկի հանքային դաշտի Միրաքի տեղամասում երկրաբանական ուսումնասիրության նպատակով լեռնային փորվածքների անցման արդյունքում: Թուխմանուկի հանքային դաշտի Միրաքի տեղամասը գտնվում է Միրաք գյուղից 2.5-3.0կմ հյուսիս-արևելք: Հանքայնացումը ներփակված է Միրաքի ինտրուզիայի քվարցային դիորիտներում և ապարանի շերտախմբի բազալտ-անդեզիտաբազալտային լավաներում, տուֆափշրաքարերում: Հանքային մարմինները ներկայացված են 100- 120մ երկարությամբ և մինչև 0,6մ լայնությամբ քվարց-կարբոնատ-հանքային և քվարց-հանքային երակներով: Միրաքի տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, հետախուզական փորվածքների (մակերևութային լեռնային փորվածքներ, հորատում, 60 գծ.մ ստորգետնյա լեռնային փորվածքներ) անցումը կատարվել են 1986-1990թթ., 2008-2012 և 2013-2016թթ.-ին, ընդ որում 2008-2016թթ.-ին հետախուզական աշխատանքները կատարվել են «Մեգո Գոլդ» ՍՊԸ նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ: Միրաք տեղամասում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ–ի պետական ընդերքաբանական փորձաքննության 2016 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 6 եզրակացությամբ հաստատվել են հանքաքարի 345.25հազ.տ, ոսկու 1037.17կգ և արծաթի 3.07տ պաշարներ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով «Մեգո Գոլդ» ՍՊ ընկերությունը նախատեսել է խախտված հողատարածքների վերականգնում, որի նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին պետք է հատկացվեր 5600հազ.դրամ գումար: Ներկայումս Միրաքի տեղամասի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունք տրամադրված չէ: Լցակույտերը համարվում են լքված/տիրազուրկ: Դրանց ռեկուլտիվացիայի խնդիրները հնարավոր է կարգավորել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին «Մեգո Գոլդ» ՍՊ ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության արդյունքում խախտված հողերի վերականգնման նպատակով նախատեսված հատկացումների գանձման հաշվին:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման նպատակով 2018 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակներում կատարված դաշտային ուսումնասիրություններ են իրականացվել Լոռու, Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում: Ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թափոններով զբաղեցրած 44 լքված/տիրազուրկ տարածքներ և 5 փակված պոչամբար: Ստացված տեղեկատվական բազայի ամփոփման արդյունքները թույլ են տալիս ամրագրել հետագա գործողությունների նախնական ընդհանրական ծրագիր, ինչը նպատակաուղղված պիտի լինի շրջակա միջավայրի և ազգաբնակչության առողջության և անվտանգության համար առավել վտանգավոր տեղամասերի սահմանազատմանը, դրանց տարածքներում ուսումնասիրությունների կատարմանը, բացասական ազդեցությունների չեզոքացմանն ու ռիսկերի կանխմանը:

Ստորև ներկայացվում է գործողությունների ընդհանրական ծրագրի նախնական կառուցվածքը:

Գործողություն 1. Շրջակա միջավայրի և ազգաբնակչության առողջության վրա ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների ազդեցությունների գնահատականը տալու նպատակով անհրաժեշտ է կատարել մանրակրկիտ մոնիթորինգային աշխատանքներ՝ հետազոտելով շրջակա միջավայրի բոլոր բնական բաղադրիչների (ջուր, մթնոլորտ, հող, բուսականություն, սննդային շղթաներ) փաստացի աղտոտվածությունը: Ընդ որում, որպես առաջնահերթություն պետք է դիտարկվեն ընդերքօգտագործման թափոններով

զբաղեցված այն տեղամասերը կամ ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտները, որոնք գտնվում են բնակավայրերի անմիջական հարևանությամբ:

Գործողություն 2. Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ քննարկել կոնկրետ հանքավայրերի կոնսերվացման, մնացորդային պաշարների դուրս գրման հարցերը:

Գործողություն 3. Չափագրել կենսաբանական մաքրման, վերականգման ենթակա տարածքները, ինչը թույլ կտա ստանալ փաստացի տվյալներ ռեկուլտիվացիոն/վերականգնողական ծրագրերի մշակման համար:

Գործողություն 4. Մշակել և իրականացնել տեղայնացված, կոնկրետ ռեկուլտիացիայի ծրագրեր, որոնք պետք է արտացոլեն յուրաքանչյուր տեղամասի/օբյեկտի բնակլիմայական, ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները, չեզոքացման ենթակա աղտոտվածության բնույթը, տարածաշրջանի տնտեսական զարգացման և ռեկուլտիվացվող տարածքների տնտեսական յուրացման հեռանկարները և այլն:

Գործողություն 5. Մանրակրկիտ ուսումնասիրել հատկապես անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի/պոչամբարի տարածքներում՝ հետազոտության առարկա դարձնելով տեխնածին աղտոտվածության բնույթի բացահայտումը, անտառածածկ/բնության հատուկ պահպանվող տարածքներով աղտոտվածության միգրացիայի հնարավոր ուղղությունները: Շահագրգիռ մասնագիտացված կազմակերպությունների (բնապահպանության նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներ, բնության հատուկ պահպանվող տարածքների սպասարկումը և պահպանությունն ապահովող պետական ոչ առևտրային կազմակերպություններ, Անտառային կոմիտե) հետ քննարկել բացասական ազդեցությունների նվազեցման/ չեզոքացման գործողությունների ծրագրերը:

Գործողություն 6. Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացումից հետո նախատեսել շրջակա միջավայրի երկարաժամկետ մոնիթորինգային ծրագիր, ինչը թույլ կտա հավաստել իրականացված աշխատանքների արդյունավետությունը և կանխել բոլոր հնարավոր բնապահպանական ռիսկերը:

1.3. Ջրային պաշարներ

Մարզի ջրային պաշարները գոյանում են Արագած լեռան ձնահալոցքից, տեղումներից և բնական աղբյուրներից: Մարզում բազմաթիվ են լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները: Ջրային պաշարներից սնվում են Ապարան-Երևան և Ապարան-Սպիտակ ջրատարները:

Նկար 6 Ապարանի ջրամբար

Մարզի հիմնական զարկերակը Քասախ գետն է՝ երկարությունը 89 կմ, ավազանի մակերեսը՝ 1480 քառ. կմ, Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով: Մարզի տարածքով են հոսում նաև Հալավար, Գեղաձոր (երկարությունը 34 կմ է, ջրհավաք ավազանը՝ 144 քառ. կմ), Շահվերդ, Ամբերդ և Գեղարոտ գետերը:

Կան շատ հեղեղատարեր (նշանավոր է Մաստարայի հեղեղատարը): Մարզի տարածքով է անցնում Արզնի-Շամիրամ

ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի, Սաբունչիի ջրամբարները: Ամենամեծը Ապարանի ջրամբարն է. մակերեսը 7.0 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ/խ, օգտակարը՝ 81 մլն.մ/խ, ջրթողունակությունը վայրկյանում՝ 18 խորանարդ մետր:

Մարզում առկա ոռոգման ջրի ծավալը տարեկան կազմում է մոտ 520 մլն.մ/խ:

Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ոռոգման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85 մլն.մ/խ, առկա քանակության 16%-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս գալիս մարզի տարածքից:

1.4. Ինժեներաերկրաբանական պայմաններ

1.5. Էկզոգեն երկրաբանական երևույթներ

Դիտարկվող տարածքում թույլ են զարգացած էկզոգեն երկրաբանական երևույթները: Դրանցից մեծ տարածում ունեն՝

1. Թույլ ձորակային էրոզիոն հրաբխային լավաների անհարթ մակերեսների վրա, լվացում, ինֆիլտրացիոն էրոզիա, որտեղ հիմնականում բացակայում են հանքային կուտակումները, կամ ունեն աննշան տարածում (հիմնականում Մաստարա հեղեղատարի արտաբերման կոնի տարածքում):
2. Լանջային գրավիտացիոն երևույթը զարգացած է Թալին քաղաքի շրջակայքի բլրաշարքերին, որտեղ դիտվում են քարաթափություն և քարակուտակումներ, հիմնականում գերեզմանատան հյուսիս և հյուսիսարևմտյան մասերում, ինչպես նաև արևելյան, քաղաքի բուն տարածքից քիչ հեռու լանջերից:
3. Կողային էրոզիան դրսևորվում է քաղաքի միջով անցնող ձորակի ոլորաններում, որտեղ մերկանում են տուֆերը իրենց բավական տարբեր տեսականիով ամբողջ երկարությամբ (կարմիր, շագանակավուն, սև, վարդագույն և այլն):
4. Մակերեսային ողողումները տարածված են քաղաքի ամբողջ տարածքով, որի ընթացքում (առանց այն էլ քիչ հզորությամբ) տուֆերը ծածկող, էլուվյալ-դելուվյալ առաջացումների աննշան տեղաշարժը ձգվում է, դեպի ցածրադիր մասերը:
5. Տեխնոգեն երևույթները քաղաքի տարածքում կապված են մարդու գործունեության հետ (կառուցապատում, ճանապարհների անցում, որոշ մասերի հարթեցում, ինչպես նաև շինարարական աղբի կուտակում այս կամ այն տարածքում և ռելիեֆի ձևախախտում):

1.6. Հիդրոերկրաբանական պայմաններ

Գրունտային ջրերը Թալին քաղաքում գտնվում են 30 մետրից խորը, քանի որ տարածքը ներկայացված է հրաբխային հոսքերով և ծածկոցներով, մթնոլորտային տեղումները, թափվելով ճեղքավորված ծակոտկեն հրաբխային առաջացումների վրա, անմիջապես ներծծվում են նրանց խորքերը և հանդիպելով ջրամերժ հորիզոնի, դուրս են գալիս քաղաքի տարածքից շատ հեռու և բավական խորը մակարդակներում:

1.7. Ինժեներաերկրաբանական շրջանացում

Համաձայն ինժեներաեկրաբանական պայմանների՝ ուսումնասիրվող տարածքը մտնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական III շրջանի մեջ, որն իրենից ներկայացնում է հրաբխային բարձրավանդակ բազալտային, անդեզիտաբազալտային և տուֆային ծածկոցներով և հոսքերով: Ելնելով տարածքի պիտանիության բնույթից,

ինչպես նաև շինարարագեոմորֆոլոգիական, հիդրոերկրաբանական (ըստ որի տեղամասեր և ենթաշրջաններ չեն բաժանվում, շատ խորը գտնվելու պատճառով) պայմաններից, լիթոլոգիական կառուցվածքից և ռելիեֆի թեքության աստիճանից՝ տարածքում առանձնացվում են հետևյալ ինժեներաերկրաբանական էլեմենտները՝ մինչև 100 թեքության տարածքներն ըստ լիթոլոգիական կառուցվածքի ներկայացված են I շրջան I-ը ենթաշրջանով, որը բաժանվում է 4 տեղամասերի I-ը 1; I-ը 2; I-ը 3; I-ը 4: Այս տեղամասերը չեն պահանջում շինարարության համար հատուկ ինժեներական նախապատրաստական աշխատանքներ, ուստի այս տեղամասերը համարվում են բարենպաստ կառուցապատման համար, որը կիրառվել է և կատարվում է կառուցապատելիս:

II շրջանի II-ը ենթաշրջանով տարածքն ունի մինչև 200 ռելիեֆի թեքություն և ներկայացված է 2 ինժեներաերկրաբանական տաքսոնոմիական բաժանման տեղամասերով՝ II-ը 1 II-ը 2, ունի մոտ 9 բալ սեյսմիկայնություն: Այս տեղամասերը համարվում են պայմանական բարենպաստ կառուցապատման համար և տարածքը պահանջում է ինժեներական հատուկ նախապատրաստական աշխատանքներ (ուղղաձիգ հարթեցում, դարավանդների բաժանում և այլն) նախքան կառուցապատումը սկսելը:

III Ինժեներաերկրաբանական շրջանը III-A ենթաշրջանով և 3 տեղամասերով (III-A1, III-A2, III-A3) տարածքում ներկայացված է քաղաքի միջով անցնող ձորակով, հյուսիս արևմուտքում Մաստարայի հեղեղատարի արտավիժման կոնուսն է և մի քանի վատ արտահայտված ձորակներով լանջերում և բլրաշարքերի վրա, որոնք անբարենպաստ են կառուցապատման համար, բայց ձորակին հարող շատ տեղերում ժամանակին կառուցապատվել են, իսկ Մաստարայի հեղեղատարի արտաբերման կոնի տարածքում գտնվում է քաղաքային գերզմանատունը, եկեղեցիների համալիրը և շրջակա բազմաթիվ տներ, որոնք պատմության ընթացքում հեղեղների չեն ենթարկվել: Այս տեղամասերն ունեն 9 բալի մոտ սեյսմիկայնություն: Նշված տարածքները 5%-ից էլ պակաս տարածություն են զբաղեցնում:

Արագած լեռը խոշոր վահանաձև բարձրացում է, կազմված պլեոցենի բազալտային անդեզիտաբազալտային լավաների ծածկույթից և չորրորդական անդեզիտադացիտային և դացիտային հրաբխային գագաթներից: Պլեոցենյան լավաների ճեղքային արտավիժումները կապված են կովկասյան ուղղության խորքային բեկվածքի հետ, որը անցնում է գագաթային մասով: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արագած լեռան հարավային եզրային սարավանդի վրա, որոնք համարվում են ողողամաշման հրաբխային սարավանդներ: Լավաները, լցնելով հին ռելիեֆի փոս մասերը, առաջացրել են միաթեք թույլ ալիքավոր սարավանդներ, իսկ որոշ տեղերում բարձրանում են խարամային կոներ:

Արագածի լավային ու հրաբխաբեկորային ժայթքումներն սկսվել են պլեոցենի ժամանակում և ընդմիջումներով շարունակվել մինչև վերին չորրորդական ժամանակը ներառյալ, նրանց հետ են կապված հարավ-արևմտյան և հարավային լանջերում ինչպես նաև նախալեռներում առաջացած տուֆերի ու տուֆալավաների լայնատարած ծածկոցները, որոնք մտնում են լեռնածանգվածի տեկտոնական կառուցվածքի մինչպլեոցենյան ծալքավոր կոմպլեքսի մեջ, որը ամենուրեք հորիզոնական կերպով տեղադրված է պլեոցեն չորրորդականի լավային կոմպլեքսով: Ստորին կոպլեքսի տեկտոնական կառուցվածքի մասին տվյալները չափազանց սուղ են:

Արայի լեռ - Արագածի լայնակի բեկվածքով Արագածի զանգվածը բաժանվում է երկու բեկորի: Հյուսիսային բարձրացված բեկորում մինչ պլիոցենյան հիմքը ներկայացված է կավիճ-պալեոգենի ծալքավոր և տեղ-տեղ հնագույն փոխակերպային կոմպլեքսներով:

Հարավային իջեցված բեկորում կավիճ-պալեոգենի ծալքավոր կոմպլեքսն աննշանորեն ծածկվում է միոցենի և ստորին-միջին պլիոցենի նստվածքային ու հրաբխաբեկորային ապարներով:

Այստեղ երկրաֆիզիկական տվյալներով առանձնացվում են Ամբերդի, Արտենիի, Հարավարագածյան իջույթները, Մաստարայի և Անիի բարձրացումները: Ամբերդի իջույթը և Մաստարայի բարձրացումը տեղաբաշխված են Արագածի հարավային ու հարավ-արևմտյան լանջերում: Այստեղ առաձնացվում են նաև ավելի ցածր աստիճանի տեղային բարձրացումներ, անտիկլինալներ, սինկլինալներ և աղային կառուցվածքներ:

Մարզում առկա են սելավային երևույթներ, մասնավորապես հայտնի է Մաստարայի սելավային գետակը, որը հաճախ վարարելով մեծ վնաս է հասցնում ցանքատարածություններին:

1.8. Ջրագրություն

Նկարագրվող տարածքը գտնվում է Մաստարա հեղեղատարի ստորին հոսանքում և, որոշակի կերպով զբաղեցնում է արտաբերման կոնի տարածքը, հիմնականում այն անջուր է: Անջուր են նաև տարածքին շրջափակող բլրաշարքերից իջնող մի քանի ձորակներ (ժամանակավոր հոսքեր) ոչ երկար ձգվածությամբ (նայիր ինժեներաերկրաբանական քարտեզի III-A1, III-A2, III-A3 տեղամասերը):

Գարնանային ջրհոսքերը անկանոն են, սկսվում են մարտ ամսին և ավարտվում ապրիլին, երբեմն մայիսին: Հորդացումները կապված են տեղումների քանակից:

1.8.1. Գետեր

Բազմաթիվ են լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները, որոնցից սնվում են գետակները: Մարզի հիմնական զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով: Հայտնի է Մաստարայի սելավային գետակը, որը հաճախ վարարելով մեծ վնաս է հասցնում ցանքատարածություններին:

1.8.2. Լճեր, ջրամբարներ

Ամբերդ, լճակ Հայաստանում, Արագած լեռան մնրձկատարային սարավանդի հարավային–արևմտյան մասում: Բարձրություն 3220 մ, երկարություն 150 մ, լայնություն 148 մ, մակերեսլ՝ 0,17 քար. կմ, ջրի ծավալը՝ 11700 խորանավտ մ, խորությունը՝ 1,7 մ: Սնումը ձնաանձրևային է: Ջմռանը ամբողջությամբ սառչում է: Ջուրը մաքուր է, սառնորակ և անուշահամ: Ամբերդ լճի ափին են գտնվում Հայաստանի ԱԳԱ ֆիզիկայի ինմտիտուտի հետազոտությունների կայանը՝ իր ավանով:

Ամբերդալիճ, Ամբերդ, Բագու, Բակու, անհոսք լիճ է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Բյուրականից մոտ 2,1 կմ հյուսիս-արևմուտք՝ Արագած լեռան հարավարևմտյան մերձկատարային սարավանդին: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:

Բարձրությունը՝ 3220 մ, երկարությունը՝ 150 մ, լայնությունը՝ 148 մ, մակերեսը՝ 0,17 կմ², ջրի ծավալը՝ 11700 մ³, խորությունը՝ 1,7 մ է: Սնումը ձնաանձրևային է: Ձմռանը ամբողջությամբ սառցակալվում է: Լճի ջուրը մաքուր է ու անուշահամ, օգտագործվում է արոտային շրջանում անասուններին ջրելու համար: Լճի ափին է գտնվում Նոր Ամբերդի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը:

Լեսինգ, անհոսք լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հյուսիս–արևմուտք, Արագածի արևելյան գագաթից 3 կմ հյուսիս.-արևելքում՝ 3300 մ բարձրության վրա:

Առաջացել է սառցադաշտային կառի հատակում՝ մորենային արգելափակման հետևանքով: Մակերեսը 0,016 կմ² է, առավելագույն խորությունը՝ 2,5 մ, ջրի ծավալը՝ 18800

մ³: Ջուրը մաքուր է, սառնորակ: Ամռանը ջրի ջերմաստիճանը 9 °C է: Սնումը հալոցքային է: Կոչվել է ի պատիվ ակադեմիկոս Ֆրանց Յուլի Լեվինսոն-Լեսինգի, որը 1927-1929 թվականներին ղեկավարել է ԽՍՀՄ ԳԱ անդրկովկասյան արշավախմբերի աշխատանքները Արագածում և Սևանա լճի ավազանում:

Կուրաղբյուր, Քուրբուլաղ լիճ, լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արագած լեռան հյուսիսարևելյան լանջին, ծովի մակարդակից 2985 մ բարձրության վրա: Մակերեսը 0,1 կմ²:

Միրաք, լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջափնյակում, ծովի մակարդակից 2050 մ բարձրության վրա, Մելիքգյուղից 4 կմ հարավ-արևմուտք: Մակերեսը՝ 0,5 կմ²:

Ումրոյ լիճ, լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հյուսիս-արևմուտք, Ապարան քաղաքից 10 կմ հարավ, Արագած լեռնազանգվածի արևելյան լանջին., ծովի մակարդակից 3050 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 20 հա:

Գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:

Քարի լիճ, Կարագյոլ, Ղարագյոլ, Սև լիճ, Քար, Քար լիճ), լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արագած լեռան լանջին: Բարձրությունը ծովի մակերևույթից 3207 մ է, հայելու մակերեսը 0,12 կմ²: Բյուրականից Քարի լիճ երթևեկելի ճանապարհ կա, իսկ արևելյան ափին օդերևութաբանական կայան է տեղակայված, կազմակերպված է հանգստի գոտի:

Քարի լիճը գտնվում է Արագած լեռան վրա, բացարձակ բարձրությունը՝ 3207 մ, հայելու մակերեսը՝ 0,12 կմ², խորությունը՝ 8 մ: Առաջացել է սառցե գոյացություններից: Լիճը երկարատև շրջապատված է լինում ձյունով, ինչի պատճառով ջուրը բավականին սառն է մնում: Քարի լճի արևմտյան ափից սկիզբ է առնում Արքաշեն գետը:

Լճի հարավային ափին է գտնվում Երևանի ֆիզիկայի ինստիտուտի Առաջնային տիեզերական ճառագայթների գրանցման ու հետազոտման կայանը, որը 1942 թվական հիմնել են Արտեմ Ալիխանյան և Աբրահամ Ալիխանով եղբայրները:

Կայանի ջրամատակարարումն ապահովելու նպատակով լճի հարավային արտահոսքը փակվել է բետոնե պատով, որի հետևանքով բարձրացել է լճի մակարդակը, ձմռանը չի սառցակալում մինչև հատակը, իսկ գարնանն ամբարված ջուրը բավարարում է կայանի կարիքները ողջ տարին: Լճում Իշխան ձուկ կա, որի քանակը տարեցտարի լրացվում է արհեստական բազմացված մանրաձկով:

1.8.3. Ջրամբարներ

Ապարանի ջրամբար, Ապարանի լիճ, արհեստական ջրամբար Հայաստանի Արագածոտնի մարզում, Քասաղ գետի վերին հոսանքում, Քուչակ և Եղիպատրուշ գյուղերի մինջև։

Կառուցվել է 1962-1967 թթ-ին։ Մակերեսը 7,9 քառակուսի կիլոմետր է, ընդհանուր ծավալը՝ 91 միլիոն խորանարդ մետր, օգտակարը՝ 81 միլիոն խորանարդ մետր, ջրթողունակությունը վայրկյանում 18 խորանարդ մետր։ Ջրամբարի ամբարտակը հողային է, բարձրությունը՝ 50 մ, երկարությունը՝ 200 մ։

Սնվում է Քասաղ գետի, Լուսագյուղ, Վարդենիս, Թթուջուր, Եղիպատրուշ, Քուչակ գետակների և մթնոլորտային տեղումներից։ Ձմռանը սառցակալում է։ Օգտագործվում է ոռոգման համար։ Ջուրը տրվում է նախկին Աշտարակի, Էջմիածնի շրջաններին։ Ջրամբարի հիմնական ձկնատեսակը տեղական կողակն է։ Այստեղ բուծվել է նաև Սևանա լճի իշխանը, սիգը և ծածանը։ Վերջին տարիներին այստեղ բուծվել է նաև խեցգետինը։ Շրջակայքում կառուցվել են հանգստյան գոտիներ։ Ջրամբարի ջրերի տակ են մնացել Քասաղ, Զովունի գյուղատեղերը, որոնց բնակիչները վերաբնակեցվել են Երևանի շրջակայքում։

Նախկին Զովունի գյուղում ջրի սահմանագծից 1967 թ-ին հանվել և անվտանգ տեղ են փոխադրվել V դարում կառուցված Սուրբ Վարդան և Թուխ Մանուկ փոքրաչափ եկեղեցիները։ IV դարում կառուցված Պողոս-Պետրոս բազիլիկ տաճարը տարեկան 3-4 ամիս մնում է ջրային տարածքի մեջ։

Կաքավաձորի ջրամբար, Հայաստանի Արագածոտնի մարզում՝ մոտ 2000 մ բարձրության հեղեղատի վրա՝ Թալինից 15 կմ արևելք։ Շահագործման է հանձնվել 1986 թվականին։ Սնվում է Թալիշ գետի կարգավորված ջրհոսքից։ Մակերեսը 0, 14 կմ² է, ջրատարողությունը՝ 1 միլիոն մ³, օգտակարը՝ 0, 95 միլիոն մ³։ Հոսքի կարգավորումը սեզոնային է։ Պատվարը քարալիցքային է՝ երկաթբետոնե երեսապատումով, երկարությունը՝ 130 մ, բարձրությունը՝ 35 մ։ Ջրամբարից ջուրը բաց է թողնվում աշտարակային ջրընդունիչի և խողովակաշարի միջոցով, ջրթողքը 0, 34 մ³/վ է։ Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով։

Մելիք գյուղի ջրամբար, Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Հալավար գետի վրա՝ Ծաղկահովիտ գյուղից 8 կմ արևելք՝ մոտ 2030 մ բարձրության վրա։ Շահագործման է հանձնվել 1981 թ.-ին։ Մակերեսը 0, 46 կմ2 է, միջին խորությունը՝ 8 մ ջրատարողությունը՝ 5, 5 միլիոն մ3։ Հոսքի կարգավորումը սեզոնային է։ Պատվարը հողային է՝ ավազակավային միջուկով, երկարությունը՝ 255 մ, առավելագույն բարձրությունը՝ 32 մ։ Ջուրը բաց է թողնվում մետաղական խողովակաշարի միջոցով։ Ոռոգվող հողատարածություններն ավելի բարձր են, և պատվարի մոտ կառուցված է ջրհան կայան։ Ջրամբարի թասի երկրաբանական անբարենպաստ պայմանների պատճառով տեղի է ունենում ջրի զգալի կորուստ։

Ներքին Սասունաշենի ջրամբար, ջրամբար ՀՀ Արագածոտնի մարզում՝ Ներքին Սասնաշեն գյուղի մոտ՝ 1770 մ բարձրության վրա։ Շահագործման է հանձնվել 1963 թվականին։ Մակերեսը 0,18 կմ² է, միջին խորությունը՝ 6,5 մ, ջրատարողությունը՝ 1,15 միլիոն մ³, օգտակարը՝ 0,78 միլիոն մ³։ Սնումը հիմնականում հալոցքային և անձրևային է։

Հոսքի կարգավորումը սեզոնային է: Պատվարը քարալիցքային է, առավելագույն բարձրությունը՝ 20 մ, երկարությունը՝ 150 մ: Ջրթողքը 0,97 մ³/վ է:

1.8.4. Ջրանցքներ

Ամբերդ, ջրանցք Հայաստանի Աշտարակի շրջանում, կառուցվել է 1944-1945 թվականներին: Սկիզբ է առնում Արագած լեռների հարավային լանջերից: Քասաղի վտակ Ամբերդ գետից: Ջրանցքի երկարությունը 9 կմ է, փոխարինում է Ամբերդ գետից առնվող իրար զուգահեռ, հնակառույց 12 առուներին: Երեսպատված է բետոնով: Ունի 5 խորանարդ մ/վրկ թողունակություն: Ոռոգում է 5000 հա հողատարածություն:

Աշտարակի ջրանցք, ջրանցք ՀՀ Արագածոտնի մարզում: Կառուցվել է 7-րդ դարում: Սկիզբ է առնում Գեղարոտ գետից: Երկարությունը 10 կմ է, ջրթողունակությունը՝ 5 մ³/վ: Ջրառը կատարվում է պատվարային եղանակով: Ջրանցքի վրա կառուցված են 25 ջրատեխնիկական կառույցներ: Ոռոգում է մարզի հողատարածքները:

Արզնի-Շամիրամ ջրանցք, Արզնի-Շամիրամ ոռոգման համակարգ, Սևանա լճի և Հրազդան գետի ջրերը օգտագործող ոռոգիչ համակարգ:

Ոռոգում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի շուրջ 30 հազար հա հողատարածությունները: Մայր ջրանցքը (երկարությունը՝ մոտ 92 կմ) սկիզբ է առնում Արզնիի հիդրոէլեկտրակայանը սնող ճնշման ավազանից և սկզբնամասում ունի 25 մ3/վրկ թողունակություն: Շինարարությունն ավարտվել է 1973 թվականին: Շինարարությունն ավարտվել է 1974-ին: 2010-ականների սկզբին կատարվել էն վերաբորոգման աշխատանքներ: Ջրանցքիհամակարգում կառուցվել է ՓՀԷԿ

Թալինի ջրանցք, ջրանցք Հայաստանի Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Սկիզբ է առնում Ախուրյանի ձախ ափից: Սնվում է Ախուրյան ջրամբարի ամբարտակված ջրերից[1][2]:

Առաջին հերթը շահագործման է հանձնվել 1957 թ.-ին, երկրորդը՝ 1974 թ.-ին, երրորդը՝ 1986 թ.-ին: Մայր ջրանցքի երկարությունը 91 կմ է, բաժանարար ցանցինը՝ 118 կմ: Մայր ջրանցքը բաժանվում է աջ և ձախ ճյուղերի: Ջրթողունակությունը 30 մ3/վ է: Ոռոգում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի մոտ 24 հազար հեկտար հողատարածք:

Քասաղի ջրանցք, ջրանցք ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Սկիզբ է առնում Քասաղ գետից: Շահագործման է հանձնվել 1973 թվականին: Մայր ջրանցքը սկսվում է ջրարգելակ-վահան կարգավորիչով, անցնում 2,5 կմ թունելով, Քասաղի կիրճով: Երկարությունը 3,8 կմ է, ջրթողունակությունը՝ 18 մ³/վ: Բաժանվում է ձախ և աջ ճյուղերի: Ձախափնյա ջրանցքը ձգվում է Քասաղից դեպի արևելք, հասնում Ջորավան գյուղի սահմանները: Երկարությունը 8,9 կմ է, ջրթողունակությունը Արզնի-Շամիրամին փոխհատուցող ջրանցքի հետ՝ 16,4 մ³/վ: Կառուցվել է Արզնի-Շամիրամ ջրանցքին լրացուցիչ ջուր (14 մ³/վ) տալու համար: Աջափնյա ջրանցքը դյուկերով անցնում է Քասաղը, ձգվում արևմուտքից մինչև Օհանավան և Ուշի գյուղերի հողատարածքները: Երկարությունը 6,6 կմ է, ջրթողունակությունը՝ 1,65 մ³/վ:

1.8.5. Ջրվեժներ

Գեղարոտի ջրվեժ, ջրվեժ Հայաստանում: Բնության հուշարձանը գտնվում է Արագածոտնի մարզում, Արագած գյուղից 11 կմ հյուսիս-արևմուտք: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության

պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն: Արագածի լանջին՝ ծովի մակարդակից մոտ 3000 մետր բարձրության վրա՝ Քասաղ գետի Գեղարոտ վտակի վրա է այս հիասքանչ ջրվեժը: Գտնվում է Արագածոտնի մարզի Արագած գյուղից մոտ 12 կմ հեռավորության վրա: Ձմռանը սառչում է, իսկ ամռանը սառնորակ ջրերը գահավիժում են մոտ 17 մետր բարձրությունից: Շատ նման է Թռչկան ջրվեժին:

Քասախի ջրվեժ, Հայաստանի ամենաբարձր ջրվեժը: Բարձրությունը՝ 70 մետր: Գտնվում է Արագածոտնի մարզում՝ Քասախ գետի վրա, Հովհաննավանք վանական համալիրի դիմաց:

1.8.6. Աղբյուրներ

Գեղաձոր, գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հարավ-արևմուտք, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա: Այն գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:

Սրբի աղբյուր գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Ապարան քաղաքի կենտրոնում, ծովի մակարդակից 1870 մ բարձրության վրա: Այն գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:

1.9. Գեոմորֆոլոգիական պայմանները

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արագած լեռան հարավ-հարավ-արևմտյան փոքրաթեք լանջին, շրջափակված՝ ոչ շատ բարձր բլրաշարքերով հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից, հյուսիսից ազատ երևում են Արագած լեռան բարձրադիր թեքություններ իրենց քամիների հոսքերով, իսկ հարավում՝ Արարատյան դաշտի հյուսիս-արևմտյան եզրամասերը: Ընդհանուր առմամբ Թալին քաղաքը զբաղեցնում է փոքրաթեք տարածք, բարդացված իր սահմանափակ և ոչ մեծ խորությամբ ձորակներով, որոնցից հիմնականը քաղաքի ամբողջ երկարությամբ ձգվողն է՝ հյուսիս-արևմուտքից մինչև հարավ-հարավ-արևմուտք ուղղությամբ, որի խորությունը տատանվում է 2-6 մետրի սահմաններում: Տարածքն ունի հարավ-հարավ-արևելյան թեքություն, բացարձակ նիշերը տատանվում են 1550-1650 մետրի սահմաններում: Փոքրաթեք՝ մինչև 5°, տարածքները մասամբ շրջափակում են մին¬չև 20° թեքությամբ բլրաշարքեր, որոնք հիմնականում ներկայացված են անդեզիտաբա-զալտներով և բազալտներով (նայիր ինժեներաերկրաբանական քարտեզը), հյուսիս- հյուսիս-արևմուտքում՝ տուֆերով: Տուֆերով է պատված նաև քաղաքի գրեթե ամբողջ տարածքը:

1.10. Երկրաբանական կառուցվածքը

Դիտարկվող տարածքները գտնվում են Արագած լեռան հարավ-հարավ-արևմտյան փոքրաթեք լանջի վրա և ներկայացված են հիմնականում Արագած լեռան հրաբխային հոսքերից և ժայթքումներից գոյացած ապարներից, որոնց մասամբ ծածկում են

ժամանակակից էլյուվիալ, դելյուվիալ և պրոլյուվիալ առաջացումները (հիմնականում փոքրաթեք տարածքներում):

Տարածքում հիմնականում տարածված են տուֆերը իրենց բազմաթիվ տարատեսակներով: Որոշ բլուրներ և բլրալանջեր ներկայացված են անդեզիտա-բազալտներով:

Տուֆերը ներկայացված են թե Երևան-Գյումրիյան, և թե Արթիկի տարատեսակներով, որոնք տարածված են քաղաքի տարբեր հատվածներում, թե ուղղաձիգ, և թե հորիզոնական ուղղությամբ, նրանք տեղ-տեղ ունեն 30-40 մետր հզորություն (ըստ ունեցած ֆոնդային տվյալների) և գտել ենք ոչ անհրաժեշտ տարանջատել նրանց իրենց տարածմամբ և խորությամբ:

1.11. Սեյսմատեկտոնական պայմանները

Քանի որ դիտարկվող տարածքը գտնվում է Արագած լեռան հարավային փեշերին, ուստի նրան վերաբերող բոլոր սեյսմատեկտոնական պայմանները համընկնում են լեռան սեյսմատեկտոնական պայմաններին:

ՀՀ Արագածոտն մարզի տարածքը բնութագրվում է համեմատաբար միջին սեյսմիկ



ակտիվությամբ, մարզը գտնվում է 0.2-0.3g առավելագույն հորիզոնական արագացման գոտում՝ ըստ ՀՀ տարածքի սեյսմաշրջանացման քարտեզի.

372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզները:

Երկրի տարածքի առանձին շրջանների սեյսմիկ ազդեցությունների մակարդակը որոշվում է ըստ Հավելվամս 1-ում բերված սեյսմիկ գոտիավորման քարտեզի:



Սեյսմիկ ազդեցությունների ուժգնությունը գետնի մակերևույթի վրա գնահատվում է գրունտի սպասվելիք հորիզոնական արագացման մեծությամբ:

Տվյալ ուժգնության երկրաշարժերի կրկնողության պարբերականությունը ընդունված է հավասար 475 տարվա՝ 50 տարվա ընթացքում ուժգնության մեծության՝ 10%-ով գերազանցման հավանականությամբ:

Սեյսմիկ գոտիներ

Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնք ցույց են տրված Հավելվամս 1-ում բերված քարտեզում: Գրունտների սպասվելիք հորիզոնական արագացումների մեծությունները, ըստ սեյսմիկ գոտիների, ընդունվում են համաձայն աղյուսակի 1-ի:

Աղյուսակ 1

Սեյսմիկ գոտիներ	1	2	3
Գրունտի հորիզոնական արագացման մեծությունը **a**, սմ/վրկ^2	300	400	500

Հայաստանի Հանրապետության 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում գտնվող բնակավայրերի ցանկը բերված է Հավելվածս 2-ում:



1.12. Լանդշաֆտների դասակարգում և գնահատում

Դիտարկվող տարածքն ընդգրկված է նախալեռնային բնական լանդշաֆտային գոտում: Գոտու տարածքը հիմնականում հարթ է (մինչև 3° թեքություններ): Պասիվ են արտահայտված հիդրոլոգիական պրոցեսները:

Գոտու հողատարածությունները օգտագործվում են և ամբողջապես ծածկված են հացահատիկի և կերախոտերի ցանքերով:

Հաշվի առնելով միկրոռեգիոնի լանդշաֆտային գոտու միատարրությունը՝ հետագա դասակարգման տաքսոնոմիկ միավոր է ընտրվել լանդշաֆտների քաղաքաշինական օգտագործման հիմնական ձևերը.

- Կառուցապատված լանդշաֆտներ
- Կառուցապատման ենթակա լանդշաֆտներ
- Գյուղատնտեսական նշանակության հողահանդակներ
- Անտառտնտեսության հողեր:

Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտների օգտագործման ռեժիմը նախատեսում է.

- կառուցապատման կանոնակարգում՝ ըստ բնակչության և կառուցապատման նորմատիվ խտությունների,
- գյուղատնտեսական ռեզերվային հողերի կառուցապատում միայն տնամերձ հողամասերով (1200 մ^2 հողաբաժնով),

- հարմարավետ կապերի ստեղծում,
- ինժեներական նախապատրաստման միջոցառումների կիրառում (ուղղաձիգ հատակագծում, մակերևութային ջրերի հեռացում),
- տարբեր օբյեկտների և ենթակառուցվածքների սանպահպանման գոտիների պահանջների կիրառում:

Գյուղատնտեսական նշանակության հողահանդակների օգտագործման ռեժիմը նախատեսում է միջոցառումների լայն համալիրի կիրառում, որն ընդգրկում է.

Ագրոտեխնիկական միջոցառումներ՝
- ցանքաշրջանառության կիրառում,
- ցածր արտադրողականության վարելահողերի բարելավում (քարերի հավաքում),
- խորը հերկ երեք տարին մեկ անգամ,
- պարարտանյութերի օգտագործման չափաբաժինների որոշում, պահեստենրի կառուցում՝ ըստ սանպահպանման ստանդարտների պահանջների,
- վնասատուների դեմ պայքարի կենսաբանական մեթոդների կիրառում:

Մարգագետնամելիորատիվ միջոցառումներ՝
- արոտավայրերի բարելավում, ջրարբիացում,
- անասունների արածեցման քանակների և ժամկետների որոշում,
- արոտավայրերում ճանապարհային ցանցի կարգավորում,
- ոռոգվող խոտհարքների կազմակերպում,
- մոլախոտերի, վնասակար և թունավոր բուսատեսակների ոչնչացում:

Հիդրոտեխնիկական միջոցառումներ՝
- լեռնային առուների կառուցում,
- ձյունապահ վահանների ստեղծում:

Անտառտնտեսության հողերում նախատեսվում է.

Անտառմելիորատիվ միջոցառումներ
- անտառածածկ տարածքների մեծացում՝ տեղական պայմաններին հարմարվող ծառատեսակների ընտրությամբ,
- գոյություն ունեցող անտառների բիոնիտետի բարելավում:

1.13. Բնակչություն և ժողովրդագրության վերլուծություն

Արագածոտնի մարզի տարածքը Հայաստանի ամենավաղ բնակեցված շրջաններից է: Դրա վկայությունն են տարբեր վայրերում հայտնաբերված քարի ու բրոնզի դարերի նյութական մշակույթի հուշարձանները: Բնակչությունը ավանդաբար կենտրոնացված է եղել Քասաղ գետի և նրա վտակների միջին ավազաններում:

Արագածոտնի մարզն աչքի է ընկնում նաև նրանով, որ այդտեղ են հիմնականում կենտրոնացված Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններից եզդիները: Նրանք բնակվում են ինչպես խառը՝ հայերի հետ միասին, այնպես էլ առանձին գյուղերով:

ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության մեծամասնությունը կուտակված է Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում, (բնակչության խտությունը կազմել է՝ համապատասխանաբար՝ 89 և 36 մարդ 1 կմ^2), այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 64%-ը, մակերեսով կազմում է մարզի 46.5 %-ը:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ			
հ/հ	Բնակավայրը	Առկա 2019թ.* հունվարի 1-ի դրությամբ	Հեռանկարային
Արագածոտն-1			
1	Ապարան	5958	6554
2	Արագած	3936	4330
3	Արայի	660	726
4	Ափնագյուղ	632	695
5	Եղիպատրուշ	735	808
6	Երնջատափ	588	647
7	Թթուջուր	377	415
8	Լուսագյուղ	869	956
9	Ծաղկաշեն	661	727
10	Կայք	599	659
11	Հարթավան	956	1052
12	Ջորագլուխ	255	280
13	Նիգավան	728	801
14	Շենավան	1896	2086
15	Շողակն	164	180
16	Չքնաղ	197	217
17	Ջրամբար	180	198
18	Սարալանջ	233	256
19	Վարդենիս	753	828
20	Վարդենուտ	1012	1113
21	Քուչակ	2221	2443

Մարզի մշտական բնակչության սեռատարիքային բուրգը 2019 թ հունվարի 1-ի դրությամբ[2]



[2] https://www.armstat.am/file/article/marzer_2019_34.pdf

1.14. Տրանսպորտ

Քարտեզ 3. ՀՀ Արագածոտնի մարզի ճանապարհներ

Աղբյուրը՝ ՀՀ ՏԿՏՏ նախարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության 3 ավտոխճուղիները՝ Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի:

Մարզի տարածքի արևմտյան հատվածը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին՝ շուրջ 30 կմ, որը սակայն չի թողնում էական ազդեցություն մարզի տնտեսական զարգացման վրա:

Մարզի ճանապարհների հասանելիության տեսանկյունից գտնվում է շահեկան դիրքում:

Միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 305.1 կմ, որից՝

1. Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 157.1 կմ,
2. Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 148.0 կմ,
3. Մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 389.4 կմ:

Հիմնովին վերանորոգված միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 76.8 կմ կամ ընդհանուրի 25.2 տոկոսը: Հիմնովին վերանորոգված մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ 42.8 կմ կամ ընդհանուրի 11 տոկոսը:

Աղյուսակ 8. Մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով , (կմ/10 000բն.)
Միջպետական	157.1	0.06	12.10
Հանրապետական	148.0	0.05	11.40
Մարզային (տեղական)	389.4	0.14	30.00
Ընդհանուր	694.5	0.25	53.51

Աղբյուր՝ ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 265-Ն որոշում, մարզպետարանների վերլուծություններ:

Անհրաժեշտ է նշել Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման գործընթացը՝ որպես ճանապարհաշինական ենթակառուցվածքների բարելավում, որն էական ազդեցություն կունենա բեռնա և ուղևորափոխադրումների ժամանակի կրճատման, հետևաբար՝ ինքնարժեքի նվազեցման վրա:

Համայնքում առկա են միջպետական՝ 48, հանրապետական՝ 13 և 38 համայնքային նշանակության կամուրջներ:

Մարզի միջպետական նշանակության ճանապարհները համեմատաբար բարվոք վիճակում են:

	Լավ	Բավարար	Վատ	Ընդամենը
Աշտարակի տարածաշրջան	22.5	69	24.3	**115.8**
Ապարանի տարածաշրջան	28.6	21.3	8.6	**58.5**
Արագածի տարածաշրջան	3	27.2	21	**51.2**
Թալինի տարածաշրջան	36.4	45.8	81.7	**163.9**
Ընդամենը	**90.5**	**163.3**	**135.6**	**389.4**

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան, վերլուծություն

Միջպետական և մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասն անցնում է ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, երթևեկության տևողությունն էապես ավելանում է:

1.15. Զբոսաշրջություն

Արագածոտնի մարզում առկա է զբոսաշրջության զգալի ներուժ, որը ներկայացված է Արագածոտնի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հատուկ պահպանվող տարածքներով, մասնավորապես՝ բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով: Զարգացման մեծ հնարավորություն ունի ճանաչողական և ընտանեկան տուրիզմը: Մարզի տարածքում գործում են խոշոր հյուրանոցային օբյեկտներ. Աշտարակում՝ «Աշտարակ» հյուրանոցը, Բյուրականում՝ «Ամբերդ» հյուրանոցը և «Հյուսիսային աստղ» հյուրանոց-սպորտային-առողջարանային համալիրը, Արագածում՝ «Արագած» հյուրանոցը, որտեղ ձմեռային տուրիզմի, լեռնագնացության, հանգստի, առողջարարական սպորտի, ալպինիզմի կազմակերպման մեծ հնարավորություններ կան: Մարզը զբոսաշրջիկներին ընձեռում է ինչպես ձմեռային հանգստի, այնպես էլ լեռնագնացության, պատմամշակութային տուրիզմի համադրման մեծ հնարավորություններ:

Զբոսաշրջիկների կողմից հաճախ այցելվող վայրերից են հանդիսանում Տառեր հուշարձանը և Քրիստոնեության ընդունման Խաչ հուշարձանը:

Ագրարային զբոսաշրջությունը ստեղծում է ծառայությունների ոլորտի աշխատատեղեր: Ուստի, ագրարային զբոսաշրջության զարգացումը կարելի է դիտարկել որպես դեգրադացվող, լճացող գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման խթան: Ագրարային զբոսաշրջության ծառայությունների ծրագիրը սովորաբար իր մեջ ներառում է.

– գիշերակաց հարմարավետ մասնավոր առանձնատներում;
– էկոլոգիապես մաքուր սննդամթերք;
– ծանոթացում տարածքի պատմությանը;
– հավաքչություն շրջակա միջավայրում (սունկ, հատապտուղ, վայրի
մրգեր և այլն);
– մանակցություն ժողովրդական, ազգային ծեսերին;
– էքսկուրսիաներ:

<u>Ռեսուրսների գնահատական</u>

Ագրոտուրիզմի գլխավոր զբոսաշրջային ռեսուրսը հանդիսանում են.

- հողը,
- ընտանի կենդանիները,
- գյուղատնտեսական ռեսուրսները
- գյուղական բնակավայրերը:

Ագրոտուրիզմը զբոսաշրջության/ժամանակավոր հանգստի տեսակ է, որը կազմակերպվում է հիմնականում գյուղական վայրերում՝ գեղագիտական, ճանաչողական և առողջարարական նպատակներով, որի ժամանակ գիշերակացն իրականացվում է գյուղական բնակչության բնակարաններում, առանձնատներում և օգտվում տվյալ վայրի զբոսաշրջային ռեսուրսներից:

Հայաստանի Հանրապետության տարածքը հարուստ է ինչպես գյուղական ինքնատիպ բնակավայրերով, այնպես էլ պատմա-հնագիտական հուշարձաններով, տեսարժան վայրերով, բնության անկրկնելի տեսարաններով, ռելիեֆային բարդ ու կլիմայական պայմաններով: Այս բոլորը նախադրյալներ են տարածաշրջանում գրեթե ամենուր զարգացնել ագրոտուրիզմը:

Արագածոտնի մարզի ագրոտուրիզմի զարգացման համար առանձնացվում են մի շարք գործոններ.

- տնտեսական,
- էթնիկ,
- բնաաշխարհագրական,
- պատմամշակութային:

Ներկայում Արագածոտնի մարզը ձևավորված է որպես գյուղատնտեսական և լեռնահանքային արդյունաբերության շրջան: Մարզի գյուղատնտեսական մասնագիտացումը ձևավորվել է բնակլիմայական/գոտիական պայմանների ընձեռած հնարավորությունների վրա: Մարզի հարավային հատվածում՝ ***<u>նախալեռնային գոտում</u>***, գերակշռում են.

- բուսաբուծությունը,
- պտղաբուծությունը,
- ալկոհալային խմիչքների,
- պահածոների արտադրությունը (Աշտարակ, Օշական, Արտենի, Ոսկեվազ, Կարբի և այլն):

Գոտին ներառում է Թալինի տարածաշրջանի ցածրադիր հատվածները և Աշտարակի տարածաշրջանը գրեթե ամբողջությամբ: Այստեղ հաջողությամբ իրականցվում են նաև ոչ ավանդական՝ բանջարաբուծության զարգացումը, որը ևս ունի պոտենցիալ հնարավորություն հետաքրքրություն առաջացնել ագրոզբոսաշրջիկների շրջանում:

<u>Բարձրադիր գոտին</u> ընդգրկում է Ապարանի և Արագածի տարածաշրջաններն ամբողջությամբ և Թալինի տարածաշրջանի մի մասը: Տարածաշրջաններին բնորոշ է անասնաբուծության մասնագիտացումը:

Ագրոզբոսաշրջային առումով մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել գյուղմթերքների արտադրության պրոցեսը.

- Կաթնամթերքի (կարագ, կաթնաշոռ և այլն)
- Պանրի (Ապարան, Քուչակ, Ծաղկահովիտ և այլն):
- Մեղվաբուծությունը:

Մարզի տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորվել են նոր ճյուղեր, ինչպիսիք են ճագարաբուծությունը և ջայլամաբուծությունը[3]:

ՀՀ բնակչության ազգային կառուցվածքի վերլուծությամբ Արագածոտնի մարզն առանձնանում է ազգային կազմով: Հայերից բացի բնակչության կառուցվածք զգալի թիվ են կազմում եզդիները: (հանրապետությունում բնակվող եզդիների ավելի քան 4/5 –ը բնակվում են Արագածոտնի մարզում): Եզդիաբնակ գյուղերը տեղակայված են հիմնականում Արագածի և Թալինի տարածաշրջաններում: Դրանց թիվը 13-է՝ Արևուտ,

[3] Գրիգորյան Վ.Վ., Ոսկանյան Ա. Ե., Հայաստանի Հանրապետության տնտեսական աշխարհագրություն, Երևան, 2016թ,

Դդմասար, Թլիկ, Հակո, Կանչ, Սորիկ, Օթևան, Ռյա Թազա, Ալագյազ, Ջամշլու, Միրաք, Շենկանի, Շամիրամ (Աշտարակի տարածաշրջան):

Վերոնշյալ էթնիկ փոքրամասնություններն աչքի են ընկնում ոչ միայն գյուղատնտեսական մասնագիտացմամբ, այլ նաև ազգային սովորույթներով (հարսանիք, թաղման արարողություններ) և խոհանոցով, որը ևս առնձնակի հետաքրքրություն է ներկայացնում ագրոզբոսաշրջության կազմակերպման առումով և կարող է խթան հանդիսանալ զբոսաշրջության զարգացման համար[4]:

Մարզի հայ բնակչության նախնիները գաղթել են 18-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի Սասունի, Մուշի և Ալաշկերտի շրջաններից և մինչև օրս պահպանել են այդ շրջանների ավանդույթներն ու խոհանոցը, սասնա պարերը, երգերը, ասույթները, կենցաղային խաղերը և այլն, որն արժանավայել ձևով փոխանցվում է սերնդեսերունդ:

<u>Բնակլիմայական պայմաններ</u>

<u>Ռելիեֆ.</u> Արագածոտնի մարզի տարածի բացարձակ բարձրությունները ծովի մակարդակի նկատմամբ տատանվում են 1030-4090 մ՝ վրա, Ոսկեվազ–Օշական հատվածից մինչև Արագածի լեռնագագաթ: Այստեղ հանդես են գալիս գրեթե բոլոր գոտիները՝ կիսաանապատային մինչև ձյունամերձը, դրանց համապատասխան ռելիեֆի ձևակազմությամբ, ձևավորելով հողերի, բույսերի և կենդանական աշխարհի յուրահատուկ նմուշներ:

<u>Տեղումներ.</u> Մարզի տարածքում տեղումների տարեկան քանակն ունի զգալի տատանումներ՝ 300-320 մմ (ցածրադիր վայրեր) մինչև 900-1100 մմ (Արագածի գագաթամերձ շրջան):

<u>Ջերմաստիճան.</u> Հունվարին միջին ջերմաստիճանը տատանվում է -50 C մինչև -120C, իսկ հուլիսի միջին ջերմաստիճանը՝ 24,50C –ից մինչև 50C: Մարզի տարածքում բարձր է արևափայլի տևողությունը (տարեկան 2200-2600 ժամ), իսկ հյուսիսային հատվածը և միջլեռնային գոգավորությունները աչքի են ընկնում մշտապես փչող քամիներով, հատկապես Փամբակի լեռնաշղթայի շրջանը, Ծաղկահովիտ գյուղի մեձակայքը, (որտեղ կառուցվել է մեր հանրապետությունում առաջին հողմային էլեկտրակայանը):

<u>Ջրագրություն.</u> Մարզի ջրաբանական ցանցը զարգացած չէ, որը պայմանավորված է լավային ծածկոցների առկայությամբ, որոնցով ներծծվում են թափված տեղումների զգալի մասը: Առկա են մի շարք ժամանակավոր հոսք ունեցող գետակներ, սելավատարներ: Բազմաթիվ են լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները, հանքային ջրերը (Թթուջուր): Մարզի հիմնական զարկերակը Քասաղ գետն է՝ 89 կմ Գեղարոտ և Ամբերդ վտակներով, որանց շնորհիվ հունի առանձին հատվածներում ձևավորվել են բնության անձեռակերտ հուշարձաններ՝ կիրճեր (Արքաշենի, Ամբերդի, Քասաղի, Սաղմոսավանքից մինչև Աշտարակ):

Հունի առանձին հատվածներ աչքի են ընկնում փոքրիկ ջրվեժներով: Քասաղի վրա կառուցված Ապարանի (91մլն/մ^3) և Հալավարի ջրամբարները, որոնք իրենց հերթին կարող են օժանդակել ագրոզբոսաշրջությանը՝ ենթակառուցվածքի առկայության պարագայում (հանգիստ, լողափ, ձկնորսություն, ջրային սպորտաձևեր):

Զբոսաշրջային կարևոր դեր ունեն Արագածի գագաթների միջև գտնվող սարավանդի լճերը: Մարզը հարուստ է խմելու բարձրորակ ջրի պաշարներով:

<u>Կենսաբազմազանություն.</u> Մարզի բուսական և կենդանական աշխարհը հիմնականում լեռնային տափաստանային և մարգագետիններին բնորոշ տեսակներն են: Հանդիպում են՝ բուրավետ օշինդր, բարձր լեռնային երիցուկ, օշեյի ջուխտակ, գայլաթաթ և

[4] Պոտսոսյան Ա. Հ., Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Երևան, 2017

այլն, որոնք գրանցված են Կարմիր գրքում: Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ (Բյուրականի մոտ), փշատերևների (Ապարանից հյուսիս, Արագածի լանջերին) անտառակներ[5]:

Արգելավայրեր. Բնական էկոհամակարգերը պահպանելու համար մարզի տարածքում ստեղծվել է Արագածի ալպյան արգելավայրը: Արգելավայրը գտնվում է 3000 մ և ավել բարձրության վրա և զբաղեցնում է 300հա տարածք, իր մեջ ներառելով Քարի լիճը: Լճի շրջակայքի բուսականությունը մարգագետնային է (պահպանության հիմնական օբյեկտ): Կարճատև ամռան ընթացքում մարգագետինները վերածվում են գունագեղ ալպյան «գորգերի»: Արգելավայրի գեղատեսիլ տեսարանները էկո և լեռնային զբոսաշրջության եզակի վայրեր են, իսկ ստորոտներին տեղադրված գյուղական բնակավայրերի համար՝ ագրոտուրիզմին խթանող օջախներ:

Բնության հուշարձաններ. Արգելավայրի և մարզի այլ տարածքների լեռնային հատվածներում տարածված են քարային ծովերը, քարակառկառները <<չինգիլները>>, որոնք նույնպես հետաքրքրություն են առաջացնում ագրոզբոսաշրջիկների շրջանում:

Պատմության և մշակույթի հուշարձաններ. Ագրոզբոսաշրջության զարգացման համար կարևոր նախադրյալ են հանդիսանում մարզի ողջ տարածքով սփռված տարբեր ժամանակաշրջանների պատմամշակութային հուշարձանները: Դրանք համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն Աշտարակի տարածքում:

- **Ամբերդի ամրոց.** Զբոսաշրջային առումով չափազանց ուշագրավ է Ամբերդի ամրոցը, որը քարեդարյա բնակավայր է, որտեղ բրոնզե դարում կառուցվել է՝ Ուրարտական բերդաքաղաք: Ամբերդի դղյակը կառուցվել է 7-րդ դարում Կամսարականների կողմից ու եղել է նրանց նստավայրը:
- **Ագարակի պեղավայր.** Արագածի հարավային լանջերին է գտնվում 200 հա տարածք զբաղեցնող Ագարակի պեղավայրը, որտեղ ստեղծվել է պատմահնագիտական արգելոց (պեղումներըն շարունակվում են, գտածոներն ունեն 3500 տարվա պատմություն:
- **Արշակունիների դամբարան.** Արագածից քիչ հեռու գտնվում է 4-րդ դարի Արշակունիների դամբարանն Աղցքում:
- **Արուճը՝ Ս. Գրիգոր եկեղեցի.** Աշտարակի տարածաշրջանում զբոսաշրջային առումով մեծ հետաքրքրություն է առաջացնում Արուճը՝ Ս. Գրիգոր եկեղեցին (7-րդ դար),
- **Քարավանատունը (13-րդ դար),**
- **Մամիկոնյանների պալատը:**

Ագրոզբոսաշրջության առումով պատմամշակութային օջախները և հին գյուղերը կարող են դառնալ հայտնի կենտրոններ՝ Սաղմոսավանքը (Սաղմոսավան), Հովհաննավանքը (Օհանավան), Ղ. Փարպեցու գերեզմանը (Փարպի), Ս. Գևորգ եկեղեցին (Մուղնի), Մ. Մաշտոց եկեղեցին (Օշական), Ծիրանավոր, Կարմրավոր, Քասաղի կամուրջը, տուն-թանգարաններ (Պ.Պռոշյան, Սիսակյան):

Թալինի տարածաշրջանում կարելի է առանձնացնել Թալինի, Իրինդի եկեղեցիները, Դաշտադեմի ամրոցը և Ապարանի տարածաշրջանում՝ Ապարանի, Քուչակի եկեղեցիները:

Վերը նշված բնակավայրերը և ուրիշ շատերը կարող են դառնալ ագրոզբոսաշրջության խոշոր կենտրոններ, պայմանավորված իրենց գյուղատնտեսական ուղղվածությամբ, արժեքավոր կառուցապատմամբ, պատմամշակութային արժեքներով:

Ագրոզբոսաշրջային առումով առանձնացվում են նաև Արտաշավանից դեպի Ամբերդ և Արագած տանող ճանապարհի հատվածում լքված Նիգատուն և Լուսաղբյուր գյուղերը, որոնց շրջակայքն աչքի են ընկնում գեղատեսիլ բնությամբ, իսկ որոշ

[5] Մարտիրոսյան Լ.Մ., Ռեկրեացիոն աշխարհագրություն, Վանաձոր, 2014թ.,

հեռավորության վրա՝ Երևան-Ապարան մայրուղու ձախ կողմում կառուցված հայկական տառերը և խաչը:

Ագրոզբոսաշրջությունն Արագածոտնի մարզի համար կարող է դառնալ մոտ ապագայում եկամտի հիմնական աղբյուրներից մեկը: Մարզի 117 գյուղական բնակավայրերից յուրաքանչյուրը որևէ ուղղվածությամբ կարող է դառնալ զբոսաշրջության կենտրոն, բայց արդեն երկուսում՝ Օշականում և Բյուրականում ստեղծվել և հաջողությամբ զարգանում է ագրոզբոսաշրջությունը:

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, բարեկարգ կառուցապատումը, ճանապարհային և սպասարկման ենթակառուցվածքները քաղաքի ձորը կից հյուրատներով ու սննդի օբյեկտներով, մշակույթի պալատը, պտղաբուծությունը, գինեգործությունը, հյուրատուն-առանձնատները խթան են հանդիսանում Օշականը որպես զբոսաշրջային հիմնական կենտրոն ձևավորելու:

Բյուրականում՝ պտղաբուծությունը, կաթնամթերքի արտադրությունը, առողջարար բնությունը, աստղադիտարանը, գյուղի քաղաքաշինական արժեքավոր միջավայրն իր առանձնատներով ևս ագրոզբոսաշրջության զարգացման նախադրյալ կարող են հանդիսանալ:

Բացի վերը նշված գյուղերից որոշակի ներդրումներից և ենթակառուցվածքի միասնական լիարժեք ցանցի կազմակերպումից հետո ագրոզբոսաշրջությունը կարող է զարգանալ.

- Ակունք բնակավայրում (դամբարանադաշտով),
- Աշնակ (ավանդույթներով, խոհանոցով, պարի համույթով),
- Երնջատափ (սառնորակ աղբյուրներով, հանգստյան տներով),
- Թթու-ջուր (հանքային ջրերով) բնակավայրերում այլն:

Եզրակացություններ.

Հանրագումարի բերելով և համադրելով վերլուծության արդյունքները, կարելի է եզրահանել.

- Արագածոտնի մարզում ագրոզբոսաշրջության զարգացման համար առկա են բոլոր նախադրյալները,
- բացակայում է համապատասխան ենթակառուցվածքը (ճոպանուղի, լեռնային բարեկարգ արահետներ, ցուցանակ-վահանակներ և այլն),
- Բնակավայրերի բարենպաստությունն առավել ընդգծվում է մայրաքաղաքի հարևանությունը:
- Սակայն սպասարկման ցածր մակարդակը,
- առկա ենթակառուցվածքների տեխնիկական վատ վիճակը,
- շահագրգիռ կազմակերպությունների և միասնական փոխկապակցված և լրացնող համակարգի բացակայությունը:

Ակնկալվող արդյունք

- բնակչության սոցիալական մակարդակի բարձրացում
- տնտեսության բարգավաճում:
- Պատմամշակութային ժառանգության, ենթակառուցվածքների բարեկարգում, զարգացում:

1.16. Հուշարձաններ

Մարզում առկա են բազմաթիվ հուշարձաններ և հուշակոթողներ, որոնցից ամենահայտնիներն են՝ Սաղմոսավանքը, որը ամբողջովին կազմավորվել է XIII դ. առաջին կեսին, համալիրը կառուցել են Վաչե և Քուրդ Վաչուտյանները, բաղկացած է Ս. Սիոն, Ս. Աստվածածին եկեղեցիներից, գավթից և գրատնից: Աղձք

պատմաճարտարապետական համալիրը, որոնք ճանաչված են UNESCO-ի համաշխարհային ժառանգության ցուցակում:

Պատմամշակութային առումով մարզը մի յուրօրինակ թանգարան է, ուր պահպանված են Հայաստանի պատմության գրեթե բոլոր շրջաններին բնորոշ պատմական հուշարձանները կամ նրանց վկայությունները: Լավ պահպանված են կիկլոպյան ամրոցները, մ.թ.ա. 3-1-ին հազարամյակի բնակատեղիներ (Գեղարոտ), ուրարտական ամրոցներ (Հնաբերդ, Ծաղկահովիտ), Ագարակի, Ավանի, Քաղսիի, Փարպիի բազիլիկները (5-րդ դար), Օհանավանքը (5-8-րդ դար), Շենիկի (5-7-րդ դար), Մաստարայի (6-րդ դար), Գառնահովիտի (6-7րդ դար), Ներքին Սասնաշենի եկեղեցիները, Քրիստոփորի վանքը (7-րդ դար), Թեղենյաց վանքը (7-13-րդ դար), Աշտարակի կամուրջը (17-րդ դար):

Օշականի միջնադարյան կամուրջ

Մինչև այժմ Աշտարակի տարածքում գործում է ուրարտական ժամանակների ջրանցքը, որն արդեն շուրջ 5000 տարի Քասախից ոռոգման ջուր է մատակարարում Աշտարակի այգիներին:

Թալինի քարավանատուն, քարավանատուն Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառում:

Ավերակները պահպանվել են ՀՀ Թալինի շրջանում, Թալին-Հոկտեմբերյան ավտոճանապարհի վրա: Ունի քառանկյունի հատակագիծ, 73 մ երկար ությամբ, 37 մ լայնությամբ: Կառուցվել է 12-13-րդ դարերում սև, գորշ և կարմրավուն, սրբատաշ տուֆից, կրաշաղախով: Պահպանվել է շինության չնչին մասը միայն:

Զբոսաշրջիկների կողմից հաճախ այցելվող վայրերից են հանդիսանում Տառեր հուշարձանը և Քրիստոնեության ընդունման Խաչ հուշարձանը:

Հայոց այբուբենի հուշարձանը գտնվում է Արագածոտնի մարզի Արտաշավան գյուղում, Արագած լեռան արևելյան լանջին: Կառուցվել է 2005 թվականին՝ հայոց գրերի ստեղծման 1600-ամյակի առթիվ: Հուշարձանը ներառում է հայոց այբուբենի 39 տառերի զարդաքանդակները և հայ մեծերի հուշարձանները:

Աղձքում է գտվում Արշակունի արքաների տոհմական դամբարանը: Պաշտպանական ու պաշտամունքային կառույցների մնացորդներ կան Ամբերդում, Կոշում, Թալինում, Ապարանում և այլուր: Օշականում, Ամատունի իշխանների տոհմական կալվածքում, 5-րդ դարի եկեղեցում է ամփոփված հայոց գրերի ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցի աճյունը:

Արագածոտնի մարզում է գտնվում Բյուրականի նշանավոր աստղադիտարանը, որը հիմնադրվել և տասնամյակներ անընդմեջ ղեկավարել է աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը:

1.17. Քաղաքային զարգացում

ՀՀ Արագածոտնի մարզում առկա է 3 քաղաքային բնակավայր՝ Աշտարակ, Ապարան և Թալին:

Արագածի հարավ-արևելյան եզրափեշին՝ ծովի մակերևույթից 1175 մ բարձրության վրա, փռված է 11 եկեղեցիներով և 111 հուշարձաններով Աշտարակ քաղաքը՝ Արագածոտնի մարզկենտրոնը: Աշտարակը Հայաստանի գեղատեսիլ բնական վայրերից է:

Տարածվում է Արագած լեռան հարավային ստորոտներին, Քասախ գետի կանիոնի երկու ափերին: Քաղաքն ունի բարենպաստ աշխարհագրական դիրք. գտնվում է Երևանից ընդամենը 20կմ հեռավորության վրա, Երևան-Գյումրի և Երևան-Սպիտակ-Վանաձոր ավտոխճուղիների խաչմերուկում: Քաղաքի սահմաններում այդ խճուղիները Քասախ գետը հատում են 3 կամուրջներով: Դրանցից հնագույնը կառուցվել է 17-րդ դարում, մյուս երկուսը՝ մեր օրերում:

Մարզի տարածքը արևմտյան հատվածով հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին շուրջ 30 կմ, որը սակայն չի թողնում էական ազդեցություն մարզի տնտեսական զարգացման վրա:

Քաղաքի պատմության ուղին ձգվում է հազարամյակների միջով: Աշտարակը 1960-ական թվականներից սկսած զարգացել է որպես Երևանի արբանյակ քաղաք: Մարզային կենտրոն դառնալուց հետո (1995թ.) կատարում է նաև մարզի ընդարձակ տարածքի վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կազմակերպիչ կենտրոնի գործառություն: Քաղաքում մարզային ղեկավար մարմիններից բացի գործում են հայտնի գիտական հաստատություններ, ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություններ, կրթական, մշակութային ու առողջապահական հիմնարկներ: Քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունն է, կան խաղողի վերամշակման և գինու հումքի ստացման կետեր: Քասախի գեղատեսիլ կիրճը ծառայում է որպես հանգստի գոտի:

Արագածոտնի մարզում Աշտարակից բացի կա ևս 2 քաղաք՝ Թալինը և Ապարանը:

Մարզի բոլոր քաղաքներին բնորոշ խնդիրներից է հանդիսանում աշխատանքային ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործումը, խմելու և ոռոգման ջրի ջրագծերի մաշվածության բարձր աստիճանը, փողոցային լուսավորության և գազաֆիկացման ոչ բավարար մակարդակը:

Ինչպես և մարզի քաղաքաբնակների թիվը, այնպես էլ մարզում բազմաբնակարանային շենքերի բնակարանների քանակությունը էականորեն զիջում է հարակից մարզերում առկա բազմաբնակարան շենքերի բնակարանային ֆոնդին:

1.17.1. Կրթական հաստատություններ

	Քանակը				
	2014	2015	2016	2017	2018
Պետական նախադպրոցական	23	23	28	30	30
Պետական հանրակրթական	122	122	122	122	121
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	10	10	10	10	12
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական[1]	2	2	2	2	3
Պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1

1.18. Տնտեսություն

Մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության, թանկարժեք իրերի արտադրության ու ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ:

Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացած են քաղաքային համայնքներում: Մարզում առկա են նաև նախկին արդյունաբերական չօգտագործվող տարածքներ՝ հատկապես քաղաքային համայնքներում և մարզի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների մեջ դեռևս առկա է արդյունաբերական աշխատողների ներուժ, մարզում գերակա խնդիր է զարգացնել արդյունաբերությունը:

Արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը մարզում բնակչության բարեկեցության և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից են:

Մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության և ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ:

Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացած են քաղաքային համայնքներում: Մարզում առկա են նաև նախկին արդյունաբերական չօգտագործվող տարածքներ՝ հատկապես քաղաքային համայնքներում և մարզի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների մեջ դեռևս առկա է արդյունաբերական աշխատողների ներուժ, մարզում գերակա խնդիր է զարգացնել արդյունաբերությունը:

Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գուղատնտեսությունն են: Մարզի արդյունաբերության զարգացման հեռանկարը կապված է ներքոհիշյալ ճյուղերի զարգացման հետ.

1) գյուղմթերքների վերամշակում,
2) թեթև արդյունաբերություն,
3) թանկարժեք քարերի մշակում, ադամանդագործություն,
4) ձկնաբուծություն,
5) սննդի արդյունաբերություն,
6) վերականգնվող էներգիայի արտադրություն,
7) հանքահումքային արտադրություն,
8) զբոսաշրջություն:

Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի արտադրության) և անասնաբուծության մեջ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Արդյունաբերությունը հանդիսանում է Արագածոտնի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Անկախության տարիների ընթացքում մարզի արդյունաբերությունը ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների: Ներկայումս Արագածոտնի մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի,

սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ:

2018թ.-ին Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 2.7 %,
- գյուղատնտեսություն՝ 10.2 %,
- շինարարություն՝ 4.8 %,
- մանրածախ առևտուր՝ 1.4 %
- ծառայություններ՝ 0.7 %:

Ապարան քաղաքը մարզում մեծությամբ և նշանակությամբ երկրորդ քաղաքն է: Գտնվում է Քասախ գետի ափին (Երևանից 60 կմ հեռավորությամբ): Ապարան քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի արտադրությունն է:

Թալին քաղաքը գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին (Երևանից 65 կմ հեռավորությամբ): Քաղաքի տնտեսության հիմքը թանկարժեք իրերի արտադրությունն է:

ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	232	306	295	379	368
այդ թվում՝					
խանութներ	90	100	84	140	110
կրպակներ	101	163	166	196	201
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	4	4	4	3	3
սպառողական ապրանքների շուկաներ	3	3	3	2	1
առևտրի այլ օբյեկտներ	34	36	38	38	53

Զարգացման առաջնահերթությունները որոշելիս որպես մեկնակետ ընդունվել է այն իրողությունը, որ մարզում կան արտադրական կազմակերպություններ, որոնք կարող են, որոշակի, համեմատաբար քիչ ներդրումների և լուրջ շուկայավարության պայմաններում, դառնալ լիակատար մրցունակ և արդյունավետ տնտեսվարող սուբյեկտներ, ապահովել մարդկանց զբաղվածությունը և բարելավել նրանց սոցիալական պայմանները: Առաջին հերթին դրանք տեղական հումքով աշխատող այն կազմակերպություններն են, որոնք սեփական տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրություններ են մշակել և իրականացնում: Դրանց վերագործարկման ծախսերը համեմատաբար փոքր են և արագ փոխհատուցվող:

- գերբարձր հաճախականության տիրույթում մշակվող ռադիոէլեկտրոնային կապի և հաղորդակցության միջոցների արտադրություն և իրացում.
- Ֆիզիկայի դպրոցական փորձասարքերի արտադրության կազմակերպում.
- Անկյան թվային փոխակերպիչների արտադրություն.
- Հիդրոպոմպերի և հիդրոտուրբինների արտադրություն
- Թանկարժեք քարերի մշակման և ոսկերչական իրերի արտադրության ծավալների ընդլայնում.- Մելիքգյուղի ադամանդի գործարանը զբաղվում է բնական ալմաստի վերամշակմամբ և թողարկում է բարձրորակ արտադրանք:

- Հայաստանի քարերից ֆենոպլաստի /մամլանյութ/, գունանյութերի /պիգմենտ/ և ներկերի արտադրության ընդլայնում. Մասնաճյուղեր կարելի է բացել նաև մարզի մյուս բնակավայրերում և երկրի այլ մարզերում:
- Թեթև արդյունաբերական կազմակերպությունների վերագործարկում. Մարզում կա տրիկոտաժի արտադրության 32 ձեռնարկություն և կոշիկի արտադրության երկու ֆաբրիկա: Դրանցից այսօրվա դրությամբ աշխատում է միայն Ապարանի տրիկոտաժի ֆաբրիկան, որը հաճախակի պարապուրդներ է տալիս պատվերների բացակայության հետևանքով:
- Գորգարտադրության ընդարձակում. - Մարզում տարեկան արտադրվում է 350-400 տոննա բուրդ, որի իրացումը բարդ խնդիր է: Գորգագործական արտադրամաս է գործում միայն Ապարանում, որի արտադրողականությունը չափազանց սահմանափակ է: Եղած հումքով այժմ կարելի է արտադրել 10000 գորգ:
- Պեռլիտի արդյունահանում և վերամշակում. - Մարզի Արագած գյուղի հարևանությամբ կան պեռլիտի հանքավայրերի մեծ պաշարներ: Պեռլիտն իր ֆիզիկաքիմիական հատկանիշներով անփոխարինելի շինանյութ է: Ջերմային մշակման ենթարկելիս այն փքվում է և մի քանի անգամ ավելացնում է ծավալը: Պեռլիտի վերամշակումից ստացված հումքն օգտագործվում է շինարարական թեթև կոնստրուկցիաների պատրաստման համար:

  Գյուղատնտեսական մթերքների վերամշակում.
- Մրգի պահածոների արտադրություն - Մարզում տարեկան արտադրվում է 40-45 հազար տոննա պտուղ: Դրանից վերամշակվում է ընդամենը 10-12%- ը: Պահածոների արտադրությունը մարզում կարելի է հասցնել մինչև 10-15 միլիոն պայմանական տուփի:
- Ջերմոցային տնտեսության կազմակերպում. Ջերմոցներում արտադրվել են բանջարեղեն և մերձարևադարձային մշակաբույսեր: Մարզի գործարարների փորձերը ցույց են տվել, որ ոլորտը կարելի է ընդարձակել: Հնարավորություն կա ոչ միայն ձեռնմուխ լինել ավանդական մշակաբույսերի արդյունաբերական արտադրությանը, այլև մշակել և արտադրել ոչ ավանդական մշակաբույսեր: Ներկայումս մարզում գործում են 10-ից ավելի ջերմոցային տնտեսություններ: Սակայն դրանց թիվը հնարավոր է բազմապատկել:
- Չրերի արտադրություն - Այժմ մարզում չիր արտադրվում է միայն տնայնագործական եղանակով: Կա նաև մի քանի արևային ջերմոց: Տարեկան կարելի է արտադրել մինչև 1-2 հազար տոննա ծիրանի, դեղձի, խնձորի, սալորի տանձի չիր:
- Մսի վերամշակում - Մարզի շուրջ 39000 գյուղացիական տնտեսություններում պահվում է 48.8 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 66.2 հազար գլուխ ոչխար և այծ, 6000 գլուխ խոզ: Տարեկան արտադրվում է 3000- 4000 տոննա միս: Այն հիմնականում վաճառվում է նախկին շրջկենտրոնների և Երևանի շուկաներում: Մարզում գործում է մսի վերամշակման երկու ձեռնարկություն, որոնք, ֆինանսական սահմանափակ հնարավորությունների պայմաններում անկարող են իրականացնել աշխատանքի ամբողջ ծավալը:
- Պանրի արտադրություն - Ներկայումս մարզում տարեկան արտադրվող 65-70 տոննայի փոխարեն հնարավորություն կա արտադրելու 300-350 տոննա տարբեր տեսակի

պանիրներ: Թալինում խորհրդային տարիներին արտադրվել են բարձրորակ ռոքֆոր, հոլանդական, ոչխարի և այլ պանիրներ, որոնք մեծ պահանջարկ են ունեցել Խորհրդային Միությունում:

Գինու և գինեհումքի արտադրություն – Մարզում գործում են Օշականի և Արագածի գինու գործարանները: Արտենիի գործարանը սնանկ է հայտարարված: Օշականի գինու գործարանում թողարկվում են երկրում եզակի «Խերես» տիպի գինիներ, մի քանի կազմակերպություններ թողարկում են շամպայններ, գինիներ և օղիներ: Սակայն ֆինանսական միջոցների անբավարարության և շուկայավարության բացակայության պայմաններում ձեռնարկությունը ներկայումս գործում է հնարավորությունների 10-15 տոկոսով: Գինու արտադրության ծավալների ընդլայնումը զարկ կտա խաղողագործության զարգացմանը:

Աշտարակում գործող գիտահետազոտական հիմնարկներն ի վիճակի են թանկարժեք քարերի, ոսկու և կարծր նյութերի վերամշակման, կիսահաղորդիչների արտադրության և մեծ ճշգրտություն պահանջող այլ բնագավառներում ստեղծել ավտոմատ թվային ծրագրավորմամբ կառավարվող համակարգեր, օգտագործել լազերային տեխնիկան: Միաժամանակ, նույն սկզբունքով ավտոմատ թվային ծրագրավորմամբ համակարգեր կստեղծվեն Հայաստանի և արտերկրի հաստոցաշինական, ճշգիրտ և լազերային սարքավորումների արտադրական բազայի կատարելագործման համար: Դրանով երկիրը կունենա սեփական տեխնոլոգիական բազա, որը չի զիջի զարգացած երկրների նմանակներին, սարքավորումների ձեռքբերման համար լրացուցիչ միջոցներ չեն ծախսվի, կապահովվի երկրի տեխնիկական առաջընթացը: Հիմնարար գիտությունը հնարավորություն կստանա ինտեգրվել համաշխարհային գիտական կառույցում:

Գյուղատնտեսություն

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արդյունավետության բարձրացումը ՄԶՌ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսության հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, ագրոմիությունների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզի գյուղատնտեսության ոլորտի հիմնական ուղղություններն են բուսաբուծությունը և անասնապահությունը:

Մարզում առկա է 54100.3 հա վարելահող, որից տարեկան օգտագործվում է մոտ 40-50%-ը: Վարելահողերի չօգտագործման հիմնական պատճառներն են՝ բնակավայրերից հեռու գտնվելը, քարքարոտությունը, ինչպես նաև ոռոգելիության դժվարությունները: Մարզում 28000 հա ոռոգելի վարելահողերից 2017թ. ոռոգվել է 14000 հա: Նախատեսվում է ոռոգելի հողատարածքներն ավելացնել շուրջ 400 հա-ով՝ ի հաշիվ ոռոգման ջրագծերի վերանորոգման և ինտենսիվ այգիների հիմնման:

Ոլորտի հետագա զարգացումն ապահովելու նպատակով ներկայացվող միջոցառումներն են.

- Գյուղտեխնիկայով ապահովում. մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացումը մեծապես պայմանավորված է գյուղտեխնիկայի ներդրման ու կիրառման ասպարեզում նոր ծրագրերի և նոր մոտեցումների կիրառմամբ: Անհրաժեշտություն է ներկայիս պահանջներին համապատասխան ժամանակակից մեքենատրակտորային

կայանների հիմնումը: Կայանների գործունեության արդյունքում կնվազի մատուցվող ծառայությունների գները:

2018թ. մարզում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության պետական աջակցության ծրագրերից օգտվել է ավելի քան 15 շահառու:

- Ինտենսիվ այգիների հիմնում, ֆերմերների վերապատրաստում և օրգանիկ գյուղատնտեսության խրախուսում. նոր ինտենսիվ այգիների հիմնում ժամանակակից տեխնոլոգիաներով /հակակարկտային ցանց, ոռոգման կաթիլային եղանակ և այլն, տնկիների խնամքի ու մշակության նոր մեթոդների ներդնում/, ինչպես նաև տնկանյութի արտադրությամբ զբաղվող կենտրոնի հիմնում, որի համար բազա կարող է ծառայել Կարբի համայնքում գտնվող տնկարանային տնտեսությունը:

Նախատեսվել է մարզում հիմնել ևս 120 հա ինտենսիվ այգի (Կարբի - 15 հա, Սասունիկ - 55 հա, Պարտիզակ 50 հա):

Ինտենսիվ այգիների ավելացմանը զուգընթաց մարզում կավելանա նաև սառնարանային տնտեսությունների թիվը: 2017թ. մարզում գործել են 18 սառնարանային տնտեսություններ՝ մոտ 9000 տ պահպանման կարողությամբ: 2018թ. կառուցվել է ևս 1 տնտեսություն 400 տոննա կարողությամբ և նախատեսվում է վերակառուցել 600 տոննա կարողությամբ սառնարանը՝ հասցնելով 1200 տոննայի: Սառնարանային տնտեսությունների պահպանման կարողությունը կհասնի մոտ 10000 տոննայի:

- **Արոտների արդյունավետ օգտագործում**. ներկայումս օգտագործվում է առկա արոտների 25 - 30 տոկոսը: Նշված ցուցանիշն ավելացնելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հեռագնա արոտներն էլեկտրասնուցմամբ ապահովելու ուղղությամբ, որի արդյունքում կկրճատվի միավոր արտադրանքի ինքնարժեքը և կավելանան անասնապահական մթերքների ծավալները:

- **Հողերի արդյունավետ, ամբողջական և նպատակային օգտագործում.** հողերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է սկսել չօգտագործվող հողերի հետ վերադարձի գործընթացը՝ համաձայն գործող կարգի (ըստ անհրաժեշտության կատարել նաև օրենսդրական փոփոխություններ) և նպատակային օգտագործման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարների վրա:

- **Ոռոգման համակարգերի կառուցում.** մարզի համայնքների ոռոգման համակարգերում հոսակորուստների նվազեցման և առանձին համայնքներին ոռոգման ջրով ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել նոր ջրագծեր և վերանորոգել հին ցանցերը:

Ելնելով ՀՀ կառավարության կողմից ներկայումս իրականացվող գյուղատնտեսական մթերքների արտադրությունը խրախուսող քաղաքականությունից (գազի գնի իջեցում, հարկային արտոնություններ և այլն), միաժամանակ մարզում առկա հողային ռեսուրսներից և նպաստավոր բնակլիմայական պայմաններից՝ նախատեսվում է մարզում ավելացնել փակ գրունտի բանջարեղենի և ծաղկի արտադրությունը: Մարզում ջերմոցային տնտեսության վարման ուղղությամբ մեծ փորձ կա:

Նախատեսվում է մարզում զարգացնել հացահատիկային մշակաբույսերի սերմարտադրությունը՝ ստեղծելով հացահատիկի սերմարտադրողների միություն: Սա ենթադրում է մի շարք երկարաժամկետ հետևողական միջոցառումների իրականացում, որոնք ուղղված կլինեն մարզում հացահատիկի ամբողջ տնտեսության վերականգնմանը:

Մարզում կարևորվում են կարտոֆիլի արտադրությանն ու սորտաթարմացմանն ուղղված միջոցառումները:

Գյուղատնտեսության ոլորտի զարգացման մյուս կարևոր նախադրյալը անասնապահության արտադրողականության բարձրացումն է տոհմային տնտեսությունների հիմնման և արհեստական սերմնավորման միջոցառումներ իրականացնելու շնորհիվ:

Մարզում իրականացվում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվող հատկացումների հաշվին, Արագածավան և Աշտարակ համայնքներում գործում են 2 խոշոր եղջերավոր կենդանիների տոհմային տնտեսություններ, որոնք մասնագիտացված են սիմենթալ, շվից և հոլշտեյն ցեղատեսակների բուծմամբ /150 գլուխ/ և Ապարան համայնքում 1 խոզաբուծական տոհմային տնտեսություն: Տնտեսությունները բուծում են նաև 300 գլուխ <<արագած>> ցեղատեսակի ոչխար: 2017թ. արհեստական սերմնավորվել է 400 գլուխ խ.ե.կ., 2018թ.-ին՝ 600 գլուխ խ.ե.կ.:

Մարզի Վարդենուտ համայնքում գործում է ժամանակակից սպանդանոց, որտեղ հնարավոր է 1 հերթափոխում /8 ժամ/ մորթել 150 գլուխ մ.ե.կ., 100 գլուխ խոզ և 50 գլուխ խ.ե.կ. կամ 10500 տոննա/տարի կենդանի քաշով: Անասնաբուծության զարգացմանն ուղղված ծրագրերի շրջանակներում անհրաժեշտություն կա կառուցելու ևս 2 սպանդանոց:

Զբոսաշրջություն

ՀՀ Արագածոտնի մարզում զբոսաշրջության զարգացումն ունի մեծ հեռանկար, քանի որ մարզում առկա է զբոսաշրջության հիմնական ճյուղերի՝ համակարգված և փոխլրացնող զարգացման համար անհրաժեշտ և մեծածավալ ներուժ: Մարզը կարող է հետաքրքիր լինել ինչպես ներգնա, այնպես էլ՝ ներքին զբոսաշրջության զարգացման համար:

Քանի որ զբոսաշրջության զարգացումը հանդիսանում է ՀՀ Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության գերակա խնդիրներից մեկը, ուստի զբոսաշրջության զարգացման ծրագրի իրականացման համատեքստում ավելի արդիական է դառնում մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը:

Բնական տարածքների տուրիստական պոտենցիալի զարգացման համար լայն հնարավորություն է տալիս մարզի տարածքով անցնող Քասախ գետի առկայությունը՝ իր շրջակա միջավայրով, կիրճերով, բնության գեղատեսիլ վայրերով:

Զարգացման մեծ հնարավորություն ունի ճանաչողական և ընտանեկան տուրիզմը, մարզում առկա են 1893 պատմամշակութային հուշարձաններ, որոնցից 1329-ը հանրապետական և 564 տեղական նշանակության:

Խոշոր հյուրանոցային օբյեկտներից են՝ Աշտարակ քաղաքում «Աշտարակ» հյուրանոցը, Բյուրական համայնքում «Ամբերդ» հյուրանոցը և «Հյուսիսային Աստղ» հյուրանոց-սպորտային-առողջարանական համալիրը, Արագած համայնքում՝ «Արագած» հյուրանոցը, որտեղ ձմեռային տուրիզմի, լեռնագնացության, հանգստի, առողջարարական սպորտի, ալպինիզմի կազմակերպման մեծ հնարավորություններ կան:

Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կհասնի ցանկալի արդյունքի:

Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերը.

- քաղաքային տուրիզմ,
- պատմա-ճարտարապետական տուրիզմ,
- ձմեռային տուրիզմ
- արկածային տուրիզմ, գյուղական տուրիզմ և էկոտուրիզմ:

Նշված զբոսաշրջային ուղղությունների զարգացման արդյունքում մարզ այցելող զբոսաշրջիկների թիվը կավելանա շուրջ 20-30%:

Զբոսաշրջության զարգացման համար ՀՀ Արագածոտնի մարզն ունի հետևյալ առավելությունները.

1) Հարմար աշխարհագրական դիրք և տրանզիտային հնարավորություններ,
2) Հարմար տրանսպորտային ենթակառուցվածքներ,
3) Հարուստ պատմամշակութային ժառանգություն,
4) Էկոլոգիապես մաքուր և գեղեցիկ բնություն,
5) Շուրջտարյա զբոսաշրջության կազմակերպման մեծ պոտենցիալ,
6) Յուրահատուկ խոհանոց:

Զբոսաշրջության ոլորտի թույլ կողմերից է՝ տուրիստական ենթակառուցվածքների, ոչ բավարար վիճակ, այդ թվում՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների, ոչ բավարար Նախատեսված է զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղությամբ իրականացնել զգալի ներդրումներ: Այդ միջոցների հաշվին նախատեսվում է հիմնել հանգստի և ժամանցի հասարակական սպասարկման օբյեկտներ, կառուցել և ընդլայնել հյուրանոցային և ռեստորանային համալիրներ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կձևավորվեն առնվազն 100 աշխատատեղ, մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն կունենա:

1.19. «Արագածոտն-1» միկրոռեգիոնի բնակավայրերի առկա վիճակի վերլուծություն

Միկրոռեգիոնն ընդգրկում է Ապարան խոշորացված համայնքի թվով 21 բնակավայր: Ապարան խոշորացված համայնքը ձևավորվել է 2017 թվականի Նոյեմբերի 5-ի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում: Խոշորացված համայնքը կազմված է **մեկ քաղաքային՝ Ապարան և 20 գյուղական՝ Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ, Ծաղկաշեն, Կայք, Հարթավան, Ջորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ և Քուչակ բնակավայրերի միավորումից:** Համայնքի կենտրոնը Ապարանն է՝ Արագածոտնի մարզում մեծությամբ և նշանակությամբ երկրորդ համայնքը: Գտնվում է Քասախ գետի ավազանի վերին հատվածում, Արագած լեռան և Ծաղկունյաց լեռնաշղթայի միջև, ծովի մակերևույթից 1800 մ-2100 մ բարձրության վրա: Ապարան խոշորացված համայնքի տարածքը կազմում է 54071.41 հա: Համայնքը գտնվում է անտառամերձ գոտում, ունի բազմաթիվ ձեռակերտ և անձեռակերտ հուշարձաններ, որոնք տուրիզմի զարգացման լավագույն հենք են հանդիսանում:

1.19.1. Ընդհանուր դրույթներ

Հիմնական բնական պաշարները տարածաշրջանում

Արագածոտնի մարզը հարուստ է օգտակար հանածոներով, հատկապես շինանյութերով, ինչպիսիք են՝ տուֆը, բազալտը, կրաքարը, կավահողը, խարամը, պեմզան և պեռլիտը: Վերջինս կազմում է նախկին Խորհրդային Միության ողջ պաշարի 90%-ը և հաշվի առնելով իր որակական հատկությունները՝ համարվում է աշխարհում լավագույններից մեկը: Այս մարզում են գտնվում նաև Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ) և Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները: Ինչ վերաբերում է ջրային պաշարներին, դրանք գոյանում են Արագած լեռան ձնհալքից, տեղումներից և բնական աղբյուրներից: Մարզի խոշոր գետերն են Քասաղը և Գեղաձորը: Կան նաև շատ հեղեղատարեր (ամենահայտնին Մաստարայի հեղեղատարն է): Ապարանի, Հալավարի, Ծիլքարի,

Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի և Սաբունչիի ջրամբարները ևս գտնվում են այս մարզում:

Քուչակ համայնքում կա մշակույթի տուն, որն ամբողջությամբ խարխլված է: Վերանորոգումը սկսվել էր անցած տարի, բայց դադարեցվել էր, և միայն նոյեմբերի կեսից սկսված այդ գործընթացը կրկին շարունակվում է: Գյուղն ունի 45 հա կավի հանք, որը, սակայն, ռացիոնալ կերպով՝ ի նպաստ համայնքի և շրջանի, չի շահագործվում:

Արայի համայնքում կա կանանց 15 հոգուց բաղկացած խումբ, որը զբաղված է ազնվամորու արտադրությամբ (մշակում, հավաքում և այլն): Խումբը ստեղծվել և գործում է 2012 թ. «Կանաչ արահետ» ՀԿ-ի նախաձեռնությամբ: Վերջինս առաջին անգամ մշակեց ազնվամորին լարի և սյան մեթոդով: Ծրագիրը մեծապես նպաստում է կանանց զբաղվածության աճին:

Լուսագյուղում առկա է 2000 մ^2 տարածք զբաղեցնող ծառերի տնկարան, որտեղից մատղաշ տնկիներ են դուրս բերվում՝ համայնքում ծառապատման ծրագրին աջակցելու համար: Սովետական ժամանակահատվածում համայնքում կար հանրակացարան (զբոսաշրջային կենտրոն), որը ներկայումս չի գործում և կարող էր ստեղծել 20-30 աշխատատեղ: Գյուղում կա պարուսուցման խմբակ, որը չունի բավարար պայմաններ ներկայիս ակտիվ գործունեության համար և բարելավման կարիք ունի: Այստեղ առկա են շինարարական ավազի ու կավի պաշարներ, որոնք ինչպես հարկն է չեն օգտագործվում: «Կանաչ արահետ» կազմակերպության ազնվամորու մշակման ծրագիրը փորձարկվել է նաև Քուչակ համայնքում, որտեղ ստեղծվել է 7 կանանցից բաղկացած մի խումբ: Սակայն ազնվամորու տեսակը համապատասխան չէր այս տարածքին ու ծրագիրը հաջողություն չունեցավ այստեղ:

Հատուկ պահպանվող տարածքներ

Տարածքում գտնվում է միայն մեկ հատուկ պահպանվող տարածք՝ «Արագածի ալպյան արգելավայրը»: Այն հիմնադրվել է 1959 թ-ին, ընդգրկում է 300 հեկտար տարածք: Վերջինիս որդեգրած բնապահպանական նպատակը Քարի լճի և հարակից տարածքների ապահովումն է ալպյան բուսականությամբ: Բացի այդ՝ «Արագածի ալպյան արգելավայրի» ընդգրկած տարածքը (9,446 հա) առաջարկվել է որպես «Զմրուխտ» էկոլոգիական ցանցի տարածք: Պետական արգելավայրը և նրա հարակից տարածքներն ընդգրկում են Արագած լեռան բոլոր գագաթներն ու խառնարանները:

Զարգացման միտումներ

Ներկայումս (2016 թ) «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» (CARMAC) կողմից Ապարանում իրականացվում է «Արոտավայրերի ոռոգում» ծրագիրը, որը 80%-ով ֆինանսավորվում է կառավարության կողմից, 20%-ով՝ համայնքի: Առաջին փուլը մեկնարկել է 2016 թ-ին, իսկ երկրորդ փուլը նախատեսված է իրականացնել առաջիկա տարում: Նրանք նաև ձեռք են բերել 2 տրակտոր, ինչը թույլ է տալիս հողը վարել ավելի էժան, քան նախկինում օգտագործվող ծառայության դեպքում: «Կամրջակ» բարեգործական կազմակերպության հետ համագործակցության շնորհիվ մինչ օրս համայնքում հնարավոր է դարձել իրականացնել մի շարք բարենորոգման ծրագրեր, ինչպես օրինակ՝ գազաֆիկացում, կոյուղագծերի և կոյուղատար համակարգի վերանորոգում: Գյուղում կազմակերպվում է ամենամյա ծառատունկ: «Մաքուր էներգիա և մաքուր ջուր» ծրագրի շրջանակներում գյուղում իրականացվել է լուսավորության բարելավում: Արայի գյուղը ներկայումս 2015 թ-ին մեկնարկած «Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագրի շրջանակներում ընտրված է որպես թիրախային համայնք: Ներկայումս իրականացվում են ոռոգման աշխատանքներ, բարեկարգվել են

արոտավայրեր տանող ճանապարհները, մոտ ապագայում նախատեսվում է իրականացնել նաև քարահավաքման աշխատանքներ: Լուսագյուղ, Հնաբերդ և Քուչակ գյուղերը նույնպես վերոնշյալ ծրագրի մաս են, և նոր արոտավայրերի հիմնումը, էրոզիայի կառավարումը և առնչակից այլ բարելավման աշխատանքները վերաբերում են նաև այս համայնքներին և ներկայումս ընթացքի մեջ:

Նախկին գլխավոր հատակագծերի վերլուծություն:

Միկրոռեգիոնի բնակավայրերից միայն Ապարան քաղաքն ունի մշակված գլխավոր հատակագիծ:

Ապարանի գլխավոր հատակագիծը մշակվել է 1950թ-ին (ճարտ. Մանուկյան). հեռանկարային ժամանակահատվածը մինչև 1965թ.է 7 հազ. բնակչի համար, 1966թ-ին մշակվել է նոր նախագիծ՝ հեռանկարում 12.0 հազ. բնակչի համար՝ մինչև 1980թ.ը, որը հիմնականում չի իրականացվել: Հերթական նախագիծը մշակվել է 1983-1986թթ.ին, որի հեռանկարային զարգացումը մինչև 2010 թ-ն է, առաջնահերթ կառուցապատումը՝ 1995թ.-ը:

Ապարանն իր սոցիալ-տնտեսական, կուլտուր-կենցաղային և հասարակական կյանքով զարգացում է ապրել 1950-ական թթ.-ից: Այստեղ գործել են մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ (Երևանի «Հայգորգ» միավորման մասնաճյուղը, պանրագործարանը, հացի, գարեջրի, լիմոնադի, ռադիոտեխնիկական իրերի) գործարանները, որոնք նախկին խորհրդային միության փլուզումից հետո սեփականաշնորհվել են և ներկայումս չեն գործում, կան մասնակի գործող արտադրական ճյուղեր և առանձին հիմնարկ ձեռնարկություններ (գորգագործական արտել, կահույքի արտադրամաս, հացի փուռ և այլ ձեռնարկություններ): Բնակչության հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսությունն ու մասնակի առևտուրն է, մի մասն աշխատում է վարչական և կրթական համակարգում:

Քաղաքը սկսել է զարգանալ նաև 1967թ-ին հաստատված գլխավոր հատակագծով: Սակայն, վերջին տարիների սոցիալ-տնտեսական պայմանները, ինչպես Հայաստանի մյուս քաղաքատիպ բնակավայրերում, այնպես էլ Ապարանում բերել են տարածքի տարերայնորեն զարգացմանը: Նման անկանոն և անկազմակերպ միջավայրն իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև քաղաքաշինական մի շարք հիմնահարցերի վրա:

Ներկայումս Ապարանում գործում են 3 միջնակարգ և մեկ արվեստի դպրոց, հիվանդանոց, պոլիկլինիկա, ծննդատուն, քաղաքապետարան, փոստ, 26 բազմաբնակարան բնակելի շենքեր և 1230 անհատական բնակելի տներ: Մսուր-մանկապարտեզի շենքերը վերածվել են բազմաբնակարան և արտադրական օբյեկտների. փոխարենը մսուր-մանկապարտոզների տարածք է հատկացված քաղաքապետարանի և պահակային ծառայության շենքերում:

Կիսաքանդ վիճակում են՝ հյուրանոցը, մի շարք (նախկինում գործող) արտադրական («Յուղարդ», ռեզինի, «Արև», «Նիգ», գարեջրի գործարանները, կարի ֆաբրիկան), կոմունալ-պահեստային (դեղատուն, գյուղ մթերքների և այլ կոմունալ պահեստներ, գոմեր) և այլ ձեռնարկություններ: Չի գործում նաև կինոթատրոնը, կիսաքանդ և ավերակ վիճակում է մաքրման կայանը, որը գտնվում է գ. Մուլքիի տարածքում, այս տարածքում է մնացել նաև պանրի գործարանը:

Վերջին գլխավոր հատակագիծը մշակվել և հաստավել է 2007 թվականին:

1.19.2. Քաղաք Ապարան

Ապարանը մարզում մեծությամբ և նշանակությամբ երկրորդ քաղաքն է:

Ապարանն առաջին անգամ հիշատակում է Պտղեմեոսը (2-րդ դ.) Կասալա ձևով: Այն հնում կոչվել է Քասախ և եղել է (5-րդ դ.) Գնթունի նախարարությանը պատկանող Նիգ գավառի կենտրոնը: Այստեղ 5-րդ դ-ում կառուցվել է Քասախի հռչակավոր բազիլիկ եկեղեցին սբ. Խաչը, որը վերակառուցվել է վերջին ժամանակներս: Ապարան անունը գործածական է 10-րդ դարից:

Համաձայն ուրարտագետների վկայությունների մ.թ.ա. VIIIդ-ի վիմագիր նամակում, որն ուղարկված է եղել Ասորեստանի թագավորին՝ դեսպան Աշարիսուսի կողմից, երկրի ուրիշ այլ անվանումներից բացի հիշատակվում է նաև Նագիա երկիրը, որը Նիգ անվան ուրարտական ձևն է: Նիգ անվանումը 3-4 հազարամյակների պատմություն ունի:

Ղ. Ալիշանի մահից հետո՝ 1910 թ-ին, շնորհիվ Եղիշե Տեր-Հովհաննիսյանի կազմակերպման պեղումերի, Քասախի բազիլիկայի մոտակայքում հայնտաբերվել է հունական արձանագրություններ, համաձայն որի Տրդատ թագավորը Գնտունի իշխաններին նվիրել է Նիգ տարածքն իր քաղաքային կենտրոնով:

Քաղաքը գտնվում է Երևան-Սպիտակ ավտոմայրուղու վրա, Քասախ գետի ափին, մարզկենտրոնից՝ 36 կմ, մայրաքաղաքից՝ 57 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս-արևմուտք, Արագած լեռնազանգվածի արևելյան փեշերին, ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1900 մետր: Վարչական տարածքը՝ 3772.8 հա:

Կլիման բարեխառն լեռնային է: Ամառը մեղմ է և զով, ձմեռը ձյունառատ և խիստ է: Ամռան առավելագույն ջերմաստիճանը կազմում է + 30, իսկ ձմռան նվազագույն ջերմաստիճանը՝ -27-30 աստիճան: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը կազմում է 450-600 միլիմետր: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

Քաղաքը հայտնի է խմելու սառնորակ ջրով, զով ու առողջարար կլիմայով: Ապարան է վերանվանվել 1935թ. հունվարի 1-ի (նախկին ՀՍՍՀ գերագույն սովետի) հրամանագրով:

Ապարանի ներկայիս բնակչությունը 1828-30-ական թթ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Մուշի, Վանի, Էրզրումից, Խոյից և այլ վայրերից վերաբնակվածների սերունդներն են: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (1914-1918) Ապարանում վերաբնակվեցին նաև ցեղասպանությունից փրկված հայերի շատ գերդաստաններ: Բնակչության ազգային կազմում մեծամասնություն են կազմում հայերը, կան նաև եզդիներ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918թթ) Ապարանում վերաբնակվել են Վանից, Մուշից, Ալաշկերտից, Էրզրումից և Խոյից փախած մեծ թվով գաղթականներ:

Տարի	Բնակչություն	Տարի	Բնակչություն	Տարի	Բնակչություն	Տարի	Բնակչություն
1831	386 մարդ	1914	2337 մարդ	1959	2662 մարդ	2005	5711 մարդ
1873	1353 մարդ	1931	2666 մարդ	1979	5990 մարդ	2015	6400 մարդ

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Ապարան քաղաքի բնակչությունը կազմում է 5958 մարդ:

Քաղաքը նախկինում ունեցել է Աբարան, Աբարան Վերին, Բաշ Աբարան, Բաշ Ապարան, Փարազնակերտ, Քասախ, Քասաղ անվանումները: Ապարանն առաջին անգամ հիշատակում է Պտղոմեոսը (2-րդ դար)՝ Կասալա անվանումով: Այն հնում կոչվել է Քասախ և եղել է (Vդ) Գնթունի նախարարությանը պատկանող Նիգ գավառի կենտրոնը: Այստեղ V-րդ դարում կառուցվել է Քասախի հռչակավոր բազիլիկ եկեղեցին, որը կանգուն է մինչև այսօր: Անունը հավանաբար ծագում է հայերեն ապարանք բառից: 10-րդ դարում Քասաղը սկսում են անվանել Ապարան, այսինքն՝ պալատ: Քասաղն՝ Ապարան

անունը ստացել է այն բանից հետո, երբ Մոկաց Ապարանք գյուղի Ապարանից Սուրբ Խաչ վանքի մասունքը տեղափոխվում է այստեղ: Ըստ ավանդության՝ Ապարան անվանումը պայմանավորված է լուսե կանթեղով, որն առանց պարանի կախված է եղել երկնքից: Այստեղից էլ առաջացել է Անպարան անվանումը, որը հետագայում հնչյունափոխվելով դարձել է Ապարան: Թեև նույնիսկ 18-րդ դարում Զաքարիա Քանաքեռցի պատմիչը օգտագործել է Քասաղ տեղանունը: Ապարան անունը գործածական է X-րդ դարից:

Քաղաքի տեսք

18-րդ դարից մինչև 1935 թվականը կրել է Բաշ-Աբարան անունը: Ապարան է վերանվանվել 1935 թվականին: Մինչև 1995 թվականը եղել է քաղաքատիպ ավան և Ապարանի վարչական շրջանի կենտրոնը, 1995 թվականին վարչատարածքային ռեֆորմից հետո դարձել է քաղաք:

Վերածնունդ հուշահամալիր

1918թ. մայիսի 23-29-ի Ապարանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական բանակը զորավար Դրոյի հրամանատարությամբ ծանր պարտության մատնեցին թուրքական կանոնավոր զորքերին, որոնք Համամլու (Սպիտակ) և Ապարան ճանապարհով փորձում էին մտնել Երևան: Իր նշանակությամբ Ապարանի ճակատամարտը չի զիջում Սարդարապատի հերոսամարտին եւ հայոց պետականության պատմության ու պետականութան կայացման մեջ ունեցել է հսկայական նշանակություն: Ապարանի հյուսիսային կողմում, մի բլրակի վրա կառուցված հոյաշեն հուշարձանը խորհրդանշում է այդ հաղթանակը:

Դրաստամատ Կանայանի դամբարանը

Ամեն տարի մայիսի 28-ին մեծ տոնակատարությամբ նշվում է Բաշ Ապարանի հերոսամարտի տարելիցը:

Քաղաքն ունի գլխավոր հատակագիծ՝ հաստատված 2007թ.:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 243.919 հազ. մ^2՝ բաղկացած 26 բազմաբնակարան բնակելի շենքերից՝ 53.868 հազ.մ^2 մակերեսով, և 1250 անհատական բնակելի տներից՝ 190.051 հազ. մ^2 մակերեսով:

Քաղաքն ունի 3 դպրոց, մեկ երաժշտական դպրոց, մշակույթի տուն, գրադարաններ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց: Տարրական դպրոց հաճախող աշակերտների թիվը՝ 370, հանրակրթական դպրոց հաճախող՝ 740, ավագ դպրոց հաճախող՝ 290 աշակերտ: Արվեստի դպրոցն ունի 299 սան, մանկապարտեզ է հաճախում 215 երեխա, մարզադպրոց՝ 200:

Գնթունիք հացամթերքի խանութում

Զարգացած է սննդի արդյունաբերությունը, գործում է կաթնամթերքի վերամշակման և պանրի արտադրության գործարանը, հացամթերքի, հացաբուլկեղենի արտադրությամբ զբաղվող Գնթունիկ ընկերությունը:

Ապարան քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսական մթերքի վերամշակումն ու սննդամթերքի արտադրությունն է: Զարգացած է կաթնամսատու ուղղությունը, հումքը վերամշակվում է տեղի պանրի գործարանում:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 1599 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 319, խոզերինը՝ 162 գլուխ:

Տնտեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը: Ապարանում կան մի շարք ձեռնարկություններ: Այստեղ է գործում «Հայգորգ» ձեռնարկությունը, որը զբաղվում է գորգերի և կարպետների արտադրությամբ:

Քաղաքում գործում են նաև կենցաղային իրերի, սարքավորումների, տեքստիլ-գալանտերեական արտադրանքի ձեռնարկություններ:

Բնակչությունը զբաղվում է նաև հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Կան նաև բազմամյա տնկարկներ, սակայն դրանք մեծ մակերես չեն զբաղեցնում:

Համայնքի հողերը հիմնականում օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր և արոտավայրեր:

Քաղաքը գազաֆիկացված է, ունի թվով 4 գերեզմանատուն՝ 1.66, 1.21, 0.81 և 0.44 հա մակերեսներով: Գործում է նաև 5.74 հա տարածք զբաղեցնող աղբավայրը:

Տեսարժան վայրեր

- Սուրբ Խաչ եկեղեցի - կառուցվել է 5-րդ դարում
- Բաշ-Ապարանի ճակատամարտին նվիրված հուշակոթող
- Դրաստամատ Կանայանի դամբարանը
- Հայոց այբուբենի համալիրն ու Մխիթար Գոշի արձանը

Ապարան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը՝ հաստատված 2002 թ. ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 21 հուշարձան (9 միավոր)[6]:

1.19.3. Արագած,

գյուղ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում: Գտնվում է Արագած լեռան արևելյան ստորոտին, ծովի մակերևույթից 1980 մետր բարձրության վրա: Ապարան քաղաքից գտնվում է 15 կմ, մարզկենտրոն Աշտարակից՝ 25 կմ և Երևանից՝ 40 կմ հեռավորության վրա, Ապարան-Երևան ավտոմայրուղու աջ կողմում: Գյուղը տարածված

[6] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

է Արագածի լանջերից սկիզբ առնող Գեղարոտ գետի երկու ափերին: Վարչական տարածքը 5646.9 հա:

Գյուղը հիմնադրվել է 1828-30թթ. Արևմտյան Հայաստանի Մուշ, Տարոն և Ալաշկերտ գավառներից գաղթած հայ ընտանիքների վերաբնակեցմամբ:

Արագածի ազգաբնակչության փոփոխությունը

Տարի	1873	1922	1959	1970	1979	2001	2004
Բնակիչ	1095	1535	1519	2103	2251	3040	3100

Հիմնադրման պահին գյուղը կոչվել է Ջամուշլու: Այնուհետև 1840թ-ից բնակավայրը անվանվել է Ղազանաֆար, իսկ 1948թ. սեպտեմբերի 10-ից գյուղը վերանվանվել է Արագած:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Արագած գյուղի բնակչությունը կազմում է 3936 մարդ:

Տարածքին և գյուղին բնորոշ է խստաշունչ ձմեռներով և զով ամառներով կլիմայական պայմանները: Վեգետացիոն շրջանի տևողությունը 170-185 օր է: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -20^{0}C, - 25^{0}C-ի իսկ առավելագույնը՝ +27^{0}C,+35^{0}C-ի: Ձյան շերտի բարձրությունը հասնում է մինչև 120-170սմ: Առաջին ձյունը տեղումէ հոկտեմբերի II տասնօրյակից, իսկ շերտը պահպանվում է մինչև մայիսի I տասնօրյակը: Օդը առողջարար է, ջուրը՝ սառնորակ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Տները երկհարկանի են, քարաշեն:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 110.950 հազ. մ^2՝ բաղկացած 3 բազմաբնակարան շենքից՝ 0.95 հազ. մ^2 մակերեսով և 749 անհատական բնակելի տներից՝ 110.0 հազ. մ^2 մակերեսով:

Գյուղն ունի 2 դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան Առողջության կենտրոն:

Դպրոցն ունի 588 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում 112 երեխա:

Արագածի մշակույթի տունը (կառուցվել է 1984 թ) կապիտալ վերանորոգվել է 2008-2010թթ-ին: Այն ունի 400 տեղանոց դահլիճ: Մշակույթի տանը տեղակայված է գրադարանը՝ 13000 կտոր գրքային ֆոնդով:

"Արագածի առողջության կենտրոն" ՓԲԸ-ն ունի գինեկոլոգիական, մանկական, թերապևտիկ, ծննդաբերական և ստոմատոլոգիական բաժանմունքներ:

Համայնքում գործում են 'Աշտարակ-կաթ' ընկերության կաթի մթերման և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրամասերը: Գործում է 2 վարսավիրանոց, ինտերնետ համակարգչային կենտրոն և սպորտային մարզասարքերով սենյակ: Համայնքում գործում են նաև հանդիսությունների սրահներ, հացի արտադրամաս, մանկական և սպորտային խաղահրապարակներ:

Շատ ակտիվ է սպորտային կյանքը: Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվում և անցկացվում են վոլեյբոլի, ֆուտբոլի, նարդու, շախմատի, դահուկի, թենիսի և այլ մարզաձևերի մրցույթներ, որին մասնակցում են տարածաշրջանի համայնքները: Գյուղում գործում են կարատեի, ֆուտբոլի, շախմատի, վոլեյբոլի խմբակներ:

Բնակչությունը զբաղվում է ինչպես հողագործությամբ, այնպես էլ անասնապահությամբ: Հողագործության ոլորտում զբաղվում են հիմնականում կարտոֆիլի, կաղամբի և հացահատիկի մշակությամբ, իսկ անասնապահության ոլորտում լավ զարգացած է ինչպես խոշոր եղջերավոր անասունների, այնպես էլ խոզաբուծության

ճյուղերը: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 1599 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 319 գլուխ, խոզերինը՝ 162 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված է մասնակի, ունի գերեզմանատուն: Աղբավայր չունի:

Գյուղում են գտնվում Սբ.Աստվածածին եկեղեցին (1914 թ.) և «Կենաց ծառ» մատուռը (17-18դդ.), իսկ 1,2 կմ հյուսիս-արևմուտք՝ «Լուսաղբյուր» մատուռը (19-20դդ.):

Արագած գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը՝ հաստատված 2002 թ. ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 16 հուշարձան (10 միավոր):

1.19.4. Արային,

գյուղը հիմնադրվել է 1828 թ, գտնվում է Արագած լեռան ստորոտում, ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա, Ապարանից 10 կիլոմետր հարավ-արևմուտք, Քասախ գետի միջին հոսանքի շրջանում, գետի աջ կողմում, Արագած սարի ստորոտին: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 31 կմ, մարզկենտրոնից՝ 18 կմ, միջպետական մայրուղուց՝ 20 կմ: Սահմանակից է Վարդենուտ, Ափնա և նախկին Նիգատուն գյուղական համայնքներին: Վարչական տարածքը՝ 3344.8 հա:

Արային Ապարանի տարածաշրջանի պատմական բնակավայրերից է: Երկու սարերի /Արագած և Արա/ միջև ընկած նեղ լեզվակով է անցել և ներկայումս էլ անցնում է Հյուսիս-Հարավ մայրուղին:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Կլիման առողջարար է, խմելու ջուրը՝ սառնորակ:

Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Նախկինում ունեցել է Բազարջիկ, Բազարջուղ անվանումները: Վերանվանվել է 1946 թ.-ին:

Գյուղի բնակիչները հիմնականում Մանազկերտից գաղթացներ են: 1828-1830 թթ. գյուղում հաստատվել է Մանազկերտից ներգաղթած 29 ընտանիք: 1831 թ.-ին ունեցել է 182, 1873 թ.-ին՝ 451, 1914 թ.-ին՝ 843, 1939 թ.-ին՝ 592, 1979 թ.-ին՝ 338 հայ բնակիչ, որոնց մի մասի նախնիները այստեղ են տեղափոխվել Արևմտյան Հայաստանից՝ Ալշկերտի, Բուլանխի, Մուշի շրջաններից 1828-29 թթ.:

Արայի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1852	1859	1873	1886	1914	1922	1959	1970	1979	2001
Բնակիչ	182	161	296	451	473	843	562	592	385	338	633

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Արայի գյուղի բնակչությունը կազմում է 660 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Տները քարաշեն են, հիմնականում՝ երկհարկանի:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 33.390 հազ. մ^2՝ բաղկացած 210 անհատական բնակելի տներից:

Ունի դպրոց, կապի հանգույց: Դպրոց է հաճախում 53 աշակերտ:

Հողահանդակները հիմնականում օգտագործվում են որպես վարելահողեր և արոտավայրեր, մշակում են հացահատիկ, կերային, բանջարաբոստանային

կուլտուրաներ, պտուղներ: Զբաղվում են անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է563 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 382, խոզերինը՝ 244 գլուխ:

Արդյունաբերություն չունի: Գյուղը գազաֆիկացված է մասնակի, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղը երկու մասի բաժանելով՝ նրա միջով հոսում է Գեղարոտ գետը:

Տիգրան Աֆրիկյանը 1906 թվականին գյուղի կենտրոնում, գետակի ափին, կառուցել է այդ ժամանակների համար լավագույն հարմարություններ ունեցող դպրոցական շենք, որը ողջ Ապարանի տարածաշրջանում միակն է եղել մինչև 1923 թ. և ծառայել է մինչև 1970-ական թվականները:

Գյուղի հյուսիս-արևմտյան կողմում մնում են վաղ և ուշ միջնադարյան բնակատեղիների հետքեր, իսկ գյուղի կենտրոնում գտնվող եկեղեցին իր մի մասով միջնադարյան սրբարան է եղել: Գյուղից 1,5 կմ հարավ մնում են բնակավայրի, XIII դարում Արարատյան կողմնակալության կողմնակալ-հրամանատար, իշխանաց-իշխան Վաչե Ա Վաչուտյանի կառուցած Արայիի իջևանատան, շրջակայքում՝ երկու ավերակ բնակավայրերի մնացորդներ:

Գյուղից 2 կմ հարավ-արևմուտք մնում են մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակների Արայի բերդ-ամրոցի հիմնային մասերը:

Արայում է գտնվում 1885 թ.-ի Սուրբ Աստվածածին եկեղեցին, իսկ 1,3 կմ հարավ-արևմուտք՝ 17-18 դարերի «Թուխ Մանուկ» մատուռը:

Արագածոտնի մարզի Արայի գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը՝ հաստատված 2002 թ. ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 9 հուշարձան (10 միավոր)[7]:

1.19.5. Ափնագյուղ,

գտնվում է Քասախ (գետ)ի աջ ափին, Ապարան-Երևան ավտոմայրուղու ձախ կողմում, մարզկենտրոնից 18 կիլոմետր հարավ, ծովի մակերևույթից 1810 մետր բարձրության եռանկյունաձև հարթ բարձունքի վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 34 կմ, միջպետական մայրուղուց՝ 18 կմ: Նախկինում **Աթմա** անվան տակ ներառնված է եղել Երևանի նահանգի Երևանի գավառում: Վարչական տարածքը՝ 1705.92 հա:

Գյուղի Ափնա անունը հիշատակվում է XIII դարից: XIII-րդ դարի կեսերին Սաղմոսավանքի գրատան ներսի պատին փորագրված արձանագրության համաձայն՝ ափնագյուղացի Սասնե, Վաչե, Գրիգոր եղբայրները վանքին հող են նվիրել: Սահակ գրչի 1644 թ.-ի հիշատակարանում ևս գյուղը Ափնա անունով է հիշվում և մինչև մեր օրերը փոփոխության չի ենթարկվել: Գյուղի Ափնագեղ կամ Ափնագյուղ անունը Ղևոնդ Ալիշանի ենթադրությամբ առաջացել է «երևում է ինչպես ափի մեջ» արտահայտությունից: Ավելի հավանական է Քասաղ (գետ)ի ափին գտնվող գյուղ = Ափի գյուղ = Ափն-ա-գյուղ տարբերակը:

Այժմյան բնակչության նախնիները 1828-1829 թթ.-ին եկել են Բայազեդից (60 ընտանիք) և Մուշից (1 ընտանիք):

1920 թվականին գյուղն ունեցել է շուրջ 2000 բնակիչ: 20-րդ դարի առաջին կեսից սկսած, հատկապես 1930-ական թվականներից, գյուղից արտահոսք է սկսվել դեպի Երևան ու Արարատյան դաշտի այլ բնակավայրեր:

Ափնագյուղի բնակչության փոփոխությունը

[7] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Տարի	1831	1859	1873	1886	1897	1926	1939	1959	1970	1979	2008
Բնակիչ	376	450	841	871	907	725	629	358	435	444	695

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Ափնագյուղ բնակավայրի բնակչությունը կազմում է 632 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Տները քարաշեն են և բարետես: Խմելու ջուրը գյուղ է բերվել 6 կիլոմետրանոց խողովակաշարով՝ Վարդենուտ գյուղի մոտակայքից:

Գյուղն ունի դպրոց, մշակույթի տուն /չգործող/: Դպրոց է հաճախում 115 աշակերտ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 19.920 հազ. մ^2՝ բաղկացած 118 անհատական բնակելի տներից:

Գյուղի բնակիչները զբաղվում են անասնապահությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 300 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 340 գլուխ, խոզերինը՝ 29 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված է մասնակի, ունի գերեզմանատուն:

Գյուղի արևելյան կողմում գտնվող ձորի երկու ափերի բարձրադիր մասերում կան քարե դարի ժամանակներից մինչև միջնադար օգտագործված քարանձավներ, գյուղի արևելյան կողմում՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի բնակատեղի և դամբարանադաշտ, դրան մոտիկ միջնադարյան գյուղատեղ: Գյուղի ներկա տարածքի արևելյան ձորաեզրին, իրարից մոտ 200 մետր հեռավորությամբ պահպանվել են 4-5-րդ դարերի երկու ոչ մեծ չափի միանավ բազիլիկ եկեղեցիներ, որոնց պատերի վրա փորագրված են հավասարաթև խաչեր, վաղ միջնադարյան քանդականախշեր, համանման Քասախի բազիլիկի, Զովունիի, Աստվածընկալի նույն ժամանակաշրջանի կառույցների համապատասխան մանրամասներին: Այստեղ պահպանվել է միջնադարյան վիմափոր մատուռ և միջնադարյան գերեզմանոց:

Հայկական խոհանոցին ափնեցի կանայք տվել են յուրահատուկ ուտեստ՝ կանեփով տոլման (հետագայում այս ճաշատեսակից անցել են պասուց տոլմային):

Արագածոտնի մարզի Ափնագյուղ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը՝ հաստատված 2002 թ. ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 17 հուշարձան (9 միավոր):

1.19.6. Եղիպատրուշ,

գյուղ Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից 10-12 կմ հարավ-արևելք: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 40 կմ, մայրաքաղաքից՝ 60 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: Գյուղը գտնվում է Ապարանի ջրամբարի հարավ-արևելյան մասում, Երևան-Ապարան խճուղուց դեպի աջ՝ մոտ 10 կմ: Վարչական տարածքը՝ 3804.62 հա:

Գյուղը հազարամյակների պատմություն ունի: Նախկինում ունեցել է Դամըջլու, Դամջալի, Դամջալու, Թամջառլու, Տամճըլու, Տամջերլու, Փամջիլու, Մռավյան անվանումները: Եղիպատրուշ է վերանվանվել 1991 թ: Եղիպատրուշ նշանակում է՝ չհասած ցորենի հասկ:

Բնակիչների նախնիների որոշ մասը գաղթել են Պարսկաստանից և Ալաշկերտից:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Եղիպատրուշ բնակավայրի բնակչությունը կազմում է 735 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Տները քարաշեն են: Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 28.08 հազ. մ^2՝ բաղկացած 180 անհատական բնակելի տներից:

Ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն /չի շահագործվում/, գրադարան:

Դպոցն ունի 1221 աշակերտ:

Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր: Զբաղվում են դաշտավարությամբ, մշակում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Ռեզերվային (պահուստի համար նախատեսված) հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 70%, որոնց մեջ մեծ է վարելահողերի և արոտավայրերի բաժինը: Զբաղվում են անասնապահությամբ, բուծում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ:

Գյուղն ունի 20 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 719 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 1060 գլուխ, խոզերինը՝ 66 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղի ձախակողմում գտնվող ձորակի երկու կողմերում, շինարարական աշխատանքներ կատարելիս, բացվել են մ.թ.ա. 3-րդ-2-րդ հազարամյակների դամբարաններ, գտնվել են այդ ժամանակահատվածի կավե ամաններ և զարդեր:

696 թ. այս գյուղում է ծնվել Ամենայն Հայոց կաթողիկոս Եսայի Ա Եղիպատրուշեցին: Գահակալել է 775-788 թվականներին: Գյուղի անվան հիշատակությունն էլ վերաբերում է հենց այդ կաթողիկոսին և պատմագրության մեջ հիշվում է մինչև 1644 թվականը:

Գյուղի մեջ է գտնվում 13-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցին, իսկ դեպի արևելք՝ 4-5-րդ դարերի Եղիպատրուշի վանքը (Մռավյան):

Արագածոտնի մարզի Եղիպատրուշ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը՝ հաստատված 2002 թ ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 24 հուշարձան (6 միավոր)[8]:

1.19.7. Երնջատափ

Գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արայի լեռան հյուսիսային ստորոտում, Ապարան քաղաքից՝ 23 կմ հեռավորությամբ: Հեռավորությունը մայրզքաղաքից՝ 47 կմ, մարզկենտրոնից՝ 37 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 1850 մ: Վարչական տարածքը՝ 3122.3 հա:

Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6-ից-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները անտառային տափաստաններ են:

[8] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Երնջատափ գյուղը հիմնադրվել է 1828-1829 թթ. Արևմտյան Հայաստանից՝ հիմնականում Մուշից, Դիադնից, Խլաթից և Վանից եկած գաղթականների կողմից և ունեցել է Գարապուլագ, Երինճատափ, Ղարաբուլաղ (ղարա բուլաղ-սև աղբյուր) անվանումները: Նախկինում ընդգրկված է եղել Երևանի նահանգի Էջմիածնի գավառի կազմում: Երնջատափ է վերանվանվել 1946 թ-ին:

Երնջատափի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1873	1897	1926	1939	1959	1970	1979	2001	2004
Բնակիչ	589	780	816	962	488	409	286	490	484

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Երնջատափ բնակավայրի բնակչությունը կազմում է 588 մարդ:

Գյուղը գլխավոր հատակագիծ չունի:

Գյուղի դպրոցն ունի 95 աշակերտ: Դպրոցի շենքում գործում է նախադպրոցական կրթության մեկ հաստատություն՝ նախակրթարան: Գյուղում կա մանկապարտեզի առանձին շենք, որն ունի վերանորոգման կարիք: Գյուղապետարանի շենքում գործում է նաև բուժկետ: Առկա է նաև համայնքային կենտրոն:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 38.4 հազ. մ^2՝ բաղկացած 2 բազմաբնակարան շենքից՝ 4.8 հազ. մ^2 մակերեսով և 200 անհատական բնակելի տներից՝ 33.6 հազ. մ^2 մակերեսով:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ:

Կլիմայի ցամաքայնության հետևանքով հողահանդակները ոռոգվում են և օգտվում են Երնջատափի ջրհան կայանից, որը ջուրը Ապարանի ջրամբարից տեղափոխում է այստեղ:

Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են նաև կարտոֆիլ, բանջարաբոստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար, իսկ վաճառքի համար գյուղմթերքի հիմնական սպառման շուկան Երևանն է: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում, քանի որ մայրաքաղաք հասնելու համար համայնքը չունի հասարակական տրանսպորտ:

Համայնքում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 328 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 241 գլուխ, խոզերինը՝ 19 գլուխ:

Արդյունաբերություն չունի:

Գյուղը գազաֆիկացված է մասնակի, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղում բազմաթիվ են պատմամշակութային կառույցները. գյուղում է գտնվում Սբ. Նշան կամ Ս. Աստվածածին եկեղեցին (12-13-րդ դդ.): Երնջատափից 1 կմ հյուսիս-արևմուտք գտնվում է «Երնջակ» ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 2,5 կմ արևմուտք՝ «Դավոյի» գյուղատեղին (10-14-րդ դդ.), 3 կմ արևմուտք՝ «Լազգի աղբյուր» գյուղատեղին (10-15-րդ դդ.), իսկ 2 կմ արևմուտք՝ «Աստվածընկալ» վանքը (5-13-րդ դդ.):

Արագածոտնի մարզի Երնջատափ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը՝ հաստատված 2002 թ. ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 28 հուշարձան (11 միավոր)[9]:

1.19.8. Թթուջուր

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Քասախ գետի ձախ կողմում, Ծաղկունյաց լեռների արևմտյան փեշերին: Գյուղը գտնվում է Ապարան քաղաքից դեպի արևելք 9 կմ հեռավորությամբ, ծովի մակերևույթից 1910 մ բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 60 կմ, մարզկենտրոնից՝ 40 կմ, միջպետական մայրուղուց՝ 11 կմ: Սահմանակից է արևելքից՝ Ջորագլուխ, արևմուտքից՝ Չքնաղ բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 2018.86 հա:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Թթուջուր գյուղը հիմնադրվել է 1828 թվականին: Նախկինում ունեցել է Ամիրլի, Իմերլու, Իմիրլու, Իմրլու անվանումները և Թթուջուր է վերանվանվել 1950 թ-ին:

Գյուղի բնակիչները հիմնականում նախկին մշեցիներ են:

Թթուջուրի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1873	1926	1939	1959	1970	1979	2001	2004
Բնակիչ	146	380	632	661	419	436	337	356	324

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Թթուջուր բնակավայրի բնակչությունը կազմում է 377 մարդ:

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր:

Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Դպոցն ունի 50 աշակերտ: Վաղ մանկության զարգացման կենտրոն (ՎՄԶԿ) է հաճախում 14 երեխա: Բուժկետը տեղակայված է համայնքի վարչական շենքում, բարվոք վիճակում է: Միջնակարգ դպրոցում գործում են մարզադահլիճը և խաղահրապարակը՝ ֆուտբոլի դաշտով, որոնցից, բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև համայնքի երիտասարդները:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 14.04 հազ. մ^2՝ բաղկացած 90 անհատական բնակելի տներից:

Գյուղը գազաֆիկացված չէ: Գյուղն ունի 1 գերեզմանատուն, որը ցանկապատված չէ, չունի առանձին հատկացված աղբավայր, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի մաքրության, գեղատեսիլ բնության վրա:

Զբաղվում են անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 315 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 154 գլուխ, խոզերինը՝ 21: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են նաև կարտոֆիլ, բանջարաբոստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Ներհամայնքային ճանապարհներն ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման կարիք: Փողոցները չունեն ջրահեռացման հեղեղատներ, արտաքին (գիշերային) լուսավորության համակարգ:

[9] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Գյուղում է գտնվում 19-րդ դարի Սուրբ Հարություն եկեղեցին, իսկ հարավային մասում պահպանվել է 17-րդ դարի «Կարմիր վանք» մատուռը:

Արագածոտնի մարզի Թթուջուր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 9 հուշարձան (7 միավոր)[10]:

1.19.9. Լուսագյուղ

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Ապարանի տարածաշրջանի հնագույն բնակավայրերից մեկը: Գտնվում է Ապարան քաղաքից 2 կիլոմետր հյուսիս-արևելք, Ծաղկունյաց լեռնաբազուկի թեք փեշին և հարթության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 60 կմ, մարզկենտրոնից՝ 40 կմ, միջպետական մայրուղուց՝ 3 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1970 մետր: Սահմանակից է Կոտայքի մարզին, Ապարան, Սարալանջ, Կայք, Միրաք, Մելիքգյուղ բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 1740.24 հա:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Նախկինում ունեցել է Գարանլըգ, Կարանլըղ, Կարանլուի, Ճանճիկ, Ջանջիկ, Քարագլուխ անվանումները: Լուսագյուղ է վերանվանվել 1948 թ-ին:

1829 թվականին գյուղում հաստատվել է Դիադինից գաղթած 29 ընտանիք՝ 157 մարդ (81 տղամարդ, 76 կին):

Լուսագյուղի ազգաբնակչության փոփոխությունը

Տարի	1829	1897	1926	1939	1959	1979	1988	1999
Բնակիչ	157	501	628	746	620	673	717	775

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Լուսագյուղ բնակավայրի բնակչությունը կազմում է 869 մարդ:

Գյուղն ունի գլխավոր հատակագիծ: Գյուղում կառուցված առանձնատները մեկ-երկու հարկանի են, քարաշեն, բարետես:

Ունի դպրոց /նորակառույց/, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց:

Դպրոցն ունի 86 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում 20 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 24.48 հազ. մ^2՝ բաղկացած 170 անհատական բնակելի տներից:

Գյուղի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ, զբաղվում

[10] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

են պտուղների մշակությամբ: Ռեզերվային (պահուստի համար նախատեսված) հողերը զբաղեցնում են ընդհանուր մակերեսի մոտ 70%-ը, որոնց մեջ գերակշռում են արոտավայրերը և վարելահողերը: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, զարգացած է կաթնամսատու ուղղությունը: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 926 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 963 գլուխ, խոզերինը՝ 55 գլուխ: Արդյունաբերություն չունի:

Համայնքի սեփականություն համարվող հանդամասից ինքնահոս եկող խմելու ջրատարը կապիտալ վերանորոգվել է 2016 թ.: Բնակչությունը խմելու ջուրը ստանում է բոլոր թաղամասերում տեղադրված ծորակներից: Խմելու ջրով ապահովված են նաև համայնքի դպրոցը, մանկապարտեզը:

Բնակավայրն գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն, որը ցանկապատված չի, չունի առանձին հատկացված աղբավայր:

Գյուղի կենտրոնում գտնվող եռախորան, քարածածկ կտուրով եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի վերջերին: Կա նաև ավելի հին եկեղեցի ավերված վիճակում:

Արագածոտնի մարզի Լուսագյուղ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 25 հուշարձան (4 միավոր)[11]:

1.19.10. Ծաղկաշեն

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արագածի արևելյան ստորոտին, Ապարան քաղաքից 9 կմ հարավ, Երևան-Ապարան ավտոմայրուղու վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 30 կմ հյուսիս-արևմուտք, մայրաքաղաքից՝ 45 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1950 մ: Վարչական տարածքը՝ 1834.11 հա:

Հիմնադրվել է 1829 թվականին: Նախկինում ունեցել է Ամատունյաց Ավան, Արագածու գյուղ, Թաքառլու, Թաքրլի, Թաքյառլու, Ծաղկաշատ, Ղառնիյարտղ անվանումները: Ծաղկաշեն է վերանվանվել 1950 թ-ին:

Գյուղը հիմնադրել են Ալաշկերտից եւ Դիադինից գաղթածները 1829 թ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 118, ապա այստեղ գաղթել են նաեւ Մուշից եւ Սասունից 1870-ական թթ.: 1897 թ-ին ունեցել է 427 բնակիչ, 1939 թ-ին՝ 629, 1959 թ-ին՝ 388, 1979 թ-ին՝ 503

Ծաղկաշենի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	2001	2004
Բնակիչ	118	427	565	629	388	457	503	600	596

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Ծաղկաշեն գյուղի բնակչությունը կազմում է 661 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղն ունի դպրոց, ակումբ: Դպրոց է հաճախում 102 աշակերտ: Վաղ մանկության զարգացման կենտրոն (ՎՄԶԿ) է հաճախում 14 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 21.240 հազ. մ^2՝ բաղկացած 136 անհատական բնակելի տներից:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային մշակաբույսերի մշակությամբ:

Գյուղն ունի 2 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների թիվը՝ 813 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 127 գլուխ, խոզերինը՝ 115 գլուխ:

[11] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն:

Գյուղի արևելյան մասում է գտնվում XII-XIII դարերի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Արագածոտնի մարզի Ծաղկաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 3 հուշարձան (2 միավոր)[12]:

1.19.11. Կայք,

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Ապարան քաղաքից հյուսիս-արևելք մարզկետրոնից 35 կմ, մայրաքաղաքից՝ 54 կմ հեռավորության վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մետր: Վարչական տարածքը՝ 809.2 հա:

Նախկինում ունեցել է Մելքոնքենդ, Մելքումքենդ, Մյուլք, Մուլկի, Մուլքի գյուղ անվանումները) Կայք է վերանվանվել 2006 թվականի հուլիսի 4-ին:

Կայք գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Մուշի, և Պարսկահայաստանի Խոյի և Սալմաստի շրջանների գյուղերից 1828-1829 թվականներին: 1831 թ-ին գյուղն ունեցել է 89, 1897 թ-ին՝ 551, 1939 թ-ին՝ 826, 1959 թ-ին՝ 481, 1979 թ-ին՝ 538 բնակիչ:

Կայք գյուղի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	2001	2004
Բնակիչ	89	551	670	826	481	537	538	554	521

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Կայք գյուղի բնակչությունը կազմում է 599 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղն ունի դպրոց, վաղ մանկության զարգացման կենտրոն, ակումբ, բուժ-կետ, գրադարան, կապի հանգույց:

Դպրոց է հաճախում 73 աշակերտ: Վաղ մանկության զարգացման կենտրոն (ՎՄԶԿ) է հաճախում 21 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 25.08 հազ. մ^2՝ բաղկացած 149 անհատական բնակելի տներից:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային մշակաբույսերի մշակությամբ: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես արոտավայրեր, վարելահողեր:

Գյուղացիական տնտեսությունների թիվը՝ 159:

Խոշոր եղջերավոր անասունների թիվը՝ 302 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 180 գլուխ, խոզերինը՝ 54 գլուխ:

Արդյունաբերություն չունի:

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն:

Գյուղում պահպանվել է 16-րդ դարի սուրբ Աստվածածին եկեղեցին:

Արագածոտնի մարզի Կայք /Մուլքի/ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 2 հուշարձան (2 միավոր)[13]:

[12] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

[13] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

1.19.12. Հարթավան

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Ապարանի սարավանդում, Ապարան քաղաքից հարավ, Երևան-Ապարան խճուղու վրա, Գեղարոտ գետի ձախափնյակում: Գտնվում է Շենավան գյուղի հարևանությամբ: Մարզկենտրոնից գտնվում է 21 կմ հյուսիս-արևելք, մայրաքաղաքից՝ 45 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1870 մ: Վարչական տարածքը՝ 1417.55 հա:

Նախկինում կոչվել է Կարաքլիս, Գարագիլիսե, Կարաքիլիսա, Ղարաքիլիս անվանումները: Հարթավան է վերանավանվել 1950 թ-ին:

Հարթավանի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանից՝ Ալաշկերտի շրջանից:

Հարթավանի բնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	2001	2004
Բնակիչ	178	689	669	483	465	620	600	913	928

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Հարթավան գյուղի բնակչությունը կազմում է 956 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Ունի դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Դպրոցն ունի 177 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում 60 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 33.960 հազ. մ^2՝ բաղկացած 202 անհատական բնակելի տներից:

Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես վարելահողեր, արոտավայրեր: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են նաև խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Խոշոր եղջերավոր անասունների թիվը՝ 647 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 132 գլուխ, խոզերինը՝ 87 գլուխ:

Արդյունաբերություն չունի:

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղում է գտնվում Սուրբ Գրիգոր եկեղեցին (1861 թ.), 13-րդ դարի «Թուխ Մանուկ» և 7-րդ դարի «Շեկ Ավետարան» մատուռները: Հարթավանից 4-5 կմ արևելք գտնվում են Աստվածընկալ գյուղատեղին (19-20-րդ դդ.) իր համանուն եկեղեցական համալիրով (5-13-րդ դդ.), Սուրբ Աստվածածին (5-6-րդ դդ.) և Սուրբ Նշան (Կաթողիկե, 1244 թ.) եկեղեցիներով: Հարթավանում են գտնվում 13-րդ դարի կիսավեր մատուռ ու գերեզմանատուն[14]:

[14] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Գյուղի հարավ-արևմտյան եզրին, Երևան-Ապարան խճուղուց դեպի աջ՝ բլուրի վրա, 1975 թ. կառուցված է Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված հարթավանցիներին նվիրված հուշահամալիրը: Հուշահամալիրի հեղինակն է հարթավանցի քանդակագործ Ռաֆիկ Գարեգինի Խաչատրյանը (Խաչառ), 1937-1993 թթ.:

1.19.13. Ձորագլուխ

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Ծաղկունյաց լեռների արևմտյան լանջին, Քասաղ գետի ձախ կողմում, Ապարան քաղաքից 14 կմ հարավ-արևելք ։

Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 67 կմ, մարզկենտրոնից՝ 45 կմ հյուսիս-արևելք, միջպետական մայրուղուց՝ 14 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2025 մ: Գյուղը սահմանակից է Կոտայքի մարզին, Մռավյան և Թթուջուր բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 2776.88 հա:

Հիմնադրվել է 1828 թ., Ձորագլուխ է վերանվանվել 1946 թվականի հուլիսի 15-ին: Նախկինում հայտնի է եղել Գյուլաբ, Գյուլաբլու, Գյուլաբլի, Գյուլապլի և այլն անվանումներով: Շրջակայքը կանաչապատ է ու ծաղկավետ:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով, հաճախակի են չորային տարիները:

Գյուղի բնակիչները գաղթել են պատմական Վասպուրական նահանգի Արտազ գավառի Քիշմիշթափա գյուղից:

Ձորագլուխ գյուղի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	Բնակչություն
1897	703 մարդ[1]
1926	771 մարդ[1]

Տարի	Բնակչություն
1939	796 մարդ[1]
1959	489 մարդ[1]

Տարի	Բնակչություն
1970	459 մարդ[1]
1979	356 մարդ[1]

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Ձորագլուխ գյուղի բնակչությունը կազմում է 255 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղում գործում են դպրոցը, բուժկետը: Դպրոցն ունի 61 աշակերտ, վաղ մանկության զարգացման կենտրոն (ՎՄԶԿ) է հաճախում 13 երեխա::

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 11.76 հազ. մ^2՝ բաղկացած 75 անհատական բնակելի տներից:

Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես վարելահողեր, արոտավայրեր: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են նաև խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Խոշոր եղջերավոր անասունների թիվը՝ 438 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 450 գլուխ, խոզերինը՝ 11 գլուխ:

Արդյունաբերություն չունի:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղում կա 19-րդ դարի Սուրբ Հովհաննես եկեղեցի: Գյուղից 1,5 կմ հյուսիս-արևելք գտնվում է 10-12-րդ դարերի «Կարմիր վանք» եկեղեցին, 2 կմ հյուսիս-արևելք՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. «Խազնաքար» ամրոցը, իսկ 0,7 կմ հյուսիս-արևելք՝ մ.թ.ա. 10-8-րդ դարերի «Բերդի գլուխ» ամրոցը:

Արագածոտնի մարզի Ջորագլուխ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 19 հուշարձան (8 միավոր)[15]:

1.19.14. Նիգավան

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արագած լեռան փեշերին, Ապարան քաղաքից 7 կմ հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 61 կմ, մարզկենտրոնից՝ 39 կմ հյուսիս-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2025 մ: Վարչական տասրածքը՝ 4558.68 հա:

Ունի լեռնային զով ու առողջարար կլիմա, խմելու սառնորակ ջուր:

Նախկինում ունեցել է Դանագերմազ, Դանագիրմազ, Տանագիրմազ, Հովիտ /1947թ./ անվանումները, Նիգավան է վերանվանվել 1967 թվականի հոկտեմբերի 21-ին: Գյուղի ներկայիս անվանումը կապված է Այրարատ աշխարհի Նիգ գավառի հետ:

Նիգավանի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Կարինի, Մուշի և Պարսկահայաստանի տարբեր շրջանների գյուղերից: 1831թ. գյուղն ուներ 149,1897-ին՝873, 1926-ին՝ 1401, 1939-ին՝ 1659, 1959-ին՝ 731, 1970-ին՝ 807, 1979-ին՝670 հայ բնակիչ.

Նիգավանի բնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	2001	2004
Բնակիչ	149	873	1401	1659	731	807	670	707	588

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Նիգավան գյուղի բնակչությունը կազմում է 728 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Առանձնատները քարաշեն են, հարմարավետ:

Գյուղն ունի նորակառույց միջնակարգ դպրոց, ակումբ-գրադարան, կապի բաժանմունք, բուժկայան:

Դպրոցն ունի 111 աշակերտ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 20.76 հազ. մ^2՝ բաղկացած 144 անհատական բնակելի տներից:

Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես վարելահողեր, արոտավայրեր: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են նաև խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Խոշոր եղջերավոր անասունների թիվը՝ 937 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 613 գլուխ, խոզերինը՝ 53 գլուխ:

Արդյունաբերություն չունի:

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն և աղբավայր:

Նիգավանի կենտրոնում է գտնվում 19-րդ դարի Սուրբ Ստեփանոս եկեղեցին, իսկ հյուսիսային մասում՝ 13-14-րդ դարերի «Ժամատեղ» եկեղեցին: Գյուղից 2 կմ հարավ գտնվում է «Թուխ Մանուկ» մատուռը (17-18-րդ դդ.), 2,5 կմ հյուսիս-արևմուտք՝ «Թևաթորոս» մատուռը (18-19-րդ դդ.):

[15] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Գյուղի շրջակայքում կան կիկլոպյան ամրոցի մնացորդներ, գյուղատեղիներ, գերեզմանոց:

Արագածոտնի մարզի Նիգավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 10 հուշարձան (8 միավոր)[16]:

1.19.15. Շենավան,

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Արագած լեռան հարավ-Արևելյան ստորոտին, Գեղարոտ գետի հովտում, Ապարան քաղաքից 15 կմ հարավ: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 40 կմ, մարզկենտրոնից՝ 22 կմ հյուսիս, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1875 մետր: Վարչական տարածքը՝ 1890.53 հա:

Հիմնադրվել է 18-րդ դարում: Նախկինում ունեցել է Բլերխ, Բլխեր, Բուլխաիր, Բուլխեիր, Խարավեր, Խոտավետ անվանումները: Շենավան է վերանվանվել 1950 թ-ին: Նախկինում եղել է Երևանի նահանգի Էջմիածնի գավառի մեջ:

Շենավանի բնակչության մի մասը գաղթել է Պարսկահայաստանից:

Շենավանի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004
Բնակիչ	397	725	778	871	1028	1095	1156	1716	1699	1753

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Շենավան գյուղի բնակչությունը կազմում է 1896 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Առանձնատները քարաշեն են, հարմարավետ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, բուժ-ամբուլատորիա, մշակույթի տուն, կապի բաժանմունք:

Դպրոցն ունի 300 աշակերտ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 65.28 հազ. մ^2՝ բաղկացած 346 անհատական բնակելի տներից:

Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես վարելահողեր, արոտավայրեր: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են նաև խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Խոշոր եղջերավոր անասունների թիվը՝ 618 գլուխ, խոզերինը՝ 125 գլուխ:

Արդյունաբերություն չունի:

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն և աղբավայր:

Գյուղում է գտնվում 18-րդ դարի եկեղեցի:

Շենավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 6 հուշարձան (3 միավոր)[17]:

[16] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

1.19.16. Շողակն,

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Թեղենյաց լեռների լանջին, Քասախ գետի ձախ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 22 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից 27 կմ, մայրաքաղաքից 45 կմ, միջպետական մայրուղուց՝ 25 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: Վարչական տարածքը՝ 2189.66 հա:

Գյուղը հիմնադրվել է 1830-ական թվականներին, նախկինում ունեցել է Նորաշեն, Սաշլու, Սաչիլի, Սաչիլու, Սաչլու անվանումները: Շողակն է վերանվանվել 2006 թվականի հուլիսի 4-ին:

Տարածաշրջանը բնորոշ է խստաշունչ ձմեռներով և զով ամառներով: Օդի նվազագույն ջերմաստիճանը հասնում է մինչև -20^{0}C – 28^{0}C, իսկ առավելագույնը +35^{0}C-ի: Ձյան շերտի բարձրությունը հասնում է 100-150սմ-ի: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

1831 թ-ին գյուղն ունեցել է 146, 1897 թ-ին՝ 605, 1939 թ-ին՝ 659, 1959 թ-ին՝ 256, 1979 թ-ին՝ 102, 1989 թ-ին՝ 145 հայ բնակիչ:

Շողակնի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004
Բնակիչ	146	605	479	659	256	131	102	145	136	132

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների, 01.01.2019թ. դրությամբ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 164 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղն ունի մշակույթի տուն, որը չի շահագործվում: Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 8.96 հազ. մ^2՝ բաղկացած 65 անհատական բնակելի տներից:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ:

Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր: Զբաղվում են դաշտավարությամբ, մշակում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Ռեզերվային (պահուստի համար նախատեսված) հողերի մեջ մեծ է արոտավայրերի տեսակարար կշիռը:

Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 233 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 100 գլուխ, խոզերինը՝ 5 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված է մասնակիորեն, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղում է գտնվում 13-րդ դարի «Թուխ Մանուկ» և 9-10-րդ դարի Սուրբ Թադևոս Առաքյալ մատուռները, 5-6-րդ դարերի Սուրբ Աստվածածին եկեղեցին, իսկ 1,5 կմ հյուսիս-արևելք՝ 18-19-րդ դարերի «Օսկոյի» գյուղատեղին[18]:

[17] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

[18] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

1.19.17. Չքնաղ

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից ընկած է 6-7 կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից 42 կմ, մայրաքաղաքից՝ 62 կմ, միջպետական մայրուղուց՝ 8 կմ հեռավորության վրա: Գտնվում է ծովի մակարդակից 1945 մ բարձրության վրա, Ծաղկունյաց լեռնաշղթայի արևմտյան լանջին, Քասաղ գետի հովտում: Հիմնադրվել է 1830-ական թվականներին: Վարչական տարածքը՝ 1305.46 հա:

Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

Նախկինում ունեցել է Սամադավրիշ, Սամադարվիշ, Սամադերվիշ անվանումները: Չքնաղ է վերանվանվել 1940 թ-ին: Գյուղի բնակչությունը գաղթել է Արևմտյան Հայաստանից 1829-1831 թթ.: 1831 թ-ին ունեցել է 177, 1897 թ-ին՝ 527, 1939 թ-ին՝ 515, 1959 թ-ին՝ 242, 1979 թ-ին՝ 216, 1989 թ-ին՝ 217 հայ բնակիչ:

Չքնաղ գյուղի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004
Բնակիչ	177	527	527	515	242	235	216	217	250	234

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների, 01.01.2019թ. դրությամբ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 197 մարդ:

Գլխավոր հատակագի չունի: Ունի դպրոց, գրադարան, մշակույթի տուն:

Դպրոց է հաճախում 33 աշակերտ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 8.52 հազ. մ^2՝ բաղկացած 55 անհատական բնակելի տներից:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ:

Գյուղն ունի 34 գյուղացիական տնտեսություն:

Ռեզերվային (պահուստի համար նախատեսված) հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 45%, որոնց մեջ մեծ է արոտավայրերի և վարելահողերի տեսակարար կշիռը:

Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 622 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 34 գլուխ, խոզերի գլխաքանակը՝ 109 գլուխ:

Գազաֆիկացված է մասնակի: Գյուղն ունի գերեզմանատուն: Աղբավայր չունի:

Արդյունաբերություն չունի

Գյուղի շրջակայքում կանգուն է ս. Ստեփանոս եկեղեցին:

Արագածոտնի մարզի Չքնաղ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 7 հուշարձան (5 միավոր)[19]:

1.19.18. Ջրամբար,

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջ ափին, Ապարանի ջրամբարից հարավ, մարզկենտրոնից՝ 28 կմ հյուսիս-արևելք, մայրաքաղաքից՝ 45 կմ հեռավորությամբ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ:

Հիմնադրվել է 1962-1972 թվականներին: Վարչական տարածքը՝ 434.77 հա:

2001 թվականին գյուղն ուներ 215, 2004 թվականին՝ 176 բնակիչ:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների, 01.01.2019թ. դրությամբ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 180 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 5.42 հազ. մ^2՝ բաղկացած 3 բազմաբնակարան շենքերից՝ 4.5 հազ. մ^2 մակերեսով և 4 անհատական բնակելի տներից՝ 092 հազ. մ^2 մակերեսով:

Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի գերեզմանատուն

Ջրամբարից 5 կմ հյուսիս գտնվում են Ջովունի գյուղատեղին, Սուրբ Պողոս-Պետրոս (4-րդ դ.) և Սուրբ Վարդան (4-5-րդ դդ.) եկեղեցիները, «Թուխ Մանուկ» մատուռը (4-րդ դ.):

Արագածոտնի մարզի Ջրամբար գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 15 հուշարձան (2 միավոր)[20]:

1.19.19. Սարալանջ

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ծաղկունյաց լեռների ստորոտին: Մարզկենտրոնից գտնվում է 35 կմ, մայրաքաղաքից՝ 60 կմ, միջպետական մայրուղուց՝ 3 կմ հեռավորության վրա: Գտնվում է ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա: Գյուղը տեղակայված է Արագած լեռնազանգվածի հյուսիս-արևմտյան լանջերին: Վարչական տարածքը՝ 1248.25 հա:

Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է +16,+18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ:

Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են: Ունի տուֆի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:

Գյուղը հիմնադրվել է 1830 թ.: Նախկինում ունեցել է Բաշ, Բաշգյուղ, Բաշգյուղ Նոր, Բաշքենդ, Բաշքենդ Փոքր անվանումները: Սարալանջ է վերանվանվել 1946 թ-ին: Անվանումը պայմանավորված է գյուղի տեղադիրքի հետ:

Գյուղը գլխավոր հատակագիծ չունի:

---

[19] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

[20] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Գյուղի բնակչության նախնիների մի մասը ներգաղթել է 1828-1829 թթ. Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Մուշի, Կարսի մարզերից: 1831 թ-ին ունեցել է 139, 1897 թ-ին՝ 903, 1939 թ-ին՝ 1014, 1959 թին՝ 999, 1979 թ-ին՝ 958, 1989 թ-ին՝ 1093 բնակիչ:

Սարալանջի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	2001	2004
Բնակիչ	96	338	333	432	242	238	219

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների, 01.01.2019թ. դրությամբ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 233 մարդ:

Գյուղն ունի 38 տնտեսություն: Ունի դպրոց, մշակույթի տուն, որը չի շահագործվում: Դպրոց է հաճախում 28 աշակերտ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 9.36 մ^2՝ բաղկացած 65 անհատական բնակելի տներից:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Ցուրտ կլիմայի արդյունքում այստեղ տնտեսության մասնագիտացման ճյուղը անասնապահությունն է: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 171 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 10, խոզերինը՝ 38 գլուխ:

Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Ռեզերվային (պահուստի համար նախատեսված) հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 70%-ը, որից գերակշիռ մաս են կազմում արոտավայրերը:

Արդյունաբերություն չունի:

Գյուղը գազաֆիկացված է մասնակի, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղում և նրա շրջակայքում կան շատ հնություններ՝ 5-րդ դարի եկեղեցի, գյուղատեղի, գերեզմաններ, մահարձան և այլն: Գյուղի հյուսիսային մասում են գտնվում Սուրբ Աստվածածին եկեղեցին (19-րդ դ.) և «Թուխ Մանուկ» մատուռը (19-րդ դ.):

Արագածոտնի մարզի Սարալանջ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 3 հուշարձան (2 միավոր)[21]:

1.19.20. Վարդենիս,

գյուղ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում: Գտնվում է Ապարանից 5 կիլոմետր հարավ-արևելք, Քասաղ գետի միջին հոսանքի շրջանում, գետի աջ և ձախ ափերին: Արագած սարից դեպի Քասաղ գետը հասնող Ապարանի սարահարթի մոտ երեք կիլոմետր խորության ու երկու կիլոմետր լայնության կիսաշրջանաձև գոգավորություն-հարթության ներսում: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 50 կմ, միջպետական մայրուղուց՝ 5 կմ, մարզկենտրոնից՝ 35 կմ հյուսիս-արևելք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: Վարչական տարածքը՝ 2541.02 հա:

Սկզբնապես եղել է լեռնային թեքությունների կամ ներկայիս բնակավայրի արևմտյան հատվածի վրա: 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին բնակիչները տներ են կառուցել ներկայիս բնակավայրի հյուսիս-արևելյան, արևելյան հարթություններում և

[21] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

կամաց-կամաց անցել են գյուղամիջյան առուն ու մոտեցել Քասաղ գետին, անցել գետի ձախ ափը։

Բնակավայրը բոլոր ուղղություններում գտնվելով սարահարթից ցածր՝ ապահովված է քամիներից։ Արևմուտքից՝ Արագած սարի կողմից եկող և գյուղի մեջ ձորի վերածված իջվածքով հոսում է Վարդենիս գետակը, որը բերում է Արագածի ջրերը և ջրովի դարձնում գյուղի հարավային հատվածի բանջարանոցները։

Ունի զով, առողջարար կլիմա։ Վարդենիսի կլիման ցամաքային է՝ ցուրտ ձմեռներով ու զով ամառներով։ Տարեկան միջին ջերմաստիճանը 4,3 աստիճան է։ Հունվարի միջին ջերմաստիճանը՝ -9,6 աստիճան, նվազագույնը՝ -33 աստիճան, հուլիսինը՝ 16,6 աստիճան, առավելագույնը՝ 32 աստիճան։ Ձմեռը տևական է՝ 5-6 ամիս, կայուն ձնածածկույթով։ Սառնամանիքային օրերի թիվը 134 է (Արարատյան դաշտում՝ 200 օր։ Տեղումները տարեկան կազմում են 550-700 միլիմետր։

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ։ Տները երկհարկանի են, քարաշեն, բարետես։ Գյուղը կանաչապատ է։

Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Ալաշկերտի, Բայազետի, Բասենի, Մուշի, Վանի և Խոյի գյուղերից։ 1828 թվականի աշնանը գյուղում հաստատվել է Խոյից գաղթած 36, Բայազետից՝ 9, Մուշից՝ 1 ընտանիք, 248 մարդ (123 տղամարդ, 125 կին)։

Վարդենիսի ազգաբնակչության փոփոխությունը

Տարի	Բնակչություն
1831	248 մարդ
1897	1067 մարդ
1926	1190 մարդ
1939	1347 մարդ
1959	706 մարդ
1970	623 մարդ
1979	562 մարդ
1989	673 մարդ
2001	604 մարդ
2004	703 մարդ

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների, 01.01.2019թ. դրությամբ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 753 մարդ։

Տնային տնտեսությունների թիվը՝ 148։

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն։ Տարիներ առաջ դպրոցի մի մասնաշենքում գործել է մանկապարտեզ, գյուղի հին դպրոցի շենքում՝ Վարդենիսի տրիկոտաժի մասնաճյուղը։

Դպրոցն ունի 158 աշակերտ։

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 31.56 հազ. մ^2՝ բաղկացած 204 անհատական բնակելի տներից։

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ։

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 715 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 374 գլուխ, խոզերինը՝ 47 գլուխ։

Գյուղը գազաֆիկացված է մասնակի, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի։

Արագածոտնի մարզի Վարդենիս գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից։ Ցանկում ներառված է ընդամենը 16 հուշարձան (9 միավոր)[22]։

[22] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

1.19.21. Վարդենուտ,

գյուղ Ապարանի տարածաշրջանում, Արագած լեռան հարավային լանջին, Ապարանից 9 կիլոմետր հարավ, մարզկենտրոնից՝ 23 կմ հյուսիս, մայրաքաղաքից՝ 43 կմ, միջպետական մայրուղուց՝ 18 կմ հեռավորությամբ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մետր: Վարչական տարածքը՝ 3821.62 հա:

Արևելքից գյուղի սահմանները սկսվում են Արագած սարի գագաթատակից և ուղիղ իջնում է Արագած և Շենավան գյուղերի հողերին զուգահեռ, հասնում Ապարան-Երևան մայրուղուն և ճանապարհին զուգահեռ առաջանում դեպի Ափնագյուղ, ապա հարավից հյուսիս անցնելով Արա (գյուղ)ի կողքով ձգվում է մինչև Արագած սարի գագաթատակը:

Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ:

Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

Գյուղը հիմնադրվել է 1831 թվականին: Նախկինում ունեցել է Շիրակալա, Շիրաղալա, Շիրղալա, Վարդինուտ անվանումները: Վարդենուտ է վերանվանվել 1946թ.:

Վարդենուտի բնակչության մի մասի նախնիները գաղթել են Պարսկահայաստանի տարբեր շրջաններից և Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի ու Մուշի գյուղերից:

1831թ.-ին ունեցել է 314, 1897թ.-ին՝ 961, 1939թ.-ին՝ 1172, 1959թ.-ին 756, 1979թ.-ին 699, 1989թ.-ին 696 հայ բնակիչ:

Վարդենուտի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004
Բնակիչ	314	961	883	1172	756	964	699	696	852	916

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների, 01.01.2019թ. դրությամբ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 1012 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Ունի դպրոց, մանկապարտեզ, գրադարան, մշակույթի տուն /չի շահագործվում/:

Դպրոց է հաճախում 103 աշակերտ, մանկապարտեզ՝ 37 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 29.04 մ^2՝ բաղկացած 186 անհատական բնակելի տներից:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 1679 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 16 գլուխ, խոզերինը՝ 294 գլուխ:

Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են երկրագործությամբ, մշակում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ:

Գյուղը գազաֆիկացված է մասնակի, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Արդյունաբերություն չունի:

Գյուղի շրջակայքում գտնվում է 19-րդ դ. կառուցված եկեղեցի, իսկ հարավ-արևմուտքում՝ պահպանվել են հին ամրոցի հետքեր:

Արագածոտնի մարզի Վարդենուտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 12 հուշարձան (6 միավոր)[23]:

1.19.22. Քուչակ,

գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արագած լեռան արևելյան փեշերին: Ապարանից մոտ 8 կմ հարավ, մարզկենտրոնից՝ 25 կմ հյուսիս-արևմուտք, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 45 կմ, միջպետական մայրուղուց՝ 0 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: Վարչական տարածքը՝ 4087.24 հա:

Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Գյուղը նախկինում Ալի-Քուչակ անվան տակ մտել է Երևանի նահանգի Էջմիածնի գավառի կազմում: Ալի Քուչակ անվանումը ըստ ժողովրդական ստուգաբանության բացատրվում է որպես 50 քուչա (փողոց)՝ ի պատիվ Նահապետ Քուչակի: Քուչակ է վերանվանվել 1935 թ-ին:

Քուչակի բնակչության նախնիները 1828-1829 թթ գաղթել են Մուշից, Ալաշկերտից, Բայազետից, Կարինից և Մակուից:

Գյուղի բնակչությունը 1831 թ-ին կազմել է 531, 1897 թ-ին՝ 1836, 1926 թ-ին՝ 2371, 1959 թ-ին՝ 1417, 1979 թ-ին՝ 1585 բնակիչ:

Քուչակի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004
Բնակիչ	531	1836	2371	2331	1417	1660	1585	1887	1993	2193

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների, 01.01.2019թ. դրությամբ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 2221 մարդ:

Ունի դպրոց, մարզադպրոց, ընտանեկան բժշկության գրասենյակ, կառուցվում է մշակույթի տուն:

Դպրոց է հաճախում 319 աշակերտ, մարզադպրոցն ունի 120 սան:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 78 հազ. մ^2՝ բաղկացած՝ մեկ բնակելի շենքից՝ 0.72 հազ, մ^2 մակերեսով և 500 անհատական բնակելի տներից՝ 77.28 հազ.մ^2 մակերեսով:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, արոտավայրեր, խոտհարքեր: Զբաղվում են պտղաբուծությամբ, բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Ռեզերվային (պահուստի համար նախատեսված) հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 60%, որոնց գերակշիռ մասը արոտավայրեր և վարելահողեր են:

Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 1446 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 582 գլուխ, խոզերինը՝ 38 գլուխ:

[23] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Գյուղը գազաֆիկացված է մասնակի:

Գյուղում պահպանվել են 17-19-րդ դարերի մատուռ, գերեզմանոց:

Գյուղում է գտնվում Սուրբ Աստվածածին եկեղեցին (1900 թ.), հյուսիսային մասում՝ «Լուսաղբյուր» (17-18-րդ դդ.) և Սուրբ Թադևոս Առաքյալ (12-13-րդ դդ.) մատուռները, մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. «Էլոյի բերդ» ամրոցը, 2 կմ հյուսիս-արևելք՝ 12-13-րդ դարերի «Թուխ Մանուկ» մատուռը, 3 կմ արևելք՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոցը և Սուրբ Գևորգ եկեղեցին (1891 թ.):

Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը,2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 27 հուշարձան (17 միավոր)[24]:

Գլուխ 2

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2.1. Սոցիալ տնտեսական զարգացում

Հայաստանում վերջին տարիներին մեծանում են տարածքային անհամաչափությունները, ինչը հիմնականում դրսևորվում է ՀՆԱ-ի կառուցվածքում Երևանի մասնաբաժնի զգալի աճով: Մարզերը տարբերվում են միմյանցից և Երևանից՝ հանրապետության տնտեսական կյանքում ներգրավվածության աստիճանով: Լիարժեք կայացած չէ գործարար միջավայրը, բավական բարձր է գործազրկության մակարդակը: Գործարար ակտիվության և տնտեսական մրցակցության տեսանկյունից տնտեսավարողների համար անհավասար պայմաններ է ձևավորում արտադրողականության մակարդակների տարբերությունը:

Մարզերում բնակչության իրական եկամուտների տարբերությունների զգալի կրճատում, քաղաքների տնտեսական, մշակութային ակտիվության աճ.

- մարզերում տեխնոլոգիական խզվածքների հաղթահարում և արտադրողականության մակարդակների բարձրացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և դրանցից օգտվելու կարողությունների մեծացում,
- մարզերում պետություն-մասնավոր հատված համագործակցության ընդլայնում, ենթակառուցվածքների մատչելիության մակարդակի բարձրացում,
- մարզերում փոքր և միջին ձեռնարկատիրության, զբոսաշրջության խթանում և զարգացում՝ ռեսուրսները կենտրոնացնելով տնտեսական աճի կառավարման վրա: Երևանում ճանաչում գտած տեղական և միջազգային բրենդերի մասնաճյուղերի հիմնմանն աջակցություն,
- մարզերում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ձեռնարկատիրությանն աջակցության ընդլայնում, համապատասխան մոնիթորինգի համակարգի ներդրում,
- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերական փոքր ձեռնարկությունների հիմնում (օրինակ՝ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող կամ դրանից ստացվող սննդամթերքի փաթեթավորման, սառեցման և պահեստավորման փոքր արտադրություններ):

[24] Բնակավայրերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամբողջական ցանկերը տրված են Հավելված 2-ում

Երիտասարդության համար բնակության բարենպաստ պայմանների ապահովման գործընթացում հրատապ է նաև նորաստեղծ ընտանիքներին տնամերձ հողամասեր տրամադրելու խնդիրը:

Մարզի համայնքներում մասնավոր հատվածը ձևավորված է հիմնականում առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի կետեր ու խանութներ, ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքի վերամշակում և տեղական հումքից շինանյութերի արտադրություն, շինարարության ոլորտում՝ փոքրածավալ շինարարություն և վերանորոգման աշխատանքներ:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

- ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել՝ մասնավոր ներդրումները խրախուսելու համար:
- Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտն են գյուղմթերքի վերամշակումն ու իրացումը, զբոսաշրջությունն ու հարակից ծառայությունները: Բայց որպեսզի ներդրումները արդարացված լինեն, և նվազի դրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալներն ու իրացման շուկաները:
- Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն և՛ տեղացի արտագնա, և՛ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում՝ տեղերում շահագրգռության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:
- Արդյունաբերական օբյեկտների տեղադրում՝ նոր արտադրություններով (հիմնականում գիտատեխնիկական ճյուղի օբյեկտներ):
- Տարածաշրջանային և միջմարզային ինտեգրման ճանապարհով տնտեսական կապերի ստեղծում:
- Արդյունաբերական օբյեկտներում առաջավոր, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառումը (թափոնների կրկնակի վերամշակում, թափոնների վնասազերծում, փակ ցիկլեր և այլն):
- Աշխատունակ բնակչության բարձր ներուժի օգտագործում:

2.1. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը

2.1.1. <u>Զբոսաշրջային ոլորտ</u>

Զբոսաշրջիկները տարբերվում են նաև ըստ իրենց պահանջների՝ կախված իրենց ակտիվությունից և այլ գործոններից: Դրանք են՝ խաղաղ հանգստի կողմնակիցներ (փնտրում են հանգիստ ստրեսներից), հաճույքների կողմնակիցներ, ակտիվ հանգստի

կողմնակիցներ (բնության սիրահարներ), սպորտային հանգստի կողմնակիցներ, արկածների սիրահարներ:

Մշակութային և ժողովրդա-էթնոգրաֆիական ոլորտը կարող է դրվել զբոսաշրջության հետևյալ տեսակների հիմքում.

- գործարարական և ճանաչողական-գործարարական զբոսաշրջություն՝ գործարարների և այլ մասնագետների համար, ովքեր գալիս են տարբեր քաղաքներից և գործարար գործընթացը համատեղում հանգստի և տեղական բնակչության ավանդույթների, ժողովրդական արհեստներին ծանոթացման, ազգագրական երգի-պարի փառատոներին մասնակցության հետ:
- Ինսենթիվ կամ խրախուսական զբոսաշրջությունը, որը հիմնված է ինչպես խմբային այցելությունների վրա՝ էքսկուրսիոն նպատակներով, այնպես էլ տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների ճանապարհորդությունները զբոսաշրջության գոտիներ՝ հանգստի նպատակով,
- մասնագիտացված զբոսաշրջություն.
- մասնագիտացված զբոսաշրջության հեռանկարային տեսակներից է էկոզբոսաշրջությունը: Առաջին հերթին նախատեսվում է զարգացում էկոլոգիապես մաքուր շրջաններում (լքված, բարձրլեռնային գյուղերում, տեղակայված հենց այդպիսի շրջաններում): Այս տեսակը դասվում է զբոսաշրջության զարգացման փոքրամասշտաբ տեսակներին և հանգում է զբոսաշրջիկների ոչ մեծ խմբերի հանգստի կազմակերպմանը ավանդական, հեռավոր վայրերում տեղակայված գյուղերում և տեղաբնակների բնակարաններում:
- լիցենզավորված գիտական (հնագիտական պեղումների անցկացում, պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրություններ),
- գիտական և ուսումնական զբոսաշրջություն, որը ենթադրում է լեզվի ուսումնասիրություն, ազգագրության, պատմության ուսումնասիրություն, հուշարձանների վերականգնում,
- պաշտամունքային՝ կապված եկեղեցիների ու վանքային համալիրների այցելությունների հետ: Այս տեսակի զարգացումը՝ ծիսակարգերի, տոնակատարությունների, կենցաղի և մշակույթի հետ համատեղ կարող է զարգանալ առանձին կազմակերպված վայրերում՝ զբոսաշրջային գյուղերում:
- Էթնոգրաֆիական զբոսաշրջություն, հիմնված ժողովրդի կյանքի, ազգային ավանդույթների, ծիսակատարությունների, մշակույթին և ստեղծագործության նկատմամբ պոտենցիալ սպառողի հետաքրքրության վրա (պատմամշակութային արժեք ներկայացնող կառուցվածքները կարող են օգտագործվել որպես նշված միջոցառումների անցկացման համար իրական դեկորացիաներ):
- Իրադարձային զբոսաշրջություն, որը հիմնված է որևէ մշակութային կամ սպորտային իրադարձության անցկացումը տվյալ վայրում կազմակերպելու միջոցով զբոսաշրջիկների զանգվածային հոսք ձևավորելու վրա (փառատոներ, մրցույթներ, քաղաքային տոնակատարություններ, օլիմպիադաներ):
- Էթնիկական զբոսաշրջություն, որը հաշվի է առնում երկրի անցյալը, արտասահմանից գրավելով զբոսաշրջիկների խմբեր, որոնց նախնիները տեղաբնակներ են եղել և որոնց հայրենիքը տեսնելու ցանկությունն են իրականացնում:
- Այլընտրանքային զբոսաշրջություն, որը ենթադրում է ծառայությունների ավելի մանր մասշտաբ, առավել ցածր գներ՝ գրավելով առավել լայն խավեր, որոնք իրենք են ընտրում իրենց ժամանցի ձևերը:

Հնագույն ավանդույթների վերածնումը, ազգային տոնակատարությունների կազմակերպված անցկացումը, ծանոթացումը ավանդույթներին, տոնակատարությունների կազմակերպումը նոր տարրերի լրացումով, անտարակույս հետաքրքրություն կներկայացնեն զբոսաշրջիկների համար և կհանդիսանան անհրաժեշտ պայման ժողովրդի պատմությանն ու կենցաղին առավել լիարժեքորեն ծանոթանալու համար: Ներկայումս պահպանված են մի շարք ավանդական տոնակատարություններ ու ծեսեր, և մեծ շուքով նշվում են քաղաքում:

Տոնակատարությունների շրջանակը պետք է լրացվի նաև լրացուցիչ հետիոտն կամ հեծյալ արշավներով, հեծանվաերթերով, կինոնկարների, համերգների, թեմատիկ երեկոների կազմակերպմամբ (հանդիպում հայտնի մարդկանց՝ երաժիշտներ, նկարիչներ, գրողներ), ազգագրական ժամանցային խաղի, ազգային երգեր, պարերի ուսուցում, մասնակցություն ավանդական արհեստների ուսուցմանը, կերակրատեսակների, խմիչքների պատրաստմանը, նկարչական մրցույթ-ցուցահանդեսների մասնակցություն և կազմակերպում, ազգագրական համույթների ելույթների մասնակցություն, արհեստանոց-կրպակների այցելություններ, հուշանվերների ձեռքբերում:

Զբոսաշրջության միասնական տարածաշրջանային համակարգի կազմակերպման և հաջողությամբ գործառնելու համար անհրաժեշտ կազմակերպչական գործունեությունը նկատառում է պետական և մասնավոր սեկտորների փոխհամագործակցություն.

- համագործակցություն՝ հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, զբոսաշրջության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների միջև՝ տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների լուծման և շրջագայությունների հեշտացման տարաբնույթ միջոցառումների իրականացման ուղղությամբ,
- զարգացման ուրվագծերի մշակում՝ զբոսաշրջության հիմնական ուղղությունների նախանշումով և զբոսաշրջության զարգացման պոտենցիալի գնահատումով,
- նախագծա-հետախուզական աշխատանքներ՝ նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորումով, (ենթակառուցվածքների ձևավորման կամ վերակառուցման հնարավորության գնահատում, ետգնողունակության հասնելու միջոցների և պայմանների որոշում),
- ֆինանսական վիճակի գնահատում, գոյություն ունեցող կամ նախագծվող օբյեկտի վերաբերյալ մանրամասն հաշվետվության ներկայացում,
- շուկայի ուսումնասիրում և մարկետինգի կազմակերպում (օբյեկտի կամ ծառայության արժանիքների ընդգծում, գովազդի մշակում՝ սպառողի մոտ վստահության ապահովումով, գովազդային հաղորդագրության փոխանցման մեթոդների և միջոցների որոշում):
- նախագծերի ֆինանսավորման ուրվագծերի կազմում (ներդրողների և ֆինանսավորման այլ աղբյուրների որոնում, ֆինանսական արդյունքների կանխատեսումներ):

Հստակ կանոնակարգված զբոսաշրջային գործունեությունը 3 հիմնական սուբյեկտների (պետություն, տեղական կառավարման մարմիններ և զբոսաշրջության նախաձեռնողներ) սերտ համագործակցության արդյունք է, որոնք որոշիչ դեր են խաղում զբոսաշրջության ղեկավարման և զարգացման գործընթացում:

Թեև զբոսաշրջության ոլորտում քաղաքականության ընդհանուր սկզբունքներն ու ուղղությունները հաստատվում են պետական մակարդակում, սակայն հենց տեղական իշխանություններն են տեղայնացնում տրված ուղղությունները տեղական պայմաններում, դնում են կոնկրետ նպատակներ և ընտրում դրանց հասնելու ուղիները:

Ներկայումս մեր երկրում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող խնդիրներից ամենանշանակալին սպասարկման ոլորտի անկատարությունն է, ուստի թե պետական, և թե՝ տեղական իշխանությունների կողմից այս ոլորտում գրավչությունը բարձրացնելու կարևորագույն հիմնախնդիրներից են ընդլայնված զբոսաշրջության, սպասարկման, հաստատությունների ցանցի ձևավորման, զբոսաշրջային-էքսկուրսիոն ցուցադրման, օբյեկտների վերանորոգման ու վերակենդանացման ռացիոնալ ուղիների մշակումը՝ զբոսաշրջային-էքսկուրսիոն բարեկարգ երթուղիների կազմակերպմամբ:

Տարածաշրջանում ճանաչողական բնույթի օբյեկտները ստորաբաժանված են երկու ենթախմբի.

- պատմամշակութային հուշարձաններ,
- տնտեսության, գիտության և մշակույթի նվաճումներ:

Սխեմատիկորեն ներկայացված է վերոնշյալ դասակարգումը



Մարզի տարածքում զբոսաշրջային ժամանակաշրջանի երկարաձգման նպատակով, կախված առանձին տարածաշրջանների բարենպաստությունից և, հաշվի առնելով տարբեր տարիքային ու պատրաստվածության խմբերի պահանջները, կարող են առաջարկվել տարբեր բարդության երթուղիներ՝ բաղկացած հետևյալ փուլերից.

I փուլ-ժամանում, տեղավորում, գիշերակաց,

II փուլ-մեկօրյա նախապատրաստական արշավ՝ զբոսաշրջության հիմնական կենտրոն վերադարձով,

III փուլ-եռօրյա մարզական արշավ, որի յուրաքանչյուր օրվա ավարտն անց է կացվում զբոսաշրջային, միայն վերջին գիշերն անց է կացվում զբոսաշրջային հանգրվանում,

IV փուլ-նախապատրաստում երկարատև արշավի,

V փուլ-ութնօրյա ճանապարհորդություն, որի երկու օրն անց է կացվում զբոսաշրջային կայաններում՝ գշերակացով, երկու օրը՝ զբոսաշրջային հյուղակներում, նույնը վերադարձի ճանապարհին, և միայն վերջին օրն անց է կացվում զբոսաշրջային հանգրվանում,

VI փուլ-հանգիստ և նախապատրաստում մեկնելու:

<u>Ակնկալվող արդյունք.</u> Զբոսաշրջության զարգացման ծրագրերի իրականացումը կխթանի մարզի տնտեսության այնպիսի ոլորտները, ինչպիսիք են տրանսպորտը, կապը, առևտուրը, շինարարությունը, գյուղատնտեսությունը, սպառման առարկաների

արտադրությունը՝ հնարավորություն տալով պետությանը համալրել ինչպես պետական բյուջեն, այնպես էլ այլ մակարդակների՝ համայնքների բյուջեները, ստեղծել աշխատատեղեր՝ բարելավելով բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

2.2. Հեռանկարային հատակագծային զարգացում

Հեռանկարային քաղաքաշինական կազմակերպման հիմքում դրվել է բնակավայրերի կենսամիջավայրի բարենպաստությունն ու հարմարավետությունն ապահովելուն միտված բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ քաղաքը դարձնելու գրավիչ և հարմարավտ թե՝ բնակիչների բնակության, թե՝ արդյունաբերական կամ տնտեսական ցանկացած այլ գործունեության կազմակերպման, հետևաբար նաև ներդրումների ապահովման համար: Խնդրի կանոնակարգումն ապահովելու համար քաղաքային միջավայրը կազմակերպվել է որպես տարբեր գործառական նշանակության տարածքների, փոխադարձ գործառական կապերով միմյանց կապված միասնական միջավայր, որտեղ տարանջատված են.

- կառուցապատումը կանոնակարգող ու վերահսկող գործառական գոտիների հստակ բաժանում,
- տնտեսական խթանների ապահովում տնտեսավարող սուբյեկտներին՝ քաղաքի հատակագծային կառուցվածքում առանձանցնելով գոտիներ՝ ծավալելու համապատասխան տնտեսական գործունեություն,
- հանրային տարածքների գոտիներ,
- սոցիալական ենթակառուցվածքների գոտիներ (կրթական բարեփոխված ենթակառուցվածք՝տարրական և միջնակարգ կրթության համար),
- հասարակական գործառույթների և ժամանցային հաստատությունների տարածքներ:

2.3. Տարածքային զարգացման հիմնական սկզբունքները

Տարածաշրջանի բնակավայրերի հատակագծային կառուցվածքի ձևավորման մեթոդական հիմքն են հանդիսանում.

- «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթներով ամրագրված քաղաքի տարածքային աճի սահմանափակման սկզբունքը:
- Սեյսմիկ վտանգի պայմաններում քաղաքի բոլոր կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիությունն ու կայունությունն ապահովող սկզբունքները (բնակելի կառուցապատման՝ ռելիեֆին և սեյսմիկ վտանգին համապատասխանեցված խտություններ, ներքին ռեզերվային տարածքների ընդգրկում, կանաչ գոտու ընդլայնում, շրջանցող ավտոմայրուղու նախատեսում, սանիտարական պահպանման գոտիների սահմանում շրջանցիկ ճանապարհի նախատեսում):

Կայունություն ապահովելու հրամայականը պետք է տարածվի գլխավոր հատակագծի մշակման գործընթացի՝ վերը թվարկված բոլոր բաղադրիչների, հետևաբար նաև՝ հենց քաղաքային զարգացման բաղադրիչի վրա: Բնակավայրերի զարգացման կայունությունն ապահովելու նպատակով նախատեսված է բոլոր բաղադրիչների՝ քաղաքաշինական զարգացման, բնապահպանական խնդիրների, տնտեսական զարգացման, զբոսաշրջություն խթանման, ենթակառուցվածքների զարգացման և կառավարման համակարգի փոխկապակցվածությունը: Կայունության ապահովման պայմանով բնակավայրերում արդեն իսկ մշակվում և հետագայում ևս պետք է տեղ գտնի էլեկտրաէներգիայի արդյունավետ օգտագործման, թափոնների կայուն

կառավարման, ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև ներքին ռեսուրսների և ֆինանսական միջոցների կայուն և պատասխանատու օգտագործման համար անհրաժեշտ կառավարման համակարգերը:

Գլխավոր հատակագծի նպատակն է բնակավայրերի տնտեսական զարգացման և հատակագծային հավասարակշռված կառուցվածքի փոխկապակցված կազմակերպմամբ խթանել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ հետևյալ գործընթացքների իրականացմամբ.

- բնակավայրերի տնտեսական աճի խթանում և աշխատատեղերի ստեղծում,
- ներդրողների համար բարենպաստ միջավայրի ձևավորում,
- քաղաքի ձևավորված քաղաքաշինական միջավայրի վերակառուցում և բարեկարգում,
- ենթակառուցվածքների բարելավում և կատարելագործում,
- պատմական ժառանգության պահպանություն և ճարտարապետական միջավայրի վերականգնում,
- կրթության և մշակույթի զարգացում,
- սոցիալական ենթակառուցվածքների զարգացում,
- բնակավայրի՝ որպես տարածաշրջանային զբոսաշրջության մրցունակ կենտրոնի ձևավորում՝ զբոսաշրջային այցելությունների կայուն աճի ապահովմամբ,
- մշտական բնակչության աճ,
- ժամանակավոր բնակչության աճ:

Նշված կարճաժամկետ, միջնաժամկետ և հեռահար ծրագրերի իրականացմամբ կձևավորվեն տնտեսական միջավայրի համար բարենպաստ պայմաններ՝ քաղաքը դրաձնելով գրավիչ ինչպես բնակչության տարբեր խմբերի և խավերի, այնպես էլ այցելուների համար։

2.4. Հատակագծային կառուցվածք (առկա և հեռանկարային)

Առկա վիճակի վերլուծության նպատակն է բացահայտել ձևավորված կառուցվածքում առկա բացերը, և հեռանկարային առաջարկներում փորձել լրացնել դրանք և կատարելագործել առկա քաղաքաշինական միջավայրը՝ ստեղծելու մարդու հիմնական կենսական պահանջների բավարարմանն ու տեղաբնակների առօրյան լիարժեք կազմակերպելուն միտված համարավետ կենսամիջավայր, այն է. «հետիոտն քայլելու համար հարմարավետ, բնակության-աշխատանքի-հանգստի պայմանները բավարարող քաղաքաշինական միջավայր, որտեղ պատշաճ կերպով հաշվի են առնված տարածքի պատմությունը, ճարտարապետական ժառանգությունն ու արժեքները, ինչպես նաև առաջադրված են մի շարք նոր օգտագործումների համար բարենպաստ տեղակայում, ինչպիսիք են խանութներ, ռեստորաններ, գրասենյակներ, հանրային ժամանցային հաստատություններ, սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներ, բնակելի գոտիներ՝ բնակարանային տեսակների ընտրությամբ (տարբերակված գներով, սոցիալական), ինչպես նաև զբոսայգիների և հետիոտն ուղիներ՝ դպրոցների բարենպաստ մատչելիության գոտում, ի վերջո ձևավորելով անվտանգ և գրավիչ միջավայր ինչպես տեղաբնակների, այնպես էլ այցելուների համար։

Հաշվի առնելով նաև բնակավայրերի զարգացման ներկա միտումները՝ դրանց հատակագծային կառուցվածքում համապատասխան գործառնական վերակազմավորումներով (օր.՝ փողոցների ակտիվության բարձրացում՝ տարբեր գործառնական նշանակության և խառը գործառույթների վերագրմամբ ունենալով

տարբեր ուղղվածության փողոցներ, մասնավորապես՝ կոմերցիոն (բնակավայրի պատմականորեն ձևավորված հենքի վրա՝ առևտրական շարքերի, ինչպես նաև ներկա զարգացմամբ ի հայտ եկած հատվածների), վարչական, ժամանցային և այլն: Բնակավայրերը՝ որպես դինամիկ զարգացող օրգանիզմ, հեշտությամբ ադապտացվել են նշված վերակազմավորումներին և այդ որոշակիորեն տարերային բնույթ կրող միտումը նախագծի շրջանակում կանոնակարգվել է՝ տրվող ռեգլամենտների միջոցով ապահովելու ինչպես պատմական արժեքավոր միջավայրի ամբողջական ընկալումը, այնպես էլ օգտագործման հարմարավետությունը:

Բնակավայրերի տարածքների կառուցապատումը ներկայացված է գլխավորապես բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների ինչպես կենտրոնացած, այնպես էլ ցրված տեղակայմամբ:

Գյուղերի կենտրոնական հատվածում որոշակիորեն ձևավորված է հասարակական կենտրոն՝ կից տեղակայված է մշակույթի տան շենքը: Համայնքի կենտրոնական հատվածում՝ ձևավորված փոքրաչափ հասարակական միջուկում առկա են լինում նաև հանրային տարածքներ՝ մանկական կազմակերպված խաղահրապարակներով, սահարաններով, տարածքի ընդհանուր բարեկարգմամբ, կանաչապատմամբ:

Բնակավայրերի տարածքուներմ զգալի ռեզերվայինպահուստային տարածքները բացակայում են: Հեռանկարային հատակագծային կառուցվածքով առաջարկվել է նախ ի հայտ բերել ներքին պահուստներ՝ առավել արդյունավետ և կոմպակտ կազմակերպելու բնակավայրերի հիմնակմախքը:

2.5. Հասարակական սպասարկման ոլորտ

Ներկայումս համայնքներում առկա է սոցիալական ոլորտի միջին զարգացվածություն:

Բնակչության մշակութային և կենցաղային համակարգը՝

- հանրակրթական դպրոց,
- մշակույթի տուն ,
- Բուժամբուլատորիա:

Նոր սոցիալ-տնտեսական փուլում մշակութա-կենցաղային օբյեկտների ցանցն ընդլայնվում է շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան:

2.6. Բնապահպանական/կանաչապատման խնդիրներ

Քաղաքի բարենպաստ բնապահպանական իրավիճակի պահպանման գործընթացում խիստ կարևորվում է քաղաքի բնապահպանական հիմնակմախքի ձևավորումն ու հնարավորության դեպքում անընդմեջ համակարգի ապահովումը:

Կանաչ տարածքները քաղաքի հատակագծային կառուցվածքում ըստ իրենց նշանակության բաժանվում են երեք տեսակի.

- ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ,
- սահմանափակ օգտագործման կանաչ տարածքներ,
- հատուկ նշանակության կանաչ տարածքներ:

Կանաչ տարածքների առաջին տիպը հանրության կողմից ազատ անարգել օգտագործվող կանաչ տարածքային կամ գծային տարրեն են և կարգավորվում են քաղաքաշինական նորմերով սահմանված չափաբաժիններով՝ կախված քաղաքի մեծությունից՝ յուրաքանչյուր բնակչի համար սահմանված մակերեսով:

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքները քաղաքի սահմաններում առկա գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող տնամերձ այգիներն են, որոնք իրենց առկայությամբ ձևավորում են որոշակի միկրոկլիմայական ֆոն, սակայն չեն հանդիսանում հանրության համար ազատ այցելելի և օգտագործելի տարածքներ:

Հատուկ նշանակության կանաչները դրանք ճանապարհամերձ կամ այլ պահպանության կարիք ունեցող օբյեկտների շուրջ սանիտարապաշտպան նշանակության կանաչ տնկարկներն են, որոնք դարձյալ իրենց նշանակալի ազդեցությունն ունեն քաղաքի սանիտարահիգիենիկ բարենպաստ միջավայրի ձևավորման գործընթացում՝ պահպանելով բնակելի գոտիները մայրուղիների բացասական ազդեցություններից (արտանետումներ, աղմուկ, վիբրացիա), ինչպես նաև բնապահպանական առումով վտանգ ներկայացնող օբյեկտները (հանքեր, աղբավայր, խմելու ջրաղբյուրների սանիտարական պահպանության գոտիներ և այլն) մեկուսացնելով բնակչության կողմից օգտագործվող տարածքներից: Տվյալ տեսակը ևս իր գոյությամբ նպաստում է քաղաքի միկրոկլիմայական բարենպաստ պայմանների ապահովմանը:

Վերոնշյալ տիպերը՝ ներկայացնելով քաղաքի կանաչ գոտիների՝ տարածքային, գծային և կետային բաղադրիչների համալիրը, ձևավորում են քաղաքի անընդմեջ բնապահպանական հիմնակմախքը, որը ունենալով ելքեր նաև դեպի քաղաքմերձ բնական կանաչ գոտիներ՝ անտառաշերտեր, ձևավորում են բնապահպանական միջանցք կենսաբազմազանության գոյատևման համար:

Բաց կանաչ տարածքների ցանցը հնարավորություն է տալիս թե՝ բնակիչների, և թե՝ այցելուների համար ապահովել բացօթյա գործունեության լայն շրջանակ: Զբոսայգիներն ու բաց կանաչ տարածքները պետք է հասանելի լինեն հետիոտնային կապերի միջոցով կամ կից լինեն հետիոտն ուղիներին:

2.7. Կանաչ միջանցքներ և բաց տարածքների ցանց (կանաչապատման համակարգ)

Կանաչ միջանցքների ցանցի նպատակն է բարելավել քաղաքային կանաչ տարածքների և առկա փողոցների համակարգի փոխկապակցվածությունը: Դա ապահովում է չընդհատվող կանաչ միջանցքներ՝ տեղի կենսաբազմազանության համար:

Բնապահպանական միջանցքները կնպաստեն նաև.

- քաղաքում բարենպաստ միկրոկլիմայի ձևավորմանը,
- ստորգետնյա ջրերի մակարդակի կարգավորմանը,
- ափերի և լանջերի կայունացմանն ու ամրացմանը,
- ապահովել կապը քաղաքի ներքին կառուցվածքում առկա կանաչ գոտիների տարածքային, կետային և գծային տարրերի միջև՝ ելքով դեպի մերձքաղաքային կանաչ անտառազանգվածներ,
- գեղագիտական պահանջներին համապատասխան արժեքավոր միջավայրի ստեղծմանը:

2.8. Քաղաքի տարածքի գործառական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ

Հաշվի առնելով գերակշռող գործառական օգտագործումը, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, քաղաքային տարածքը բաժանված է հետևյալ հիմնական գոտիների*.

Բնակավայրերի հողեր, որոնք ըստ գործառական նշանակության դասակարգվում են հետևյալ օժանդակ գոտիների.

- *բնակելի կառուցապատման,*
- *հասարակական կառուցապատման,*
- *խառը կառուցապատման,*
- *ընդհանուր օգտագործման հողերի,*
- *այլ հողերի:*

Արդյունաբերության և այլ արտադրական նշանակության հողեր, որոնք ըստ գործառական նշանակության դասակարգվում են հետևյալ օժանդակ գոտիների.

- *արդյունաբերական օբյեկտների,*
- *գյուղատնտեսական արտադրական օբյեկտների,*
- *պահեստարանների:*

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր:

Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որոնք ըստ գործառական նշանակության դասակարգվում են հետևյալ օժանդակ գոտիների.

- *բնապահպանական,*
- *առողջարարական նպատակներով նախատեսված,*
- *հանգստի համար նախատեսված,*
- *պատմական և մշակութային:*

Հատուկ նշանակության հողեր:

Անտառային, ջրային և պահուստային հողեր:

Հաշվի առնելով հիմնական գոտիների քաղաքաշինական, բնապահպանական, սեյսմատեկտոնական, ինժեներաերկրաբական և այլ բնույթի սահմանափակումները , վերջիններս դասակարգվել են ըստ գործառական նշանակության և թույլատրված օգտագործումների, հողամասերի ծավալատարածական չափորոշիչների*.

Բնակելի կառուցապատման գոտիները նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար: Բնակվելու տարածքը ըստ ծավալատարածական (օժանդակ) գոտիավորման բաժանվում է ցածր խտության, միջին խտության, բարձր խտության բնակելի գոտիների:

Ցածր խտության բնակելի գոտիները նախատեսված են 600-1200 մ^2 տնամերձ հողամասեր ունեցող 1-2 հարկանի առանձնատներով կառուցապատման համար: Այս գոտիներն առանձնացված են հիմնականում արդեն կազմավորված առանձնատնային կառուցապատում ունեցող (քաղաքի հիմնական մասը) և տնամերձերով կառուցապատելու համար նախատեսված նոր տարածքների հետագա զարգացման և կանոնակարգման համար: Այս գոտիներում բնակչության խտությունը չպետք է գերազանցի 100 մարդ/հա:

Միջին խտության բնակելի գոտիները նախատեսված են բազմահարկ և առանձնատներով խառը կառուցապատված տարածքների համար, որոնք հիմնականում ընդգրկում են հասարակական կենտրոնի շրջակայքը: Բնակչության խտությունը չպետք է գերազանցի 200 մարդ/հա:

Բարձր խտության բնակելի գոտիները նախատեսված են, որպես կանոն, 3-5 հարկանի տներով կառուցապատման համար՝ կանոնակարգելով Սոթքի կոբինատի համար կառուցապատված տեղամասը և դրան հարող տարածքները:

Բնակավայրի հողերի բնակելի գոտու ռեժիմը նախատեսում է համապատասխան խտությունների պահպանում, սանիտարական պահպանման գոտիների սահմանում, ինժեներական ենթակառուցվածքների կատարելագործում:

Հասարակական կառուցապատման (գործառույթների) զարգացման գոտիները նախատեսված են բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև համաքաղաքային նշանակության գործառույթների կազմակերպման համար, վարչական և տեղական կառավարման շենքերի կենտրոնացման, գործարարական, ֆինանսական գործունեությունը քաղաքի տարածքում կենտրոնացնելու համար՝ քաղաքի զարգացմանը զուգընթաց:

Խառը կառուցապատման գոտիները նախատեսված են ինչպես բնակելի, այնպես էլ հասարակական կառուցապատման և ընդհանուր օգտագործման համար, առանց որևէ մեկի գերակայության:

Ընդհանուր օգտագործման գոտիները նախատեսված են բնակչության ժամանցի և կապերի (տրանսպորտային և հետիոտն) կազմակերպման համար:

Այլ հողերը նախատեսված են որպես պահուստներ՝ հեռանկարային կառուցապատման համար (տեղակայված են քաղաքի հարավ-արևելյան, հարավային, հյուսիսային, իսկ հեռանկարի համար՝ քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք ընկած՝ Երևան-Գորիս ճանապարհի ձախակողմյան հատվածում տեղակայված տարածքներում):

Քաղաքը շրջապատող գյուղատնտեսական հողերը, որոնք կարող են ծայրահեղ իրավիճակների դեպքում օգտագործվել հրատապ միջոցառումների իրականացման համար, նախատեսված են որպես բուֆերային գոտիներ:

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության տարածքները նախատեսված են արդյունաբերական, արտադրական և պահեստային օբյեկտների, դրանց ենթակառուցվածքների առաջնային տեղակայման համար: Գոյություն ունեցող արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրական օբյեկտները պահպանվում են (սեփականատերերի առկայություն): Գոտու ռեժիմը՝ վերագործարկման պարագայում նախատեսում է առաջավոր, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառում (թափոնների կրկնակի վերամշակում, թափոնների վնասազերծում, փակ ցիկլեր և այլն): Այնուհանդերձ, առաջադրվել է նաև այլընտրանքային օգտագործում՝ տարածքների վերակազմավորմամբ:

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների տարածքները նախատեսված են համապատասխան ենթակառուցվածքների, դրանց համապատասխան կառույցների տեղակայման համար: Գոտու ռեժիմը նախատեսում է սանիտարական և անվտագության գոտիների սահմանում և պահպանում և հատուկ իրավական ռեժիմների (սերվիտուտների) կիրառում:

Սանիտարական գոտիները նախատեսվում է կանաչապատել՝ աղմուկի ազդեցությունը և մթնոլորտային օդի, հողային և ջրային ավազանների աղտոտվածությունը փոքրացնելու նպատակով:

Հատուկ պահպանվող տարածքների հողերը նախատեսված են ռեկրեացիոն՝ հանգստի, բուժ-առողջարարական (կլիմայաբուժություն, օդաբուժություն, ցեխաբուժություն), զբոսաշրջության, սպորտային գործունեության կազմակերպման համար:

Հատուկ նշանակության հողերն ընդգրկում է քաղաքի տարածքում տեղակայված զինվորական օբյեկտները, դրանց սպասարկող ենթակառուցվածքների տարածքները: Գոտու ռեժիմը՝ ըստ վարչական պատկանելիության:

Անտառային, ջրային և պահուստային հողերն ընդգրկում են անտառտնտեսությանը պատկանող (ինչպես անտառապատ, այնպես էլ ոչ անտառապատ) տարածքները, գետերը, ոռոգման ջրանցքները, աղբրակապման կառուցվածքները, դրանց սանիտարական գոտիները: Գոտու ռեժիմները տրված են նախագծի համապատասխան բաժիններում:

Սանիտարական գոտիները նախատեսվում է կանաչապատել՝ աղմուկի ազդեցությունը և մթնոլորտային օդի, հողային և ջրային ավազանների աղտոտվածությունը փոքրացնելու նպատակով:

2.9. Տրանսպորտային ենթակառուցվածքների հեռանկարային զարգացումը

2.9.1. Արտաքին տրանսպորտ

Չունենալով անմիջական ելք դեպի ծով (նավահանգիստներ)՝ Հայաստանի ճանապարհային ցանցը ծառայում է որպես երկրի ցամաքային հաղորդակցության ուղիների զգալի մասն ապահովող բաղադրիչ՝ ապահովելով հաղորդակցությունը երկրի ներսում ու հարևան երկրների հետ և նպաստելով երկրի տնտեսական զարգացումը: Հիմնական ուղղությունները հարակից երկրների հետ հետևյալն են՝ Վրաստանի հետ հյուսիսում և Իրանի հետ հարավում:

Հաղորդակցուղիների արդյունավետ, բարեկարգ, կենսունակ ու կայուն ցանցի ձևավորումը կնպաստի առևտրի, ներդրումների ու աշխատատեղերի աճին՝ խթանելով տարածաշրջանային համագործակցությանն ու բարձրացնելով երկրի մրցունակությունը:

2.9.2. Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցք

Ծրագրի հիմնական նպատակը ճանապարհային հարմարավետ, անվտանգ ու արագ ուղևորա և բեռնափոխարդումների ապահովումն է հանրապետության տարածքով: Անհրաժեշտ է վերականգնել ու կառուցել կապեր, որոնք թույլ կտան ապահովել մարդկանց ու ապրանքների անվտանգ ու արագ փոխադրումն ամբողջ երկրով: Ճանապարհն օգտագործողների համար առաջարկվող ծրագիրը կհանգեցնի տրասպորտային ծախսերի նվազեցմանը, զգալիորեն կխնայի տեղափուխումների վրա ծախսվող ժամանակը, կապահովի բարձրորակ ու անվտանգ ճանապարհներ, բարձր որակի ծառայություններ:

- բնակչության խմելու-տնտեսական նպատակով,
- արտադրական այն օբյեկտների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր,
- բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ ընդունվել է 200 լ/օր/մարդ, որն ընդգրկում է բնակչության խմելու-կենցաղային ջրապահանջը, ինչպես նաև ընտանի կենդանիների ջրման պահանջարկը՝ բերված մեկ բնակչի հաշվարկով :

Արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրաքանակն ընդունվում է բնակչության ջրապահանջի 15%-ի չափով:

N	բնակավայր	խմելու ջրի աղբյուրներ		սնող ջրատարները				ՕԿՋ-ների					ներաթեխմիամառամուծ պրոմոմոմիամոսոսոմուծ
		քանակը	հզոր-ը-ը լ/վրկ	երկարությունը կմ	տրամագիծը մմ	տեսակը. Վիճակը	մատակարարման եղանակը (ինքն-ը/մեխ-ը)	քանակը	ծավալները	հասակի նիշերը	ընդհանուր վիճակը	ընդհանուր աշխատանքային վիճակը	
1	Ապարան	1	70	37	150	բավարար	Ինքն	2	2000	1950	առկա	առկա	առկա
					200		մեխ			1980			

Հակահրդեհային կարիքների (արտաքին և ներքին հրդեհներ) համար պահանջվող ջրաքանակը հաշվարկվում է համաձայն գործող նորմերի պահանջների (ՇՆևԿ 2.04.02.84):

Ստորև աղյուսակում տրված է Արմավիր 1-ում ներառված բնակավայրերի խմելու-տնտեսական, արտադրական և հակահրդեհային կարիքների համար պահանջվող հաշվարկային ջրապահանջը (ներառյալ նաև հոսակորուստները).

Հաշվարկային ջրապահանջն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանկարային բնակչության քանակը	Ջրասպառման նորմը	Ջրապահանջը				
				Խմելու-տնտեսական	Արտադրական (15 %)	Հակահրդեհային կարիքներ	Հոսակորուստներ (30 %)	Ընդամենը
		մարդ	լ/օր	մ³/օր				
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	Ք. Ապարան	6554	200	1311.0	196.6	216	393.2	2116.6
2	Արագած	4330	-//-	865.9	129.9	162	259.8	1417.6
3	Արայի	726	-//-	145.2	21.8	81	43.6	291.5
4	Ափնագյուղ	695	-//-	139.0	20.8	81	41.7	282.6
5	Եղիպատրուշ	808	-//-	161.7	24.2	81	48.5	315.5
6	Երնջատափ	647	-//-	129.4	19.4	81	38.8	268.6
7	Թթուջուր	415	-//-	82.9	12.4	81	24.9	201.3
8	Լուսագյուղ	956	-//-	191.2	28.7	81	57.3	358.2
9	Ծաղկաշեն	727	-//-	145.4	21.8	81	43.6	291.8
10	Կայք	659	-//-	131.8	19.8	81	39.5	272.1
11	Հարթավան	1052	-//-	210.3	31.5	81	63.1	386.0
12	Ջորագլուխ	280	-//-	56.1	8.4	81	16.8	162.3
13	Նիգավան	801	-//-	160.2	24.0	81	48.0	313.2
14	Շենավան	2086	-//-	417.1	62.6	162	125.1	766.8
15	Շողակն	180	-//-	36.1	5.4	81	10.8	133.3
16	Չքնաղ	217	-//-	43.3	6.5	81	13.0	143.8
17	Ջրամբար	198	-//-	39.6	5.9	81	11.9	138.4

18	Սարալանջ	256	-//-	51.3	7.7	81	15.4	155.3
19	Վարդենիս	828	-//-	165.7	24.8	81	49.7	321.2
20	Վարդենուտ	1113	-//-	222.6	33.4	162	66.8	484.8
21	Քուչակ	2443	-//-	488.6	73.3	162	146.6	870.5

Շուրջօրյա ջրամատակարարում, ինչպես նաև անհրաժեշտ հակահրդեհային ելք ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բնակավայրում ունենալ որոշակի ջրապաշար, որն իր մեջ ներառում է ծավալային երեք բաղադրիչ՝ $W_կ$ (կարգավորման), $W_{հհ}$ (հակահրդեհային), $W_{վթ}$ (վթարային): Պահանջվող ընդհանուր ծավալը ($W_{ընդ}$), որն անհրաժեշտ է նախատեսել յուրաքանչյուր համայնքում, ձևավորվում է այս երեք բաղադրիչների հաշվարկային արժեքների գումարից՝ $W_{ընդ}=W_կ+W_{հհ}+W_{վթ}$:

Խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները

N	Բնակավայրը	Կարգավորման ծավալ $W_կ$	Հակահրդեհային կարիքներ $W_{հհ}$	Վթարային ծավալ $W_{վթ}$	Ընդհանուր պահանջվող ծավալ $W_{ընդ}$
		$մ^3$			
1	Ք. Ապարան	635	216	1058	1909
2	Արագած	425	162	709	1296
3	Արայի	87	81	146	314
4	Ափնագյուղ	85	81	141	307
5	Եղիպատրուշ	95	81	158	333
6	Երնջատափ	81	81	134	296
7	Թթուջուր	60	81	101	242
8	Լուսագյուղ	107	81	179	368
9	Ծաղկաշեն	88	81	146	314
10	Կայք	82	81	136	299
11	Հարթավան	116	81	193	390
12	Ձորագլուխ	49	81	81	211
13	Նիգավան	94	81	157	332
14	Շենավան	230	162	383	775
15	Շողակն	40	81	67	188
16	Չքնաղ	43	81	72	196
17	Ջրամբար	42	81	69	192
18	Սարալանջ	47	81	78	205
19	Վարդենիս	96	81	161	338
20	Վարդենուտ	145	162	242	550
21	Քուչակ	261	162	435	858

Ջրամատակարարման նախատեսվող համակարգերը և գոտիները

Ջրամատակարարման համակարգերը նախատեսվում են կենտրոնացված. բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի ջրամատակարարումը նպատակահարմար է

իրականացնել գոտիներով՝ անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար նախատեսելով նոր ՕԿՋ-ներ, որտեղից խմելու ջուրը բնակչությանը կտրվի ինքնահոս եղանակով:

Ջրամատակարարման գլխավոր փողոցային ցանցերն անհրաժեշտ է նախատեսել օղակային՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով: Փակուղային կարող են լինել 200 մ-ից պակաս երկարություն և 100 մմ-ից պակաս տրամագիծ ունեցող ջրագծերը:

Խողովակաշարերի թեքություններն ընդունել ոչ պակաս 0.001, հարթ ռելիեֆի պայմաններում՝ 0.0005:

Խմելու որակի ջուր տեղափոխող խողովակների տեղադրման խորությունը պետք է նախատեսել.

- 0.5 մ-ով ավելի, քան գրունտ ներթափանցող զրոյական ջերմաստիճանի հաշվարկային խորությունն է,
- կոյուղու խողովակաշարերից ուղղաձիգ ուղղությամբ 0.4 մ-ով բարձր:

Հաշվի առնելով, որ ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, օղակային խողովակաշարերի տրամագծերը պետք է նախատեսել 100 մմ-ից ոչ պակաս:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ջրամատակարարման համակարգերի համայնքային կառավարումն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել այդ համակարգերի պատշաճ շահագործման և պահպանման կազմակերպություն (ՇևՊ), որը կունենա համապատասխան վերապատրաստում անցած աշխատակիցներ:
- Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:
- Բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով առաջարկվում է բնակավայրերի տարածքում պահանջվող ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում.

N	Բնակավայրը	Պահանջվող ՕԿՋ-ների ծավալը մ³	N	Բնակավայրը	Պահանջվող ՕԿՋ-ների ծավալը մ³
1	Արագած	2x350	11	Ջորագլուխ	2x110
2	Արայի	2x160	12	Նիգավան	2x170
3	Ափնագյուղ	2x160	13	Շենավան	2x400
4	Եղիպատրուշ	2x180	14	Շողակն	2x200
5	Երնջատափ	2x150	15	Չքնաղ	2x100
6	Թթուջուր	2x150	16	Ջրամբար	2x100
7	Լուսագյուղ	2x200	17	Սարալանջ	2x100
8	Ծաղկաշեն	2x160	18	Վարդենիս	2x180
9	Կայք	2x150	19	Վարդենուտ	2x280
10	Հարթավան	2x200	20	Քուչակ	2x450

- Բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:
- Ջրամատակարարաման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՋ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:
- Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:

- Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:
- Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:
- Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում:
- ✓ Ջրամատակարարման համակարգի հուսալիություն:
- ✓ Հոսակորուստների կրճատում:
- ✓ Ջրի սպառման արդյունավետության բարձրացում:
- ✓ Բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում:
- ✓ Խմելու ջրի հաշվառում, ինչը կբերի ջրօգտագործման կուլտուրայի բարելավման, ինչպես նաև կխթանի բնակիչների ջրօգտագործման ռեժիմի փոփոխությանը:
- ✓ Խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

2.1.2. Ջրահեռացում

2.1.2.1. Կենցաղային և արտադրական կոյուղի

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը հղի է մեծ վտանգներով՝ շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար:

Մարզի ջրային աղբյուրների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական աղբյուրը կենցաղային կեղտաջրերն են:

Ըստ Վեոլիաջուր ընկերության տրամադրած տեղեկատվության՝ Արագածոտն-1 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերից կոյուղացված է միայն Ապարան քաղաքը /65 տոկոսով/, սակայն կոյուղու համակարգով հեռացվող հոսքաջրերի վարակազերծման հարցը լուծված չէ: ՉԻ գործում Ապարան քաղաքի կոյուղու մաքրման կայանը: Կոյուղու համակարգով հեռացվող հոսքաջրերը լցվում են Քասախ գետը՝ առանց մաքրման և վարակազերծման՝ մեծ վտանգ ներկայացնելով վարակիչ հիվանդությունների տարածման տեսանկյունից:

Տարածաշրջանի գյուղական բնակչության զգալի մասն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից :

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր համայնքները: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Ինքնահոս ջրահեռացման խողովակների տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս.

- փողոցային ցանցի համար՝ 200 մմ, թեքությունը՝ 0.007,
- ներթաղամասային կենցաղային և արտադրական կոյուղու ցանցի համար՝ 150 մմ, թեքությունը՝ 0.008:

Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր կամ ոռոգման համակարգ:

Այն արտադրական օբյեկտներում, որոնց հեռացման ենթակա հոսքաջրերը կարող են պարունակել կոյուղու համակարգը վնասող կամ դրա աշխատանքը խոչընդոտող նյութեր, նախատեսվում է (նախքան կոյուղու միասնական համակարգին միանալը)

իրականացնել կեղտաջրերի նախնական մաքրում՝ ստորև ներկայացվող մեթոդներով և օրենքով չարգելված ցանկացած միջոցներով:

Արդյունաբերական կեղտաջրերի մաքրման տեխնոլոգիաներ և մեթոդներ

Կախված արդյունաբերության տեսակից, կեղտաջրերի կազմը և դրանց մաքրման մեթոդները կարող են մեծապես տարբեր լինել: Արդյունաբերական կեղտաջրերը, ի տարբերություն քաղաքային կեղտաջրերի, բնութագրվում են բարձր անհավասար ներհոսքով և աղտոտվածությամբ: Ընդհանուր առմամբ, արդյունաբերական կեղտաջրերի մաքրման կայանները բաղկացած են.

• **Միջինացումից** -ինչպես հոսքի մակարդակի, այնպես էլ կենտրոնացման տեսանկյունից ներհոսքը նորմալացնելու համար, օգտագործվում են միջինացման սարքեր, որոնք կարող են հագեցած լինել խառնիչ և (կամ) աէրացիայի համակարգով:

• **Մեխանիկական մաքրում.** Կախված արդյունաբերության տեսակից, կեղտաջրերը կարող են պարունակել տարբեր մեխանիկական խառնուրդներ՝ բանջարեղենից և սուրճի հատիկներից մինչև թղթե մանրաթելեր և ռետինե կտորներ: Կեղտաջրերի յուրաքանչյուր տեսակի համար սարքավորումներ նախագծելիս ընտրվում է անհրաժեշտ մեխանիկական մաքրման միավոր:

• **Ֆիզիկաքիմիական մաքրումը,** որը սովորաբար հետևում է արդյունաբերական կեղտաջրերի և կեղտաջրերի մեխանիկական մաքրմանը, պարունակում է մեծ քանակությամբ աղտոտիչներ՝ կախյալ և լուծված նյութերի տեսքով: Ֆիզիկաքիմիական մաքրման խնդիրն է այդ աղտոտիչները հեռացնել ֆլոտացիայի միջոցով. Հիդրոֆոբ աղտոտիչների միջև կպչունության ուժեղացման գործընթաց: Մաքրման արդյունքում պահպանված աղտոտիչները սարքավորումից հանվում են նստվածքների տեսքով (ֆլոտացիոն փրփուր, ֆլոտացիոն տիղմ), և մաքրված ջուրը մտնում է մաքրման հաջորդ փուլ:

• **Կենսաբանական մաքրման կիրառումը,** ինչպես քաղաքային կեղտաջրերի մաքրման կայանների դեպքում, օգտագործվում է լուծված աղտոտիչների մաքրման համար՝ օգտագործելով ակտիվ տիղմ՝ աէրոբ, անաէրոբ և անօքսիդ պայմաններում:

• Արդյունաբերական կեղտաջրերի մաքրման լրացուցիչ մաքրումը սովորաբար օգտագործվում է կախյալ պինդ նյութերից մաքրելու և ջրամբար սեփական արտանետումների ավելացման պահանջների հետ:

• Արդյունաբերական կեղտաջրերի մաքրման տեխնոլոգիայում տիղմի ջրազերծումը, ի տարբերություն քաղաքային կեղտաջրերի, կարող է ավելի լայն կիրառություն ունենալ. Մասնավորապես, կենդանիների բազմացման տնտեսություններում դրանց կենսագործունեության արդյունքները՝ թափոնները կարող են նաև ջրազրկվել, ինչպես նաև այդպիսի ձեռնարկություններում լայնորեն օգտագործվում են խմորման և կոմպոստացման սարքավորումները, որոնց օգտնությամբ կարելի է ձեռք բերել պարարտանյութ, կենսագազ և էլեկտրաէներգիա:

• Արդյունաբերական կեղտաջրերի անաէրոբ մաքրումը մաքրման հատուկ տեսակ է և նախատեսված է օրգանական նյութերով հարուստ կեղտաջրերի համար. Արդյունքում ստացվում է ոչ միայն մաքրված ջուր, այլ նաև կենսագազ, որը հետագայում կարող է վերածվել ջերմային և (կամ) էլեկտրական էներգիայի:

Բացի քաղաքային կեղտաջրերի մաքրման բաժնում թվարկված տեխնոլոգիաներից, արդյունաբերական կեղտաջրերի մաքրման համար մշակվել է լուծումների լրացուցիչ բլոկ.

• My DAF - ֆիզիկական, քիմիական և ֆլոտացիոն մշակման տեխնոլոգիաներ.

• My AMI - անաէրոբ կեղտաջրերի մաքրման կայաններ:

Ստորև աղյուսակում տրված է Արագածոտն 1-ում ներառված բնակավայրերի կոյուղու (կոմունալ-կենցաղային և արտադրական) հեռացման ենթակա հոսքաջրերի հաշվարկային ելքերը:

Կոյուղու հաշվարկային ելքերն ու մաքրման կայանների հզորություններն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանակա-րային բնակչության քանակը (մարդ)	Հեռացման ենթակա հոսքաջրերի քանակը մ³/օր		
			Կոմունալ-կենցաղային	Արտադրա-կան	Ընդամենը
1	*2*	*3*	*5*	*7*	*9*
1	Ք. Ապարան	6554	1311.0	1180.0	2490.4
2	Արագած	4330	865.9	779.3	1645.2
3	Արայի	726	145.2	130.7	275.9
4	Ափնագյուղ	695	139.0	125.1	264.2
5	Եղիպատրուշ	808	161.7	145.5	307.2
6	Երնջատափ	647	129.4	116.4	245.8
7	Թթուջուր	415	82.9	74.6	157.6
8	Լուսագյուղ	956	191.2	172.1	363.2
9	Ծաղկաշեն	727	145.4	130.9	276.3
10	Կայք	659	131.8	118.6	250.4
11	Հարթավան	1052	210.3	189.3	399.6
12	Ջորագլուխ	280	56.1	50.5	106.6
13	Նիգավան	801	160.2	144.1	304.3
14	Շենավան	2086	417.1	375.4	792.5
15	Շողակն	180	36.1	32.5	68.5
16	Չքնաղ	217	43.3	39.0	82.3
17	Ջրամբար	198	39.6	35.6	75.2
18	Սարալանջ	256	51.3	46.1	97.4
19	Վարդենիս	828	165.7	149.1	314.7
20	Վարդենուտ	1113	222.6	200.4	423.0
21	Քուչակ	2443	488.6	439.7	928.4

2.1.2.2. Հեղեղատար կոյուղի

Հեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Սույն նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Հեղեղատար ցանցերը՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Անձրևաջրերի հեռացման փակ համակարգի դեպքում խողովակաշարերի տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս՝ 250 մմ փողոցային ցանցի համար, 200 մմ՝ ներթաղամասային ցանցի համար:

Անձրևաջրերի հեռացման բաց համակարգի դեպքում երթևեկելի ասֆալտապատ ճանապարհերի ճամփեզրերի, առանձին խրամառուների (կյուվետ) և ջրահեռացման առվակների թեքությունները համապատասխանաբար ընդունել ոչ պակաս 0.003, 0.005 և 0.003:

Մեղանաձև հատվածքով կյուվետների և ջրահեռացման առվակների նվազագույն չափերն անհրաժեշտ է ընդունել՝

- հատակի լայնությունը՝ 0.3 մ,
- խորությունը՝ 0.4 մ:

Այն համայնքներում, որտեղ սույն նախագծի շրջանակներում նախատեսված են կոյուղու մաքրման սարքավորումներ, անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս կարող է ենթարկվել մաքրման: Անձրևաջրերի մաքրումը կարող է իրականացվել ինչպես առանձին մաքրման սարքավորումներով, այնպես էլ կենցաղային և արտադրական կոյուղու հոսքաջրերի հետ համատեղ՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ՝ որոնք հնարավորություն կստեղծեն մակերեսային հոսքաջրերը կուտակել և միայն կենցաղային կոյուղու ամենաքիչ հոսքի ժամերին մղել կոյուղու համակարգ՝ դրանք մաքրման կայանում լրիվ մաքրման ենթարկելու համար:

Նախագծային առաջարկություններ

- Բնակավայրերի կոյուղու գոյություն ունեցող ցանցի վերանորոգում, դրա անհնարինության դեպքում՝ փոխարինում նորով, բնակավայրերի լրիվ կոյուղացում, կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի նախատեսում:
- Կենցաղային կոյուղուն զուգահեռ հեղեղատար կոյուղու նախատեսում:
- Կոյուղու կեղտաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պաշտպանելու պահանջները: Ըստ ՇՆևԿ 2.04.02-85-ի 6.1 կետի պահանջների՝ կեղտաջրերը պետք է անցնեն լրիվ կենսաբանական մաքրում և ունենան հետևյալ ցուցանիշը՝ ԹԿՊլրիվ=6 մգ/լ:
- Ապարան քաղաքի համար նախատեսել նոր, ժամանակակից տեխնոլոգիաներով կոյուղու կենսաբանական մաքրման կայան /հզորությունն ըստ կատարված հաշվարկների/ :
- Գյուղական բնակավայրերում առաջարկվում է տեղադրել լոկալ, ժամանակակից տեխնոլոգիաներով, գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորումներ՝ հզորությունները համաձայն համապատասխան հաշվարկների (տես՝ "Ջրահեռացում "բաժնի աղյուսակը):
- Հաշվի առնելով ռելիեֆային պայմանները, ինչպես նաև որոշ բնակավայրերում սանիտարական խզման ապահովմամբ համապատասխան տարածքների բացակայությունը, կոյուղու հոսքաջրերի մաքրման նպատակով դիտարկվել է մի քանի բնակավայրերի համար մեկ միասնական կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորման տեղադրումը, մասնավորապես՝ Ափնագյուղ և Արայի բնակավայրերի հեռացման ենթակա հոսքաջրերը մաքրման ենթարկելու նպատակով Ափնագյուղ

բնակավայրի հարավ-արևելյան հատվածում նախատեսվում է ժամանակակից տեխնոլոգիաներով, գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորման տեղադրում, որը կսպասարկի նշված երկու բնակավայրերին (տես՝ "Տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ" գծագիրը) :

Վերոնշյալ սարքավորումները բաղկացած են շղթայաբար իրար միացված տեխնոլոգիական տարրաների ցանցից, որոնցում իրականացվում են կոյուղու հոսքաջրերի փուլային մաքրման գործընթացներ: Կոյուղու հոսքաջրերը հաջորդաբար մուտք գործելով բազմաշերտ պոլիմերային ծածկույթով մետաղից, պոլիէթիլենից կամ պոլիպրոպիլենից պատրաստված տարրաների մեջ, ենթարկվում են կենսաբանական մաքրման (98 %), որից հետո կարող են բաց թողնվել բաց ջրահոսքեր կամ ոռոգման համակարգեր՝ խթանելով կրկնակի ջրօգտագործումը:

2.1.3. Ոռոգման խնդիրները

Մարզի ջրի հիմնական աղբյուրը Քասախ գետն է, որի ջրաչափական դիտարկումները կատարվում են 1934 թվականից: Քասախ գետի միջին բազմատարյան հոսքը կազմում է 89.0 մլն.խմ, նվազագույնը 52.0 մլն.խմ, առավելագույնը 0.01% ապահովվածության ելքերը կազմում են շուրջ 150 խմ/վրկ:

Քասախ գետի ջրավազանի մակերեսը կազմում է 56 կմ^2:

Գետի նվազագույն ելքը Ապարանի ջրամբարի գետավազանում կազմում է 1.5 խմ/վրկ, իսկ ջրաբերուկների ծավալը տարեկան կազմում է 3.94 հազ.խմ:

Տարածաշրջանի սեյսմիկ ուժգնությունը կազմում է 9 բալ:

Մարզի գյուղատնտեսական ոռոգելի հողատեսքերի մակերեսը կազմում է 54.1 հազ.հա

Մարզում կառուցված է 31 ջրամբար գումարային 108.0 մլն.խմ ծավալով:

Գրունտային ջրերը գտնվում են շուրջ 50մ խորության վրա:

2.1.3.1. Մարզի ոռոգման համակարգերը

Արագածոտնի մարզում շուրջ 54 հազ.հա գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման համար ջրաղբյուր են հանդիսանում Քասախ, Հալավար, Գեղարոտ և Համբերդ գետերը շուրջ 520 մլն.մ^3 ջրատվությամբ:

Ներկայումս փաստացի ոռոգվող գյուղատնտեսական մշակաբույսերի մակերեսը կազմում է 27.5 հազ.հա:

Տարածաշրջանի ոռոգելի խոշոր համակարգեր են հանդիսանում Արզնի-Շամիրամ ջրանցքի երկրորդ հատվածը և Թալինի ջրանցքը:

Հանրապետության ջրային տնտեսության համակարգում նախատեսված է, այդ թվում և Արագածոտնի մարզում՝

- կրճատել մեխանիկական եղանակով ոռոգվող հողատարածքները, փոխարինելով ինքնահոս եղանակով;
- ընդարձակել ոռոգելի հողատարածքները մինչև 45.0 հազ.հա;
- բարձրացնել ոռոգման մայր և երկրորդ կարգի ջրանցքների ՕԳԳ-ը
- գետերի առափնյա բնակավայրերը և գյուղատնտեսական հողատեսքերը և հաղորդակցուղիները պաշտպանել գետերի ամենամյա հորդացումներից:

2.1.3.2. Մարզում գոյություն ունեցող ջրամբարները

Արագածոտնի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման և համայնքների ջրամատակարարման որոշ խնդիրներ լուծելու նպատակով կառուցված է

31 ջրամբարներ գումարային 119.3 մլն.մ³ ծավալով, այդ թվում մեկ և ավելի ծավալ ունեցող ջրամբարների տեխնիկական ցուցանիշները բերված են N 1 աղյուսակում:

աղ. N 1

Ջրամբարի անվանումը	Գետավազանը	Ծավալը մլն.մ³	Պատվարի բարձրութ. մ	Պատվարի տիպը	Հայելու մակերեսը հա	Ոռոգելի տարածքը հազ.հա
Ապարանի	Քասախ	91.0	58.0	Հողալիցքային միջուկով	740	7.52
Հալավարի	Հալավար վտ.	4.0	31.0	Հողային, ավազա-կավային էկրանով	30	0.88
Ծիլքարի	Քորգետ	1.2	7.7	Հողալիցք	35	0.41
Գեղաղիրի	Քասախի վտ.	1.9	15.0	Հողալիցք	16	0.45
Ափնայի	Քասախի վտ.	2.3	29.5	Հողալիցք	29	0.61

Ապարանի ջրամբարը

Ապարանի լիճ, արհեստական ջրամբար Հայաստանի Արագածոտնի մարզում, Քասաղ գետի վերին հոսանքում, Քուչակ և Եղիպատրուշ գյուղերի մինջև:

Կառուցվել է 1962-1967 թթ-ին Ցոլակ Հակոբի Գեւորգյանի կողմից: Մակերեսը 7,9 քառակուսի կիլոմետր է, ընդհանուր ծավալը՝ 91 միլիոն խորանարդ մետր, օգտակարը՝ 81 միլիոն խորանարդ մետր, ջրթողունակությունը վայրկյանում 18 խորանարդ մետր: Ջրամբարի ամբարտակը հողային է, բարձրությունը՝ մոտ 50 մ, երկարությունը՝ 200 մ:

Սնվում է Քասաղ գետի, Լուսագյուղ, Վարդենիս, Թթուջուր, Եղիպատրուշ, Քուչակ գետակների և մթնոլորտային տեղումներից: Ձմռանը սառցակալում է: Օգտագործվում է ոռոգման համար: Ջուրը տրվում է նախկին Աշտարակի, Էջմիածնի շրջաններին: Ջրամբարի հիմնական ձկնատեսակը տեղական կողակն է: Այստեղ բուծվել է նաև Սևանա լճի իշխանը, սիգը և ծածանը: Վերջին տարիներին այստեղ բուծվել է նաև խեցգետինը: Շրջակայքում կառուցվել են հանգստյան գոտիներ: Ջրամբարի ջրերի տակ են մնացել Քասաղ, Զովունի գյուղատեղերը, որոնց բնակիչները վերաբնակեցվել են Երևանի շրջակայքում:

Նախկին Զովունի գյուղում ջրի սահմանագծից 1967 թ-ին հանվել և անվտանգ տեղ են փոխադրվել V դարում կառուցված Սուրբ Վարդան և Թուխ Մանուկ փոքրաչափ եկեղեցիները: IV դարում կառուցված Պողոս-Պետրոս բազիլիկ տաճարը տարեկան 3-4 ամիս մնում է ջրային տարածքի մեջ:

Արագածոտնի մարզի տարածքում ամենամեծ ծավալով 91.0 մլն.խմ Ապարանի ջրամբարն է, որը կառուցվել է Քասախ գետի 1810մ նիշ ունեցող գետահատվածում, մարզի շուրջ 7520 հա գյուղատնտեսական մշակաբույսերը ջրով ապահովելու նպատակով:

	Ծավալ, մլն. մ³	Օգտագործվող ծավալ, մլն. մ³	Ջրթող կառուցվածքի բարձրությունը (մ)
Ապարան	91	81	52,6

Որպես ջրամբարի սպասարկմանն ուղղված աշխատանքներ դիտարկվում է, մասնավորապես՝ այսպես կոչված՝ խոռոչների մշակումը, որի շնորհիվ կնվազեն ջրի կորուստները:

Ջրամբարի պատվարի գետահատվածում Քասախ հիդրոլոգիական չափանիշները բնորոշվում են N 2 և N 3 աղյուսակներում՝

Քասախ գետի միջին ամսեկան ելքերը

Աղ. N 2

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Միջին տարեկան
Ելքը, մ³/վրկ	0.38	0.36	0.45	5.93	5.09	10.3	6.68	4.57	3.15	0.86	0.47	0.72	2.95

Քասախ գետի առավելագույն ելքերը

Աղ. N 3

Ապահովվածությունը, %	0.01	0.1	0.5	1	3	5	10
Ելքերը, մ³/վրկ	194	150	115	92	75	67	55

Ապարանի ջրամբարի պատվարային հանգույցը բաղկացած է հողալիցքային պատվարից կավավազային միջուկով 58մ բարձրությամբ, հեղեղային ջրհեռից 194 մ³/վրկ ջրթողունակությամբ ոռոգման ջրթողից 17 մ³/վրկ ելքով, չափիչ հսկիչ սարքավորումներով և մեխանիկական սարքավորումներով:

Պատվարային հանգույցի տեխնիկական վիճակը ընդհանուր առմամբ կայուն է, բացառությամբ պատվարի ձախ ափում բարձր հորիզոնների ժամանակ գրանցվում է ֆիլտացիոն երևույթների ակտիվացում, և ջրամբարի թասում հարամիների առաջացում: Նշված երևույթները շահագործման ընթացքում հսկողության տակ են և ձեռնարկվում են կանխարգելիչ միջոցառումներ:

2.1.3.3.Ջրամբարաշինարարության հեռանկարները

Արագածոտնի մարզի ոռոգելի տարածքներն ընդլայնելու, ոռոգելի տարածքների ջրապահովությունը բարձրացնելու և Քասախ գետի ջրավազանի ջրային ռեսուրսների օգտագործման նպատակով, նախագծային և գիտահետազոտական ինստիտուտների կողմից պլանավորված է մարզում իրականացնել ևս 12 ջրամբարներ գումարային 27.54 մլն.խմ ծավալով, այդ թվում՝

Աղ.N4

հ/հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը, մլն.մ³	Ջրատվությունը , մլն.մ³
1	Հարթավանի	3.0	3.75
2	Բյուրականի	2.7	3.38
3	Վերին Սասնաշենի	1.0	1.25
4	Շամիրամի	2.0	2.50
5	Ավան-1	0.5	0.75
6	Ավան-2	0.5	0.75
7	Գեղարոտի	3.3	4.13
8	Շաղվարդի	1.3	1.63
9	Ուշիի	5.2	6.90
10	Կոյտարի	0.2	0.25
11	Էնգոյի	0.2	0.25
12	Ջորափի	1.6	2.00
Ընդամենը		24.3	27.54

Նախատեսված ջրամբարներից զգալի մասը նախնական ուսումնասիրված են, իսկ Հարթավանի, Բյուրականի և Վ.Սասնաշենի ջրամբարները նախատեսված է կառուցել առաջնահերթ կարգով:



Կառուցման ենթակա ջրամբարների ոռոգելի տարածքները.

հ/հ	Ջրամբարի անվանումը	Ոռոգելի տարածքը հա
1	Հարթավանի	47.0
2	Բյուրականի	43.0
3	Վերին Սասնաշենի	16.0
4	Շամիրամի	31.0
5	Ավան-1	9.0
6	Ավան-2	9.0
7	Գեղարոտի	52.0
8	Շաղվարդի	10.0
9	Ուշիի	86.0
10	Կոյտարի	3.0
11	Էնգոյի	3.0
12	Ջորափի	27.0

Սելավ-Մաստարա ջրամբարը

Սելավ Մաստարա գետի ջրային ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու և հեղեղային ելքերը կարգավորելու նպատակով նախատեսվում է Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի տարածքում, Թալինի ջրանցքի ձախ ճյուղի և Սելավ Մաստարա գետի հատման 1236մ նիշ ունեցող գետահատվածում կառուցել Մաստարայի ջրամբարը:

Հաշվի առնելով Սելավ Մաստարա գետից փաստացի ջրառները, նախատեսվող գետահատվածի համար Սելավ Մաստարա գետի միջին տարեկան հոսքը գնահատվում է շուրջ 7.0 մլն.մ^3, իսկ մնացած 6.0 մլն.մ^3 նախատեսվում է կուտակել Թալինի ջրանցքի ձախ ճյուղով ոռոգման սեզոնից դուրս ընկած ժամանակահատվածում:

Ջրամբարի ծավալը նախատեսվում է 13.0 մլն.մ^3, պատվարի առավելագույն բարձրությունը շուրջ 30մ, ջրածածկման տարածքը 97.0 հա, պատվարների կատարով գումարային երկարությունը շուրջ 550մ:

Պատվարը նախատեսվում է ավազակավային պրիզմաներով և կավային միջուկով: Տարածաշրջանի ինժեներաերկրաբանական քարտեզի տվյալներով շինանյութը գտնվում է 5-8 կմ հեռավորության վրա:

Սելավ Մաստարա ջրամբարի կառուցումը պայմաններ կստեղծի բարձրացնել Արմավիրի մարզի 16 համայնքների ոռոգելի շուրջ 8.5 հազ.հա գյուղատնտեսական հողատեսքերի ջրապահովվածությունը և օգտագործել էներգետիկ նպատակների համար:

2.1.3.4.Ջրամբարների շահագործման հուսալիության ապահովման միջոցառումները

Արագածոտնի մարզի ջրատնտեսական համակարգի կողմից անցկացվող հետազոտությունների արդյունքում անհրաժեշտ են գտել, գոյություն ունեցող ջրամբարների շահագործման հուսալիությունը ապահովելու նպատակով իրականացնել հետևյալ միջոցառումները, ըստ ջրամբարների՝

Աղ.N5

հ/հ	Ջրամբարի անվանումը	Միջոցառման անվանումը
1	Ծիլքարի	Պատվարի վերին շեպի ափերի վերանորոգում; Պատվարի ներքին շեպի էռոզացված հատվածների վերանորոգում;

		Ջրընդունիչ փականի և հորի վերանորոգում:
2	Շղարշիկի	Ֆիլտրացիոն ելքերի չափման սարքի տեղադրում; Ջրընդունիչ փականի վերանորոգում:
3	Աշնակ-1	Պատվարի վերին շեպի քարալիցքի վերանորոգում; Հեղեղային ջրհեռի մաքրում, պատերի վերանորոգում; Ջրընդունիչ փականի և հորի վերանորոգում:
4	Աշնակ-2	Պատվարի վերին շեպի քարալիցքի վերանորոգում; Հեղեղային ջրհեռի մաքրում, ջրանցքի նորոգում; Ջրընդունիչ փականի և հորի վերանորոգում:
5	Ն.Խարբերդ	Մոտեցնող ջրանցքի վերանորոգում; Պատվարի կատարի վերանորոգում:
6	Վ.Թալին-2	Մոտեցնող ջրանցքի վերանորոգում; Պատվարի վերին շեպի քարալիցքի վերանորոգում; Հեղեղային ջրհեռի պատերի վերանորոգում; Ջրընդունիչ փականի և հորի վերանորոգում:
7	Հացաշենի	Պատվարի կատարում պարապետի կառուցում; Ջրընդունիչի մեխ.սարքավորումների վերանորոգում; Ֆիլտրացիոն ելքերի չափման սարքի տեղադրում:
8	Արագածի	Հեղեղային ջրհեռի վերականգնում:
9	Եղնիկի	Ջրընդունիչի հատվածում պատվարի լիցքի վերականգնում; Ջրընդունիչ հորի վերականգնում, նոր փականի տեղադրում; Ֆիլտրացիոն ելքերի հսկման նպատակով սարքերի տեղադրում :
10	Կարճաղբյուր -2	Պատվարի վերին շեպի վերանորոգում; Ներքին շեպի բուսածածկոցի թարմացում; Հակահեղեղային ջրհեռ կառուցվածքի վերանորոգում; Ֆիլտրացիոն երքերի հսկման նպատակով ներքին բյեֆում սարքերի տեղադրում:
11	Ապարանի	Ջրամբարի թասից ֆիլտրացիոն երքերի հսկման միջոցառումների իրականացում և առաջացած հարամիների կանխարգելում:

Աղյուսակում թվարկված կանխարգելիչ միջոցառումները հետևողականորեն անհրաժեշտ է իրականացնել ջրամբարների պատվարների շահագործման գործընթացում:

2.1.3.5. Տեխնիկական այլ առաջարկություններ

Ոլորտում առկա խնդիրների լուծման համար հատկապես կարևոր է ոռոգման արդյունավետ եղանակների ներդրումը, ինչը կնպաստի ոռոգման ջրի նպատակային օգտագործմանը:

Ոռոգման համակարգերը պետք է բաղկացած լինեն ջրամբարներից (գլխամասային հանգույց), ջրանցքների համակարգից (մայրուղային ջրանցք, առանձին ճյուղավորումներով բաշխիչ ցանց), որոնց միջոցով հնարավոր կլինի կանոնավոր ոռոգում իրականացնել տարբեր եղանակներով (մակերեսային՝ ակոսներով, շերտերով, խողովակաշարերի միջոցով, անձրևացման, կաթիլային):

ԱՌԱՋԱՐԿ – 1

Ոռոգման փակ համակարգ

Նախկինում և այժմ նույնությամբ գործող ոռոգման ջրի բաց տիպի համակարգերի (մետաղական կամ ասբեստե կիսախողովակներ, բետոնե կամ հողային հունով առուներ) գործարկումը դարձել է անարդյունավետ, քանի որ դրանցով տեղափոխվող ջրի 25-30 տոկոսը կորուստներն են կազմում:

Իրավիճակի լիցքաթափման, այն է՝ կանոնավոր ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև համակարգի վերահսկման և ոռոգման ջրի կորուստների դեմն առնելու նպատակով նախատեսվում է ոռոգման «ԲԱՑ» համակարգից անցում կատարել ոռոգման «ՓԱԿ», ջրաչափերով կահավորված ջրամատակարարման համակարգին, ինչը հնարավորություն կտա ապահովել ջրի արդյունավետ օգտագործումն ու հավասարաչափ բաշխումը:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գրեթե բոլոր համայնքներում, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որոնք կանցնեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

ԱՌԱՋԱՐԿ – 2

Կաթիլային ոռոգման համակարգ

Մի շարք երկրներում ոռոգելի երկրագործության մեջ լայնորեն կիրառվող կաթիլային ոռոգումը հիմնված է բույսի արմատային համակարգին ջրի անմիջական մատուցման սկզբունքի վրա, ինչը բացառում է ջրի անհարկի վատնումը:

Կաթիլային ոռոգումը հորինվել է որպես բերքի ավելացման հիմնական միջոց՝ ջրի ոչ մեծ ծախսերի դեպքում: Ոռոգման այս տիպն իդեալական է ցանկացած տիպի բույսերի համար և կիրառվում է ինչպես մասնավոր ֆերմերային տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբներում:

Կաթիլային ոռոգման համակարգի հիմնական տարրը հանդիսանում է կաթիլային խողովակը, որն իրենից ներկայացնում է բացվածքներով խողովակ:



Կաթիլային ոռոգման խողովակներն, ի տարբերություն սովորական խողովակների, տնտեսող են, ջուրն անմիջապես հասնում է արմատներին, ինչն ապահովում է որակյալ ոռոգում: Ջրի ծախսերը 3-4 անգամ քիչ են, կորուստները՝ երեք անգամ քիչ, իսկ դրա յուրացման արդյունավետությունը՝ կրկնակի անգամ ավելի:

Խողովակները կարող են լինել տարբեր, բայց էությունը մեկն է. Կայունացված պոլիէթիլենից խողովակն ընկած է հողի վրա ակոսների երկայնությամբ, և մատակարարում է ջուր կաթոցիկի միջոցով: Փոքր ճնշման դեպքում՝ կաթիլային, մեծի

դեպքում՝ միկրոշիթերով:

Կաթիլային ոռոգումը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացումը: Կաթիլային ոռոգման համակարգը կարող է օգտագործվել.

- Բոլոր տեսակի մրգատու այգիների համար (խաղող, սեխ, ձմերուկ և այլն):
- Բոլոր տեսակի բույսերի (բամբակ, արևածաղիկ, և այլն) և ծաղիկների աճեցման համար:
- Բոլոր տեսակի բանջարեղենների աճեցման համար (վարունգ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, պղպեղ, և այլն):
- Հատկապես ջերմոցներում, որտեղ կաթիլային համակարգը թույլ կտա իրագործել կայուն, տարիների ընթացքում խնդիր չհարուցող ոռոգում:

<u>Կաթիլային ոռոգման առավելությունները</u>.

- ***Հողի օդափոխություն (քամահարում)***

  Կաթիլային համակարգի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո: Հողում եղած թթվածինը հնարավորություն է տալիս արմատային համակարգին ակտիվորեն գործելու:

- ***Արմատային համակարգ***

  Արմատային համակարգը զարգանում է զգալիորեն ավելի լավ, քան ցանկացած այլ ոռոգման դեպքում՝ կենտրոնանալով կաթոցիկների շրջանում և վերածվելով ակտիվ արմատային թելիկներց բաղկացած առատ զանգվածի:

- ***Մնուցում***

Լուծված պարարտանյութերը ոռոգման հետ տրվում են անմիջապես արմատային համակարգին, ինչի արդյունքում տեղի է ունենում սնուցող նյութերի ինտենսիվ յուրացում: Սա շոգ տարածաշրջաններում պարարտացման ամենաարդյունավետ եղանակն է:

- ***Բույսերի պահպանություն***

  Բույսերի տերևները չեն խոնավանում ինչպես անձևացման ժամանակ: Փոքրանում է հիվանդությունների տարածման հնարավորությունը, քանի որ մանրեասպան միջատները չեն լվացվում տերևներից:

- ***Ագրոտեխնոլոգիա***

  Կաթիլային ոռոգումը թույլ է տալիս հողի մշակում, սրսկում և բերքահավաք իրականացնել ցանկացած ժամանակ՝ անկախ ոռոգումից, քանի որ շարքերի միջև ընկած հողատարածքները սեզոնի ողջ ընթացքում չոր են մնում:

Որոշ երկրներ հաջողությամբ անցում են կատարել կաթիլային ոռոգման համակարգին, որը թեև զգալիորեն տնտեսում է ջրային ռեսուրսները, սակայն դեռևս բավականին ծախսատար միջոց է:

Հաշվի առնելով, որ երկրի պարենային անվտանգության երաշխավորը՝ գյուղատնտեսությունն է, ուստի ոռոգման համակարգը կարգավորելը պետության կայացման լուրջ նախադրյալ է, հետևաբար և կաթիլային ոռոգման համակարգի նախատեսումը ևս արդարացված է:

2.1.4. Էներգամատակարարում

2.1.4.1. Էլեկտրամատակարարում

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում:

Ստորև աղյուսակում տրված է տեղեկատվություն ՀՀ Արագածոտնի մարզով անցնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ տնօրինության բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի վերաբերյալ:

Հ/Հ	Գծի կարգավարական անվանումը	Լարումը /կվ/	Երկարությունը /կմ/	Համայնքը, մարզը
1	Աշնակ-1	220	38.6	Արմավիր-Արագածոտն
2	Աշնակ-2	220	38.6	Արմավիր-Արագածոտն
3	Անուշ	110	29.8	Արմավիր-Արագածոտն
4	Բջնի	110	47.3	Արմավիր-Արագածոտն-Կոտայք

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար: Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է 10/0.4 կՎ լարման տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով:

Ստորև աղյուսակում տրված են ներկայումս համայնքներում առկա էլեկտրամատակարարման համակարգերի տեխնիկական բնութագրերն ու էլեկտրաէներգիայի օգտագործման վերաբերյալ քանակական ցուցանիշներն ըստ բնակավայրերի /ըստ «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մասնաճյուղի տրամադրած տեղեկատվության/.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ (ԱՊԱՐԱՆ) ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

	Բնակավայր	Գլխավոր սնուցող ենթակայաններ				10/0.4 ենթակայաններ			էլ.էներգիայի տարեկան գումարային ծախսը,այդ թվում		1 մարդու փաստացի տարեկան սպառումը
		Անվանում	Լարումը ԿՎ	Հզոր-նը ԿՎԱ	Տեղա կայման-վայրը	Առկա տրանս-ֆորմա-տորների քանակը	Հզորութ-յունները ԿՎԱ	Տեղակայման վայրը	Կոմունալ կենցաղային	Արտա-դրական	
Սիկրոռեգուն-1	ք.Ապարան	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	630	ք.Ապարան	277674	272978	2088
						1	400	ք.Ապարան	193863	328486	2485
						1	400	ք.Ապարան	220258	387702	1791
						1	200	ք.Ապարան	185183	142709	2057
						1	400	ք.Ապարան	180198	139052	1638
						1	400	ք.Ապարան	181852	43662	1783
						1	160	ք.Ապարան	132757	667	1702
						1	100	ք.Ապարան	120849	65563	2810
						1	400	ք.Ապարան	165624	21067	1882
						1	400	ք.Ապարան	230611	42610	1708
						1	400	ք.Ապարան	245987	205509	2343
						1	630	ք.Ապարան	1575	1229200	1575
						1	250	ք.Ապարան	110037	419712	2559
						1	250	ք.Ապարան	111916	0	1646
						1	250	ք.Ապարան	114726	18703	1978
						1	400	ք.Ապարան	186649	57553	1885
						1	250	ք.Ապարան	226100	39185	1869
						1	400	ք.Ապարան	331258	4607	2110
						1	400	ք.Ապարան	208517	69031	1798
	գ.Նիգավան	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	250	գ.Նիգավան	165913	38095	1615
						1	100	գ.Նիգավան	67152	28168	2316
	գ.Կայք	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	400	գ.Կայք	210728	38746	1495
	գ.Սարալանջ	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	250	գ.Սարալանջ	203488	50514	1976
	գ.Լուսագյուղ	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	400	գ.Լուսագյուղ	186683	22688	1697
						1	160	գ.Լուսագյուղ	94357	8139	1627
	գ.Վարդենիս	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	400	գ.Վարդենիս	203488	50514	1976
						1	100	գ.Վարդենիս	61780	33878	2130

					1	100	գ.Վարդենիս	26194	33878	1871
գ.Չքնաղ	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	250	գ.Չքնաղ	121060	11197	2242
գ.Թթուջուր	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	160	գ.Թթուջուր	142367	9280	1898
գ.Ջորագլուխ	Ապարան 110/35/10	10	16000	ք.Ապարան	1	400	գ.Ջորագլուխ	154164	72569	1857
					1	400	գ.Ջորագլուխ	0	0	0
գ.Քուչակ	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	400	գ.Քուչակ	116736	2889	2289
					1	400	գ.Քուչակ	183034	42470	1947
գ.Քուչակ	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Քուչակ	114873	10184	1730
					1	400	գ.Քուչակ	279552	136500	2179
					1	400	գ.Քուչակ	235233	10742	1745
գ.Հարթավան	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Հարթավան	230708	65571	2176
					1	160	գ.Հարթավան	104963	10127	2233
					1	160	գ.Հարթավան	68866	77038	2649
գ.Եղիպատրուշ	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Եղիպատրուշ	228282	22549	1951
					1	250	գ.Եղիպատրուշ	92108	45050	1842
գ.Երնջատափ	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Երնջատափ	118968	28844	1293
					1	100	գ.Երնջատափ	35860	19045	1121
գ.Շողակն	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	160	գ.Շողակն	105138	27998	1877
գ.Ափնագյուղ	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Ափնագյուղ	184081	44325	2218
					1	100	գ.Ափնագյուղ	21296	15060	1521
					1	400	գ.Ափնագյուղ	80462	116031	2438
գ.Ծաղկաշեն	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Ծաղկաշեն	90136	0	2049
					1	250	գ.Ծաղկաշեն	141066	23264	2313
					1	100	գ.Ծաղկաշեն	34332	0	1561
գ.Արագած	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	400	գ.Արագած	255423	116805	2241
					1	400	գ.Արագած	149119	37864	2193
					1	400	գ.Արագած	353809	38960	2474
					1	400	գ.Արագած	280961	0	2422
գ.Շենավան	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Շենավան	211079	15800	2069
					1	250	գ.Շենավան	86368	11361	2399
					1	400	գ.Շենավան	257545	6728	2363
գ.Վարդենուտ	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	63	գ.Վարդենուտ	80398	0	1869
					1	400	գ.Վարդենուտ	223988	21222	2240
					1	160	գ.Վարդենուտ	144300	3562	2775
գ.Արայի	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Արայի	161811	38086	1305
					1	100	գ.Արայի	62643	23879	1648

Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշված է որպես հզորությունների գումար՝

- կոմունալ-կենցաղային պահանջներ, հասարակական, կուլտուր-կենցաղային շինություններ, հանգստի օբյեկտներ, արտաքին լուսավորություն,
- արտադրական օբյեկտների բեռնվածություններ:

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հաշվարկները կատարվել են ըստ հեռանկարային բնակչության քանակի:

Համաձայն ՇՆևԿ 2.07.01-89-ի՝ գյուղական բնակչության համար մեկ մարդու էլեկտրաէներգիայի սպառման տարեկան խոշորացված ցուցանիշը 950 կվտ.ժամ է, տարվա օգտագործվող ժամերի քանակը՝ 4100 ժամ, քաղաքային բնակչության համար համապատասխանաբար՝ 1700 կվտ/ժամ և 5200 ժամ:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի էլեկտրամատակարարման հեռանկարային կարիքները բավարարելու համար պահանջվող առավելագույն հզորությունների, ինչպես նաև այդ համայնքներում ներկայումս առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

Բնակավայրերի հեռանկարային պահանջվող առավելագույն հզորություններն ու առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

N	Բնակավայրերի անվանումները	Հեռանկարային Բնակչության քանակը (մարդ)	Մեկ մարդու համար պահանջվող էլ. Էներգիայի քանակը (կվտ.ժամ /տարի)	Էլ. Էներգիայի գումարային ծախսը (հազ. Կվտ.ժամ/տարի)			Տարվա օգտագործվող ժամերի քանակը (ժամ)	Պահանջվող առավելագույն հզորությունը (կՎԱ)	Առկա Տրանսֆորմատորային ընդհանուր հզորությունը (կՎԱ)
				Բնակչ.	Արտադր. 15 %	Կորուստ 30 %			
1	Ք. Ապարան	6554	1700	11141.4	1671.2	3342.4	5200	3106.7	6720
2	Արագած	4330	950	4113.1	617.0	1233.9	4100	1454.6	1600
3	Արայի	726	-//-	689.7	103.4	206.9	-//-	243.9	350
4	Ափնագյուղ	695	-//-	660.4	99.1	198.1	-//-	233.6	750
5	Եղիպատրուշ	808	-//-	768.1	115.2	230.4	-//-	271.6	500
6	Երնջատափ	647	-//-	614.5	92.2	184.3	-//-	217.3	350
7	Թթուջուր	415	-//-	394.0	59.1	118.2	-//-	139.3	160
8	Լուսագյուղ	956	-//-	908.1	136.2	272.4	-//-	321.1	560
9	Ծաղկաշեն	727	-//-	690.7	103.6	207.2	-//-	244.3	600
10	Կայք	659	-//-	625.9	93.9	187.8	-//-	221.4	400
11	Հարթավան	1052	-//-	999.0	149.8	299.7	-//-	353.3	570

12	Ջորագլուխ	280	-//-	266.5	40.0	80.0	-//-	94.2	800
13	Նիգավան	801	-//-	760.8	114.1	228.2	-//-	269.0	350
14	Շենավան	2086	-//-	1981.3	297.2	594.4	-//-	700.7	900
15	Շողակն	180	-//-	171.4	25.7	51.4	-//-	60.6	160
16	Չքնաղ	217	-//-	205.9	30.9	61.7	-//-	72.8	250
17	Ջրամբար	198	-//-	188.1	28.2	56.4	-//-	66.5	
18	Սարալանջ	256	-//-	243.5	36.5	73.0	-//-	86.1	250
19	Վարդենիս	828	-//-	786.9	118.0	236.1	-//-	278.3	600
20	Վարդենուտ	1113	-//-	1057.5	158.6	317.3	-//-	374.0	623
21	Քուչակ	2443	-//-	2320.9	348.1	696.3	-//-	820.8	1450

Տրանսֆորմատորների առկա և հաշվարկային հզորությունների համեմատությունը ցույց է տալիս, որ բոլոր բնակավայրերում ներկայում առկա տրանսֆորմատորային ենթակայաններն ունեն բավարար պահուստային հզորություններ՝ էլեկտրաէներգիայի հեռանկարային պահանջարկը բավարարելու համար:

Շահագործվող ՀԷԿ-երը

Հիդրոէներգետիկան համարվում է վերականգնվող էներգետիկայի կարևորագույն ճյուղ, և այն ողջ աշխարհում համարվում է այլընտրանքային, էկոլոգիապես մաքուր ու բնապահպանական առումով քիչ ռիսկային:

ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի 836-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության էներգետիկական անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թթ. միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը»: Վերոգրյալ հայեցակարգով Հայաստանի համար հրամայական է համարվել էներգիայի վերականգնվող աղբյուրների լայնածավալ օգտագործումն ու լիակատար ներառումը երկրի վառելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ, որի ապահովման համար վերոգրյալ ծրագիր-ժամանակացույցով նախատեսվել են նաև հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) կառուցման միջոցառումներ: ՀՀ տարածքում արդեն գործում է 169 փոքր ՀԷԿ (ՓՀԷԿ), իսկ շուրջ 60-ը գտնվում են կառուցման փուլում: Ներկայում ՓՀԷԿ-երն արտադրում են ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի պահանջարկի շուրջ 10 %-ը, ինչը գալիք տասնամյակի ընթացքում աճելու միտում է ունենալու:



ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն ներկայումս մարզում

էլեկտրաէներգիա են արտադրում 9 փոքր ՀԷԿ-եր: Ստորև աղյուսակում տրված են դրանց տվյալները.

Արագածոտնի մարզում գործող ՀԷԿ-երը

N	Անվանումը	Դրվածքային հզորությունը	Հաշ. ճնշումը
1	«Երևան Ապարան» Ջր. ՀԷԿ	6x500+2x600=4200	100.0
2	«Արագած-1» փոքր ՀԷԿ	2x630=1260	164.0
3	«Ամբերդ ՀԷԿ-1» փոքր ՀԷԿ	3x850+1x1000=3550	123.1
4	«Գեղարոտ» փոքր ՀԷԿ	1x800+1x1100+1x1600=3500	307.4
5	«Ամբերդ ՀԷԿ-2» փոքր ՀԷԿ	2x25+2000=7000	262.1
6	«Կոշ» փոքր ՀԷԿ	1x1400+1x500=1900	93.1
7	«Օշէներգո»	2x250=500	17.5
8	«Նիգավա»	4x1250=5000	124.58
9	«Ամբերդ ՀԷԿ-3» փոքր ՀԷԿ	4x710=2840	279.2
Ընդամենը		29.750 Մվտ	

01.07.2017փթ. ՀՀ ՀԾԿՀ-ի կողմից տրված լիցենզիաների համաջայն կառուցվում են ևս երկուսը.

N	Անվանումը	Դրվածքային հզորությունը	Հաշ. ճնշումը
1	«Լուսարփի»	992	50.0
2	«Ալպիական»	2550	226.8

Սակայն ՀՀ ՓՀԷԿ-երի գործունեության արդյունքում արդեն իսկ ի հայտ են եկել մի շարք խնդիրներ և խոչընդոտներ, որոնք մեծացնում են ՓՀԷԿ-երի ռիսկայնությունը բնապահպանական տեսանկյունից: ՓՀԷԿ-եր կառուցելիս գետերի էկոլոգիային հսկայական վնաս է հասցվում, քանի որ դրանք խախտում են գետերի ջրային և ջերմային ռեժիմները, խոչընդոտում են ձկների բազմացմանը, նպաստում են գետերի ծանծաղացմանը:

- Գործադիրը նոր կանոններ է սահմանում ՓՀԷԿ-երի կառուցման համար: Նոր ՓՀԷԿ-ի կառուցման համար ՋԹ չի տրամադրվի, եթե այն նախատեսվում է կառուցել այն գետերի վրա՝ որոնցում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր,
- որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է,
- որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:

Կարգելվի ՓՀԷԿ-երի կառուցումը Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում, գետերի հոսքի ձևավորման տարածքներում, գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ, անտառային տարածքներում, որոնք հատվելու են շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելիս, բացառությամբ պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

Մշակվել է նաև «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար արգելված՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝

էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվի փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար արգելված գետերի ցանկը», որի մշակման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30.1-ին հոդվածի 3-րդ մասը և ՀՀ վարչապետի 2020 թվականի հունվարի 20-ի N 57-Ա որոշման 1-ին կետը: Նոևյն բաժնում ավելացնել նաև՝ գետերի համար բնապահպանական ելքի չափաքանակի սահմանումն իրականացվելու է 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 927-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ կառավարության 25 հունվարի 2018 թվականի N 57-Ն որոշման պահանջներով:

Որպես օրինագծի հիմնավորում նշված է. «Վերջին տարիներին փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման ընթացքում առաջացել են էկոլոգիական ու սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը էական վնաս է հասցնում բնությանը, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց նկատվում է կենսաբազմազանության կորուստ, վտանգվում են Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակները, գետերը ծանրաբեռնվում են դերիվացիոն խողովակներով և հայտնվում ճգնաժամային վիճակում»:

2.1.5. Գազամատակարարում

Ըստ “Գազպրոմարմենիա” ՓԲԸ-ի 26.03.2020 թ. N02-23/1399 գրությամբ տրամադրված տեղեկատվության՝ Արագածոտն-1-ում ներառված բնակավայրերից գազաֆիկացված չեն միայն Եղիպատրուշ, Թթուջուր, Զորագլուխ և Ջրամբար բնակավայրերը: Ապարան քաղաքը գազաֆիկցված է 85 տոկոսով, գյուղական մյուս բնակավայրերը ևս գազաֆիկացված են մասնակի:

Բնակավայրերի տարածքում գազամատակարարումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ միջին և ցածր:

Ստորև աղյուսակում տրված են բնակավայրերի գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի վերաբերյալ տեխնիկական տվյալներ և գազասպառման վերաբերյալ քանակական ցուցանիշներ

Բնակավայրերի գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի վերաբերյալ տեխնիկական տվյալներ և գազասպառման վերաբերյալ քանակական ցուցանիշներ

N	Բնակավայրի անվանումը	Սնուցման աղբյուր հանդիսացող գազատարի				ԳԲԿ-ի տեղակայման վայրը	Գկկ, ՊԳԿԿ-ների քանա-կը	Գազաֆիկացման աստիճանը	Բաժա-նորդ-ների քանա-կը	Գազասպառման տարեկան քանակը 2019թ. դրությամբ Կոմունալ կենցաղային և արտադրական մ³
		Ճնշումը	Վերգետ-նյա կմ	Ստոր-գետնյա կմ	Տրամա-գիծը					
1	Ք. Ապարան	մ/ճ	1.395	40.338	108-325	Սպիտակ	9	85	1705	5963850
2	Արագած	մ/ճ	4061	0.942	57-160	Սպիտակ	4	34	304	284812
3	Արայի	մ/ճ	0.1311	-	89	Սպիտակ	1	26	48	36584
4	Ափնագյուղ	մ/ճ	0.120	0.753	110.133	Սպիտակ	1	55	83	4534975
5	Եղիպատրուշ	-	0	0	0	-	0	0	0	0
6	Երնջատափ	մ/ճ	9.845	0.037	160,108-159	Սպիտակ	1	78	135	71553
7	Թթուջուր	-	0	0	0	-	0	0	0	0
8	Լուսագյուղ	մ/ճ	0.895	5.682	108-159	Սպիտակ	1	65	150	90577
9	Ծաղկաշեն	մ/ճ	1.424	1.412	110,89-108	Սպիտակ	1	45	82	87117
10	Կայք	մ/ճ	-	0.790	108-159	Սպիտակ	1	72	119	13877
11	Հարթավան	մ/ճ	0.437	-	89-108	Սպիտակ	1	62	135	106260
12	Ջորագլուխ	-	0	0	0	-	0	0	0	0
13	Նիգավան	մ/ճ	-	1.420	133	Սպիտակ	1	72	119	50297
14	Շենավան	մ/ճ	0.033	-	108-159	Սպիտակ	2	63	263	1128480
15	Շողակն	մ/ճ	2.25		76	Սպիտակ	1	13	36	25369
16	Չքնաղ	մ/ճ	0.918	5.375	108-219	Սպիտակ	1	80	49	45521
17	Ջրամբար	-	0	0	0	-	0	0	0	0
18	Սարալանջ	մ/ճ	-	1.166	89	Սպիտակ	1	79	44	30987
19	Վարդենիս	մ/ճ	0.969	-	76-108	Սպիտակ	2	55	117	82718
20	Վարդենուտ	մ/ճ	0.715	0.508	108-110	Սպիտակ	1	54	117	92960
21	Քուչակ	մ/ճ	1.845	0.184	89-219	Սպիտակ	2	44	264	947954

2.1.5.1. Ջերմամատակարարում

Հայաստանում կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերը տարբեր պատճառներով դադարել են գոյություն ունենալ դեռևս վաղ 2000-ականներին: Վերջին ժամանակահատվածում ավելի փոքր համակարգեր են սկսել կառուցվել առանձին կամ խումբ նորակառույց բազմաբնակարան շենքերի ջեռուցման և տաք ջրի պահանջարկն ապահովելու համար, սակայն դրանք որևէ էական կշիռ ընդհանուր պահանջարկի կառուցվածքի մեջ չունեն:

Արագածոտն-1 միկրոռեգիոնում ներառված թվով 21 բնակավայրերից գազաֆիկացված չեն միայն 4-ը: Դիտարկվող տարածաշրջանում ջեռուցման և տաք ջրի ստացումը հիմնականում իրականացվում է անհատական ջեռուցման կաթսաների կամ վառարանների միջոցով՝ բնական գազով, ինչը միկրոռեգիոնի գազիֆիկացման բարձր աստիճանի արդյունք է:

Գյուղական բնակչության զգալի մասը, հատկապես չգազաֆիկված բնակավայրերում, ջեռուցման նպատակով օգտվում է փայտի կամ աթարի վառարաններից:

Փոքր տոկոս են կազմում արևային ջրատաքացուցիչներից օգտվողները:

2.1.5.2. Գազի հեռանկարային ծախսը

Գազի ընդհանուր պահանջարկի նախնական հաշվարկները կատարելիս հաշվի է առնված բնական գազով ապահովել.

- Բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերի (կրթական, առողջապահական, մշակութային, վարչական) ջեռուցման համար անհրաժեշտ կարիքների բավարարումը:
- Բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ պահանջարկը:
- Արտադրական ձեռնարկությունների ջեռուցման, օդափոխության և տեխնոլոգիական կարիքների համար պահանջարկը:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված հաշվարկների (ըստ ՇՆՁ IV-12.101-04) ցուցանիշները.

Գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված ցուցանիշներն ըստ բնակավայրերի[26]

N	Բնակավայրերը	Հեռանկարային բնակչությունը	Գազի հեռանկարային տարեկան պահանջարկը հազ. մ^3
1	Ք. Ապարան	6554	1966.140
2	Արագած	4330	952.512
3	Արայի	726	159.720
4	Ափնագյուղ	695	152.944
5	Եղիպատրուշ	808	177.870
6	Երնջատափ	647	142.296
7	Թթուջուր	415	91.234

[26] *Միջինացված ցուցանիշներում ներառված են կոմունալ-կենցաղային, հասարակական և այլ կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների գազասպառման պահանջը*

8	Լուսագյուղ	956	210.298
9	Ծաղկաշեն	727	159.962
10	Կայք	659	144.958
11	Հարթավան	1052	231.352
12	Ձորագլուխ	280	61.710
13	Նիգավան	801	176.176
14	Շենավան	2086	458.832
15	Շողակն	180	39.688
16	Չքնաղ	217	47.674
17	Ջրամբար	198	43.560
18	Սարալանջ	256	56.386
19	Վարդենիս	828	182.226
20	Վարդենուտ	1113	244.904
21	Քուչակ	2443	537.482
Ընդամենը			6237.924

Ըստ կատարված մոտավոր հաշվարկների, Արագածոտն-1 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան ընդհանուր պահանջարկը կկազմի մոտ 6.2 մլն մ^3:

Նախագծային առաջարկություններ

- Էլեկտրական համակարգի արդիականացում, վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխան:
- Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:
- Համակարգերի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:
- Հին փայտյա հենասյուների փոխարինում նոր, բետոնե սյուներով:
- Արտաքին լուսավորության նախատեսում բոլոր փողոցներում:
- Բնակավայրերի տարածքով անցնող բարձր լարման հոսանքալարերի անվտանգության գոտիների առանձնացում, դրանց օգտագործման սահմանափակումների, ռեժիմների սահմանում:
- Բոլոր բնակավայրերի գազաֆիկացում:
- Բնակավայրերի վարչական, հասարակական, կրթական, առողջապահական, արտադրական օբյեկտների ջեռուցումը նախատեսել լոկալ կաթսայատների, կամ անհատական գազի կաթսաների միջոցով: Անհատական տների ջեռուցումը նախատեսվում է ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգերով՝ հիմնականում փոքր հզորության անհատական գազի կաթսաներով կամ վառարաններով: Տաք ջրի ստացումը՝ գազային կամ արևային ջրատաքացուցիչների, սննդի պատրաստումը՝ գազօջախների միջոցով:
- Գազի արդյունավետ և անվտանգ շահագործման նպատակով անհրաժեշտ է գազամատակարարման ներտնային ցանցի տեխնիկական վիճակի ապահովում:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարաններում բնական գազ ունենալը մշտապես մարտահրավեր է հանդիսանալու մարդկանց կյանքի և գույքի անվտանգության ապահովման տեսանկյունից, ջերմամատակարարման և տաք ջրի արտադրության առումով անհատական ջեռուցման կաթսաներին այլընտրանք կարող են հանդիսանալ արևային ջրատաքացուցիչները և էներգիայի սեփական կարիքների արտադրության համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերը:

2.1.5.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ

➢ 21-րդ դարի սկզբին ողջ աշխարհը գնում է հանքային ռեսուրսների խիստ տնտեսման և միաժամանակ այլընտրանքային էներգիայի աղբյուրների հայտնաբերման ուղղությամբ: Ընդ որում որոշ զարգացած երկրներ վաղուց են անցել այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման պրակտիկային ոչ միայն տնտեսական, այլև՝ բնապահպանական դրդապատճառներով:

Հայաստանի Հանրապետությում արտադրվող էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրներ համարվում են ատոմակայանը և ջերմային էլեկտրակայանները: Եթե հաշվի առնենք, որ ջերմակայանները աշխատում են գազով, ինչը ներկրվող էներգետիկ ռեսուրս է և կախվածություն է առաջացնում արտաքին աշխարհից, ապա Էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրի՝ ատոմակայանի, աշխատանքի դադարեցման արդյունքում ողջ հանրապետությունը կարող է կանգնել էներգետիկ սովի առջև:

Հաշվի առնելով մարզի կլիմայական պայմանները՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան:

Արևային ճառագայթմամբ աշխատող համակարգերի անվնաս ու անաղմուկ տեխնոլոգիայի հուսալիությունը, բաղադրամասերի երկարակեցությունը հաստատվել են տարիների ընթացքում և սկզբնական մեծ ներդրումները, որոնք պահանջվում են արևային համակարգերի գործարկման համար, արդարացնում են իրենց, ինչով էլ հենց հիմնավորվում է դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Որպես առավելություն հարկ է նշել նաև, որ արևային կոլեկտորների կիրառման համար առանձին տարածքներ հարկավոր չէ զբաղեցնել, քանի որ դրանք կարելի է տեղադրել անմիջապես շենքերի տանիքներին:

Հաշվի առնելով, որ ածխաջրածնային վառելիքը տարեցտարի թանկանում է, ուստի այլընտրանքային էներգետիկայի զարգացումն ավելի ձեռնտու է:

Արեգակնային էներգիան անսպառ և հուսալի աղբյուր է, որը տալիս է էներգետիկ անկախություն և չի աղտոտում շրջակա միջավայրը:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերի տեղակայման նպատակով արդեն իսկ իրականացվում են որոշ ծրագրեր, մասնավորապես՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» մասնակցությամբ Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում իրականացվում է «Էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ տարբեր համայնքներում արդեն իսկ տեղադրվել են թվով 2896 ջրատաքացուցիչներ:

Հայաստանի կառավարությունը նախատեսում է աստիճանականորեն ընդլայնել այսպիսի ծրագրերի իրականացումը, խրախուսելով որ յուրաքանչյուր շինություն ունենա ջեռուցման և տաք ջրի արտադրության իր անհատական համակարգը՝ հիմնված վերականգնող էներգետիկ ռեսուրսների վրա:

Ըստ ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ.) նախատեսվում է վերականգնվող էներգետիկայի ներուժի

առավելագույն օգտագործում, որը, հաշվի առնելով դրանց՝ նվազագույն ծախսումներով էլեկտրաէներգիայի արտադրական հզորությունների զարգացման պլանի մաս կազմելու հանգամանքը, հանդիսանում է էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկը: Արևային կայանների կառուցումը, հանդիսանալով տնտեսապես ամենաշահավետը Հայաստանի պարագայում, հաշվի առնելով առկա ռեսուրսները և այս տեխնոլոգիայի զարգացման միտումները ողջ աշխարհում, կլինի գերակա մնացած տեսակների նկատմամբ՝ հաշվի առնելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները:

Սույն թվականի նոյեմբերի մեկի դրությամբ ցանցին է միացված մինչև 500 կՎտ հզորության 1640 արևային ինքնավար կայաններ՝ ընդհանուր 25.9 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Ներկա զարգացման տեմպերը թույլ են տալիս կանխատեսելու, որ մինչև 2023 թվականը օրենքով սահմանված սահմանափակումների ուժի մեջ մտնելը դրանց ընդհանուր դրվածքային հզորությունը կհասնի 100 ՄՎտ-ի:

ՀՀ կառավարությունը նպատակ ունի մինչև 2026 թվականները արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասցնել 10%-ի, ինչը նշանակում է, որ կունենանք 1.2 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրանք արևային կայաններց, ինչի համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր 700 ՄՎտ արևային կայանների դրվածքային հզորություններ՝ ներառյալ ինքնավար կայանները:

Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում բջջային կապն ապահովում են՝ «UCOM», «ՄՏՍ Հայաստան» և «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությունները: Մարզի բնակավայրերը 98%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով (օպտիկամանրաթելային և եթերային-շարժական): Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Քարտեզ 4. ՀՀ Արագածոտնի մարզի բջջային օպերատորների ծածկույթի քարտեզը:

Միկրոռեգիոնի տարածքում վերոնշյալ ընկերություններին պատկանող բջջային կայանների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներառված է նախագծի Հավելվածներ փաթեթի Հավելված 8-ում /գաղտնի/:

Մարզի 114 բնակավայրերում գործում է «Հայփոստ» ՓԲԸ մասնաճյուղերը, ապահովելով մարզի 100% ծածկույթը:

Արագածոտնի մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածքային բաժինների կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 92% ծածկույթը: Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, ինչպես նաև Աշտարակում՝ կաբելային

«ԱշտարակԷլիտTV» տեղական ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքն ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում:

Հեռարձակվում է նաև «Հանրային ռադիոն», որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Աղբահանություն

Մարզում գույքագրված աղբավայրերի թիվը 136 է, գործող հիմնական աղբավայրերի թիվը՝ 11, փակված աղբավայրերի թիվը՝ 124, փակման ենթակա աղբավայրերի թիվը ՝ 1:

Ըստ մարզպետարանի տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող տարածաշրջանի բնակավայրերի աղբահանությունն իրականացվում է համայնքապետարանի կողմից և հավաքված աղբը տեղափոխվում է համայնքի վարչական տարածքում գործող աղբավայր:

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի 17 համայնքների աղբահանությունն իրականացնում է «ԷԿՈ-ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն: Հավաքված աղբը տեղափոխվում է Սասունիկ համայնքի վարչական տարածքում գտնվող նոր աղբավայր:

Մարզի տարածքում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման և փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում «Էկոլոգիա ՎԿՀ-ի» ՍՊԸ-ն, որը մարզի և հանրապետության այլ վայրերի բժշկական կազմակերպություններից՝պայմանագրային սկզբունքով հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասազերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նար վիրահատություններից առաջացած թափոնները:

Կոշտ կենցաղային թափոնների համար թվով 59 համայնքներում կատարվել է հողհատկացում, սակայն փաստացի գործում է 9 աղբավայր: Աղբահանությունը մասնագիտացված բեռնատարներով իրականացվում է միայն քաղաքային բնակավայրերում, մասնակի կերպով, իսկ գյուղական բնակավայրերում միայն հարմարեցված տեխնիկական միջոցներով /ինքնաթափեր, լաֆետներ, այլ/:

Թալինի, Ապարանի և Ծաղկահովիտի տարածաշրջանների համայնքներում աղբահանությունն իրականացվում է համայնքապետարանների կողմից և հավաքված աղբը տեղադրվում է իրենց համայնքների վարչական տարածքներում գործող աղբավայրում:

Թալինի, Ապարանի և Ծաղկահովիտի տարածաշրջաններում նոր կենտրոնացված աղբավայրերի տեղադրման վայրերի ուսումնասիրություն է կատարվել՝ հետագայում կենտրոնացված աղբավայրեր կառուցելու համար:

Մարզում գույքագրված 136 աղբավայրերից 11-ն ընտրվել են որպես հիմնական աղբավայրեր, որոնք սպասարկելու են հարակից համայնքներին, իսկ մնացած 125 աղբավայրերը փակված է: Ստորև ներկայացված է 11 հիմնական աղբավայրերի ցանկը.

ՀՀ Արագածոտնի մարզի 11 հիմնական աղբավայրեր				
համայնք/բնակավայր	Աղբավայր/ աղբանոց	Տարածքը, հա	Սպասարկվող բնակավայրը	Աշխարհագրական դիրքը
Սասունիկ	աղբավայր	8.0	Աշտարակ	Համայնքի վարչական տարածքից հարավ-արևելք, հեռավորությունը բնակավայրից 5 կմ, Սասունիկ-Երևան ճանապարհի հարակից
			Օշական	
			Ոսկեհատ	
			Ոսկևազ	
			Վ.Սասունիկ	
			Աղձք	
			Բյուրական	
			Օրգով	
			Ագարակ	
			Սասունիկ	

			Տեղեր	տարածքում
			Անտառուտ	
			Փրպի	
			Բազմաղբյուր	
			Ղազարավան	
			Կարբի	
			Օհանավան	
			ՈՒշի	
			Արտաշավան	
			Սաղմոսավան	
Նոր Եդեսիա	աղբավայր	0.5	Ավան	Համայնքի վարչական տարածքից հյուսիս-արևմուտք, հեռավորությունը բնակավայրից 1 կմ, համայնք տանող ճանապարհի հարակից տարածքում
			Արագածոտն	
			Արուճ	
			Դպրեվանք	
			Լեռնարոտ	
			Կոշ	
			Նոր Ամանոս	
			Նոր Եդեսիա	
			Շամիրամ	
			ՈՒջան	
			Կաքավաձոր	
			Օթևան	
			Դիան	
			Ագարակավան	
Թալին	աղբավայր	0.1	Թալին	Համայնքի վարչական տարածքից հյուսիս-արևելք, հեռավորությունը բնակավայրից 1 կմ, Երևան-Գյումրի հին ճանապարհի հարակից տարածքում
			Դաշտադեմ	
			Դդմասար	
			Կարմրաշեն	
			Ակունք	
			Ոսկեթաս	
Արտենի	աղբավայր	1.0	Արտենի	
			Արագածավան	
			Գետափ	
			Թլիկ	
			Լուսակն	
Թաթուլ	աղբավայր	0.07	Էաէուլ	Համայնքի վարչական տարածքից արևմուտք, հեռավորությունը բնակավայրից 4 կմ, Թաթուլ-Հացաշեն հին ճանապարհի հարակից տարածքում
			Հակո	
			Կանչ	
			Արևուտ	
			Հացաշեն	
			Սորիկ	
			Ցամաքասար	
			Նոր Արթիկ	
			Զարինջա	
			Սուսեր	
Մաստարա	աղբավայր	0.5	Մաստարա	Համայնքի

			Գառնահովիտ Ջովասար Ծաղկասար	վարչական տարածքից հյուսիս-արևմուտք, հեռավորությունը բնակավայրից 2 կմ, Երևան-Գյումրի հին ճանապարհի հարակից տարածքում
Կաթնաղբյուր	աղբավայր	0.3	Կաթնաղբյուր Իրինդ Եղնիկ Ներքին Բազմաբերդ Ներքին Սասնաշեն Շղարշիկ Վերին Բազմաբերդ Վերին Սասնաշեն Դավթաշեն Աշնակ Մեծաձոր Պարտիզակ	Համայնքի վարչական տարածքից հհարավ-արևելք, հեռավորությունը բնակավայրից 1 կմ, Կաթնաղբյուր-Դավթաշեն հին ճանապարհի հարակից տարածքում
Ապարան/Շենավան/	աղբավայր	0.7	Արագած Արայի Ափնագյուղ Եղիպատրուշ Երնջատափ Ծաղկաշեն Հարթավան Շողակն Շենավան Ջրամբար Վարդենուտ Քուչակ	Համայնքի վարչական տարածքից հյուսիս-արևելք, հեռավորությունը բնակավայրից 4 կմ, Ապարանի ջրամբար տանող ճանապարհի հարակից տարածքում
Ապարան	աղբավայր	5.5	Ապարան Թթուջուր Լուսագյուղ Ջորագլուխ Կայք Նիգավան Չքնաղ Սարալանջ Վարդենիս	Համայնքի վարչական տարածքից հյուսիս-արևմուտք, հեռավորությունը բնակավայրից 4 կմ, Ապարան-Նիգավան տանող ճանապարհի հարակից տարածքում
Ալագյազ	աղբավայր	2.0	Ալագյազ Ծիլքար Ավշեն	Համայնքի վարչական տարածքից

			Ճարճակիս	հյուսիս-արևելք, հեռավորությունը բնակավայրից 1 կմ, Երևան-Վանաձոր տանող ճանապարհի հարակից տարածքում
			Միրաք	
			Շենկանի	
			Ջամշլու	
			Ռյա-Թազա	
			Սիփան	
			Գեղարոտ	
			Միջնատուն	
			Մելիքգյուղ	
			Լեռնապար	
Գեղադիր	աղբավայր	3.0	Բերքառատ	Համայնքի վարչական տարածքից հյուսիս-արևելք, հեռավորությունը բնակավայրից 2 կմ, Ալագյազ-Արթիկ տանող ճանապարհի հարակից տարածքում
			Գեղադիր	
			Գեղաձոր	
			Սաղունց	
			Ծաղկահովիտ	
			Կանիաշիր	
			Հնաբերդ	
			Նորաշեն	
			Վարդաբլուր	

Առաջարկություն

Աղբահանության աշխատանքների բարեփոխման նպատակով նպատակահարմար է մարզում ստեղծել ժամանակակից չափանիշներին համապատասխան երկարաժամկետ և հեռանկարային, տարածաշրջանային աղբավայր՝ իր բոլոր ենթակառուցվածքներով, որը նպաստավոր պայմաններ կստեղծի աղբի վերամշակման արտադրություն հիմնելու համար:

Մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ նպատակահարմար է այն կազմակերպել և իրականացնել միասնական օպերատորի ինստիտուտ ստեղծելու միջոցով, որի շրջանակներում ստեղծվելիք կառույցը կարող է հենված լինել ՛՛Պետություն-մասնավոր՛՛ փոխգործակցության վրա: Այն կարող է լինել միջհամայնքային ընկերություն, որի միջոցով կլուծվի մարզի համայնքներում աղբի կուտակման, տեղափոխման և միասնական կանոնավոր շահագործվող աղբավայրում տեղադրման խնդիրը: Պետական հիմնարկը և ընկերությունը պայմանագրային սկզբունքով, ըստ պարտավորությունների և պատասխանատվության, կկազմակերպեն աղբավայրի շահագործումն /աղբի հավաքում, տեղափոխում, տեղադրում և անհրաժեշտության դեպքում՝ վերամշակում/ ու բնակիչներից ծառայությունների մատուցման վարձավճարների գանձումը: Ըստ որում առաջին պարտականությունը կկատարի մասնավոր ընկերությունը, երկրորդը՝ պետական հիմնարկը /տվյալ դեպքում համայնքապետարանը/: Արդյունքում կբարելավվի ծառայությունների մատուցման որակը և կբարձրանա սպասարկման մակարդակը, կլուծվի աշխատանքների կազմակերպման գործընթացի տեխնիկական հագեցվածության խնդիրը, կստեղծվեն նոր աշխատատեղեր, կբարձրանա աղբահանության եկամուտների ծավալը և ոլորտում ներգրավված աշխատակիցների աշխատավարձը:

Մարզում աղբահանության ոլորտի աշխատանքները աստիճանաբար կկազմակերպվեն ինքնաճախսածածկման սկզբունքով:

Կանոնակարգ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի համաձայն համայնքի պարտադիր խնդիրների մեջ է մտնում համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում հանրային ծառայությունների մատուցումը տեղական ինքնակառավարման մարմինների կարևոր գործառույթներից մեկն է և սովորաբար ներառված է համայնքային զարգացման ծրագրերում, սակայն համայնքապետարանները օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված չեն կարողանում լիարժեք իրականացնել այս ոլորտներում իրենց գործառույթները: Ուստի, այս ոլորտում առանցքային խնդիրների վերհանումը, դրանց վերաբերյալ հանրային քաղաքականությունների մշակման, բարելավման աջակցությունը և մոնիթորինգի իրականացումը համայնքների զարգացման համար ունեն ռազմավարական նշանակություն:

ՀՀ ԱԺ-ի կողմից 06.23.2011թ. ընդունած և 06.08.2011թ. ուժի մեջ մտած «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» 4 օրենքը կարգավորվում է ՀՀ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները: Համաձայն սույն օրենքի՝ աղբահանությունը բնակավայրերում գոյացող աղբի հավաքումը, պահումը, փոխադրումը և աղբավայրում տեղադրումն է: Իսկ սանիտարական մաքրումը համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, բակերի, մայթերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումն է աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

Թափոնների կառավարման ոլորտում տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավահարաբերությունները կարգավարվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով, ընդունված 24.11.20141, որի հոդված 9-ի համաձայն թափոնների գործածության ոլորտում առողջապահության բնագավառի կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝ թափոնների գործածությանը վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում մարդու առողջության համար անվտանգության պահանջների մշակումը եւ թափոնների գոյացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման եւ թաղման ընթացքում մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով սանիտարական եւ հակահամաճարակային կանոնների ու նորմերի, հիգիենիկ նորմատիվների մշակումը եւ դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Նույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանվում է թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում՝

ա) իրականացնում է հսկողություն աղբահանման նկատմամբ.

բ) կազմում է տարածքների սանիտարական մաքրման սխեմաները.

գ) իրականացնում է չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը).

դ) կազմակերպում է ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցությունը:

Թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են 07.05.2002 ընդունված «Տեղական ինքնակառավարման

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ իրավասություններ, այդ թվում համաձայն օրենքի 88-րդ հոդվածի աղբահանության եւ սանիտարական մաքրման կազմակերպման համար համայնքի ավագանին կարող է սահմանել համայնքի բնակիչների կողմից բյուջե մուտքագրվող վճարներ: «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը եվ թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 22 դեկտեմբերի 2009թ. հրամանի համաձայն սահմանված են հետևյալ նորմատիվային պահանջները՝

▪ Կոնտեյներները տեղադրում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում կոնտեյներները տեղադրում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա: Հանգստի գոտիներում, լողափերում կոնտեյներները տեղադրվում են 3500-4000մ2 մակերեսին 1 կոնտեյների հաշվարկով:

▪ Կոնտեյներները տեղադրում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցի մոտեցման համար հարմար դիրքով, ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով հարթակների վրա: Հարթակը երեք կողմից ունենում է պատնեշ կամ մետաղյա դեկորատիվ ցանկապատ: Կոնտեյներները չեն տեղադրում փողոցների մայթերի և սիզամարգերի վրա:

▪ Կոնտեյներները ունենում են կափարիչներ և աղբով լցվում են ծավալի երկու երրորդից ոչ ավելի մակարդակով:

▪ Կոնտեյներները հեշտությամբ նույնականացվում են և պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը: Կոնտեյներները ունենում են մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ:

▪ Սպառման թափոնները փոխադրում են աղբատար փոխադրամիջոցներով, որոնց կառուցվածքը բացառում է (փակ թափքերով) շրջակա միջավայրի աղտոտումը: Աղբատար փոխադրամիջոցները հեշտությամբ նույնականացվում և պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը:

▪ Աղբատար փոխադրամիջոցի կառուցվածքը ապահովում է աղբի խտացումը, ունենում է աղբաջրերը հավաքող համակարգ, կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք և/կամ կոնտեյներները լվանալու համակարգ:

▪ Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է կոնտեյներների հարակից տարածքի աղբը: Աղբահանության ժամանակ տեղափոխում են նաև աղբակույտերը և տերևակույտերը, դրանց այրումը արգելվում է:

▪ Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից: Աղբանոթների համար սահմանվում են հետևյալ իրավական կարգավորումները՝

▪ Փողոցներում, այգիներում, պուրակներում, կայարաններում, շուկաներում, տոնավաճառներում, ստորգետնյա անցումներում, հրապարակներում, լողափերում տեղադրվում են աղբանոթներ, որոնք ունեն ոչ ավելի, քան 100 լ տարողություն:

▪ Փողոցներում աղբանոթների միջև ապահովվում է ոչ ավելի, քան 70 մ հեռավորություն: Պուրակներում, զբոսայգիներում աղբանոթների քանակությունը որոշվում է 800 մ² մակերեսին 1 աղբանոթի հաշվարկով: Գլխավոր զբոսուղիներում, ինչպես նաև լողափերում աղբանոթների միջև հեռավորությունը ընդունվում է 40 մ-ից ոչ ավելի: Լողափերում աղբանոթները տեղադրվում են ջրեզրից 10 մ հեռավորության վրա, 1600 մ² մակերեսին 1 աղբանոթի կամ 50 մարդու համար՝ 1 աղբանոթի հաշվարկով:

▪ Աղբանոթները ունենում են մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ և տեղափոխման համար ապամոնտաժման հնարավորություն: Աղբանոթները լվացվում և ախտահանվում են (18 կետում նշված ախտահանիչ լուծույթներով) ամիսը 1 անգամ՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից:

▪ Աղբանոթների տեղադրումը պարտադիր է մետրոյի, ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, ստորգետնյա անցումների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգիներում, պուրակներում, կայարաններում, շուկաներում, տոնավաճառներում, լողափերում, հանգստի գոտիներում և այլն: Սպառման թափոնների մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, թաղմանը եվ վնասազերծմանը ներկայացվող հիգիենիկ պահանջների համաձայն՝ սպառման թափոնների թաղումը (տեղադրումը) և վնասազերծումը իրականացվում է հատուկ հատկացված տեղերում՝ սպառման թափոնների աղբավայրերում (պոլիգոններում) կամ վնասազերծման գործարաններում: Նոր կառուցվող, վերակառուցվող սպառման թափոնների աղբավայրերին (պոլիգոններին) ներկայացվում են հետևյալ հիգիենիկ պահանջները՝

▪ Սպառման թափոնների պոլիգոնների հողամասի ընտրման ժամանակ հաշվի են առնվում հողի հիդրոերկրաբանական առանձնահատկությունները: Սպառման թափոնների պոլիգոնները չեն տեղակայվում ճահճակալած հողերում, ջրամատակարարման, հանքային ջրերի աղբյուրների սանիտարական պահպանման I, II և III գոտիներում, ջրատարների սանիտարական պահպանման շերտագծում, առողջարանների սանիտարական պահպանման I և II գոտիներում, ջրատար հորիզոնների ջրերի մակերևույթ դուրս գալու վայրերում, հատուկ պահպանվող տարածքներում, զբոսայգիների, պուրակների, այգիների և այլ կանաչ տարածքներում:

▪ Սպառման թափոնների պոլիգոնի հիմնական մասը զբաղեցնում է սպառման թափոնների պահեստավորման տեղամասը: Պահեստավորման տեղամասի ողջ տարածքով նախատեսվում է փոսորակի կառուցում՝ սպառման թափոնների շերտերով կուտակման, խտացման և հողով ծածկման համար: Հողը պահեստավորվում է փոսորակի շրջագծով: Փոսորակի հատակը լինում է գրունտային ջրերի մակարդակից առնվազն 1 մ բարձր:

▪ Ստորգետնյա ջրերը աղտոտումից զերծ պահելու նպատակով սպառման թափոնների պոլիգոնի պահեստավորման տեղամասը ապահովվում է կուտակված սպառման թափոնների խտացված ծավալի խորությունում առաջացող կեղտաջրերի հեռացման համակարգով: ▪

Աղբի կուտակման տեխնոլոգիական գործընթացը կարող է ներառել կուտակված սպառման թափոնների խտացված ծավալի խորությունում առաջացող գազերի հեռացման հնարավորությունը՝ 16 բացառելով խտացված սպառման թափոնների ինքնայրումը /սպառման թափոնների խոնավացում, հողի շերտով մեկուսացում, խտացում/:

▪ Սպառման թափոնների պոլիգոնը ունենում է տնտեսակենցաղային գոտի, կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, տեխնիկական ջրի պահուստային տարողություն:

▪ Տնտեսակենցաղային գոտում տեղակայվում են աշխատող անձնակազմի վարչա-կենցաղային շենքերը իրենց սանիտարակենցաղային սենքերով (հանդերձարան, ցնցուղարան, սննդի ընդունման սենք):

▪ Սպառման թափոնների պոլիգոնի տարածքը շրջապատից մեկուսացվում է ցանկապատով:

▪ Աղբատար փոխադրամիջոցների թափքերը և անվադողերը լվացվում և ախտահանվում են յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո:

▪ Սպառման թափոնների պոլիգոնում թափոնները չեն այրում: Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները հետևյալն են՝

▪ Շենքերի բակերը, միջբակային տարածքները, փողոցները, ճանապարհները, հրապարակները, զբոսայգիները, պուրակները ենթարկում են սանիտարական մաքրման, իսկ ամռան ամիսներին փողոցները ենթակա են նաև ջրման: Բնակավայրերը պահվում են պատշաճ սանիտարական վիճակում՝ սպառման թափոններից, շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող աղբից, կենցաղային ավելորդ իրերից, փոշու կուտակումներից զերծ:

▪ Բնակավայրերի շենքերի բակերի, միջբակային տարածքների, փողոցների, ճանապարհների հետիոտնի համար նախատեսված և երթևեկելի մասերը, հրապարակների, զբոսայգիների հետիոտնի մասերը մաքրվում են ձյունից և սառույցից:

ԳԼՈՒԽ 3
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

3.1. Ներածություն

Գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը, տարածքային պլանավորման միջոցով, համայնքների համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման ու կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է:

ՀՀ Ագածոտնի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ Արագածոտն-1 համակցված տարածքի ինժեներա-երկրաբանական նախապատրաստումը, տարերային և տեխածնին վտանգավոր երևույթներից պաշտպանությունը (այդ թվում՝ երկրաշարժից), ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներա-տեխնիկական միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների իրականացում կարգավորվում են համապատասխան իրավական ակտերով, համայնքային և մարզային մակարդակներում մշակված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններով և այլ նորմատիվա-իրավական ակտերով, որոնք նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորմանը:

Համակցված տարածքներում ներառված համայնքներում արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսումն ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների համաձայն (2002

թվականի հունիսի 12-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս, Կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշում:

Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներում ներառված են Ապարան քաղաքը, ինչպես նաև Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ, Ծաղկաշեն, Կայք, Հարթավան, Ջորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ, Քուչակ /թվով 21/ բնակավայրերը:

1) Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված և հարակից տարածքներում /պալեոերկրաշարժերի, արխեոերկրաշարժերի, պատմական և գործիքային/ ուժեղ երկրաշարժերի հիմնական պարամետրերի՝ ուժի (մագնիտուդ), ժամանակի և տեղի (էպիկենտրոնի կոորդինատների) մասին.

Պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ ՀՀ և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.:

- **Պալեոսպիտակի Ք.ա. 18943թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ =40.84N, =44.24E, մագնիտուդը՝ M=7.1
- **Պալեոսպիտակի Ք.ա. 15565թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ =40.84N, =44.24E, մագնիտուդը՝ M=7.1
- **Անիի 03.10.1022թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.50°N, λ=43.57°E, մագնիտուդը՝ Ms=6.0
- **Անիի 1036թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.50°N, λ=43.57°E, մագնիտուդը՝ Ms=6.1
- **Անիի 1064թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.50°N, λ=43.57°E, մագնիտուդը՝ Ms=7.0
- **Անիի 28.11.1131թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.50°N, λ=43.57°E, մագնիտուդը՝ Ms=6.0
- **Անիի 1319թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.52°N, λ=43.57°E, մագնիտուդը՝ Ms=5.9
- **Ծաղկաձորի 08.10.1827թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.63°N, =44.53°E, մագնիտուդը՝ M=6.5
- **Սպիտակի 07.12.1988թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.83°N, =44.28°E, մագնիտուդը՝ M=7.1

Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներում ներկայումս էլ հնարավոր առավելագույն սեյսմիկ վտանգը կապված է Ծաղկաձորի վերոնշյալ երկրաշարժի օջախի հետ:

2) Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված և հարակից տարածքներում ակտիվ խզվածքների սեյսմիկ պոտենցիալի (առավելագույն ներուժի) մասին.

Պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ ՀՀ և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.:

- **Գառնիի ակտիվ խզվածքի GF1 սեգմենտ՝** սեյսմիկ պոտենցիալը՝ Mw_{max}=7.1 /*ըստ պալեոսեյսմաբանական տվյալների*/, M_{max}=6.9 /*ըստ գործիքային սեյսմաբանական տվյալների*/, $Mw_{միջ}$=7.1: Սպիտակի 07.12.1988թ. երկրաշարժը տեղի է ունեցել նշված սեգմենտի գոտում:

• **Գառնիի ակտիվ խզվածքի GF2 սեգմենտ՝** սեյսմիկ պոտենցիալը՝ Mw_{max}=6.9 /*ըստ պալեոսեյսմաբանական տվյալների*/, M_{max}=6.5 /*ըստ պատմական տվյալների*/, $Mw_{միջ}$=7.3: Ծաղկաձորի 08.10.1827թ. երկրաշարժը տեղի է ունեցել նշված սեգմենտի գոտում:

Սպիտակի 07.12.1988թ. և Ծաղկաձորի 08.10.1827թ. երկրաշարժերը տեղի են ունեցել Գառնիի ակտիվ խզվածքային գոտում, որի սեյսմիկ պոտենցիալը՝ M_{max}=7.1 /*ըստ պալեոսեյսմաբանական տվյալների*/, $Mw_{միջ}$=7.3:

• **Ախուրյանի ակտիվ խզվածքի (AhF) AhF2 սեգմենտ՝** սեյսմիկ պոտենցիալը՝ Ms_{max}=7.0 /*ըստ պատմական տվյալների*/, $Mw_{միջ}$=6.6: Սույն տեղեկատվության 2-րդ կետի 1-ին ենթակետում բերված Անիի երկրաշարժերը տեղի են ունեցել նշված սեգմենտի գոտում:

• **Երևանյան խզվածք (YeF)՝** սեյսմիկ պոտենցիալը՝ M_{max}=5.5 */ըստ գործիքային սեյսմաբանական տվյալների/*, $Mw_{միջ}$=6.8:

• **Սարդարապատի խզվածք (SaF)՝** սեյսմիկ պոտենցիալը՝ M_{max}=4.6 /*ըստ գործիքային սեյսմաբանական տվյալների*/, $Mw_{միջ}$=7.0:

Նշենք, որ Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների համար առավել վտանգավոր են Գառնիի ակտիվ խզվածքի GF1 ($Mw_{միջ}$=7.1) և GF2 ($Mw_{միջ}$=7.3) սեգմենտները, որոնք նախապատմական, պատմական և գործիքային ժամանակահատվածներում հարուցել են սույն տեղեկատվության 1-ին կետի 1-ին ենթակետի 1-ին, 2-րդ, 8-րդ և 9-րդ պարբերություններում նշված 6.5-7.1 մագնիտուդի պալեո, պատմական և գործիքային երկրաշարժերը:

Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքները բնութագրվում են սեյսմիկ վտանգի բարձր մակարդակով. գտնվում են α_{max} = 0.4g և 0.5g (0.4g-ն մոտավորապես համապատասխանում է 9 բալ, 0.5g՝ 10 բալ ըստ MSK–64 սեյսմիկ ինտենսիվության 12-բալանոց սանդղակի) առավելագույն հորիզոնական արագացումների արժեքներով սեյսմիկ գոտիներում՝ համաձայն նկար 1-ում տրված 2018թ. ՀՀ տարածքի 1:500000 մասշտաբի սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) քարտեզի *(պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ ՀՀ և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.)*:

3) Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներում ներառված որոշ բնակավայրերի ցանկն ըստ սեյսմիկ գոտիների.

Պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ ՀՀ և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.:

Բնակավայրի անվանումը	**Սեյսմիկ գոտին**
Արագած	II
Ապարան	II
Քուչակ	II

3.2. Արագածոտնի մարզի Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներին սպառնացող բնածին վտանգների վերաբերյալ

	Բնակավայրեր	Ողեղ քամի	Հեղեղ	Սել	Ցրտահարություն	Քարաթափում	Սողանք	Երաշտ	Կարկուտ
1	ք.Ապարան	V		V	V	V		V	V
2	Արագած	V	V	V				V	V
3	Արայի	V	V	V				V	V
4	Ափնագյուղ	V						V	V

5	Եղիպատրուշ	V					V	V	V
6	Երնջատափ	V				V	V	V	V
7	Թթուջուր	V						V	V
8	Լուսագյուղ	V	V	V			V	V	V
9	Ծաղկաշեն	V	V	V				V	V
10	Կայք	V						V	V
11	Հարթավան	V						V	V
12	Ջորագլուխ	V						V	V
13	Նիգավան	V	V	V				V	V
14	Շենավան	V		V				V	V
15	Շողակն	V						V	V
16	Չքնաղ	V						V	V
17	Ջրամբար	V						V	V
18	Սարալանջ	V						V	V
19	Վարդենիս	V	v	V				V	V
20	Վարդենուտ	V	v	V				V	V
21	Քուչակ	V	v	V				V	V

3.3. Արագածոտնի մարզի Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների քաղաքացիական պաշտպանության գոյություն ունեցող և նախատեսվող կառույցների և միջոցառումների վերաբերյալ

Արագածոտնի մարզի բնակավայրերում բնակչության պատսպարումն ամբողջական կազմակերպելու, արագ կառուցվող թաքստոցներ կառուցելու, նպատակով անհրաժեշտ է նախատեսել հետևյալ տարածքները՝

- Արայի գյուղ՝ 380,0մ² մակերեսով՝ թվով 18 թաքստոց,
- Եղիպատրուշ՝ 200,0մ² մակերեսով՝ թվով 10 թաքստոց,
- Թթուջուր՝ 60,0մ² մակերեսով՝ թվով 3 թաքստոց,
- Լուսագյուղ՝ 420,0մ² մակերեսով՝ թվով 17 թաքստոց,
- Ծաղկաշեն՝ 120,0մ² մակերեսով՝ թվով 6 թաքստոց,
- Շենավան՝ 1000,0մ² մակերեսով՝ թվով 25 թաքստոց,
- Ջրամբար՝ 100,0մ² մակերեսով՝ թվով 4 թաքստոց,
- Շողակն՝ 30,0մ² մակերեսով՝ թվով 2 թաքստոց,
- Վարդենիս՝ 480,0մ² մակերեսով՝ թվով 14 թաքստոց,
- Քուչակ՝ 15000,0մ² մակերեսով՝ թվով 34 թաքստոց,

Արագածոտնի մարզի Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներին սպառնացող տեխնածին վտանգների և պայթյունավտանգ, հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վերաբերյալ

- <<Հալավարի>> և <<Ծիլքարի>> ջրամբարների պատվարների փլուզման դեպքում Ապարան քաղաքը և Վարդենիս բնակավայրը կհայտնվեն ջրածածկման գոտում:

Պայթյունավտանգ, հրդեհապայթյունավտանգ օբյեկտներ

- Ապարան քաղաքում առկա են 2 ԱԳԼՃԿ-ներ և 2 ԲԼԿ-ներ, Արագած բնակավայրում 1 ԲԼԿ, Ափնագյուղ բնակավայրում առկա են 2 ԱԳԼՃԿ-ներ և 1 ԲԼԿ, Շենավան բնակավայրում 1 ԱԳԼՃԿ և 1 ԲԼԿ, Քուչակ բնակավայրում 1 ԱԳԼՃԿ:

Արագածոտնի մարզի տարածքներին բնորոշ վտանգավոր բնական երևույթներից են՝ երկրաշարժը, կարկուտը, տեղումները (≥ 30մմ/12 ժամվա ընթացքում), քամիները, սելավը, ցրտահարությունը և երաշտը:

Արագածոտնի մարզի վերոնշյալ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներում նոր գազագեներատորային հակակարկտային կայանների տեղադրում առաջիկայում չի նախատեսում:

ԳԼՈՒԽ 4
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ

Գոտևորման նախագիծը բնակավայրի գլխավոր հատակագծի իրագործման հիմնական ծրագրային քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված և համաձայնեցված է բնակավայրի գլխավոր հատակագծում նախանշված գաղափարների, զարգացման ուղղությունների, կառուցապատման ինտեսիվության և բնակչության տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ:

4.2. Գոտևորման համակարգի կառուցվածքը

Գոտևորման նախագիծը հիմնվում է՝ընդունված գոտի-թույլատրելի օգտագործման ձև՝ սկզբունքի վրա: Նախագծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակները, որոնց համապատասխանող քաղաքաշինական գործունեության իրականացման համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ, համաձայնեցումներ չեն նախատեսվում: Սահմանվել են թույլատվության հետևյալ ձևերը՝

թույլատրվում է

չի թույլատրվում

Պահանջները տարբերակվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են յուրաքանչյուր գոտու ներսում:

4.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը

Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են՝

• Բնակավայրի տարածքում կատարվող վերակառուցողական, շինարարական, վերականգնողական, վերանորոգման, բարեկարգման, կանաչապատման աշխատանքների, ինչպես նաև հողերի և առանձին օբյեկտների նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականացնելու և պահպանելու համար:

• Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կարգավորում են նաև շենքերի և շինությունների ներսում կատարվող գործունեության այն հետևանքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկին, վնասակար արտանետումներին, տրանսպորտային և հետիոտն հոսքերի մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տարբեր տեսակներին վերաբերող հատուկ պահանջների սահմանումը և այլն:

• Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման և հողամասերի օգտագործման ինտենսիվության, շենքերի և շինությունների հարկայնության, դրանց արտաքին ճակատների ձևավորման, հարդարանքի, գովազդների, ցուցանակների, փոքր ճարտարապետական ձևերի տեղադրման համար:

4.4. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր

Սահմաններ

Նախագծվող տարածքի սահմանները համապատասխանում են գլխավոր հատակագծում առանձնացված գոտիավորման տարածքի սահմաններին: Տարածքի ընդհանուր մակերեսը 125 հա:

Գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները

Նախագծվող գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները որոշվում են հետևյալ կերպ՝

Եթե գոտևորման շրջանի սահմանը համընկնում է հողամասի սահմանի հետ, ապա այդ հողամասի սահմանը համարվում է գոտիավորման շրջանի սահմանը,

Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում է փողոցով, ճեմուղով, երկաթգծի ուղիներով, գետով կամ այլ գծային ծրագիծ ունեցող տարածքային միավորներով, ապա գոտիավորման շրջանի սահման է համարվում դրանց առանցքային գիծը,

Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում և կիսում է ինչ որ մի առանձին տիրույթ, ապա գոտևորման շրջանի սահմանը որոշվում է գծագրում բերված համապատասխան եզրագծով, կամ հեռավորության նշումով:

4.5. Գոտևորման նախագծի կազմը

Գոտևորման նախագծի կառուցվածքային հիմնական բաղկացուցիչներն են գոտիավորման գծագրական ու տեքստային մասերը:

Նախագիծը ներառում է

Գործառական գոտևորումը՝ հողատարածքների առանձնացումն ըստ գործառական օգտագործման՝ սահմանելով թույլատրելի օգտագործման տեսակները, ամրագրելով ընդհանուր տարածքի մակերեսի նկատմամբ վերջիններիս սահմանային չափաբաժինները:

Ծավալատարածական գոտևորումը՝ ամրագրելով կառուցապատման բնույթն արտահայտող ցուցանիշները (կառուցապատման խտություն, շենքերի, շինությունների բարձրություն, կառուցապատված և կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն), տվյալ տարածքում թույլատրելի չափաբաժինների հաշվառմամբ:

Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները

Հողերը գոտևորված են ըստ հիմնական և օժանդակ գոտիների:

Հիմնական գոտիներ*

Հիմնական է համարվում հողերի գոտևորումը ըստ նպատակային նշանակության և ըստ քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ինժեներաերկրաբանական և այլ բնույթի սահմանափակումների:

Միևնույն տարածքային միավորին համապատասխանում է միայն մեկ հիմնական գոտի:

Տարածաշրջանի գոտևորման տարածքում ըստ նպատակային նշանակության առանձնացված են հետևյալ հիմնական գոտիները.

Բնակավայրերի հողեր,

Գյուղատնտեսական հողեր,

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր,

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր,

Հատուկ պահպանվող տարածքների հողեր,

Հատուկ նշանակության հողեր:

Օժանդակ գոտիներ[27]

Օժանդակ է համարվում հողամասերի գոտիավորումը՝ ըստ գործառական նշանակության, հողատեսքերի և թույլատրված օգտագործումների, ինչպես նաև հողամասերի ծավալատարածական գոտիավորումը՝ ըստ կառուցապատման չափորոշիչների:

4.6. Թույլատրելի օգտագործման ձևերի աղյուսակ

Ստորև տրված են հողերի օժանդակ գոտիավորումը և թույլատրելի օգտագործման ձևերը[28]

Գործառնական գոտու անվանումը	Թույլատրելի օգտագործման ձևերը
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ	
Գյուղատնտեսական գոտի	
Վարելահողեր Բազմամյա տնկարկներ (Խաղողի այգի, Պտղատու այգի) Խոտհարքներ Արոտավայրեր	Հիմնական օգտագործման ձևեր՝ Գյուղատնտեսական գործունեություն Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ՀՀ բոլոր համայնքներում՝ կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով: ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N498 որոշման 2-րդ կետի ա ենթակետում նշված համայնքներում՝ մինչև 150 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով բնակելի և մինչև 300 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր ու շինություններ, ընդ որում, միայն այն հողամասերի վրա, որոնց մակերեսը առնվազն մեկ հեկտար է:
Այլ հողատեսքեր	Չի սահմանվում

27 Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք՝ ընդունված ՀՀ ԱԺ կողմից 05.05.98 թ., վավերացված ՀՀ նախագահի կողմից 26.05.98 թ., Գլուխ VI, հոդված 14 :

28 Ծանոթություն. Յուրաքանչյուր գոտու վրա տարածվում են նաև լրացուցիչ սահմանափակումներ, կապված քաղաքի հատակագծային կառուցվածքում առանձնակի կարևորություն ունեցող գոտիների (համապատասխանաբար պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման և առավելագույն ընկալման հնարավորությունների բացահայտման, հասարակական կենտրոնի, քաղաքային մուտքի ազդեցության տարածման) առաջադրած պահանջների, սանիտարահիգիենիկ կամ բնապահպանական պահանջների բավարարման (բնական լանդշաֆտի արժեքավոր ձևերի վերականգնման, էկոհամակարգերի տարբեր խախտումների փոխհատուցման գործընթացների կանոնակարգման, ինժեներական նախապատրաստման համալիր միջոցառումների պարտադիր իրականացման ապահովման հետ պայմանավորված կառուցապատման սահմանափակումների և այլն), տարբեր տիպի կառուցապատումների, հաղորդակցության ուղիների, դրանց կառուցվածքների և ինժեներական ենթակառուցվածքների ազդեցության, սանպահպանման կամ օտարման գոտիների ապահովման պահանջների հետ (ծածկող գոտիներ):

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	
Բնակելի կառուցապատման գոտի	
Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (տնամերձերով) ԲՆԿԳ-1/1 Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (առանց տնամերձերի) ԲՆԿԳ-1/2	Հիմնական օգտագործման ձևեր ` առանձնատներ, բլոկացված բնակելի տներ, քոթեջներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, բուժական կաբինետներ, բուժական կենտրոններ, մինչև 200 մ2 ընդհանուր մակերեսով մարզական պարապմունքների տարածքներ, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, մինչև 30 տեղ ունեցող հյուրանոցներ և հյուրատներ, վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, փոքր հզորության անհատական կաթսայատներ մինչև 5ՀԿ(ժամ), մսուր- մանկապարտեզներ, փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ (մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերեսով): սեփական օգտագործման և անհատական ձեռնարկատիրության տեսակներ՝ սանիտարական և հակահրդեհային նորմերի պահպանմամբ, տնամերձ հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, ընտանի կենդանիների բուծման համար շինություններ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի, բլոկացված տների դեպքում՝ ոչ ավելին քան 1 մեքենայի համար),

Ամառանոցային (այգեգործական) կառուցապատման գոտի ԲՆԿԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ առանձնատներ, ամառանոցներ, քոթեջներ, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 30 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ: Սեփական հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, անհատական բաղնիքներ, սառնաններ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի,
Միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի ԲՆԿԳ-3	Հիմնական օգտագործման ձևեր՝ Բազմաբնակարան բնակելի շենքեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ Նախադպրոցական հաստատություններ, Մանրածախ առևտրի կետեր, խանութներ, Սրճարաններ, ռեստորաններ, Գրասենյակային տարածքներ, Ատամնաբուժական կենտրոններ, Ավտոտնակներ, ավտոկայանատեղեր, Կանաչ տարածքներ, պուրակներ, Մանկական խաղահրապարակներ, Սպորտային հարթակներ
Բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտի ԲՆԿԳ-4	
Հասարակական կառուցապատման գոտի	
Համայնքային նշանակության հասարակական կառուցապատման գոտի Վարչական օբյեկտների գոտի ՀԿԳ-1/1 Մշակութային և ժամանցային օբյեկտների	Հիմնական օգտագործման ձևեր՝ վարչական, ֆինանսական, փոստի, կապի, կրթական, գիտահետազոտական. նախադպրոցական,

գոտի ՀԿԳ-1/2 Կրթական գոտի ՀԿԳ-1/3 Բուժական հաստատությունների գոտի ՀԿԳ-1/4 Սպորտային օբյեկտների գոտի ՀԿԳ-1/5	բուժական, սպորտային, մշակութային և կրոնական հաստատություններ, ոստիկանության տեղամասեր, հրշեջ ծառայություններ, գրասենյակային տարածքներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝ ռեստորաններ, սրճարաններ, բառեր, պանդոկներ, խորտկարաններ: մանրածախ առևտրի կետեր, խանութներ, կրպակներ:
Բնակչության սոցիալական սպասարկման և առևտրի գոտի ՀԿԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ հյուրանոցներ, հյուրատներ, հյուրանոցատիպ քոթեջային համալիրներ, գյուղական տներ հասարակական սննդի օբյեկտներ, առևտրի կենտրոններ, խանութներ, մթերային և արտադրական ապրանքների շուկաներ, տոնավաճառներ, կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ, հանրային բաղնիքներ, սաունաներ, զուգարաններ, աղբարկղների տեղադրման հարթակներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ
Վառելիքի և տրանսպորտային միջոցների սպասարկման օբյեկտների գոտի ՀԿԳ-3	Հիմնական օգտագործման ձևեր՝ բենզալցակայաններ, գազալիցքավորման կետեր, ավտոտեխսպասարկման կետեր, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ գրասենյակներ, սպասասրահներ, մանրածախ առևտրի կետեր, զուգարաններ
Խառը կառուցապատման գոտի	
Խառը կառուցապատման	Հիմնական օգտագործման ձևեր՝

գոտի (բնակելի, հասարակական, արտադրական) ԽԿԳ-1 Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտ.) ԽԿԳ-2	Բնակելի, գրասենյակային, առևտրի և սպասարկման, մասնավոր ուսումնական և նախադպրոցական մակերեսներով բազմաֆունկցիոնալ շենքեր, կլիրակնօրյա դպրոցներ, բուժական կաբինետներ, վարչական, ֆինանսական և այլ քաղաքային նշանակության ծառայությունների շենքեր և գրասենյակներ, կենցաղ-սպասարկման, spa- ծառայությունների օբյեկտներ, ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ, մշակութային օբյեկտներ (թատրոններ, կինոթատրոններ, գրադարաններ, ցուցասրահներ և այլ), առևտրի մեծ և փոքր օբյեկտներ, հանրային սննդի օբյեկտներ: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, ավտոկանգառներ, տրանսպորտի հավաքակայաններ և կառույցներ, փոքր ճարտարապետական ձևեր, փակ լողավազաններ, տաղավարներ, կրպակներ:
Ընդհանուր օգտագործման գոտի	
Փողոցներ, հրապարակներ, հանրային նշանակության այլ բաց տարածքներ ՀՕԳ-1	Հիմնական օգտագործման ձևեր՝ Ճանապարհային եզրային կանաչապատում, արտաքին լուսավորություն, գովազդ, փոքր ճարտարապետական ձևեր, հրապարակներում՝ շատրվաններ, ջրավազաններ, ծաղկանոցներ և բարեկարգման այլ տարրեր: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքի ստորգետնյա գծեր, Ստորգետնյա ավտոկայանատեղեր

Զբոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ ՀՕԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ այգեպուրակային կանաչ տարածքներ, վերջիններիս բնորոշ խաղաձևերի սրահներ, ջրավազաններ, խաղահրապարակներ, բացօթյա սպորտի- և բեմա- հարթակներ, բացօթյա սրճարաններ, հրաձգարաններ, տաղավարներ, զրուցարաններ, ճարտարապետական փոքր ձևեր: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, զուգարաններ.
Այլ հողեր	
Բնակավայրի ռեզերվային և անօգտագործելի հողեր	Չի սահմանվում
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ	
Արդյունաբերական օբյեկտների գոտի	
Ծանր արդյունաբերության օբյեկտների գոտի Թեթև արդյունաբերության օբյեկտների գոտի ԱԳ-1/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ արդյունաբերական համալիրներ, գործարաններ, արտադրական ձեռնարկություններ, արհեստագործական արտադրամասեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով քոթեջային տիպի բնակելի տներ, մանրածախ առևտրի կետեր, տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, հանրային սննդի կետեր
Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի	
Անասնապահական օբյեկտներ Ա-2/1 Սպանդանոցներ Ա-2/2 Գյուղատնտեսական մթերքի վերամշակման գործարաններ, արտադրամասեր Ա-2/3	Հիմնական օգտագործման ձևեր՝ անասնապահական ֆերմաներ և համալիրներ, թռչնաբուծարաններ, ձկնաբուծական ֆերմաներ անասնագոմեր, սպանդանոցներ ջերմոցներ

Ջերմոցներ Ա-2/4 Ձկնաբուծարաններ Ա-2/5	Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, անասնաբուժական լաբորատորիաներ, պահեստներ, ցանկապատնեշներ, փարախներ, անձրևապաշտպանիչ ծածկեր, տնտեսական այլ շինություններ:
Պահեստարանների գոտի Ա-3	
Ընդերք օգտագործման գոտի Ա-4	Հիմնական օգտագորման ձևեր՝ ընդերք օգտագործման տարածքներ, հումքի վերամշակման արտադրամասեր, արտադրական այլ շենքեր և շինություններ պահեստային տարածքներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, ավտոտրանսպորտի, շինարարական և արդյունահանման տեխնիկայի և մեխանիզմների համար նախատեսված հարթակներ, ծածկեր, ավտոտնակներ, տնտեսական այլ շինություններ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով քոթեջային տիպի բնակելի տներ, պահակակետեր, անցակերեր:
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ	

Էներգետիկայի օբյեկտների գոտի Էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի ԷՆՐԳ-1/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ Էլեկտրակայաններ՝ ատոմային, ջերմային, հիդրոէլեկտրակայաններ, փոքր ՀԷԿ-եր տրանսֆորմատորային ենթակայաններ օդային և մալուխային գծեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական շենքեր, ավտոկայանատեղեր, պահեստային տարածքներ, պահակակետեր և անցակետեր, մանրածախ առևտրի կետեր, խանութներ, հասարակական սննդի օբյեկտներ, (*) Բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային և մալուխային գծերի համար էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի չի առանձնացվում, դրանք կարող են անցկացվել մի շարք գործառնական գոտիներով (գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդհանուր օգտագործման, ռեզերվային, պահուստային և այլ՝ պահպանելով նորմատիվային հեռավորությունները բնակելի թաղամասերից, կրթական օբյեկտներից, պատմության և մշակույթի հուշարձաններից և այլն)
Գազամատակարարման օբյեկտների գոտի ԷՆՐԳ-1/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ ավտոմատ գազաբաշխիչ կայաններ (ԱԳԿ), գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳՊԿ), բարձր ճնշման գազատար խողովակաշար գազի ստորգետնյա պահեստարաններ
Կապի օբյեկտների գոտի ԷՆԹԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային), կապի ավտոմատ հեռախոսային կայաններ, բջիջային կապի աշտարակներ
Տրանսպորտի օբյեկտների գոտի ԷՆԹԳ-3	Հիմնական օգտագործման ձևեր՝ պետական ավտոմայրուղիներ ճանապարհը սպասարկող օբյեկտներ, ավտոկայանատեղեր, կամուրջներ, թունելներ, երկաթգիծ և երկաթգծի կայարաններ քաղաքացիական ավիացիայի օբյեկտներ՝ օդանավակայաններ, անգարներ, այլ ենթակառուցվածք, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ազատ տնտեսական գոտիներ, օդանավակայաններին, կայարաններին կից հյուրանոցներ, Գրասենյակային և պահեստային տարածքներ
Կոմունալ տնտեսության օբյեկտների գոտի	

Ջրամատակարարման, ջրահեռացման ենթակառուցվածքների օբյեկտներ ԷՆԹԳ-4/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ օրվա կարգավորիչ ջրամբարներ, ջրամատակարարման բաշխիչ հորեր, ջրամատակարարման համակարգի հանգույցներ, կոյուղու ցանցային հորեր, մաքրման կայաններ, ջերմամատակարարման համակարգեր, կաթսայատներ
Աղբավայրերի գոտի ԷՆԹԳ-4/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ աղբավայրեր, աղբի վերամշակման գործարաններ, աղբի տեսակավորման հարթակներ, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ավտոկայանատեղեր պահեստային տարածքներ
Համայնքային և մասնավոր գերեզմանատների գոտի ԷՆԹԳ-4/3	Հիմնական օգտագործման ձևեր՝ գերեզմանոցներ, դիակիզարաններ, Փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ պահակատներ, գրասենյակներ քարի և մետաղի մշակման արվեստանոցներ,
ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	
Բնապահպանական գոտի ՀՊՏ-1/բնպ	Գոտին ներառում է բնության հուշարձաններ, արգելանոցների, ազգային և ծառաբանական զբոսայգիների ու պարկերի, բուսաբանական այգիների, արգելավայրերի (բացառությամբ՝ որսորդական) հողերը: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ պահակատներ, տարածքը սպասարկող անձնակազմի գրասենյակային տարածքներ, անձրևից պաշտպանող թեթև կոնստրուկցիաներով իրականացված տաղավարներ, զուգարաններ, մուտքի տոմսերի և արագ սննդի կրպակներ
Առողջարարական նպատակներով նախատեսված գոտի ՀՊՏ-2/առջ	Հիմնական օգտագործման ձևեր՝ հյուրանոցներ, պանսիոնատային, առողջարանային, քոթեջային, քեմպինգային, այգեպուրակային, սահմանափակ օգտագործման՝ սննդի ծառայություններ, սպորտա- և խաղահրապարակներ, ժամանցային և ռեկրեացիոն բնույթի խաղատեսակների ակումբներ:

Հանգստի համար նախատեսված գոտի ՀՊՏ-3/հնգ	Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, վարսավիրանոցներ, գեղեցկության սրահներ, հասարակական բաղնիքներ, սառնաներ, լվացքատներ, մանրածախ առևտրի կետեր, խանութներ
Պատմամշակութային հուշարձանների գոտի ՀՊՏ-4/պմգ	Գոտին ներառում է հուշարձանների պահպանության պետական ցուցակում ընդգրկված օբյեկտները, բացառությամբ բնակելի, հասարակական, արտադրական նշանակությամբ օգտագործվող շենքերի և շինությունների: Վերջիններիս համար սահմանվում է պահպանության գոտի և կանոնակարգ: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ հուշարձանները սպասարկող աշխատակազմի կացարաններ, թանգարաններ, ճարտարապետական փոքր ձևեր, ավտոտրանսպորտի կայանատեղեր, զբոսաշրջիկներին սպասարկող առաջին անհրաժեշտության օբյեկտներ, հուշանվերների և արագ սննդի կրպակներ
Պետական գերեզմանատների գոտի	Հիմնական օգտագործման ձևեր՝ գերեզմանոցներ, Փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ աշխատակազմի համար նախատեսված շենք/շինություններ արհեստանոցներ, ոչ հիմնական շինություններ, ծածկեր
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	
Հատուկ նշանակության գոտի ՀՆԳ	պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության հողերը և օրենքով պաշտպանվող շենքերի ու շինությունների օգտագործման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:
ՋՐԱՅԻՆ	
Ջրանցքներ ՋԳ-1 Գետեր, գետակներ ՋԳ-2 Լճեր ՋԳ-3 Հիդրոտեխնիկական կառույցներ ՋԳ-4 Ջրամբարներ ՋԳ-5	ջրային օբյեկտներով՝ գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ հիդրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտների համար առանձնացված տարածքները: Ջրային հողերը կարող են օգտագործվել բնակչության խմելու ջրի, կենցաղային, առողջարարական և այլ պահանջների, ինչպես նաև ջրատնտեսային, գյուղատնտեսական, բնապահպան, արդյունաբերական, ձկնատնտեսային, էներգետիկ և այլ պետական ու համայնքային կարիքների բավարարումն ապահովող օբյեկտների շինարարության և շահագործման համար:
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ	

Պահուստային գոտի	համայնքներին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության, օգտագործման իրավունքով չտրամադրված պետական հողերը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով կոնսերվացիայի արդյունքում տնտեսական շրջանառությունից հանված հողամասերը: 2. Պահուստային հողերի կազմում կարող են ներառվել քաղաքաշինական ու հողաշինարարական փաստաթղթերով առանձնացված չօգտագործվող հողերը, ինչպես նաև ավազուտները, ճահիճները և այլ անօգտագործելի հողերը:

Բացի հիմնական գոտիներից սահմանվում են նաև հատուկ սահմանափակումներով գոտիներ՝

է. Հատուկ իրավական ռեժիմով գոտիներ (ՍՊԳ)

/ծանոթություն.- հատուկ իրավական ռեժիմով գոտիները սահմանվում են որպես տարածքների օգտագործման սահմանափակումներ պարունակող գոտիներ և դրանց սահմանները կարող են համընկնել կամ չհամընկնել այլ գոտիների սահմանների հետ/:

Դրանք հանդես են գալիս որպես գոտու հիմնական գործառույթը ծածկող գոտիներ, ուստի կարող են համադրվել հիմնական գոտուն: Որպես այդպիսիք հանդես են գալիս ստորև ներկայացված գոտիները.

Պատմամշակութային ժառանգության օբյեկտների տարածքներ և պահպանական գոտիներ

Սահմանափակումներ.- հողային աշխատանքների, ճարտարապետա-հատակագծային առաջադրանքների և նախագծերի համաձայնեցում հուշարձանների պահպանության լիազոր մարմնի հետ, ըստ անհրաժեշտության՝ պահպանության պարտավորագրի առկայություն, հուշարձանների տեսանելիությունն ապահովող շենքերի և շինությունների տեղադրման և բարձրությունների սահմանափակումներ:

Ջրապահպան գոտիներ

Սահմանափակումներ.- կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հեռացման պոլիգոնների, նավթամթերքների, հանքային պարարտանյութերի, թունաքիմիկատների պահեստների տեղադրում, տրանսպորտային միջոցների կայանում, դրանց տեխնիկական սպասարկման կայանների և վառելիքի լցակայանների տեղադրում:

Ափամերձ պաշտպանական գոտիներ

Սահմանափակումներ.- երկրորդ կետի սահմանափակումները, ինչպես նաև բնակելի նշանակության շինարարություն, անվավոր և թրթուրավոր փոխադրամիջոցներով երթևեկություն:

Հեղեղումների, սողանքների և վտանգավոր այլ երևույթների գոտիներ

Սահմանափակումեր.- նախագծային և շինարարական աշխատանքեր իրականացնելիս՝ ինժեներական պաշտպանության միջոցառումների նախատեսում:

Արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիներ

Սահմանափակումներ.- բնակելի կառուցապատում, մանկական, նախադպրոցական և հարակրթական, ինչպես նաև ուսումնական այլ հաստատություններ, առողջապահության և հանգստի օբյեկտներ, սպորտային կառույցներ, այգիներ, զբոսայգիներ, բանջարանոցներ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գոտիներ

Սահմանափակումներ.-համաձայն բնապահպանական օրենսդրության և համապատասխան պահպանվող տարածքի կանոնադրության:

Հանրային կարիքների համար օրենքով սահմանված սերվիտուտների գոտիներ

Սահմանափակումներ.- գծային ենթակառուցվածքների անվտանգության նորմեր:

Տնամերձ հողամասերի և գյուղատնտեսական հողերի օգտագործման հանձնարարել ի ձևեր



ԱՊՊԱՏՄԱՆ ԳԾԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (3-7 Մ)

ՑԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵԹԵ ՀԱՐԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓԱՎՈՐՆԵՐԸ ԿՑՎԱԾ ՉԵՆ (3-6 Մ)

D ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ ՋՐԱՆՑԻԿ ՕՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ (ՈՐՈՇՎՈՒՄ Է ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՀԱՆՋԻՑ ԵԼՆԵԼՈՎ)

E ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՈՐՈՇՎՈՒՄ Է ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐՈՂ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՊԱՀԱՆՋԻՑ)

F ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՈՐՈՇՎՈՒՄ Է ՀԱՐԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻՋԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇՆՈՒՄԻՑ)



4.7. Գոտիներում թույլատրելի օգտագործման ձևերի ամփոփ աղյուսակ

Պայմանական նշաններ	
Թույլատրվում է	Թ
Չի թույլատրվում	

Անվանում	Գործառնական գոտիներ	ԳՕԳ-1	ԳՕԳ-2	ԲՆԿԳ-1/1	ԲՆԿԳ-1/2	ԲՆԿԳ-2	ԲՆԿԳ-3	ԲՆԿԳ-4	ՀԿԳ-1	ՀԿԳ-2	ՀԿԳ-3	ԽԿԳ-1	ԽԿԳ-2	ԼՕԳ-1	ԼՕԳ-2	ԲԼՈԳ	ԱԳ-1	ԱԳ-2	ԱԳ-3	ԱԳ-3	ԵՆԹԳ-1	ԵՆԹԳ-2	ԵՆԹԳ-3	ԵՆԹԳ-4	ՀՊՏ-1/բնպ	ՀՊՏ-2/առջ	ՀՊՏ-3/հնգ	ՀՊՏ-4/պսմ	ՀՊՏ-5/պմգ	ՀՆԳ	ԱՆՏԳ	ՋԳ	ՊՀՍՏԳ
Բնակելի																																
առանձնատներ				Թ	Թ	Թ	Թ																									
բլոկացված տներ					Թ		Թ																									
քոթեջներ				Թ	Թ																											
մինչև 150 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով բնակելի				Թ	Թ	Թ																										

բազմաբնակարան բնակելի շենքեր							Թ																							
Հյուրանոցային																														
հյուրանոցներ, հյուրատներ, (մինչև 30 տեղ)			Թ	Թ				Թ																						
հյուրանոցներ, հյուրատներ, (առանց սահմանափ)								Թ																Թ						
վարձ. տրվող գյուղ.տներ, քոթեջներ			Թ					Թ																						
պանսիոնատներ, հանգստի տներ								Թ																Թ	Թ					
առողջարանային հաստատություններ																								Թ						
Կրթական և գիտական																														
Նախադպրոցական հաստատություն ներմանկապարտ								Թ																						

եզներ, մանկամսուրներ																														
միջնակարգ դպրոցներ								Թ																						
գեղարվեստական և երաժշտական դպրոցներ								Թ																						
քոլեջներ								Թ																						
Համալսարաններ, ԲՈՒՀ-եր								Թ																						
Ակադեմիայի մասնաշենքեր, գիտահետազոտական ինստիտուտնել								Թ																						
Հետազոտական և այլ լաբորատորիաներ								Թ																						
Բուժական և սոցիալական հաստատություններ																														
հիվանդանոցներ								Թ																						

հոսպիսներ					Թ			Թ																						
վերականգնողական կենտրոններ								Թ																Թ						
ամբուլատորիաներ								Թ																						
պոլիկլինիկաներ								Թ																						
բուժական կաբինետներ, կենտրոններ								Թ																						
ծերանոցներ					Թ			Թ																						
մանկատներ					Թ			Թ																						
Վարչական																														
վարչական շենքեր								Թ								Թ	Թ	Թ	Թ					Թ	Թ	Թ	Թ	Թ				
վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ								Թ																						
փոստատներ								Թ																						

կապի բաժանմունքներ								Թ																							
հրշեջ ծառայություններ								Թ																							
ոստիկանական տեղամասեր								Թ																							
քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
գրասենյակային տարածքներ								Թ																							
ֆինանսական																															
բանկի բաժանմունքներ								Թ																							
այլ ֆինանսական հաստատություններ								Թ																							
Մշակութային, մարզական, այլ հասարակական նշանակության հիմնարկություններ																															
գրադարաններ								Թ																							

տուն-թանգարաններ, ցուցասրահներ								Թ																						
թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ								Թ																						
կինոթատրոններ և թատրոններ								Թ																						
ակումբներ, մշակութայն կենտրոններ								Թ																						
մարզադաշտեր, մարզահամալիրներ								Թ																						
մարզադահլիճներ, սպորտ-ակումբներ և սպորտդպրոցներ								Թ																						
ձիարշավարաններ								Թ																						
բաց և փակ լողավազաններ								Թ																						

հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ																									Թ						
ռեկրեացիոն բնույթի խաղաձևերի սրահներ								Թ																							
մինչև 200 մ2 ընդհանուր մակերեսով մարզական պարապմունքներ ի տարածքներ								Թ																							
խաղադաշտեր, բացօթյա ռեկրեացիոն կառույցներ, անիվավոր չմուշկների, սքեյթի և այլնի համար հարթակներ,								Թ																							
հրաձգարաններ (պնևմոտիրեր)								Թ																							

Կրոնական																														
Եկեղեցիներ								Թ																						
մատուռներ								Թ																						
այլ եկեղեցական հաստատություններ								Թ																						
Հասարակական սպասարկման և առևտրի																														
մինչև 20 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝ ռեստորաններ, սրճարաններ , պանդոկներ և այլն								Թ																						
մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝								Թ																						
ռեստորաններ, սրճարաններ , պանդոկներ և այլն								Թ																						

ռեստորաններ, սրճարաններ (առանց տեղերի սահմանափ.)							Թ																							
բացօթյա սրճարաններ							Թ																							
արագ սննդի կետեր							Թ																							
կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ՝ վարսավիրանոցներ, քիմմաքրման կետեր, լվացքատներ, Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ							Թ																							
առևտրի կենտրոներ							Թ																							

մանրածախ առևտրի կետեր, խանութներ, կրպակներ, դեղատներ								Թ																						
մթերային և արտադրական ապրանքների շուկաներ,								Թ																						
տոնավաճառներ								Թ																						
մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների,								Թ																						
հասարական բաղնիքներ, սառնաներ,								Թ																						

հասարական զուգարաններ								Թ																								
աղբարկղների տեղադրման հարթակներ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
Վառելիքի վաճառակետեր, մասնագիտացված առևտրի օբյեկտներ՝ ավտոպահեստամասեր, շինանյութ, գործիքներ և այլն																																
բենզալցակայաններ										Թ																						
գազալիցքավորման կետեր										Թ																						
ավտոտեխսպասարկման կետեր, արհեստանոցներ										Թ																						
շինարարական նյութերի, գործիքների և ավտոպահեստա-մասերի, քիմիական նյութերի, գյուղատնտեսական և այգեգործական գործիքների,սերմ										Թ																						

երի, տնկիների խանութներ																															
Արտադրական																															
ծանր արդյունաբերության, հանքաարդյունաբերության համալիրներ, գործարաններ															Թ																
փայտի, մետաղի, քարի մշակման արտադրամասեր															Թ																
փայտի, մետաղի, քարի մշակման անհատական արհեստանոցներ															Թ																
թեթև արդյունաբերության գործարաններ, արտադրական ձեռնարկություններ, արհեստագործա															Թ																

կան արտադրամասեր																															
սննդամթերքի արտադրություն																Թ															
անհատական արհեստանոցներ և փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ (մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերեսով):																Թ															
ընդերքօգտագործման տարածքներ																Թ															
Գյուղատնտեսական արտադրության																															
ձկնաբուծական ֆերմաներ																	Թ														
անասնապահական ֆերմաներ և																	Թ														

համալիրներ, անասնագոմեր																															
թռչնաբուծական գործարաններ																	Թ														
գյուղմթերքի վերամշակման գործարաններ՝ կաթնամթերքի, պահածոների և այլ նմանատիպ արտադրություն,																	Թ														
Ջերմոցներ, չորանոցներ, ծխարաններ	Թ																Թ														
մինչև 300 քառ. մետր կառուցապատմա ն ընդհանուր մակերեսով գյուղատնտեսակ ան արտադրական նշանակության շենքեր ու շինություններ	Թ																Թ														

Սառնարաններ, պահեստարաններ																	Թ														
սպանդանոցներ																	Թ														
Տրանսպորտային																															
պետական ավտոմայրուղիներ և ճանապարհը սպասարկող օբյեկտներ,																						Թ									
Ավտոկայաններ, ավտոկայանատեղեր								Թ		Թ												Թ									
կամուրջներ, թունելներ																							Թ								
Երկաթգիծ, երկաթգծի կայարաններ և այլ փոխկապակցված ենթակառուցվածք																							Թ								

քաղաքացիական ավիացիայի օբյեկտներ՝ օդանավակայաններ, անգարներ և այլ փոխկապակցված ենթակառուցվածք,																						Թ									
Օժանդակ շինություններ																															
Տնտեսական շինություններ, խորդանոցներ	Թ		Թ	Թ	Թ																										
կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով	Թ																														
շվաքարաններ, ծածկեր													Թ																		

ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի,			Թ	Թ	Թ	Թ	Թ																								
Ավտոտնակներ, վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղեր			Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ																			
անհատական օգտագործման՝ ամառային խոհանոցներ, զուգարաններ, բաղնիքներ և սառնաներ, տնտեսական շինություններ, արվեստանոցներ և արհեստանոցներ			Թ	Թ	Թ	Թ	Թ																								

Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածք																														
էլեկտրակայաններ՝ ատոմային, ջերմային,																			Թ											
հիդրոէլեկտրակայաններ, փոքր ՀԷԿ-եր																			Թ											
տրանսֆորմատորային ենթակայաններ																			Թ											
էլեկտրականության բարձրավոլտ օդային գծեր																			Թ											
էլեկտրականության բարձրավոլտ մալուխային գծեր																			Թ											
ավտոմատ գազաբաշխիչ կայան (ԱԳԲԿ)																				Թ										
գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳԿԿ)																				Թ										

բարձր ճնշման գազատար խողովակաշար																					Թ										
գազի ստորգետնյա պահեստարաններ																					Թ										
հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային)																						Թ									
հեռահաղորդակցության ցանցերի աշտարակներ																						Թ									
կապի ավտոմատ հեռախոսային կայաններ																						Թ									
օրվա կարգավորիչ ջրամբարներ																							Թ								
ջրամատակարարման բաշխիչ հորեր, հանգույցներ																							Թ								

կոյուղու ցանցային հորեր																							Թ								
Կոյուղու մաքրման կայաններ																							Թ								
Ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուղու) ստորգետնյա խողովակաշարեր																							Թ								
փոքր հզորության լոկալ կաթսայատներ մինչև 5ՀԿ(ժամ)																							Թ								
Ջերմամատակարարման համակարգեր, կաթսայատներ																								Թ							
աղբավայրեր																								Թ							
աղբի վերամշակման գործարաններ																								Թ							

աղբի տեսակավորման հարթակներ																								Թ							
գերեզմանոցներ																								Թ							
դիակիզարաններ,																								Թ							
Ճարտարապետական փոքր ձևեր																															
տաղավարներ, կրպակներ, զրուցարաններ,																											Թ				
նստարաններ,																											Թ				
Հուշարձաններ, կոթողներ																											Թ				
քանդակներ, ցայտաղբյուրներ																											Թ				
																											Թ				
																											Թ				

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

հապավումը և պայմանական նշանը գծագրում	Կառուցապատման տոկոսը, առավելագույնը՝	Անջրանցիկ (սպասարկման) տարածքի մակերեսի տոկոս, այդ թվում կառուցապատման տոկոսը, առավելագույնը՝	Կանաչապատման տոկոս, ջրային մակերեսներ, նվազագույնը	Հարկայնությունը առավելագույնը	Կառուցապատման խտությունը, առավելագույնը՝	Թույլատրելի օգտագործման հիմնական տեսակների և ոչ հիմնական (ուղեկցող) ձևերի	
						հիմնական/ ոչ հիմնական	
ԳՀ							
ԳՕԳ							
ԳՕԳ-1	-	-	փաստացի	-	-		
ԳՕԳ-2	-	-	փաստացի	-	-		
ԳՕԳ-2/1	-	-	փաստացի	-	-		
ԳՕԳ-2/2	-	-	փաստացի	-	-		
ԳՕԳ-3	-	-	փաստացի	-	-		
ԳՕԳ-4	-	-	փաստացի	-	-		
ԳՕԳ-0	-	-	փաստացի	-	-		
ԲՆՀ							
ԲՆԿԳ							
ԲՆԿԳ-1/1	20% (+20% տնտեսական	40%+10%	50%	1-2 վերգետնյա հարկ (նկուղային հարկի	0.4	50/50	

	շինություններ)			և ձեղնահարկի հնարավորություն)		
ԲՆԿԳ-1/2	30%	30%+10%	60%	1-3 վերգետնյա հարկ (նկուղային հարկի հնարավորություն)	0.6	80/20
ԲՆԿԳ-2	20%	20%+20%	60%	1-2 վերգետնյա հարկ (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.4	80/20
ԲՆԿԳ-3	40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	4-5 վերգետնյա հարկ, (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.8/1.2 (վերակա-ռուցման պայման-ներում 1.6)	75/25
ԲՆԿԳ-3	40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	6-9 վերգետնյա հարկ, (նկուղային հարկի)	0.8/1.2 (վերակա-ռուցման պայման-ներում 1.6)	75/25
ԲՆԿԳ-4	40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	9-ից ավելի վերգետնյա հարկ (նկուղային 2 հարկի հնարավորություն)		75/25
ՀԿԳ						
ՀԿԳ-1						
ՀԿԳ-1/1	80%	80%+20%	10% /կառուցապատման կամ սպասարկման		2.4	80/20

			մակերեսների հաշվին			
ՀԿԳ-1/2	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/3	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/4	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/5	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-2	100%	30%	-	-		80/20
ՀԿԳ-3	100%	30%	-	-		80/20
ԽԿԳ						
ԽԿԳ-2[29]	40%	40%+10%	50%	1-3 վերգետնյա հարկ (ճարտարապետական 1-2 ակցենտ՝ հյուրանց-ներ մինչև 8 հարկ) (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.4	50/50
ԸՕԳ						
ԸՕԳ-1	-	-	Չի սահմանվում			
ԸՕԳ-2	7%	7%+23%	70%	1 հարկ	0.07	-
ԲՆՌԳ						
ԲՆՌԳ	-	-	-	-	-	-
ԱՀ						
ԱԳ-1						
ԱԳ-1/1	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգ. պահանջների		
ԱԳ-1/2	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգ. պահանջների		
ԱԳ-2			-			

[29] *-Ջրամբարին հարող հատվածում նախագծով փոփոխված հողամասերի կառուցապատման գիծը կսահմանվի՝ ՀՀ կառավարության 2004 թ. N 255-Ն որոշման 5-րդ հոդվածի պահանջներին համաձայն

ԱԳ-2/1	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/2	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/3	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/4	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/5	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-3	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-4	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹՀ						
ԵՆԹԳ -1						
ԷՆՐԳ -1/1	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԷՆՐԳ -1/2	80% (կետային	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման	ըստ տեխնոլոգիական		

	օբյեկտների համար)		տոկոսի նվազեցման հաշվին	պահանջների		
ԵՆԹԳ -2	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -3	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ-4						
ԵՆԹԳ -4/1	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -4/2	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		80/20
ԵՆԹԳ -4/3	70%	70%+20%	10%			80/20
ՀՊՏՀ						
ՀՊՏ-1/բնպ	-	-	փաստացի			
ՀՊՏ-2/առջ	40%	40%+10%	50%	մինչև 4 հարկ		80/20
ՀՊՏ-3/հնգ	40%	40%+10%	50%	մինչև 4 հարկ		80/20
ՀՊՏ-4/պմհ	փաստացի	-	Չի սահմանվում	1 հարկ	0.05	95/5
ՀՊՏ-5/պմգ	փաստացի	-	Չի սահմանվում	1 հարկ	0.05	95/5
ՀՆՀ						
ՀՆԳ	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			համաձայն առաջա-դրանքի
ԱՆՏՀ						

ԱՆՏԳ-1	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-2	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-3	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-4	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-5	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-6	-	-	-			
ՋՀ						
ՋԳ-1	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՋԳ-2	-	-	փաստացի			
ՋԳ-3	-	-	փաստացի			
ՋԳ-4	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՋԳ-5	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՊՀՍՏՀ						
ՊՀՍՏԳ	-	-	-			

Լրացուցիչ պահանջներ

Բոլոր շենքերը պետք է դրվեն փողոցի կողմից հողամասի սահմանից 3 մ հետ, բացառելով աղմուկի, տհաճ հոտերի կամ վնասակար արտանետումների տարածումը, պահպանելով հրդեհային անվտանգության և վթարաանվտանգության պահանջները:

Առաջին հարկերը թույլատրվում է օգտագործել հասարակական գործառույթների նպատակով: Այս դեպքում շենքերը կարող են դրվել կարմիր գծով, եթե հասարակական գործառույթի մատուցումը չի ստեղծում վթարավտանգ իրավիճակ կից փողոցով երթևեկողների համար, հակառակ դեպքում, շենքերին կից, տնամերձ հողամասի սահմաններում, փողոցի կողմից պետք է նախատեսվի ավտոկայանատեղ 1-2 մեքենայի համար:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Սահմանված են տեղական պայմաններից բխող կանոններ, որոնք պարտադիր են նախագծվող ողջ տարածքում կիրառելու և բոլոր գոտիների համար: Դրանք հիմնականում կարգավորում են կառուցապատման և շահագործման ընթացքում առաջացող միջավայրի համալիր կանոնակարգման խնդիրները, այն է.

Ընդունված սկզբունքներին չհամապատասխանող կառույցների աստիճանական վերափոխման մեխանիզմները,

Բնապահպանական միջոցառումների իրականացումը,

Գոտիավորման նախագծով ներկայացված պահանջների իրականացումը:

1. Շինարարական և վերանորոգման աշխատանքներ

• Բոլոր շինարարական, վերակառուցման, վերականգնման և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

2. Շենքերի ճակատների արտաքին հարդարանք

• Շենքերի ճակատների (փողոցային և բակային) արտաքին հարդարանքի հետ կապված բոլոր շինարարական և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

3. Շինանյութ

• Պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի/շինությունների բնական քարերից կառուցված ճակատային պատերը ներկել կամ երեսապատել արգելվում է:

• Այլ շենքերի համար, նախընտրելի է օգտագործել սև, վարդագույն, մոխրագույն, օխրա (դեղին, կարմիր), սպիտակ երանգների շինանյութեր, որոնք կներդաշնակեն քաղաքի հիմնական կառուցապատմանը:

4. Նկուղներ և կիսանկուղներ

• Բնակելի շենքերի նկուղային և կիսանկուղային հարկերը փողոցի կողմից մեկուսացված մուտքեր չպետք է ունենան:

• Բոլոր շենքերի կիսանկուղների պատուհանների գոգերը մայթից պետք է առնվազն 30 սմ բարձր լինեն:

5. Շենքերի շքամուտքեր

• Շենքերի շքամուտքերի աստիճանները փողոցի կարմիր գծից դուրս չպետք է դրվեն:

6. Տանիքներ

• Լանջավոր տանիքների կիրառման դեպքում դրանց առավելագույն թեքությունը (i) պետք է ընդունել - 0.5:

• Լանջավոր տանիքների գագաթի բարձրությունը պետք է սահմանափակվի կառույցի խորության կեսի չափով:

7. Գովազդ

• Հուշարձաններ չհանդիսացող շենքերին կցված գովազդային վահանակների մակերեսը չպետք է գերազանցի շենքի ճակատային պատի 10 տոկոսը:

• Փողոցներում տեղադրվող առանձին կանգնած գովազդային վահանակները պետք է տեղադրվեն մոտակա կարգավորվող խաչմերուկից առնվազն 50 մ հեռավորության վրա:

8. Ցուցանակներ և անվանատախտակներ

• Փողոցների անվանատախտակները պետք է տեղադրվեն ստանդարտ չափերով՝ միասնական հատուկ նախագծի համաձայն:

• Շենքերի համարների չափերը պետք է ընդունվեն՝

ա) լուսավորությամբ, կլոր՝ տրամագիծը-30սմ

բ) առանց լուսավորության՝ քառակուսի -15 x 15սմ:

Հիմնարկությունների անվանատախտակները և բնակիչների անվանատախտակները կցվում են միայն շքամուտքների դռներին:

9. Փողոցային ցանց

• Խաչմերուկներում պահպանել տեսանելիության եռանկյունները՝ համաձայն ՀՀՇՆ 30-01-2014 նորմերի պահանջների,

• Ավտոտնակների համար հատակացվող հողամասի նվազագույն մակերեսը 20 ք.մ., բաց ավտոկանգառատեղերի համար՝ 25 ք.մ.:

• Կանգառատեղերի համար խորացումները մայթի հաշվին իրականացնել միայն սիզամարգերի և առանձին ծառախմբերի հաշվին՝ տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ թույլտվությամբ, այլ հնարավորությունների բացակայության դեպքում մայթի մեջ գրպանաձև խորացմամբ ավտոկայանատեղերի կազմակերպման դեպքում ապահովել՝

Փողոցային լուսավորություն

• «Փողոցների լուսավորության չափորոշիչները՝ համաձայն ՀՀ գործող շինարարական նորմերիե:

Տրանսպորտի միջոցների կանգառներ

• Տրանսպորտի միջոցների կանգառները պետք է տեղավորվեն, որպես կանոն, միասնական նախագծով թեթև կոնստրուկցիաներից կառուցված, թափանցիկ պատերով կամ սյուներով շինությունների մեջ: Առավելագույն չափերը՝

- երկարությունը՝ 3.6 մ
- լայնությունը՝ 2.0 մ

10. Աղբահեռացման կոնտեյներներ

Աղբարկղները տեղադրելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ պահանջները.

• Համաքաղաքային նշանակության փողոցների, ինչպես նաև հասարակական առավելագույն ձգողության և կուտակման վայրերին հարակից տարածքներում տեղադրել ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա, հատուկ փակվող տիպի, բանուկ մասերին չխանգարող տարածքներում,

• Շրջանային նշանակության փողոցների վրա՝ 100 –200 մետրը մեկ,

• Տեղական նշանակության փողոցների վրա հիմնական խաչմերուկների վրա, դրանց հեռավորությունը 200 մետրից պակաս լինելու դեպքում՝ 200 մետրը մեկ:

11.Հեռավորությունը շենքերի միջև

Բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև եղած հեռավորությունը պետք է ընդունել հիմնվելով արևի ճառագայթման քանակի (ինսոլյացիայի) և լուսավորվածության հաշվարկների վրա, ինչպես նաև հակահրդեհային պահանջներին համապատասխան:

2-3 հարկանի բնակելի շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունը (կենցաղային խզումներ) պետք է ընդունել 15 մ-ից ոչ պակաս, իսկ 4 հարկանի շենքերի միջև՝ 20 մ-ից ոչ պակաս: Այս շենքերի երկար կողմերի և բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողաճակատների միջև՝ 15 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունները կարող են կրճատվել ինսոլյացիայի և լուսավորության նորմերը պահպանելու դեպքում, եթե ապահովված է պատուհանից պատուհան բնակելի սենյակների անտեսանելիությունը:

12. Շենքերի տեղադրությունները

Շենքերը տեղադրել քամիների գերակշիռ ուղղությունների հաշվառումով՝ կողաճակատներով դեպի վերջիններս:

13. Աղմուկի թույլատրելի մակարդակ

Բոլոր գոտիներում որտեղ թույլատրված է բնակելի կառուցապատում աղմուկի թույլատրելի մակարդակը չպետք է գերազանցի 55 դԲԱ (ցերեկը) և 45 դԲԱ (գիշերը):

Աղմուկից և արտանետումներից բնակելի կառուցապատման պահպանման համար նախատեսել վերոնշյալ բացասական պարամետրերի գերազանցմամբ փողոցների ծառապատում:

14.Սանիտարական պահպանման գոտիների չափորոշում

Ճանապարհների, փողոցների, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների (օդանավակայաններ, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր, բարձր և միջին ճնշման գազատար և այլն) արդյունաբերական և կոմունալ օբյեկտների սանպահպանման գոտիները՝ համաձայն գործող նորմերի և ստանդարտների:

15.Գոտիավորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորում

Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող օգտագործման ձևերը, որոնք գոյությունը պահպանել են մինչև սույն նախագծի հաստատման տարեթիվը, այսուհետև պետք է կարգավորվեն միայն սույն կանոնների պահանջներին համապատասխան:

Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող շենքերի և կառույցների ընդարձակում չի թույլատրվում:

Գոտիավորմանը չհամապատասխանող 6 ամսից ավելի լքված և չօգտագործվող օրինական համարվող կառույցների հետագա օգտագործման ձևը պետք է որոշվի համաձայն այն հիմնական գոտու թույլատրելի օգտագործումների կանոնների, որտեղ այն գտնվում է:

Գոտիավորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառուցապատման ձևերը կարող են վերանորոգվել, եթե բոլոր կառուցվածքային փոփոխությունները կատարվում են միայն գործող քաղաքաշինական օրենսդրությանը համաձայն:

Եթե գոտիավորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառույցի վերանորոգման արժեքը գերազանցում է նրա տեղափոխման արժեքի 50%-ը, ապա այդ կառույցը պետք է արգելվի:

16. Բնակչության սակավաշարժուն խմբերի պահանջների ապահովում

Նոր կառուցապատման իրականացման կամ վերակառուցվման պայմաններում անհրաժեշտ է ընդունել որոշումներ՝ հաշմանդամների շահերի առավելագույն պահպանումով, ապահովելով վերջիններիս կենսագործունեության անարգել միջավայր:

Ինչպես բնակելի թաղամասերը, այնպես էլ ճանապարհափողոցային ցանցը պետք է նախատեսվեն բնակչության վերոնշյալ խմբերի համար երթուղիների ապահովմամբ՝ հասարակական տրանսպորտից օգտվելու հարթակների, մոտեցումների ձևավորմամբ:

Հաշմանդամների համար հողատարածքների չափերը հաշվարկել համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-06 նորմերի պահանջների:

Հետիոտն ուղիների նախատեսման ժամանակ հաշվի առնել հնարավորության դեպքում երկայնական ուղղությամբ 6 %ից ոչ ավելի թեքությունների ապահովումը, խիստ ռելյեֆային պայմանների կամ սահմանափակ տարածքային հնարավորությունների դեպքում թույլատրվում է մինչև 10 % թեքությամբ հատվածներ՝ 10 մ-ից ոչ ավելի հեռավորությամբ ապահովելով հորիզոնական տեղամասերով:

Ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, աստիճանների և պանդուսների, շենքերի շքամուտքերի, վերելակների, մարզական կառույցների կազմակերպման ժամանակ առաջնորդվել ՀՀՇՆ IV-11.07.01-06 պահանջներով:

17. Կառուցապատման թույլտվություններ

Օգտագործման ձևերի համար թույլտվությունների կառուցվածքը հիմնվում է՝ընդունված գոտի-թույլատրելի հողօգտագործման ձև՝ սկզբունքի վրա:

ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Առանձնատներ՝ իր սեփական տնամերձ հողամասում տեղակայված բնակելի միավոր մեկ ընտանիքի համար:

Բազմաբնակարան տներ՝ 2 և ավելի բնակարաններ, միավորված մեկ շենքում:

Ինսոլյացիա՝ տարածքներում և սենյակներում արևի ուղիղ անընդհատ ճառագայթման տևողության նորմատիվային պահանջ:

Լրացուցիչ պահանջներ՝ նախատեսվում են տարբեր գոտիներում տեղադրվող այն օգտագործման ձևերի համար, որոնց բնույթը մասամբ չի համապատասխանում տվյալ գոտուն ներկայցվող պահանջներին և դրանց գործառությունը հիմնականում կապվում է հատուկ պայմանների կիրառման հետ:

Կանաչ ծածկույթ՝ բուսական ծածկույթ. ծառեր, թփեր, խոտաբույսեր և այլն:

Հետիոտն մատչելիության շառավղեր՝ այն հեռավորությունը, որը կարող է անցնել մարդը՝ առանց ֆիզիկական լարվածության (0-30 րոպե ժամանակահատված):

Կառուցապատման /հողօգտագործման/ չափորոշիչներ և կարգավորիչներ՝ սահմանում են տվյալ գոտու հողօգտագործման և կառուցապատման պահանջներին համապատասխանող բնութագրերի համակարգը, որոնցով կանոնակարգվում է տարածքի իրացման ինտենսիվությունը, կառուցապատման խտությունը, կառույցների հարկայնությունը, գեղագիտական պահանջները: Կարգավորիչների հարաչափերը հիմնվում են օրենսդրական և պետական նորմատիվ փաստաթղթերի վրա, տեղայնացվում են՝ ելնելով յուրաքանչյուր գոտուն յուրահատուկ պահանջներից և փոփոխվում են գոտուց գոտի:

Հակահրդեհային պահանջներ՝ շենքերը, կառույցները հրդեհներից պաշտպանելու համար կառուցման և այլ միջոցառումների նորմերով հաստատված պարտադիր կարգ:

Համայնքային նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի թաղամասերի, գյուղարտադրական ձեռնարկությունների, ինչպես նաև հասարակական կենտրոնների միջև, ելքեր դեպի արտաքին ավտոմայրուղիներ կամ դաշտամիջյան ճանապարհներ:

Տեղական նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի տարածքներում, ելքեր դեպի համայնքային նշանակության փողոցներ կամ դաշտամիջյան ճանապարհներ:

Երթևեկության անցուդարձ՝ միավոր ժամանակահատվածում ճանապարհի որևէ կտրվածքով հանդիպակաց ուղղություններով անցնող ավտոմոբիլների քանակը:

Ճանապարհի բեռնվածության մակարդակ՝ երթևեկության անցուդարձի հարաբերությունը ճանապարհի թողունակությանը:

Երթևեկային մաս՝ ճանապարհի մակերևույթի շերտ, որի սահմաններում կատարվում է ավտոմոբիլների երթևեկությունը:

Կարմիր գիծ՝ շենքերն ու շինությունները փողոցներից անջատող սահմանը, որով սահմանվում է նաև գլխավոր և երկրորդական փողոցների, ներառյալ մայթերի լայնությունը:

Մայթի բանուկ մաս ՝ փողոցի մայթերի՝ հետիոտնի շարժման համար հատկացված շերտ:

Հողամաս՝ հողի վերգետնյա և ստորգետնյա տարածքի մասն է, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), գտնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում:

Հողամասի անջրանցիկ տարածք՝ հողամասի այն հատվածը, որի բուսական բնաշերտը ծածկված է արհեստական կառույցներով (շենք, մայթ, սալարկ):

Հողամասի ճակատը՝ հողամասի կարմիր գծին հարող կողմը:

Ջեղնսահարկ՝ լանջավոր տանիքի ներքին տարածությունը։

Նորմ՝ նախագծման ՝ շինարարության համար սահմանված պարտադիր կարգ։

Շենքի բարձրություն՝ մայթի մակերևույթից մինչև քիվի վերին եզրն ընկած ուղղաձիգ հեռավորությունը։

Ոչ հիմնական շինություն՝ կրպակներ, տաղավարներ ճարտարապետական փոքր ձևեր։

Սանիտարահիգիենիկ պահանջներ՝ բնակվելու տարածությունների՝ շրջակա միջավայրի սահմանային թույլատրելի վիճակներին համապատասխանության պահանջներ։

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Ստորև ներկայացվում են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող մի շարք ՀՀ օրենքներ.:

1. ՀՀ սահմանադրություն 2015 թ., հոդված 12,
2. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքը (2014)
3. <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> ՀՀ օրենքը (1998)
4. <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը (1999) և <<Կենդանական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը (2000)
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենքը (1994թ.)
6. <<ՀՀ Հողային օրենսգիրքը>> (2001)
7. <<ՀՀ Ընդերքի օրենսգիրքը>> (2012)
8. <<ՀՀ Ջրային օրենսգիրքը>> (2002)
9. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենքը (2004)

10. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենքը (2005)
11. <<Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին>> ՀՀ օրենքը (2005)
12. <<ՀՀ անտառային օրենսգիրքը>> (2005)
13. <<Ջրի ազգային ծրագրի մասին>> ՀՀ օրենքը (2006)
14. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքը (2006)
15. <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին >> ՀՀ օրենքը (2008)
16. ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781 որոշում:
17. Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Руководство по составлению раздела «Охрана природы и улучшение окружающей среды градостроительными средствами» в проектах планировки и застройки городов, поселков и сельских населенных пунктов. М., 1982г.
2. Рекомендации по охране окружающей среды в районной планировке. М 1986г.
3. Строительная климотология. Ереван, 1996г.
4. Рекомендзции по учету природно-климатических факторов в планировке и застройке городов и групповех систем населенных мест, М. ЦХИИП, Градостроительство, 1980г.
5. Руководство по разработке раздела ''Охрана окружающей среды'' к проекту планировки (реконструкции) жилого районас. М. Москомархитектуры, 1997 г.
6. Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրք, 2010թ.
7. Հայաստանի Հանրապետության ատլաս, 2009թ.
8. Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրք, 2010թ.
9. Предложения по разработке отраслевой классификации источников выбросоа вредных веществ в атмосфере. Гидрометеоиздат, 1982г.
10. Сборник законодательных нормативных и методичецких документов дла экспертизы воздухоохранных мероприятий, Л., Гидрометеоиздат. 1986г.
11. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными проиводствами. Л., Гидрометеоиздат, 1986г.
12. Методические указания по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ автомобильным траспостом. М., Гидрометеоиздат, 1983г.
13. ՀՀ կառավարության որոշում՝ 25 հունվարի 2005 թվականի N-91-Ն. Տնտեսական գործնեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին:
14. Методические рекомендации обработки данных, характеризующих санитарное состояние водных обьектов, с целью определения гигиенической эффективности водоохранных мероприятий, М. Минздрав РСФСР, 1983г.
15. Оценка гигиенической эффективности водоохранных мероприятий, М. Минздрав РСФСР, 1989г.
16. СНиП II-12-77. Защита от шума. М., 1978г.
17. Г.Л.Осипов и др. «Градостроительные меры борьбы с шумом», Стройиздат 1975г.
18. ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից»

19. ՀՀ բնապահպանության նախարարություն. «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն»: Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված շատ բնակավայրերի ազգաբնակչության:
20. Методические рекомендации. Унифицированные методы сбора данных, анализа и оценки заболеваемости населения с учетом комплексного действия факторов окружающей среды. Госкомитетсан.-эпиднадзора, РФ. Москва. 1996 г.
21. Методические указания по санитарному надзору в районной планировке. М. Минздрав СССР. 1990 г.
22. Критерии оценки экологической обстановки территорий для выявления зон чрезвычайной экологической ситуации и зон экологического бедствия (утв. Минприроды РФ 30 ноября 1992 г.)
23. Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշում:
24. ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր:
25. 2002 թվականի հունիսի 12-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն օրենք:

«Կետ Արքիթեքթ» ՓԲԸ

«ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

Լ Ո Ւ Ս Ա Գ Յ Ո Ւ Ղ

ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Պատվիրատու՝ «ԱՐՄԵՆԻԱ ՖՅՈՒՉՐ» ԲՀ

Պայմանագիր՝ թիվ 210119 առ 21.01.2019 թ.

-
-
-
-
- Տնօրեն՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ
-
-
-
-
- Նախագծի գլխավոր ճարտարապետ՝ Ս.ԱՄԻՐԱՂՅԱՆ
-

-
-
-
-
-
-
-
- ԵՐԵՎԱՆ 2019 թ.
-

Ներածություն

Ապարան համայնքի Լուսագյուղ գյուղի (այսուհետ Լուսագյուղ) «ԱՐՄԵՆԻԱ ՖՅՈՒՉՐ» ԲՀ «Լուսագյուղ գյուղի զարգացում» ծրագրի շրջանակներում ընդգրկված գլխավոր հատակագիծը մշակված է «ԱՐՄԵՆԻԱ ՖՅՈՒՉՐ» ԲՀ պատվերով (պայմանագիր թիվ 210119)՝ համաձայն համայնքի ավագանու կողմից 00.00.19թ. հաստատված նախագծման առաջադրանքի:

Նախագծում հաշվի են առնված հանրապետության, մարզի և համայնքի տնտեսության զարգացմանը վերաբերվող ՀՀ կառավարության որոշումների և պետական ծրագրերի հիմնադրույթները՝ պետական աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը, ՀՀ համայնքների զբոսաշրջության զարգացման ծրագրերը, ՀՀ ներդրումային քաղաքականության և ՀՀ ինովացիոն գործունեության հայեցակարգերը, ինչպես նաև «ԱՐՄԵՆԻԱ ՖՅՈՒՉՐ» ԲՀ «Լուսագյուղ գյուղի զարգացում» ծրագրի դրույթները:

Նախագծման համար ուղեցույց են ծառայել նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին,
- ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 02.05.2003 թ. N 609-Ն ու 04.05.2010 թ. N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 29.12.2011, N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգը, Հավելված և Հավելված 1),
- Կարգ բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված ՀՀ կառավարության 14.05.01, N 408 որոշմամբ),
- ՀՀ անշարժ գույքի կադաստրի քարտեզները,
- ՀՀ կառավարության կողմից հաստատված 10 ապրիլի 2003թ. N 610-Ն «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթները,
- Ապարան համայնքի Լուսագյուղ գյուղի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման նպատակով կատարված տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների ուսումնասիրություն և տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը՝ մշակված «Գեոթեսթի» կողմից:

Լուսագյուղ գյուղի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը՝ համայնքի հեռանկարային տնտեսական աճի և տարածական զարգացման ուղղությունների, տարածքների գործարական նշանակության սահմանումն է, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությունը և ներուժի օգտագործումը, տրանսպորտային, ինժեներական ենթակառուցվածքների և տարածքի ինժեներական պաշտպանության սկզբունքային լուծումներով, բնապահպանական համալիրի կիրառումով, հողերի օգտագործման և տարածքների կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով:

Լուսագյուղ գյուղի պարզեցված գլխավոր հատակագծի նախագծի մշակողներն են՝

Նախագծի գլխավոր ճարտարապետ՝ Ս. Ամիրաղյանը, Արտոնագիր ՃԲԴ-Բ-004:

ճարտարապետներ՝ Գ.Խաչատրյանը, Ն.Շահբազյանը:

Ինժեներաերկրաբանական պայմաններ և սեյսմաշրջանացման քարտեզ

ինժեներ երկրաբաններ և երկրաֆիզիկոս՝ Ս.Մուրադյանը, Գ.Մուրադյանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բաժիններ՝ Վ.Թևոսյանը:

Ջրամատակարարում և ջրահեռացում՝ Հ.Քելեջյանը:

էլեկտրամատակարարում՝ Ս. Մեժլումյանը:

Մշակումներին գործնական աջակցություն են ցուցաբերել Ապարան համայնքից ճարտարագետներ՝ Ա.Կամսարյանը, Գ.Սիրեկանյանը, Լուսագյուղ գյուղի ղեկավար՝ Ք.Զաքարյանը, գյուղի ղեկավարի տեղակալ՝ Ի. Սահակյանը:

Մշակումներին աջակցություն են ցուցաբերել «ԱՐՄԵՆԻԱ ՖՅՈՒՉՐ» ԲՀ գործադիր տնօրեն՝ Մ.Բադալյանը և ուրիշներ:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

1.0 ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1. Հակիրճ տեղեկություն

Լուսագյուղ գյուղը գտընվում է Արագածոտնի մարզում Ծաղկունյաց լեռների հարավային փեշին: Համայնքների խոշորացման ընթացքում 2016 թ. ներառվել է Ապարանի համայնքի կազմում: Գյուղի հեռավորությունը Ապարանից 1.6-2.0 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոն Աշտարակից՝ 34 կմ:

Գյուղի զբաղեցրած տարածքի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1925-:-2025 մ:

Ներկայիս Լուսագյուղը՝ հնագույն բնակավայրերից մեկը՝ նախկինում կրել է տարբեր անվանումներ. կոչվել է Գառանգլուխ, միջնադարում Ճանճիկ, 1948 թվականին վերանվանվել է Լուսագյուղ:

1831 թ. ուներ 157, 1897-ին՝ 501, 1926-ին՝ 628, 1939-ին՝ 746, 1959-ին՝ 620, 1979-ին՝ 673, 2001-ին՝ 803, 2004-ին՝ 717 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Վանի գյուղերից:

Գյուղում կա սբ. Աստվածածին եկեղեցին: Գյուղից 2 կմ հյուսիս՝ “Ավեր բերդ” ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 0.7 կմ հյուսիս՝ “Թուխ Մանուկ” (“Վերի վանք”) եկեղեցին (6-7դ.դ) 1883 թ. վերակառուցած է, 1 կմ արևելք՝ “Կարմիր վանք” (Ճանճիկ) եկեղեցական համալիրը (5-11դ.դ.), բնակատեղիներ և դամբարանադաշտեր:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

1.2 Բնակավայրի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում

Լուսագյուղը ներառված է Արագածոտնի մարզի Ապարան համայնքում, որը գտնվում է պատմական Նիգ գավառում: Լուսագյուղի տարածքի հյուսիս արևելյան մասը զբաղեցնում է Ծաղկունյաց լեռների լանջերը և հարում է Արագածոտնի մարզի Հանքավան համայնքի սահմանին:

Տարածքի հարաբերական նիշերը ծովի մակրևույթից կազմում են 1890-ից -:-2740 մ:

Լուսագյուղի ավտոտրանսպորտային հաղորդակցությունը իրագործվում է Ապարան քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցով շարունակվելով մինչև գյուղի մուտքը: Լուսագյուղից հողային ծածկույթով դաշտամիջյան ճանապարհները ուղղված են հարևան Սարալանջ գյուղ, դեպի Ծաղկունյաց լեռների բարձունքները:

Լուսագյուղի տարածքը շրջապատված է Ապարան քաղաքի, Միրաք, Մելիքգյուղ, Սարալանջ և Մուլքի գյուղերի տարածքներով:

Տարածքների լանդշաֆտներում առկա են բազմաթիվ գեղատեսիլ վայրեր, որոնք հիմնականում անտառապատված են:

Տարածքներում կան վաղ միջնադարից սկսած բազում պատմության և մշակույթի հուշարձանների կիսավեր վկայություններ:



1.3 Բնակավայրի ռելիեֆի և հատակագծային կառուցվածքի բնութագիրը

Լուսագյուղի հարավային հատվածը զբաղեցնում է ցածրադիր, համեմատաբար հարթ տարածքը 1950-1975 մ նիշերի սահմաններում, որի թեքությունը մինչև 5% է: Միջնամասի տարածքի 1975-2050 մ նիշեր ունի և թեքությունը ավելանում է հասնելով 10-15%: Տարածքը արևելքից երիզվում է մեղմ լանջեր ունեցող ջրհավաքով:

Գյուղի բնակելի կառուցապատումը ամբողջովին տնամերձ հողամասերով մեկ կամ երկու անհատական քարե տներ են: Տնամերձ հողամասերի տարածքը տարբեր է 350-ից 2200 ք.մ, որը ձևավորվել է գյուղի կենտրոնական մասում: Քսաներորդ դարի վերջին գյուղի հարավային տարածքների իրացման ժամանակ կատարված տնամերձ հողամասերի բաժանումը բերեց 1200-ից 1500 ք.մ չափերի:

Գյուղի ներկայիս «գյուղամեջը» երկու փողոցների հատման եզրին է, որտեղ գյուղարտադրական հատվածում ստեղծվել է գյուղական ֆուտբոլի հրապարակ և վերջին տարիներին ստեղծված ծառատնկարանը: Գյուղապետարանը զբաղեցնում է կենտրոնական մասից որոշակի մեկուսած դիրք:

Գյուղի փողոցային ցանցում առանձնանում է Ապարանից գյուղ մտնող ճանապարհը, որն ընթանում է դեպի հյուսիս-արևելք և շարունակվում է ուղղվելով Հանքավանի անտառները:

Հնում առաջացած փողոցները ընթանում են փոփոխելով ուղղությունները և ունեն տրանսպորտի համար դժվար անցանելի մեծ թեքություն: Ներկայումս քայքայված ասֆալտապատ ճանապարհը մեկն է, մնացած փողոցները կոշտ ծածկույթից զուրկ են:

Գյուղի գերեզմանատունը շրջապաքտված է տնամերձ հողամասերով: Գերեզմանատան հարավային փոքր հատվածը պատմության և մշակույթի կարգավիճակ ունի:

Արևմտյան, հյուսիսային և արևելյան թեք լանջերը ծածկված են լեռնային տափաստանային բուսականությամբ և անտառապատ են: Լանջերի տարբեր հատվածներում ջլատված են մակերևութային ջրահոսքերից առաջացած առվակներով, որոնք գյուղի կառուցապատման համար բացասական ազդեցություն ունեն:

Ռելիեֆի բնութագիրը ներկայացված է տեքստի ստորև մասում:

1.4 Հողերի առկայություն և բաշխվածություն

Լուսագյուղի տնտեսական գործունեության համար հիմք են հանդիսանում գյուղատնտեսության հիմնական ոլորտները անասնապահությունը և հողագործությունը:

Տարածքի գերակշռող մասը գյուղատնտեսական հողերն են: Ընդհանուր 1740.24 հա հողատարածքից գյուղատնտեսության հողերը կազմում են 1309.93 հա կամ շուրջ 75%, որոնց 80% կամ 1073.01 հա արոտներն են, 25.14 հա խոտհարքը և 150.14 հա վարելահողն է, 61.62 հա կազմում են այլ հողատեսքերը: **Համապատասխան ՀՀ անշարժ գույքի կադաստրի հողային ֆոնդի առկայության և բաշխման ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ /Ձև 22/ հողային ֆոնդի առկայության և բաշխման տվյալները** կազմում են՝

Բնակավայրերի հողեր, ընդամենը՝ 113.76 հա (6.5%), այդ թվում.

- բնակելի կառուցապատման, այդ թվում տնամերձ՝ 92.35 հա,
- հասարակական կառուցապատման՝ 1.43 հա,
- ընդհանուր օգտագործման՝ 13.89 հա,
- այլ հողեր՝ 6.09 հա:

Արդյունաբերության, գյուղական արտադրության, ընդերքի օգտագործման և պահեստարանների հողեր, ընդամենը՝ 7.32 (0.4%) հա, այդ թվում.

- արդյոնաբերության՝ 0.11 հա,
- գյուղատնտեսական արտադրության՝ 7.21 հա,
- ընդերքի օգտագործման ՝ 0,
- պահեստարանների՝ 0:

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքի հողեր, ընդամենը՝ 1.04 հա (0.06%), այդ թվում.

- էներգետիկայի՝ 0.01 հա,
- կապի՝ 0,
- տրանսպորտի՝ 0.75 հա,
- կոմունալ ենթակառուցվածքի՝ 0.28 հա:

Հատուկ պահպանվող տարածքների հողեր, ընդամենը՝ 6.58 հա (0,4%), այդ թվում.

- բնապահպանական՝ 0,
- առողջարարական՝ 0,
- հանգստի համար նախատեսված՝ 0.47 հա,
- պատմության և մշակույթի՝ 6.11 հա, այդ թվում գերեզմանոց 1.49 հա:

Հատուկ նշանակության հողեր, ընդամենը՝ 0:

Անտառային հողեր, ընդամենը՝ 301.17 հա:

Ձրային հողեր, ընդամենը՝ 0.46 հա, այդ թվում. ջրանցքներ՝ 0.46 հա:

Պահուստային հողեր՝ 0:

Հողային ֆոնդի՝ 1740.24 հա (100%) բաշխումը ըստ սեփականության սուբյեկտների ներկայացված է հետևյալ հաշվեկշռով՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սեփականություն՝
- 242.4 հա (13.9%),
- Համայնքային սեփականություն՝ 604.88 հա, (34.7%),
- Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն՝892.95 հա,(51.3%),
- Օտար պետությունների, կազմակերպությունների սեփականություն՝ 0:

Ներկայացված ցուցանիշները բացահայտում են համայնքի տնտեսական և սոցիալական առանձնահատկությունները, դրանք են՝ տնտեսության դեպի գյուղատնտեսական ոլորտ շեշտակի ուղղվածություն, հողերի երեք քարրորդը գյուղատնտեսական հողատեսքերն են, որի 82% արոտներ: Արդյունաբերական ոլորտի գրեթէ բացակայություն, հասարակական (սոցիալական) ոլորտի սակավությունը (մեկ բնակչին միջինացված հասնում է 17.87 քառ.մ հասարակական կառուցապատման տարածք), գյուղատնտեսական հողատեսքերի որոգման համար սահմանափակ ջրային ռեսուրս:

1.5 Լանդշաֆտների և ռելիեֆի նկարագրություն

Լուսագյուղի տարածքային շրջանակներում տիրապետում են լեռնատափաստանային, լեռնաանտառային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Լեռնաշղթայի լանջերի զգալի մասը՝ մինչև 2400 մ բարձրությունները անտառածածկ են:

Արևելյան լանջերը (մինչև 2300 մ) ծածկված են կաղնու, թխկենու, արոսենու անտառներով: Լանդշաֆտները հայտնի է որպես հանգստյան գոտու լանդշաֆտ:

Բարձրադիր տեղանքներում Լուսագյուղ համայնքի ռելիեֆը միջին բարձրության, ուռուցիկ լանջերով, գմբեթածև լեռնազանգվածներ են՝ զառիթափ լանջերով մասնատված հովտաձորակային ցանցով: Ավելի ցածրադիր տեղանքներում լեռնալանջերը չափավոր զառիթափ են /150-250/՝ թույլ ալիքավոր ջրբաժանով:

Տարածաշրջանում ռելիեֆի հիմնական տիպը կառուցվածքային էրոզիոն – տեղատարումային /մշակված/ ռելիեֆն է: Տեղանքը միջին լեռնային գոտուն /1500-2800 մ/ բնորոշ ուռուցիկ լանջերով լեռնաբազուկ է՝ մասնատված մի կողմից Քասախ, մյուս կողմից Հրազդան գետերի վտակների հովիտներով:

Տարածաշրջանում գերակշռում է դեֆլյուկցիոն հողմահարումը, լեռնալանջերըը ամբողջությամբ պատված են դելյուվիալ ապարաշերտերով: Առանձին տեղեր կան մայր ապարի մերկացումներ, փլվածքային պրոցեսներ, չինգիլներ և սելավների առաջացրած ձորակներ:

Լուսաձորից դեպի հարավ գերիշխում է լեռնային հարթավայրը՝ սեղմված լեռանաբազուկների գոգավորությունում, հորիզոնականին մոտ թեքությամբ, մասամբ դարավանդավորված: Այս տարածքներում է գտնվում Լուսագյուղի վարելահողերի հիմնական մասը:

1.6 Կլիմա

Տարածքի բարձր դիրքը պայմանավորում է լանդշաֆտի հատկությունները ու շրջանի բնակլիմայական պայմանները:

Կլիման հիմնականում չորային է: Հաճախակի են հյուսիսից փչող քամիները: Երբեմն ամռանը ջերմաստիճանը հասնում է մինչև +30, ձմռանը՝ -20 -:- -22 աստիճան: Ձմեռը ցուրտ է, համեմատաբար խոնավ, հաստատուն ձնածածկույթով:

Գարունը համեմատաբար տևական է, մեղմ և բարեխառն: Ամառը տաք է, չափավոր խոնավ, պարզ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 15^0C-ից 18^0C, առավելագույնը 30^0C: Աշնանը տաք է՝ անհողմ եղանակների

գերակշռությամբ: Անսառնամանիք եղանակի տևողությունը շուրջ 200 օր է, 0^0C-ից բարձր ջերմաստիճանների տարեկան գումարը մինչև 2700^0C: Տարեկան տեղումները 600-700 մմ:

Օդի բազմամյա միջին ջերմաստիճանը կազմում է 50^0C: Ձերմաստիճանների անցումը 0^0C-ից տեղի է ունենում նոյեմբերին և ապրիլին:

Ձմռանը գերակայում են հարավային, հարավ-արևմտյան քամիներ՝ 1,5-:-2 մ/վրկ արագությամբ: Ամռանը դիտվում են հյուսիս-արևելյան ուղղությամբ քամիներ՝ 2-:-3,2 մ/վրկ արագությամբ, որոնք առավել ուժեղանում են հուլիսին:

Տարածքում մշակում են հացահատիկային կուլտուրաներ, շաքարի ճակնդեղ, պալարային կուլտուրաներ: Կլիման նպաստավոր է անասնապահության, լեռնային հանգստավայրերի և առողջարանների համար:

ԱՊԱՐԱՆԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԿԼԻՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԱՐԱՉԱՓԵՐ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՀՇՆ II-7.01-2011

(Ապարան, 1889 մ.ծ.մ)

Աղյուսակ 1.6-1 Օդի ջերմաստիճան

Օդի միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												տարեկան միջին °C	ցրտի բացարձակ նվազագույն °C	ցրտի բացարձակ նվազագույն °C
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
-8.8	-7.6	-3.0	4.4	9.6	13.3	16.8	16.9	12.7	6.7	0.5	-5.7	4.7	-34	-33

Աղյուսակ 1.6-2 Օդի հարաբերական խոնավությունը

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների,%												Միջին տարեկան,%	Միջին ամսական ժ.15-ին,%	
													Ամենացուրտ	Ամենաշոգ
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

77	72	69	66	66	65	63	61	60	66	72	75	67	66	42

Աղյուսակ 1.6-3 Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Տեղումների քանակը, մմ միջին ամսական, օրական առավելագույն													Ձնածածկույթ		
ըստ ամիսների												տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ջյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
40	49	62	78	90	88	74	56	40	49	51	46	540	121	126	664
34	49	53	59	70	84	78	79	75	44	87	42	87			

Աղյուսակ 1.6-4 Քամի

Լորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների								Կրկնելիությունը,%	Առավելագույնը,մ/վ	Առավելագույնը,մ/վ	Ուժեղ քամիներով(≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
		Հյուսիսային	Հյուսիսարևելյան	Արևելյան	Հարավարևելյան	Հարավային	Հարավարևմտյան	Արևմտյան	Հյուսիսարևմտյան							
		Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հրվ Արմ	Արմ	Հր Արմ							
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
810,2	I	5	7	26	21	8	2	11	20	46	2,0	2,1	19	22	23	24
		3,6	2,4	2,8	2,7	3,9	2,7	3,3	3,5							
	IV	5	6	14	19	16	5	15	20	33	2,3					
		3,	2,8	2,8	2,9	3,5	3,0	3,3	3,1							

		2														
	VII	8	14	10	13	9	2	19	25	33	2,1					
		2,7	3,0	2,6	2,4	2,5	2,1	2,6	2,5							
	X	5	5	10	20	15	3	17	25	43	1,8					
		3,0	2,1	2,4	2,6	2,7	2,2	3,2	2,9							

Հողի սառեցման խորությունը՝ 90 սմ է: Ձյան ծածկույթի միջին բարձրությունը՝ 25-40 սմ: Ձյունե ծածկույթի կշիռը՝ 400 կգ/մ2:

Առաջին ձյունը տեղում է դեկտեմբերի վերջին տասնօրյակում և պահպանվում է մինչև մարտի վերջը:

Գերիշխող քամիների ուղղությունը հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք է: Քամու արագացման ճնշումը՝ 450 կգ/մ2:

1.7 ԻՆԺԵՆԵՐԱ-ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԵՅՍՄԻԿ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ

Ներածություն

Համաձայն N2019-9 պայմանագրի տեխնիկական առաջադրանքի՝ կնքված 19 մարտի 2019թ. «Արմենիան Ֆյուչր» ԲՀ-ի և «ԳԵՈՏԵՍՏ» ՍՊԸ միջև, նախատեսվել է կատարել ՀՀ Արագածոտնի մարզի Լուսագյուղ համայնքի տարածքի ելակետային նյութերի հավաքման հիման վրա 1:5000 մասշտաբի ինժեներա-երկրաբանական քարտեզի կազմման աշխատանքները:

Հետազոտությունների ընդհանուր մակերեսը կազմում է 1.8 քառ.կմ:

ՀՀ Արագածոտնի մարզի Լուսագյուղ համայնքի տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները՝ համաձայն տեխնիկական առաջադրանքի, ներկայացվում են գոյություն ունեցող արխիվային նյութերի հիման վրա:

1.7.1 Ֆիզիկա-աշխարհագրական և տեխնածին պայմանները

Հետազոտվող տարածքը գտնվում է Ապարան քաղաքից **1.8 կմ** հեռավորության վրա: Այն ներկայացված է տեսածիրային քարտեզի վրա՝ նկար 1:

Շրջանն ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով մեղմ կլիմա, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 32˚C: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -33˚C: Տարեկան մթնոլորտային միջին տեղումների քանակը կազմում է 400 մմ, գերակշռում են 1.8 մ/վրկ արագության հյուսիսային (ամռանը) և արևմտյան (ձմռանը) ուղղության քամիները: Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Արագած լեռան արևելյան մասում, Քասախ գետի հովտում:

Նկար 1.7.1 Լուսագյուղ համայնքի տեսածիրային քարտեզ

Երկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում տարածված են էոցեն-պրոտերոզոյի հրաբխանստվածքային տերրիգեն կարբոնատային մետամորֆիզացված և ինտրուզիվ ապարների համալիրը ներկայացված պորֆիրիտներով: Ժամանակակից պլիոցենի փուխր բեկորային ժայռային և կիսաժայրային հրաբխային ապարների նստվածքներով ներկայացված ալյուվիալ, դելյուվիալ, կոլյուվիալ լճա-սառցային մեծաբեկորա-ճալաքարային կոպճային գրուևտներով, ավազակավային լցանյութով:

Ուսումնասիրվող տարածքի ստորերկրյա ջրերի հիմնական սնուցման աղբյուր են հանդիսանում մթնոլորտային տեղումները: Ստորերկրյա ջրերի լիցքաթափումը կատարվում է Քասախ գետում ստորերկրյա հոսքերով:

Ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկա-երկրաբանական երևույթները ներկայացված են մակերևույթային համատարած լվացումով մակերևույթային տեղումներով:

Ուսումնասիրված տարածքում տեխնածին երևույթները բացակայում են:

1.7.2 Տարածքի ուսումնասիրվածությունը

Երկրաբանական Վարչության կողմից՝ 1970 թվականին կատարվել են ինժեներա-երկրաբանական հետազոտություններ Ապարանի շրջանի և հարակից տարածքներում, որում ընդգրկել է նաև Լուսագյուղ համայնքը: Ուսումնասիրություններն իրենց մեջ ընդգրկել են ինժեներա-երկրաբանական հանույթ, հորատանցքերի հորատում, դիտարկման կետերի նկարագրություն, գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների որոշում, տարածքի ինժեներա-երկրաբանական շրջանացում:

Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել է Ապարանի շրջանի և հարակից տարածքների ինժեներա-երկրաբանական շրջանացման սխեման:

1.7.3 Տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները

Շրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝

էոցեն-պրոտերոզոյի հրաբխանստվածքային տերրիգեն կարբոնատային մետամորֆիզացված և ինտրուզիվ ապարների համալիրը ներկայացված պորֆիրիտներով:

Ժամանակակից պլիոցենի փուխր բեկորային ժայռային և կիսաժայրային հրաբխային ապարների նստվածներով ներկայացված ալյուվիալ, դելյուվիալ, կոլյուվիալ լճա-սառցային մեծաբեկորա-ճալաքարային կոպճային գրունտներով, ավազակավային լցանյութով:

Այս ապարները ծածկված են չորրորդական հասակի փուխր բեկորային ալլյուվիալ-պրոլյուվիալ, ալլյուվիալ դելյուվիալ նստվածքներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից շրջանում տարածված են ստորգետնյա ջրերը, որոնք կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ:

Ուսումնասիրված տարածքում կարելի է առանձնացնել գեոմորֆոլոգիական հետևյալ էլեմենտները.

- Ալյուվիալ պրոլյուվիալ ակումուլյատիվ հարթավայր, մակերևույթի թեքությունը չի գերազանցում 10˚:

- Թեք լանջեր, մակերևույթի թեքությունը 10˚-15˚:
- Ձորակներ, ողողահուներ:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկա-երկրաբանական երևույթները ներկայացված են մակերևույթային համատարած լվացումով մակերևույթային տեղումներով:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը ներկայացված է Երկրաբանական Վարչության կողմից՝ 1970թ.-ին փորված հորատանցքերի տվյալներով և ներկայացված է հետևյալ շերտերով.

Շերտ թիվ 1. Բեկորային ժայռային և կիսաժայրային հրաբխային ապարների նստվածքային համալիր մեծաբեկորա-ճալաքարային կոպճային նստվածքներ, ավազակավային լցանյութով:

Հզորությունը 10.0 մետր և ավելի:

Շերտ թիվ 2. Հրաբխանստվածքային տերրիգեն կարբոնատային մետամորֆիզացված և ինտրուզիվ ապարներ, պորֆիրիտներ:

Հզորությունը 10.0 մետր և ավելի :

Գրունտային ջրերը փորված հորատանցքերով հայտնաբերվել են 5մ և ավելի խորություններում:

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ուսումնասիրման համար օգտագործվել են տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների հետևյալ տարատեսակները.

- Խոշորաբեկորային գրունտներ (Շերտեր թ. 1)
- Ժայռային գրունտներ (Շերտ թ. 2)

Ստորև աղյուսակում բերված են գրունտների միջինացված ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

Աղյուսակ 1.7.3

Ֆիզիկա-մեխանիկական ցուցանիշներ	Չափման միավոր	Գրունտներ	
		Շերտ 1	Շերտ 2
1	2	3	4
Ծավալային կշիռ	կգ/մ3	2000	2600
Տեսակարար շաղկապվածություն	ՄՊա	20	-
Ներքին շփման անկյուն	աստիճան	37	-
Դեֆորմացիայի մոդուլ	ՄՊա	40	15

Պայմանական հաշվարկային ճնշում	ՄՊա	0.30	0.80

1.7.4 Աշխատանքների արդյունքները

Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնույթից, ինչպես նաև հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից, ուսումնասիրվող տարածքում առանձնացվել են երեք ինժեներա-երկրաբանական շրջաններ՝ բարենպաստ, պայմանական բարենպաստ և անբարենպաստ:

Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել է ինժեներա-երկրաբանական շրջանացման 1: 5 000 մասշտաբի քարտեզը (գրաֆիկական հավելված 2):

1.7.5 Հորատանցքերի նկարագրությունը

Հորատանցք 1

$\frac{0.0-10.9մ}{10.9մ}$ Հրաբխանստվածքային տերրիգեն կարբոնատային մետամորֆիզացված և ինտրուզիվ ապարներ, պորֆիրիտներ:

Հորատանցք 2

$\frac{0.0-12.0մ}{12.0մ}$ Հրաբխանստվածքային տերրիգեն կարբոնատային մետամորֆիզացված և ինտրուզիվ ապարներ, պորֆիրիտներ:

Հորատանցք 3

$\frac{0.0-10.5մ}{10.5մ}$ Բեկորային ժայռային և կիսաժայռային հրաբխային ապարների նստվածքային համալիր մեծաբեկորա-ճալաքարային կոպճային նստվածքներ, ավազակավային լցանյութով:

Հորատանցք 4

$\frac{0.0-10.0մ}{10.0մ}$ Բեկորային ժայռային և կիսաժայռային հրաբխային ապարների նստվածքային համալիր մեծաբեկորա-ճալաքարային կոպճային նստվածքներ, ավազակավային լցանյութով:

1.7.6 Սեյսմիկ միկրոշրջանացման աշխատանքների բացատրագիր

1.7.6.1 Գործիքային գրանցումների մեթոդիկան

Գործիքային գրանցումներն իրականացվել են Ռուսաստանի Դաշնության արտադրության քսանչորս կանալանոց »Лакколит 24-М2» թվային սեյսմիկ կայանի միջոցով (նկար 2):



Նկար 2. «Лакколит 24-М2» թվային սեյսմիկ կայանը

Կայանը նախատեսված է սեյսմահետախուզական աշխատանքների կատարման համար: Այն հնարավորություն է տալիս կատարել սեյսմահետախուզական աշխատանքներ առածգական ալիքների անդրադարձման և բեկման եղանակներով՝ օգտագործելով ժամանակակից տեխնիկական լուծումները ինժեներական, երկրաբանական և սեյսմիկ միկրոշրջանացման խնդիրների լուծման համար: Սեյսմիկ ալիքների գրանցումը և նախնական վերլուծությունը իրականացվում է կայանում տեղադրված ազդանշանային պրոցեսորի օգնությամբ իրական ժամանակային մասշտաբով: Այն հնարավորություն է տալիս աշխատել ցանկացած իմպուլսային հարվածող սարքերի հետ: Կայանի աշխատանքի հիմքում դրված է թույլ ցնցումների գրանցման և նրանց գումարման մոտեցումը, որի արդյունքում թույլ ցնցումները ուժեղացվում են:

Սեյսմիկ ալիքների գրանցման համար օգտագործվել են «СВ-10» տիպի սեյսմատվիչներ:

Գրանցումները կատարվել են սեյսմիկ զոնդավորման մեթոդով երկայնական առածգական ալիքների տարածման արագությունների որոշման նպատակով:

Տարածքի գրունտային պայմանների գնահատման հիմնական մեթոդներից մեկն է հանդիսանում սեյսմիկ կոշտությունների մեթոդը: Գրունտների սեյսմիկ կոշտությունները որոշելու համար անհրաժեշտ է որոշել երկայնական ալիքների տարածման արագությունները ուսումնասիրված տարածքը բնորոշող գրունտային պայմանների համար:

Տարածքի 20 կետերում կատարվել են սեյսմիկ զոնդավորման գրանցումներ, որոնց համար որոշվել են երկայնական սեյսմիկ ալիքների տարածման արագությունները:

Գործիքային գրանցումներով գրանցված կետերի տեղադիրքը ներկայացված է գրաֆիկական հավելված 1-ում:

Կիրառվել է բեկված ալիքների գրանցման եղանակը: Սեյսմիկ ալիքները հարուցվել են 20 կիլոգրամանոց մուրճի օգնությամբ:

1.7.6.2 Աշխատանքների արդյունքները

Գործիքային գրանցումների արդյունքներով որոշվել են շերտերում առաձգական ալիքների տարածման արագությունները, հաշվարկվել են առաձգական ալիքների տարածման միջին արագությունները, որոնք օգտագործվել են սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների հաշվարկներում:

Հաշվարկներն իրականացվել են հետևյալ բանաձևով՝

$$a = 10\ (0.3 \times IR - 3.1)$$

որտեղ՝ IR - ն ինտենսիվությունն է բալերով

a - ն հորիզոնական արագացումն է g - ի մասերով

Գրունտային պայմաններից կախված սեյսմիկ բալականության փոփոխության մեծությունը գնահատվել է սեյսմիկ կոշտությունների մեթոդով:

Հաշվարկներն իրականացվել են հետևյալ բանաձևով՝

$$\Delta I = 1.67\ lg\ (V_0\rho_0 / V_i\rho_i),$$

որտեղ՝ $V_0\rho_0$ – էտալոնային գրունտի ակուստիկ կոշտությունն է;

$V_i\rho_i$ – ուսումնասիրվող գրունտի ակուստիկ կոշտությունն է;

Գրունտային ջրերի հաշվին սեյսմիկ ազդեցության ուժգնության փոփոխությունը բալերով գնահատվել է հետևյալ բանաձևով՝

$$\Delta I_{.ջ.} = Ke^{-0.04h*h},$$

որտեղ՝ h – գրունտային ջրերի տեղադրման խորությունն է երկրի մակերևույթից հաշված:

K – լիթոլոգիական կազմից կախված գործակից:

Ուսումնասիրված տարածքի համար հաշվարկներում գրունտային ջրերի մինիմալ խորությունը ընդունվել է 10մ-ից ավելի:

Հաշվարկների համար, որպես էտալոնային ընդունվել են ավազակավային գրունտները, որոնց համար ակուստիկ կոշտությունը V0՝0=1050:

Այսպիսով ելակետային սեյսմիկ ազդեցության ուժգնությունը բալերով հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$I = \Delta I + I_0 + \Delta I_{\cdot ç.},$$

Սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների հաշվարկների համար տարածքի ելակետային սեյսմիկ վտանգը համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթղթի գնահատվել է 0.3g:

Հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.7.6.2

N- ՍՋ	V_1 մ/վ	V_2 մ/վ	V_3 մ/վ	h_1 մ	h_2 մ	h_3 մ	ρ_1 գ/սմ³	ρ_2 գ/սմ³	ρ_3 գ/սմ³	ρ_{cp} գ/սմ³	V_{cp} մ/վ	$\overline{V}_i \cdot \overline{\rho}_i$	I_0	ΔI	I_R	$\Delta I_{գ.գ.}$	a մ/վ²
ՍՋ-1	350	800	1800	1,3	2,2	6,5	1,43	1,67	1,86	1,76	1002	1767	8,5	-0,377	8,12	0	**0,217**
ՍՋ-2	320	840	1750	1,3	2,7	6,0	1,4	1,69	1,85	1,75	926	1616	8,5	-0,313	8,19	0	**0,227**
ՍՋ-3	385	875	1950	1,2	2,2	6,5	1,46	1,71	1,89	1,79	1096	1966	8,5	-0,455	8,05	0	**0,206**
ՍՋ-4	325	910	1800	1,4	2,0	6,6	1,41	1,72	1,86	1,77	988	1747	8,5	-0,369	8,13	0	**0,218**
ՍՋ-5	360	850	1850	1,3	3,4	5,3	1,44	1,69	1,87	1,76	960	1686	8,5	-0,343	8,16	0	**0,222**
ՍՋ-6	345	875	1950	1,6	3,4	5,0	1,43	1,71	1,89	1,75	894	1565	8,5	-0,289	8,21	0	**0,231**
ՍՋ-7	360	920	1750	1,3	3,1	5,6	1,44	1,72	1,85	1,76	978	1718	8,5	-0,357	8,14	0	**0,220**
ՍՋ-8	325	860	1800	2,7	3,0	4,3	1,41	1,7	1,86	1,69	706	1192	8,5	-0,092	8,41	0	**0,264**
ՍՋ-9	320	925	1950	2,4	3,1	4,5	1,4	1,73	1,89	1,72	754	1296	8,5	-0,153	8,35	0	**0,254**
ՍՋ-10	350	845	1750	2,9	3,0	4,1	1,43	1,69	1,85	1,68	707	1189	8,5	-0,09	8,41	0	**0,265**
ՍՋ-11	315	875	1900	2,4	3,2	4,4	1,4	1,71	1,88	1,71	737	1258	8,5	-0,131	8,37	0	**0,257**
ՍՋ-12	340	945	1850	3,1	2,8	4,1	1,42	1,73	1,87	1,69	701	1187	8,5	-0,089	8,41	0	**0,265**
ՍՋ-13	365	910	1920	3,6	2,9	3,5	1,45	1,72	1,88	1,68	674	1131	8,5	-0,054	8,45	0	**0,272**
ՍՋ-14	375	880	1870	2,9	3,0	4,1	1,46	1,71	1,87	1,70	754	1285	8,5	-0,146	8,35	0	**0,255**
ՍՋ-15	360	860	1950	2,6	4,2	3,3	1,44	1,7	1,89	1,70	734	1243	8,5	-0,123	8,38	0	**0,259**
ՍՋ-16	360	815	1720	2,2	4,0	3,8	1,44	1,68	1,84	1,69	757	1279	8,5	-0,143	8,36	0	**0,255**
ՍՋ-17	350	870	1900	2,3	4,1	3,6	1,43	1,7	1,88	1,70	760	1296	8,5	-0,152	8,35	0	**0,254**
ՍՋ-18	330	920	1950	2,4	4,6	3,0	1,41	1,72	1,89	1,70	723	1228	8,5	-0,113	8,39	0	**0,261**
ՍՋ-19	365	915	1850	2,6	4,1	3,3	1,45	1,72	1,87	1,70	743	1262	8,5	-0,133	8,37	0	**0,257**
ՍՋ-20	375	880	1900	2,5	4,3	3,1	1,46	1,71	1,88	1,70	750	1272	8,5	-0,139	8,36	0	**0,256**

Հաշվարկների արդյունքներով կազմվել է Լուսագյուղ համայնքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը (գրաֆիկական հավելված 2):

Կազմված սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզից երևում է, որ Լուսագյուղ համայնքի տարածքի համար սպասվող առավելագույն հորիզոնական արագացումները գտնվում են **0.206g – 0.272g** տիրույթում:

1.7.6.3 Եզրակացություններ և առաջարկություններ

Լուսագյուղ համայնքի գլխավոր հատակագծի մշակման ժամանակ սեյսմիկ վտանգի գնահատման համար որպես հիմք անհրաժեշտ է ընդունել սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզում ներկայացված արժեքները:

Քարտեզը չի կարող հիմք ծառայել առանձին տեղամասերում շենքերի նախագծման աշխատանքների համար:

1.7.6.4 Օգտագործված գրականության ցուցակ

1. С.В. Медведев Сейсмическое микрорайонирование “Наука”, Москва 1977г

2. О.В. Павлов Оценка влияния грунтовых условий на сейсмическую опасность”Наука”, Москва 1988г.

3. В.Б. Заалишвили Физические основы сейсмического микрорайонирования Москва 2000г.

4. Սեյսմակայուն շինարարության.Նախագծման նորմեր ՀՀՇՆ II-6.02-2006թ

5. ՀՀ Կառավարության 2012թ հոկտեմբերի 25-ի «Սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների հաստատման կարգը, սեյսմամիկրոշրջանացման և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներին ու դրանց կից ներկայացվող ամփոփագրի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. Հոկտեմբերի 19-ի N 1581-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1352-Ն որոշում:

6. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 04 մարտի 2013թ.-ի N 196-Ն և ՀՀ քաղաքաշինության նախարարի «13» մարտի 2013թ.-ի N 69-ն համատեղ հրաման: Կարգ սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) աշխատանքների իրականացման:

2.0 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿ

2.1 Բնակչություն

Ներկայումս զբաղեցրած տարածքում գյուղի առաջացման ժամանակաշրջանից բնակչության թվի դինամիկան ներկայացված է հետևյալ ցուցանիշներով

Աղյուսակ 2.1

Տարեթվեր ըստ ժամանակաշրջանների, թվական /ներ/	Բնակչության թիվ, մարդ	Ժամանակաշրջանի տևողություն, տարի	Բնակչության աճ, մարդ	Բնակչության աճ /նվազում/, մարդ
1831	*157*	-	-	-
1897	*501*	*66*	*344*	*5.21*
1926	*628*	29	127	4.38
1939	*746*	*13*	*118*	9
1959	*620*	*20*	*-126*	*-6.3*
1979	*673*	*20*	*53*	*2.65*
2001	*803*	*22*	*130*	*5.9*
2004	*717*	*3*	*-86*	*-28*
2019	*812*	*15*	*95*	*6.3*
Ընդամենը 1834-ից 2019	*157-812*	*188*	*655*	*3.48*

Գյուղի բնակչության 2019 թ. դրությամբ է 812 մարդ կազմում ներկա է՝արական սեռի 437 մարդ, իգական սեռի 375 մարդ: Տարիքային կազմը ըստ հասակային խմբերի՝ 0-5 տարեկան 40 մարդ, 6-18 տարեկան 53 մարդ, աշխատունակ տարիքի 611 մարդ, թոշակառուներ 108 մարդ:

Ապարանի տարածաշրջանը համարելով որպես ընթացիկ ուսումնասիրության կենտրոն՝ բնակչության ընդհանուր նկարագիրն ու դինամիկան 2011-2016թ.թ. ընթացքում, բնակչության թվի դինամիկան 2011-2016թ.թ. կազմել է՝

2011	2012	2013	2014	2015	2016
900	910	936	944	876	874

Դինամիկայի պատկերը կազմված է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տվյալների հիման վրա:

Լուսագյուղում ժողովրդագրական պատկերը դիտարկելիս տարիքային և սեռային խմբերով կարող է օգտակար լինել մեկնարկող ծրագրի թիրախավորված գործունեության ներուժը գնահատելու և բաշխելու գործում: Տեղեկատվությունը ներկայացված է տոկոսներով՝ բնակչության ընդհանուր թվի հաշվարկով:

Աշխատունակ տարիքից ցածր, %	Աշխատունակ տարիքի, %	Աշխատունակ տարիքից բարձր, %	Արական	Իգական
25	63	12	48	52

Կրթություն: Լուսագյուղում գործում է միջնակարգ դպրոցը և մասամբ մանկապարտեզը: Դպրոցի շենքը կարիք ունի ընդարձակման, արդիականացման, սեյսմակայուն շինարարության և էներգախնայող պահանջներին համապատասխանեցմանը:

Մանկապարտեզի շենքի վիճակը չի բավարարում ժամանակակից պահանջներին: Անհրաժեշտություն կա նոր շենքի կառուցման:

Բարձրագույն կրթության հետ կապված՝ Արագածոտնի մարզում չկան բարձրագույն կրթական հաստատություններ: Պետք է ուշադրություն դարձվի մարզի մշակութային կյանքին, վարք ու բարքին և միտումներին ՝ բնակչության կրթական մակարդակի և սոցիալ-տնտեսական ակտիվության գլխավոր ցուցանիշների բարելավմանը: Մարզում չկա ոչ մի թատրոն:

Արագածոտնի մարզում գրադարանային հաճախելիության թիվն ամեն 10000 մարդու հաշվով 2015թ. կազմել է 1,28 մարդ:

Արագածոտնի մարզում մարմնամարզիկների թիվը սպորտային հաստատություններում 2015թ. կազմել է 42,1 մարդ 10 000 բնակչության հաշվով:

Զբաղվածություն: Զբաղվածության զգալի տոկոսը կազմում է գյուղատնտեսական գործունեությունը: 2013-2015թ.թ. միջին ամսական անվանական աշխատավարձի դինամիկան Հայաստանում և Արագածոտնի մարզում կազմել է, դրամ

	2013 թ.	2014 թ.	2015 թ.
ՀՀ	146,524,0	158,580,0	171,615,0
Արագածոտնի մարզ	102,191,0	111,702,0	119,174,0

Արտագաղթ: Արտագաղթի հիմնախնդիրների հիմնական տվյալները ստացվել են անմիջապես համայնքի ղեկավարների հետ հարցազրույցներից: Ինչպես բոլոր համայնքներում, այդպես էլ Լուսագյուղում արտագաղթի տոկոսը բավականին բարձր է: Միակ մեղմացուցիչ համգամանքն այստեղ այն է, որ դա սեզոնային բնույթ է կրում և գրեթե ամեն ձմեռ նրանք վերադառնում են հայրենիք: Պարզ է դառնում, որ զբաղվածության կամ ինքնազբաղվածության գլխավոր հնարավորությունը համայնքների մեծ մասում անասնապահությունն ու երկրագործությունն է՝ վերամշակման ենթարկող փոքր ծավալների ձեռնարկությունների և չգործող զբոսաշրջային ծառայությունների հետ միասին:

2.2 Բնակարանային ֆոնդ և ապահովվածություն

Ներկա դրությամբ Լուսագյուղում հաշվարված է բնակարանային տնտեսությունների թիվը կազմում է /անհատական տների/ 145 հատ: Դրանց ընդհանուր բնակելի մակերեսը մոտավոր հաշվարկով կազմում է 14.5-ից 16.0 հազար ք.մ: Տնտեսությունների թիվը 197 հատ:

Բնակչության բնակարանային մակերեսով ապահովվածությունը միջինացված ցուցանիշը տատանվում է17.8-ից 19.7 ք.մ/մարդ:

2.3 Հասարարակական սպասարկման համակարգ

Լուսագյուղում հասարարակական սպասարկման օբյեկտներից առկա է՝

գյուղապետարանը, հանրակրթական դպրոցը, մանկապարտեզը /ոչ բարվոք վիճակում/, տուրբազայի շենք /շահագործման ոչ ենթակա վիճակում/:

Բնակելի տներում տեղակայված մթերային խանութներ 3-4 հատ:

3.0 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Արմենիան Ֆյուչր» հիմնադրամի կողմից մշակված բարեգործական ծրագիրը ուղղված է Լուսագյուղ գյուղի զարգացմանը: Ներկայացված ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել Լուսագյուղ գյուղի գլխավոր հատակագիծը /մաստեր պլանը/, որն իր մեջ ներառելու է գյուղի տարածական զարգացման հայեցակարգը, որի հիման վրա իրականացվելու են լայնածավալ աշխատանքներ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թվականից մինչև 2024 թվականը: Լուսագյուղի նախագծային աշխատանքները, այդ թվում նաև գլխավոր հատակագիծը, նախատեսվում է իրականացնել 2019 թվականի ընթացքում: Նախագծային աշխատանքների նամար նախատեսվող ծախսերը, այդ թվում նաև գլխավոր հատակագիծը, կազմում են 40,995,000 դրամ: Լուսագյուղի տարածքի ինժեներական ենթակառուցվածքների նախագծումն ու իրականացումը 2019 թվականի ընթացքում կազմելու է 16,070,000 դրամ: Կառուցապատման, շինմոնտաժային, վերանորոգման աշխատանքների իրականացման նախատեսվող ծախսերը՝ 76,780,000 դրամ, իրականացվելու է 2019 - 2022 թթ. ընթացքում:

Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հողատարածքների ձեռքբերման նախատեսվող ծախսերը՝ 75,307,000 դրամ, իրականացվելու է 2019-2020 թթ. ընթացքում:

«Արմենիան Ֆյուչր» հիմնադրամի կողմից մշակված բարեգործական ծրագրի իրականացման բյուջեն կկազմի շուրջ 4,124,340,000 դրամ, որի մեջ ներառված են՝

1. Լուսագյուղի ճարտարապետական նախագծային աշխատանքների իրականացում. նախատեսվող ծախսերը՝ 40,995,000 դրամ, իրականացվելու է 2019 թվականի ընթացքում:
2. Լուսագյուղի տարածքի ենթակառուցվածքների նախագծում. նախատեսվող ծախսերը՝ 16,070,000 դրամ, իրականացվելու է 2019 թվականի ընթացքում:
3. Բնակելի նշանակության գույքի կառուցապատման, շինմոնտաժային, վերանորոգման և հարդարման աշխատանքների իրականացում. նախատեսվող ծախսերը՝ 589,841,000 դրամ, իրականացվելու է 2019 - 2022 թթ. ընթացքում:

4. Դպրոցի, մշակութային տան, տոնավաճառ-բազայի, ինչպես նաև ծրագրով նախատեսված հասարակական, արտադրական նշանակության այլ գույքի կառուցապատման, շինմոնտաժային, վերանորոգման և հարդարման աշխատանքների իրականացում. նախատեսվող ծախսերը՝ 585,536,000 դրամ, իրականացվելու է 2019 - 2024 թթ. ընթացքում:
5. Ենթակառուցվածքների կառուցապատման, շինմոնտաժային, վերանորոգման աշխատանքների իրականացում. նախատեսվող ծախսերը՝ 76,780,000 դրամ, իրականացվելու է 2019 - 2022 թթ. ընթացքում:
6. Ծրագրի իրականացման շրջանակներում անհրաժեշտ տեխնիկայի, սարքավորումների, գույքի և կահավորանքի ներմուծում կամ ձեռքբերում. նախատեսվող ծախսերը՝ 1,747,136,000 դրամ, իրականցվելու է 2019 – 2024 թթ. (այս կետում նշված են՝ դպրոցի, գյուղապետարանի և ծրագրով նախատեսված այլ շինությունների համար անհրաժեշտ գույք, տեխնիկա և կահավորանք, ճոպանուղի, տրակտորներ և նմանատիպ անհրաժեշտ այլ տեխնիկա, ձյուն մաքրող տեխնիկա, գյուղմթերքների պատրաստման, վերամշակման և պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներ, տեխնիկա և այլն):
7. Բոլոր տեսակի շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ շինանյութի ձեռքբերում. նախատեսվող ծախսերը՝ 665,675,000 դրամ, իրականացվելու է 2019–2024 թթ. ընթացքում:
8. Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հողատարածքների ձեռքբերում. նախատեսվող ծախսերը՝ 75,307,000 դրամ, իրականացվելու է 2019-2020 թթ. ընթացքում:
9. Գեոդեզիա, չափագրում և այլ մասնագիտական անհրաժեշտ ուսումնասիրություններ. նախատեսվող ծախսերը՝ 10,000,000 դրամ, իրականացվելու է 2019-2024 թթ. ընթացքում:
10. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը՝ 317,000,000 դրամ, իրականացվելու է 2019-2024 թթ. ընթացքում:

Բարեգործություն ստացողը Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ գյուղի բնակիչները:

Լուսագյուղի ընտրության նախապատվությունը պայմանավորված է եղել գյուղական համայնքների շրջանում իրականացված վերլուծության արդյունքներով, որի ընթացքում դիտարկվել են մի շարք կարևորագույն գործոններ, որոնց թվին են դասվում տվյալ գյուղական համայնքի առկա սոցիալ-տնտեսական վիճակը, զարգացվածության մակարդակը, տեղի բնակիչների թվաքանակը, հակվածությունը դեպի տարաբնույթ տնտեսական ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև դիտարկվել են առկա խնդիրները, դրանց բարդության աստիճանը, լուծման ուղղիները: Հաշվի են առնվել գյուղի զարգացման համար առկա նախադրյալները, ինչպես նաև համայնքում մոտիվացված բնակիչների առկայությունը՝ ծրագրի իրականացման գործընթացում ներգրավելու համար:

3.1 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՂ ՃՅՈՒՂԵՐԸ

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի մասնաբաժինը հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմում են գյուղատնտեսության ու շինարարության ճյուղերը:

Արդյունաբերությունը: Արդյունաբերության հիմնական ճյուղն արտադրությունն է: Արագածոտնի մարզում, որպես արդյունաբերության զարգացած ենթաճյուղեր՝ սննդի, խմիչքի և տեքստիլի արտադրություններն են, կարպետագործությունը:

Մարզի արդյունաբերության մանրամասն նկարագիրը՝ ըստ տեսակների՝ արտադրությունն է ՝ 83%, տարբեր էներգետիկ տեակները՝ 15%, ջրամատակարարում, ջրահեռացում, թափոնների տնօրինման և վերականգնողական գործունեությունը, ինչպես նաև հանքարդյունաբերությունը մեկական տոկոս չի անցնում:

Գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսությունը մասնագիտացված է հացահատիկային, բանջարաբոստանային բույսերի (հատկապես կարտոֆիլի) մշակման և անասնապահության մեջ: Մարզի գյուղատնտեսության ծավալը և դրա տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում 2011-ից 2015թ.թ. կազմել է.

2011	2012	2013	2014	2015
9,7%	10,2%	9,7%	9,9%	10,0%

Պիլոտային համայնքներում իրավիճակի ավելի օբյեկտիվ գնահատման համար անասնապահության վերաբերյալ գրանցամատյաններ են տրամադրվել և մանրամասն ուսումնասիրվել: Այնուամենայնիվ, գործնականում համայքապետարանում հաճախ չեն տիրապետում այս կամ այն համապատասխան տեղեկատվությանը միևնույն ֆորմատով՝ գրավոր կամ փաստաթղթային տեսքով: Այսպիսով, գյուղտնտեսության և գյուղական համայնքների կենցաղի վերաբերյալ տեղեկությունների հետագա վերլուծություններում ոչ բոլոր տվյալներն են ստանդարտացված, և դեռևս կան պակաս կամ լիովին չհաստատված տվյալներ:

Համապատասխան ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության Լուսագյուղի անասունների հաշվառման հանրագումարների մասին առ 01 01.2019 թ. /տնտեսությունների թիվը՝ 145/ ներկայացված է.

1. Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը՝ 886 գլուխ, որից՝ կովեր 691, արտադրող ցուլեր 8, երինջներ 1-ից 2 տարեկան 25, երինջներ 2 տարեկանից բարձր 29, չսերմավորված էգ մոզիներ 2 տարեկանից բարձր 133 գլուխ:
2. Խոզեր ընդամենը 55, որից՝ մայր խողեր հիմնական հոտի 22, էգ խոզեր կազմալրման համար 4-12 ամսական 19 գլուխ:
3. Ոչխարներ բոլոր ցեղերի, ընդամենը 903, որից՝ մաքիներ 742, շիշակներ 1 գլուխ:
4. Այծեր, ընդամենը 60, որից մայր այծեր 57 գլուխ:
5. Ճագարներ, ընդամենը 4, որից մայր ճագարներ 4 հատ:
6. Թռչուններ, ընդամենը 859, որից ածան հավեր 828 հատ:
7. Մեղվաընտանիքներ 65 հատ:
8. Ավանակ 1 հատ:

Ինչպես երևում է մանր և խոշոր եղջերավոր անասունները կարևոր նշանակություն ունեն, գյուղացիների ապրուստի հիմնական աղբյուրն են:

Անասունների որոշ տեսակներ պետք է առանձին դիտարկվեն՝ հաշվի առնելով դրանց դերը, եկամտաբերությունն ու տնտեսական նշանակությունը: Այսպիսով երկարաժամկետ նպատակների իրագործման համար օգտակար է վերլուծել, թե որքան է անասնաբուծության հետագա զարգացման և եկամտի ավելացման ներուժը: Պետք է ուշադրություն դարձվի կաթնատու կովերին, արտադրություն ապահովող ցուլերին, հավերին և այլն: Ստորև ներկայացված տվյալները հստակ ցույց են տալիս այս ներուժը.

Արտադրական նշանակության կենդանիներ, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են՝ հավ – 1038, ոչխար – 764, խոզ – 24, ցուլ – 12, կով – 365:

Գյուղատնտեսական արտադրանքի ծավալը ՀՀ ցուցանիշների հետ համեմատության մեջ Արագածոտնի մարզի անասնաբուծական արտադրանքի ծավալը ներկայացված է աղյուսակում.

Աղյուսակ 3.1

Կենդանական ծագման արտադրանք, Արագածոտնի մարզ, ՀՀ մասշտաբով 2016թ.

Քանակը			Կենդանիների տեսակարար կշիռը
Արտադրանք	Արագածոտն	ՀՀ	%
Միս սպանդային քաշով, հազար տոննա	17,9	176,1	10,2
Կաթ, հազար տոննա	88,2	728,6	12,1
Ձու, մլն. հատ	61,5	659,8	9,3
Բուրդ, տոննա	218	1,571	13,9

Լուսագյուղում անասնապահության վարմանը անհրաժեշտ հողատարածքները

եվ կերի պահանջը

Գյուղում պահվում է արոտամսուրային պահվածքով 180 օր արոտում և 185 օր մսուրային պահվածքով:

Մեկ կովի օրական միջին կաթնատվությունը ընդունվում է 10 կգ: Ըստ նորմատիվ հաշվարկների մեկ կովի օրեկան կերի պահանջի սննդարարությունը կազմում է 9 կերի միավոր:

Մսուրային շրջանում կովերի կերաբաժնի կառուցվածքը ընդունվում է հետևյալը՝

- կոպիտ կերեր՝ խոտ- 45%,
- կերի ճակնդեղ-25%,
- ջարդած գարի- 30%:

Ըստ կերաբաժնի կառուցվածքի մսուրային շրջանում օրական մեկ կովին կերակրելու համար անհրաժեշտ է լինելու՝

- 9 կգ խոտ,
- 18 կգ կերի ճակնդեղ,
- 2-:-3 կգ ջարդած գարի,

Մսուրային շրջանում տարեկան պահանջի հաշվարկով անասնակերի պահանջը կազմելու է՝

- 9 կգ x 185 օր = 1.665 տ/տարի խոտ,
- 18 կգ x 185 օր = 3.33 տ/տարի կերի ճակնդեղ,
- 2-:-3 կգ x 185 օր = 0.37-:-0.555 տ/տարի ջարդած գարի:

Այսպիսով շուրջ 700 կովի համար պահանջվում է 1190 տ/տարի խոտ, 2310 տ/տարի կերի ճակնդեղ և 294 տ/տարի գարի:

Լուսագյուղի տնորինած հողատարածքները ամբողջովին բավարարում են բոլոր անասնատեսակներին շուրջ տարի սեփական արտադրության կերերով ապահովելուն:

1073 հա արոտները լրիվ բավարար են թե խոշոր և թե մանր եղջերավոր կենդանիներին արոտում վեց ամիս պահելու համար: Նախատեսվում է, որ արոտում օրական մեկ կովը ուտելու է 40-70 կգ, մատղաշը 30-40 կգ և մինչև մեկ տարեկան մատղաշը 15-25 կգ արոտի կանաչ խոտ:

Ինչ վերաբերվում է վարելահողերին, ապա ունեցած 150,1 հա-ից կերի ճակնդեղ աճեցնելու համար բավարար կլինի 60 հա: Գարու ցանքսերը կզբաղեցնեն 15 հա:

Գյուղը խոտարքների դեֆիցիտ ունի՝ մոտ 125 հա, որը հնարավոր է կոմպեսացնել ունեցած այլ հողատեսքերի և վարելահողերից որոշ մասը հատկացնելով:

Հողատեսքերի բերքատվությունը ընդունված է միջինը՝ գարին 2 տ/հա, ճակնդեղը 40 տ/հա, խոտը-8 տ/հա:

4.0 ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ մարզ ԱՊԱՐԱՆԻ ենթատարածք 2.51. ԼՈՒՍԱԳՅՈՒՂ գյուղ

Լուսագյուղ գյուղը գտնվում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Նիգ գավառում (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի ենթատարածք), Ապարան քաղաքից **1.8 կմ** հյուսիս-արևելք, Ծաղկունյաց լեռնաշղթայի փեշերին, ծովի մակերևույթից 2015 մ բարձրության վրա: Մատենագրության և ուղեգրական գրականության մեջ հիշատակվում է Ճանճիկ, Ձանջիկ, Քարագլուխ. Կարանլուխ, Գարանլըգ, Ղարանլուխ և այլ անվանաձևերով: Լուսագյուղ է վերանվանվել ՀՍՍՀ Գերագույն Սովետի 1948 թ. սեպտեմբերի 10-ի հրամանագրով: Ներկայիս բնակիչների նախնիների մի մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի գյուղերից, ռուս-թուրքական պատերազմից հետո, 1829-1830 թթ.:

Գյուղի մեջ և շրջակայքում պահպանվել են պատմամշակութային տարբեր հուշարձաններ, որոնք վերաբերում են պատմական տարբեր ժամանակաշրջաններին, քարի դարից մինչև մեր օրերը: Դրանցից 12-ը (7 պահպանական միավորով) ընդգրկվել է ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, որը հաստատվել է ՀՀ Կառավարության 29.05.2002 թ. N 628 որոշմամբ:

4.1 ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
2. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
2.51. ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂ

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԱՄՐՈՑ «ԱՎԵՐ ԲԵՐԴ»	մթա 2-1 հզմ	2 կմ հս	S	«Ձախի ձոր» կոչվող բարձունքի վրա
2.				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-20 դդ.	հս-աե մասում	S	շրջապատված բնակելի տներով
	2.1.			կոթող	5-7 դդ.		Հ	հին թաղումների հատվածում, տեղահանված, պահպանվել է կիսով
3.				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	17-19 դդ.	հվ մասում	S	խիստ ավերված
4.				ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 2-1 հզմ	հս մասում	Հ	Թուխ Մանուկ տանող ճանապարհին
5.				ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ «ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ» («ՄԽԵԻ ՎԱՆՔ»)	5-11 դդ., 12-13 դդ.	1 կմ աե	Հ	ձորի մեջ, ավերված
	5.1.			եկեղեցի	5-6 դդ.		Հ	

	5.2.			եկեղեցի	5-6 դդ.		Հ	
	5.2.			պարիսպ	10-11 դդ.		Հ	
	5.3.			գերեզմանոց	10-13 դդ.		S	եկեղեցուց հս
6.				ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	վրկնգ. 1887 թ.	գ. մ.	S	
7.				ԵԿԵՂԵՑԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ (ՎԵՐԻ ՎԱՆՔ)	7 դ.	1,5 կմ հս-աե	Հ	վրկնգ.՝ 1983 թ.

4.2 Հուշարձանների պահպանական գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգերը (ռեժիմ)

ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի N 3 ձև:

2.51.1 ԱՄՐՈՑ «ԱՎԵՐ ԲԵՐԴ»

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՌԱԿՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՀՏԱՐԿ - ԼՈՒՍԱԳՅՈՒՂ՝ 34 ԿՄ
ԼՈՒՍԱԳՅՈՒՂ - ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ 2.1 ԿՄ
ԱԶԻՄՈՒՏԸ՝ 342°00'

Ամրոց «Ավեր Բերդ» մ.թ.ա. 2-1 հզմ.

ՏԱՐԱԾՔԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹԸ

Մ 1:25000

ՔԱՐՏԵԶ - ՍԽԵՄԱ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Լուսագյուղ

Գերեզմանոց 16-20դդ.

Եկեղեցի 10-13դդ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
ՀՀ Արագածոտնի մարզպետ

«___» _____ 2006թ

«___» _____ 2006թ

Մարզը ---------- Արագածոտն
Համայնքը ---------- Լուսագյուղ
Բնակավայրը ---------- գ. Լուսագյուղ
Հուշարձանը /պահպանական միավորը/ ---------- Ամրոց «Ավեր Բերդ» Ք.ա. 2-1 հազ.
Պահպանական գոտիների տարածքը ---------- 3.0 հա
Այդ թվում՝
Հուշարձանի տարածքը ---------- 3.0 հա

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ - ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ,
Գ. ԼՈՒՍԱԳՅՈՒՂ
ԱՄՐՈՑ - ԲՆԱԿԱՏԵՂԻ
«ԱՎԵՐ - ԲԵՐԴ»
Ք.Ա. 2-1 ՀԱԶ.
(2 ԿՄ ՀՍ)

Գտնվում է «Ձախի ձոր»

վայրում, ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի գագաթին: Լեռան կոնածեւ գագաթը երեք կողմից դժվարամատչելի է, միայն համեմատաբար վատ պաշտպանված աե մասում անցնում են հզոր կրկնակի պարիսպները: Պարիսպները պահպանվել են մինչեւ 2,0 մ բարձրությամբ եւ 2,0-3,5 մ հաստությամբ: Պարսպին անմիջապես կից, ներսից արտահայտվում են կացարանների հետքերը: Տարածքում առկա են քիչ քանակությամբ խեցեղենի բեկորներ:

Հնավայրի մասին պատմական տեղեկություններ հայտնի չեն: Տեղի բնակիչների կողմից հայտնի է Ավեր բերդ անվանմամբ: Հուշարձանին անդրադարձել է Վ. Պետրոսյանցն իր «Նիգ Ապարանի պատմա-ճարտարապետական հուշարձաններ» գրքույկում:

Հուշարձանի հետագա պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 3.0 հա հողատարածք,որի սահմանները ճիշտ և հաստատուն որոշելու համար որպես հենակետ /"Ա" կետ / ընտրվել է բնական ժայռերի հվ-ամ եզրը:

Ե. Աբրահամյան


ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ
ԵՎ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ

ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՅՑՈՒՄՍԿ

ԳԱԾԱՔ	ԱՅԱՆՔ	ԵՐԿԱՐ (Մ)	ԱԶԻՄՈՒՏ
Ա	Ա-1	100	310° 00'
1	1-2	210	50° 00'
2	2-3	120	133° 00'
3	3-4	70	176° 00'
4	4-5	150	234° 00'
5	5-6	110	284° 00'
6	6-1	100	11° 00'

Հենակետ «Ա» - ընտրված է բնական ժայռերի հվ-ամ եզրը

0 100 200 300 400 500

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Ա — պահպանական գոտու հենակետ
—— — հուշարձանի տարածքի սահմանը
---- — պահպանական գոտու սահմանը
— բազմանկյան գագաթը

2.51.1 ԱՄՐՈՑ «ԱՎԵՐ ԲԵՐԴ»

Հուշարձանի պահպանության գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգը (ռեժիմ)

ՀՀ ը/կ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլատրվում է	Արգելվում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահամարը	բնույթը			
1	2	3	4	5	6	7
1. Հուշարձանի տարածք						
1.1	Հողային	1.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		1.1.2	հողաշինարարական			
		1.1.3	գյուղատնտեսական			
		1.1.4	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			

1.2	Շինարարական	1.2.1	ամրակայում, վերականգնում			
2. Պահպանության գոտում						
2.1	Հողային	2.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		2.1.2	գյուղատնտեսական			
		2.1.3	շինարարական			
		2.1.4	տնտեսական գործունեություն			
2.2	Բարեկարգում	2.2.1	թփուտներ			
		2.2.2	ծառատունկ			
		2.2.3	հետիոտն անցուղիներ			
		2.2.4	ճանապարհներ			
2.3	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	3.1.1	աղբաման, աթոռ			
		3.1.2	սան. հանգույց			
		2.3.3	ավտոկայանատեղի			
2.4	Տնտեսական	2.4.1	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
3. Կառուցապատման կարգավորման գոտում						
3.1	-	3.1.1	-	-	-	-
4. Լանդշաֆտի պահպանման գոտում						
4.1	Հողային	4.1.1	Հուշարձանի պատմականորեն ձևավորված լանդշաֆտի փոփոխություն			
		4.1.2	ռելիեֆի, լանդշաֆտի			

			պատմականորեն ձևավորված տեսքի վերականգնման աշխատանքներ			

2.51.2 ԳԵՐԵԶՄԱՆՈՑ







2.51.2 ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Հուշարձանի պահպանության գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգը (ռեժիմ)

ՀՀ ը/կ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլատրվում է	Արգելվում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահամարը	բնույթը			
1. Հուշարձանի տարածք						
1	2	3	4	5	6	7
1.1	Հողային	1.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		1.1.2	շինարարական			
		1.1.3	գյուղատնտեսական			
		1.1.4	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			

1.2	Շինարարական	1.2.1	ամրակայում, նորոգում, վերականգնում			
2. Պահպանության գոտում						
2.1	Հողային	2.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
2.2	Բարեկարգում	2.2.1	խոտածածկ			
		2.2.2	թփուտներ			
		2.2.3	ծառատունկ			
		2.2.4	հետիոտն անցուղի			
		2.2.5	ճանապարհ			
2.3	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	2.3.1	աղբաման, աթոռ			
		2.3.2	սան. հանգույց			
		2.3.3	ավտոկայանատեղի			
2.4	Տնտեսական	2.4.1	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
		2.4.2	սպասարկման 1-ին անհրաժեշտության (ջուր)			
3. Կառուցապատման կարգավորման գոտում						
3.1	Կառուցապատում	3.1.1	պատմական միջավայրի փոփոխություններ			
		3.1.2	բնակելի, հասարակական			

			կառույցների և սպասարկման օբյեկտների իրականացում			
		3.1. 3	արտադրական և օժանդակ այլ կառույցների իրականացում			
4. Լանդշաֆտի պահպանման գոտում						
4.1	-	4.1.1	-	-	-	-

2.51.3 ԳԵՐԵԶՄԱՆՈՑ









2.51.3 ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Հուշարձանի պահպանության գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգը (ռեժիմ)

ՀՀ ը/կ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլատրվում է	Արգելվում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահամարը	բնույթը			
1. Հուշարձանի տարածք						
1	2	3	4	5	6	7
1.1	Հողային	1.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		1.1.2	շինարարական			
		1.1.3	գյուղատնտեսական			
		1.1.4	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			
1.2	Շինարարական	1.2.1	ամրակայում, նորոգում, վերականգնում			
2. Պահպանության գոտում						

2.1	Հողային	2.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
2.2	Բարեկարգում	2.2.1	խոտածածկ			
		2.2.2	թփուտներ			
		2.2.3	ծառատունկ			
		2.2.4	հետիոտն անցուղի			
		2.2.5	ճանապարհ			
2.3	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	2.3.1	աղբաման, աթոռ			
		2.3.2	սան. հանգույց			
		2.3.3	ավտոկայանատեղի			
2.4	Տնտեսական	2.4.1	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
		2.4.2	սպասարկման 1-ին անհրաժեշտության (ջուր)			
3. Կառուցապատման կարգավորման գոտում						
3.1	Կառուցապատում	3.1.1	պատմական միջավայրի փոփոխություններ			
		3.1.2	բնակելի, հասարակական կառույցների և սպասարկման օբյեկտների իրականացում			

		3.1. 3	արտադրական և օժանդակ այլ կառույցների իրականացում			
4. Լանդշաֆտի պահպանման գոտում						
4.1	-	4.1.1	-	-	-	-

2.51.4 ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝

ԱՇՏԱՐԱԿ - ԼՈՒՍԱԳՅՈՒՂ՝ 34 ԿՄ
ԼՈՒՍԱԳՅՈՒՂ - ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ 0.8 ԿՄ
ԱԶԻՄՈՒՏԸ՝ 33°00՛

ՏԱՐԱԾՔԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹԸ

Մ 1:25000



ՔԱՐՏԵԶ - ՍԽԵՄԱ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Տնօրեն՝
---------- Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Տնօրենի տեղակալ՝
---------- Հ. ՍԱՆԱՄՅԱՆ

Հեղինակներ՝
ինագետ՝ Է. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ճարտարապետ՝ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար

_____

«___» _____ 2006թ

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
ՀՀ Արագածոտնի մարզպետ

_____

«___» _____ 2006թ

Մարզը ---------- Արագածոտն
Համայնքը ---------- Լուսագյուղ
Բնակավայրը ---------- գ. Լուսագյուղ
Հուշարձանը /պահպանական միավորը/ ---------- Դամբարանադաշտ Ք.ա. 2-1 հազ.
Պահպանական գոտիների տարածքը ---------- 0.75 հա
Այդ թվում՝
Հուշարձանի տարածքը ---------- 0.75 հա

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
Համայնքի ղեկավար

_____

«___» _____ 2006թ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԴԱՍԱԿՈՒՄ Է ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐՈՒԹՅԱՆ, ՈՐԻ ԱՅՆ ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՌԵԺԻՄ: ԱՅԴ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԲՏ:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ - ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ,
Գ. ԼՈՒՍԱԳՅՈՒՂ
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ
Ք.Ա. 2-1 ՀԱԶ.

Գյուղից հյուսիս, Թուխ Մանուկ եկեղեցուց հվ-աե ընկած թեք լանջերի վրա պահպանվել են շուրջ մեկ տասնյակի հասնող 5-10 մ տրամագծով, մինչեւ 0,5 մ բարձրությամբ դամբարանաթմբեր: Շրջանագծերը բազալտից է, լիցքը՝ քարահողային: Դամբարանադաշտը գրավում է մոտ 0,75 հա տարածություն: Պեղված չէ:

Պատմական տեղեկություններ չկան: Հուշարձանի հետագա պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 0.75 հա հողատարածք,որի սահմանները ճիշտ և հաստատուն որոշելու համար որպես հենակետ /"Ա" կետ / ընտրվել է «Թուխ Մանուկ» եկեղեցու հվ-աե անկյունը:

Է. Աբրահամյան

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ



ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՐՑՈՒՆԱԿ

ՏԱՐՐԵՐ	ԳԻՏԵՐ	ԻՆՉ-ՈՒ ՀԱՄԱՐ	ՏԱՐՐԱԳԻՏ
Ա	Ա-1	340	128° 00՛
1	1-2	75	145° 00՛
2	2-3	180	266° 00՛
3	3-4	50	11° 00՛
4	4-1	125	83° 00՛

Հենակետ «Ա» - ընտրված է «Թուխ Մանուկ» եկեղեցու հվ-աե անկյունը

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Ա — պահպանական գոտու հենակետ
—— — հուշարձանի տարածքի սահմանը
- - - - — պահպանական գոտու սահմանը
⑤ — բազմանկյան գագաթը

2.51.4 ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ

Հուշարձանի պահպանության գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգը (ռեժիմ)

NN ը/կ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլատր-վում է	Արգել վում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահամարը	բնույթը			
1	2	3	4	5	6	7
1. Հուշարձանի տարածք						
1.1	Հողային	1.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		1.1.2	հողաշինարարական			
		1.1.3	գյուղատնտեսական			
		1.1.4	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			
1. 2	Շինարարական	1.2.1	ամրակայում, վերականգնում			
2. Պահպանության գոտում						
2.1	Հողային	2.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		2.1.2	գյուղատնտեսական			
		2.1.3	շինարարական			

		2.1.4	տնտեսական գործունեություն			
2.2	Բարեկարգում	2.2.1	խոտածածկ			
		2.2.2	թփուտներ			
		2.2.3	ծառատունկ			
		2.2.4	հետիոտն անցուղիներ			
		2.2.5	ճանապարհներ			
2.3	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	3.1.1	աղբաման, աթոռ			
		3.1.2	սան. հանգույց			
		2.3.3	ավտոկայանատեղի			
2.4	Տնտեսական	2.4.1	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
3. Կառուցապատման կարգավորման գոտում						
3.1	-	3.1.1	-	-	-	-
4. Լանդշաֆտի պահպանման գոտում						
4.1	Հողային	4.1.1	Հուշարձանի պատմականորեն ձևավորված լանդշաֆտի փոփոխություն			
		4.1.2	ռելիեֆի, լանդշաֆտի պատմականորեն ձևավորված տեսքի վերականգնման աշխատանքներ			

2.51.5 ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ «ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ» («ՄԽԵԻ ՎԱՆՔ»)







2.51.5 ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ «ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ» («ՄԽԵԻ ՎԱՆՔ»)

Հուշարձանի պահպանության գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգը (ռեժիմ)

NN ը/կ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլատր-վում է	Արգելվում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահամարը	բնույթը			
1	2	3	4	5	6	7
1. Հուշարձանի տարածք						
1.1	Հողային	1.1.1	հետախուզում և պեղումներ			
		1.1.2	հողաշինարարական			
		1.1.3	գյուղատնտեսական			
		1.1.4	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			
1.2	Շինարարական	1.2.1	ամրակայում, նորոգում, վերականգնում			
2. Պահպանության գոտում						
2.1	Հողային	2.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		2.1.2	գյուղատնտեսական			
		2.1.3	հողաշինարարական			
		2.1.4	տնտեսական գործունեություն			
2.2	Բարեկարգում	2.2.1	խոտաճաճկ			
		2.2.2	թփուտներ			
		2.2.3	ծառատունկ			

		2.2.4	հետիոտն անցուղիներ			
		2.2.5	ճանապարհներ			
2.3	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	2.3.1	աղբաման, աթոռ			
		2.3.2	սան. հանգույց			
		2.3.3	ավտոկայանատեղի			
2.4	Տնտեսական	2.4.1	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
		2.4.2	սպասարկման 1-ին անհրաժեշտության (ջուր)			
3. Կառուցապատման կարգավորման գոտում						
3.1	Կառուցապատում	3.1.1	պատմական միջավայրի փոփոխություններ			
		3.1.2	համայնապատկերը խաթարող և տեսողական ընկալման բարենպաստ ուղիներին խոչընդոտող շենքերի և շինությունների հարկայնության բարձրացում			թույլատրելի է մեկ բարձրությամբ, լիազոր մարմնի հետ համաձայնությամբ
		3.13	կոմունիկացիոն հաղորդակցության ուղեգծերի, խողովակաշարերի նորոգում			
4. Լանդշաֆտի պահպանման գոտում						
4.1	-	4.1.1	-	-	-	-

2.51.6 ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝

ԱՇՏԱՐԱԿ - ԼՈՒՍԱԳՅՈՒՂ՝ 34 ԿՄ ԳՅՈՒՂԻ ՄԵՋ



ՏԱՐԱԾՔԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹԸ

Մ 1:25000

ՔԱՐՏԵԶ - ՍԽԵՄԱ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ



Տնօրեն՝

_____ Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Տնօրենի տեղակալ՝

_____ Հ. ՍԱՆԱՄՅԱՆ

Հեղինակներ՝

հնագետ՝ է. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ճարտարապետ՝ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար

_____

«___» _____ 2006թ

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
ՀՀ Արագածոտնի մարզպետ

_____

«___» _____ 2006թ

Մարզը ---------- Արագածոտն
Համայնքը ---------- Լուսագյուղ
Բնակավայրը ---------- գ. Լուսագյուղ
Հուշարձանը /պահպանական միավորը/ ---------- Սբ. Աստվածածին եկեղեցի 1887թ.
Պահպանական գոտիների տարածքը ---------- 0.06 հա
Այդ թվում՝
Հուշարձանի տարածքը ---------- 0.06 հա

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
Համայնքի ղեկավար

_____

«___» _____ 2006թ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԴԱՍԱԿՈՒՄ Է ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻՆ, ՈՒՆԻ ԱՅԴ ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՌԵԺԻՄ: ԱՅԴ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԲՏ:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ - ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ,
Գ. ԼՈՒՍԱԳՅՈՒՂ
ԵԿԵՂԵՑԻ
ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ
1887 թ.



Կառուցված է գյուղի կենտրոնում: Ալն ունի եռանավ բազիլիկային հորինվածք, աե կողմում խորանն է՝ բարձր բեմով, հս եւ հվ կողմերում՝ ուղղանկյուն ավանդատներով, ընդարձակ աղոթասրահով: Հս ավանդատունը եկեղեցու ընդհանուր ծավալից դուրս եկող հս պատի հաշվին ավելի մեծ է, քան հվ-ը: Միակ մուտքը հվ-ում է: Գերանածածկ է, տանիքը՝ երկթեք, պատած թերթաքարով: Կառուցված է սրբատաշ սեւ տուֆից, կրաշաղախի միացությամբ:

Եկեղեցու կառուցման վերաբերյալ պատմական տեղեկություններ հայտնի չեն:

Միայն մուտքից վեր, մեկ տողով փորագրված հիշատակագրության մեջ նշվող թվագիրը՝ 1887 թ., կարելի է համարել նաեւ եկեղեցու կառուցման տարեթիվը:

Ներկայումս հուշարձանի տեխնիկական վիճակը բարվոք չէ: 1932-1965-ը ծառայել է որպես պահեստ, հս եւ հվ պատերն ունեն ճաքեր:

Հուշարձանի հետագա պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 0.06 հա հողատարածք,որի սահմանները ճիշտ և հաստատուն որոշելու համար որպես հենակետ /"Ա" կետ/ ընտրվել է եկեղեցու հվ-աե անկյունը:

է. Աբրահամյան

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ



ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ՑՈՒՑԱԿ	ԶՈՒԳՈՐ	ՀԱ-ՐԱ ՀԱՐԹ.	ՏԱՐԱԾՈՒՆ
Ա	Ա-1	5,5	111° 30'
1	1-2	7	229° 30'
2	2-3	24,5	269° 30'
3	3-4	21	3° 30'
4	4-5	15	95° 30'
5	5-6	17	82° 30'
6	6-1	17	187° 00'

Հենակետ «Ա» - ընտրված է եկեղեցու հվ-աե անկյունը

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Ա — պահպանական գոտու հենակետ
—— — հուշարձանի տարածքի սահմանը
- - - - — պահպանական գոտու սահմանը
⑤ — բազմանկյան գագաթը

2.51.6 ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Հուշարձանի պահպանության գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգը (ռեժիմ)

NN ը/կ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլատր-վում է	Արգելվում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահամարը	բնույթը			
1	2	3	4	5	6	7
1. Հուշարձանի տարածք						
1.1	Հողային	1.1.1	հետախուզում և պեղումներ			
		1.1.2	հողաշինարարական			
		1.1.3	գյուղատնտեսական			
		1.1.4	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			
1.2	Շինարարական	1.2.1	ամրակայում, նորոգում, վերականգնում			
2. Պահպանության գոտում						
2.1	Հողային	2.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		2.1.2	գյուղատնտեսական			
		2.1.3	հողաշինարարական			
		2.1.4	տնտեսական գործունեություն			
2.2	Բարեկարգում	2.2.1	խոտածածկ			
		2.2.2	թփուտներ			
		2.2.3	ծառատունկ			

		2.2.4	հետիոտն անցուղիներ			
		2.2.5	ճանապարհներ			
2.3	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	2.3.1	աղբաման, աթոռ			
		2.3.2	սան. հանգույց			
		2.3.3	ավտոկայանատեղի			
2.4	Տնտեսական	2.4.1	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
		2.4.2	սպասարկման 1-ին անհրաժեշտության (ջուր)			
3. Կառուցապատման կարգավորման գոտում						
3.1	Կառուցապատում	3.1.1	պատմական միջավայրի փոփոխություններ			
		3.1.2	համայնապատկերը խաթարող և տեսողական ընկալման բարենպաստ ուղիներին խոչընդոտող շենքերի և շինությունների հարկայնության բարձրացում			թույլատրելի է մեկ բարձրությամբ, լիազոր մարմնի հետ համաձայնությամբ
		3.13	կոմունիկացիոն հաղորդակցության ուղեգծերի, խողովակաշարերի նորոգում			
4. Լանդշաֆտի պահպանման գոտում						
4.1	-	4.1.1	-	-	-	-

2.51.7 ԵԿԵՂԵՑԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ (ՎԵՐԻ ՎԱՆՔ)

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՇՏԱՐԱԿ - ԼՈՒՍԱԳՅՈՒՂ՝ 34 ԿՄ
ԼՈՒՍԱԳՅՈՒՂ - ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ 1 ԿՄ
ԱԶԻՄՈՒՏԸ՝ 12°00′



ՏԱՐԱԾՔԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹԸ

Մ 1:25000

ՔԱՐՏԵԶ - ՍԽԵՄԱ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Տնօրեն՝
_____ Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Տնօրենի տեղակալ՝
_____ Հ. ՍԱՆԱՍՅԱՆ

Հեղինակներ՝
ինագետ՝ Է. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ճարտարապետ՝ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար
_____
«___» _____ 2006թ

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
ՀՀ Արագածոտնի մարզպետ
_____
«___» _____ 2006թ

Մարզը ---------- Արագածոտն
Համայնքը ---------- Լուսագյուղ
Բնակավայրը ---------- գ. Լուսագյուղ
Հուշարձանը /պահպանական միավորը/ ---------- Եկեղեցի «Թուխ Մանուկ», գերեզմանոց 7-10-րդ դդ..
Պահպանական գոտիների տարածքը ---------- 0.35 հա
Այդ թվում՝
Հուշարձանի տարածքը ---------- 0.35 հա

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
Համայնքի ղեկավար
_____
«___» _____ 2006թ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԴԱՍԿՈՒՄ Է ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻՆ, ՈՐԻ ԱՅԴ ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՌԵԺԻՄ: ԱՅԴ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՐԱՎԱՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱԶԴԱՍՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ - ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ,
Գ. ԼՈՒՍԱԳՅՈՒՂ
ԵԿԵՂԵՑԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ
7-10 ԴԴ.

Եկեղեցին գտնվում է գյուղից 1,5 կմ հս-աե, ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի վերին հարթության վրա: Բարձր տեղում գտնվելու պատճառով տեղի բնակիչներն անվանում են նաեւ Վերի վանք: 1980-ական թթ.. սկզբներին Հնագիտության եւ Ազգագրության ինստիտուտի կողմից կատարվել են պեղումներ, իսկ 1983 թ. սկսվել են հուշարձանի վերականգնման աշխատանքները Հուշարձանների պահպանության ու օգտագործման վարչության գիտա-արտադրական արվեստանոցի կողմից: Ներկայումս կանգուն է:

Պատկանում է կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների եռախորան տիպին: Քառաթեւ այս հորինվածքը հիմքում 3 կողմից շրջապատված է գմբեթարդներով ավարտվող կիսաշրջանածեւ հենախորշերով, ամ-ից ուղղանկյուն թաղածածկ խաչաթեւով: Խաչաթեւերն անմիջականորեն հպված են իրար, առանց լրացուցիչ անկյունների: Միայն աե խորանը գմբեթատակ հիմքի եւ աե խորանի միջեւ ստացվել է թաղածածկ փոքր տարածություն՝ բեմ, եւ ապա աե խորանում եւս պահպանելով հս եւ հվ խորանների չափը, գմբեթատակ հիմքը ստացվել է ուղղանկյուն: Անցումն այս ուղղանկյուն հիմքից դեպի թմբուկ իրականացված է չորս մեծ, իսկ թմբուկից գմբեթ՝ ութ փոքր տրոմպների միջոցով: Հուշարձանի չորս խաչաթեւերն արտաքինից ունեն ուղղանկյուն եզրանկար: Մուտքը բացված է ամ խաչաթեւում: Կառուցված է սեւ տուֆի ոչ մեծաքիր սրբատաշ քարերից:

Հուշարձանի վերաբերյալ պատմական տեղեկություններ հայտնի չեն: Ըստ կառուցողական եւ հորինվածքային առանձնահատկությունների 7 դ. եկեղեցի է: Հուշարձանի հետագա պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 0.35 հա հողատարածք, որի սահմանները ճիշտ և հաստատուն որոշելու համար որպես հենակետ /"Ա" կետ / ընտրվել է եկեղեցու հս-աե անկյունը:



Է. Աբրահամյան

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Ա — պահպանական գոտու հենակետ
—— — հուշարձանի տարածքի սահմանը
– – – — պահպանական գոտու սահմանը
⑤ — բազմանկյան գագաթը

2.51.7 ԵԿԵՂԵՑԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ (ՎԵՐԻ ՎԱՆՔ)

Հուշարձանի պահպանության գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգը (ռեժիմ)

NN ը/կ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլատրվում է	Արգելվում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահամարը	բնույթը			
1	2	3	4	5	6	7
1. Հուշարձանի տարածք						
1.1	Հողային	1.1.1	հետախուզում և պեղումներ			
		1.1.2	հողաշինարարական			
		1.1.3	գյուղատնտեսական			
		1.1.4	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			
1.2	Շինարարական	1.2.1	ամրակայում, նորոգում, վերականգնում			
2. Պահպանության գոտում						
2.1	Հողային	2.1.1	հետախուզում և հնագիտական պեղում			
		2.1.2	գյուղատնտեսական			
		2.1.3	հողաշինարարական			
		2.1.4	տնտեսական գործունեություն			
2.2	Բարեկարգում	2.2.1	խոտածածկ			
		2.2.2	թփուտներ			
		2.2.3	ծառատունկ			

		2.2.4	հետիոտն անցուղիներ			
		2.2.5	ճանապարհներ			
2.3	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	2.3.1	աղբաման, աթոռ			
		2.3.2	սան. հանգույց			
		2.3.3	ավտոկայանատեղի			
2.4	Տնտեսական	2.4.1	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
		2.4.2	սպասարկման 1-ին անհրաժեշտության (ջուր)			
3. Կառուցապատման կարգավորման գոտում						
3.1	Կառուցապատում	3.1.1	պատմական միջավայրի փոփոխություններ			
		3.1.2	համայնապատկերը խաթարող և տեսողական ընկալման բարենպաստ ուղիներին խոչընդոտող շենքերի և շինությունների հարկայնության բարձրացում			թույլատրելի է մեկ բարձրությամբ, լիազոր մարմնի հետ համաձայնությամբ
		3.13	կոմունիկացիոն հաղորդակցության ուղեգծերի, խողովակաշարերի նորոգում			
4. Լանդշաֆտի պահպանման գոտում						
4.1	-	4.1.1	-	-	-	-

5.0 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

5.1 Գյուղի զարգացման ռազմավարությունը և նպատակները

Բնակավայրի գլխավոր հատակագիծը՝ տարածքային զարգացման երկարաժամկետ ծրագիր է, որի օգնությամբ լուծվում է համայնքի սոցիալական և տնտեսական զանազան ծրագրերի իրականացման տարածքային կազմակերպման խնդիրները:

Բնակավայրի տարածքային պլանավորման երկարաժամկետ ծրագիրն իրականացնելու համար համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում պետք է ամրագրվեն կառուցողական այն միտումները, որոնց իրականացումը կնպաստի պետական, ռեգիոնալ և միջռեգիոնալ ծրագրերում տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության տարբեր սոցիալական խմբերի մասնակցության ակտիվացմանը, համայնքում տնտեսական աճի ու գործարարության զարգացմանը:

Գյուղական համայնքի բնակչության սոցիալական ու տնտեսական ակտիվության մակարդակը, առողջական վիճակն ու կրթության մակարդակը աջակցում են գյուղում գործարարության զարգացմանը, բնակավայրի տարածքային կայուն զարգացմանը: Բնակավայրի տարածքային զարգացման քաղաքականությունը պետք է բավարարի համայնքի բնակչության տարբեր խմբերի շահերը: Բնակչության սոցիալական ակտիվությունը խթանում է բնակավայրի տարածքային զարգացումը և նպաստում բնակության համար որակյալ միջավայրի ստեղծմանը: Գործարարական միտումների ակտիվացման պայմաններում ավելի է կարևորվում տարածքային զարգացման ռազմավարական ծրագրային քաղաքաշինական փաստաթղթի առկայությունը, դրա կարգավորիչ դերն ու նշանակությունը:

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը նպատակաուղղված է հետևողական բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով, բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները՝ Լուսագյուղ գյուղը դարձնել բնակվելու, աշխատանքի և հանգստի համար ավելի գրավիչ, մաքուր և առողջ միջավայրով բնակավայր: Ինչպես նշված է 3.0 բաժնում «Արմենիան Ֆյուչր» հիմնադրամի կողմից մշակված բարե-գործական ծրագիրը՝ ուղղված է Լուսագյուղ գյուղի զարգացմանը: Ներկայացված ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել Լուսագյուղ գյուղի գլխավոր հատակագիծը /մաստեր պլան/, որն իր մեջ ներառելու է գյուղի ամբողջական ճարտարապետական և տնտեսական զարգացման հայեցակարգը /կոնցեպտը/, որի հիման վրա մշակվելու են ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր և իրականացվելու են լայնածավալ շինարարական աշխատանքներ:

Համայնքի երկարաժամկետ տարածքային զարգացման հիմքում պետք է դրվեն երկրում ընթացող սոցիալ-տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղությունները, որոնք ներառում են՝

- Տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության նախաձեռնությունների ակտիվացում, տնտեսական և սոցիալական համագործակցության պայմանների ստեղծում,
- Ռեգիոնալ սոցիալական քաղաքականության առաջնային ուղղությունների կիրառում, բնակչության սոցիալական պաշտպանության և զանազան սոցիալական պահանջները բավարարելու համար պայմանների ստեղծում,
- Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրական մրցակցային իրավական դաշտի կատարելագործում,
- Բնակչությանը բնակարանային շինարարության համար համապատասխան հողատարածքների նախատեսում, բնակարանային ֆոնդի պահպանման ու շահագործման համար հնարավորությունների կիրառում, ինչպես նաև, տարածքի բարեկարգման որակի բարձրացում,
- Ժամանակակից տեղեկատվական համակարգերի և միջոցների ներդրում, օգտագործման ընդլայնում, դրանց կիրառմամբ կրթության և լուսավորչության մակարդակների բարձրացում և կատարելագործում,
- Համայնքում աշխատանքի շուկայի ձևավորում ու ընտրության հնարավորությունների ընդլայնում, սեզոնային գործող արտադրական փոքր ձեռնարկության ստեղծում, ծառայողական և սպասարկման ոլորտների ու առարչական գործունեության միջև արդյունավետ համաչափությունների հաստատում,
- Կոմունալ տնտեսության ծառայությունների և ձեռնարկության կազմակերպում և անխափան մատուցում, այդ թվում՝ մասնավոր տնտեսավարման նախաձեռնությունների միջոցով,
- էկոլոգիական և բնակելի միջավայրի սանիտարական իրավիճակի և կյանքի անվտանգության ապահովության մակարդակի բարձրացում,
- Արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության անվտանգության համակարգի կազմակերպում և գործունեության ապահովում,
- Պատմության և մշակութի, ինչպես նաև բնության ժառանգության պահպանման դերի ու նշանակության կարևորում և պահպանման համար դրանց անվնաս օգտագործման նախաձեռնությունների խթանում,
- Երիտասարդության համար մարզական և առողջարարական համակարգերի ստեղծում, իրենց ուժերով ամենօրյա ազատ ժամանցի և զվարճալի միջոցառումների կազմակերպում և աջակցում,
- էներգիայի խնայող և վերականգնվող էներգիայի միջոցների կիրառում:

Տարածքային կայուն զարգացումը ներառում է նաև ճանապարհատրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքի ցանցերի ու կառույցների անընդհատ արդիականացումն ու կատարելագործումը: Այն պետք է նպատակաուղղված լինի բնակավայրի էկոլոգիական

իրավիճակի բարելավմանն, պատմամշակութային ժառանգության, ինչպես նաև քաղաքային բարի ավանդույթների պահպանմանը:

5.2 Տարածքի գործառական և հատակագծային կարգավորում

Գործող քաղաքաշինական հիմնական նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան բնակավայրի գլխավոր հատակագծի նախագծումը կատարվում է երկրի կամ մարզի տարաբնակեցման ուրվագծի և նախագծերի դրույթների հիման վրա՝ օգտագործելով համապատասխան քաղաքաշինական և ծրագրային այլ փաստաթղթերի պահանջները, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը: Գլխավոր հատակագծի նախագծում պետք է հաշվի առնված լինեն տարածքային համալիր բնապահպանական ուրվագիծը, տարածքների և բնակավայրերի վտանգավոր երկրաբանական և հիդրոերկրաբանական գործընթացներից պաշտպանելու ուրվագծերը և համարժեք այլ մշակումների դրույթները (ՀՀՇՆ 30.10.2014):

Համաձայն ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի /այսուհետ ՀՀՏԳՆ/ Լուսագյուղ գյուղի համար իբրև տարածաշրջանային կենտրոն է ճանաչվում Ապարան քաղաքը: Արագածոտնի մարզի տարաբնակեցման համակարգում Ապարանը դիտարկվում է, որպես հատակագծային երկրորդ մակարդակի քաղաք, տեղական նշանակության տարաբնակեցման համակարգի հիմնական տարրերից մեկը, իբրև այդ տարածաշրջանի հատակագծային կազմակերպման կենտրոն: Ապարանի դերն է՝ ապահովել տարածաշրջանում գտնվող բնակավայրերի սոցիալական, առողջապահական, կրթական, աշխատանքային շուկայի, կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և այլ ենթակառուցվածքների միասնական գործունեության համակարգումը:

Լուսագյուղը, որպես տեղական, տարածաշրջանային տարաբնակեցման համակարգի քաղաքաշինական միավոր, իր դիրքով և կողմնորոշմամբ ուղղված է դեպի Ապարան քաղաքը: Այդ հանգամանքը էական գործոն է հանդիսանում գյուղի հատակագծային կառուցվածքի կարգավորման խնդիրներում: Լուսագյուղն իր փողոցային ցանցով «հենված» է Մ3 միջպետական նշանակության՝ Աշտարակ-Ապարան-Սպիտակ ավտոմայրուղու վրա, որն անցնում է գրեթե շոշափելով Լուսագյուղ գյուղի տարածքի հարավ-արևմտյան եզրը:

Գյուղի տարածքային զարգացման ուղղված որոնումներում ծագող հիմնախնդիրը հանդիսանում է՝ ներկայիս իրավիճակում գործառական և հատակագծային կառուցվածքում պատշաճ աստիճանի զարգացում չստացած տարրերի բացահայտումն ու տեղաբաշխումը:

Սույն գլխավոր հատակագծի մշակման խնդիրներից է՝ օգտագործելով գյուղի տարածքային պաշարների ներուժը և նվազեցնելով դրանց անհամատեղելիության աստիճանը, ստեղծել համակարգված գործառական և հատակագծային առումով կազմակերպված տարածքային միասնականություն:

Քաղաքաշինական, տարածքային զարգացման ծրագրում ներառվող միջոցառումների շարքում հիմնական տեղը պետք է զբաղեցնեն.

1. Գյուղի հասարակական կենտրոնի համակարգի ձևավորում:

2. Հասարակական կենտրոնը որպես համալիր դիտարկելով, գյուղի բնականոն զարգացման համար դրա կազմում նախատեսել. մշակութային կենտրոն, մարզադահլիճ, տոնավաճառ, գյուղապետարանի գրասենյակներ, ոստիկանակետ, կապի հանգույց և բանկի մասնաճյուղի աշխատասենյակներ /օֆիս/:

3. Գյուղի կենտրոնական մասը զբաղեցնող ներկայումս չգործող գյուղարտադրական տարածքի դիրքը բնակելի տնամերձ կառուցապատման նկատմամբ սանիտարական պահանջների թույլատրելի հեռավորությունը ապահովելով նախատեսել գյուղի տնտեսական զարգացման համար բարենպաստ արտադրական և գյուղարտադրական արտադրամասերի տեղադրում:

4. Գյուղի հանրակրթական դպրոցի տարածքի հեռավոր անկյունում մանկապարտեզի նոր շենքի տեղադրում:

5. Գյուղի հյուսիս-արևելյան արվարձանում նախատեսել զբոսաշրջային համալիրի կենտրոնիի տեղադրում:

6. Զբոսաշրջային կենտրոնի մոտ նախատեսել դեպի «Թուխ մանուկ» եկեղեցի տանող ճոպանուղու ներքին կայանի տեղադրում:

7. «Թուխ մանուկ» եկեղեցու շրջակայքում պատմամշակութային հուշարձանի պահպանության, կառուցապատման կարգավորման և լանդշաֆտի պահպանման գոտիների սահմաններից դուրս նախատեսել բացօթյա ամֆիթատրոն եկեղեցական ծեսերի, մշակութային և տոնական միջոցառումների անկացման համար: Նշված սահմանափակումների պահանջներին բավարարելով նախատեսել ճոպանուղու վերին կայանի տեղադրում:

8. «Կարմիր վանք» կամ «Մխեի վանք» եկեղեցական համալիրից արևմուտք պատմամշակութային հուշարձանի պահպանության, կառուցապատման կարգավորման և

լանդշաֆտի պահպանման գոտիների սահմաններից դուրս նախատեսել հանգստի կենտրոնի տեղադրում:

9. Ապարան քաղաքի կողմից /Լուսագյուղի հիմնական մուտք/ մուտքի տարածքում նախատեսել մուտքը նշմարող կոթողի տեղադրում:

10. Նախատեսել գյուղի ճանապարհային ցանցի բարեկարգում, ճանապարհային նոր հատվածների և գյուղի տարածքի հակահեղեղային համակարգի ստեղծում:

11. Նախատեսել գյուղի կեղտաջրերի հեռացման /կոյուղի/ համակարգի ստեղծում:

12. Նախատեսել գյուղի տարածքային և տնտեսական զարգացմանը համապատասխան էլեկտրամատակարարման ցանցի և գիշերային լուսավորման արդիականացում, ա.թ. արևային մարտկոցների և էներգախնայող սարքավորումների կիրառում և տեղադրում:

13. Մշակել պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությանը վերաբերով միջոցարումների մասը:

14. Նախատեսվող բարեփոխումների շրջանակներում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում:

15. Մշակել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների մասը:

«Արմենիան Ֆյուչր» ԲՀ հիմնադրամի կողմից առաջադրվող բարեգործական ծրագրում սահմանված միջոցառումների արդյունավետությունը պահպանելու նպատակով և որպեսզի բնակավայրում ու հարակից տարածքում ապահովվի հանգիստ և հանդարտ միջավայր, որտեղ հնարավոր է իրագործել արդյունավետ աշխատանք, ինչպես նաև ընտանիքի, ընկերների և բարեկամների շրջանակներում ունենալ հանգստանալու և ժամանցի հնարավորություն, գյուղի հանրությունը պետք է մշակի գյուղում ապրելակերպի որոշակի կանոններ, որոնց կիռարումը թույլ կտա համանման մտածող, երկիրը, բնությունը և դրացիների հանգիստը հարգող բնակիչների միջև ստեղծել ներդաշնակ կյանքի մթնոլորտ:

5.3 Հողօգտագործում և թույլատրելի կառուցապատում

Բնակավայրի տարածքը հանդիսանում է մասնավոր (անհատական) տներով տնամերձ հողամասերով բնակելի և հանրային օգտագործման կառույցներով հասարակական նշանակության շենքերով կառուցապատում: Բնակավայրի տարածում առկա է նաև ընդհանուր օգտագործման տարածքներ, որոնց կազմում բնակավայրի ներքին ճանապարհա-փողոցային ցանցն է ինչպես նաև զբոսայիգիներ կամ պուրակներ: Բնակավայրին պատկանող տարածքի սահմաններում կարող են նաև կենսապահովման կոմունալ նշանակության ցանցը և դրա

կառույներ /ինժեներական ենթակառուցվածք/, դրանք են՝ օրվա կարգավորիչ ջրամբար /ՕԿՋ/, տրանսֆորմատորային ենթակայաններ /ՏԵԿ/, գազի կարգավորիչ կայան /ԳԿԿ/ և այլ:

Տնամերձ հողամասի տարածքում հնարավոր է ունենալ ընտանիքի/ների/ բնակվելու համար նախատեսված կառույցներ, /տուն, տներ/, ինչպես նաև օժանդակ կառույցներ՝ ավտոհանգրվան, բաղնիք, խորդանոց, սահմանափակ գլխաքանակով անասնագոմ, շվաքարաններ, արտաքին օջախ և խոհանոց: Տնամերձ հողամասում ընտանի կենթանիների թույլատրելի գլխաքանակը սահմանում է համայնքի ղեկավարը ավագանու համայնձանության պայմանով:

Կառուցապատումը պետք է բավարարի ՀՀ օրենքներով սահմանված, սեյսմակայուն, հակահրդեհային և սանիտառահակահամաճարակային շինարարության պահանջներին:

Հողամասի կառուցապատման ընդհանուր մակերեսը (կառույցների տակ ընկած տարածք) չպետք է գերազանցի հողամասի տարածքի 40%: Կառուցապատումը պետք է բացառի հարակից հողամասերի միջև բնակեցման միջավայրի վատթարացումը:

«Արմենիան ֆյուչր» ԲՀ «Լուսագյուղի զարգացման ծրագրին» համապատասխան գյուղի տարածական զարգացման գործընթացը ներառում է առկա հողօգտագործման որոշակի փոփոխություն՝ հողերի տրանսֆորմացիա, որի նպատակն է ապահովել բնակչության համար ավելի բարենպաստ միջավայր, հանրային ծառայությունների համակարգի ձևավորում, հանգսի և ազատ ժամանցի կազմակերպում, գյուղի հասարակական կյանքի ակտիվացում, ինչը աշխատատեղերի ստեղծման հետ համատեղ կնպաստի նաև արտագաղթի կրճատմանը:

Տարածքային զարգացման՝ հողերի տրանսֆորմացիայի ծրագրման հիմքում հաշվի է առած գյուղատնտեսական և հատուկ պահպանվող հողերի առավելագույն պահպանման պահանջը: Այդ առումով գլխավոր հատակագծի նախագծում հնարավորինս նվազեցվել է նշված տարածքների օտարումը: Ստորև ներկայացվում է տրանսֆորմացիայի պատկերը:

Գյուղատնտեսական հողեր 1309.91 հա-ից (100%) 3.73 հա (0.28%) օտարվելու է գյուղի փողոցային ցանցի կարգավորելու համար, ի նկատի ունենալով ցանցում առկա երթևեկության համար տեխնիկապես վտանգավոր հատվածները: Նշված տարածքի 0.18 հա (0.11%) օտարվելու է վարելահողից, 1.39 հա (0.12%) արոտից և 0.59 հա (0.045%) գյուղատնտեսական այլից: Գյուղի հասարակական կյանքը ակտիվացնելու, տարածքի զբոսաշրջային ներուժի օգտագործումը աշխուժացնելու միտումով 0.86 հա (0.08%) արոտավայրի այն հատվածից, որը տարիներ առաջ, առանց ձևակերպելու օգտագործվել է բազալտե խիճ արտադրելու համար, տարածքը նախատեսվել է Լուսագյուղի զբոսաշրջային նոր կենտրոնի ստեղծման համար և 0.51 հա (0.04%) ընդհանուր օգտագործման կանաչի բացակայությանը վերացնելու համար, տեղում ոչ մեծ պուրակ ստեղծելու համար: Լուսագյուղի Ապարան քաղաքի կողմից մուտքի կոթողը կառուցելու նպատակով առանձնացվում է արոտից 0.02 հա (0.0019%):

Համապատասխան նշված ծրագրի նախատեսվում է գյուղում կենցաղային կոյուղու կառուցում: Այդ նպատակով գյուղի ցածրադիր մասում նախատեսվում է կոյուղու մաքրման կայանի տեղադրում: Դրա համար արոտի հողերից օտարվելու է 0.05 հա (0.005%) տարածք:

Գյուղի կենտրոնում առկա 0.47 հա հատուկ պահպանվող տարածք զբաղեցնող հին, ներկայումս անօգտագործելի վիճակում գտնվող զբոսաշրջային բազայի տարածքը նախատեսվում է ներառել գյուղի հասարակական կենտրոնի համակարգի կազմում:

Գյուղապատկան հողերի հարավային սահմանի մոտ, բնակելի կառուցապատումից 300 մ ՍՊԳ ապահովելով, զարգացման միջնաժամկետ կամ հեռանկարային փուլում 5-10 տարուց հետո իրագործելու համար նախատեսվում է 0.48 հա նոր գերեզմանոցի համար:

5.4 Սեփականության օգտագործման սահմանափակում

Բնակավայրի տնամերձ կառուցապատման տարածքում գտնվող անշարժ գույքը (կառույցները) չի թույլատրվում օգտագործել քաղաքական, կրոնական կամ պաշտամունքային գործունեության նպատակներով:

Չի թույլատրվում օգտագործել դիսկոտեկների, պարային ակումբների, խաղատների, խաղասրահների, խաղային ավտոմատների տեղադրման, ինտիմ և դրան հավասարեցված ծառայությունների մատուցման նպատակով:

Տնամերձ հողամասերում գտնվող կառույցներում չի թույլատրվում կազմակերպել զվարճանքի և նմանատիպ միջոցառումների, առևտրի և տարատեսակ զանգվածային ծառայությունների, արտադրության, ինչպես նաև աղմուկի բարձր մակարդակի և հոտերի աղբյուր հանդիսացող ցանկացած այլ գործունեության համար:

Տնամերձ հողամասում գտնվող տների որոշ մասը տան տիրոջ ցանկությամբ կարող է տրամադրվել հանգստանալու նպատակով գյուղ ժամանած այցելուների համար անկախ տարվա եղանակից /սեզոնից/: Տնամերձ հողամասերում գտնվող կառույցները կարող են օգտագործվել որպես հանգստի և զբոսաշրջության նպատակով գյուղի այցելուների հանրային սննդի մատուցման, սահմանափակ ծավալով մանրածախ առևտրի, առողջապահական կաբինետների, նոտարական ծառայությունների և համանման նպատակների համար:

Հողամասն ու շրջապատող տարածքը բարետեսք պահպանելու համար չի թույլատրվում աղբի, այդ թվում շինարարական, և այլ թափոնների երկարատև պահումը հողամասի կամ

հարակից տարածքում: Նախորդ պարբերությունում նշված դեպքերում տան տերը պատասխանատու է աղբահանությունը պատշաճ կերպով կազմակերպելու համար:

Բնակավայրերի տարածքում չի թույլատրվում վրանային ճամբարների, ավտոմեքենաների կցասայլերի կայանման հարթակների, ժամանակավոր կամ մշտական բնակության համար շարժական կացարանների տեղադրում: Շարժասայլակայն կացարանները կարող են օգտագործվել միայն շինարարության ընթացքում և տեղահանվեն ավարտին համընթաց:

5.5 Հասարակական տարածքային համակարգի ձևավորում

Հասարակական կենտրոնի համակարգի ձևավորումը շաղկապվում է գյուղի հիմնադրման ժամանակին համապատասխան հատվածին - միջուկին, դրանից հարավ ընկած երկու հիմնական փողոցների խաչմերուկին հարող հանգույցին: Տարածքը ներկայումս անշարժ գույքի քարտեզում գրանցված նպատակային նշանակությանը /գյուղարտադրական/ չեն համապատասխանում: Ներկա դրությամբ տարածքի մի մասը զբաղեցնում է վերջին տարիներին կատարած ծառատունկը, մյուս մասը զբաղեցնում է ֆուտբոլի հրապարակը: Հարավ արևմուտքից դեռ 20-րդ դարի 80-ական թվականներին կառուցված փայտաշեն մի շարք շենքեր, որից մեկը օգտագործվել է որպես մանկապարտեզ: Կա նաև քարաշեն կառույց, որը ժամանակին զբոսաշրջային, ներկայումս շահագործման ոչ պիտանի բազա եր: Նշված բոլոր կառույցները արտաքին տեսքով գյուղի միջավայրին անհարիր են, կոնստրուկտիվ տեսակետից չեն բավարարում սեյսմակյուն շինարարության գործող նորմերի պահանջներին և քանդման ենթակա են:

Գյուղի տարածքային զարգացման և «Արմենիան Ֆյուչր» ԲՀ ծրագրի նպատակներից ելնելով նշված տարածքային հանգույցը պետք է ենթարկվի արմատական հատակագծային և կառուցվածքային բարեփոխումներին:

Կարևոր նշանակություն ունի գյուղի տնտեսական և սցիալական զարգացման համար զբոսաշրջային ոլորտի արմատացումը, մարզում և տարածաշրջանում առկա հարուստ պատմամշակութային ժառանգության պահպանման և խելամիտ օգտագործման, բնության տարբեր գեղատեսիլ հատվածներում հանգսի համար բարենպաստ պայմանների և հնարավորությունների մատուցումը:



Պատկեր 5.5 Լուսագյուղի կենտրոնական միջուկ

5.6 Հասարակական սպասարկման ենթակառուցվածքի զարգացում

Գյուղի տարածքում առաջնային սպասարկման համակարգի ստեղծման նպատակով հաշվարկվել են բնակչության անհրաժեշտ սոցիալական ենթակառուցվածքների ցուցանիշներ՝ համաձայն գործող ՀՀՇՆ 10-30-14 քաղաքաշինական նորմերի (տես աղյուսակ):

Աղյուսակ 5.4

h/h	Հաստատություններ, կազմակերպություններ, ձեռնարկություններ	Չափման միավոր	Առկա	Նորմատիվ ցուցանիշը	Հաշվարկային պահանջը
1	2	3	4	5	6
Կրթական համակար					
1	Նախադպրոցական հաստատություն մանկապարտեզ	տեղ	23	65	70

2	Հանրակրթական դպրոց	աշակերտ տեղ	96	130	150
Առողջապահություն					
3	Ամբուլատոր-պոլիկլինիկական	հաճ. օրեկան	2-3		
4	Դեղատներ	օբյեկտ	-		
Մարզական կառույցներ					
5	Մարմնակրթական պարապմունքների համար բնակատեղին մոտ հարթ սպորտային կառույցներ՝մարզադաշտ	հա	2.0		
Մշակույթ					
6	Մշակույթի կենտրոն	հաճախում տեղ	-		
7	Գրադարան	հազ. հատոր			
8	Համակարգչային սրահ	նստատեղ			
Կոմունալ ծառայության և կենցաղային սպասարկման					
9	Հրշեջ ծառայության ստորաբաժանումներ	հրշեջ ավտո, հատ	-	0,2	1 հսկիչ կետ
10	Սանիտարական մաքրման հատուկ մեքենաներ	մեքենա	1		
12	Գերեզմանոցներ /գործող/ , որից	հա	1.49	0,24	
	812 բնակչի հաշվարկով	հա	0,192		
	1100 բնակչի հաշվարկով	հա			0,264
Իրավաբանական, ֆինանսավարկային, կապի					
13	Կապի բաժանմունք	1 օբյեկտ 6.5 հազ. բնակչի	-	-	1

14	Բանկերի բաժանմունքներ և մասնաճյուղեր	գործառն. տեղ	-	0,33	1
15	Նոտարական գրասենյակ	աշխատատեղ		0,03	1
Առևտրի, հասարակական սննդի և կենցաղսպասարկման					
16	Խանութներ մթերային ապրանքների	ք.մ, առևտր. մակերես		50	80
17	Խանութներ, ոչ մթերային ապրանքների	-"-		30	48
18	Շուկաներ սուպերմարկետներ	-"-		-	64
19	Հասարակական սննդի (ռեստորաններ, սրճարաններ, բարեր)	նստատեղ		10	16
20	Կենցաղային սպասարկման	աշխատատեղ		2	3-4
21	Քիմմաքրում	կգ իրեր/օր		4	6-7

6.0 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Ստորև գրաֆիկական պատկերներով ներկայացված է Արագածոտնի մարզի և Ապարանի տարածաշրջանի /համայնքի/ զբոսաշրջային ներուժի բնութագրումը:


ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԻՊԸ
ՊԱՏՄԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ/ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ
ՄԻՎՈՐ


ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆԻ ԵՎ ԱՐԱԳԱԾԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ
ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՔՂԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍԱՑԱՔՆԵՐ
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՑԱՔՆԵՐ
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՉՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՍԱՑԱՔՆԵՐ
ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՇՐՋԱՆԻ ՔՂԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՑԱՔՆԵՐԻ ԹԻՎԸ
ՔՂԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍԱՑԱՔՆԵՐ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՑԱՔՆԵՐ
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՔՂԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍԱՑԱՔՆԵՐ
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՑԱՔՆԵՐ
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՉՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՍԱՑԱՔՆԵՐ
ԱՐԱԳԱԾԻ ՏԱՐԱԾՇՐՋԱՆԻ ՔՂԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՑԱՔՆԵՐԻ ԹԻՎԸ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿ
ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ



7.0 ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ

7.1 Ճանապարհային ցանց

Գյուղի տարաքի սահմաններում ճանապարհային ցանցի կազմն ու ցուցանիշները ներկայացված են 7.1-1 աղյուսակում, ինչպես նաև 7.0 պատկերում:

Աղյուսակ 7.1-1

հհ	Ճանապարհների նշանակությունը	Երկարությունը, կմ	
		Առկա	Նախագծային
1	Արտաքին ճանապարհ	0.706	0.706

2	Ներքին փողոցներ	19.47	23.342
3	Դաշտամիջյան	-	-
4	Ընդամենը	20.176	24.048

7.2 Տրանսպորտ

Գյուղի տրանսպորտային միավորների կազմը ներկայացված է 7.2աղյուսակում:

Աղյուսակ 7.2

հհ	Միավորների տեսակներ	Առկա, հատ	Նախագծային, հատ
1.	Տրակտորներ	5	7
2.	Մարդատար ավտոմեքենաներ, այդ թվում՝	80	90
3.	Ավտոբուս	1	2
4.	Միկրոավտոբուսներ	2	3
5.	Բեռնատար	40	45

7.3 Ուղղաձիգ հատակագծում

Գյուղամիջյան փողոցների թեքությունները կազմում են՝ նվազագույնը 0,5%, առավելագույնը 14%: Փողոցների ուղղաձիգ հատակագծման կազմակերպումը լուծված է առավելապես օգտագործելով գոյություն ունեցող ցանցը և ռելիեֆային պայմանները, նվազագույնի հասցնելով հողային աշխատանքները /լիցքը և հանվածքը/ ծավալը և ապահովելով մակերևութային ջրերի կազմակերպված հեռացումը: Մակերևութային ջրերի հեռացման համար նպատակահարմար է կատարել փողոցների կոշտ ծածկույթով պաշտպանում՝ ոչ ողորկ բազալտե սալերով, հիմնականում հանքերից հավաքած, ապրանքային

արժեք չներկայացնող արտադրական թափոնով: Փողոցների եզրամասերով ստեղծելով ոչ խորը՝ 1:3 հարաբերությամբ վաքեր, իսկ բնակավայրերի սահմաններից դուրս մակերևութային ջրերը ուղղվելու են գոյություն ունեցող բնական սելավատարներ:

Գյուղի հյուսիսային եզրագծով նախատեսվում է միջուկը շրջանցող նոր ճանապարհի ստեղծում, որը հնարավորություն կստեղծի արգելակելու և կազմակերպելու սարերի լանջերից հեղեղահոսքերի գյուղի կառուցապատված տարածք ներթափանցում և ողողում:

8.0 ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀՀ Արագածոտնի մարզի Լուսագյուղ գյուղական համայնքը գտնվում է լեռնային գոտում: Այդ իսկ պատճառով գյուղի ինժեներական ենթակառուցվածքի հագեցվածությունը կարելի է դասել նվազագույն աստիճանի զարգացած: Ներկայումս գյուղն ունի ջրամատակարարման համակարգ, որի մի մասը կառուցվել է դեռ սովետական իշխանության վերջին տարիներին, բայց կոյուղացված չէ: Էլեկտրամատակարարման համակարգերի մի մասը նույնպես կառուցվել է մինչև 80-ական թվականների վերջը: Գազամատակարարման ցանցի շինարարարությունը իրագործվել է 2009-2010 թթ:

8.1 Ջրամատակարարում

Լուսագյուղի ջրամատակարարումը կարգավորելու համար 2015թ. կատարվել են նախագծային և շինարարական աշխատանքներ: Ջրամատակարարման նախագիծը մշակված է «ՁԻՆՁ» ինժեներական խորհրդատվություն, «Ջրտուք» ՍՊԸ, «ՏեխէներգաՇին» ՍՊԸ-կողմից «Լոռու, Վայոց Ձորի, Շիրակի, Արագածոտնի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի ջրամատակարարման համակարգի, վերակառուցման նախգծում և հեղինակային հսկողություն» ծրագրի շրջանակներում, որի կազմում ներառված է «Արագածոտնի մարզի բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի կատարելագործում» և «Լուսագյուղ գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» աշխատանքային նախագիծը: Աշխատանքների հովանավոր է հանդիսացել ՀՀԿԱ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊՀ:

ՀՀ տարածքային կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի 25.08.2015թ. N71233/12250-15 գրությամբ հաստատվել է նախագծի համապատասխանությունը գործող շինարարական նորմերի պահանջներին պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից քննարկման արդյունքում: Հ.Հակոբյան, Հ.Պետրոսյան:

Ստորև բերված նախագծային լուծումները և ցուցանիշները ընդօրինակված են նշված նախագծից:

Բարդ ռելիեֆի պատճառով ջրառների սանիտարական գոտու տարածքի I գոտու ցանկապատումն իրականացնել մետաղյա ցանցով, h=2.0 մ + 0.5 մ նախատեսել 4-5 շերտ փշալարով:

Սանիտարական գոտու տարածքը որոշելիս հաշվի առնել երկկողմանի սահմանափակում՝ մասնավոր հողամասի և ճանապարհի միջև:

Տվյալները ըստ «Լուսագյուղ գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծի» ներկայցվում են ստորև.

Ջրաղբյուրներ

1. «Ձախից» կոչվող ջրաղբյուր, կառուցված 1960թ., ելքը 0.7 լ/վրկ:
2. Վերիվանքի աղբյուր, 1960թ., ելքը 0.7 լ/վրկ:
3. Թուրքսպանոցի ձորի 4 կապտաժներ, 1955-1960թ.թ., 4.5 լ/վրկ:
4. Ձորի (Ձռչռ) կապտաժներ, 1955-1960թ.թ., 4.5 լ/վրկ:

Ջրագծեր

1. Ձախի ձորից եկող ջրագիծը մոտ 2 կմ:
2. Թուրքսպանոցի ձորի ջրագծերը նոր պոլիէթիլենե խողովակներով:
3. Ձորի ջրաղբյուրը ø300մմ պոլիէթիլեն, 3.5 կմ:

Ջրամբարներ

Գոյություն ուներ 2 ե/բ ստորգետնյա նույն հանգույցում, 2000թ. վերանորոգված 1x400 մ3 լավ վիճակում է, իսկ 200մ3, 1990թ. վատ վիճակում և չի գործում:

Ջրի հաշվարկային ծախսերը և ՕԿՁ ծավալները:

Բնակչություն 900+135=1035 մարդ (0.06 % աճ մինչև 2040թ.):
Դպրոց 100 տեղով, q= 0.5 լ/վրկ ելքով:
Մանկապարտեզ 23 տեղով, q= 0.46 լ/վրկ ելքով:
Խոշոր եղջերավոր անասուն 700 գլուխ (ջրածախսի նորման 60լ/օր):
Մանր եղջերավոր անասուն 1500 գլուխ (ջրածախսի նորման 6լ/օր):
Հակահրդեհային ելքը՝ արտաքին հրդեհամարում 5լ/վրկ, ներքին հրդեհամարում /մանկապարտեզ/ 2.5 լ/վրկ:
Ջրապահանջի նորման СНИП 2.04.02-84 աղյուսակ 1 200 լ/օր/մարդ (հաշվի առնելով կոմունալկենցաղային և արտադրական կարիքները 20/լ/մարդ), հոսակորուստ Σ= 240 լ/օր/մարդ:

Օրեկան ծախսեր

ա) Բնակչություն Q միջ. օր= Nxq/1000=240x1034/1000=248,4 մ^3/օր:

բ) Անասնապահություն Q միջ. օր= Nxq/1000=(60X700+6x1500)/1000=51 մ^3/օր:

Q օր =248,4+51=299,4 մ^3/օր ≈300 մ^3/օր:

Qmax.օր= Kmax. x Q օր =1.3x300=390 մ^3/օր:

ՕԿՋ ծավալի որոշում

Wջրամբ=Wկարգ+Wվթար+Whh

Կարգ ծավալը=27,61%

Wկարգ= 0.2761x390=107,68 մ^3

Wվթար= 0,7x0,8xQմիջ=0,7x0,8x12,47=69,83 մ^3≈70 մ^3

Whh=3Qhh+Qօր-3Qմիջ.ժ, որտեղ

Qhh+ (5+2,5)x3,6=27 մ^3/ժամ

Qօր=0,271x390=105,69 մ^3≈105,7 մ^3

3Qմիջ.ժ=3x12,47=37,41 մ^3

Ջրամբարի ծավալը

Wջրամբ=Wկարգ+Wվթար+Whh=107,7+70+300=477,7 մ^3≈480 մ^3

Քանի որ գոյություն ունեցող ՕԿՋ ծավալը 400մ^3 չի բավարարում, որոշված է ջրամատակարարման ցանցը գոտիավորել, I գոտու համար գոյություն ունեցող ՕԿՋ-ից ապահովելով 60մ ճնշում:

II գոտու համար պահանջվում է 270մ^3, նախատեսվել են երկու ՕԿՋ 8x5x3,4(h) չափերի ջրամբարներ:

8.2 Ջրահեռացում /կոյուղի/

Լուսագյուղ համայնքը է գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի հյուսիս-արևելյան մասում, Ապարանից մոտ 1.8 կմ հեռավորության վրա:

Նախագծի նպատակն է՝ կառուցել Լուսագյուղ համայնքի կոյուղու արտաքին ցանց: Լուսագյուղ համայնքի ջրահեռացման համակարգը նախատեսված է բնակավայրի կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Բնակավայրի ջրահեռացման ցանցը բաղկացած է փողոցային ցանցից, դիտահորերից, գլխավոր կոլեկտորիից, մաքրման կայանից և հեռանկարում նախատեսվող կոյուղատար համակարգից: Կեղտաջրերը փողոցային ցանցերի

միջոցով միացվում են գլխավոր կոլեկտորին և տեղափոխվում գյուղի բնակելի սահմաններից դուրս գտնվող կոյուղու մաքրման կայան, որտեղ նախատեսված է իրականացնել կողտաջրերի կենսաբանական մաքրում:

Բնակավայրի ջրահեռացման համակարգի ընդհանուր սխեման պատկերված է նկ.1-ում:

Նկ. 8.2 Ջրահեռացման համակարգի ընդհանուր տեսքը

Ինքնահոս կոյուղատար ցանցի կառուցման նպատակով բնակավայրի տարածքը բաժանվել է երկու գոտիների.

1-ին գոտի՝ բնակավայրի հյուսիս-արևելյան հատված (համեմատաբար խիտ բնակեցված),

2-րդ գոտի՝ բնակավայրի հարավ-արևմտյան հատված (կանոնավոր փողոցներ):

Կոյուղատար գլխավոր կոլեկտորի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 1500 մ, փողոցային ցանցի գումարային երկարությունը՝ մոտ 3500 մ: Խողովակաշարերի տրամագծերը, հիդրավլիկական հաշվարկը, ինչպես նաև դիտահորերի անհրաժեշտ քանակը կիրականացվի բնակավայրի ջրահեռացման աշխատանքային նախագծի իրականացման ժամանակ:

Կոյուղատար խողովակների տրամագծերի ընտրությունը կախված է տեղանքի թեքությունից և համակարգում ինքնամաքրող արագություն ստեղծելու պայմանից: Կոյուղատար փողոցային ցանցի նվազագույն տրամագիծը (գյուղական բնակավայրերում) տատանվում է 150-200 մմ-ի սահմաններում [1], կախված տեղանքից: Կոյուղու գլխավոր կոլեկտորի տրամագիծը կարող է լինել 200-300 մմ: Խողովակների նշված տրամագծերը վերցված են մոտավոր հաշվարկներով, ինչը ենթակա է ճշգրտման համակարգի հիդրավլիկական հաշվարկ կատարելուց հետո:

8.3 էլեկտրամատակարարում

Լուսագյուղ գյուղում ներկայումս տեղադրված են երկու կոմպլեկտ տրանսֆորմատորա-յին ենթակայաններ /ԿՏԵ/, որից մեկի հզորությունը 160 կՎա, երկրորդինը 400 կՎա, ընդհանուր հզորությունը կազմում է 560 կՎա:

Գյուղի տարածքային զարգացման ընթացքում էլեկտրամատակարարումը բավարարելու համար պահանջվում է 1980 կՎա հզորություն:

Հաշվի առնելով տարածքում բեռնվածությունների բաշխումը առաջարկվում է տեղադրել հինգ ԿՏԵ–ներ:

Բեռնվածությունների հաշվարկը կատարված է ըստ գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջների:

Ցանցը նախատեսվում է կառուցել օգտագործելով ե/բետոնյա հենարաններ և մեկուսացված ալումինե լարեր:

Նախատեսվում է գոյություն ունեցող օդային գծերի մասնակի տեղափոխում:

Հաշվարկում ընդունված է մեկ բնակչի հեռանկարային խոշորացված տարեկան ծախսը 1400 կՎտ/ ժամ:

Գյուղի գլխավոր հատակագծով նախատեսվող զարգացման համար էլ.մատակարարումը վերակառուցվելու է տեղադրելով հինգ կոմպլեկտ տրանսֆորմատորոյին ենթակայաններ /ԿՏԵ1-: ԿՏԵ 5/: Ենթակայանների տեղադրումը որոշված է հաշվի առնելով բեռնվածքների բաշխումը ըստ տարածքների:

ԿՏԵ N1-400կՎա

(Գոյություն ունեցող ԿՏԵ-160կՎԱ փոխարեն)

I. Մանկակրթական տարածք՝

1. Մանկապարտեզ, Ph=50կՎՏ

2. Դպրոց, Ph=80կՎՏ

3. Առանձնատներ

ԿՏԵ N2-630կՎա

(Գոյություն ունեցող ԿՏԵ-400կՎԱ փոխարեն)

II. Հասարակական կենտրոն՝

1. Մշակույթի տուն, Ph=80կՎտ
2. Մարզադահլիճ, Ph=50կՎտ
3. Տոնավաճառ, Ph=50կՎՏ
4. Գյուղապետարան, Ph=40կՎտ
5. Ոստիկանակետ, կապի հանգույց, բուժկետ, բանկի մասնաճյուղ, Ph=100կՎՏ
6. Առանձնատներ

ԿՏԵ N3-400կՎա

III. Զբոսաշրջային կենտրոն՝

1. Ճոպանուղու ներքին կայան, Ph=120կՎտ
2. Տուրիստական կենտրոն, Ph=50կՎտ

V. Հանգստի գոտի՝

1. Հանգստի տուն,Ph=80կՎՏ

VI. Ծիսակատարությունների գոտի՝

1. Անֆիթատրոն, Ph=20կՎՏ
2. Ճոպանուղու վերին կայան

ԿՏԵ N4-630կՎա

IV. Տնտեսական տարածք՝

1. Տանիքաձածկույթի արհեստանոց, Ph=200կՎՏ
2. Կաթի վերամշակման արտադրամաս, Ph=220կՎՏ
3. Ավտոպարկ, Ph=50կՎՏ
4. Անասնագոմ, Ph=150կՎՏ

ԿՏԵ N5-160կՎա

Առանձնատների էլ.մատակարարում

8.3.1 Նորմատիվ փաստաթղթեր

1. ՀՀՇՆ 30-01-14 Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում:

2. ВСНЭ 7-83 Инструкция по проектированию городских и поселковых электрических сетей

3. Справочник по проектированию электрических сетей, 2005г

8.4 Գազամատակարարում

Գյուղի գազամատակարարման համար սնող աղբյուր է հանդիսանում Ապարանից

Լուսագյուղ կառուցած միջին ճնշման գազատարը:Գազի հաշվարկային ծախսերը նախատեսված են կենցաղային կարիքների (օջախ), տաք ջրամատակարարման համար:

Գազատար խողովակների տեղադրման համար ընտրված է վերգետնյա տարբերակ պողպոտե խողովակներից:

8.5 Տարածքի ինժեներական պաշտպանություն. հակահեղեղային միջոցառումներ

Բնակավայրերի սահմաններով անցնում են 2 ձորակներ: Ըստ երկրաբանական հետազոտության ձորակների գրունտները կավաավազային և ավազակավային են, որոնք մթնոլորտային տեղումների և հեղեղային ջրերի ազդեցության տակ ողողվում են: Ձորակներն էռոզիայից և բնակավայրը հեղեղային ջրերից պաշտպանելու նպատակով նախատեսվում է ձորակներում բետոնե հենապատերով վաքերի համակարգի
ստեղծում:

Ձորակների հեղեղատարության ծախսը որոշում են 1% ապահովվածության տակ ըստ Գամազյանի բանաձևի

$$q = \frac{2,6}{\text{----------}},$$

/F +/ 0,44

որտեղ F-ը ջրահավաք մակերեսն է:

$$Q_{1\%} = q_{\%} \times F \times K, \quad \text{որտեղ } K = 1,35$$

N1 ձորակի ջրահավաքմակերեսը կազմում է 2 կմ^2 ծախսը՝ Q = 5,0 մ^3/վ:

Բնակավայրի հյուսիս-արևելյան մասով նախատեսվում է անցկացնել լեռնային ջրանցք, որը իր վրա կվերցնի մակերեսային ջրերը և կտեղափոխի N1 ձորակը: N1 ձորակին միացվում է նաև N1 և N2 ձորակների մեջտեղով անցնող ձորակը:

N2 ձորակի ջրահավաք մակերեսը կազմում է F = 1 կմ^2, ծախսը 1% ապահովվածության դեպքում Q = 2,6 մ^3/վ:

9.0 ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԶՐՈՅԱԿԱՆ

9.1. Զրոյական տարբերակ

Զրոյական տարբերակ նշանակում է, որ Լուսագյուղ բնակավայրի ներկայացվող հատակագիծը չի մշակվում, բնակավայրի զարգացման ծրագրեր չեն առաջարկվում և բնակավայրի հետագա կենսագործունեությունը ընթանում է նույն ընթացքով:

Զրոյական տարբերակի բնութագրերը՝ բնակավայրի շրջակա միջավայրի բնական բաղադրիչների բնութագրերը, բնակչության սոցիալական պայմանները մանրամասնորեն ներկայացված են սույն հաշվետվության նախորդ բաժիններում կամ 13.0 աղյուսակի 3-րդ սյունակում: Զրոյական տարբերակի դեպքում բնական միջավայրի իրավիճակը և բնակչության սոցիալական պայմաններևը կմնան անփոփոխ:

9.2. Քննարկվող տարբերակներ

Բնակավայրի սոցիալտնտեսական զարգացման ծրագրերի քննարկման ժամանակ դիտարկվել են երկու հիմնական տարբերակ.

-բնակավայրի զարգացումը կընթանա հիմնականում գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման ուղիով,

- բնակավայրի զարգացումը կլինի բազմակողմ:

Առաջին տարբերակի դրական կողմը այն է, որ չեն իրականացվի այնպիսի շինարարական կամ ենթակառուցվածքային աշխատանքներ, որոնք բացասաբար կազդեն բնակավայրի բնական միջավայրի վրա:

Սակայն այս դեպքում բնակավայրի կենսական պայմանների բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար չեն լինի անհրաժեշտ խթաններ:

Երկրորդ տարբերակը նախատեսում է բնակավայրի ինտենսիվ զարգացում, այդ թվում ինչպես գյուղատնտեսական ոլորտներում, այնպես էլ տուրիզմի, առողջարանական և այլ:

Այս տարբերակը կարող է ապահովել իրական և զգալի սոցիալտնտեսական արդյունքներ: Միևնույն ժամանակ տաբերակը կապված է ավելի բարձր բնապահպանական ռիսկերի հետ, որոնցից հիմնականները.

- շինարարական աշխատանքներ, որոնք կարող են բացասաբար ազդել շրջակա բուսական և կենդանական աշխարհի վրա,

- ակտիվ զբոսաշրության պայմաններում կարող են վտանգվել տեղանքի բնական էկոհամակարգերը:

Սակայն, եթե մշակվեն և լիարժեքորեն իրականացվեն անհրաժեշտ բնապահպանական, քաղաքաշինարակ և անվտանգության ապահովման միջոցառումներ, այդ ռիսկերը կլինեն նվազագույն և կառավարելի:

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները, ընտրվել է երկրորդ տարբերակը:

10.0 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10.1 Ընդհանուր տեղեկություններ

Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Լուսագյուղի ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիկական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացող պայմաններին համահունչ, գյուղի իրական հնարավորությունները հաշվի առնող զարգացման հայեցակարգ, և փաստաթղթերի մշակման նպատակային ծրագիր, որը կհամապատասխանի գյուղի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին:

Նախատեսվող գործունեության ձեռնարկողը *«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲՀ «ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ծրագրի շրջանակներում:*

Ներկայացվող հայեցակարգի պատվիրատուն է *«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲՀ*

Հայեցակարգի մշակողը «`STORAKET ARCHITECTURAL STUDIO» և բնապահպանական փարձաքննական գործընթացի ձեռնարկողն է *«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲՀ*:

10.2 Իրավական դաշտը

Հայեցակարգի մշակման ընթացքում ձեռնարկողը ուղղորդվելու է ՀՀ քաղաքաշինական, բնապահպանական և այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի պահանջներով:

Սույն հայտում բերվում են հիմնական բնապահպանական ակտերը.

- ՀՀ հողային օրենսգիրք (2001)
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002)
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011)

- ՀՀ անտառային օրենսգիրք (2005)
- “Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014)
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք (1999)
- Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք (2000)
- Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (2006)
- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք
- ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում
- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր Գիրք
- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր Գիրք

Նախատեսվող գործունեության և հիմնադրութային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը պետք է գնահատվի նախագծի կամ ծրագրի իրագործումից առաջ: ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքը սահմանում է դրույթներ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար, ինչպես նաև սահմանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության թույլատրելի սահմանները:

Հիմնադրութային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝

1) նախնական փուլ, որի ընթացքում ուսումնասիրվում է նախնական գնահատման հայտը.

2) հիմնական փուլ, որի ընթացքում փորձաքննվում է հիմնական գնահատման հաշվետվությունը:

Սույն հայտը ներկայացված է նախնական գնահատման փուլի համար:

10.3 Շրջակա միջավայրի եվ սոցիալական ելակետային պայմանները

10.3.1 Տեղադիրքը, ռելիեֆը և լանդշաֆտը

Լուսագյուղ համայնքը գտնվում է Ծաղկունյաց լեռների լեռնաբազուկի թեք փեշին, Քասախի աջափնյա վտակի երկու ճյուղավորումների միջագետքում, վտակների արտածման կոնի բերուկներից առաջացած հարթության վրա, ծովի մակարդակից 2015 մ. բարձրության վրա: Գյուղի կենտրոնի մոտավոր կորդինատները 40^0 36´48.3´´N, $44^0$22´10.0´´E: Ներկայումս Լուսագյուղն ընդգրկված է Ապարան համայնքի կազմում:

Լուսագյուղ համայնքի ռելիեֆը բազմազան է՝ կապված տեղանքի աշխարհագրական բարձրությունից: Տարածքում հիմնական լեռնագրական միավորը Փամբակի լեռների հարավային լեռնաբազուկն է՝ Ծաղկունյաց լեռները:

Ծաղկունյաց լեռներ: Լեռնաշղթա Հայաստանի Կոտայքի և Արագածոտնի մարզերի սահմանագլխին, Փամբակի լեռների գլխավոր ճյուղավորությունը նրա միջին մասից՝ Ուղտաքար լեռան գագաթից դեպի հարավ–արևելք, մինչև Հրազդան գետի աջ ափը: Երկարությունը 42 կմ է, ամենաբարձր գագաթը Թեղենիս լեռն է՝ 2851 մ :

Ձրբաժան է Քասաղի ու Հրազդանի ավազանների միջև: Ունի ծալքաբեկորային ծագում: Արտաքին լանջերը հիմնականում մեղմաթեք են՝ կտրտված բազմաթիվ մանր ձորակներով ու մի քանի խոշոր հովիտներով: Վերը նշված երկու ճյուղավորումների իրար նայող ներքին լանջերը շատ ավելի զառիթափ են: Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերից են սկսվում Դալարը, Արալի գետը, Մարմարիկի, Հրազդանի, Քասախի բազմաթիվ վտակներ: Ամենաբարձրը հարավային ճյուղավորության վրա գտնվող Թեղենիսն է 2851,1 մ բարձրությամբ: Բարձր գագաթներից է նաև Ծաղկունյացը՝ 2821 մ բարձրությամբ: Տիրապետում են լեռնատափաստանային, լեռնաանտառային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Լեռնաշղթայի լանջերի զգալի մասը՝ մինչև 2400 մ բարձրությունները անտառածածկ են:

Արևելյան լանջերը (մինչև 2300 մ) ծածկված են կաղնու, թխկենու, արոսենու անտառներով: Այս տարածաշրջանը հայտնի է որպես հանգստյան գոտի. այստեղ են Հանքավանը, Ծաղկաձորը, Բջնին, Աղվերանը, Արզականը, Բուժականը: Ծաղկաձորը եռաստիճան ճոպանուղով կապված է Ծաղկունյաց գագաթի հետ: Լուսագյուղը մերձակա է Ծաղկունյաց լեռների Կապանու լեռնագագաթին /2782 մ/: Ծաղկունյաց լեռների ջրբաժանը սահմանագիծ է միաժամանակ Արագածոտնի և Կոտայքի մարզերի և Լուսագյուղի ու ,,Հանքավանի ջրաբանական արգելավայրի միջև:

Բարձրադիր տեղանքներում Լուսագյուղ համայնքի ռելիեֆը միջին բարձրության, ուռուցիկ լանջերով, գմբեթաձև լեռնազանգվածներ են՝ զառիթափ լանջերով մասնատված հովտաձորակային ցանցով: Ավելի ցածրադիր տեղանքներում լեռնալանջերը չափավոր զառիթափ են /15^0-25^0/ թույլ ալիքավոր ջրբաժանով:

Տարածաշրջանում ռելիեֆի հիմնական տիպը կառուցվածքային էրոզիոն – տեղատարումային /մշակված/ ռելիեֆն է /Ազգային ատլաս, Երևան, 2007. էջ 35, I-3 ենթակետ/: Տեղանքը միջին լեռնային գոտուն /1500-2800 մ/ բնորոշ ուռուցիկ լանջերով լեռնաբազուկ է՝ մասնատված մի կողմից Քասախ, մյուս կողմից Հրազդան գետերի վտակների հովիտներով: Տարածաշրջանում գերակշռում է դեֆլյուկցիոն հողմահարումը, լեռնալանջերը ամբողջությամբ պատված են դելյուվիալ ապարաշերտերով: Առանձին տեղեր կան մայր ապարի մերկացումներ, փլվածքային պրոցեսներ, չինգիլներ և սելավների առաջացրած ձորակներ:

Լուսաձորից դեպի հարավ գերիշխում է լեռնային հարթավայրը՝ սեղմված լեռանաբազուկների գոգավորությունում, հորիզոնականին մոտ թեքությամբ, մասմբ դարավանդավորված: Այս տարածքներում են գտնվում Լուսագյուղի վարելահողերի հիմնական մասը:

«Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան» «լանդշաֆտ» հասկացությունը ձևակերպում է որպես «մարդու կողմից ընկալվող տարածք, որի հատկությունները բնական և մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք են»:

Գյուղի ***լանդշաֆտը***՝ աշխարհագրական թաղանթը, մեծապես ձևավորվել է մարդածին ազդեցությամբ տարիների ընթացքում, որպես տափաստանային բուսականությամբ ծածկված, իսկ միջին բարձրություններում անտառներով ծածկված ալիքավոր տարածք, որը կրել է անտրոպոգեն ազդեցություն: Լանդշաֆտի վրա մարդածին ազդեցությունը զգալի է գյուղատնտեսական հողատեսքերի վրա՝ ցածրադիր տեղամասերում: Բարձրադիր տեղամասերում լանդշաֆտը փոփոխության է ենթարկվել անտառահատումների, ճանապարհաշինարարության, ոռոգման առուների անցկացման արդյունքում:

Ֆիզիկա-աշխարհագրական շրջանացման համակարգում Լուսագյուղի տարածքը գտնվում է Հրաբխային լեռներ և սարավանդներ / II /պրովինցիայի, Արագած-Սյունիք ենթապրովինցիայի /Դ/, Արագածի շրջանի /9/, Ապարանի /9գ/ ենթաշրջանում:

Լուսագյուղի տարածքը գտնվում է *տափաստանային՝ միջինլեռնային /1400-2300 մ/ և անտառային՝ ցածր և միջին լեռնային /800-2300 մ/ վերընթաց լանդշաֆտային գոտիներում:*

Գեոէկոլոգիական շրջանացման համակարգով Լուսագյուղի վարչական տարածքը գտնվում է *Արաքս գետի ավազանի /II/ մարզում, Արարատյան շրջանում /IV/, Մաստարա-Քասաղի ենթաշրջանում /17/: Բնական լանդշաֆտի խոցվածության աստիճանը 0,5-0,8 է /ուժեղ խոցվածություն/:*



Նկ.10.3.1 Լուսագյուղի դիրքը Արագածոտնի մարզի տարաբնակեցման համակարգում



Նկ.10.3.2 Բնակավայրի հատակագիծը

Նկ.10.3.3 Լուսագյուղ գյուղի լուսանկարը Google Earth ծրագրով

10.3.2 Կլիմա

Լուսագյուղի տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրությունը ներկայացվում է ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N 167-Ն հրամանով հաստատված ,,Շինարարական կլիմայաբանություն,, ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթի տվյալների: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական հարաչափեր, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները:

Լուսագյուղ համայնքի կլիմայի համար հիմք է վերցվել մոտակայքում գտնվող Ապարանի օդերևույթաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Ապարանի օդերևութաբանական կայանի տվյալներով, տարածաշրջանի կլիման բնորոշվում է ցամաքային, ցուրտ ձմեռներով և շոգ, չոր ամառներով: Ձմռան ամիսներին բնորոշ է կայուն ձնեծածկույթը՝ համարյա երեք ամիս տևողությամբ: Տեղումների միջին տարեկան քանակությունը՝ 723 մմ, թեև հնարավոր են նաև հեղեղներ մայիս-սեպտեմբեր ամիսներին, առավելագույնը՝ օրական մինչև 87 մմ: Տարվա ամենաշոգ և ամենաչոր ամիսը օգոստոսն է /առավելագույն ջերմաստիճանը՝ 33 C^0, օդի նվազագույն հարաբերական խոնավությունը 42 %:

Քամու վարդի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերակշռում է քամու հարավ-արևելքից և հյուսիս-արևմուտք ուղղությունները: Ընդ որում, այդ պատկերը նույնն է տարվա բոլոր եղանակներին և հավանաբար կախված է Արագած բարձր լեռան նկատմամբ հայցվող տարածքի տեղադիրքով: Բոլոր դեպքերում հայցվող տարածքը կարելի է բնորոշել հողմաանվտանգ:

10.3.3 Մակերևույթային և ստորերկրյա ջրերի որակի բնութագիրը

Լուսագյուղ համայնքը գտնվում է Քասախ գետի անանուն երկու վտակների միախառնման միջագետքում: Վտակների ընդհանուր ջրհավաքի մակերեսը ավելի քան 23 $կմ^2$ է: Այս մակերեսի վրա թափվող տեղումների /միջին տարեկան քանակը՝ 723 մմ, գոլորշիականությունը՝ 700 մմ/ մակերեսային հոսքը պետք է բավականացնի համայնքի սակավաքանակ վարելահողերի ոռոգման համար:

Համայնքի տարածքում է գտնվում անանուն լիճը, /հայելու մակերեսը՝ 3,2 հա, չափերը 50x60 մ / որի ջրերը մասամբ օգտագործվում են ոռոգման նպատակով: Լիճը տեղավորված է Ծաղկունյաց լեռնաշղթայի Կապանու լեռան /2782 մ/ լեռնալանջի փոքրիկ գոգավորության մեջ

2292 մ բարձրության վրա /կորդինատները $40^0$37´26.45´´N, $44^0$23´31.10´´E/ և ունի աղբյուրներից սնուցում:

Համայնքի տարածքում կան բազմաթիվ աղբյուրների ելքեր: Ավելի հզոր աղբյուրների ելքեր կան Ապարանի շրջակայքում՝ համայնքից ավելի ցածրադիր վայրերում, որոնց ուղղությամբ էլ հավանաբար ստորգետնյա ջրերի հոսքի ուղղությունն է: Համայնքում հիդրոերկրաբանական աշխատանքներ չեն կատարվել և չկա տեղեկատվություն ստորերկրյա ջրերի քանակի և որակի մասին:

Թեև համայնքի տարածքը գտնվում է Հանքավանի ջրաբանական արգելավայրի հարևանությամբ, համայնքի տարածքում չկա արդյունաբերական նշանակության հետազոտված հանքային ջրերի ելքեր:

10.3.4 Մթնոլորտային օդի որակի բնութագիր

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության "Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն" ՊՈԱԿ-ի (,,Հայէկոմոնիթորինգ,,) կողմից:

Սակայն Լուսագյուղ համայնքում և շրջակայքի գյուղերում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ,,Հայէկոմոնիտորինգ,,-ում տվյալներ չկան: Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ,,Հայէկոմոնիտորինգ,,-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց30: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են2

Փոշի՝ 0.2 մգ/մ3;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ3;

Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ3;

Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ3:

Լուսագյուղ համայնքը գտնվում է մի քանի բնակավայրերի հարևանությամբ, որոնցից ամենախոշորը Ապարան քաղաքն է, որի բնակչությունը մոտավորապես 6500 է /չի գերազանցում 10 000-ը:

10.3.5 Հողերը

Հողերը ձևավորվում են մի շարք գործոնների փոխազդեցությամբ. դրանցից են հողագոյացնող ապարները, բուսական և կենդանական օրգանիզմները, կլիման, ռելիեֆը, ժամանակը, ջուրը և մարդու տնտեսական գործունեությունը: Բնական և աշխարհագրական այս գործոնների ազդեցությամբ ձևավորված հողային տիպերը և ենթատիպերը նաև

որոշակիորեն կապված վերընթաց լանդշաֆտային գոտիների հետ, լեռնային երկրներում, ինչպես Հայաստանը, և առաջացնում են հողային տիպերի վերընթաց գոտիականություն: Այս գոտիականությունը բնորոշ է հետազոտվող տարածաշրջանին:

Լուսագյուղ համայնքի հողերը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի ըստ աշխարհագրական բարձրության.

ա/ Լուսագյուղ բնակավայրի սահմանագծից հարավ և հարավ-արևմուտք ընկած հողերի տիպը սևահողն է՝ սևահող, կրազերծված, խորքային, կարբոնատային ենթատիպով: Այս հողային ենթատիպի հողառաջացնող նստվածքի գենետիկական տիպը ժամանակակից հունային, դարավանդային և արտաբերման կոների պրոլյուվիալ և ալյուվիալ պրոլյուվիալ տիպն է: Ընդ որում Լուսագյուղ բնակավայրը ամբողջությամբ տեղավորված է արտաբերման կոնի բարձրադիր հատվածի վրա: Հողային այս ենթատիպի հող առաջացնող ապարների լիթոլոգիական կազմը ավազներ են, կավավազներ, կոպիճի, խճավազի և գլաքարերի հետ միասին՝ տղմաավազակավային երևակումներով:

Լեռնային սևահողերը զբաղեցնում են Հայկական հրաբխային բարձրավանդակի 1300-2400 մ բարձրությունների թեք սարահարթերը և լեռնալանջերը: Այս տիպի հողերը ձևավորվում են չափավոր տաք ու խոնավ կլիմայի, կիսալվացվող և լվացվող ջրային ռեժիմի պայմաններում: Զարգանում են հողալկալի հիմքերով հարուստ ալյուվիալ-դելյուվիալ և դելյուվիալ կավավազների ու կավերի վրա: Առանձնանում են հողային պրոֆիլի հզորությամբ և հստակ շերտազատմամբ, կնձիկահատիկային կառուցվածքով: Հումուսի պարունակությունը այս հողային տիպում 4-11 % է, ունեն չեզոք կամ չեզոքի մոտ ռեակցիա, միջին և միջինից բարձր կատիոնային փոխանակության ունակություն, ծանր մեխանիկական կազմ: Այս տիպի հողերը հնարավորինս օգտագործվում են որպես վարելահողեր, ավելի քիչ, մանավանդ, եթե քարքարոտ են, որպես արոտավայրեր և խոտհարքներ:

բ/ Լուսագյուղ բնակավայրի սահմաններից դեպի հյուսիս և հյուսիս-արևելք գտնվող լեռնալանջերի միջին բարձրություններում, մինչև անտառի վերին սահմանը, տարածված է անտառային դարչնագույն հողային տիպի անտառային չարչնագույն, կրազերծված, տափաստանեցված ենթատիպն է: Այս հողային ենթատիպը ամբողջովին զբաղեցնում է լեռնալանջերի անտառային գոտին: Հողառաջացնող նստվածքների գենետիկական կազմը դելյուվիալ և դելյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներն են: Այս հողային ենթատիպի հողառաջացնող ապարների լիթոլոգիական կազմում ավազակավեր և կավավազներ են, խճաքարեր և գլաքարեր:

Անտառային դարչնագույն հողեր- ՀՀ անտառային դարչնագույն հողերը կազմում են ՀՀ տարածքի 21,6 %-ը (564 հազար հա), զբաղեցնում են արևելյան լանջերի 1900- 2400 մ բարձրությունները, հանդիպում են տարբեր մասնատվածությամբ լեռնալանջերում և փոքրաթեք սարավանդներում:

Գտնվում են չափավոր տաք, փոփոխական խոնավությամբ կլիմայական ու չոր ծառաթփուտատեսակներով հարուստ բոխու, կաղնու, թխկու անտառածածկոցի պայմաններում: Անտառային դարչնագույն հողերը բնորոշվում են կավայնացմամբ, զգալի

քարքարոտությամբ, կավավազային մեխանիկական կազմով: Հումուսի պարունակությունը 4-6 % է, ջրային մզվածքի ռեակցիան չեզոք կամ թույլ հիմնային է (pH=7-8,2), կատիոնային փոխանակության ունակությունը՝ միջին և միջինից բարձր (30- 44 մգ/Ա/վ), ունեն կարբոնատների զգալի պարունակություն և բարենպաստ ջրաֆիզոլոգիական հատկություններ: Այդ հողերի 46,4 %-ը տարբեր աստիճանների տափաստանացված է, որից 27%-ն օգտագործվում է որպես վարելահող, խոտհարք և արոտավայր:

գ/ Ծաղկունյաց լեռների գագաթնամերձ տարածքներում, մինչև անտառների վերին սահմանագիծը տարածված է մարգագետնատափաստանային սևահողանման հողային հիմնական տիպի մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած ենթատիպը: Այս հողային ենթատիպի հող առաջացնող նստվածքների գենետիկական տիպը էլյովիալ և էլյուվիալ-դելյուվիալ նստվածքներն են , որոնց լիթոլոգիական կազմը ավազակավերն են խճաքարերով և խճավազով:

Մարգագետնատափաստանային սևահողերը զբաղեցնում են Հայկական հրաբխային բարձրավանդակի 2100- - 2600 մ բարձրությունները: Առաջանում են չափավոր խոնավ, զով ամառ, ցուրտ ձմեռ և խոր ձնածածկ ունեցող կլիմայի ու մարգագետնատափաստանային բուսածածկույթի պայմաններում: Հողատիպի լիթոլոգիական կազմում հիմնականում հիմնային ապարներն են: Այս հողային տիպում առանձնացնում են սևահողանման, (օգտագործվում են որպես խոտհարք) և տիպիկ սևահողային ենթատիպերը (օգտագործվում են որպես արոտավայր): Հումուսի պարունակությունը 10-13% է, ունեն թույլ թթվային ռեակցիա, կատիոնային փոխանակության ունակությունը՝ մինչև 57 մգ/էկվ:

Լուսագյուղի վարչական տարածքի հողերի էրոզացվածության աստիճանը խիստ բազմազան է: Այն առաջին հերթին ունի մարդածին պատճառներ /գյուղատնտեսական ինտենսիվ շահագործում ագրոտեխնիկական կանոների անտեսմամբ, անտառհատում, գերարածեցում և այլն/: Համայնքի հողերի էրոզվացվածության աստիճանը հարավահայաց անտառազուրկ քարքարոտ լանջերին V կարգի է, 45-70% էրոզացված: Միջին էրոզացված տարածքներ են գյուղի շրջակայքի բլրագագաթները: Այստեղ առանձին տեղերում կան մայրական ապարների մերկացումներ: Մարդածին գործունեությամբ հողերի դեգրադացման տեղամասեր են գերեզմանոցից դեպի Թուխ Մանուկ մատուռ տանող լանջը, առուների ափերի առանձին տեղամասեր և անասունների դեպի արոտ տեղափոխելու ճանապարհի առանձին հատվածներ /կորդինատը 40037՛30.5՛՛N, 44022՛37.4՛՛E/:

Լուսագյուղի վարչական տարածքում հողի բերրի շերտի հզորությունը զրոյից մինչև մի քանի տասնյակ սանտիմետր է: Քաղաքաշինական և արդյունաբերական շինարարության, ընդերքօգտագործման նպատակով հողահատկացման դեպքում ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելոի մասին» որոշման պահանջով անհրաժեշտ է չափել շինարարության

համար հատկացված հողատարածքի բերրի հողաշերտի հզորությունը և օգտահանել հողի բերրի շերտը:



Նկ.10.3.5 Ապարանի տարածաշրջանի հողային քարտեզը
/Հայաստանի ազգային ատլաս, 2007թ. հ.1 էջ 74/

10.3.6 Վայրի բնության բնութագիրը, կենսաբազմազանություն

Լուսագյուղ գյուղի վարչական տարածքի աշխարհագրական բարձրությունը գտնվում է 1900 մ-ից /Ապարան քաղաքի վարչական սահմանագծում/ մինչև 2782 մ /Կապանու լեռնագագաթ/ միջակայքում և զբաղեցնում է չորս վերընթաց լանդշաֆտային գոտի:

ա/ անտառային՝ ցածր և միջինլեռնային /800-2300 մ/գոտին: Անտառները Լուսագյուղի վարչական տարածքում գրավում են հյուսիսահայաց և արևմտահայաց լեռնալանջերը 2000-2400 մ բարձրության վրա: Այս գոտում է գտնվում Լուսագյուղի արոտավայրերի մի մասը:

բ/*Տափաստանային միջինլեռնային* /1400-2300 մ/: Այս գոտին սկսվում է Ծաղկունյաց լեռներ ստորոտից, մոտովրապես 2000մ բարձրությունից և փոքր թեքությամբ հասնում է մինչև Ապարան քաղաքի վարչական սահմանները /մոտովրապես 1900 մ/: Այս տարածքները հիմնականում յուրացված են գյուղատնտեսությամբ՝ վարելահողերով:

գ/*Մարգագետնատափաստանային միջին լեռնային* /2200-2600 մ/: Վերընթաց լանդշաֆտային այս գոտին Լուսագյուղի վարչական տարածքում սկսվում է անտառային գոտու վերին սահմանագծից և հասնում է մինչև 2600 մ բարձրության հորիզոնականը: Այս գոտում են գտնվում Լուսագյուղի խոտհարքերի հիմնական մասը և ամառային արոտները:

դ/*Մերձալպյան բարձրլեռնային* /2400-2800 մ/: Վերընթաց լանդշաֆտային այս գոտին զբաղեցնում Լուսագյուղի վարչական տարածքում գտնվող Ծաղկունյաց լեռների

գագաթնամերձ տարածքները, համեմատաբար փոքր տարածք է գրավում և հիմնականում անօգտագործելի է:

Վերընթաց լանդշաֆտային գոտիների այս հերթականությունն էլ պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը:

Տարածքի բուսական և կենդանական աշխարհների ուսումնասիրությունը առաջին փուլում կատարվել է գրասենյակային ուսումնասիրության միջոցով: Ուսումնասիրվել են տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ գրական տվյալները: Առանձին ուշադրություն է դարձրվել ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքի ուսումնասիրությանը հետաքրքրող տարածաշրջանում: Հատկապես օգտակար տվյալներ են հավաքվել Լուսագյուղի վարչական սահմանին գտնվող ,,Հանքավանի ջրաբանական,, արգելավայրում կատարված գիտական հետազոտությունների հրապարակված հոդվածներից:

10.3.7 Բուսական աշխարհը

Լուսագյուղ համայնքի տարածքը գտնվում է Ապարանի ֆլորիստիկ շրջանում: Ապարանի ֆլորիստիկ շրջանը արևմուտքից սահմանափակվում է Արագած լեռան արևելյան ստորոտով, հյուսիսից Ծաղկունյաց լեռների ու Փամբակի լեռնաշղթայի ջրբաժանով, արևելքից Գեղարքունիքի ու Կոտայքի մարզերի սահմանագծով, հարավից մոտովորապես Արզնի – Շամիրամ ջրանցքով: Ապարանի ֆլորիստիկ շրջանի բուսականության ընդհանուր բնութագիրը ներկայացվում է աղյուսակով.

Աղյուսակ 10.3.7 Ապարանի ֆլորիստիկ շրջանի ընդհանուր բնութագիրը

Ֆլորիստիկ շրջանը	Տեսակ-ների թիվը	Բուսածածկի հիմնական տիպերը	Բարձրունքային սահմանները, մ	Էնդեմիկների /բնաշ-խարհիկ-ների/ քանակը	ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների քանակը
Ապարանի	1320	տափաստանային, մարգագետնա-տափաստանային, անտառներ	1300-3100	17	26

Հետազոտված տարածքի *բնական բուսածածկի* հիմնական տիպը ըստ վերնթաց լանդշաֆտային գոտիների համապատասխանաբար հետևյալն է.

ա/Անտառային բուսականություն՝ Կաղնի արևելյանի գերակշռությամբ: Լուսագյուղի վարչական տարածքի անտառներում հնարավոր է հանդիպել «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի տարածքի և լեռնաանտառային գոտում հայտնաբերված ծառաթփատեսակները: Դրանք են.

1 Berberis orientalis Schneid. – Կծոխուր արևելյան կամ Ծորենի արևելյան,

2 Betula litwinowii A. Doluch. – Կեչի լիտվինովի

3 Betula pubescens Ehrh. – Կեչի թավոտ,

4 Betula pendula Roth. – Կեչի կախվող (լացող)

5 Carpinus betulus L. – Բոխի սովորական

6 Lonicera caucasica Pall. – Ցախակեռաս կովկասյան

7 Viburnum lantana L. – Բռնչի լանթանի կամ գերիմաստի

8 Quercus macranthera Fisch.et.C.A.Mey.ex Hohen – Կաղնի արևելյան կամ խոշորառէջ

9 Fraxinus excelsior L. – Հացենի սովորական

10 Rhamnus cathartica L. – Դժնիկ լուծողական

11 Cerasus mahaleb (L.) Mill. – Բալենի մահալեբյան

12 Malus orientalis Uglitzk. – Խնձորենի արևելյան

13 Padus racemosa (Lam.) Gilib.(=P. avium Mill.) – Թխենի սովորական

14 Pyrus communis ssp. caucasica (Fed.) Browicz – Տանձենի անտառային կամ կովկասյան

15 Rosa canina L.(glaucous dog rose) – Մասրենի սովորական

16 Rosa sosnovskyana – Մասրենի սոսնովսկու

17 Rosa spinosissima L. – Մասրենի առատափուշ

18 Rubus idaeus L. – Մոռենի սովորական

19 Prunus divaricata Lebed.(=P.cerasifera) – Սալորենի սովորական

20 Crataegus caucasica K.Koch. – Սզնի կովկասյան

21 Sorbus aucuparia L. – Արոսենի սովորական

22 Sorbus kuznetzovii Zinserl. – Արոսենի կուզնեցովի

23 Spiraea hypericifolia L. – Ասպիրակ սրոհունդատերև

24 Populus tremula L. – Բարդի անտառային կամ կաղամախի

25 Salix viminalis L. – Ուռենի ճիպոտանման (կողովի)

26 Salix alba L. – Ուռենի սպիտակ

27 Salix pentandroides Skvortz. – Ուռենի հնգառէջ

Salix caprea L. – Այծուռի

29 Salix pseudomedemii E.Wolf – Ուռենի կեղծ Մեդեմի

30 Tilia caucasica Rupr (=T. begoniifolia Stev.) – Լորի կովկասյան (լ. բեգոնիատեև)

31 Tilia cordata Mill. – Լորի մանրատերև

32 Ulmus glabra Huds.(=U. elliptica K. Koch) – Թեղի էլիպսաձև

Տարածաշրջանի անտառային բուսականության ամենատարածված տեսակներն են անտառեզրերին և բացատներում Իշականջ լեռնային / Knautia Montana/, Տափոլոռ կլորատերև / Lathyrus rotindifolius/, Աստղաբույս ամենամեծ / Astrantia maxima/, Անիսոն վարդագույն / Pimpinella rhodantha/, Իժախոտ կարմիր / Echium rubrum/, Թիթեռնիկախոլորձ / Plantanthera chloranta/, Խոլորձ ծիրանի / Orchis purpurea/, Խոլորձ արական / Orchis mascula/, Թթվիճ խոշորածաղիկ / Betonica macranthe/, Թթվիճ արևելյան / Betonica orientalis/, Սպիտակածաղիկ սովորական / Leucanthemum vulgare/, Գնարբուկ խոշորածաղիկ / Primula macrocalus/, Բերենիկե բազմաբաժան / Veronica multifia/, Վիկ բալանսի / Vicia balansae/, Վիկ խոշորածաղիկ / Vicia grandiflora/, Իշականթուկ մերկացած / Euphorbia glaberrima/, Անձխոտ նարինյանի / Corydalis nariniana/, Կղմուխ արևելյան / Snula orientalis/, Կղմուխ հեղինեի / Snula orientalis/, Կտուցախոտ արևելյան / Rhynchocorys orientalis/, Աստղաշուշան Հայաստանի / Ornithogalium hajastanum/, Պսեփելուս Մանակյանի / Psephellus manakyanii/, Ատամնախոտ հնգատերև / Dentaria quinqufolia/, Ճանկխոտ արևելյան / Ayuga orientalis/, Զանգակ հայկական / Campanula armena/, Լոշտակ երկտուն / Bryonia dioica/, Զանգակ լայնատերև / Campanula latifolia/, Եզական հրաշալի / Telekia steciosa/, Մատնոցուկ ջղավոր / Digitalis nervosa/, Խուլեղինջ սպիտակ / Lamium album/, Շուշան հովիտի / Lilium szovitsianum/ և այլն: Վաղ գարնանային բույսերից հնարավոր է հանդիպել Սինդրիկ հոտավետ / Polygonatum odoratum/, Մկնսոխ կովկասյան / Scilla caucasica/, Բերենիկե պարսկական / Veronica persica/, Պուշկինիանա մկնասոխանման / puschkiniana scilloides/, Սագասոխուկ ելենայի / Gagea helenae/, հնարավոր է՝ վարդակակաչներ, Շնդեղի տեսակներ և այլն:

բ/ Մարգագետնատափաստանային բուսականություն՝ տափաստանային բուսականության տարրերով: Տարածաշրջանի բուսածածկում գերիշխող բուսատեսակներն են Շյուղախոտ ... /Festuca versicolor Tausch/, Շյուղախոտ ոչխարի /F. ovina L./, Շյուղախոտ վալեսյան /F. valesiaca Gaudin/, Սիզախոտ մարգագետնային /Phleum pratense L./, Գարի մանուշակագույն /Hordeum violaceum Boiss. et Huet/, Բոշխ ... /Carex humilis Leys/, Երեքնուկ նման /Trifolium ambiguum L./: Բնական բուսածածկի այս տիպը տարածված է չմշակված հողամասերում և գրավում է առանձին տարածքներ անտառազուրկ լեռնալանջերին: Հարավահայաց չոր, քարքարոտ լանջերին հնարավոր է հանդիպել նաև տոմիլյարային ձևերը՝ կիսաթփերից և բազմամյա խոտաբույսերից կազմված բուսական համակեցությունները

/հատկապես՝ շրթնածաղկավորների ընտանիքի ներկայացուցիչներից/, որոնց ներքին հարկում աճում են էֆեմերները: Ուսումնասիրված բիոտոպերի, տեղանքի առանձնահատկությունների, կլիմայական պայմանների համադրությունը հուշում են, որ այստեղ հնարավոր է հանդիպել Հայաստանում լայն տարածված բազմաթիվ վաղանցիկ /էֆեմեր/ բուսատեսակների:

գ/ Մարգագետնային բուսականություն՝ ցածրալպյան (ենթալպյան) հացազգիների և տարախոտա-հացազգային, մասնակցությամբ. Բրոմոպսիս խայտաբղետ /Bromopsis variegata (Bieb.) Holub/, Գարի մանուշակագույն /Hordeum violaceum Boiss. et Huet/, Հողմածաղիկ խրձային /Anemonastrum fasciculatum (L.) Holub/, Թթվիճ խոշորածաղիկ /Betonica macrantha C. Koch/, Բերենիկե բոգային /Veronica Gentiana/, Ձիվան /Cephalaria/, Կղմուխ /Inula/, Անմոռուկ /Myosotis/ ցեղի տեսակների հետ համատեղ:

10.3.8 Կենդանական աշխարհը

Կենդանական աշխարհի ուսումնասիրությունը կատարվում է բուսական աշխարհին զուգահեռ՝ ըստ բիոտոպերի: Թռչող կենդանիների թռիչքի ձևը /տեղաշարժվելու բնույթը/, առանձին կենդանիների արձակած ձայները կամ կենսագործունեության արդյունքները կարող են տեղեկություններ հաղորդել այդ կենդանիների ներկայության մասին: Թռչունները սովորաբար դիտարկվում են հեռադիտակով համեմատվում թռչունների դաշտային ուղեցույցի տվյալների հետ /Մարտին Ս: Ադամյան, Դանիել Քլեմ Կրտսեր ,,Հայաստանի թռչունները,, դաշտային ուղեցույց, ISBN: 0-9657429-5-4/: Բացառիկ դեպքերում տեղադրվում են թակարդներ, կազմակերպվում է դարաններ կամ գիշերային դիտարկում:

Առավել ուշադրություն պետք է դարձնել քարքարոտ տեղամասերին, բլրագագաթներին և անմշակ լեռնալանջերին, քանի որ բարձրադիր և քարքարոտ տեղամասերում, որոնք հարմար չեն որպես մշակվող տարածք կամ արոտավայր օգտագործելու, տեղանքի բուսածածկը հիմնականում անխաթար է և կա հնարավորություն կենդանիների բնակության:

Լուսագյուղի վարչական տարածքում հանդիպելու հավանականություն ունեցող կենդանական աշխարհի ներկայացուցիչների ցանկը ուսումնասիրվել է առկա գրական և համացանցային տվյալներից:

Անողնաշարավոր կենդանիներ. Հայաստանի հանրապետության տարածքում գրանցված են ավելի քան 17000 տեսակի անողնաշարավոր կենդանիներ, որոնց հիմնական մասը ուսումնասիրված չէ, ինչը բարդացնում է այս կենդանիների նույնականացման խնդիրը: Հաշվի առնելով, որ հետազոտության հիմնական խնդիրը հայցվող տարածքում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերումն է, վերը նշված բարդության պատճառով աշխատանքները կատարվելու են հետևյալ տրամաբանությամբ. դիտարկված անողնաշարավոր կենդանիները լուսանկարվելու են և լուսանկարները համեմատվելու են կենդանիների Կարմիր գրքում ներկայացված լուսանկարների հետ՝ առանց տեսակային նույնականացման: Մյուս կողմից հետազոտվող տարածքում հարկավոր է առանձին

ուշադրություն դարձնել կարմիրգրքային անողնաշարավորների բնակության բիոտոպեր, մասնավորապես կերի բազայի հայտնաբերմանը:

Հետաքրքրող տարածքում հնարավոր է հանդիպել կարմիրգրքային չորս անողնաշարավոր կենդանիների: Կարծրաթևերից՝ Թամբակուրծք թարախահանը /Mylabris sedilithorax Sumakov/, որն ապրում է ենթալպյան մարգագետիններում, անտառի վերին եզրին մոտ, հաճախ է հանդիպում Քոսքսուկ /Scabiosa/բուսատեսակների ծաղիկների վրա: Մնեմոզիա կամ Սև Ապոլոն / Parnassius mnemosyne rjabovi Sheljuzhko, / թիթեռը ապրում է անտառների բացատներում իսկ բազմանում է Պոպուլիկ պարսկական /Corydalis persica/ կամ Պոպուլիկ նեղատերև /Corydalis angustifolia/ բույսերի սուբստրատի վրա, որոնք հիմնականում անտառային բույսեր են: Պորչինսկու Իշամեղուն /Bombus portshinski/ և Կարմրավուն մրջյունը /Manica rubida/հասարակական միջատներ են, որոնցից առաջինի բիոտոպը լեռնային անտառների բացատներն ու մարգագետիններն են, իսկ մյուսը ապրում է 2000-2500 մ բարձրության ենթալպյան մարգագետիններում:

Ողնաշարավոր կենդանիներ

Ձկներ. Լուսագյուղի վարչական տարածքի վտակներում հնարավոր է Արագաշարժ Տառեխիկ /Alburnoides bipunctatus/, Քուռի Բեղլու /Barbus lacerta cyri/, Քուռի Կողակ /Varicorhinus capoeta/, ձկնատեսակների գոյությունը, ինչը պետք հետազոտվի դաշտային աշխատանքների ժամանակ:

Երկկենցաղներ. նարավոր է Լուսագյուղի վարչական տարածքում հայտնաբերել երկու տեսակ երկկենցաղների ներկայությունը՝ Փոփոխական դոդոշ /Bufotes variabilis/ և Լճագորտ /Pelophylax ridibundus/:

Սողուններ. Սողուններից հնարավոր է հանդիպել ՝ Հայկական ժայռային մողես /Darevskia armeniaka/, Ռադդեի ժայռային մողես / Radde's Lizard/, Միասեռ ժայռային մողես /Darevskia unisexualis/, որոնց համար բնակության կենսամիջավայր կարող են հանդիսանալ տարածաշրջանի քարքարոտ տեղամասերը: Օձերից հնարավոր է հանդիպել Բազմերանգ իժանման սահնօձ /Hemorrhois ravergieri/, Արևելյան քառաշերտ մագլցող /Coroulla sauromates/, Սովորական պղնձօձ /Coroulla austriaca/, իսկ ջրային միջավայրերում՝ Շախմատանախշ ջրային օձ /Natrix tessellata/:

Լուսագյուղի վարչական տարածքում կարմիրգրքային սողուններից, ընդհուպ մինչև Ծաղկունյաց լեռների ջրբաժանը, որտեղ որ կա հարմար բիոտոպ՝ հնարավոր է Հայկական լեռնատափաստանային իժի /Vipera criwanensis/ ներկայությունը: Ուշադիր պետք է լինել քարքարոտ տեղամասերում, որտեղ կա այս իժի կերը՝ մողեսներ և անողնաշարավորներ:

Թռչուններ. Լուսագյուղի վարչական տարածքում հնարավոր է հանդիպել թռչունների մեծ բազմազանության: Պատճառը վերընթաց գոտիական լանդշաֆտներն են՝ տափաստան, անտառներ և մարգագետիններ: Սպասվում է տափաստանային ու անտառային թռչունների, գիշատիչների, կկուների, արտույտների, քարաթռչնակների, կեռնեխների, գեղգեղիկների,

շահրիկների, դրախտապանների, ոսպնուկների, ճնճղուկազգիների, կաչաղակների աղավնիների ու ագռավների տարբեր տեսակների ներկայությունը տարածաշրջանում:

Քիչ չեն նաև կարմիրգրքային թռչնատեսակները, հիմնականում գիշատիչներ, որոնց հավանական է հանդիպել տարածաշրջանում: Թռչուններից , ինչպիսիք են Գիշանգղը /Neophron percnopterus Linnaeus/, Գառնանգղը /Մորուքավոր անգղ/ /Gypaetus barbatus Linnaeus/, Սպիտակագլուխ անգղը /Gyps fulvus/, Օձակեր արծիվը /Circaetus gallicus/, Գաճաճ արծիվը /Hieraaetus pennatus/, Տափաստանային արծիվը /Aquila nipalensis orientalis Hodgson/, Քարարծիվը / Aquila chrysaetos/, Սապսանը / Falco peregrinus Tunstall/, որոնք ունեն կենսագործունեության ընդարձակ արեալ, կարող են ժամանակավորապես հայտնվել տարածաշրջանում, սակայն հայցվող տարածքում նրանց համար չկա բնադրման հարմար միջավայր: Որպես կանոն խոշոր գիշատիչ թռչունների համար հարմար բնադրավայրեր են բարձրաբերձ ժայռերը, որոնք տարածքի շրջակայքում բացակայում են, գյուղական համայնքի մոտիկությունը նույնպես վանում են այս կենդանիներին: Հայցվող տարածքի և տարածաշրջանը նրանց համար կարող է լինել միայն որպես կեր հայթայթելու տարածք և տեղամասի շահագործումը չի կարող զգալիորեն ազդել այս թռչունների թվաքանակի վրա:

Քսերոֆիտային բուսականության և ժայռերի առկայությամբ թեք տափաստանային լանջերին ցածրադիր տեղամասերում հավանական է Ներկարար /Coracias garrulus/ կարմիրգրքային թռչնատեսակի առկայությունը:

Կաթնասուններ. Կաթնասունների դիտարկումները մեծամասամբ լինում են պատահական, առավել հաճախ գրանցվում են նրանց գործունեության հետքերը: Թռչունների և սողունների դիտարկումները իրականացվում են օգտագործելով հեռադիտակներ, լուսանկարչական խցիկներ: Տեղանքի աշխարհագրական դիրքը գրանցվել է GPS-ի օգնությամբ: Կենդանական աշխարհի մասին հետաքրքիր տեղեկություններ կարելի է ստանալ տարածաշրջանի բնակչությունից:

Կաթնասուններից առավել հավանական է հանդիպել կրծողների /մկներ, նապաստակ և այլն/, միջատակերներից՝ ոզնի, գիշատիչներից՝ աղվես, գայլ և այլն:

Աղյուսակ 10.3.8 Լուսագյուղի տարածաշրջանում հանդիպելու հավանականություն ունեցող ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների ցանկ

hh	Անվանումը, դասակարգումը, Կարմիր գրքում հերթական համարը	Կատեգորիա /ըստ IUCN 2001թ./	Տարածվածությունը Հայաստանում, ապրելավայրերը, կենսաբանական առանձնահատկությունները	Լուսանկարներ
1	75. Թամբակուրծք թարախահան Mylabris sedilithorax Sumakov, 1924 Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ - Coleoptera Ընտանիք՝ Թարախահաններ - Meloidae	EN B 1a	Ծաղկունյաց լեռնաշղթա՝ Ծաղկաձորից մինչև Հանքավան, Ապարան, Արագած լեռան հարավային լանջեր՝ Անտառուտ գյուղի մոտ, Սևան քաղաքի շրջակայք: Ապրելավայրերը: Լեռնատափաստան և ենթալպյան մարգագետիններ՝ անտառի վերին եզրի մոտ: Կենսաբանության առանձնահատկությունները: Հայտնի չեն: Բզեզները հանդիպում են հուլիս-օգոստոս ամիսներին բույսերի՝ առավել հաճախ Scabiosa սեռի ներկայացուցիչների ծաղիկների վրա:	
2	101. Մնեմոզինա կամ սև ապոլոն Parnassius mnemosyne rjabovi Sheljuzhko, 1935 Կարգ՝ Թեփուկաթևեր կամ	VU B 1a	Հանրապետությունում լայն տարածված է: Հայտնի է Շիրակի (Աշոցք գյուղի շրջակայք,) Գեղարքունիքի (Սևանի լեռնանցք), Տավուշի (Դիլիջան քաղաքի շրջակայք), Կոտայքի (Արզաական, Գեղադիր, Գողթ, Հանքավան գգ. շրջակայք), Վայոց Ձորի (Ջերմուկ քաղաքի, Գնիշիկ գյուղի շրջակայք), Սյունիքի (Լիչք, Շվանիձոր գյուղերի շրջակայք, Կալեր և Վանք լքված գյուղեր) մարզերից, Արագած և Արայի լեռներից,	

	Թիթեռներ - Lepidoptera Ընտանիք՝ Առագաստաթիթեռներ - Papilionidae		«Խոսրովի անտառ» պետական արգելոցից: Ապրելավայրերը: Լեռնատափաստանային գոտու մարգագետիններ, անտառային բացատներ: Տալիս են մեկ սերունդ, թռիչքը՝ մայիսի կեսից մինչև հուլիսի կես: Թրթուրները զարգանում են Corydalis ցեղի լոկալ տեսակների վրա (Corydalis persica, Corydalis angustifolia): Ձմեռում են ձվի կամ առաջին հասակի թրթուրների փուլում:	
3	145. Պորչինսկու իշամեղու Bombus portshinskii Radoszkowsky, 1884 Կարգ՝ Թաղանթաթևեր - Hymenoptera Ընտանիք՝ Իսկական մեղուներ - Apidae	VU B1a+B2a	Տարածված է Կենտրոնական Հայաստանում՝ Գեղարքունիքի (ք.Սևանի մոտակայք), Կոտայքի (գ.Արտավազ, Կոտայք, Աղվերանի կիրճ՝ Արզաքան գ. մոտ) և Արագածոտնի (ք. Ապարան) մարզերից: Ապրելավայրերը: Լեռնատափաստանային լանդշաֆտներ, լեռնային անտառներ, ենթալպյան և ալպյան գոտիներ՝ մարգագետիններ և բացատներ:Հասարակական միջատներ են, կենսական ցիկլով նման են B. armeniacus տեսակին: Բազմակեր են: Թռիչքը դիտվում է հունիս-սեպտեմբեր ամիսներին: Բները պատրաստում են հողում:	

4	149. Կարմրավում մրջյուն Manica rubida (Latreille, 1802) Կարգ՝ Թաղանթաթևեր - Hymenoptera Ընտանիք՝ Մրջյուններ - Formicidae	EN B 1a+B 2a	Հայտնաբերվել է միայն Կենտրոնական Հայաստանում՝ Կոտայքի (Արտավազ գյուղի մոտակայք) և Արագածոտնի (Ապարան քաղակի մոտակայք) մարզերում: Ապրելավայրերը: Ենթալպյան մարգագետիններ՝ 2000-2500 մ ծ.մ.բ.: Հասարակական միջատներ են, գաղութները կարող են պարունակել մի քանի հարյուր առանձնյակ: Բները պատրաստում են քարերի տակ և հողում: Թևավոր սեռական առանձնյակները հայտնաբերվել են մրջնանոցներում հունիսին: Սնվում են անողնաշար կենդանիներով և նրանց դիերով:	
5	27. Հայկական լեռնատափաստանային իժ, Vipera (Pelias) eriwanensis (Reuss, 1933), Կարգ ՕՁԵՐ, SERPENTES Ընտանիք Իժանման օձեր կամ իժեր, Viperidae	VU B1ab(iii, v)	Հանդիպում է հանրապետության հյուսիս արևմտյան, կենտրոնական և հարավային շրջաններում, հիմնականում լեռնատափաստանային լանդշաֆտներում և բարձրադիր մարգագետիններում՝ 1200-3000 մ ծ.մ.բ. բարձրության վրա: Ապրելավայրերը: Հայաստանում բնակեցնում է խիստ քարքարոտ, լեռնաքսերոֆիտային տափաստանները և ալպիական մարգագետինները: Համդիպում է նաև լեռնային նոսրանտառներում, լեռնալանջերի քարերի ցրվածքների, սրածայր աստրագալների և այլ չորային բույսերի արանքներում: Հազվադեպ հանդիպում են նաև մշակվող լանդշաֆտներում՝ քարերի կույտերի տակ: Որպես թաքստոցներ օգտագործում է կրծողների բները, քարերի տակի դատարկությունները, տարբեր թփերի մերձարմատային մասերը, ժայռերի և հողի ճեղքերը և այլն: Ակտիվ են ապրիլի կեսերից մինչև հոկտեմբերի կեսերը: Սնվում են անողնաշար կենդանիներով և	

			մողեսներով: Զուգավորումը տեղի է ունենում ապրիլ-մայիսին՝ կախված ապրելավայրի բարձրությունից և ձմեռումից դուրս գալու ժամկետներից: Չվակենդանածին է: Ձագերի ծնվելը սկսվում է հուլիսի վերջից և տևում մինչև սեպտեմբերի կեսերը: Հղիությունը տևում է 90-130 օր: Ձագերը ծնվում են օգոստոսի կեսերից մինչև սեպտեմբերի վերջը:	
6	54. Գառնանգղ (Մորուքավոր անգղ), Gypaetus barbatus Linnaeus, 1758 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae	VU D1	Հայաստանում տարածված է համարյա ամբողջ տարածքում, բացի հանրապետության արևմուտքից և հյուսիս-արևմուտքից: Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ.բ. բարձրություններում: Բնադրավայրերը համարյա չեն փոփոխվել, սակայն կերային բազան նկատելիորեն վատթարացել է՝ կապված վայրի սմբակավորների թվաքանակի կրճատման հետ: Բները զբաղեցնելու խիստ օրինաչափություն չի դիտվում, սակայն երբեմն զբաղեցնում են նույն բույնը մի քանի տարի շարունակ: Բները, սովորաբար, տեղադրում են ժայռերի եզրերին կամ ժայռային խորշերում, որտեղ ցերեկային արևի ճառագայթները չեն հասնում: Չվադրման շրջանը տատանվում է լայն սահմաններում, հավանաբար՝ հունվարի սկզբից մինչև մարտի կեսերը: Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: Ձագերը դուրս են գալիս փետրվարի երկրորդ կեսին: Կերը հայթհայթում է ինչպես բաց լանդշաֆտներում (լեռնային տափաստան, կիսաանապատ, անտառատափաստան), այնպես էլ կիրճերում: Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երբեմն սնվում է խոշոր եղջերավոր	

			կենդանիների և միջին չափերի կրծողների ու գիշատիչների դիակներով:	
7	55. Գիշանգղ, Neophron percnopterus Linnaeus, 1758 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae	EN A2bcde+3bcde +4bcde	Հայաստանում հանդիպում է համարյա ամբողջ տարածքում: Բնադրում է առավելապես բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ. բարձրություններում: Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: Կերը հայթհայթում է ինչպես բաց լանդշաֆտներում (լեռնային տափաստան, կիսաանապատ, անտառատափաստան), այնպես էլ կիրճերում: Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երբեմն սնվում է խոշոր եղջերավոր կենդանիների և գիշատիչների դիակներով՝ հաճախ հավաքելով դրանք ճանապարհների վրա:	
8	56. Սպիտակագլուխ անգղ, Gyps fulvus (Hablizl, 1783) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae	VU D1	Հայաստանում հանդիպում է համարյա ամբողջ տարածքով, բացի հանրապետության հյուսիս-արևմուտքից: Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ. բարձրություններում: Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: 2007 թ-ին Երևանի Կենդանաբանական այգում գրանցվել է 3 զույգերի բազմացումը, որոնցից ստացվել են երկու ձագեր: Կերը հայթհայթում է ինչպես բաց լանդշաֆտներում (լեռնային տափաստան, կիսաանապատ, անտառատափաստան), այնպես էլ կիրճերում: Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երբեմն սնվում է խոշոր եղջերավոր	

			կենդանիների և այլ խոշոր կենդանիների դիակներով:	
9	58. Օձակեր արծիվ, Circaetus gallicus (J. F. Gmelin, 1788) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae	VU D1	Հանդիպում է ամենուրեք, բացառությամբ արևմտյան անտառազուրկ շրջաններից: Բնադրում է անտառային շրջաններում (ինչպես խառն, այնպես էլ գիհու նոսրանտառներում): Որսը կատարում է, սովորաբար, բաց տարածքներում: Տարեկան ձվադրում է մեկ անգամ, ձվակույտում՝ 1 ձու:	
10	65. Տափաստանային արծիվ, Aquila nipalensis orientalis Hodgson, 1833 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae	VU C2a(i); D1	Հայաստանում հանդիպում է տափաստանային գոտում ինչպես չուի ժամանակ, այնպես էլ (ոչ սեռահասուն առանձնյակները) բնադրման շրջանում: Լեռնատափաստաններ, գյուղատնտեսական հողեր: Հայաստանում չի բազմանում: 2007 թ.-ին, ըստ Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի տվյալների, կենդանաբանական այգիներում եղել է 21 բազմացող զույգ, որոնցից ստացվել են 9 ձագեր:	

11	67. Քարարծիվ, Aquila chrysaetos (Linnaeus, 1758) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae	VU D1	Նստակյաց: Հանրապետությունում տարածված է համարյա ամենուրեք, խուսափում է ամբողջական անտառային զանգվածներից: Զբաղեցնում է բաց և կիսաբաց տեսակի բիոտոպերը: Բնադրում է ժայռերի վրա: Որսը կատարում է բաց տեղանքներում՝ դաշտերում, մարգագետիններում: Տարեկան ձվադրում է մեկ անգամ: Դնում են 1-2 ձու:	
12	68. Գաճաճ արծիվ, Hieraaetus pennatus (J. F. Gmelin, 1788) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae	VU D1	Հայաստանում հանդիպում է գրեթե բոլոր արևելյան մասերում՝ զբաղեցնելով անտառային գոտին: Ապրելավայրերը: Նախընտրում է բնադրել լայնատերև և համախառն անտառներում, որսի տարածքը հաճախ գտնվում է բաց լեռնատափաստանային գոտում: Ձվադրում են տարին մեկ անգամ՝ դնելով 2 ձու:	

13	75. Սապսան, Falco peregrinus Tunstall, 1771 Ենթատեսակ Falco peregrinus brookei (Sharpe, 1873) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Բազեներ, Falconidae	VU D1:	Հայաստանում հանդիպում է գրեթե ամբողջ տարածքում՝ զբաղեցնելով ժայռային միջավայրերը: Բնակվում է ժայռերի առկայությամբ տարբեր տիպի բիոտոպներում: Բնադրում է ժայռերի վրա՝ խորշերում կամ ժայռաքիվերին: Տարեկան ձվադրում է մեկ անգամ, ձվակույտում՝ 2-4 ձու: 2007 թվականի տվյալներով, Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի ցանցում գրանցվել է 5 բազմացող զույգ, որոնցից ստացվել է 7 ձագ:	
14	107. Ներկարար, Coracias garrulus (Linnaeus, 1758) Ենթատեսակ՝ Coracias garrulus garrulus (Linnaeus, 1758) Կարգ՝ ՆԵՐԿԱՐԱՐԱՆՄԱՆՆԵՐ, CORACIIFORMES Ընտանիք՝ Ներկարարներ, Coraciidae	VU B1ab(iii)	Հայաստանում հանդիպում է կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում: Հանդիպում է կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում՝ բնակեցնելով հարաբերականորեն թեք լանջերը քսերոֆիտային բուսականության և ժայռերի առկայությամբ: Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ դնելով 3-6 ձու: Սնվում է, հիմնականում, միջատներով:	

11.0 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համայնքի զարգացման ծրագրի հիմնական նպատակներից է ապահովել բնակավայրի կայուն զարգացման համար անհրաժեշտ պայմաններ: Սույն գլխավոր հատակագծի միջոցառումները նպատակաուղղված են բարելավելու բնակչության կենսամակարդակը՝՝բնական ռեսուրսների խնայողական և արդյունավետ օգտագործման պայմանով:

11.1 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի հիմնական աղտոտիչներն են տրանսպորտային միջոցները և ձմեռային ժամանակահատվածում՝ ջեռուցման միջոցները: Համապատասխանաբար օդային ավազանի պահպանության առաջնահերթ միջոցառումներն են.

- ճանապարհային ցանցի բարելավումը, ինչը թույլ կտա կարգավորել տրանսպորտային երթևեկությունը և կրճատել վառելիքի օգտագործումը, ինչը իր հերթին կկրճատի վնասակար նյութերի արտանետումները,

- տրանսպորտային միջոցների պատշաճ սպասարկումը՝ բնակավայրում համապատասխան ծառայության հիմնման խթանումով,

- մեքենաների շարժիչների վառելիքի համակարգի գաշաֆիկացում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գազային վառելիքի այրման արդյունքում վնասակար նյութերի արտանետումները ավելի քիչ են,

ջեռուցման համակարգերի արդիականացումը:

11.2. Ձրային ռեսուրսներ

- համայնքի ջրամատակարարման ցանցի նորոգում և ընդլայնում: Այս միջոցառումը թույլ կտա կրճատել ջրի կորուստները՝ նվազեցնելով խմելու որակի ջրօգտագործումը

- բնակավայրի կոյուղացում,

- տեղային կենսաբանական մաքրման կայանի տեղադրում: Միջոցառումը թույլ կտա պահպանել ջրային ռեսուրսները և հողածածկը, կեղտաջրերի արտահոսքի արդյունքում հնարավոր աղտոտումից,

- ժամանակակից ոռոգման համակարգերի ներդրում:

11.3. Աղբահանություն

- աղբի հավաքման համակարգի բարելավում

- հավաքված աղբի կանոնավոր տեղափոխում Ապարան համայնքի կենտրոնական աղբավայր:

11.4. Հողային ռեսուրսներ

Յուրաքանչյուր շինարարական աշխատանքների նախապատրաստական փուլում իրականացնել հողածածկի ուսումնասիրություն, ապահովել հակաէրոզիոն աշխատանքներ այն վայրերում, որտեղ վնասվել է բուսածածկը, ինչպես նոր կառուցվող ճանապարհների եզրերին:

Ձրային հոսքերի երկայնքով իրականացնել ափապաշտպան և ամրացման աշխատաքներ:

11.5. Կանաչապատում

Բնակավայրի կանաչապատումը մեծ նշանակություն ունի շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների որակի բարելավման և բնակավայրում հանգստի պայմաններ ստեղծելու տեսակետից:

Նախատեսվում է բնակավայրի կենտրոնական մասում կազմակերպել ընդհանուր օգտագործման հանգստյան գոտի, մակերեսը՝ 1.05 հա: Հանգստյան գոտու տեղադիրքը ներկայացված է գլխավոր հատակագծի գծագրային մասում:

11.6. Պատմամշակութային միջավայր

Պատմամշակութային հուշարձանների պահպանության համար անհրաժեշտ է.

- ցանկացած շինարարական աշխատանքների համար տրամադրվող շինթույլտվության պահանջներում ներառնել պատմամշակութային հուշարձանների համար անվտանգության գոտու ապահովումը

- տուրիստական երթուղիների մշակման ժամանակ հաշվի առնել պատմամշակութային հուշարձանների անվտանգության գոտիները

- սպասարկման օբյեկտների տեղի որոշման ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել պատմամշակութային հուշարձանների առկայությանը և ապահովել դրանց պահպանությունը

- կազմակերպել պատմամշակութային հուշարձանների պարբերական զննումներ և անհրաժեշտության դեպքում իրականացնել վերականգնման աշխատանքներ կամ ցանկապատել այդ վայրը:

11.7 Էկոհամակարգեր

Տուրիզմի զարգացումը որոշ դեպքերում առաջացնում է երթուղիների տեղանքների գերբեռնվածություն, որը բացասաբար է ազդում տեղանքի բուսական և կենդանական աշխարհի, ջրային ռեսուրսների և հողածածկի վրա:

Այդ պատճառով շատ կարևոր է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

- բացառել տուրիստական ծառայությունների համար նախատեսվող տարածքների ցանկից այնպիսի տարածքներ, որտեղ առկա են ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակներ

- բացառել սպասարկման օբյեկտների կառուցումը գետերի ափամերձ տարածքներում

- սահմանափակել տուրիստական խմբերի օրական քանակները առանձնապես ծանրաբեռնված շրջաններում:

Բնակավայրի հետագա կայուն զարգացման համար մեծ նշանակություն ունի երիտասարդ սերնդի մոտ բնության հանդեպ հոգատար և խնայողական վերաբերմունքի ձևավորումը: Այդ նպատակով անհրաժեշտ է դպրոցական ծրագրերում ներառնել տարածաշրջանի բնության մասին հաղորդումներ, ինչպես նաև

պարբերաբար կազմակերպել ճանաչողական շրջագայություններ տարածաշրջանի գեղատեսիլ վայրեր:

12.0 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

12.1 ՆԱԽԱԲԱՆ

Լուսագյուղի գլխավոր հատակագծի «Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումները» բաժինը սահմանում է գյուղի քաղաքացիական պաշտպանության (այսուհետև՝ ՔՊ) ինժեներատեխնիկական և տարածքի բնական վտանգավոր երևույթներից և տեխնածին վտանգներից պաշտպանության միջոցառումները:

Բաժինը բաժանված է երկու մասի՝

1) ՔՊ ինժեներատեխնիկական միջոցառումներ, որոնք մշակվել են՝ հաշվի առնելով տարածքների և այնտեղ տեղաբաշխված օբյեկտների պատկանելիությունը ՔՊ խմբերին:

2) արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ, որոնք մշակվել են՝ հաշվի առնելով նախագծվող տարածքում առկա տեխնածին ու բնական պոտենցիալ վտանգները՝ շրջակա միջավայրի և բնական պայմանների գնահատմամբ:

12.2 Քաղաքացիական պաշտպանության ինժեներա-տեխնիկական միջոցառումներ

ՔՊ ինժեներա-տեխնիկական միջոցառումներն ուղղված են բնակչության եւ նյութական արժեքների պաշտպանության նախապատրաստմանը ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում, ինչպես նաև արտակարգ իրավիճակների սպառնալիքի և ծագման դեպքում:

ՔՊ ինժեներա-տեխնիկական միջոցառումների հիմնական պահանջներն են՝

ա) ՔՊ տեսանկյունից՝ բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում եւ մանրամասն հատակագծման նախագծերում հատուկ, կարեւորագույն

նշանակության օբյեկտների գործունեության կայունության ապահովումը և նպատակահարմար տեղաբաշխումը.

բ) շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային ուղիների և մայրուղիների շինարարության անվտանգության ու հուսալիության ապահովումը, վտանգավոր օբյեկտների անվտանգ գործունեության ապահովումը.

գ) կառավարման, կապի ու ազդարարման, կառավարման մարմինների և բնակչության իրազեկման ապահովման համակարգերի հիմնումը և դրանց բնականոն գործունեության ապահովումը.

դ) պաշտպանական կառույցների շինարարությունը, պահպանումը և բնակչության պատսպարումը.

ե) անհատական պաշտպանության միջոցների ու քաղաքացիական պաշտպանության նպատակով այլ գույքի անհրաժեշտ պաշարների ստեղծումը, պահպանումը և բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.

զ) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը:

12.2.1 Կառավարում, կապ և ազդարարում

12.2.1.1 Կառավարում.

ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության, ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաև բնական աղետների ու տեխնածին վթարների սպառնալիքի կամ արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում՝ համայնքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ ՔՊ պետը, կառավարման հիմնական և իրավիճակի կտրուկ վատթարացման դեպքում՝պահեստային կառավարման կետերից:

Առանձին դեպքերում փրկարարական աշխատանքների տեղամասերում աշխատանքների կառավարումը կարող է իրականացվել շարժական կառավարման կետերից, որոնք հագեցվում են կապի տեխնիկական և սուրհանդակային ուժերով ու միջոցներով:

ՔՊ միջոցառումների իրականացումը համակարգում և վերահսկում է ՔՊ բնագավառում լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանումը՝ ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը:

12.2.1.2 Կապ և ազդարարում.

Գյուղում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում

բնակչությանն ազդարարելու մասին որոշումներն ընդունում են՝

ա) համայնքային նշանակության արտակարգ իրավիճակների դեպքում՝ համայնքի ղեկավարը.

բ) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հարձակման սպառնալիքի կամ հանկարծակի հարձակման դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը, ՀՀ պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

Գյուղում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում բնակչության ազդարարումն իրականացնում են՝

ա) համայնքային նշանակության արտակարգ իրավիճակների դեպքում՝ համայնքի ղեկավարը.

բ) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հարձակման սպառնալիքի կամ հանկարծակի հարձակման դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը:

Գյուղում բնակչության պաշտպանության միջոցառումների ընթացքում կապը կազմակերպվում է գերկարճալիք ու կարճալիք, ինչպես նաև բջջային, քաղաքային և ուղիղ հեռախոսակապի միջոցով:

Ազդանշանը տրվում է շչակների միջոցով, 3 րոպե անընդմեջ տևողությամբ: Բնակչության հետագա գործողությունների վերաբերյալ հաղորդագրությունները տրվում են հեռուստատեսությամբ և ռադիոյով: Անհրաժեշտության դեպքում ազդարարման գործընթացին մասնակցում են նաև ոստիկանության շարժական ուժերն ու միջոցները:

Գյուղում առկա և անհրաժեշտ էլեկտրական շչակների հաշվարկ

աղյուսակ 12.2.1.1-1

Անհրաժեշտ է (1հատ)	Առկա է (1հատ)	
	Ընդամենը	որից սարքին

1	1	1

12.2.2 Բնակչության տարահանում.

Գյուղում տարահանում կարող է իրականացվել՝

ա) ուժեղ երկրաշարժի հետևանքով ավերված և բնակվելու համար վտանգավոր բնակավայրերից:

Այս դեպքում տարահանումն իրականացվում է համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված տարահանման պլանի:

12.2.3 Բնակչության պատսպարում.

Գյուղի տարածքում բնակչության պատսպարումն իրականացվում է հետևյալ պաշտպանական կառույցներում՝

ա) նկուղային տարածքներում՝ «Օդային տագնապ» ազդանշանի:

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

ա) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարությունը.

բ) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

գ) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

դ) արագ կառուցվող և պարզագույն թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Պաշտպանական կառույցները բերվում են պատրաստականության՝ պատսպարվողնեիջ ընդունման համար ազդանշան տալու պահից սկսած 12 ժամվա ընթացքում, որոնք գտնվում են մշտական պատրաստականության վիճակում՝ անմիջապես:

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումը տեղի է ունենում ՔՊ ազդանշաններով:

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված պլաններով:

12.2.4 Ռազմական դրության ժամանակ

բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովում

Ռազմական դրության ժամանակ բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովվման հաշվարկը համաձայն աղյուսակ 11.2.4.1-1-ի:

Աղյուսակ 12.2.4.1-1

Հ/հ	Բնակչության տարիքային խմբերը	Թիվը, մարդ		Անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ		
		Առկա	Հաշվարկային	Տեսակը	Բնակչության թիվը գումարած 10%	
					Առկա	Հաշվարկային
1	0 – 2 տարեկան	12	16	Մանկական պահպանման խցիկ (ԿՋԴ-6)	14	20
2	2 - 7 տարեկան	31	42	Մանկական նախադպրոցական զտող հակագազ (ՊԴՖ-Դ-ՆՄՈՒ, ՊԴՖ-ԴԱ)	34	46
3	7 – 17 տարեկան	49	66	Մանկական դպրոցական զտող հակագազ (ՊԴՖ-Շ-ՆՄՈՒ, ՊԴՖ-ՇԱ)	54	73
4	17-ից բարձր	720	976	Զտող հակագազ (ԳՊ-5, ԳՊ-7)	792	1075
Ընդամենը		812	1100	-	894	1214

12.3 Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներն իրականացվում են նախապես և ուղղված են արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկը նվազագույնին հասցնելուն, իսկ դրա առաջացման դեպքում՝ նաև մարդկանց առողջության պահպանմանը, շրջակա բնական միջավայրին պատճառվող վնասի և նյութական կորուստների չափերի նվազեցմանը:

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների հիմնական պահանջներն են՝

ա) բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում եւ մանրամասն հատակագծման նախագծերում վտանգավոր ձեռնարկությունների ու արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխումը՝ բնակչության պաշտպանության

տեսանկյունից.

բ) կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքի ապահովումը.

գ) արտակարգ իրավիճակների կանխումը և հնարավոր հետևանքների նվազեցումը.

դ) հրդեհային անվտանգության բարձրացումը:

12.3.1 Վտանգավոր բնական երևույթներ.

12.3.1.1 Գյուղի տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները.

Շրջանն ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով մեղմ կլիմա, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 32՞C: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -33՞C:

Տարեկան մթնոլորթային միջին տեղումների քանակը կազմում է 400 մմ, գերակշռում են 1.8 մ/վրկ արագության հյուսիսային (ամռանը) և արևմտյան (ձմռանը) ուղղության քամիները: Ջյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 45սմ: Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 108սմ: Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Արագած լեռան արևելյան մասում, Քասախ գետի հովտում:

Երկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում տարածված են էոցեն-պրոտերոզոյի հրաբխանստվածքային տերրիգեն կարբոնատային մետամորֆիզացված և ինտրուզիվ ապարների համալիրը ներկայացված պորֆիրիտներով: Ժամանակակից պլիոցենի փուխր բեկորային ժայռային և կիսաժայրային հրաբխային ապարների նստվածքներով

ներկայացված ալյուվիալ, դելյուվիալ, կոլյուվիալ լճա-սառցային մեծաբեկորա-ճալաքարային կոպճային գրունտներով, ավազակավային լցանյութով:

12.3.2 Տեխնածին վտանգներ

12.3.2.1 Ճառագայթավտանգ օբյեկտներ.

Տեխնածին արտակարգ իրավիճակների դեպքում իրականացվում է `

- բնակչության ազդարարում (համաձայն 11.2.1.2 կետի),
- բնակչության տարահանում (համաձայն 11.2.2 կետի),
- բնակչության պատսպարում (համաձայն 11.2.3 կետի),
- անհատական պաշտպանության միջոցներով ապահովում (համաձայն 7.5 կետի),

12.3.2.2 Տեխնածին արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումները

Տեխնածին արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանությունը իրականացվում է՝

- ազդարարում (համաձայն 11.2.1.2 կետի),
- տարահանում (համաձայն 11.2.2 կետի),
- պատսպարում (համաձայն 11.2.3 կետի),
- անհատական պաշտպանության միջոցներով ապահովում (համաձայն 7.5 կետի):

12.3.3 Գյուղի տարածքի հրդեհային անվտանգություն.

Բնակավայրը պետք է ապահովված լինի հրդեհային պահպանությամբ, ինչպես նաև հակահրդեհային ջրամատակարարմամբ, շենքերին եւ շինություններին հարող մշտական

գործող ճանապարհներով, կապի միջոցներով՝ համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի:

Հրդեհային անվտանգության բնագավառում համանքի՝ պետության պատվիրակած լիազորություններն են՝

ա) հրդեհների կանխման եւ հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

բ) հրդեհային անվտանգության միջոցառումների կատարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցելը և օգնելը:

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի կամավոր լիազորություններն են.

ա) հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման աշխատանքներում.

բ) հրդեհային պահպանության հասարակական միավորումների գործունեությանն աջակցելը.

գ) հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը.

դ) հակահրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ ռեժիմի ապահովումը:

Գյուղին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներն են.

ա) Կազմակերպությունների, շենքերի, շինությունների, բաց պահեստների, ինչպես նաև շենքերին կից հակահրդեհային միջտարածությունները պետք է ժամանակին մաքրվեն հրդեհավտանգ թափոններից: Հրդեհավտանգ թափոնները, աղբը պետք է հավաքվեն հատուկ

հատկացված տարածքներում, կոնտեյներների կամ արկղերի մեջ և տեղափոխվեն:

բ) Շենքերի, շինությունների հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման, շենքերի և շինությունների կառուցման համար:

գ) Շենքերի, շինությունների, բաց պահեստների հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների, անշարժ հրդեհային սանդուղքների, հրդեհային գույքի մոտեցման ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն: Վերակառուցման պատճառով ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով

անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:

դ) Ժամանակավոր շինությունները, կրպակները, տաղավարները պետք է տեղադրվեն շենքերից և շինություններից 15 մետրից ոչ պակաս հեռավորության վրա կամ հակահրդեհային պատի մոտ, բացառությամբ իրավական ակտերով սահմանված պահանջվող՝ ավելի մեծ հակահրդեհային միջտարածության: Առանձին բլոկ-կոնտեյներային շենքերը թույլատրվում է տեղադրել խմբերով, յուրաքանչյուր բլոկում 10-ից ոչ ավելի կոնտեյներ, որոնց գումարային մակերեսը չպետք է գերազանցի 800 մ^2: Այդ շենքերի խմբերից մինչև շինությունները, առևտրական տաղավարները և օբյեկտներն ընկած հեռավորությունը չպետք է լինի 15 մ-ից պակաս:

ե) Հակահրդեհային միջտարածություններում արգելվում է կրակ վառելու միջոցով թափոններ ոչնչացնել: Թափոնների ոչնչացումը կատարվում է հատուկ հատկացված տեղերում:

զ) Հակահրդեհային ջրաղբյուրները, շենքերի և շինությունների մուտքերը արագ ի հայտ բերելու նպատակով, օբյեկտների այդ տարածքները պետք է ապահովված լինեն լուսավորությամբ:

է) Բնակելի տների, ամառանոցային ավանների, հասարակական շենքերի տարածքի չհսկվող հրապարակներում, բակերում չի թույլատրվում պահել դյուրավառ հեղուկներ և գազեր:

ը) Ամառային ամիսներին կայուն չոր, շոգ և քամոտ եղանակի պայմաններում բնակավայրում, կազմակերպություններում, ամառանոցային ավաններում խարույկների վառումը, հրդեհավտանգ աշխատանքների կատարումը կարող է ժամանակավորապես դադարեցվել:

թ) Հրդեհի դեպքում հրշեջ պահպանությանը հաղորդելու համար, համայնքը և առանձին տեղաբաշխված օբյեկտները պետք է ունենան սարքին հեռախոսային, ռադիո կամ կապի այլ միջոցներ:

12.4 ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

բնակչության անհատական պաշտպանության և պատսպարման միջոցներով ապահովման

Անհատական պաշտպանության միջոցներով ապահովման պահանջ

Աղյուսակ 12.4-1

Բնակչության թիվը		Անհրաժեշտ հակագազերի քանակը	Անհրաժեշտ շնչադիմակների քանակը
առկա	812	-	812
նախագծային	1100		1100

Պատսպարման միջոցներով ապահովում

Աղյուսակ 12.4-2

Պատսպարման ենթակա բնակչության թիվը		Այդ թվում					
		Ապաստարան		Հակաճառագայթային թաքստոցներ		Նկուղներ	
		քանակ/տարող.	%	քանակ/տարող.	%	քանակ/տարող.	%
առկա	812	-		1-2 280	-	140 700	100
նախագծային	1100					200 1030	

12.5 ՀԻՄՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
2. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
3. «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք,
4. «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք,
5. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենք,

6. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենք,

7. ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի «ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N194-Ն որոշում:

8. ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 13 «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 746 որոշում,

9. ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» թիվ 592 որոշում,

10. ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» թիվ 679 որոշում,

11. ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի «ՀՀ արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 702 որոշում:

12. ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի «ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1304-Ն որոշում,

13. ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» թիվ 1494-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1925-Ն որոշում,

15. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» թիվ 2328-Ն որոշում:

16. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, տեխնածին արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍՏ 201-2000,

17. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, բնական արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍՏ 227-2003,

18. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍՏ 233-2004,

19. ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր»,

20. ՀՀՇՆ II-6.01-96 «Վտանգավոր բնական ազդեցությունների երկրաֆիզիկա»,

21. ՍՆիՊ 2.01.15-90 «Տարածքների, շենքերի և կառուցվածքների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից. Նախագծման հիմնական դրույթներ»,

22. ՍՆիՊ 2.06.15-85 «Տարածքների ինժեներական պաշտպանությունը ողողումներից և հեղեղներից»,

23. ՇՆՁ II-6.01.01-98 «Շենքերի և կառուցվածքների տարածքների ինժեներական պաշտպանությունը բնության վտանգավոր երևույթներից»,

24. ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»:

13.0 ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 13.0

Ցուցանիշները	Չափի միավորը	Գոյություն ունեցող	Հեռանկարային
1	2	3	4
1. Տարածքը			
Լուսագյուղի վարչական սահմաններում ընդգրկված ընդհանուր մակերեսը, ընդամենը՝, այդ թվում՝	***հա***	**1740.24**	**1740.24**
բնակավայրերի հողեր	***հա***	**113.76**	**120.61**
բնակելի կառուցապատման այդ թվում՝ տնամերձ	հա	92.35	92.16
հասարակական կառուցապատման	հա	1.43	5.42
խառը կառուցապատման	հա	-	-
ընդհանուր օգտագործման	հա	13.89	17.27
այլ տարածքներ	հա	6.09	5.76
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	***հա***	**7.32**	**4.49**
արդյունաբերական օբյեկտների	հա	0.11	1.90
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	7.21	2.59
ընդերքօգտագործման	հա	-	-
պահեստարանների	հա	-	-
էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	***հա***	**1.04**	**1.57**
էներգետիկայի	հա	0.01	0.01
կապի	հա	-	-
տրանսպորտի	հա	0.75	0.75
կոմունալ ենթակառուցվածքների	հա	0.28	0.81

հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	***հա***	**6.58**	**6.24**
բնապահպանական	հա	-	-
առողջարարական նպատակով նախատեսված	հա	-	-
հանգստի համար նախատեսված	հա	0.47	0.13
պատմական և մշակութային	հա	6.11	6.11
հատուկ նշանակության հողեր	***հա***	-	-
գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	***հա***	**1309.91**	**1305.70**
վարելահող	հա	150.14	149.96
պտղատու այգիներ	հա	-	-
խաղողի այգիներ	հա	-	-
խոտհարք	հա	25.14	24.66
արոտ		1073.01	1070.07
այլ հողատեսքեր	հա	61.62	61.01
անտառային հողեր */թփուտներ/*	***հա***	**301.17**	**301.17**
ջրային հողեր	***հա***	**0.46**	**0.46**
պահուստային հողեր	***հա***	-	-
2. Տարածքն ըստ սեփականության ձևերի			
պետական սեփականություն	***հա***	**892.95**	**892.95**
համայնքի սեփականություն	***հա***	**604.88**	**604.88**
ՀՀ քաղաքացիների սեփականություն	***հա***	**242.40**	**242.40**
3. Բնակչություն			
բնակչության թիվը, այդ թվում՝	մարդ	812	1100
արական	մարդ	437	590
իգական	մարդ	375	510
բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝			
մինչև 15 տարեկան երեխաներ	մարդ	77	100
աշխատունակ հասակի բնակչություն	մարդ	627	850
թոշակառու բնակչություն	մարդ	108	150
բնակչության խտությունը	մարդ/հա	7.18	9.73
4. Բնակելի ֆոնդը			
ընդհանուր բնակելի ֆոնդը, որից՝	հազ. ք.մ ընդհ. մակ	15.25	22.0
բազմաբնակարան տներ	հազ.ք.մ	-	
մենատներ	հատ	145	200
Բնակելի ֆոնդն ըստ հարկայնության			
1-2 հարկանի	հազ.ք.մ	15.25	22.0
3-4 հարկանի	հազ.ք.մ	-	
5 հարկանի	հազ.ք.մ	-	
Բնակչության միջին ապահովվածությունը բնակելի ընդհանուր մակերեսով	ք.մ/ մարդ	18.72	20.0
Առկա բնակելի ֆոնդի նվազումը, այդ թվում՝	հազ.	0.770	-

	քմ/մարդ		
ըստ տեխնիկական վիճակի	հազ.քմ/մարդ	0.770	-
ըստ վերակառուցման	հազ.քմ/մարդ	-	-
ըստ այլ պատճառների	հազ.քմ/մարդ	-	-
5. Բնակչության մշակութային և կենցաղային սպասարկման համակարգ			
մանկական նախադպրոցական կազմակերպություններ	տեղ/հազ.մարդ	23	70
հանրակրթական դպրոցներ	տեղ/հազ.մարդ	96	150
հիվանդանոցներ	մահճ./հազ.մարդ	-	-
պոլիկլինիկան, ամբուլատորիա, բուժկետ	հաճախում /հերթ	0.55	0.6
առևտրի օբյեկտներ	քառ.մ/ հազ.մարդ	1.23-1.48	1.5-1.8
կենցաղային սպասարկման օբյեկտներ	աշխ.տեղ/ հազ. մարդ	-	3-4
6. Տրանսպորտային սպասարկում			
Ուղևորատար հասարակական տրանսպորտի գծերի երկարությունը, ընդամենը			
Մայրուղային ճանապարհների և փողոցների երկարությունը, ընդամենը, այդ թվում՝	կմ	19.47	23.35
արագընթաց շարժման մայրուղային ճանապարհներ	կմ	-	-
չընդհատվող շարժման համաքաղաքային նշանակության մայրուղի	կմ	-	-
Արտաքին տրանսպորտ			
այդ թվում՝ավտոբուս	ուղի/կմ	1	2
Թունելներ, ուղեկամուրջներ, տրանսպորտային հանգույցներ	հատ/ կմ	-	-
Ճան.-փողոցային ցանցի խտությունը, ընդամենը	կմ/քառ.կմ	1.12	1.34
այդ թվում՝ բնակավայրի սահմաններում	կմ/քառ.կմ	17.11	17.50
7. Ինժեներական սարքավորումներ և բարեկարգում			
Ընդհանուր ջրօգտագործում- ընդամենը, այդ թվում	հազ.խմ/օր	898.56	900.00
տնտեսական-խմելու նպատակով	հազ.խմ/օր	898.56	900.00
արտադրական կարիքների համար	հազ.խմ/օր	-	-
Ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների հզորություն	հազ.խմ/օր	561.74	561.74
Ջրամատակարարման օգտագործման աղբյուրներ (գետեր և աղբյուրներ)	հազ.խմ/օր	898.56	900.00

Կեղտաջրերի ընդհանուր ելքը, ընդամենը, այդ թվում՝	հազ.խմ/օր	-	800.0
կենցաղային կոյուղի	հազ.խմ/օր	-	600.0
արտադրական կոյուղի	հազ.խմ/օր	-	150.0
Կոյուղու մաքրման կայանների հզորություն	հազ.խմ/օր	-	750.0
էլ/էներգիայի գումարային օգտագործում, ընդամենը	հազ.կՎա	560	1980
արտադրական կարիքների համար	հազ.կՎա	-	630
կոմունալ կենցաղային կարիքների համար	հազ.կՎա	560	1350
1 մարդու կողմից տարեկան էլեկտրաէներգիայի օգտագործում, այդ թվում՝	հազ.կՎա/տ		1400
կոմունալ կենցաղային կարիքների համար	կվտ./ժամ		960
էլեկտրածանրաբեռնվածության ծածկման աղբյուրներ	մլն կվտ.	«ՀԷՑ»	«ՀԷՑ»
այդ թվում՝ ջերմամատակարարում		-	-
Բնակավայրի վառելիքային հաշվեկշռում գազի տեսակարար կշիռը	%	95	100
Գազի օգտագործումը- ընդամենը, այդ թվում՝	հազ.մ^3/ժամ		
արտադրական կարիքների համար	հազ.մ^3/ժամ	-	
կոմունալ կենցաղային կարիքների համար	հազ.մ^3/ժամ		
Մակերևութային ջրերի հեռացման ցանց	կմ		
8. Տարածքի ինժեներական նախապատրաստում			
Տարածքի պաշտպանությունը ջրածածկումից	հա	113	
պաշտպանիչ կառույցների երկարությունը	կմ	2.1	
Գետափերի ամրացում	կմ	-	
Տարածքի սահմաններում ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցում	հա	-	
Տարածքի սանիտարական մաքրում	հա	113	
Կենցաղային աղբի ծավալը	տ/տարի	161.10	218.24
Աղբի այրման և աղբավերամշակման ձեռնարկություններ	-	-	-
9. Շրջակա միջավայրի պաշտպանություն			
Աղտոտվածության աղբյուրներից, աղմուկի ներգործությունից պաշտպանող սանիտարապաշտպանիչ գոտիներ-ընդամենը	հա	-	-
այդ թվում՝ կանաչապատում	հա	-	-
Մթնոլորտի օդի աղտոտվածության մակարդակը	ՍԹԽ/%	67	60.3
Ձրամբարների աղտոտվածության մակարդակը	ՍԹԽ/%	-	-
Հողի և ընդերքի աղտոտվածության մակարդակը	ՍԹԽ/%	-	-
Աղմուկի ազդեցության մակարդակը	ԴՑԲ	45 - 55	45 - 55

ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

1. Ընդհանուր դրույթներ

Ապարան համայնքի Լուսագյուղ գյուղի (այսուհետ Լուսագյուղ) գáïեíáñÙ³Ý Ý³Ë³գÇÍÁ Ùß³Ïí»É ¿ «ԱՐՄԵՆԻԱ ՖՅՈՒՉՐ» ԲՀ պատվերով (պայմանագիր թիվ 210119)՝ համաձայն համայնքի ավագանու կողմից 23.03.19 թ. հաստատված նախագծման առաջադրանքի:

Լուսագյուղ գյուղի տարածքի գոտևորման նախագիծը մշակվել է.

• ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին,

• ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 02.05.2003 թ. N 609-Ն ու 04.05.2010 թ. N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 29.12.2011, N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգը, Հավելված և Հավելված 1),

ՀՀ կառավարության 14.05.2001թ. «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը» հաստատելու մասին թիվ 408 որոշում:

Գոտևորման նախագիծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են բնակավայրի սահմաններում և նրա տարածքներում կատարվող շինարարական, վերակառուցողական, բարեկարգման աշխատանքների, ինչպես նաև բնակավայրի հողերի նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականացնելու և պահպանելու համար:

Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կանոնակարգում են նաև շենքերի և շինությունների ներսում կատարվող այն գործունեությունը, որը անմիջականորեն ազդում է շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկը, արտանետումները, տրանսպորտային և հետիոտնային հոսքերի մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տեսակներին վերաբերող հատուկ պահանջների սահմանումը և այլն:

Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման խտության և հողամասերի օգտագործման ինտենսիվության, շենքերի և շինությունների հարկայնության, դրանց արտաքին պատերի ձևավորման, հարդարանքի, գովազդների, ցուցանակների, նշանների, փոքր ճարտարապետական ձևերի և այլնի տեղադրման համար:

Հիմնական թաղամասերում սահմանվում են թույլատրելի հողօգտագործման տեսակները, որոնց համամասնությունները կարող են փոփոխվել կախված պահանջարկից,

սակայն միայն նշված գոտու ներսում և թույլատրելի հողօգտագործումների սահմաններում£

Անհատական բնակելի կառուցապատման համար նախատեսված գոտիներում հողամասերի չափերը սահմանվում են՝ նվազագույնը 800 քգմ, առավելագույնը 1200 քգմ, նշված և գոյություն ունեցող կառուցապատման տարածքներում, անհրաժեշտության դեպքում, հողամասերի բաժանումը իրականացնել պահպանելով առանձին հատվածների համար 10մ փողոցին հարող ճակատային մաս և հողամասերի նվազագույնը 400 քգմ մակերես:

1.1. Գոտևորման նախագծի իրավազորությունը

Սույն գոտիավորման նախագիծը՝ հանդիսանալով քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ, ծառայում է որպես քաղաքաշինական գործունեությունը կարգավորող հիմնական իրավական միջոց, սահմանելով բնակավայրի փաստացի և հեռանկարային օգտագործման և կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման նպատակով:

Գոտևորման նախագծով սահմանված յուրաքանչյուր գոտու համար անհրաժեշտ է մշակել միասնական կառուցապատման նախագիծ: Համապատասխան ընթացակարգով հաստատվելուց հետո, նախագիծը դառնում է գոտիավորման նախագծի անբաժանելի մասը և կատարում է նրա բոլոր գործառույթները: Ընդ որում, հաստատվելուց հետո կառուցապատման նախագծի բոլոր դրույթները դառնում են առաջնային՝ տվյալ գոտու համար գոտիավորման նախագծի նախանշումների նկատմամբ:

1.2. Գոտևորման նախագծի հիմնական նպատակները

Հասարակության առողջության, անվտանգության, և բարեկեցության ապահովումը քաղաքաշինական գործունեության, հողհատկացման և կառուցապատման գործընթացների կարգավորման և համակարգման միջոցով:

- Բնակավայրի զարգացման ընթացքում առողջ և գրավիչ միջավայրի ձևավորման ապահովումը:
- Հողօգտագործման տեսակների դասակարգումն ըստ դրանց նպատակային օգտագործման:
- Շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանումը:
- Միջավայրի առանձնահատուկ ճարտարապետական կերպարի պահպանումը:
- Կազմավորված քաղաքաշինական միջավայրին համապատասխան գեղագիտական քաղաքականության ապահովումը՝ ժամանակակից դինամիկ զարգացման պահանջների հաշվառումով:

1.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը

Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են.

- Բնակավայրի տարածքում կատարվող վերակառուցողական, շինարարական, վերականգնողական, վերանորոգման, բարեկարգման, կանաչապատման աշխատանքների, ինչպես նաև հողերի և առանձին օբյեկտների նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականացնելու և պահպանելու համար:

- Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կարգավորում են նաև շենքերի և շինությունների ներսում կատարվող գործունեության այն հետևանքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկին, վնասակար արտանետումներին, տրանսպորտային և հետիոտն հոսքերի մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տարբեր տեսակներին վերաբերող հատուկ պահանջների սահմանումը և այլն:

- Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման և հողամասերի օգտագործման ինտենսիվության, շենքերի և շինությունների հարկայնության, դրանց արտաքին ճակատների ձևավորման, հարդարանքի, գովազդների, ցուցանակների, փոքր ճարտարապետական ձևերի տեղադրման համար:

1.4. Գոտևորման համակարգի կառուցվածքը

Գոտևորման նախագիծը հիմնվում է «սահմանված գոտի–թույլատրելի օգտագործման ձև» սկզբունքի վրա: Նախագծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակները, որոնց համապատասխանող քաղաքաշինական գործունեության իրականացման համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ, համաձայնեցումներ չեն նախատեսվում: Սահմանվել են թույլատվության հետևյալ ձևերը.

- **թույլատրվում է,**
- **չի թույլատրվում:**

Պահանջները տարբերակվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են յուրաքանչյուր գոտու ներսում:

2. Հիմնական գոտիներ

ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ								
1	2	3	6	7	8	9	10	11
Հապավումը և պայմանական նշանը գծագրում	Գործառնական գոտու անվանումը	Ընդհանուր մակերեսը, հա	Կառուցապատման տոկոսը, առավելագույնը՝	Անջրանցիկ (սպասարկման) տարածքի մակերեսի տոկոս, այդ թվում կառուցապատման տոկոսը, առավելագույնը՝	Կանաչապատման տոկոս, ջրային մակերեսներ, նվազագույնը	Հարկայնությունը առավելագույնը	Կառուցապատման խտությունը, առավելագույնը՝	Թույլատրելի օգտագործման հիմնական ձևերի և ոչ հիմնական (ուղեկցող) ձևերի կառուցապատման մակերեսների հարաբերությունը, տոկոսային արտահայտմամբ (հիմնականը՝ վազագույնը, ոչ հիմնականը՝ առավելագույնը) հիմնական/ ոչ հիմնական
ԳՀ	**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ**	**14,97**						
ԳՕԳ	**Գյուղատնտեսական գոտի**	14,97						
ԳՕԳ-1	**Վարելահողեր**	2,56	-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-0	**Այլ հողատեսքեր**	12,41	-	-	փաստացի	-	-	
ԲՆՀ	**ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ**	**119,03**						
ԲՆԿԳ	**Բնակելի կառուցապատման գոտի**	**92,73**						
ԲՆԿԳ-1/1	*Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (տնամերձերով) (*)*	92,73	20% (+20% տնտեսական շինություններ)	40%+10%	50%	1-2 վերգետնյա հարկ (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0,4	50/50
ՀԿԳ	**Հասարակական կառուցապատման գոտի**	**5,36**						
ՀԿԳ-1	*Համայնքային նշանակության հասարակական կառուցապատման գոտի*	5,3						
ՀԿԳ-1/3	*Կրթական գոտի*	1,15	80%	80%+20%	10%		2,4	80/20
ՀԿԳ-2	*Բնակչության սոցիալական սպասարկման և առևտրի գոտի*	0,06	100%	30%	-	-		80/20
ԸՕԳ	**Ընդհանուր օգտագործման գոտի**	**15,26**						
ԸՕԳ-1	*Փողոցներ, հրապարակներ, հանրային նշանակության այլ բաց տարածքներ*	14,21	-	-	Չի սահմանվում			

ԸՕԳ-2	*Զբոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ*	1,05	7%	7%+23%	70%	1 հարկ	0,07	-
ԲՆՈԳ	**Այլ հողեր**	**5,68**						
ԲՆՈԳ	*Բնակավայրի ռեզերվային և անօգտագործելի հողեր*	5,68	-	-	-	-	-	-
ԱՀ	**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ**	**3,94**						
ԱԳ-1	**Արդյունաբերական օբյեկտների գոտի**	1,79	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2	**Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի**	2,15	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹՀ	**ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ**	**0,34**						
ԵՆԹԳ -1	**էներգետիկայի օբյեկտների գոտի**	0,06	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատում ը կառուցապատմա ն տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ-4	**Կոմունալ տնտեսության օբյեկտների գոտի**	0,28	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ՀՊՏՀ	**ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ**	**36,44**						
ՀՊՏ-4/պմի	**Պատմամշակութային հուշարձանների գոտի**	36,44	փաստացի	-	Չի սահմանվում	1 հարկ	0,05	95/5
ՁՀ	**ՁՐԱՅԻՆ**	**3,55**						
ՁԳ-1	**Ձրանցքներ**	3,55	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			

3. Գոտիներ և գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների և սահմանապակումների) հիմնավորումներ

3.1 ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ

Գոտին նախատեսվում է սակավահարկ /1-3 հարկ/ առանձնատնային թաղամասերի համար:

3.1.1 Թույլատրելի օգտագործման ձևեր

Բնակելի

- Սակավահարկ, մինչև 3 հարկ առանձնատներ

Հյուրանոցային

- Հյուրատներ, զբոսաշրջային տներ (մինչև 6 հյուրատեղ)

Բուժական

- Բուժական կաբինետներ

ֆինանսավարկային ծառայություններ

- Անհատական գրասենյակներ

Կենցաղ սպասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիրանոցներ
- Քիմմաքրման ընդունման կետեր, լվացքատներ
- Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ

Առևտրի

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ

Հասարակական սնունդ

- Ռեստորաններ, սրճարաններ և բարեր (մինչև 12 նստատեղ)

Արտադրական

- Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, մթերքների փոքրածավալ արտադրություն
- Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ (ավանդական իրերի արատադրություն)
- Տնայնագործական արտադրություն

Մարզական

- մարզահրապարակներ և խաղահրապարակներ

Ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ

- Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղեր և ավտոկանգառներ անձնական օգտագործման մարդատար ավտոմեքենաների համար

Գյուղատնտեսական

- Գյուղատնտեսական աշխատանքներ տնամերձ հողատարածքում

Ոչ հիմնական շինություններ

- Կրպակներ
- Ընտանի կենթանիների համար օժանդակ շինություններ /անասնագոմ, թռչնանոց/
- Ճարտարապետական փոքր ձևեր

3.1.2 Կառուցապատման չափորոշիչներ

Սակավահարկ տներ

- Հողամասի/լոտի մակերես (առավելագույն) - 0գ12հա
- Հողամասի/լոտի մակերես (նվազագույն) - 0գ045հա
- Շենքերի/շինությունների հողամասում զբաղեցված տարածք (առավելագույն)- 30%
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 20%
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 50%

3.1.3 Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

- Շենքերի նվազագույն լայնություն -չի սահմանափակվում
- Շենքերի երկարությունը -չի սահմանափակվում
- Շենքերի առավելագույն բարձրությունը - 12 մ
- Շենքերի նվազագույն բարձրությունը - 3գ6 մ

3.1.4 Լրացուցիչ պահանջներ

- Բոլոր շենքերը պետք է դրվեն հողամասից սահմանից ներս, պահպանելով կարմիր գիծը
- Առաջին հարկերը թույլատրվում է օգտագործել հասարակական գործառույթների տեղադրման համար: Այս դեպքում, այդ շենքերի արչև պետք է նախատեսվի ավտոկայանատեղ 1-3 մեքենաների համար:

3.2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ

Գոտին նախատեսվում է սակավահարկ /1-3 հարկ/ բազմաբնակարան տների կամ հանրակացարանների կառուցման համար:

3.2.1 Թույլատրելի օգտագործման ձևեր

Բնակելի

- Սակավահարկ, մինչև 3 հարկ բազմաբնակարան շենքեր

Հյուրանոցային

- Հյուրատներ (մինչև 50 հյուրատեղ)

Բուժական

- Բուժական կաբինետներ

ֆինանսավարկային ծառայություններ

- Անհատական գրասենյակներ

Կենցաղ սպասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիրանոցներ
- Քիմմաքրման ընդունման կետեր, լվացքատներ
- Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ

Առևտրի

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ

Հասարակական սնունդ

- Ռեստորաններ, սրճարաններ և բարեր (մինչև 12 նստատեղ)

Արտադրական

- Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, մթերքների փոքրածավալ արտադրություն
- Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ

  (ավանդական իրերի արատադրություն)
- Տնայնագործական արտադրություն

Մարզական

- մարզահրապարակներ և խաղահրապարակներ

Ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ

- Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղեր և ավտոկանգառներ մարդատար ավտոմեքենաների համար

Ոչ հիմնական շինություններ

- Կրպակներ
- Ճարտարապետական փոքր ձևեր և տարածքի բարեկարգում

3.2.2 Կառուցապատման չափորոշիչներ

Սակավահարկ տներ

- Հողամասի/լոտի մակերես (առավելագույն) - 0գ12հա
- Հողամասի/լոտի մակերես (նվազագույն) - 0գ045հա
- Շենքերի/շինությունների հողամասում զբաղեցված տարածք (առավելագույն)- 30%
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 20%
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 50%

3.2.3 Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

- Շենքերի նվազագույն լայնություն -չի սահմանափակվում
- Շենքերի երկարությունը -չի սահմանափակվում
- Շենքերի առավելագույն բարձրությունը - 12 մ
- Շենքերի նվազագույն բարձրությունը - 4 մ

3.2.4 Լրացուցիչ պահանջներ

- Բոլոր շենքերը պետք է դրվեն հողամասից սահմանից ներս, պահպանելով կարմիր գիծը
- Առաջին հարկերը թույլատրվում է օգտագործել հասարակական գործառույթների

տեղադրման համար: Այս դեպքում այդ շենքերի արչև պետք է նախատեսվի ավտոկայանատեղ 1-3 մեքենաների համար:

3.3 ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ

Այս գոտին նախատեսվում է համայնքային նշանակության գործառույթների և բնակելի կառուցապատման խառը տեղակայման համար՝ բնակավայրի հետագա դինամիկ զարգացմանը համընթաց:

3.3.1 Թույլատրելի օգտագործման ձևեր

Բնակելի

- Բազմաբնակարան տներ
- Սակավահարկ բնակելի տներ
- Հյուրատներ

Մարզական

- Մարզադահլիճներ, մարզահրապարակներ և խաղահրապարակներ

Վարչական, ֆինանսական և կոմունալ հիմնարկություններ և ծառայություններ

- Վարչակառավարման հիմնարկներ
- Անհատական գրասենյակներ (օֆիսներ)
- Բանկերի և դրամավարկային այլ հաստատությունների գրասենյակներ
- Կապի բաժանմունքներ
- Ոստիկանական տեղամասեր

Հյուրանոցային

- Հյուրանոցներ

Կենցաղոգ սպասարկման առաջնային ծառայություններ

- Քիմմաքրման կետեր և լվացքատներ
- Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման
- արհեստանոցներ
- Վարսավիրանոցներ

Մշակութային, մարզական, հասարակական օգտագործման հիմնարկություններ

- Գրադարաններ, թանգարաններ, արվեստի կենտրոններ
- Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ

Բուժական

- Բուժական կաբինետներ
- Պոլիկլինիկաներ

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ
- Սուպերմարքեթնոր և հանրախանութներ

Հասարակական սնունդ

- Ավանադական ուտեստների խոհանոցներ, պանդոկներ, խորտկարաններ
- Մառաններ, ճաշարաններ
- Ռեստորաններ
- Սրճարաններ և բարեր

- Բացօթյա ռեստորաններ, սրճարաններ և բարեր
- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ

Արտադրություն

- Փոքր բիզնեսի արտադրություններ
- Տնայնագործական արտադրություն

Կրթական և նախադպրոցական հիմնարկություններ

- Մանկապարտեզներ, մանկամսուրներ

Ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ

- Վերգետնյա և ստորգետնյա ավտոկանգառներ

Ոչ հիմնական շինություններ

- Ճարտարապետական փոքր ձևեր

3.3.2 Կառուցապատման չափորոշիչներ

Բազմաբնակարան տներ

- Հողամասի/լոտի մակերես (առավելագույն) - 2գ4հա
- Հողամասի/լոտի մակերես (նվազագույն) - 0գ45հա
- Շենքերի/շինությունների զբաղեցված տարածք (առավելագույն) - 40%
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 20%
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 40%

3.3.3 Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

- Շենքերի նվազագույն լայնությունը -12 մ
- Շենքերի երկարությունը -չի սահմանափակվում
- Շենքերի առավելագույն բարձրությունը -10մ
- Շենքերի նվազագույն բարձրությունը -4մ

3.3.4 Լրացուցիչ պահանջներ

- Բնակելի շենքերի առաջին հարկերը կարող են օգտագործել հասարակական գործառույթների տեղադրման համար:
- Առավելագույն հարկայնությունը կարող է ավելացվել, եթե դա չի հակասում ՀՀՇՆ II-6.02-2006 պահանջներին:

3.4 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ

Գոտին նախատեսվում է տարածքներում հասարակական նշանակության օբյեկտների կառուցման համար:

3.4.1 Թույլատրելի օգտագործման ձևեր

Մշակութային, գործարարական և հասարակական օգտագործման հիմնարկություններ

- Գրադարաններ
- Թանգարաններ
- Ցուցահանդեսներ
- Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ
- Թատրոններ և կինոթատրոններ
- Անհատական գրասենյակներ (օֆիսներ)
- Կեգլախաղարաններ, սեղանի թենիսի, բիլիարդի դահլիճներ
- Բանկեր, բորսաներ և դրամավարկային այլ հաստատությունների գրասենյակներ
- Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ

Գիտաարտադրական ձեռնարկություններ

- Գիտահետազոտական, գիտափորձարարական և գիտաարտադրական օբյեկտներ

Բուժական հիմնարկություններ

- Պոլիկլինիկաներ, բուժական կաբինետներ

Վարչական, ֆինանսական և կոմունալ հիմնարկություններ և ծառայություններ

- Վարչակառավարման հիմնարկներ
- Ոստիկանական տեղամասեր
- Փոստատներ, կապի բաժանմունքներ
- Անհատական գրասենյակներ (օֆիսներ)

Մարզական կազմակերպություններ

- Մարզիրապարակներ, մարզադաշտեր, Խաղադաշտեր

Պաշտամունքային կազմակերպություններ

- Եկեղեցիներ, մատուռներ, այլ

Առևտրական հաստատություններ

- Հանրախանութներ, մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ՝ հաճախորդների ոչ մեծ հոսքերի կուտակումով

Կենցաղային սպասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիրանոցներ
- Քիմմաքրման կետեր և լվացքատներ
- Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ

Հասարակական սննդի օբյեկտներ

- Ռեստորաններ, սրճարաններ և բարեր, այդ թվում բացօթյա

- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ

Հյուրանոցային ծառայություններ

- Հյուրատներ, մոթելներ, զբոսաշրջային տներ

Ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ

- Ավտոկայաններ
- Ավտոտեխսպասարկման ծառայություններ
- Ժամանակավոր ավտոկանգառներ
- Բենզալցավորման կայաններ

Ոչ հիմնական շինություններ

- Կրպակներ, տաղավարներ, ճարտարապետական փոքր ձևեր և տարածքի բարեկարգում

3.4.2 Կառուցապատման չափորոշիչներ

- Հողամասի / լոտի մակերես -չի սահմանափակվում
- Շենքերի/շինությունների զբաղեցված տարածք (առավելագույն) - 40%
- Հողամասի անջրանցիկ (առավելագույն) տարածք - 20%

3.4.3 Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

- Շենքերի նվազագույն լայնություն - չի սահմանափակվում
- Շենքերի երկարություն - չի սահմանափակվում
- Շենքերի առավելագույն բարձրությունը -12 մ
- Շենքերի նվազագույն բարձրությունը - 4 մ

3.5 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Ընդհանուր օգտագործման կանաչ տարածությունների գոտիները ընդգրկում են գյուղական նշանակության այգիները, պուրակները, ծառուղիները և այլ հասարակական նշանակության կանաչապատ տարածքները:

3.5.1 Թույլատրելի օգտագործման ձևեր

Մշակութային, մարզական, հասարակական օգտագործման հիմնարկություններ

- Մշակույթի, հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ
- Կեգլախաղարաններ, սեղանի թենիս, բիլիարդի դահլիճներ, մարզադահլիճներ
- Խաղադաշտեր
- Բացօթյա ռեկրեացիոն կառույցներ, լողի, թենիսի և այլ ակումբներ
- Հրաձգարաններ (տիրեր)

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ

Հասարակական սնունդ

- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ
- Ռեստորաններ, սրճարաններ և բարեր (սահմանափակ)
- Բացօթյա ռեստորաններ, բարեր, սրճարաններ (առանց սահամնափակումների)

Ոչ հիմնական շինություններ

- Տաղավարներ
- Արձաններ
- Ճարտարապետական փոքր ձևեր

3.5.2 Կառուցապատման չափորոշիչներ

Ոչ հիմնական շինությունների համար

- Հողամասի թույլատրելի մակերես (առավելագույն) - 50քմ
- Մեկ կառուցապատման միավորի զբաղեցրած տարածք (նվազագույն) - 4քմ
- Հողամասի ճակատի նվազագույն լայնություն - չի սահմանափակվում

Հիմնական շինությունների համար

- Հողամասերի նվազագույն չափերը համաձայն գործող նորմերի:

3.5.3 Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

բոլոր տիպի շենքերի /շինությունների համար

- Շենքերի / շինությունների բարձրությունը (առավելագույն) - 4 մ
- Շենքերի / շինությունների զբաղեցված տարածք (առավելագույն) -10 %
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 20%
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 70%

3.6.ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՐԱՆՆԵՐԻ

Գոտին նախատեսվում է գյուղարտադրական տարածքներում առկա շինությունների վերակառուցման միջոցով գյուղարտադրական՝ անասնակերի պատրաստում առանց սննդամթերքի թափոնների օգտագործման կամ կաթի նախնական վերամշակման ձեռնարկությունների կամ համալիրներների, ինչպես նաև պահեստարանների ստեղծման նպատակով, **որոնց համար սանիտարապաշտպանիչ գոտիներ չեն նորմավորվում /ՍՆ 245-71, աղյուսակ 2,/:**

3.6.1 Թույլատրելի օգտագործման ձևեր

Արտադրական ձեռնարկություններ

- Անասնակերի, առանց սննդաթափոնների օգտագործման, արտադրություն
- Կաթի նախնական վերամշակման արտադրամաս
- Փոքր բիզնեսի արտադրություններ
- Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, մթերքի փոքրածավալ արտադրություն
- Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ

(ավանդական օգտագործման իրերի արտադրություն)

Գիտաարտադրական ձեռնարկություններ

- Գիտափորձարարական և գիտաարտադրական օբյեկտներ

Վարչական, ֆինանսական և կոմունալ հիմնարկություններ և ծառայություններ

- Վարչակառավարման հիմնարկներ

Հասարակական սննդի օբյեկտներ

- Ճաշարաններ, խորտկարաններ

Ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ

- Ավտոտեխսպասարկման ծառայություններ
- Ժամանակավոր ավտոկանգառներ

Ոչ հիմնական շինություններ

- Կրպակներ, տաղավարներ, արտարապետական փոքր ձևեր, բարեգարգում

3.6.2 Կառուցապատման չափորոշիչներ

- Հողամասի / լոտի մակերես -չի սահմանափակվում
- Շենքերի/շինությունների զբաղեցված տարածք (առավելագույն) - 40%
- Հողամասի անջրանցիկ (առավելագույն) տարածք - 30%
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 30%

3.6.3 Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

- Շենքերի նվազագույն լայնություն - չի սահմանափակվում
- Շենքերի երկարություն - չի սահմանափակվում
- Շենքերի առավելագույն բարձրությունը -10 մ
- Շենքերի նվազագույն բարձրությունը - 4մ

4. Կառուցապատման կանոններ

Սահմանված են տեղական պայմաններից բխող կանոններ, որոնք պարտադիր են նախագծվող ողջ տարածքում կիրառելու և բոլոր գոտիների համար£ Դրանք հիմնականում կարգավորում են կառուցապատման և շահագործման ընթացքում առաջացող միջավայրի համալիր կանոնակարգման խնդիրները, այն է.

• ընդունված սկզբունքներին չհամապատասխանող կառույցների աստիճանական վերափոխման մեխանիզմներ,

• բնապահպանական միջոցառումների իրականացում,

• գոտիավորման նախագծով ներկայացված պահանջների իրականացում,

• հատուկ կարգավորման օբյեկտների նկատմամբ առանձնակի մոտեցման ցուցաբերում, չափորոշիչների խստացումով ճարտարապետաշինարարական առանձին նախագծային փաստաթղթերի մշակում:

5. Շինարարական և վերանորոգման աշխատանքներ

Բոլոր շինարարական, վերակառուցման, վերականգնման և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

Շենքերի ճակատների արտաքին հարդարանք: Շենքերի ճակատների փողոցային և բակային արտաքին հարդարանքի հետ կապված բոլոր շինարարական և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

Շինանյութ: Պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի շինությունների բնական քարերից կառուցված ճակատային պատերը ներկել կամ երեսապատել արգելվում է:

Այլ շենքերի համար, նախընտրելի է օգտագործել սև, մոխրագույն, օխրա, սպիտակ «րանգների շինանյութեր, որոնք կներդաշնակեն բնակավայրի հիմնական կառուցապատմանը:

Նկուղներ և կիսանկուղներ: Բնակելի շենքերի նկուղային և կիսանկուղային հարկերը փողոցի կողմից մեկուսացված մուտքեր չպետք է ունենան:

Բոլոր շենքերի կիսանկուղների պատուհանների գոգերը մայթից պետք է առնվազն 30 սմ բարձր լինեն:

Փողոցային ցանց: Ավտոմոբիլիզացման մակարդակն ըստ նորմերի ընդունելով առավելագույնը (100) 200 ավտ/1000 բնակչին, կստանանք Բենզալցավորման կայանների համար՝ ելնելով 1200 ավտ/օր նորմատիվային հաշվարկից, կստանանք 4–5 Բենզալցավորման կայան: Տեղադրումը և հեռավորությունը հարևան շենքերից և շինություններից՝ համաձայն գործող նորմերի:

III կարգի ճանապարհի երկու կողմից պահպանել չկառուցապատվող կանաչապատ շերտ՝ 12 մ լայնությամբ, սանպահպանման և կողային տեսանելիությունն ապահովելու համար՝ պարտադիր կանաչապատման պայմանով:

Ավտոտնակների համար հատկացվող հողամասի նվազագույն մակերեսը 20 ք.մ., բաց ավտոկանգառատեղերի համար՝ 25 ք.մ.:

Կանգառատեղերի համար խորացումները մայթի հաշվին իրականացնել միայն սիզամարգերի և առանձին ծառախմբերի հաշվին՝ տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ թույլտվությամբ, այլ հնարավորությունների բացակայության դեպքում մայթի մեջ գրպանաձև խորացմամբ ավտոկայանատեղերի կազմակերպման դեպքում ապահովել.

• համահամայնքային նշանակության փողոցների մայթերի բանուկ մասի համար նվազագույնը 2.25-3.0 մ լայնություն,

• շրջանային նշանակության փողոցների մայթերի բանուկ մասի համար 1.5 մ լայնություն:

Խաչմերուկ մտնող փողոցների բեռնվածության մակարդակը 0.4–0.8 հասնելու դեպքում երթևեկությունը կարգավորել լուսակիրների միջոցով, տեղադրումը՝ գործող նորմերին համապատասխան:

Փողոցների երկայնական թեքություններն ընդունվում են՝ կախված հաշվարկային արագություններից:

Տրանսպորտի միջոցների կանգառներ: Տրանսպորտի միջոցների կանգառները պետք է տեղավորվեն, որպես կանոն, միասնական նախագծով թեթև կոնստրուկցիաներից կառուցված, թափանցիկ պատերով կամ սյուներով շինությունների մեջ: Առավելագույն չափերը՝

• երկարությունը ՝ 3.6 մ,

• լայնությունը՝ª 2.0 մ:

Աղբահեռացման կոնտեյներներ (բեռնարկղներ): Աղբարկղները տեղադրելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ պահանջները.

• համահամայնքային նշանակության փողոցների, ինչպես նաև հասարակական առավելագույն ծգողության և կուտակման վայրերին հարակից տարածքներում տեղադրել ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա, հատուկ փակվող տիպի, բանուկ մասերին չխանգարող տարածքներում,

• շրջանային նշանակության փողոցների վրա՝ 100 -200 մետրը մեկ,

• շեղական նշանակության փողոցների վրա հիմնական խաչմերուկների վրա, դրանց հեռավորությունը 200 մետրից պակաս լինելու դեպքում՝ 200 մետրը մեկ:

Հեռավորությունը շենքերի միջև: Բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև եղած հեռավորությունը պետք է ընդունել հիմնվելով արևի ճառագայթման քանակի ինսոլյացիայի և լուսավորվածության հաշվարկների վրա, ինչպես նաև հակահրդեհային պահանջներին համապատասխան:

2–3–հարկանի բնակելի շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունը կենցաղային խզումները պետք է ընդունել 15 մ–ից ոչ պակաս, իսկ 4 հարկանի շենքերի միջև՝ 20 մ–ից ոչ պակաս: Այս շենքերի երկար կողմերի և բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողաճակատների միջև՝ 15 մ–ից ոչ պակաս: Նշված հեռավորությունները կարող են կրճատվել ինսոլյացիայի և լուսավորության նորմերը պահպանելու դեպքում, եթե ապահովված է պատուհանից պատուհան բնակելի սենյակների անտեսանելիությունը:

Աղմուկի թույլատրելի մակարդակ: Բոլոր գոտիներում, որտեղ թույլատրված է բնակելի կառուցապատում, աղմուկի թույլատրելի մակարդակը չպետք է գերազանցի 55 դԲԱ ցերեկը և 45 դԲԱ գիշերը:

Աղմուկից և արտանետումներից բնակելի կառուցապատման պահպանման համար նախատեսել վերոնշյալ բացասական պարամետրերի գերազանցմամբ փողոցների ծառապատում:

Սանիտարական պահպանման գոտիների չափորոշում: Ճանապարհների, փողոցների, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր, բարձր և միջին ճնշման գազատար և այլն, արդյունաբերական և կոմունալ օբյեկտների սանպահպանման գոտիները՝ համաձայն գործող նորմերի և ստանդարտների:

6. Գոտևորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորում

• Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող օգտագործման ձևերը, որոնք գոյությունը պահպանել են մինչև սույն նախագծի հաստատման տարեթիվը, այսուհետև պետք է կարգավորվեն միայն սույն կանոնների պահանջներին համապատասխան:

• Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող շենքերի և կառույցների ընդարձակում չի թույլատրվում:

• Գոտիավորմանը չհամապատասխանող 6 ամսից ավելի լքված և չօգտագործվող օրինական համարվող կառույցների հետագա օգտագործման ձևը պետք է որոշվի համաձայն այն հիմնական գոտու թույլատրելի օգտագործումների կանոնների, որտեղ այն գտնվում է:

• Գոտիավորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառուցապատման ձևերը կարող են վերանորոգվել, եթե բոլոր կառուցվածքային փոփոխությունները կատարվում են միայն գործող քաղաքաշինական օրենսդրությանը համաձայն:

7.Կառուցապատման թույլտվություններ

Օգտագործման ձևերի համար թույլտվությունների կառուցվածքը հիմնվում է «սահմանված գոտի–թույլատրելի հողօգտագործում» սկզբունքի վրա: Սահմանվել են հետևյալ թույլատվության ձևերը `

• թույլատրվում է,

• չի թույլատրվում:

Թույլատրված օգտագործման ձևերը այն կառուցապատման և հողօգտագործման թույլատրված տիպերն են, որոնք սահմանվել են նախագծային փուլում, հողհատկացման հիմք են հանդիսանում համապատասխան գոտիներում և լրացուցիչ քննարկման կարիք չունեն:

8. Հաշմանդամների և սակավաշարժուն բնակչության կենսագործունեության միջավայրի կազմակերպում

Ցանկացած ճարտարապետական կառուցապատման կամ հուշարձանների վերականգնման ժամանակ անհրաժեշտ է ընդունել որոշումներ՝ հաշմանդամների շահերի առավելագույն պահպանումով, ապահովելով վերջիններիս կենսագործունեության լիարժեք պայմաններ:

Ինչպես բնակելի թաղամասերը, այնպես էլ ճանապարհափողոցային ցանցը պետք է նախատեսվեն ազգաբնակչության վերոնշյալ խմբերի համար երթուղիների ապահովմամբ՝ հասարակական տրանսպորտից օգտվելու հարթակների, մոտեցումների ձևավորմամբ:

Հատուկ մասնագիտացված բնակելի կառույցները և մանկական հաստատությունների տեղադրվածությունը հրշեջ դեպոյից ընդունվում է 300 մ:

Հաշմանդամների համար հողատարածքների չափերը հաշվարկել համաձայն ՀՀՇՆ IV-11գ07գ01-06 նորմերի պահանջների:

Հետիոտն ուղիների նախատեսման ժամանակ հաշվի առնել հնարավորության դեպքում երկայնական ուղղությամբ 5 %–ից ոչ ավելի թեքությունների ապահովումը, խիստ ռելիեֆային պայմանների դեպքում՝ մինչև 10 % թեքությամբ, սակայն, ապահովելով հորիզոնական տեղամասեր 12 մ ընդմիջումներով:

Ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, աստիճանների և պանդուսների, շենքերի շքամուտքերի, վերելակների, սպորտային կառույցների կազմակերպման ժամանակ առաջնորդվել ՀՀՇՆ IV-11գ07գ01-06 պահանջներով:

ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Առանձնատներ *՝ իր սեփական տնամերձ հողամասում տեղակայված բնակելի միավոր մեկ ընտանիքի համար:*

Բազմաբնակարանանոց տներ *՝ 2 և ավելի բնակարաններ, միավորված մեկ շենքում:*

Ինսոլյացիա *՝ տարածքներում և սենյակներում արևի ուղիղ անընդհատ ճառագայթման տևողության նորմատիվային պահանջ:*

Լրացուցիչ պահանջներ *՝ նախատեսվում են տարբեր գոտիներում տեղադրվող այն օգտագործման ձևերի համար, որոնց բնույթը մասամբ չի համապատասխանում տվյալ գոտուն ներկայացվող պահանջներին և դրանց գործառությունը հիմնականում կապվում է հատուկ պայմանների կիրառման հետ:*

Կանաչ ծածկույթ *՝ բուսական ծածկույթ ծառեր, թփուտներ, խոտաբույսեր և այլն:*

Հետիոտն մատչելիության շառավղեր *՝ այն հեռավորությունը, որը կարող է անցնել մարդը՝ առանց ֆիզիկական լարվածության 0–30 րոպե ժամանակահատվածում:*

Կառուցապատման /հողօգտագործման/ չափորոշիչներ և կարգավորիչներ *՝ սահմանում են տվյալ գոտու հողօգտագործման և կառուցապատման պահանջներին համապատասխանող բնութագրերի համակարգը, որոնցով կանոնակարգվում է տարածքի յուրացման ինտենսիվությունը, կառուցապատման խտությունը,*

կառույցների հարկայնությունը, գեղագիտական պահանջները: Կարգավորիչների պարամետրները հիմնվում են օրենսդրական և պետական նորմատիվ փաստաթղթերի վրա, տեղայնացվում են՝ ելնելով յուրաքանչյուր գոտու յուրահատուկ պահանջներից և փոփոխվում են գոտուց գոտի:

Հակահրդեհային պահանջներ՝ *շենքերը, կառույցները հրդեհներից պաշտպանելու համար կառուցման և այլ միջոցառումների նորմերով հաստատված պարտադիր կարգ:*

Համաքաղաքային նշանակության փողոցներ՝ *հաղորդակցային կապ բնակելի, արդյունաբերական շրջանների և հասարակական կենտրոնների, ինչպես նաև մայրուղային փողոցների, քաղաքային ճանապարհների և ընդհանուր օգտագործման ճանապարհների միջև:*

Շրջանային նշանակության փողոցներ՝ *տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի շրջանների, բնակելի և արդյունաբերական շրջանների, ինչպես նաև հասարակական կենտրոնների միջև, ելքեր դեպի մայրուղային փողոցներ:*

Տեղական նշանակության փողոցներ՝ *տրանսպորտային առանց բեռնատար և հասարակական տրանսպորտի բացթողման և հետիոտնային կապ բնակելի շրջանների տարածքներում, ելքեր դեպի մայրուղային փողոցներ և շարժման կարգավորումով ճանապարհներ:*

Երթևեկության անցուդարձ՝ *միավոր ժամանակահատվածում օր, ժամ ճանապարհի որևէ կտրվածքով հանդիպակաց ուղղություններով անցնող ավտոմոբիլների քանակը:*

Ճանապարհի բեռնվածության մակարդակ՝ *երթևեկության անցուդարձի հարաբերությունը ճանապարհի թողունակությանը:*

Երթևեկային մաս՝ *ճանապարհի մակերևույթի շերտ, որի սահմաններում կատարվում է ավտոմոբիլների երթևեկությունը:*

Կարմիր գիծ՝ *շենքերն ու շինությունները փողոցներից անջատող սահմանը, որով սահմանվում է նաև գլխավոր և երկրորդական փողոցների, ներառյալ մայթերի լայնությունը:*

Մայթի բանուկ մաս ՝ *փողոցի մայթերի՝ հետիոտնի շարժման համար հատկացված շերտ:*

Հողամաս՝ *որոշակի ամրագրված սահմաններ, տարածք, գտնվելու վայր, իրավական կարգավիճակ ունեցող հողի վերգետնյա և ստորգետնյա հողատարածք:*

Հողամասի անջրանցիկ տարածք՝ *հողամասի այն հատվածը, որի բուսական բնաշերտը ծածկված է արհես՝ական կառույցներով /շենք, մայթ, սալարկ/:*

Հողամասի ճակատը՝ *հողամասի կարմիր գծին հարող կողմը:*

Զեղնահարկ՝ *լանջավոր տանիքի ներքին տարածությունը:*

Նորմ նախագծման ՝ *շինարարության համար սահմանված պարտադիր կարգ:*

Շենքի բարձրություն՝ *մայթի մակերևույթից մինչև քիվի վերին եզրն ընկած ուղղաձիգ հեռավորությունը:*

Ոչ հիմնական շինություն՝ *կրպակներ, տաղավարներ ճարտարապետական փոքր ձևեր:*

Սանիտարահիգիենիկ պահանջներ՝ *բնակվելու տարածությունների՝ շրջակա միջավայրի սահմանային թույլատրելի վիճակներին համապատասխանության պահանջներ:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Рекомендации по охране окружающей среды в районной планировке.
2. ЦНИИ градостроительства и планировка сельских населенных местq Москва - 1982г.
3. Руководство по комплесной оценке и функциональному зонированию территории в районной планировке. Москва-1979г.
4. Районная планировка. Справочник проектировщикаq Москва. Стройиздат. 1982г.
5. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ 2001թ© մարդահամարի արդյունքներ: Երևան 2003թ.
6. ՀՀՇՆ II -6.02-06 «Սեյսմակայուն շինարարություն»
7. ՍՆիՊ 2.04.02-84* «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ»
8. ՍՆիՊ 3.05.04-85* «Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ»
9. ՀՀՇՆ IV -11.05.02-99 «Ավտոմոբիլային ճանապարհներ»
10. ՀՀՇՆ IV -11.03.03-02 «Ավտոկայանատեղեր»
11. ՀՀՇՆ II -8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»
12. ՀՀՇՆ IV-11.07.01-06 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»
13. ՀՀՇՆ 30-01-14 Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում:
14. Руководство по составлению раздела “Охрана природы и улучшение окружающей среды градостроительными средствами” в проектах планировки и застройки городов, поселков и сельских населенных пунктов. М, 1982 г
15. Рекомендации по охране окружающей среды в районной планировке. М. 1986 г
16. Строительная климатология. Ереван, 1996 г
17. Красная книга Армянской ССР, Растения, Издательство «Айастан» 1988 г

18. Атлас Армянской ССРq Ереван 1961 г.
19. Красная книга Армянской ССР, Животные, Издательство «Айастан» 1967 г
20. Руководство по контролю загряхнения атмосферы РД 52.04.186-89
21. Предложения по разработке отраслевой классификации источников выброса вредных веществ в атмосфере. Гидрометеоиздат, 1982 г
22. Сборник законодательных нормативных и методических документов для экспертизы воздухоохранных мероприятий. Л., Гидрометеоиздат, 1986 г
23. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствамиq Л., Гидрометеоиздат, 1986 г
24. СН 245-71 Санитарные нормы проектирования промышленных предприятий
25. Методические указания по расчету выбросов вредных веществ автомобильным транспортом. М., Гидрометеоиздат, 1983 г
26. Временная типовая методика определения экономической эффективности осуществления природоохранных мероприятий и оценки экономического ущерба, причиняемого народному хозяйству загрязнением окружающей среды
27. Методические рекомендации обработки данных, характеризующие состояние водных объектов. Минздрав РСФСР. Москваq 1983 г
28. Методические рекомендации оценки гигиенической эффективности водоохранных мероприятий. Минздрав РСФСР. М. 1989 г
29. СНиП II-12-77 Защита от шума. М., 1978 г
30. Г. Л. Осипов и др. «Градостроительные меры борьбы с шумом» Стройиздат, 1975 г
31. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы. Гидрометеоиздат, 1984 г
32. Методика расчета предельно-допустимых сбросов (ПДС) веществ в водные объекты со сточными водами. Харьков, 1990 г
33. ՀՀՇՆ 1-2.01-90 Ինժեներական հետազոտություններ շինարարության համար:
34. ՇՆՁ 1-2.101-2002 Ինժեներաերկրաբանական հետազոտություններ շինարարության համար:
35. СНиП 2.02.01-83 «Основания зданий и сооружений»
36. ՀՀՇՆ II-6.02-2006 Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր:
37. ՀՍՏ ГОСТ 25100-96 Գրունտներ - դասակարգում:
38. СНиП IV-2.85 «Защита строительных конструкций от коррозии»
39. Заключение об инженерно – геологических условиях территории с.Лусагюх Апаранского р – на Арм. ССР», «АрмГИИГИС», Ереван, 1979г.
40. ՀԽՍՀ կառավարությանն առընթեր Երկրաբանական վարչության կողմից փորված հորատանցքերի տվյալները ստորերկրյա ջրերի վերաբերյալ («1976–1978թթ

Աբովյանի երկաթի հանքավայրի ստորերկրյա ջրերը բացաց հորատանցքերի հիդրոերկրաբանական հիմնական պարամետրերի աղյուսակ»):

41. ՀՀ սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր՝ ՀՀՇՆ II-6.02-2006, Երևան, 2006թ:

42. Ինժեներական հետազննություններ շինարարության համար, Հիմնական դրույթներ ՀՀՇՆ 1-2,01-99© Պաշտոնական հրատարակություն, Երևան, 2000թ:

43. Рекомендация по сейсмическому микрорайонированию при инженерных изысканиях для строительства. Госстрой СССР, М., 1985г

44. Сейсмическое микрорайонирование. Нормы производства работ в РА /проект/ НССЗ РА Ереван, 2003г

5. Եզրակացություն ՀՀ Կոտայքի մարզի Լուսագյուղ գյուղի տարածքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին: “Գեօթեստ ” ԲԲԸ, Երևան, 2019թ.

46. ՀՀ Արագածոտնի մարզի Լուսագյուղ գյուղի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզ, Մ 1 : 10000 :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԻԾ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԵՎ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԵՐ

Պատվիրատու՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնք

Պատվեր՝ *N -22/24*

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Երևան 2025

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մայլեռ ներդրումային ծրագրի շրջանակում Եղիպատրուշ բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություններ 165

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....166

Գլուխ 1 175

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ 177

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ **.....177**

1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը **.....177**

1.1.2. Եղիպատրուշ գյուղի վերաբերյալ ակնարկ **.....179**

1.1.3. Բնակչությունը **.....182**

1.2. Տնտեսություն 182

1.3. Պատմամշակութային կառույցներ 182

1.4. Բնակլիմայական պայմաններ **.....183**

1.4.1. Կլիմայական պայմաններ **.....183**

1.4.2. Բնական պայմանները և հարստությունները **.....183**

1.4.2.1. Կլիմայաբուժության պայմաններ **.....184**

1.4.2.2. Ռելիեֆի նկարագիրը **.....184**

1.4.2.3. Ջրոսաշրջության ռեսուրսները **.....185**

1.4.3. Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները: **.....185**

1.5. Ջրային պաշարներ **.....187**

1.6. Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները **.....188**

Նկար 1. Եղիպատրուշ համայնքի տեսաձիրային քարտեզ 189

Աշխատանքների արդյունքները **.....189**

1.7.1. Գետեր **.....189**

1.7.2. Լճեր, ջրամբարներ **.....190**

1.7.3. Ջրամբարներ **.....191**

1.7.4. Ջրանցքներ **192**

1.7.5. Աղբյուրներ **193**

1.8. Սեյսմատեկտոնական պայմանները **193**

1.10. Բնակչություն և ժողովրդագրության վերլուծություն **197**

1.11. Տրանսպորտ **197**

1.12. Ջրոսաշրջություն **198**

1.12.1. Եղիպատրուշ գյուղի հուշարձաններ **200**

1.12.2. Պատմամշակութային հուշարձանների պահպանության միջոցառումներ **201**

1.13. Տնտեսություն **205**

1.13.1. Ջրոսաշրջություն **205**

1.13.2. Հատուկ պահպանվող տարածքներ **207**

Գլուխ 2 207

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....207

2.1. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը **207**

2.1.1. Ջրոսաշրջային ոլորտ.....207

2.2. Հեռանկարային զարգացում..... **210**

2.3. Հատակագծային կառուցվածք (առկա և հեռանկարային) **211**

2.4. Բնապահպանական/կանաչապատման խնդիրներ..... **212**

2.5. Տարածքի գործառական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ **213**

2.6.1. Արտաքին տրանսպորտ..... **214**

2.6.2. Փողոցային ցանց և ներքին տրանսպորտ..... **215**

***2.7.* Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ** **216**

2.1. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ **226**

2.1.1. Ջրամատակարարում..... **226**

2.1.2. Ջրահեռացում **229**

2.1.2.1. Կենցաղային և արտադրական կոյուղի 229

2.1.2.2. Հեղեղատար կոյուղի 230

2.1.3. Ոռոգման խնդիրները 232

2.1.3.1. Տեխնիկական այլ առաջարկություններ.....232

2.1.4. Էներգամատակարարում 234

2.1.4.1. Էլեկտրամատակարարում 234

2.1.5. Գազամատակարարում..... 238

2.1.5.1. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ.....238

2.1.6. Աղբահանություն 240

ԳԼՈՒԽ 3. ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ.....246

3.1. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ.....246

3.2. Գոտևորման համակարգի կառուցվածքը.....246

3.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը 246

3.4. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր.....246

3.5. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները.....247

3.6. Թույլատրելի օգտագործման ձևերի աղյուսակ 248

3.7. Հատուկ իրավական ռեժիմով գոտիներ (ՍՊԳ).....253

3.8. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.....284

3.9. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 288

3.10. Հավելվածներ----------144

Հավելված 1.....290

Հավելված 2.....293

ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

1. Համայնքի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում, տրանսպորտային և ինժեներական հաղորդակցուղիների ուրվագիծ Մ 1 : 25 000
2. Հենակետային հատակագիծ (փաստացի օգտագործման հատակագիծ) Մ 1 : 5 000
3. Ռիսկերի և սահմանափակումների հատակագիծ (Տարածքի համալիր գնահատման հատակագիծ) Մ1 : 5 000
4. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ Մ 1 : 5 000
5. Տարածքի զարգացման հատակագիծ (հիմնական գծագիր) Մ 1 : 5 000
6. Հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր Մ 1 : 5 000
7. Հողատեսքերի բաշխումն ըստ սեփականության սուբյեկտների Մ 1:5 000
8. Գոտևորման գծագիր Մ 1:2 000

Նախաբան

Սույն նախագիծը մշակվել է ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած՝ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում լեռնային հանգստավայրի կառուցման «ՄԱՅԼԵՌ» ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» 2021 թվականի հուլիսի 29-ի N 1246-Ա որոշմամբ Մայլեռ լեռնադահուկային առողջավայրի ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր հողատեսքերը ներառող, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով միջգերատեսչական հանձնաժողովի դրական կարծիքների հիման վրա դրական եզրակացության և համայնքի ավագանու կողմից հաստատված առաջադրանքի հիման վրա։

ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրի իրականացումը ենթադրում է մի շարք հողատեսքերի նպատակային նշանակությունների փոփոխություններ՝ ծրագրով նախանշված գործառույթները ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված հողերի վրա իրականացնելու նպատակով։

Ներկայումս, հայեցակարգի շրջանակում ներկայացված գործառույթներին համապատասխան կոնկրետ հատակագծային լուծումները որոշակիացված չեն, այդ իսկ պատճառով կառավարության որոշմամբ նախանշված տարածքների համար կատարվում է դիտարկվող տարածքների բոլոր հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխություններ բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողերի։ Դրանց մի մասն արդեն իսկ փոփոխվել են՝ ՀՀ կառավարության 2011 թվականի 1920-Ն որոշման 56-րդ կետի պահանջներին համապատասխան՝ կառուցապատման նպատակով առանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների շրջանակում և այդ դրույթներով սահմանված կարգով։

Այնուհանդերձ, առանձին հողամասերի թվաքանակի և փոփոխվող ընդհանուր տարածքի որոշակի ծավալները գերազանցելու պարագայում այդ փոփոխությունների իրականացումը Լիազոր մարմնի կողմից առաջարկվել է իրականացնել ՀՀ կառավարության 2011 թվականի 1920-Ն որոշման 24-րդ կետի 1-ին ենթակետի ա բաժնով սահմանված կարգով,

մասնավորապես՝ Կարգով նախատեսված ընթացակարգով հաստատվելուց հետո գլխավոր հատակագծի և (կամ) Համակցված փաստաթղթի փոփոխությունները՝

1. կատարվում են Օրենքով և Կարգով գլխավոր հատակագծի և (կամ) Համակցված փաստաթղթի մշակման ու հաստատման համար նախատեսված ընթացակարգով, եթե՝

1) գլխավոր հատակագծի, Համակցված փաստաթղթի (Կարգի իմաստով՝ տարածական պլանավորման փաստաթուղթ) հաստատումից հետո՝ դրանում չնախատեսված Առանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների հանրագումարը գերազանցում է բնակավայրի սահմաններում ընդգրկված հողերի 10 տոկոսը:

Նշվածի հիման վրա համայնքի և ներդրումային ծրագիրն իրականացնող կազմակերպության կողմից մշակվել է նախագծման առաջադրանք, սահմանված կարգով շրջանառվել շահագրգիռ մարմիններին, ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված և սահմանված կարգով հաստատված առաջադրանքի հիման վրա մեկնարկել են գլխավոր հատակագծում հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունը՝ միասնական փաստաթղթային փաթեթի շրջանակում:

Սույն բաժնի երկրորդ պարբերությամբ նշված բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողատեսքերը՝ հայեցակարգով նախանշված գործառույթների կոնկրետ հատակագծային կառուցվածքի մշակման շրջանակում ՀՀ կառավարության 2011 թվականի 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներին համապատասխան կփոխադրվի որոշակիացված գործառնական նշանակության, մասնավորապես.

2) հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունները, եթե դրանք չեն հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը, կատարվում են համայնքների ղեկավարների կողմից, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերի, երբ հողամասի գործառնական նշանակությունը կարող է փոխվել միայն Լիազոր մարմնի համաձայնությամբ: Քաղաքաշինական գործունեության իրականացում չնախատեսող դեպքերում, հողամասի սեփականատերը կամ օգտագործման իրավունք ունեցող անձը համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում՝ համաձայն սույն Կարգի Ձև N 4-ի: Համայնքի ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում Կարգի պահանջների համաձայն ընթացք է տալիս դիմումին (փոփոխում է հողամասի գործառնական նշանակությունը կամ համապատասխան հիմնավորմամբ մերժում է, կամ սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում ներկայացնում է Լիազոր մարմնի համաձայնեցմանը): Քաղաքաշինական գործունեության իրականացում նախատեսող դեպքերում հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունները կատարվում են հողամասի սեփականատիրոջը կամ օգտագործողին Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) տրամադրման շրջանակներում:

Ամփոփելով վերոգրյալը հարկ է նշել, որ սույն նախագծի շրջանակում չի դիտարկվում 2023 թվականին սահմանված կարգով հաստատված Արագածոտն-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի նախանշումների փոփոխություն: Տվյալ փաստաթուղթը պահպանվում է ինչպես որ կա և գտնվում գործողության մեջ (Տրված է Հավելված 1-ում): Տվյալ փաստաթուղթը մշակվում է ի լրումն վերոնշյալ միկրոռեգիոնալ փաստաթղթի կազմում մշակված եղիպատրուշ գյուղի զարգացման նպատակային նշանակության փոփոխությունների: Առաջադրանքում ներառված են բացառապես Մայլեռ ներդրումային ծրագրի համար ՀՀ կառավարության որոշմամբ նախանշված և գլխավոր հատակագծի

մշակման շրջանակում որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող պահպանված տարածքները: Դրանց նկատմամբ գլխավոր հատակագծի շրջանակում որևէ գործողություն չի կատարվել: Այդ հողատեսքերի փոփոխությունը պայմանավորված է Մայլեռ լեռնադահուկային առողջավայրի իրականացման ներդրումային ծրագրի շրջանակում անհրաժշետ ենթակառուցվածքի կառուցման համար հողատեսքերի համապատասխանեցմամբ՝ տվյալ կառուցապատմանը բնորոշ հողատեսքին:

Ի լրումն, ներդրումային ծրագրի հայեցակարգային փուլը ևս ենթարկվել է ՇՄԱԳ փորձաքննության և ստացել դրական եզրակացություն ԲՓ N 0204-23: Տվյալ՝ հողամասերի փոփոխությունների փուլում ևս կատարվում է շրջակա միջավայրի վրա փորձաքննություն՝ տվյալ մասշտաբին և հիերարխիական մակարդակին համապատասխան փաստաթղթերի մշակման շրջանակում:

Ծրագրի իրականացումը բնակավայրի տարածքում արդեն իսկ մեկնարկել է և գործողության ժամանակահատվածում փաստագրվել է ծրագրի սոցիալական ազդեցությունը բնակավայրի վրա՝ արտահայտված ինչպես.

1) ենթակառուցվածքների զարգացմամբ,
2) տարածքի մոտակայքում տեղակայված Ապարանի ջրամբարի ափամերձ հատվածների մաքրմամբ,
3) Հայանտառի հետ համաձայնեցված անտառատնկումներով,
4) Շինարարության ընթացքում տեղի բնակչության ներգրավմամբ աշխատատեղերի ստեղծում,
5) Սպասարկման ենթակառուցվածքում բնակչության ներգրավում՝ աշխատատեղերի ստեղծում (նախապես վերապատրաստմամբ՝ անհրաժշետության դեպքում):

1. <u>«Մայլեռ» ԱՏԳ ստեղծման նախաձեռնողը և կազմակերպիչ ընկերությունը</u>[31]

«Մայլեռ» ազատ տնտեսական գոտու (այսուհետ՝ ԱՏԳ) ստեղծման նախաձեռնողն է «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), որի ներդրումային ծրագիրը ՀՀ կառավարության 2021 թվականի 29 հուլիսի թիվ 1246-Ա որոշմամբ ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել: Համաձայն նշված որոշման՝ ընկերությունը ծրագրի իրականացման տարածքում՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրում, պարտավորվել է ստեղծել ազատ տնտեսական գոտի:

ԱՏԳ ստեղծելու աշխատանքները կիրականացնի Ընկերության կողմից հիմնադրված կազմակերպությունը կամ դուստր կազմակերպությունը, որը կհանդիսանա «Մայլեռ» ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ:

«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ն ծրագրի իրականացման ընթացքում արդեն իսկ իրականացրել է ավելի քան 15 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման նպատակով, ինչպես նաև ստեղծել է 90-100 նոր աշխատատեղ:

<u>2. «Մայլեռ» ԱՏԳ ստեղծման նախադրյալները և նպատակը</u>

ԱՏԳ-ների ստեղծման միջազգային փորձը

Ներկայումս աշխարհի 147 երկրում գործում է ավելի քան 5500 հատուկ/ազատ տնտեսական գոտի, ևս 300-400 գոտի պլանավորվում է հիմնել: ԱՏԳ-երը լայնորեն կիրառվում են որպես ներդրումների և արտահանման խթանման, զբաղվածության ընդլայնման գործիք: Հատկապես զարգացող երկրներում լայն տարածում են ստացել արտահանման ուղղվածությամբ արտադրական գոտիները: Ընդունված է համարել, որ

[31] *Հավելված N 4 ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի N 1302 - Ա որոշման*

առավել մեծ հաջողություններ են արձանագրում ԱՄԷ, ինչպես նաև ասիական հատուկ տնտեսական գոտիները, մասնավորապես Չինաստանի, Սինգապուրի և Հնդկաստանի հատուկ տնտեսական գոտիները:

3. Զբոսաշրջային-ռեկրեացիոն հատուկ տնտեսական գոտիներ

Ինչ վերաբերում է ծառայությունների մատուցման (ռեկրեացիոն/զբոսաշրջային) ազատ տնտեսական գոտիներին, ապա վերջիններս ստեղծվում են մեկ կամ մի քանի տարածքներում զբոսաշրջության ոլորտում ծառայությունների մատուցման և զարգացման նպատակով: Այս հատուկ տնտեսական գոտիներում սովորաբար չեն կիրառվում մաքսային արտոնություններ (մեծ ապրանքային հոսքերի բացակայության պատճառով), հետևաբար, չի կիրառվում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը և առկա չեն մաքսային հսկողության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Զբոսաշրջային-ռեկրեացիոն հատուկ տնտեսական գոտիներում իրականացվում է զբոսաշրջային և ռեկրեացիոն գործունեություն, մասնավորապես՝ զբոսաշրջային արդյունաբերության օբյեկտների շինարարության, վերակառուցման, շահագործման, առողջարանային բուժման, բժշկական վերականգնման և քաղաքացիների հանգստի համար

նախատեսված միջոցառումներ, ինչպես նաև զբոսաշրջային գործունեություն, հանքային ջրերի և այլ բնական բուժիչ ռեսուրսների զարգացում, այդ թվում՝ առողջարանային բուժման և հիվանդությունների կանխարգելման, բժշկական վերականգնման, քաղաքացիների հանգստի կազմակերպման, հանքային ջրերի արդյունաբերական շշալցման աշխատանքներ:

Զբոսաշրջային-ռեկրեացիոն հատուկ տնտեսական գոտիները տեղակայված են լինում առավել գեղատեսիլ և զբոսաշրջային պահանջարկ ունեցող շրջաններում և բարենպաստ պայմաններ են առաջարկում զբոսաշրջության, սպորտի, հանգստի և այլ տեսակի բիզնեսի կազմակերպման համար:

4. Տարածաշրջանային միտումները

Չնայած ԱՊՀ երկրների մեծ մասը գտնվում է լեռնային շրջաններում, լեռնադահուկային ոլորտը տարածաշրջանում թերզարգացած է: Կանխատեսումները ցույց են տալիս, որ բնակչության շրջանում աճում է դահուկային սպորտի նկատմամբ հետաքրքրությունը, և ԱՊՀ երկրներում լեռնադահուկային ոլորտում առկա են աճի միտումներ:

Վրաստանի լեռնադահուկային ոլորտը տնտեսության արագ աճող հատվածներից մեկն է, որը վերջին 5 տարում աճել է շուրջ 25% CAGR-ով: Միջազգային հանրահայտ ցանցային հյուրանոցներ են բացվել հիմնական լեռնադահուկային հանգստավայրերում՝ Գուդաուրիում և Բակուրիանիում:

Համաձայն ՀՀ զբոսաշրջության զարգացման ռազմավարության՝ մինչև 2030 թվականը միջազգային զբոսաշրջիկների այցելությունների թիվը գնահատվում է մինչև 3 միլիոն:

Նախատեսվում է նաև, որ զբոսաշրջության ոլորտից եկամուտները տարեկան կտրվածքով կավելանան միջինը 7%-ով, ինչը 2030 թվականին կկազմի շուրջ 2.5 միլիարդ ԱՄՆ դոլար:

Հայաստանը որպես լեռնային զբոսաշրջության ուղղություն տարածաշրջանում գտնվում է ամենաթույլ դիրքերում. առաջատարն է Վրաստանը:

Հայաստանն ունի 3 լեռնադահուկային հանգստավայր, որոնցից ամենամեծը Ծաղկաձորն է՝ մոտ 12.7 կմ լեռնադահուկային սահուղիներով: Շուրջ 300 հազար զբոսաշրջիկ է տարեկան այցելում Ծաղկաձոր, որից մոտ 90 հազարը՝ ձմեռային սեզոնին:

Համեմատության համար հարկ է նշել, որ Վրաստանի միայն Գուդաուրի լեռնադահուկային համալիրի այցելուների թիվը միայն ձմեռային շրջանում անցնում է 650 հազարը, իսկ նմանատիպ հանգստյան գոտիները Վրաստանում հինգն են, որոնց հիմնական այցելուները ՌԴ-ից և ԵՄ-ից են:

Լեռնային համալիրների զարգացման պատմության մեջ շատ քիչ են այնպիսի հանգստավայրեր, որոնք նախագծվել և կառուցվել են հենց այդ նպատակով. որպես կանոն դրանք կառուցվել են արդեն գոյություն ունեցող բնակավայրերի հիման վրա և ունեն զարգացման ուրույն կառուցակարգ:

Լեռնադահուկային համալիրների հիմնական ընդհանուր գիծն այն է, որ ճոպանուղիների ճնշող մեծամասնությունը հանդիսանում է պետական կամ համայնքային սեփականություն, իսկ հյուրանոցները, հանգստյան և ժամանցի կենտրոնները՝ մասնավոր սեփականություն (Վրաստանի օրինակով): Հայաստանի միջազգային վարկանիշի պարբերական բարձրացումը նպաստում է ցանկացած զբոսաշրջային ծրագրի ներուժի բացահայտմանը և արդյունքում երկրի տնտեսական զարգացմանը: Այս համատեքստում հատկանշական է պետության դերը ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման հարցում:

5. ԱՏԳ ստեղծման նպատակը

«Մայլեռ» ԱՏԳ ստեղծման ծրագիրը միտված է ՀՀ-ում զբոսաշրջության բազմազանության ու զարգացման ապահովմանը, ինչպես նաև առողջ ապրելակերպի հաստատմանը և համահունչ է ՀՀ կառավարության կողմից որդեգրած տնտեսական զարգացման ռազմավարությանը:

Կազմակերպիչը պատրաստվում է իրականացնել խոշորածավալ ներդրումներ ԱՏԳ տարածքում համապատասխան ենթակառուցվածքների, առաջին հերթին ճոպանուղու և սահուղիների ձևավորման ուղղությամբ, ինչը կդառնա իր շուրջ զբոսաշրջային նոր քաղաքի ստեղծման առաջին և ամենակարևոր գրավականը:

Ծրագրի նպատակն է կառուցել տարածաշրջանի մակարդակով եվրոպական ստանդարտներին համապատասխան լեռնադահուկային հանգստավայր, ինչը կնպաստի երկրի զբոսաշրջային գրավչության բարձրացմանը և երկրի/մարզի սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը:

Հայաստանի միջազգային վարկանիշի պարբերական բարձրացումը նպաստում է ցանկացած զբոսաշրջային ծրագրի ներուժի բացահայտմանը և արդյունքում երկրի տնտեսական զարգացմանը:

Սույն նախաձեռնությունն աննախադեպ է, քանի որ մասնավոր կազմակերպությունն իր վրա է վերցնում ենթակառուցվածքային այնպիսի ներդրումներ, ինչպիսիք են՝ ճոպանուղու, սահուղիների կառուցում, արհեստական ձնագոյացման համակարգի ձեռքբերում և տեղադրում, որոնք առհասարակ իրականացվում են պետության կամ համայնքի կողմից՝ փոխարենը ակնկալելով պետական աջակցություն կոնկրետ ուղղություններով:

Ծրագրի շրջանակներում նախատեսված ենթակառուցվածքներն իրենց շուրջ են կենտրոնացնելու հյուրանոցային և ժամանցային ոլորտներում այլ ներդրողների, որոնք ներդրումներ կատարելով՝ նպաստելու են ոլորտի շարունակական զարգացմանը՝ ապահովելով լրացուցիչ աշխատատեղեր տվյալ համայնքի բնակիչների և ՀՀ այլ քաղաքացիների համար: Այդպիսի ենթակառուցվածքներից ամենակարևորը ճոպանուղին է, որը բազմիցս ապացուցել է իր «սոցիալական մագնիսի» ազդեցությունը երկրի, այդ թվում՝ տվյալ մարզի տնտեսության վրա:

Ծրագրի իրականացումը բացառիկ է նրանով, որ նմանօրինակ ենթակառուցվածքային ներդրումներ մասնավոր հատվածի կողմից Հայաստանում երբևէ չեն իրականացվել, և

նման համագործակցության հաջողված օրինակը կարող է հզոր խթան հանդիսանալ պետություն-մասնավոր համագործակցության հետագա զարգացման համար:

ԱՏԳ գործունեության և գործարկման ժամկետները Հաշվի առնելով ծրագրի մի քանի փուլով իրականացման ժամկետները, իրականացվելիք ներդրումների երկարաժամկետ հետգնումը, ինչպես նաև երկարաժամկետ ներդրումներ ներգրավելու համար կայուն պայմանները և ներդրողների վստահությունը ամրապնդելու խնդիրը, առաջարկում ենք ԱՏԳ գործունության ժամկետը սահմանել 20 տարի:

Ինչ վերաբերում է ԱՏԳ գործարկման ժամկետին, ապա, հաշվի առնելով, որ առաջին փուլի հիմնական անհրաժեշտ ենթակառուցվածքներն արդեն իսկ պատրաստ են, միաժամանակ, առաջին փուլերում տարածքում ազատ մաքսային գոտի մաքսային ընթացակարգի չկիրառվելու պատճառով կարիք չկա մաքսային հսկողության հատուկ ենթակառուցվածքներ ստեղծելու, առաջարկում ենք այն սահմանել անմիջականորեն ԱՏԳ ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը:

6. <u>ԱՏԳ տեղակայման հիմնավորվածությունը</u>

Տարածքի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոնով: Նախ տարածքի բնակլիմայական պայմաններով, որոնք բարենպաստ են լեռնադահուկային հանգստավայրի և ընդհանուր առմամբ զբոսաշրջային ծառայություններ մատուցելու համար:

«Մայլեռ» լեռնադահուկային հանգստավայրը գտնվում է Արագածոտնի մարզում՝ Արագած լեռան արևելյան լանջերին: Տեղանքի բարձրությունը ծովի մակերևույթից 2000 մետր է:

Կլիման բարեխառն ցուրտ լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով, ինչը բարենպաստ է ձմեռային, մասնավորապես լեռնադահուկային հանգստավայրի զարգացման համար: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ:

Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Տեղանքը առանձնանում է նաև ձմեռային երկար սեզոնով և խորը ձյունով: Եղիպատրուշի տարածաշրջանում ձյան օրերը կանխատեսվում են միջինը 15 օր:

Լանջերը հարմար են ավանդական դահուկավազքի և սնոուբորդի համար և համապատասխան բարձրությունը հելի-դահուկային և էքստրեմալ լեռնադահուկային սպորտի համար: Լեռան գագաթին առկա է կասկադային ճոպանուղիներ կառուցելու հնարավորություն:

Մյուս կողմից տարածքը, որտեղ գտնվելու է ԱՏԳ-ն, ներկայումս չի օգտագործվում, որևէ հավելյալ արժեք չունի և չի կարող որևէ հարկման բազա ապահովել, այդ թվում՝ նաև այն պատճառով, որ այստեղ բացակայում են անհրաժեշտ ենթակառուցվածքները և կոմունիկացիաները՝ ջրամատակարարում, էլեկտրաէներգիա, գազամատակարարում, ճանապարհներ, ջրահեռացում և այլն: Հետևաբար, ԱՏԳ գործարկմամբ և խոշորածավալ ներդրումների ներգրավմամբ որոշ ժամանակ անց կստեղծվի ծաղկուն հանգստավայր, հավելյալ արժեք տնտեսությունում, կայացած եկամտաբեր ոլորտ, զբաղված գյուղացիներ և այլն: Զբոսաշրջության զարգացման տեսակետից տեղանքը բարենպաստ է նաև իր հասանելիության աստիճանով: Այն գտնվում է երկրի հիմնական տրանսպորտային կոմունիկացիաների համեմատաբար հարևանությամբ:

Հասանելիություն (մեքենայով).

ա. Մայրաքաղաք Երևան՝ 1.2 ժամ,

բ. Զվարթնոց միջազգային օդանավակայան՝ 1.2 ժամ, Հայ-վրացական սահման (Բավրա)՝ 2.5 ժամ,

գ. Հայաստանի մեծությամբ 2-րդ քաղաքը՝ Գյումրին՝ 1.5 ժամ:

<u>7. ԱՏԳ տարածքի սահմանագիծը և նկարագիրը</u>

7.1. «Մայլեռ» ԱՏԳ-ն գտնվում է Եղիպատրուշ համայնքի հարևանությամբ: Եղիպատրուշը գյուղ է Հայաստանի Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 27 կմ հյուսիս-արևելքում: Գյուղը գտնվում է Ապարանից մոտ 15 կմ հարավ, Ապարանի ջրամբարի հարավարևելյան մասում, Երևան-Ապարան խճուղուց դեպի աջ մոտ 10 կմ: Խմելու ջուրը սառնորակ է, բերված մոտակա լեռան լանջից՝ 5 կմ հեռավորությունից: Տարածքը գտնվում է ծովի մակարդակից 2000 մետր բարձրության վրա: Կլիման բարեխառն ցուրտ լեռնային է, իսկ ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

Բուն ԱՏԳ ընդհանուր տարածքը կազմում է շուրջ 2080 հա, որի մի մասը լինելու է ընկերության սեփականությունը, իսկ մնացածը վերցվելու է վարձակալության հիմունքով: ԱՏԳ տարածքում կազմակերպչի և ապագա շահագործողների կողմից կկառուցվեն միջազգային ստանդարտներին համապատասխան ճոպանուղիներ, ավելի քան 100 կմ երկարությամբ սահուղիներ (1950-ից 2850 մ բարձրության վրա), հյուրանոցային և ժամանցային համալիրներ, ինչպես նաև կտեղադրվի արհեստական ձնագոյացման համակարգ, կստեղծվեն ձմեռային և ամառային հանգստի այլ ենթակառուցվածքներ: Նախատեսվում է, որ հյուրանոցները կլինեն երեք տեսակի՝ ըստ չափերի. 180 և ավելի սենյակներով, 120-130 սենյակներով և 20-30 սենյականոց:

Ծրագրի շրջանակներում միայն կազմակերպչի ընդհանուր ներդրումների ծավալը կկազմի մինչև 30 մլրդ դրամ սահուղիների և արհեստական ձնագոյացման համակարգի ձեռքբերման և ժամանցային կենտրոնների (տոբոգան, տյուբինգ, «կախարդական կարպետ», զիփլայն, ջրային ատրակցիոններ) և այլ ենթակառուցվածքների կառուցման համար:

Ճոպանուղիները լինելու են եվրոպական ամենաարդիական տեխնոլոգիաներով հագեցած՝ փակ հոնդոլային տիպի, արագընթաց, ինչպիսիք տեղադրված են աշխարհահռչակ լեռնադահուկային կենտրոններում (Իշգլ, Սանտ Անտոն, Ինսբրուկ և այլն):

Կկառուցվեն նաև ձմեռային հանգստի այլ ենթակառուցվածքներ, սպա կենտրոն (շուրջ 5000մ^2), ռեստորաններ և հանրային սննդի այլ կետեր, ամառային ժամանցի ենթակառուցվածքներ (զիփլայն, փեյնթբոլ, լեռնագնացություն, ձիարշավ և այլն), հյուրանոցներ, ինչպես նաև խաղատուն:

Բացի այդ, տարածքում կլինեն օժանդակ այլ ենթակառուցվածքներ՝ կոմունալ ենթակառուցվածք, ավտոկայանատեղիներ, պահեստային տարածք, օֆիսային տարածքներ և այլն:

7.2. ԱՏԳ գործառնական տեսակը և շահագործողների կողմից իրականացվելիք գործունեության տեսակները: Հաշվի առնելով ԱՏԳ գործունեության առանձնահատկությունները և տեխնիկական պահանջները՝ առաջարկվում է որպես ԱՏԳ գործառնական տեսակ սահմանել ծառայությունների մատուցման, այդ թվում՝ զբոսաշրջային ռեկրեացիոն, իսկ շահագործողների թույլատրված գործունեության տեսակները ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ ներքոնշյալ ցանկի համապատասխան:

1) ԱՏԳ շահագործողների գործունեության տեսակների ցանկ Ճոպանուղիներով ուղևորափոխադրումներ
2) Կացության կազմակերպում
3) Հանրային սննդի կազմակերպում
4) Մարդատար ավտոմոբիլների և թեթևաքաշ փոխադրամիջոցների վարձույթ*
5) Զվարճանքի և սպորտի պարագաների վարձույթ*
6) Զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ
7) Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում

8) Սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման բնագավառում գործունեություն

7.3. Կազմակերպչի կողմից իրականացվելիք ներդրումները, ստեղծվելիք աշխատատեղերը և մարքեթինգային քաղաքականությունը «Մայլեռ» ԱՏԳ ստեղծումը և զարգացումը նախատեսվում է իրականացնել մի քանի փուլով։

7.3.1) Առաջին փուլը (ազատ տնտեսական գոտու ստեղծման որոշումը հաստատվելուց հետո առաջին 5 տարին) հիմնականում ուղղված կլինի ԱՏԳ ենթակառուցվածքների ձևավորմանը, ԱՏԳ առաջմղման մարքեթինգային միջոցառումների իրականացմանը, ներդրողների հետ (այդ թվում օտարերկրյա) գործարար կապերի հաստատմանը և առաջին շահագործողների ներգրավմանը։

7.3.2) Երկրորդ և երրորդ (7-8-ական տարի) փուլերը միտված կլինեն հիմնականում նոր շահագործողների ներգրավմանը, այդ թվում ոլորտի առաջատարների, ինչպես նաև ճոպանուղիների ընդլայնմանը և հանգստի ենթակառուցվածքի զարգացմանը։ Առաջին երեք փուլերի ժամանակահատվածը (20 տարի) պայմանավորված է զբոսաշրջային հոսքերի կանխատեսումներով։

7.3.3) Հաջորդ փուլերում (մինչև ԱՏԳ գործունեության ժամկետի ավարտը) ակնկալվում է ԱՏԳ համապատասխան ենթակառուցվածքներով և շահագործողներով ամբողջությամբ հագեցվածության պայմաններում կայուն զարգացման ժամանակահատվածը։ Հաշվի առնելով ժամանակի երկար հորիզոնը՝ այս փուլերի համար տնտեսական ցուցանիշների կանխատեսումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ այդ ցուցանիշների ցածր արժանահավատության պատճառով։

8. Ներդրումների չափը, ձևերն, ուղղվածությունը և ժամկետները

Կազմակերպչի հիմնական կապիտալ ներդրումներն իրականացվելու են ճոպանուղու, սահուղիների, արհեստական ձնագոյացման համակարգի, սահադաշտի, հյուրանոցների, ռեստորանի, ժամանցային այլ կենտրոնների (տոբոգան, տյուբինգ, «կախարդական կարպետ», «Snow Goomer», զիփլայն, ջրային ատրակցիոններ և այլն), ինչպես նաև ԱՏԳ ներքին կոմունիկացիաների և ենթակառուցվածքների կառուցման համար։

Կազմակերպչի այլ էական ծախսերից են մարքեթինգային ծախսերը, լեռնադահուկային և ժամանցային ենթակառուցվածքների պահպանման ծախսերը, աշխատավարձի ֆոնդը և այլն։

Այսպիսով, կազմակերպիչը առաջին փուլի ընթացքում կկատարի շուրջ 66 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումներ։

Կազմակերպչի կողմից իրականացվելիք առաջին փուլի ներդրումները և այլ ծախսերը, ԱՄՆ դոլար

Ներդրումներ	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի	Ընդամենը
ԱՏԳ հողատարածքի ձեռքբերում	**1,300,000**	-	-	-	-	**1,300,000**
ԱՏԳ անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը և բարելավումը, այդ թվում՝	**23,480,000**	**15,980,000**	**6,840,000**	**4,028,000**	**746,000**	**51,074,000**
Ճոպանուղու ձեռքբերում, տեղադրում, մոնտաժ	12,000,000	6,000,000	2,000,000	3,500,000	500,000	24,000,000
Լեռնային ճանապարհների սրեղծում, սահուղիների կառուցում, քարամաքրման աշխատանքներ, ճմապատրում և այլն	1,000,000	1,000,000	1,000,000	-	-	3,000,000
ԱՏԳ կոմունիկացիաների, ներքին ենթակառուցվածքների կառուցում	3,000,000	1,000,000	500,000	300,000	200,000	5,000,000
Բարեկարգում և կանաչապատում	300,000	300,000	160,000	78,000	46,000	884,000
Անվտանգության համակարգեր	180,000	180,000	180,000	150,000	-	690,000
2 Հյուրանոցի կառուցում (120 սենյակ յուրաքանչյուրը)	**1,000,000**	**3,000,000**	**2,000,000**	-	-	**6,000,000**
Հյուրանոց, որում առկա է խաղատուն (150 սենյակ)	**2,000,000**	**2,000,000**	**2,000,000**	**1,000,000**	-	**7,000,000**
Ռեստորանի կառուցում	**1,000,000**	-	-	-	-	**1,000,000**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	**35,780,000**	**17,980,000**	**8,840,000**	**4,028,000**	**746,000**	**66,374,000**
Մարքեթինգային ծախսեր	169,000	361,000	223,000	280,000	305,000	**1,338,000**

Աշխատավարձ	702,000	4,563,000	6,961,500	7,722,000	8,599,500	**28,548,000**
Այլ գործառնական և ընթացիկ ծախսեր	180,000	300,000	550,000	700,000	800,000	**2,530,000**
Չնախատեսված ծախսեր	300,000	300,000	300,000	200,000	100,000	**1,200,000**

Հարկ է նշել նաև, որ ծրագրի իրականացման հետագա փուլերում նախատեսվում է ընդլայնել համալիրը՝ ներառելով այլ ծառայություններ ևս, ուստի վերը նշված ցուցանիշները մի քանի անգամ կաճեն։

9. Կազմակերպչի կողմից ստեղծվող աշխատատեղերը

Ծրագրի համաձայն կազմակերպիչը, բացի հիմնական ենթակառուցվածքներից, կառուցելու է նաև ճոպանուղիներ, երեք հյուրանոց, ռեստորան, սահադաշտ, մանկական զբաղմունքի կենտրոն, սպա կենտրոն, որտեղ լինելու են բազմաթիվ հիմնական աշխատողներ։ ԱՏԳ կազմակերպիչը կունենա նաև վարչական աշխատողներ, ինչպես նաև շինարարության ընթացքում կստեղծվի շուրջ 250 ժամանակավոր աշխատատեղ։

Այսպիսով, առաջին փուլում ճոպանուղիների շահագործման համար կներգրավվի շուրջ 700 աշխատակից, 3 հյուրանոցներում՝ շուրջ 510 աշխատակից, վարչական անձնակազմի թվաքանակը կկազմի շուրջ 50-60, այլ օբյեկտներինը և ուղղություններինը՝ շուրջ 200։ Այսպիսով, ԱՏԳ գործունեության միայն առաջին տարիների ընթացքում կազմակերպչի կողմից կստեղծվի շուրջ 1500 նոր աշխատատեղ, միջինը 180,000 դրամ աշխատավարձով։

10. Ծրագրի սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունը

10.1. Սոցիալ-տնտեսական ազդեցությունը

Կազմակերպիչը որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գաղափարի կրող ձգտելու է, որ ծրագրի իրականացումը հնարավորինս մեծ դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն ունենա հարակից համայնքների վրա։ Դրական ազդեցությունն ակնկալվում է մի քանի ուղղությամբ.

10.1.1) Խոշորածավալ ներդրումների իրականացում՝ շուրջ 310-360 մլն ԱՄՆ դոլար (կազմակերպչի և շահագործողների կողմից ներդրվելիք);

10.1.2) Հարկերի և տուրքերի, այդ թվում տեղական, վճարում;

10.1.3) Արտահանման խթանում. միայն առաջին փուլի ընթացքում ակնկալվում է 25-27 մլրդ դրամի արտահանման ծավալների ապահովում;

10.1.4)Հիմք ընդունելով հանրապետությունում ծառայությունների ոլորտի կողմից ստեղծվող ավելացված արժեքի միջին տեսակարար կշիռն իր ծավալի նկատմամբ՝ գնահատվում է, որ համալիրի շահագործմամբ կստեղծվի տարեկան շուրջ 12-13 մլրդ դրամ լրացուցիչ ավելացված արժեք, որն այլ հավասար պայմաններում կնպաստի ՀՆԱ-ի աճին մոտ 0.2 տոկոսային կետով։ Արդյունքում պետական բյուջե կվճարվեն ավելի քան 1.2 մլրդ դրամ հարկեր;

10.1.5) Համայնքի մեծածավալ հողատարածքների վարձակալություն, ինչը դրական ազդեցություն կունենա համայնքային բյուջեի վրա;

10.1.6)Նոր ենթակառուցվածքների ստեղծում և զբոսաշրջային հոսքերի խթանում (հատկապես մարզում). Հարկ է նշել, որ Արագածոտնի մարզում 2021թ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը կազմել է ընդամենը 8-ը (ամբողջ ՀՀ-ում՝ 915);

10.1.7)Համայնքում և մարզում գործազրկության մակարդակի նվազում. հարակից համայնքների բնակիչները կներգրավվեն ծրագրի իրականացման և հետագա զարգացման գործընթացներին։ Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների՝ Արագածոտնի մարզում գործազրկության մակարդակը 2020-21թթ. կազմել է համապատասխանաբար 10 և 6.7 տոկոս։ Այդ ժամանակահատվածում գործազուրկ են եղել համապատասխանաբար 5.5 և 4.0 հազար մարդ, որոնցից 4.1

և 3.4 հազարը՝ գյուղական համայնքներում: Միաժամանակ, մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը 2022թ. արդյունքներով կազմել է ընդամենը 141,398 դրամ, ինչը ՀՀ մարզերի մեջ ամենացածր ցուցանիշներից մեկն է (ԱՏԳ-ում միջին աշխատավարձը կազմելու է առնվազն 180,000 դրամ):

Ընկերությունը կօգտագործի հարակից համայնքների աշխատուժը և արտադրանքը: Բոլոր աշխատողները կստանան սոցիալական երաշխիքներ, առողջության ապահովագրություն: Վերոնշյալը կնպաստի համայնքների զարգացմանը, արտագաղթի և ուրբանիզացիայի նվազեցմանը:

Հաշվի առնելով, որ ծրագրի իրականացման հետագա փուլերում նախատեսվում է ընդլայնել համալիրը՝ ներառելով այլ ծառայություններ ևս, վերը նշված ցուցանիշները մի քանի անգամ կաճեն:

11. Բնապահպանական ազդեցությունը

Ծրագիրը կիրականացվի բնապահպանական բոլոր կանոնների պահպանմամբ: Կազմակերպիչը կապահովի ԱՏԳ ամբողջ տարածքի բնապահպանական անվտանգությունը:

Անհրաժեշտության դեպքում կապահովվի բնապահպանական փորձագիտական համապատասխան եզրակացության առկայությունը: Բոլոր օբյեկտները, որոնք գտնվում են ԱՏԳ տարածքում, կբավարարեն սանիտարական, հակահրդեհային, բնապահպանական և այլ սահմանված նորմերին: Կմշակվի արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլան՝ շահագործողներին համապատասխան տեղեկատվության տրամադրմամբ (տեղեկատվական ստենդեր և այլն): Անհրաժեշտության դեպքում ԱՏԳ-ում անվճար կհատկացվի տարածք (50մ2 ոչ պակաս) բնապահպանական նորմերի և պահանջների ապահովման նպատակով՝ անհրաժեշտ ստուգաչափիչ սարքավորումների տեղադրման համար: Բացի վերոնշյալից պետք է նշել նաև, որ ԱՏԳ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի:

12. Պետության կողմից ակնկալվող աջակցությունը

Պետության մասնակցությունն ԱՏԳ ձևավորման մեջ առաջին հերթին ակնկալվում է ԱՏԳ առաջմղմանն աջակցության ոլորտում: Երկրի զբոսաշրջային և ընդհանուր առմամբ ծառայությունների զարգացման ռազմավարության շրջանակներում ԱՏԳ մեխանիզմների ստեղծման բացառիկության տեսակետից նպատակահարմար է պետության և ԱՏԳ Կազմակերպչի միջև առավելագույն սերտ համագործակցությունն ԱՏԳ բրենդի, «Մայլեռ» հանգստավայրի և մատուցվող ծառայությունների առաջմղման շրջանակներում:

Նախ և առաջ անհրաժեշտ է պետական պաշտոնական կապերի (տեղեկատվական, դիվանագիտական և այլն) լիակատար օգտագործումը գործընկեր պետությունների համապատասխան կառույցների ԱՏԳ վերաբերյալ (մասնագիտացման ոլորտը, առավելությունները, պայմանները և այլն) տեղեկացնելու համար:

12.1) Պետության տեղեկատվական օժանդակությունը կարող է նաև ներառել՝

ա.օտարերկրյա պետությունների համապատասխան կազմակերպությունների հետ աշխատանքը,

բ.պոտենցիալ շահագործողների համար Հայաստանի երկրի պրոֆիլի պատրաստումը,

գ.ԱՏԳ-ի վերաբերյալ տեղեկատվություն հասցնելու նպատակով դեսպանությունների առևտրային (կոմերցիոն) բաժինների մասնակցությամբ շնորհանդեսները,

դ.ոլորտային նախարարությունների պաշտոնական տեղեկատվական գրությունները օտարերկրյա գործընկերներին,

ե.կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ հանդիպումները տեղական և արտասահմանյան գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ,

զ.ՋԼՄ-ների հաղորդագրությունները,

է.ԱՏԳ-ի մասին գործընկերների տեղեկացումը պաշտոնական այցերի ընթացքում,

ը.սփյուռքի ներգրավումը:

Համագործակցության առաջարկված այս ուղղություններով պետության կողմից ֆինանսական միջոցների տրամադրում չի նախատեսվում, ինչը դարձնում է պետական մասնակցությունը իրատեսական և արդարացված:

Բացի այս, ոչ ծախսատար աջակցությունից Կազմակերպիչը կողջունի պետության կողմից մասնակցությունն առաջնային ենթակառուցվածքների ձևավորման մեջ, քանի որ այն խթանելու է ոչ միայն ԱՏԳ գործունեությունն, այլև մարզի և շրջակա բնակավայրերի զարգացումը: Պետության աջակցությունը իրենից կարող է ենթադրել Կառավարության կողմից վարչարարական գործիքակազմի օգնությամբ ծրագրի ընթացքում ի հայտ եկող խնդիրներին օժանդակություն՝ առանց ֆինանսական ռեսուրսի օգտագործման (բանակցությունների վարում, օրենսդրական փոփոխությունների նախաձեռնում և այլն):

12.2) Այսպես, Կազմակերպիչը հայցում է պետության աջակցությունը հետևյալ ենթակառուցվածքների ձևավորման գործում.

ա.Ճանապարհ

Ճանապարհի կառուցումը կվերացնի անհարմարությունները այն զբոսաշրջիկների համար, որոնք ուղևորվելու են Հայաստան իրենց ավտոմեքենաներով, բացի այդ, կբարձրանա շրջանի նկատմամբ գրավչությունը թե՛ զբոսաշրջիկների, թե՛ ներդրողների կողմից: Հարկ է նշել, որ սույն ճանապարհի կառուցումը արդեն իսկ ներառված է ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 29-ի N 1246-Ա որոշման 6-րդ կետում և արդյունքում

բ.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի «Մայլեռ» հանգստավայրի ասֆալտապատ ավտոճանապարհի կառուցման ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N 535-Ա որոշմամբ:

13. Կոմունալ ենթակառուցվածքներ (ջրամատակարարում, էլեկտրաէներգիա, գազամատակարարում, ջրահեռացում)

Կոմունիկացիաների անցկացումը (գոնե մինչև ԱՏԳ սահմանները) կազատի ընկերությանը տարբեր փաստաթղթային քաշքշուկներից: Միաժամանակ, կոմունիկացիաների բացակայության խնդիրը արդիական է նաև հարակից համայնքների համար, և դրանց անցկացումը դրական ազդեցություն կունենա նաև նշված համայնքների վրա: Հարկ է ընդգծել, որ ակնկալվող աջակցությունը պետական ֆինանսական ռեսուրս չի պահանջում, այլ ենթադրում է Կառավարության կողմից իր լիազորությունների շրջանակում առկա գործիքակազմի միջոցով բանակցությունների վարում կամ այլ աշխատանքների իրականացում կողմերի հետ՝ կոմունալ ենթակառուցվածքների կառուցմանն աջակցության նպատակով:

14. **Մայլեռն այսօր**

Մայլեռում արդեն գործարկվել են երեք ճոպանուղիներ՝ Nare's Express նստատեղային, Angeline (Էնջըլայն) 1 և Angeline 2 տասը տեղանոց հոնդոլային ճոպանուղիները, որոնք հնարավորություն են ընձեռում հյուրերին համալիրի սկզբնական կետից բարձրանալ մինչև համալիրի ամենաբարձր գագաթ 2850 մետր բարձրություն, որտեղից բացվում է աննկարագրելի տեսարան դեպի Արարատ, Արա, Արագած և Հատիս լեռները և շուրջ 21 կմ սահուղիներ, որոնք համապատասխանում են Եվրոպական բոլոր 4 բարդություններին՝ համապատասխան գունային որակավորումներով: Համալիրը հագեցած է արհեստական ձնագոյացման գերժամանակակից համակարգով, որի շնորհիվ Մայլեռն ունի երաշխավորված սեզոն և բարձր որակի սահուղիներ: Համալիրում առկեն գործում են 4 ռեստորաններ, դահուկային դպրոց, օլիմպիական սառցադաշտ, թյուբինգ զոնա, ուղղաթիռային էքսկուրսիաներ: Մայլեռ հանգստավայրը շուրջ երեք տարի շարունակ ակտիվ զարգացում է ապրում՝ դառնալով տարածաշրջանի ամենամեծ ներդրումային պոտենցիալ ունեցող ուղղություններից մեկը: Այսօր արդեն բացվել են նոր հնարավորություններ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ներդրումներ կատարել և ձեռք բերել ski-in-ski-out բնակարաններ:

Մայլեռում գործում է համաշխարհային ճանաչում ունեցող Doppelmayr ընկերության արտադրած նորագույն վեցտեղանոց նստատեղային ճոպանուղին: Ճոպանուղին ունի ժամում 2400 ուղևոր տեղափոխելու կարողություն և զարգացնում է մինչև վայրկյանում 6.5 մետր արագություն: Այս ճոպանուղու ստորին կայանը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մետր բարձրության վրա, իսկ վերին կայանը՝ 2400 մետր բարձրության վրա, որտեղից բացվում է մոտ 7 կիլոմետր երկարությամբ սահուղիների համալիր: 2024 թվականին գործարկվեցին նաև Angeline 1 և Angeline 2 տաստեղանոց հոնդոլային ճոպանուղիները, որոնք համալիրը հասանելի են դարձնում մինչև դրա ամենաբարձր կետը՝ 2850 մետր բարձրություն, ապահովելով հարմարավետ ու արագ վերելք:

«Մայլեռ Մաունթին Ռեզորթ»-ը շարունակում է կառուցել գերժամանակակից լուծումներով, միջազգային չափանիշներին համապատասխան լեռնադահուկային համալիր, մշտապես հետևում է նորարարություններին, տեղայնացնում միջազգային լավագույն փորձը: «Մայլեռի» հրավերով Հայաստան է ժամանել մեքենաների և սարքավորումների արտադրության միջազգային խմբի՝ առաջատար Wintersteiger ընկերության ներկայացուցիչ Կոլցով Մատվեյը, ով վերապատրաստման դասընթացներ է անցկացնում դահուկների և սնոուբորդերի վերանորոգման, արքավորումների սպասարկման և օգտագործման առանձնահատկությունների թեմայով:

Զբոսաշրջության ոլորտի ամենախոշոր և բազմափուլային նախագծերից «Մայլեռ Մաունթին Ռեզորթը» շուտով կամփոփի առաջին փուլը: «Մայլեռը» երկարաժամկետ ներդրումային նախագիծ է, և պայմանականորեն նախագիծը մի քանի փուլի է բաժանվել: Երբ խոսվում է առաջին փուլի մասին՝ հասկացվում է որոշակի հատվածի ավարտուն տեսք, ինչը հնարավորություն կտա ընդունել օրական 5500-6000 սահողի: «Մայլեռի» սահուղիների

տարողունակությունն այսօր այդքան մարդու միաժամանակ սահելու հնարավորություն է տալիս: Առաջիկայում կլինի ևս մեկ առանձնացված ճոպանուղի և ոչ շատ երկար սահուղիներ հատուկ սկսնակների համար, նաև կավելացվի արհեստական ձնագոյացումն ու կարող է արձանագրվել, որ դահուկային ենթակառուցվածքների մասով առաջին փուլը կլինի ամբողջությամբ կատարված:

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչ ծավալի հոսք է ենթադրում 6000 սահողը, հարկ է նշել, որ այդ թիվը հանգստավայրի օրական այցելուների 50%-ը պետք է լինի, այսինքն՝ օրական 12000 այցելու ընդունելու դեպքում կլինի 6000 սահող: Առաջին փուլով նախատեսված է կառուցել գիշերակաց 7000 այցելուի համար, այսինքն՝ 3000 հյուրանոցային համար, որն, իրականում, խոսուն թիվ է, հատկապես եթե համեմատվում է, որ ամբողջ Հայաստանում որոշ տվյալներով մոտ 14500 հյուրանոցային համար կա: Ընդհանուր առմամբ, այսօր «Մայլեռում» արդեն գործում է երկու տեսակի ճոպանուղի՝ հոնդոլային և նստատեղային, 22 կմ երկարությամբ սահուղիներ՝ բարդության չորս մակարդակներով, 4 ռեստորան, Qotot Ski Club-ն ու մարզադպրոցը, վարձույթի 2 հագեցած սրահ, իսկ նորաբաց շալեներում կարողանում են գիշերակացով ընդունել 100-120 այցելուի: Սկսած այս տարվանից՝ շուրջ երեք տարի կատարվելու է աշխատանք հյուրանոցների կառուցման և ներդրումային նախագծերը մեկնարկելու ուղղությամբ:

Ընդհանրապես, «Մայլեռն» իր մասշտաբներով և տեսակով աննախադեպ է Հայաստանում՝ տարածաշրջանում ու աշխարհում առաջատար լեռնադահուկային համալիր դառնալու և մեր երկիրը միջազգային զբոսաշրջային քարտեզում դիրքավորելու իր հեռանկարներով: Այն ռազմավարական ներդրում է, որը կարող է վերափոխել լեռնային հանգստավայրերի վերաբերյալ ընկալումները տարածաշրջանում և ստեղծել երկարաժամկետ ազդեցությամբ մնայուն արժեքներ: Այս նախագծով մենք նոր վարքագիծ ենք ձևավորում. մարդիկ այլևս լեռնադահուկային հանգիստը միայն արտերկրի հետ չեն ասոցացնում, և մենք ձգտում ենք Հայաստանը դարձնել այն երկիրը, ուր զբոսաշրջիկները կճանապարհորդեն հատուկ նպատակով:

«Մայլեռում» իրականացված ռազմավարական ներդրումային միավորների մասին՝ կարող են առանձնացվել տեղանքի ընտրությունը («Մայլեռ» Զվարթնոց օդանավակայանից ընդամենը 1 ժամ հեռավորության վրա է), միջազգային գործընկերների հետ համագործակցությունները և դրանց շրջանակում եվրոպական ստանդարտներին համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը, ինչպիսին է, օրինակ՝ արհեստական ձնագայոցման համակարգը: «Մայլեռն» իր դիրքով գտնվում է մեծ ջրամբարի հարևանությամբ, ինչը հնարավորություն է տալիս ունենալ կայուն սեզոն և ապահովել ձնապատ սահուղիներ՝ անկախ եղանակային անբարենպաստ փոփոխություններից: Մյուս կարևոր ռազմավարական նշանակության ենթակառուցվածքներից են տարբեր բարդությունների սահուղիները՝ նախատեսված թե՛ սկսնակների և երեխաների, թե՛ պրոֆեսիոնալ դահուկորդների համար, ինչպես նաև վերջին սերնդի ճոպանուղիները:

«Մայլեռում» նախատեսվում է նաև 2850մ բարձրության վրա կառուցել 50 մետրանոց դիտաշտարակ, որը հնարավորություն կտա հիանալու Արարատ, Արագած, Արա, Հատիս լեռների բնապատկերով: «Մայլեռում» կստեղծվի նաև Art District-ը, որտեղ երիտասարդ

տաղանդները հնարավորություն կունենան ինքնադրսևորվելու և ցույց տալու իրենց տաղանդը։

Ընդհանուր առմամբ, ավարտական փուլում «Մայլեռը» կունենա ընդհանուր 17 հիմնական ճոպանուղի՝ նստատեղային և գոնդոլային (ընդհանուր կարողությունը՝ 41400 մարդ ժամում), բուգելային ճոպանուղիներ սկսնակների համար, ինչպես նաև 102 կմ երկարությամբ սահուղիներ՝ բարդության 4 մակարդակով, որոնք կկարողանան միաժամանակ ընդունել 17,000 սահողի։

«Մայլեռը» հստակ նախագծված ներդրումային հնարավորություն է, 2024 թվականի օգոստոսից ՀՀ կառավարության որոշմամբ ունի ազատ տնտեսական գոտու կարգավիճակ։ Սա նշանակում է, որ բոլոր այն ընկերությունները, որոնք ներկայում ներդրում կիրականացնեն «Մայլեռում», 20 տարի շարունակ կազատվեն շահութահարկից և ԱԱՀ-ից։

Հայաստանում այս պահի դրությամբ կապիտալի շուկան դեռ բավականաչափ զարգացած չէ, փոքր ծավալով ներդրումների հնարավորությունները խիստ սահմանափակ են։ Արտասահմանյան ներդրողների համար Հայաստանում ներդրում կատարելու տոմսը բավականին մեծ է, այսինքն՝ ցանկության դեպքում արտերկրի ներդրողն ինքնուրույն պետք է գտնի որևէ նախագիծ և սկզբից մինչև վերջ ֆինանսավորի այն։ Մինչդեռ «Մայլեռի» միջոցով միտում կա հնարավորություն ընձեռել փոքր ներդրումային տոմսերով ներդրում կատարել նման խոշոր ու հեռանկարային նախագծերում։ «Մայլեռում» ներդրումների երեք մակարդակ և ուղղություն է նախատեսվում. ֆիզիկական անձանց համար, ովքեր կարող են բնակարան և ապարտ-համար ունենալ, ինչը կայուն եկամուտ է ապահովելու, ձեռներեցների համար, ովքեր կարող են ձեռք բերել որոշակի հողատարածք ու կոմերցիոն կառույց հիմնել, օրինակ՝ մարզահամալիր կամ ձիարշավարան, ժամանցի այլ կենտրոններ։ Եվ երրորդը, ինչը նաև վերջնանպատակն է, ուղղակի ներդրում ունենալ հենց «Մայլեռում», որը դառնալու է բաց բաժնետիրական ընկերություն և Հայաստանի Հանրապետության արժեթղթային շուկայի ցուցակված մասնակից։ Ըստ փուլային բաժանման՝ 2027-2028 սեզոնային տարում արդեն հնարավորություն կտրվի «Մայլեռը» վերածել բաց բաժնետիրական ընկերության ու նաև օտարերկրյա ներդրումներ ներգրավել արժեթղթերի շուկայի միջոցով։ Նախատեսվում է նաև, որ 2027-2028 սեզոնից սկսած «Մայլեռը» կգործի շուրջ տարին, ինչն էլ իր հերթին կնպաստի ամբողջ տարվա ընթացքում կայուն եկամուտ ունենալուն։ Ուստի «Մայլեռում» ներդրում կատարել նշանակում է լինել ավելի մոտ բնությանը, առողջ ապրելակերպին, վայելել տարվա բոլոր սեզոնները, իսկ ձմեռային սեզոնը դարձնել ամենաուրախ, օգտակար ու սպասված սեզոններից մեկը։Որքան վաղ փուլում են կատարվում ներդրումները, այնքան կապիտալ հավելաճը (capital gain) մեծ է լինում, իսկ «Մայլեռը» մեծ ներուժով, խոստումնալից ու հեռանկարային, ամենամեծ ներդրումային ծրագրերից մեկն է, որը հենց վաղ փուլում ներդրում կատարելու հնարավորություն է տալիս։ Առավելություններից մեկն այն է, որ «Մայլեռը» ազատ տնտեսական գոտի է (ԱՏԳ). այն կազմակերպությունները, որոնք ներդրում կանեն, կօգտվեն ազատ տնտեսական գոտու ռեզիդենտի առավելություններից, և մեկնարկի օրվանից հետո 20 տարվա ընթացքում կազատվեն շահութահարկից և ավելացված արժեքի հարկից։

Ծրագրի փուլայնությունը միանգամից չի տալիս ընդհանուր պատկեր այլ քայլ առ քայլ՝ կարիքների տվյալ ժամանակահատվածում առաջացած ուղղվածությանը զուգընթաց հստակեցնում և

«ՍՏՈՐԱԿԵՏ

կատարում է տվյալ կարիքին համապատասխան նախագծային մանրամասն մշակումներ և նախագծի իրականացում: Ստորև ներկայացվում է լեռնադահուկային առողջավայրի ձևավորվող քաղաքաշինական միջավայրի հնարավոր պատկերը:

15. Մայլեռ ներդրումային ծրագրի շրջանակում Եղիպատրուշ բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություններ

Սույն նախագծի շրջանակում հողերի նպատակային նշանակությունների փոփոխություններն իրականացվելու են հետագայում առողջարանային հանգստավայրի ձևավորման և հետագա զարգացման և անհրաժեշտ ենթակառուցվածքի իրականացման համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2021 թվականի N 1246-Ա որոշմամբ հավանություն է տրվել Արագածոտնի մարզում լեռնային հանգստավայրի կառուցման «Մայլեռ» ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին՝ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տարածքում 2080 հեկտար ընդհանուր մակերեսով (ակտիվ օգտագործման մակերեսը՝ մոտ 580 հա) հողամասում իրականացվելիք ներդրումային ծրագրին (այսուհետ՝ ծրագիր)։

Որոշման հիման վրա գերատեսչություններին տրվել է հանձնարարական՝ հիմք ընդունելով ծրագրի փուլայնությունը՝ ապահովել ծրագրով նախատեսված հողատարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու գործընթացը, օժանդակել ծրագրով նախատեսված հողատարածքների նպատակային նշանակության փոփոխման օրենսդրությամբ սահմանված գործընթացին՝ համագործակցելով տվյալ համայնքի ավագանու հետ՝ հաշվի առնելով, որ նպատակային նշանակության փոփոխությունն իրականացվելու է ավագանու որոշման հիման վրա։

Առաջարկվել է նաև ծրագրում նշված՝ հետաքրքրություն ներկայացնող հատվածներում անտառային հողերի օգտագործման, մասնավորապես՝ անտառահատման իրականացման (փոխարենը մի քանի անգամ ավելի ծավալով անտառատնկման և անտառվերականգնման իրականացում) կառուցակարգ։

Ներդրումային ծրագիրը միտված է Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության բազմազանության ու զարգացման ապահովմանը, ինչպես նաև բնակչության մեջ առողջ ապրելակերպի հաստատմանը և համահունչ է ՀՀ կառավարության կողմից որդեգրած տնտեսական զարգացման ռազմավարությանը։



Գծապատկեր 1. Տեղանքի քարտեզ

պարտավորություններով պայմանավորված՝ չեն կարող ճանապարհորդել ԵԱՏՄ սահմաններից դուրս։

Լեռնային համալիրների զարգացման պատմության մեջ շատ քիչ են այնպիսի հանգստավայրեր, որոնք նախագծվել և կառուցվել են այդ նպատակով. որպես կանոն՝ դրանք կառուցվել են արդեն գոյություն ունեցող բնակավայրերի հիման վրա և ունեն զարգացման ուրույն կառուցակարգ:

Լեռնային համալիրների հիմնական ընդհանուր գիծն այն է, որ ճոպանուղիների ճնշող մեծամասնությունը պետական կամ համայնքային սեփականություն է, իսկ հյուրանոցները, հանգստյան և ժամանցի կենտրոնները՝ մասնավոր սեփականություն (Վրաստանի և Ադրբեջանի օրինակով): Հայաստանի միջազգային վարկանիշի պարբերական բարձրացումը նպաստում է ցանկացած զբոսաշրջային ծրագրի ներուժի բացահայտմանը և արդյունքում երկրի տնտեսական զարգացմանը: Այս համատեքստում հատկանշական է պետության դերը ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման հարցում:

Նախաձեռնությունն աննախադեպ է, քանի որ մասնավոր կազմակերպությունն իր վրա է վերցնում ենթակառուցվածքային այնպիսի ներդրումներ, ինչպիսիք են՝ ճոպանուղու, սահուղիների կառուցում, արհեստական ձնագոյացման համակարգի ձեռքբերում և տեղադրում, որոնք առհասարակ իրականացվում են պետության կամ համայնքի կողմից՝ փոխարենը ակնկալելով պետական աջակցություն կոնկրետ ուղղություններով: Ծրագրի շրջանակներում նախատեսված ենթակառուցվածքներն իրենց շուրջ են կենտրոնացնելու հյուրանոցային և ժամանցային ոլորտներում այլ ներդրողների, որոնք ներդրումներ կատարելով՝ նպաստելու են ոլորտի շարունակական զարգացմանը՝ ապահովելով լրացուցիչ աշխատատեղեր տվյալ համայնքի բնակիչների և ՀՀ այլ քաղաքացիների համար: Այդպիսի ենթակառուցվածքներից ամենակարևորը ճոպանուղին է, որը բազմիցս ապացուցել է իր «սոցիալական մագնիսի» ազդեցությունը երկրի, այդ թվում՝ տվյալ մարզի տնտեսության վրա, և պետության կողմից համապատասխան աջակցությունը միանշանակ կնպաստի ծրագրի բարեհաջող իրականացմանը:

Գծապատկեր 2. Ծրագրով նախատեսված ճոպանուղու նախանշված տեսքը

Ճոպանուղիները լինելու են եվրոպական ամենաարդիական տեխնոլոգիաներով հագեցած՝ փակ հոնդոլային տիպի, արագընթաց, ինչպիսիք տեղադրված են աշխարհահռչակ լեռնադահուկային կենտրոններում (Իշգլ, Սանտ Անտոն, Ինսբրուկ և այլն):

Ծրագրի իրականացումը բացառիկ է նրանով, որ նմանօրինակ ենթակառուցվածքային ներդրումներ մասնավոր հատվածի կողմից Հայաստանում երբևէ չեն իրականացվել, և նման համագործակցության հաջողված օրինակը կարող է հզոր խթան հանդիսանալ պետություն-մասնավոր համագործակցության հետագա զարգացման համար:

ՀՀ կառավարության կողմից բազմիցս արձանագրվել է, որ զբոսաշրջությունը պետության համար առաջնահերթ ուղղություններից մեկն է և համարվում է արտահանման ձև: Բացի այդ՝ զբոսաշրջության զարգացման ուղղությամբ պետության կողմից իրականացված ծախսերի հետգնումն առավել արդյունավետ է, իսկ ծրագիրն առանձնահատուկ է նրանով, որ չի ակնկալում պետության կողմից հավելյալ ծախսեր:

Լեռնային համալիրի կառուցման ընթացքում ներգրավված կլինեն շինարարության ոլորտի շուրջ 250 աշխատողներ, իսկ ծրագիրն իրականացնելուց հետո կստեղծվի շուրջ 1500 հիմնական աշխատատեղ՝ միջինը 180,000 դրամ աշխատավարձով: Ծրագրի հիմնական շահառուն է զբոսաշրջային սպառողը, ինչը ենթադրում է տնտեսության համար հավելյալ արժեքի ստեղծում և արտարժութային դրամական միջոցների հոսք դեպի ՀՀ:

Կառուցվող համալիրը հնարավորություն է ունենալու սպասարկելու օրական 6000 հաճախորդի (տարեկան՝ 2,160 հազ. մարդ/օր): Նմանատիպ հանգստյան վայրերում 1 հաճախորդի միջին անցկացնելիք ժամանակը գնահատվում է 4 օր, հետևաբար համալիրը հնարավորություն կունենա սպասարկելու տարեկան միջինը շուրջ 500 հազ. հաճախորդի: Սակայն ըստ կանխատեսումների՝ հաշվի առնելով նաև համալիրի սեզոնային բնույթը՝ ծրագրի իրականացման համար տարեկան միջին ծանրաբեռնվածությունը գնահատվում է 40 տոկոս (շուրջ 200 հազ. հաճախորդ):

Հարկ է նշել, որ հաճախորդները կլինեն և ներգնա, և ներքին զբոսաշրջիկներ, և ելնելով դրանից՝ կանխատեսվում է, որ 1 հաճախորդի կողմից ծախսը միջինը կկազմի 100 հազ. դրամ, ինչը նշանակում է, որ համալիրի կառուցման արդյունքում կունենանք տարեկան լրացուցիչ շուրջ 20 մլրդ դրամի ծառայությունների ծավալի ավելացում:

15.1) **Նախատեսվող ներդրումները.** Կազմակերպությունը կատարելու է ներդրում ճոպանուղու, սահուղիների, արհեստական ձնագոյացման համակարգի, գլխավոր հատակագծի և ժամանցային կենտրոնների (տոբոգան, տյուբինգ, «կախարդական կարպետ», զիփլայն, ջրային ատրակցիոններ) կառուցման համար: Միաժամանակ, պետական աջակցությամբ, կազմակերպությունը ներդրողի համար ավելի գրավիչ է դարձնելու ոչ միայն սույն շրջանը, այլ նաև ողջ հանրապետությունը, ինչպես նաև ապահովելու է ևս 15 միլիարդ դրամի ներդրումներ հյուրանոցային հատվածում տարբեր ներդրողների կողմից:

30 միլիարդ դրամի ծրագիրն իրականացնելու համար ՀՀ կառավարության կողմից ակնկալվում է աջակցություն հետևյալ հարցերում.

15.1.1) Ճանապարհ և ավտոկայանատեղի

15.1.2) Կոմունիկացիաներ (ջուր, հոսանք, գազ)

15.1.3) Տարածքի նկատմամբ գերակա հանրային շահի ճանաչում (միայն գյուղատնտեսական նշանակության հողերի հատվածում)

15.1.4) Ազատ տնտեսական գոտի

15.1.5) Զբոսաշրջային կենտրոն սահմանել և ներառել պետական ֆինանսավորմամբ ծրագրերում և գովազդներում

15.1.6) Խաղատան լիցենզիայի տրամադրում (Ջերմուկի համար սահմանված սակագնով)

15.1.7) 580 հա տարածքի տրամադրում՝ հողատարածքի նպատակային նշանակության փոփոխությունն անհրաժեշտության դեպքում ըստ հատվածների իրականացմամբ:

Մասնավորապես, օրինակ՝ եթե գյուղատնտեսական նշանակության հողատարածքում իրականացվելու է հյուրանոցի կառուցում, համապատասխան փոփոխությունը կատարել միայն այդ հատվածում, և այսպես շարունակ: Ընկերությունը նախատեսում է համապատասխան վճարումներն իրականացնել ծրագրով նշված հողատարածքի կամ դրա հատվածների օտարման դեպքում: Հողերի նպատակային նշանակության գործընթացն ապահովելու նպատակով՝ ընկերությունն օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի համաձայն կներկայացնի դիմում՝ թույլտվություն ստանալու ակնկալիքով:

Ծրագրի շրջանակում հետաքրքրություն ներկայացնող հատվածներում (մասնավորապես՝ սահուղու և ճոպանուղու համար) անտառահատում, փոխարենը՝ նոր անտառների մի քանի անգամ ավելի վերականգնման պայմանով (առաջին փուլով նախատեսված 10 հա մակերեսով անտառահատման տեղանքի քարտեզը ներկայացված է գծապատկեր 4-ի

միջոցով)։ Ծրագրի իրականացման նպատակով հատվել է շուրջ 9 հա, որի դիմաց հատուցվել է շուրջ 24.8 հա՝ անտառտնտեսության անտառկառավարման պլանի համաձայն։ Կից Հավելված 1-ում ներկայացված են վնասի հատուցման և անտառպատման աշխատանքների վերաբերյալ պայմանագրերը։

Հետագա հատումները նունպես համաձայնեցվելու են "ՀԱՅԱՆՏԱՌ" ՊՈԱԿ-ի հետ օրենքի տառին համապատասխան։ (Սույն նախագծի շրջանակում չեն ՀՀ կառավարության որոշմամբ համաձայնեցված դիտարկվում անտառահատման և անտառափոխհատուցման հետ կապված փոփոխությունները, որոնք կմշակվեն առանձին նախագծի շրջանակում)։

Անտառահատումները, որքան էլ անցանկալի, անխուսափելի են լեռնային հանգստավայրերի ստեղծման գործում։ Քանի որ ծրագիրն ունի շարունակական բնույթ, հնարավոր չէ նախօրոք հաշվարկել անտառահատումների ծավալը։ Այնուամենայնիվ, կազմակերպությունը պարտավորվում է ապահովել անտառահատման ծավալից մի քանի անգամ ավելի ծավալով անտառի տնկման ֆինանսավորում՝ անկախ վերջինիս ծավալից։

Անտառային տարածքների համարվնասի փոխհատուցումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով՝ վնասի փոխհատուցման պայմանագրերի համաձայն։ Տարածքում անտառների հետ իրավահարաբերությունները և պլանավորվող միջոցառումներն իրականացվելու են համաձայն նախաձեռնողի և Հայանտառ ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի։

8. 7-րդ կետով նշված 580 հա-ին կից 1500 հա տարածքի վարձակալություն (ցանկացած պահի և ցանկացած հատված գնելու իրավունքով)

9. Ծրագիրն իրականացնողի մասնակցությունը քաղաքաշինական փաստաթղթերի հաստատմանը (Դիլիջանի զարգացման հիմնադրամի օրինակով)

Ծրագիրն իրականացնող կազմակերպության մասնակցությունը քաղաքաշինական փաստաթղթերի հաստատմանը հնարավորություն է ընձեռում ձևավորել միասնական տեսլական, ինչպես նաև գլխավոր հատակագծի և մեկ գաղափարախոսության շուրջ իրականացվող քաղաքաշինական նախագծերի պարագայում՝ քաղաքի առավել ամբողջական տեսքը:

Ծրագրի իրականացման տեղանքի քարտեզները ներկայացված են Գծապատկեր 5-ի միջոցով։



Գծապատկեր 3. Կոմունիկացիաների նախանշված երկարությունները

Գծապատկեր 4. Անտառահատման իրականացման տեղանքի քարտեզ



Գծապատկեր 5. Ծրագրի իրականացման տեղանքի քարտեզներ

16. Հայեցակարգային դրույթներ

Հաշվի առնելով այն փաստը, որ Եղիպատրուշ գյուղում 2022 թվականին մշակված Արագածոտն 1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի մշակումից հետո բնակավայրի հեռանկարային բնականոն զարգացման հետ կապված այլ բնույթի փոփոխությունների հետ կապված կարիքներ չեն առաջացել և գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծի մշակման անհրաժշտությունը լիովին կապված է սույն փաստաթղթի նախաբանում և ներածությունում արծարծված ՀՀ կառավարության 2021 թվականի N 1246-Ա որոշմամբ հավանության արժանացած Արագածոտնի մարզում լեռնային հանգստավայրի կառուցման «Մայլեռ» ներդրումային ծրագրի հետ՝ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տարածքում 2080 հեկտար ընդհանուր մակերեսով (ակտիվ օգտագործման մակերեսը՝ մոտ 500 հա) հողամասում իրականացվելիք ներդրումային ծրագրի իրականացմամբ առաջացած դիտարկվող հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխության հետ: Տարբեր նպատակային և գործառնական նշանակության հողատեսքերը լեռնային հանգստավայրի կառուցման նպատակին ծառայեցնելուն միտված նոր նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների գումարային մակերեսը բնակավայրի սահմաններում ընդգրկված հողերի 10 տոկոսը գերազանցելու դեպքում օրենսդրությամբ սահմանված է այդ փոփոխությունները կատարել գլխավոր հատակագծի փոփոխության շրջանակում, ինչը և իրականացվում է տվյալ փաստաթղթի շրջանակում:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ թեև ծրագրի շրջանակում նախատեսվող գործառույթները և դրանց համապատախսան օբյեկտների շրջանակը ծրագրում ներառված էսքիզային պատկերում ներկայացված են, այնուհանդերձ կոնկրետ նախագծային լուծումները, օբյկետների ճշգրիտ տեղադիրքը, մակերեսները, միմյանց հետ ֆունկցիոնալ հատակագծային կապերը, կառուցապատված և ազատ տարածքների հաջորդականությունը, հանրային տարածքների ցանցը և այլ հատակագծային բաղադրիչ տարրերի հստակ տեղադիրքերի և մակերեսների անհստակության պայմաններում սույն փոփոխությամբ կատարվում է տարածքների փոխադրում ՀՀ հողային օրենսգրքով սահմանված բնակավայրերի հողերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության, ինչը հետագայում՝ նախագծի հստակեցման և փուլ առ փուլ իրականացմանը զուգընթաց համայնքի կողմից կկատարվի հողատեսքերի գործառնական նշանակությունների փոխադրում համապատասխան գործառնական նշանակությունների՝ առանց լրացուցիչ փաստաթղթաշրջանառության:

Տվյալ փաստաթղթի շրջանակում կատարվում է կառավարության հավանության արժանացած ծրագրով նախատեսված տարածքների հողատեսքերի փաստացի նպատակային նշանակությունների համապատասխանեցում ծրագրով նախատեսված նպատակային նշանակությունների:

Փաստաթղթի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում կարտացոլվեն լեռնադահուկային հանգստավայրի կազմակերպման ծրագրով նախանշված և տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու համար՝քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումով ու հանձնարարականների առաջադրմամբ:

17.Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.

17.1) ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:

17.2) ՀՀ հողային օրենսգիրքը:

17.3) Հայաստանի Հանրապետության օրենքը Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261)

17.4) «ՀՀ ջրային օրենսգիրք

17.5) ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (2014 թ. հունիսի 21, ՀՕ-110-Ն)»

17.6)ՀՀ օրենքը <<Բուսական աշխարհի մասին>> (1999)

17.7) ՀՀ օրենքը <<Կենդանական աշխարհի մասին>> (2000)

17.8)«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2011 թ. հունվարիի 27, N 75-Ն:

17.9)ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781 որոշում:

17.10) Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշում:

17.11) ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը:

17.12) ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը:

17.13)ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 72-Ն որոշումը:

17.14)ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշումը:

17.15)Հայաստանի Հանրապետության կառավարություն N 855-ն որոշումը (18 օգոստոսի 2016 թվականի) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին:

17.16)Կարգ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման (հաստատված ՀՀ Կառավարության 02.05.03թ. N 625 – Ն որոշմամբ):

18. Նախագծում հաշվի են առնվել նաև.

18.1)Նախագծային տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մարզի առանձին բնակավայրերի գլխավոր հատակագծերը ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:

18.2)ՀՀ կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները:

18.3)«Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և կառավարության կողմից հաստատված (10.04.03 N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթները:

18.1. Նախագծում հաշվի են առնված ՍԵՄԱԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայր ցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.

18.1.1) Տնտեսության կայուն զարգացում՝

ա. Արդյունաբերություն,
բ. Գիտատար արդյունաբերական արտադրություն,
գ. Ագրոարտադրական համալիր,
դ. Ռեկրեացիա, հատկապես տուրիզմ,
ե. Փոքր և միջին բիզնես,
զ. Բնապահպանական միջոցառումներ:

18.1.2)Քաղաքաշինության կայուն զարգացում՝

ա. Բնակելի շինարարություն,
բ. Բնակելի-կոմունալ շինարարություն,
գ. Լանդշաֆտի ռացիոնալ օգտագործում,
դ. Բնապահպանական միջոցառումներ:

18.1.3)Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների կայուն զարգացում՝

ա. Տրանսպորտ,
բ. Ջրամատակարարում, ջրահեռացում,
գ. Էներգամատակարարում,
դ. Թափոնների օգտահանում,
ե. Բնապահպանական միջոցառումներ:

19. Ակնկալվող արդյունքներ

19.1)Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
19.2)Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
19.3)Արդյունաբերության զարգացում
19.4)Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
19.5)Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում
19.6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
19.7)Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
19.8)Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
19.9)Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

Նկ.1. Լեռնադահուկային առողջավայրի էսքիզային առաջարկ

Գլուխ 1

Նախաբան

ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրի իրականացումը ենթադրում է մի շարք հողատեսքերի նպատակային նշանակությունների փոփոխություններ՝ ծրագրով նախանշված գործառույթները ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված հողերի վրա իրականացնելու նպատակով:

Ներկայումս, հայեցակարգի շրջանակում ներկայացված գործառույթներին համապատասխան կոնկրետ հատակագծային լուծումները որոշակիացված չեն, այդ իսկ պատճառով կառավարության որոշմամբ նախանշված տարածքների համար կատարվաում է դիտարկվող տարածքների բոլոր հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխություններ բնակավայրերիի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողերի: Դրանց մի մասն արդեն իսկ փոփոխվել են՝ ՀՀ կառավարության 2011 թվականի 1920-Ն որոշման 56-րդ կետի պահանջներին համապատասխան՝ կառուցապատման նպատակով առանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների շրջանակում և այդ դրույթներով սահմանված կարգով:

Այնուհանդերձ, առանձին հողամասերի թվաքանակի և փոփոխվող ընդհանուր տարածքի որոշակի ծավալները գերազանցելու պարագայում այդ փոփոխությունների իրականացումը Լիազոր մարմնի կողմից առաջարկվել է իրականացնել ՀՀ կառավարության 2011 թվականի 1920-Ն որոշման 24-րդ կետի 1-ին ենթակետի ա բաժնով սահմանված կարգով, մասնավորապես՝ Կարգով նախատեսված ընթացակարգով հաստատվելուց հետո գլխավոր հատակագծի և (կամ) Համակցված փաստաթղթի փոփոխությունները՝ կատարվում են Օրենքով և Կարգով գլխավոր հատակագծի և (կամ) Համակցված փաստաթղթի մշակման ու հաստատման համար նախատեսված ընթացակարգով, եթե՝

ա. գլխավոր հատակագծի, Համակցված փաստաթղթի (Կարգի իմաստով՝ տարածական պլանավորման փաստաթուղթ) հաստատումից հետո՝ դրանում չնախատեսված Առանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների հանրագումարը գերազանցում է բնակավայրի սահմաններում ընդգրկված հողերի 10 տոկոսը:

Նշվածի հիման վրա համայնքի և ներդրումային ծրագիրն իրականացնող կազմակերպության կողմից մշակվել է նախագծման առաջադրանք, սահմանված կարգով շրջանառվել շահագրգիռ մարմիններին, ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված և սահմանված կարգով հաստատված առաջադրանքի հիման վրա մեկնարկել են գլխավոր հատակագծում հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունը՝ միասնական փաստաթղթային փաթեթի շրջանակում:

Սույն բաժնի երկրորդ պարբերությամբ նշված բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողատեսքերը՝ հայեցակարգով նախանշված գործառույթների կոնկրետ հատակագծային կառուցվածքի մշակման շրջանակում ՀՀ կառավարության 2011 թվականի 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներին համապատասխան կփոխադրվի որոշակիացված գործառնական նշանակության, մասնավորապես.

ա. հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունները, եթե դրանք չեն հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը, կատարվում են համայնքների ղեկավարների կողմից, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերի, երբ հողամասի գործառնական նշանակությունը կարող է փոխվել միայն Լիազոր մարմնի համաձայնությամբ: Քաղաքաշինական գործունեության իրականացում չնախատեսող դեպքերում, հողամասի սեփականատերը կամ օգտագործման իրավունք ունեցող անձը համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում՝ համաձայն սույն Կարգի Չև N 4-ի: Համայնքի ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում Կարգի պահանջների համաձայն ընթացք է տալիս դիմումին (փոփոխում է հողամասի գործառնական նշանակությունը կամ համապատասխան հիմնավորմամբ մերժում է, կամ սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում ներկայացնում է Լիազոր մարմնի համաձայնեցմանը): Քաղաքաշինական գործունեության իրականացում նախատեսող դեպքերում հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունները կատարվում են հողամասի սեփականատիրոջը կամ օգտագործողին Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) տրամադրման շրջանակներում:

Ամփոփելով վերոգրյալը հարկ է նշել, որ սույն նախագծի շրջանակում չի դիտարկվում 2023 թվականին սահմանված կարգով հաստատված Արագածոտն-5 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի նախանշումների փոփոխություն: Առաջադրանքում ներառված են բացառապես Մայլեռ ներդրումային ծրագրի համար ՀՀ կառավարության որոշմամբ նախանշված և գլխավոր հատակագծի մշակման շրջանակում որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող պահպանված տարածքները: Դրանց նկատմամբ գլխավոր հատակագծի շրջանակում որևէ գործողություն չի կատարվել: Այդ հողատեսքերի փոփոխությունը պայմանավորված է Մայլեռ լեռնադահուկային առողջավայրի իրականացման ներդրումային ծրագրի շրջանակում անհրաժշետ ենթակառուցվածքի կառուցման համար հողատեսքերի համապատասխանեցմամբ՝ տվյալ կառուցապատմանը բնորոշ հողատեսքին:

Ի լրումն, ներդրումային ծրագրի հայեցակարգային փուլը ևս ենթարկվել է ՇՄԱԳ փորձաքննության և ստացել դրական եզրակացություն ԲՓ N 0204-23: Տվյալ՝ հողամասերի փոփոխությունների փուլում ևս կատարվում է շրջակա միջավայրի վրա փորձաքննություն՝

տվյալ մասշտաբին և հիերարխիական մակարդակին համապատասխան փաստաթղթերի մշակման շրջանակում:

Ծրագրի իրականացումը բնակավայրի տարածքում արդեն իսկ մեկնարկել է և գործողության ժամանակահատվածում փաստագրվել է ծրագրի սոցիալական ազդեցությունը բնակավայրի վրա՝ արտահայտված ինչպես.

1) ենթակառուցվածքների զարգացմամբ,
2) տարածքի մոտակայքում տեղակայված Ապարանի ջրամբարի ափամերձ հատվածների մքրմամբ,
3) Հայանտառի հետ համաձայնեցված անտառատնկումներով,
4) Շինարարության ընթացքում տեղի բնակչության ներգրավմամբ աշխատատեղերի ստեղծում,
5) Սպասարկման ենթակառուցվածքում բնակչության ներգրավում՝ աշխատատեղերի ստեղծում (նախապես վերապատրաստմամբ՝ անհրաժշտության դեպքում):

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,
- Սահմանվել են տարբեր նպատակային նշանակության հողօգտաործումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրը,
- Վերլուծվել են ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրարգրերը և դրանց իրականացման գործընթացը:

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ

1.1.1.)Մարզի ընդհանուր նկարագիրը

Մարզի աշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ գտնվում է մայրաքաղաք Երևանի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթի՝ Արագածի միջև: Կիսաօղակաձև գոտևորելով Արագած լեռնազանգվածը՝ մարզի տարածքը արևմուտքում ձգվում է մինչև Թուրքիայի հետ պետական սահմանը (35 կմ), հյուսիսից սահմանակից է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ ՀՀ Կոտայքի մարզին, հարավ-արևելքից՝ մայրաքաղաքին և հարավից՝ ՀՀ Արմավիրի մարզին:

ՀՀ Արագածոտնի մարզն իր աշխարհագրական դիրքով, տնտեսական և քաղաքական, պաշտպանական նշանակությամբ, բնակլիմայական

պայմաններուվ միշտ էլ կարևոր դեր է ունեցել հայոց պատմության բոլոր ժամանակներում:

Մարզում պահպանվել են դեռևս նախնադարյան մարդու բնակության, կիկլոպյան ամրոցների հետքեր, պաշպանական ու պաշտամունքային հնադարյան բազմաթիվ կառույցների մնացորդներ:

Մարզը գտնվում է Արագած լեռնազանգվածի լանջերին, իր մեջ ներ է առնում նաև Փամբակի ու Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև ընկած տարածքը:

Այնտեղ մարդու կենսագործունեության, հատկապես տնտեսության վարման համար բավարար պայմաններ կան: Եվ պատահական չէ, որ պատմության բոլոր ժամանակներում մարզի տարածքը միշտ իրեն է գրավել ոչ միայն ժողովրդի հոծ բազմություններ, այլև եղել է հայոց արքունական եւ ամառանոցային և որսորդական տարածք:

ՀՀ Արագածոտնի մարզը հիմնադրվել է 1996 թվականին: Մարզի տարածքը 2 756 քառ.կմ է:

ՀՀ Արագածոտնի մարզն ընդգրկում է Աշտարակ, Ապարան, Արագած և Թալին



տարածաշրջանները: Բնակչության թվաքանակը 2019 թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 161774 մարդ: Մարզում կա 72 համայնք: ՀՀ մարզերի շարքում տարածքի մեծությամբ միջին տեղ է գրավում, իսկ բնակչության թվով գերազանցում է միայն ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Տավուշի մարզերին:

Մարզի հարավում լեռնալանջերը ձուլում են Արարատյան դաշտին, հյուսիսում ձգվում են մինչև Արագածի լեռնագագաթը: ՀՀ Արագածոտն մարզը ՀՀ այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները (950 մ-ից մինչև 4090 մ բացարձակ բարձրությունները): ՀՀ Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի

Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090 մ) և Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ), Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները: Մարզի ռելիեֆը գրավիչ է ինչպես դահուկային սպորտի, այնպես էլ լեռնագնացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար: Մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ:

ՀՀ Արագածոտնի մարզում աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Արագածոտնի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Արագածոտնի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր:



Սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

1.1.2) Եղիպատրուշ գյուղի վերաբերյալ ակնարկ

Խորհրդային Միության տարիներին գյուղն անվանվել է Մռավյան՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության քարտուղար Ասքանազ Մռավյանի պատվին: Եղիպատրուշ է վերանվանվել 1991 թվականին՝ պատմաբան, Ապարանի շրջխորհրդի պատգամավոր Տիգրան Պետրոսյանցի և գյուղի դպրոցի նկարչության ուսուցիչ, Ապարանի շրջխորհրդի պատգամավոր Սաղաթել Աշոտի Հովհաննիսյանի (հետագայում եղել է դպրոցի տնօրեն) նախաձեռնությամբ: Եղիպատրուշ նշանակում է՝ չհասած ցորենի հասկ:

Գյուղը հազարամյակների պատմություն ունի: Գյուղի ձախակողմում գտնվող ձորակի երկու կողմերում, շինարարական աշխատանքներ կատարելիս, բացվել են մ.թ.ա. 3-րդ-2-րդ հազարամյակների դամբարաններ, գտնվել են այդ ժամանակահատվածի կավե ամաններ և զարդեր: IV-V դարերում տարածաշրջանի տերերը՝ Գնթունիները այստեղ, ներկա գերեզմանոցի արևմտյան եզրին, կառուցել են մեծ բազիլիկ տիպի եկեղեցի, որի հյուսիսային պատի մի հատվածը պահպանվել է առ այսօր: Եկեղեցու մոտ կան մի քանի VII-VIII դարերի խաչքարեր:

Եղիպատրուշ եկեղեցի

696 թվականին այս գյուղում է ծնվել Ամենայն Հայոց կաթողիկոս Եսայի Ա Եղիպատրուշեցին: Գահակալել է 775-788 թվականներին: Գյուղի անվան հիշատակությունն էլ վերաբերում է հենց այդ կաթողիկոսին և պատմագրության մեջ հիշվում է մինչև 1644 թվականը: Նրա ժամանակներում գյուղի կենտրոնական մասում կառուցվել է ընդարձակ պալատ, որի պատերից մեկի որոշ հատվածը ներկայումս գյուղացիներից մեկի պարսպի մաս է կազմում: 13-րդ դարի սկզբներին այստեղ շինարարական գործունեություն են ծավալել տարածաշրջանի նոր տերերը՝ Վաչուտյանները: Քուրդ Ա Վաչուտյանը և իր կին Դսեղի Գրիգոր Մամիկոնյան-Համազասպյանի դուստր Խորիշահ իշխանուհին կառուցել են Թորոս Թորամանյանի բնորոշմամբ ժամանակաշրջանի լավագույն կենտրոնագմբեթ կաթողիկե եկեղեցին և գավիթը: Եկեղեցին և գավիթը մեր օրերն էին հասել կիսավեր վիճակում: 1980-1988 թվականներին Հուշարձանների պահպանության հայկական ընկերությունն ամբողջովին վերականգնեց կաթողիկե եկեղեցու փլված գմբեթը, ամբողջ պարագծով ամրացրեց գավթի պատերը, սակայն հետագա աշխատանքները՝ գավթի կտուրի վերականգնումը կիսատ մնաց անհրաժեշտ գումարների բացակայության պատճառով: Ամենայն հավանականությամբ եկեղեցին կառուցել է Վաչուտյանների տոհմական ճարտարապետներից Մխիթարիչ Օշականցին: Նա նույն տոհմի մեկ այլ ճարտարապետի՝ Տեղերը կառուցած Աղբայրիկի ժամանակակիցն է:

Միայն Տեղերի և Եղիպատրուշի եկեղեցիների գավիթների կտուրների վրա են զանգակատուն-եկեղեցիներ կառուցված (երրորդ հարկ): Ընդ որում, Տեղերում երրորդ հարկի զանգակատները կառուցվել են գավթի կտուրին շքաղաղան կողմից, իսկ Եղիպատրուշում՝ գավթի և կաթողիկե եկեղեցու միացման մասում, գավթի կտուրի երկու անկյուններում, կրկնահարկ ավանդատուն-խորանների վրա: Կառուցողական այս նորույթը երկու եկեղեցիների համար մնացել է եզակի: Միայն եկեղեցին կառուցող ճարտարապետին էր իրավունք վերապահվում եկեղեցու մոտ խաչքար կանգնեցնել: Եկեղեցուց հարավ վեհորեն կանգնած են մոտ 3,5 մետր բարձրությամբ երկու որմնափակ խաչքարեր: Խաչքարերից յուրաքանչյուրի նախշերը տարբեր են, դրանց փոսիկները ներկված են եղել գորշ կարմիր գույնով: Այժմ գույները խամրել են, և դրանց հետքն է միայն նախշափոսերի մեջ մնացել: Որմնափակ խաչքարերի գլխամասային կապող քարի վրա փորագրված է. «զՄխիթարիչս Աւշականեցի որ ձեվայցուց յիշէ»: «Ձևայցուց» բառը այստեղ գործածվել է նախագծող-ձևող-քանդակողի իմաստով:

Կաթողիկե եկեղեցու, ինչպես նաև գավթի պատերին շինարարական որևէ արձանագրություն չի պահպանվել: Այդպիսին թերևս փորագրված է եղել կաթողիկե եկեղեցու մուտքի բարավորին է, սակայն ճակատակալ քարը ամբողջովին քայքայվել է և միայն արձանագրության առաջին երկու տողերի վերջին մեկերկու տառերն են երևում: Նման պայմաններում դժվար է որոշակիորեն նշել կառուցման ժամանակը: 13-րդ դարի այս եկեղեցական համալիրի կառուցման ժամանակը ճշտելուն կարող է օգնել սկզբնապես կաթողիկե եկեղեցու հարավային դրսի պատի երեք քարերի վրա փորագրված արձանագրությունը, որի առաջին մասը պարունակող երկու քարերը այժմ գտնվում են կաթողիկե եկեղեցու ներսում: Արձանագրությունը փորագրվել է ՈՃԷ (1208) թվականին: Թվագրված արձանագրությունը թույլ է տալիս ասելու, որ կաթողիկե եկեղեցին կառուցվել է 13-րդ դարի 10-20-ական թվականներին: Արագածոտնի, Նիգի տեր, Վաչուտյան իշխանական տան հիմնադիր Վաչե Վաչուտյանի օրոք: Այս կառույցների վրա կատարված հավելումները՝ գավիթների ծածկերի վրա կառուցվել է զանգակատունը:

Եղիպատրուշի X-XIII դարերի եկեղեցու գավթի ցուցանակը

գյուղ Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից 10-12 կմ հարավ-արևելք: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 40 կմ, մայրաքաղաքից՝ 60 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: Գյուղը գտնվում է Ապարանի ջրամբարի հարավ-արևելյան մասում, Երևան-Ապարան խճուղուց դեպի աջ՝ մոտ 10 կմ: Վարչական տարածքը՝ 3804.62 հա:

Գյուղը հազարամյակների պատմություն ունի: Եղիպատրուշ է վերանվանվել 1991 թ: Եղիպատրուշ նշանակում է՝ չհասած ցորենի հասկ:

Բնակիչների նախնիների որոշ մասը գաղթել են Պարսկաստանից և Ալաշկերտից:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 01.01.2019թ. տվյալների՝ Եղիպատրուշ բնակավայրի բնակչությունը կազմում է 735 մարդ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Տները քարաշեն են: Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 28.08 հազ. մ^2՝ բաղկացած 180 անհատական բնակելի տներից:

Ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն /չի շահագործվում/, գրադարան:

Դպոցն ունի 1221 աշակերտ:

Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր: Զբաղվում են դաշտավարությամբ, մշակում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Ոռոգելիքային (պահուստի համար նախատեսված) հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 70%, որոնց մեջ մեծ է վարելահողերի և արոտավայրերի բաժինը: Զբաղվում են անասնապահությամբ, բուծում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ:

Գյուղն ունի 20 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 719 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 1060 գլուխ, խոզերինը՝ 66 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Տարի	Բնակչություն
1831	252 մարդ
1897	1091 մարդ
1926	1070 մարդ
1939	1170 մարդ
1959	672 մարդ
1970	795 մարդ
1979	677 մարդ
1989	585 մարդ
2001	739 մարդ
2004	725 մարդ

2011	819 մարդ	

Գյուղի ձախակողմում գտնվող ձորակի երկու կողմերում, շինարարական աշխատանքներ կատարելիս, բացվել են մ.թ.ա. 3-րդ-2-րդ հազարամյակների դամբարաններ, գտնվել են այդ ժամանակահատվածի կավե ամաններ և զարդեր:

696 թ. այս գյուղում է ծնվել Ամենայն Հայոց կաթողիկոս Եսայի Ա Եղիպատրուշեցին: Գահակալել է 775-788 թվականներին: Գյուղի անվան հիշատակությունն էլ վերաբերում է հենց այդ կաթողիկոսին և պատմագրության մեջ հիշվում է մինչև 1644 թվականը:

Գյուղի մեջ է գտնվում 13-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցին, իսկ դեպի արևելք՝ 4-5-րդ դարերի Եղիպատրուշի վանքը (Մռավյան):

1.1.3)Բնակչությունը

Բնակիչների նախնիների որոշ մասը գաղթել են Պարսկաստանից և Ալաշկերտից: Եղիպատրուշի ազգաբնակչության փոփոխությունը.

1.2. Տնտեսություն

Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, գրադարան, կինո, բուժկայան:

1.3. Պատմամշակութային կառույցներ

Գյուղի մեջ է գտնվում XIII դարի կաթողիկե եկեղեցիական համալիրը (Սուրբ Աստվածածին եկեղեցի և գավիթ), իսկ դեպի արևելք՝ IV-V դարերի Եղիպատրուշի եկեղեցին (Մռավյան):

1.4. Բնակլիմայական պայմաններ

1.4.1) Կլիմայական պայմաններ

Մարզն աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների բազմազանությամբ: Ըստ բարձրության տարեկան միջին ջերմաստիճանը և տեղումների քանակը խիստ տարբեր են:

Կլիմայական տեսակետից Եղիպատրուշ գյուղի տարածքը գտնվում է մեղմ ցուրտ, անբավարար խոնավ գոտում, որին բնորոշ է տաք երկարատև ամառ և ցուրտ ձմեռ:

Ձմեռը երկարատև է: Ձյան ծածկույթի կայունությունը պահպանվում է մոտ 3-4 ամիս: Ձյան ծածկույթի հզորությունը հունվար ամսին հասնում է մինչև 60սմ-ի: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է -5-ից մինչև 9.6°C, նվազագույն ջերմաստիճանը -35-ից մինչև -41°C:

Գարունը հով է և երկարատև, սկսում է մոտավորապես ապրիլ ամսվա երկրորդ կեսից և վերջանում է հունիս ամսվա երրորդ կեսին կամ երրորդ տասնօրյակի վերջում: Մայիսը տարվա ամենաանձրևոտ ամիսն է: Ամսվա տեղումների գումարը տատանվում է 70-100մմ սահմաններում: Ողջ գարնանային ցրտահարություններն ընդհատվում են մայիսի երկրորդ կամ երրորդ տասնօրյակին, սակայն որոշ տարիներ ցրտահարությունները տեղի են ունեցել անգամ հունիսի երկրորդ կեսերին:

Ամառը մեղմ շոգ է և տևում է երեք ամիս՝ հունիս, հուլիս, օգոստոս. գերակշռում են պարզ եղանակները:

Օդի միջին ջերմաստիճանը հուլիս ամսին տատանվում է 13-17°C սահմաններում, առավելագույնը աճում է մինչև 31°-32°C: Ամսվա տեղումների քանակը տատանվում է 30-70մմ-ի սահմաններում:

Աշունը հով է: Աշնանային առաջին ցրտահարությունները միջին հաշվով լինում են հոկտեմբերի առաջին և երկրորդ կեսերին, սեպտեմբերի առաջին տասնօրյակում:

Անսառնամանիք ժամանակաշրջանի տևողությունը կազմում է 120-150օր:

Մակերևույթի բարձրությունների մեծ տատանումների շնորհիվ մեծ են ցածրադիր և բարձրադիր մասերի կլիմայական պայմանների տարբերությունները: Արագածի գագաթամերձ շրջանում տեղումները տարեկան հասնում են 850-900 մմ, իսկ համեմատաբար ցածրադիր (1000 մ) բարձրություններում՝ 300մմ: Եթե տարվա ամենատաք ամսվա՝ հուլիսի միջին ջերմաստիճանը լեռան ստորոտում լինում է 24°C-ից ոչ պակաս, ապա բարձր լեռնային գոտում չի բարձրանում 6°C-ից: Արագածի մերձգագաթային հատվածում նույնիսկ ամռանը կարելի է հանդիպել ձնաբծերի:

Արարատյան դաշտավայրին հարող հատվածներում ամռանը տաք է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ: Այստեղ լավ պայմաններ կան ջերմասեր մշակաբույսերի՝ խաղողի, ծիրանի, դեղձի, բանջարանոցային եւ բոստանային մշակաբույսերի մշակության համար: Դրանք մշակվում են Աշտարակի ողջ տարածաշրջանում և Թալինի տարածաշրջանի հարավ-արևմտյան հատվածում: Թալինի տարածաշրջանի հյուսիսային հատվածը, Ապարանի եւ Արագածի տարածաշրջանները հարմար են հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի մի քանի տեսակների արտադրության համար: Բնական լանդշաֆտային գոտիներից մարզում հանդիպում են կիսաանապատային, չոր լեռնատափաստանային, ալպյան և նիվալ գոտիները[32]:

1.4.2) Բնական պայմանները և հարստությունները

Արագածոտնի մարզն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիս-արևմտյան մասը (950 մետրից մինչև 4090 մ բացարձակ

[32] Մանրամասն տրված են Հավելված 1-ում

բարձրությունները)։ Հարավում լեռնալանջերը ձուլում են Արաքսյան դաշտին, հյուսիսում ձգվում են մինչև Արագածի լեռնագագաթը։

Մարզի մակերևույթի մեծ մասը կազմված է տարբեր տիպի ու բնույթի երիտասարդ հրաբխային լավաներից։ Այստեղ են գտնվում Թալինի, Կարմրաշենի, Ապարանի սարավանդները, որոնց մակերևույթին բնորոշ են խարամային կոները, տուֆային դաշտերը, քարակարկառները։ Այստեղ է գտնվում Փոքր Սիփան լեռը (հայտնի է նաև որպես Սիփան)։

Բարձրալեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ, որոնք հաճախ ընդմիջվում են քարակարկառներով ու լերկ ժայռերով։ Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ անտառակներ։

Մարզի ռելիեֆը գրավիչ է ինչպես դահուկային սպորտի, այնպես էլ լեռնագնացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար։

1.4.1.1) Կլիմայաբուժության պայմաններ

Մարզի հյուսիսային մասը՝ Արագածոտնի տարածքը, բարձր լեռնային է, աչքի է ընկնում արևափայլ մեծ տևողությամբ (2360 ժամ/տարի)։ Տարեկան միջին ջերմաստիճանը 3.3o, օդի խոնավությունը 75%, տեղումների քանակը՝ 535մմ։

Ապարանի տարածքը նույնպես աչքի է ընկնում արևափայլի տևողությամբ (2396 ժամ/տարի), որի առավելագույն քանկը դիտվում է հուլիսին (308 ժամ), նվազագույնը՝ հունվարին (86 ժամ)։ Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 651մմ, առավելագույնը դիտվում է գարնանը (204մմ)։

Ամառային եղանակների բնույթը (արևափայլի տևողությունը, մթնոլորտի թափանցիկությունը, մաքուր թթվածնով հագեցած օդը) ստեղծում է օպտիմալ պայմաններ կլիմայաբուժության համար։ Բացակայում են շատ շոգ եղանակները, ամպամած և անձրևային օրերի թիվը նվազագույն է։ Սկսած հունիս ամսից մինչև սեպտեմբեր կարելի է կազմակերպել կլիմայաբուժություն։ Սահմանափակող գործոն է քամիների առկայությունը (2.0-2.8մ/վրկ), որի ազդեցությունը, կարգավորող միջոցառումներով վերացնելուց հետո, կլիմայաբուժության հարմարավետության պայմանները (ԷԷՋ՝ 16°C-22°C) մեծանում են և կազմում ամիսը 18-20 օր ամառային ժամանակահատվածում։

Ամառային կլիմայաբուժության կազմակերպման համար ակտիվ գործոն է նաև Ապարանի ջրամբարի առկայությունը։

Ձմեռային ամիսներն աչքի են ընկնում նշանակալի սառնամանիքային (միջին օրական ջերմստիճանը՝ -12.5°C-ից մինչև -22.5°C) և սառնամանիքային (միջին օրական ջերաստիճանը -2.5°C-ից մինչև -12.5°C) եղանակների կրկնությամբ (ամսական 15-20օր), մեծ է ձմռանը թթվածնի կշռային քանակը (240գ/մ^3)։ Ձմեռային եղանակները սահմանափակում են այդ ժամանակահատվածում կլիմայաբուժության կազմակերպման պայմանները։

1.4.2.2) Ռելիեֆի նկարագիրը

Ապարան քաղաքի և կից բնակավայրերի տարածքը տեղադրված է Արագած լեռան հարավային փեշերին. Քասախ գետի վերին հոսանքում, բացարձակ բարձրությունները տատանվում են 1880-1942մ (ներառած արտադրական գոտին), միջին բարձրությունը 1891մ է։

Տարածքը հյուսիսից եզրափակված է Փամբակի լեռնաշղթայի լանջերով, արևելյան կողմը՝ Ծաղկունյաց լեռնաշղթայով, իսկ արևմտյան և հարավարևմտյան կողմից Արագած լեռան թեք լանջերով։ Փամբակի լեռնաշթայի լանջերը տարբերվում են համեմատաբար ցածր հարաբերական բարձրություններով և մեղմ լանջերով, իսկ Ծաղկունյաց լեռնաշղթայի

լանջերը ենթարկվում են ինտենսիվ ֆիզիկական հողմահարման: Արագածի նախալեռներն ունեն կտրուկ արտահայտված բլրակաձև ռելիեֆ: Այդ ռելիեֆը ձգվում է մինչև Քասախ գետի հարթավայր, որտեղ մոտակա լճերի հետ շփումից առաջանում են Ապարանի հզոր աղբյուրները: Տարածքի մակերևույթը լի է խոշոր քարերի կույտերով և բլրակներով: Քասախ գետն, անցնելով քաղաքի տարածքով, սկիզբ է առնում առվակներից, որոնք հոսում են Արագած լեռան հյուսիսարևելյան լանջից և Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջից: Գետի ակունքից մինչև Ապարան ընկած հունը 8 ամսվա ընթացքում չոր է, իսկ քաղաքի հատվածից, որը գտնվում է Ապարանի հզոր աղբյուրներից ներքև, գետն ունի անընդհատ հոսք: Գետն առուների տարածքում ունի խորը և նեղ հուն: Ապարանից փոքր-ինչ հյուսիս ձորն ավարտվում է և դառնում հարթավայր: Գետի սնուցումը խառն է՝ առվակներ, ձյուն և անձրև: Գետը և նրա առվակները տարբերվում են զուտ արտահայտված գարնանային ձնհալքերի վարարումներով տարվա մնացած եղանակներին: Վարարություն սկսվում է ապրիլի կեսերից և շարունակվում է մինչ հուլիս ամիսը, ձնհալքը տևում է մոտ 4 ամիս:

Գետի բարձրադիր մասում նոյեմբերի վերջում և դեկտեմբերի սկզբում առաջանում են ափասառույցներ, իսկ հունվարին և փետրվարին գետը ծածկվում է սառույցի բարակ շերտով: Գետի տարիների միջին օգտագործումը Ապարանի տարածքում կազմում է 0.7մ^3/վրկ:

14.2.3) Զբոսաշրջության ռեսուրսները

Արագածոտնի մարզը հարուստ է զբոսաշրջության ռեսուրսներով, բազմաբնույթ պատմամշակութային, բնական հուշարձաններով, ինչպես նաև ձմեռային սպորտի կազմակերպման հնարավորություններով: Մարզում բարենպաստ են ձմեռային սպորտի (լեռնադահուկային սպորտ, ալպինիզմ) կազմակերպման պայմանները՝ հիմնականում Արագածի լանջերին, Ապարանի, Թալինի սարահարթերում:

Մարզի տարածքով մեկ ցրված են միջնադարյան բազմաթիվ կառույցներ՝ կանգուն կամ ավերակ վիճակում: Հայտնի են հատկապես Ամբերդը, Թալինի, Սաղմոսավանքի, Աշտարակի եկեղեցիներն ու վանքերը:

«Քասախի կիրճ» բնապատմական հուշարձանը գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում:

Քասախի կիրճի համայնապատկերը Սաղմոսավանքի մերձակա տափարակից

1.4.3) Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները:

Արգելավայրեր

Հայաստանում ներկայումս գործում են 27 արգելավայրեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 114812.7 հա կամ հանրապետության տարածքի 3.95 %-ը:

Մարզի տարածքում է գտնվում «Արագածի ալպյան» արգելավայրը և 23 բնության հուշարձաններ:

«Արագածի ալպյան» արգելավայրը բնության հատուկ պահ պանվող տարածք է, Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 300 հա տարածք: Գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Արագած լեռնազանգվածի 3200-3500 մ բարձրություններում:

Ստեղծվել է սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը (Հիմք ընդունելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրքը:

Երկրաբանական հուշարձաններ

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան

	աշտարակ	հրաբխի խառնարանում
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին
10.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ

Ջրաերկրաբանական հուշարձաններ

1.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870 մ բարձրության վրա
2.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
3.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա
4.	«Ձաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

1.	«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
2.	«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
3.	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
4.	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ

Բնապատմական հուշարձաններ

1.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
2.	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
3.	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին
4.	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
5.	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

1.5. Ջրային պաշարներ

Մարզի ջրային պաշարները գոյանում են Արագած լեռան ձնահալոցքից, տեղումներից և բնական աղբյուրներից: Մարզում բազմաթիվ են լավային ծածկույթների

տակից բխող սառնորակ աղբյուրները: Ջրային պաշարներից սնվում են Ապարան-Երևան և Ապարան-Սպիտակ ջրատարները:

Մարզի հիմնական զարկերակը Քասախ գետն է՝ երկարությունը 89 կմ, ավազանի մակերեսը՝ 1480 քառ. կմ, Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով: Մարզի տարածքով են հոսում նաև Հալավար, Գեղաձոր (երկարությունը 34 կմ է, ջրհավաք ավազանը՝ 144 քառ. կմ), Շահվերդ, Ամբերդ և Գեղարոտ գետերը:

Կան շատ հեղեղատարեր (նշանավոր է Մաստարայի հեղեղատարը): Մարզի տարածքով է անցնում Արզնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի, Սաբունչիի ջրամբարները: Ամենամեծը Ապարանի ջրամբարն է. մակերեսը 7.0 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ/խ, օգտակարը՝ 81 մլն.մ/խ, ջրթողունակությունը վայրկյանում՝ 18 խորանարդ մետր:

Մարզում առկա ոռոգման ջրի ծավալը տարեկան կազմում է մոտ 520 մլն.մ/խ:

Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ոռոգման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85 մլն.մ/խ, առկա քանակության 16%-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս գալիս մարզի տարածքից:

1.6. Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները

Լիթոլոգիական տեսակետից ընդհանրացված տեսքով համայնքի տարածքում առկա են հետևյալ երկրաբանական շերտախմբերը՝

ա. Ալյուվիալ, էլուվիալ, դելյուվիալ, պրոլյուվիալ լճա-գետային և ֆլյուվոգլացիալ առաջացումներ

բ.Խոշորաբեկոր ճալաքարային և ճալաքարա-կոպճային գրունտներ մինչև 40% ավազային լցանյութով: Պարունակում են նաև գլաքարեր:

գ.Խոշորաբեկոր խճային և մանրախճային գրունտներ ավազակավային լցանյութով: Պարունակում են նաև խոշոր բեկորներ:

դ.Ենթակավեր գորշ գույնի, պինդ կամ կիսապինդ, կարբոնատացված, խճի և մանրախճի պարունակությամբ:

ե.Կավային գրունտներ, գորշ գույնի, պինդ կամ կիսապինդ, կարբոնատացված, խճի և մանրախճի պարունակաությամբ:

զ.Միկրոկոնգլոմերատներ, ավազաքարեր

է.Ժայռային ապարներ

ը.Անդեզիտաբազալտներ, դացիտներ, լիպարիտադացիտներ, պեռլիտներ, օբսիդյաններ, պեմզաներ, հրաբխային, հրաբխա-նստվածքային, տերրիգեն-կարբոնատային, ինտրուզիվ և մետամորֆային ապարներ:

թ.Պորֆիրիտներ, տուֆաբրեկչիաներ, տուֆոկոնգլոմերատներ, տուֆոավազաքարեր, ֆելզիտային տուֆեր, գրանոդիորիտներ, դիաբազային պորֆիրներ և այլն:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի ստորգետնյա ջրերը տեղադրված են մակերեսից 100մ – ից խորը հորիզոնների վրա:

1.6.1)Ֆիզիկա-աշխարհագրական և տեխնածին պայմանները

Ուսումնասիրված տարածքը գտնվում է Երևան քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք

54կմ հեռավորության վրա, նկար 1: Տեղադրված է Արագած լեռան հարավ-արևելյան լանջին, Փամբակ գետի ավազանի միջին հոսանքում:

Շրջանիկլիման խիստ ցամաքային է: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է ամռանը՝25-260C, ձմռանը 6-70 C: Օդի միջին հարաբերական խոնավությունը 70%: Տարեկան տեղումների քանակը 800մմ մեկ տարում:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևութային համատարած լվացումով մակերևութային տեղումներով:

Ուսումնասիրված տարածքում տեխնածին երևույթները բացակայում են:



Նկար 1. Եղիպատրուշ համայնքի տեսածիրային քարտեզ

1.6.2) Տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները

Համայնքի տարածքի ռելիեֆը հյուսիս-արևելյան, արևելյան, հարավ-արևելյան հատվածում գեոմորֆոլոգիական տեսակետից համեմատաբար թեք են, հյուսիսային, արևմտյան, հարավ-արևմտյան և կենտրոնական հատվածները համեմատաբար հարթ են:
Տարածքում կարելի է առանձնացնել գեոմորֆոլոգիական երեք էլեմենտներ՝

Հարթ տարածքներ, մակերևույթի թեքությունը չի գերազանցում 100:

Թեք լանջեր, մակերևույթի թեքությունը 100 - 150:

Ձորակներ, ողողահուներ

Աշխատանքների արդյունքները

Ինժեներա-երկրաբանական շրջանացման քարտեզի վրա ներկայացված են գեոմորֆոլոգիական պայմանները, գրունտների լիթոլոգիական առանձնահատկությունները, ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները:
Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնույթից, ինչպես նաև հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից, ուսումնասիրվող տարածքում առանձնացվել են երեք ինժեներա-երկրաբանական շրջաններ՝ բարենպաստ, պայմանական բարենպաստ և անբարենպաստ:

1.7. Ջրագրություն

1.7.1) Գետեր

ա.Բազմաթիվ են լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները, որոնցից սնվում են գետակները: Մարզի հիմնական զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարոտ

և Ամբերդ գլխավոր վտակներով: Հայտնի է Մաստարայի սելավային գետակը, որը հաճախ վարարելով մեծ վնաս է հասցնում ցանքատարածություններին:

1.7.2) Լճեր, ջրամբարներ

ա.Ամբերդ, լճակ Հայաստանում, Արագած լեռան մնրձկատարային սարավանդի հարավային–արևմտյան մասում: Բարձրություն 3220 մ, երկարություն 150 մ, լայնություն 148 մ, մակերեսլ՝ 0,17 քար. կմ, ջրի ծավալը՝ 11700 խորանավտ մ, խորությունը՝ 1,7 մ: Սնումը ձնաանձրևային է: Ջմռանը ամբողջությամբ սառչում է: Ջուրը մաքուր է, սառնորակ և անուշահամ: Ամբերդ լճի ափին են գտնվում Հայաստանի ԱԳԱ ֆիզիկայի ինմտիտուտի հետազոտությունների կայանը՝ իր ավանով:

բ.Ամբերդալիճ, **Ամբերդ, Բագու, Բակու, անհոսք լիճ է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Բյուրականից մոտ 2,1 կմ հյուսիս-արևմուտք՝ Արագած լեռան հարավարևմտյան մերձկատարային սարավանդին: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:**

Բարձրությունը՝ 3220 մ, երկարությունը՝ 150 մ, լայնությունը՝ 148 մ, մակերեսը՝ 0,17 կմ², ջրի ծավալը՝ 11700 մ³, խորությունը՝ 1,7 մ է: Սնումը ձնաանձրևային է: Ձմռանը ամբողջությամբ սառցակալվում է: Լճի ջուրը մաքուր է ու անուշահամ, օգտագործվում է արոտային շրջանում անասուններին ջրելու համար: Լճի ափին է գտնվում Նոր Ամբերդի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը:

գ.Լեսինգ, **անհոսք լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հյուսիս–արևմուտք, Արագածի արևելյան գագաթից 3 կմ հյուսիս.-արևելքում՝ 3300 մ բարձրության վրա:**

Առաջացել է սառցադաշտային կառի հատակում՝ մորենային արգելափակման հետևանքով: Մակերեսը 0,016 կմ² է, առավելագույն խորությունը՝ 2,5 մ, ջրի ծավալը՝ 18800 մ³: Ջուրը մաքուր է, սառնորակ: Ամռանը ջրի ջերմաստիճանը 9 °C է: Սնումը հալոցքային է: Կոչվել է ի պատիվ ակադեմիկոս Ֆրանց Յուլի Լեվինսոն-Լեսինգի, որը 1927-1929 թվականներին ղեկավարել է ԽՍՀՄ ԳԱ անդրկովկասյան արշավախմբերի աշխատանքները Արագածում և Սևանա լճի ավազանում:

դ.Կուրաղբյուր, **Քուրքուլաղ լիճ, լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արագած լեռան հյուսիսարևելյան լանջին, ծովի մակարդակից 2985 մ բարձրության վրա: Մակերեսը 0,1 կմ²:**

ե.Միրաք, **լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջափնյակում, ծովի մակարդակից 2050 մ բարձրության վրա, Մելիքգյուղից 4 կմ հարավ-արևմուտք: Մակերեսը՝ 0,5 կմ²:**

զ.Ումրոյ լիճ, **լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հյուսիս-արևմուտք, Ապարան քաղաքից 10 կմ հարավ, Արագած լեռնազանգվածի արևելյան լանջին., ծովի մակարդակից 3050 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 20 հա:**

Գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:

Է.Քարի լիճ, Կարագյոլ, Ղարագյոլ, Սև լիճ, Քար, Քար լիճ), լիճ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արագած լեռան լանջին: Բարձրությունը ծովի մակերևույթից 3207 մ է, հայելու մակերեսը 0,12 կմ²: Բյուրականից Քարի լիճ երթևեկելի ճանապարհ կա, իսկ արևելյան ափին օդերևութաբանական կայան է տեղակայված, կազմակերպված է հանգստի գոտի:

Քարի լիճը գտնվում է Արագած լեռան վրա, բացարձակ բարձրությունը՝ 3207 մ, հայելու մակերեսը՝ 0,12 կմ², խորությունը՝ 8 մ: Առաջացել է սառցե գոյացություններից: Լիճը երկարատև շրջապատված է լինում ձյունով, ինչի պատճառով ջուրը բավականին սառն է մնում: Քարի լճի արևմտյան ափից սկիզբ է առնում Արքաշեն գետը:

Լճի հարավային ափին է գտնվում Երևանի ֆիզիկայի ինստիտուտի Առաջնային տիեզերական ճառագայթների գրանցման ու հետազոտման կայանը, որը 1942 թվական հիմնել են Արտեմ Ալիխանյան և Աբրահամ Ալիխանով եղբայրները:

Կայանի ջրամատակարարումն ապահովելու նպատակով լճի հարավային արտահոսքը փակվել է բետոնե պատով, որի հետևանքով բարձրացել է լճի մակարդակը, ձմռանը չի սառցակալում մինչև հատակը, իսկ գարնանն ամբարված ջուրը բավարարում է կայանի կարիքները ողջ տարին: Լճում Իշխան ձուկ կա, որի քանակը տարեցտարի լրացվում է արհեստական բազմացված մանրաձկով:

1.7.1. Ջրամբարներ

ը.Ապարանի ջրամբար, Ապարանի լիճ, արհեստական ջրամբար Հայաստանի Արագածոտնի մարզում, Քասաղ գետի վերին հոսանքում, Քուչակ և Եղիպատրուշ գյուղերի մինջև:

Կառուցվել է 1962-1967 թթ-ին: Մակերեսը 7,9 քառակուսի կիլոմետր է, ընդհանուր ծավալը՝ 91 միլիոն խորանարդ մետր, օգտակարը՝ 81 միլիոն խորանարդ մետր, ջրթողունակությունը վայրկյանում 18 խորանարդ մետր: Ջրամբարի ամբարտակը հողային է, բարձրությունը՝ 50 մ,

երկարությունը՝ 200 մ:

Մնվում է Քասաղ գետի, Լուսագյուղ, Վարդենիս, Թթուջուր, Եղիպատրուշ, Քուչակ գետակների և մթնոլորտային տեղումներից: Ձմռանը սառցակալում է: Օգտագործվում է ոռոգման համար: Ջուրը տրվում է նախկին Աշտարակի, Էջմիածնի շրջաններին: Ջրամբարի հիմնական ակնատեսակը տեղական կողակն է: Այստեղ բուծվել է նաև Սևանա լճի իշխանը, սիգը և ծածանը: Վերջին տարիներին այստեղ բուծվել է նաև խեցգետինը: Շրջակայքում կառուցվել են հանգստյան գոտիներ: Ջրամբարի ջրերի տակ են մնացել Քասաղ, Ջովունի գյուղատեղերը, որոնց բնակիչները վերաբնակեցվել են Երևանի շրջակայքում:

Նախկին Ջովունի գյուղում ջրի սահմանագծից 1967 թ-ին հանվել և անվտանգ տեղ են փոխադրվել V դարում կառուցված Սուրբ Վարդան և Թուխ Մանուկ փոքրաչափ եկեղեցիները: IV դարում կառուցված Պողոս-Պետրոս բազիլիկ տաճարը տարեկան 3-4 ամիս մնում է ջրային տարածքի մեջ:

թ.Կաքավաձորի ջրամբար, Հայաստանի Արագածոտնի մարզում՝ մոտ 2000 մ բարձրության հեղեղատի վրա՝ Թալինից 15 կմ արևելք: Շահագործման է հանձնվել 1986 թվականին: Սնվում է Թալիշ գետի կարգավորված ջրհոսքից: Մակերեսը 0, 14 կմ² է, ջրատարողությունը՝ 1 միլիոն մ³, օգտակարը՝ 0, 95 միլիոն մ³: Հոսքի կարգավորումը սեզոնային է: Պատվարը քարալիցքային է՝ երկաթբետոնե երեսապատումով, երկարությունը՝ 130 մ, բարձրությունը՝ 35 մ: Ջրամբարից ջուրը բաց է թողնվում աշտարակային ջրընդունիչի և խողովակաշարի միջոցով, ջրթողքը 0, 34 մ³/վ է: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ժ.Մելիք գյուղի ջրամբար, Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Հալավար գետի վրա՝ Ծաղկահովիտ գյուղից 8 կմ արևելք՝ մոտ 2030 մ բարձրության վրա: Շահագործման է հանձնվել 1981 թ.-ին: Մակերեսը 0, 46 կմ2 է, միջին խորությունը՝ 8 մ ջրատարողությունը՝ 5, 5 միլիոն մ3: Հոսքի կարգավորումը սեզոնային է: Պատվարը հողային է՝ ավազակավային միջուկով, երկարությունը՝ 255 մ, առավելագույն բարձրությունը՝ 32 մ: Ջուրը բաց է թողնվում մետաղական խողովակաշարի միջոցով: Ոռոգվող հողատարածություններն ավելի բարձր են, և պատվարի մոտ կառուցված է ջրհան կայան: Ջրամբարի թասի երկրաբանական անբարենպաստ պայմանների պատճառով տեղի է ունենում ջրի զգալի կորուստ:

ի.Ներքին Սասունաշենի ջրամբար, ջրամբար ՀՀ Արագածոտնի մարզում՝ Ներքին Սասնաշեն գյուղի մոտ՝ 1770 մ բարձրության վրա: Շահագործման է հանձնվել 1963 թվականին: Մակերեսը 0,18 կմ² է, միջին խորությունը՝ 6,5 մ, ջրատարողությունը՝ 1,15 միլիոն մ³, օգտակարը՝ 0,78 միլիոն մ³: Սնումը հիմնականում հալոցքային և անձրևային է: Հոսքի կարգավորումը սեզոնային է: Պատվարը քարալիցքային է, առավելագույն բարձրությունը՝ 20 մ, երկարությունը՝ 150 մ: Ջրթողքը 0,97 մ³/վ է:

1.7.2)ջրանցքներ

ա.ամբերդ, ջրանցք **հայաստանի աշտարակի շրջանում, կառուցվել է 1944-1945 թվականներին: Սկիզբ է առնում Արագած լեռների հարավային լանջերից: Քասաղի վտակ Ամբերդ գետից: Ջրանցքի երկարությունը 9 կմ է, փոխարինում է Ամբերդ գետից առնվող իրար զուգահեռ, հնակառույց 12 առուներին: Երեսպատված է բետոնով: Ունի 5 խորանարդ մ/վրկ թողունակություն: Ոռոգում է 5000 հա հողատարածություն:**

բ.Աշտարակի ջրանցք, ջրանցք ՀՀ Արագածոտնի մարզում: Կառուցվել է 7-րդ դարում: Սկիզբ է առնում Գեղարոտ գետից: Երկարությունը 10 կմ է, ջրթողունակությունը՝ 5 մ³/վ:

Ջրառը կատարվում է պատվարային եղանակով: Ջրանցքի վրա կառուցված են 25 ջրատեխնիկական կառույցներ: Ոռոգում է մարզի հողատարածքները:

գ.Արզնի-Շամիրամ ջրանցք, **Արզնի-Շամիրամ ոռոգման համակարգ, Սևանա լճի և Հրազդան գետի ջրերը օգտագործող ոռոգիչ համակարգ:**

Ոռոգում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի շուրջ 30 հազար հա հողատարածությունները: Մայր ջրանցքը (երկարությունը՝ մոտ 92 կմ) սկիզբ է առնում Արզնիի հիդրոէլեկտրակայանը սնող ճնշման ավազանից և սկզբնամասում ունի 25 մ3/վրկ թողունակություն: Շինարարությունն ավարտվել է 1973 թվականին: Շինարարությունն ավարտվել է 1974-ին: 2010-ականների սկզբին կատարվել էն վերաբորոգման աշխատանքներ: Ջրանցքիհամակարգում կառուցվել է ՓՀԷԿ

դ.Թալինի ջրանցք, **ջրանցք Հայաստանի Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Սկիզբ է առնում Ախուրյանի ձախ ափից: Սնվում է Ախուրյան ջրամբարի ամբարտակված ջրերից[1][2]:**

Առաջին հերթը շահագործման է հանձնվել 1957 թ.-ին, երկրորդը՝ 1974 թ.-ին, երրորդը՝ 1986 թ.-ին: Մայր ջրանցքի երկարությունը 91 կմ է, բաժանարար ցանցինը՝ 118 կմ: Մայր ջրանցքը բաժանվում է աջ և ձախ ճյուղերի: Ջրթողունակությունը 30 մ3/վ է: Ոռոգում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի մոտ 24 հազար հեկտար հողատարածք:

ե.Քասաղի ջրանցք, ջրանցք ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Սկիզբ է առնում Քասաղ գետից: Շահագործման է հանձնվել 1973 թվականին: Մայր ջրանցքը սկսվում է ջրարգելակ-վահան կարգավորիչով, անցնում 2,5 կմ թունելով, Քասաղի կիրճով: Երկարությունը 3,8 կմ է, ջրթողունակությունը՝ 18 մ³/վ: Բաժանվում է ձախ և աջ ճյուղերի: Ձախափնյա ջրանցքը ձգվում է Քասաղից դեպի արևելք, հասնում Ջորավան գյուղի սահմանները: Երկարությունը 8,9 կմ է, ջրթողունակությունը Արզնի-Շամիրամին փոխհատուցող ջրանցքի հետ՝ 16,4 մ³/վ: Կառուցվել է Արզնի-Շամիրամ ջրանցքին լրացուցիչ ջուր (14 մ³/վ) տալու համար: Աջափնյա ջրանցքը դյուկերով անցնում է Քասաղը, ձգվում արևմուտքից մինչև Օհանավան և Ուշի գյուղերի հողատարածքները: Երկարությունը 6,6 կմ է, ջրթողունակությունը՝ 1,65 մ³/վ:

1.7.3)Աղբյուրներ

ա.Գեղաձոր, գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հարավ-արևմուտք, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա: Այն գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:

բ.Սրբի աղբյուր գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Ապարան քաղաքի կենտրոնում, ծովի մակարդակից 1870 մ բարձրության վրա: Այն գրանցված է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:

1.8. Մեյսմատեկտոնական պայմանները

Քանի որ դիտարկվող տարածքը գտնվում է Արագած լեռան հարավային փեշերին, ուստի նրան վերաբերող բոլոր սեյսմատեկտոնական պայմանները համընկնում են լեռան սեյսմատեկտոնական պայմաններին:

ՀՀ Արագածոտն մարզի տարածքը բնութագրվում է համեմատաբար միջին սեյսմիկ



ակտիվությամբ, մարզը գտնվում է 0.2-0.3g առավելագույն հորիզոնական արագացման գոտում՝ ըստ ՀՀ տարածքի սեյսմաշրջանացման քարտեզի.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020 թ. 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04.-երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»՝ որտեղ ներդրված են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 31.03.2021 թ. 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզները:

Երկրի տարածքի առանձին շրջանների սեյսմիկ ազդեցությունների մակարդակը որոշվում է ըստ Հավելվածս 1-ում բերված սեյսմիկ գոտիավորման քարտեզի:

Սեյսմիկ ազդեցությունների ուժգնությունը գետնի մակերևույթի վրա գնահատվում է գրունտի սպասվելիք հորիզոնական արագացման մեծությամբ:

Տվյալ ուժգնության երկրաշարժերի կրկնողության պարբերականությունը ընդունված է հավասար 475 տարվա՝ 50 տարվա ընթացքում ուժգնության մեծության՝ 10%-ով գերազանցման հավանականությամբ:

Սեյսմիկ գոտիներ

Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնք ցույց են տրված Հավելվածս 1-ում բերված քարտեզում: Գրունտների սպասվելիք հորիզոնական արագացումների մեծությունները, ըստ սեյսմիկ գոտիների, ընդունվում են համաձայն աղյուսակի 1-ի:

Սեյսմիկ գոտիներ	1	2	3
Գրունտի հորիզոնական արագացման մեծությունը **a**, սմ/վրկ^2	300	400	500

Աղյուսակ 1



Հայաստանի Հանրապետության 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում գտնվող բնակավայրերի ցանկը բերված է Հավելվածս 2-ում:

1.9. Լանդշաֆտների դասակարգում և գնահատում

Դիտարկվող տարածքն ընդգրկված է նախալեռնային բնական լանդշաֆտային գոտում: Գոտու տարածքը հիմնականում հարթ է (մինչև 3° թեքություններ): Պասիվ են արտահայտված հիդրոլոգիական պրոցեսները:

Գոտու հողատարածությունները օգտագործվում են և ամբողջապես ծածկված են



հացահատիկի և կերախոտերի ցանքերով:

1.9.1)Հաշվի առնելով միկրոռեգիոնի լանդշաֆտային գոտու միատարրությունը՝ հետագա դասակարգման տաքսոնոմիկ միավոր է ընտրվել լանդշաֆտների քաղաքաշինական օգտագործման հիմնական ձևերը.

ա.կառուցապատված լանդշաֆտներ

բ.կառուցապատման ենթակա լանդշաֆտներ

գ.գյուղատնտեսական նշանակության հողահանդակներ

դ.Անտառտնտեսության հողեր:

1.9.2)Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտների օգտագործման ռեժիմը նախատեսում է.

ա.կառուցապատման կանոնակարգում՝ ըստ բնակչության և կառուցապատման նորմատիվ խտությունների,

բ.գյուղատնտեսական ռեզերվային հողերի կառուցապատում միայն տնամերձ հողամասերով (1200 մ^2 հողաբաժնով),

գ.հարմարավետ կապերի ստեղծում,

դ.ինժեներական նախապատրաստման միջոցառումների կիրառում (ուղղաձիգ հատակագծում, մակերևութային ջրերի հեռացում),

- տարբեր օբյեկտների և ենթակառուցվածքների սանպահպանման գոտիների պահանջների կիրառում:

1.9.3)Գյուղատնտեսական նշանակության հողահանդակների օգտագործման ռեժիմը նախատեսում է միջոցառումների լայն համալիրի կիրառում, որն ընդգրկում է.

1.9.3.1)Ագրոտեխնիկական միջոցառումներ՝

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ			
հ/հ	Բնակավայրը	Առկա 2024թ.* հունվարի 1-ի դրությամբ	Հեռանկարային
1	Եղիպատրուշ	737	808

ա.ցանքաշրջանառության կիրառում,

բ. ցածր արտադրողականության վարելահողերի բարելավում (քարերի հավաքում),

գ. խորը հերկ երեք տարին մեկ անգամ,

դ.պարարտանյութերի օգտագործման չափաբաժինների որոշում, պահեստենրի կառուցում՝ ըստ սանպահպանման ստանդարտների պահանջների,

ե.վնասատուների դեմ պայքարի կենսաբանական մեթոդների կիրառում:

1.9.3.4) Մարգագետնամելիորատիվ միջոցառումներ՝

ա.արոտավայրերի բարելավում, ջրարբիացում,

բ.անասունների արածեցման քանակների և ժամկետների որոշում,

գ.արոտավայրերում ճանապարհային ցանցի կարգավորում,

դ.ոռոգվող խոտհարքների կազմակերպում,

ե. մոլախոտերի, վնասակար և թունավոր բուսատեսակների ոչնչացում:

1.9.3.5)Հիդրոտեխնիկական միջոցառումներ՝

ա.լեռնային առուների կառուցում,

բ. ձյունապահ վահանների ստեղծում:

1.9.4)Անտառտնտեսության հողերում նախատեսվում է.

1.9.4.1) Անտառմելիորատիվ միջոցառումներ

ա. անտառածածկ տարածքների մեծացում՝ տեղական պայմաններին հարմարվող ծառատեսակների ընտրությամբ,

բ. գոյություն ունեցող անտառների բիոնիտետի բարելավում:

1.10. Բնակչություն և ժողովրդագրության վերլուծություն

Արագածոտնի մարզի տարածքը Հայաստանի ամենավաղ բնակեցված շրջաններից է: Դրա վկայությունն են տարբեր վայրերում հայտնաբերված քարի ու բրոնզի դարերի նյութական մշակույթի հուշարձանները: Բնակչությունը ավանդաբար կենտրոնացված է եղել Քասաղ գետի և նրա վտակների միջին ավազաններում:

Արագածոտնի մարզն աչքի է ընկնում նաև նրանով, որ այդտեղ են հիմնականում կենտրոնացված Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններից եզդիները: Նրանք բնակվում են ինչպես խառը՝ հայերի հետ միասին, այնպես էլ առանձին գյուղերով:

ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության մեծամասնությունը կուտակված է Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում, (բնակչության խտությունը կազմել է՝ համապատասխանաբար՝ 89 և 36 մարդ 1 կմ^2), այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 64%-ը, մակերեսով կազմում է մարզի 46.5 %-ը:

1.11.Տրանսպորտ

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության 3 ավտոխճուղիները՝ Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի:

Մարզի տարածքի արևմտյան հատվածը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին՝ շուրջ 30 կմ, որը սակայն չի թողնում էական ազդեցություն մարզի տնտեսական զարգացման վրա:

Մարզի ճանապարհների հասանելիության տեսանկյունից գտնվում է շահեկան դիրքում:

Միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 305.1 կմ, որից՝

1. Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 157.1 կմ,
2. Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 148.0 կմ,
3. Մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 389.4 կմ:

Հիմնովին վերանորոգված միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 76.8 կմ կամ ընդհանուրի 25.2 տոկոսը: Հիմնովին վերանորոգված մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ 42.8 կմ կամ ընդհանուրի 11 տոկոսը:

Անհրաժեշտ է նշել Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման գործընթացը՝ որպես ճանապարհաշինական ենթակառուցվածքների բարելավում, որն էական ազդեցություն կունենա բեռնա և ուղևորափոխադրումների ժամանակի կրճատման, հետևաբար՝ ինքնարժեքի նվազեցման վրա:

Համայնքում առկա են միջպետական՝ 48, հանրապետական՝ 13 և 38 համայնքային նշանակության կամուրջներ:

Մարզի միջպետական նշանակության ճանապարհները համեմատաբար բարվոք վիճակում են:

Միջպետական և մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասն անցնում է ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, երթևեկության տևողությունն էապես ավելանում է:

1.12.Զբոսաշրջություն

Արագածոտնի մարզում առկա է զբոսաշրջության զգալի ներուժ, որը ներկայացված է Արագածոտնի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հատուկ պահպանվող տարածքներով, մասնավորապես՝ բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով: Զարգացման մեծ հնարավորություն ունի ճանաչողական և ընտանեկան տուրիզմը: Մարզի տարածքում գործում են խոշոր հյուրանոցային օբյեկտներ. Աշտարակում՝ «Աշտարակ» հյուրանոցը, Բյուրականում՝ «Ամբերդ» հյուրանոցը և «Հյուսիսային աստղ» հյուրանոց-սպորտային-առողջարանային համալիրը, Արագածում՝ «Արագած» հյուրանոցը, որտեղ ձմեռային տուրիզմի, լեռնագնացության, հանգստի, առողջարարական սպորտի, ալպինիզմի կազմակերպման մեծ հնարավորություններ կան: Մարզը զբոսաշրջիկներին ընձեռում է ինչպես ձմեռային հանգստի, այնպես էլ լեռնագնացության, պատմամշակութային տուրիզմի համադրման մեծ հնարավորություններ:

Զբոսաշրջիկների կողմից հաճախ այցելվող վայրերից են հանդիսանում Տառեր հուշարձանը և Քրիստոնեության ընդունման Խաչ հուշարձանը:

Ագրարային զբոսաշրջությունը ստեղծում է ծառայությունների ոլորտի աշխատատեղեր: Ուստի, ագրարային զբոսաշրջության զարգացումը կարելի է դիտարկել որպես դեգրադացվող, լճացող գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման խթան: Ագրարային զբոսաշրջության ծառայությունների ծրագիրը սովորաբար իր մեջ ներառում է.

1.գիշերակաց հարմարավետ մասնավոր առանձնատներում;
2.էկոլոգիապես մաքուր սննդամթերք;
3.ծանոթացում տարածքի պատմությանը;
4.հավաքչություն շրջակա միջավայրում (սունկ, հատապտուղ, վայրի մրգեր և այլն);
5.մանակցություն ժողովրդական, ազգային ծեսերին;
6.էքսկուրսիաներ:

<u>Ռեսուրսների գնահատական</u>

Ագրոտուրիզմի գլխավոր զբոսաշրջային ռեսուրսը հանդիսանում են.

- հողը,
- ընտանի կենդանիները,
- գյուղատնտեսական ռեսուրսները
- գյուղական բնակավայրերը:

Ագրոտուրիզմը զբոսաշրջության/ժամանակավոր հանգստի տեսակ է, որը կազմակերպվում է հիմնականում գյուղական վայրերում՝ գեղագիտական, ճանաչողական և առողջարարական նպատակներով, որի ժամանակ գիշերակացն իրականացվում է գյուղական բնակչության բնակարաններում, առանձնատներում և օգտվում տվյալ վայրի զբոսաշրջային ռեսուրսներից:

Հայաստանի Հանրապետության տարածքը հարուստ է ինչպես գյուղական ինքնատիպ բնակավայրերով, այնպես էլ պատմա-հնագիտական հուշարձաններով, տեսարժան վայրերով, բնության անկրկնելի տեսարաններով, ռելիեֆային բարդ ու կլիմայական պայմաններով: Այս բոլորը նախադրյալներ են տարածաշրջանում գրեթե ամենուր զարգացնել ագրոտուրիզմը:

Արագածոտնի մարզի ագրոտուրիզմի զարգացման համար առանձնացվում են մի շարք գործոններ.

- տնտեսական,
- էթնիկ,
- բնաաշխարհագրական,
- պատմամշակութային:

Ներկայում Արագածոտնի մարզը ձևավորված է որպես գյուղատնտեսական և լեռնահանքային արդյունաբերության շրջան: Մարզի գյուղատնտեսական մասնագիտացումը ձևավորվել է բնակլիմայական/գոտիական պայմանների ընձեռած հնարավորությունների վրա: Մարզի հարավային հատվածում՝ ***<u>նախալեռնային գոտում</u>***, գերակշռում են.

- բուսաբուծությունը,
- պտղաբուծությունը,
- ալկոհալային խմիչքների,
- պահածոների արտադրությունը (Աշտարակ, Օշական, Արտենի, Ոսկեվազ, Կարբի և այլն):

Գոտին ներառում է Թալինի տարածաշրջանի ցածրադիր հատվածները և Աշտարակի տարածաշրջանը գրեթե ամբողջությամբ: Այստեղ հաջողությամբ իրականցվում են նաև ոչ ավանդական՝ բանջարաբուծության զարգացումը, որը ևս ունի պոտենցիալ հնարավորություն հետաքրքրություն առաջացնել ագրոզբոսաշրջիկների շրջանում:

<u>Բարձրադիր գոտին</u> ընդգրկում է Ապարանի և Արագածի տարածաշրջաններն ամբողջությամբ և Թալինի տարածաշրջանի մի մասը: Տարածաշրջաններին բնորոշ է անասնաբուծության մասնագիտացումը:

Ագրոզբոսաշրջային առումով մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել գյուղմթերքների արտադրության պրոցեսը.

- Կաթնամթերքի (կարագ, կաթնաշոռ և այլն)

- Պանրի (Ապարան, Քուչակ, Ծաղկահովիտ և այլն):
- Մեղվաբուծությունը:

Մարզի տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորվել են նոր ճյուղեր, ինչպիսիք են ճագարաբուծությունը և ջայլամաբուծությունը[33]:

ՀՀ բնակչության ազգային կառուցվածքի վերլուծությամբ Արագածոտնի մարզն առանձնանում է ազգային կազմով: Հայերից բացի բնակչության կառուցվածք զգալի թիվ են կազմում եզդիները: (հանրապետությունում բնակվող եզդիների ավելի քան 4/5 –ը բնակվում են Արագածոտնի մարզում): Եզդիաբնակ գյուղերը տեղակայված են հիմնականում Արագածի և Թալինի տարածաշրջաններում: Դրանց թիվը 13-է՝ Արևուտ, Դմսասար, Թլիկ, Հակո, Կանչ, Սորիկ, Օթևան, Ոյա Թազա, Ալագյազ, Ջամշլու, Միրաք, Շենկանի, Շամիրամ (Աշտարակի տարածաշրջան):

Վերոնշյալ էթնիկ փոքրամասնություններն աչքի են ընկնում ոչ միայն գյուղատնտեսական մասնագիտացմամբ, այլ նաև ազգային սովորույթներով (հարսանիք, թաղման արարողություններ) և խոհանոցով, որը ևս առնձնակի հետաքրքրություն է ներկայացնում ագրոզբոսաշրջության կազմակերպման առումով և կարող է խթան հանդիսանալ զբոսաշրջության զարգացման համար[34]:

Մարզի հայ բնակչության նախնիները գաղթել են 18-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի Սասունի, Մուշի և Ալաշկերտի շրջաններից և մինչև օրս պահպանել են այդ շրջանների ավանդույթներն ու խոհանոցը, սասնա պարերը, երգերը, ասույթները, կենցաղային խաղերը և այլն, որն արժանավայել ձևով փոխանցվում է սերնդեսերունդ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով բնակլիմայական պայմաններով և լեռնագոյացություններով պայմանավորված ռեսուրսները, մարզը՝ վերը նկարագրվածին զուգահեռ օժտված է լեռնադահուկային առողջավայրի ձևավորման մեծ ներուժով: Մայլեռին ներդրումային ծրագիրը մշակվել է հենց մանրամասն հետազոտության արդյունքում՝ հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, ռելիեֆային հնարավորությունները և վերը նկարագրված զբոսաշրջային ռեսուրսների համալիր օգտագործման հնարավրությունները ևս:

1.12.1. Եղիպատրուշ գյուղի հուշարձաններ

Ստորև աղյուսակով ներկայացված է ՀՀ կառավարության կողմից հաստատված գյուղի հուշարձանների ցուցակը:

Հաստատված է

ՀՀ կառավարության 2002 թվականի
մայիսի 29-ի N 628 որոշմամբ

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ց Ու Ց Ա Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
2. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ*
2.40. ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԳՅՈՒՂ

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 1 հզմ	0,3 կմ հվ-աե	Հ	Եղիպատրուշ գետի երկու ափերին

[33] Գրիգորյան Վ.Վ., Ոսկանյան Ա. Ե., Հայաստանի Հանրապետության տնտեսական աշխարհագրություն, Երևան, 2016թ,

[34] Պոտոսյան Ա. Հ., Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Երևան, 2017

2.				ԵԿԵՂԵՑԻ	5 դ.	աե մասում	Հ	
	2.1.			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	5-20 դդ.		S	եկեղեցու շուրջը
		2.1.1		խաչքար	11-12 դդ.		Հ	գերեզմանոցի ամ եզրին, վերին աջ անկյունը՝ կոտրված
		2.1.2		խաչքար	13 դ.		Հ	որմնափակ, կազմող՝ Մխիթար Օշականցի
		2.1.3		խաչքար	13 դ.		Հ	որմնափակ, կազմող՝ Մխիթար Օշականցի
		2.1.4		խաչքար	13 դ.		Հ	երկատված
		2.1.5		տապանաքար	1719 թ.		S	որմնափակ, խաչքարերի մոտ
3.				ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	13 դ.	հվ-աե մասում	Հ	գյուղի եզրին
	3.1.			գավիթ	13 դ.		Հ	կիսավեր
		3.1.1		խաչքար	10 դ.		Հ	հվ պատին, ներքուստ, 3 խաչքարերից կենտրոնականը
		3.1.2		խաչքար	12-13 դդ.		Հ	մուտքից վեր, ձախ կողմում, արտաքուստ
		3.1.3		խաչքար	12-13 դդ.		Հ	հվ պատին, ներքուստ
		3.1.4		խաչքար	12-13 դդ.		Հ	մուտքից վեր, աջ կողմում, արտաքուստ
		3.1.5		խաչքար	12-13 դդ.		Հ	հս պատի մոտ, ընկած
		3.1.6		խաչքար	13 դ.		Հ	մուտքից վեր, հարդարված զույգ խաչով
		3.1.7		խաչքար	16 դ.		Հ	հվ պատի մոտ, ներքուստ, տեղահանված, ստորին մասը՝ կոտրված
		3.1.8		խաչքար	16 դ.		Հ	գավթի սյան մոտ
		3.1.9		խաչքար	16-17 դդ.		Հ	հս պատին, ներքուստ
	3.2.			խաչքար	13 դ.		Հ	Ս. Աստվածածին եկեղեցու հս խաչաթևում, վերնամասը կոտրված
	3.3.			խաչքար	1626 թ.		Հ	աե պատի մոտ, արտաքուստ
4.				ԽԱՉՔԱՐ	10 դ.	գ. մ.	Հ	հս-աե կողմում, «Բանդի» գերեզմանոցի տարածքում
5.				ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	գ. մ.	Հ	հս-աե կողմում, «Բանդի» գերեզմանոցի տարածքում, տեղահանված, խաչի վերին ուղղահայաց թևը վնասված
6.				ՏԱՊԱՆԱՔԱՐ	16-17դդ.	գյուղի հս-աե մասում, «Բանդի» գերեզմանոցում	S	արձանագիր, տեղահանված

1.12.2. Պատմամշակութային հուշարձանների պահպանության միջոցառումներ

Ստորև ներկայացվում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքով սահմանված միջոցառումների ցանկը՝ ուղղված հուշարձանների պահպանությանն ու օգտագործման չափորոշիչներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ո Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
11 նոյեմբերի 1998 թ.

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին

Գլուխ 4. *Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովումը*

Հոդված 15. Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը

Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը ներառում է՝

ա. հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը.

բ. հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը.

գ. պատմամշակութային արգելոցների ստեղծումը.

դ.պատմական բնակավայրերի, դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի կազմումը.

ե. հուշարձանների և դրանց տարածքի պահպանության ապահովումն ու վերահսկումը.

զ. շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների իրականացման ընթացքում հուշարձանների ու դրանց պատմական միջավայրի անվթարության ապահովումը.

է. հուշարձանների պեղումների, ամրակայման, վերականգնման, նորոգման աշխատանքների և օգտագործման կարգերի սահմանումը.

ը.հուշարձանների պահպանության քարոզչությունը:

Հոդված 16. Հուշարձանների տարածքը, պահպանման գոտիները, դրանց կարգավիճակը և օգտագործման ռեժիմը

Հուշարձանի տարածքը իր զբաղեցրած և պատմականորեն ու գործնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքն է:

Հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման, պատմագեղարվեստական արժեքների բացահայտման, նպատակային օգտագործման և բարենպաստ տեսողական ընկալման նպատակով սահմանվում է հուշարձանի պահպանական գոտիների համակարգ և օգտագործման ռեժիմ:

Հուշարձանների պահպանական գոտիների համակարգը կարող է ներառել՝

ա) հուշարձանի պահպանության գոտին.

բ) կառուցապատման կարգավորման գոտին.

գ) լանդշաֆտի պահպանման գոտին:

Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նշված գոտիների տարածքներում հողային, շինարարական և այլ տեսակի աշխատանքների, ինչպես նաև տնտեսական գործունեության իրականացումը կատարվում է լիազորված մարմնի թույլտվությամբ:

Հուշարձանի պահպանական գոտիների տարածքը դասվում է պատմամշակութային նշանակության հողերի կատեգորիային և ունի այդ հողերի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավիճակ և օգտագործման ռեժիմ:

Հուշարձանների տակ գտնվող, ինչպես նաև դրանց պահպանության գոտու և պատմամշակութային արգելոցների հողերը ոչ նպատակային օգտագործման համար հետ վերցնելն արգելվում է: Այդ հողերի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 17. Պատմամշակութային արգելոցները, դրանց կարգավիճակը և գործունեության ռեժիմը

Պատմամշակութային արգելոցները հուշարձանների այն համակառույցները, համալիրներն ու հուշարձանախմբերն են՝ իրենց շրջակա բնապատմական միջավայրով, որոնք պատմական, գիտական, գեղարվեստական, ազգագրական հատուկ արժեք են ներկայացնում:

Պատմամշակութային արգելոցն ստեղծվում է հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների, բնական և պատմականորեն ձևավորված արհեստական լանդշաֆտի, պատմամշակութային համալիրի և դրա պատմական միջավայրի պահպանության նպատակով:

Պատմամշակութային արգելոց ստեղծելու առաջարկությունը Հայաստանի Հանրապետության կառավարություն են ներկայացնում լիազորված մարմինը, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները:

Պատմամշակութային արգելոցի տարածքի հողօգտագործումը կարող է թույլատրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 18. Բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը

Բնության հատուկ պահպանվող տարածքներում հուշարձանների պահպանությունն ապահովում են այդ տարածքները տնօրինող պետական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված տարածքների սահմաններում գտնվող հուշարձաններին և դրանց բնապատմական միջավայրին առնչվող բոլոր աշխատանքները համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Հոդված 19. Հուշարձաններ ունեցող բնակավայրերի հատակագծման, կառուցապատման և վերակառուցման նախագծերի համաձայնեցումը

Հուշարձաններ ունեցող բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների հատակագծման, կառուցապատման և վերակառուցման նախագծային առաջադրանքներն ու նախագծերը համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Պատմականորեն ձևավորված կամ հուշարձաններով հարուստ բնակավայրերի զարգացման ընթացքում հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության համար բարենպաստ պայմաններ ապահովելու, դրանց քաղաքաշինական և գեղագիտական դերը պահպանելու նպատակով և ելնելով նոր կառուցապատում իրականացնելու համար որոշակի պայմաններ սահմանելու նկատառումից՝ կազմվում է բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծ:

Բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագծերի առաջադրանքները կազմում է լիազորված մարմինը և սահմանված կարգով հաստատում պետական կառավարման տարածքային մարմնի հետ համատեղ:

Հոդված 20. Նորահայտ հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը

Պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտն ստանում է նորահայտ հուշարձանի կարգավիճակ և պահպանվում է մինչև հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նորահայտ հուշարձանը տնօրինող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել դրա անվթարությունը, իսկ պետության կողմից այն վերցնելու դեպքում սեփականատիրոջ կրած վնասը փոխհատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գտածոները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 21. Հուշարձանների քանդման արգելումը: Հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգը

Հուշարձանների քանդումն արգելվում է:

Հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ, իսկ տեղական նշանակության հուշարձանների փոփոխումը՝ պետական կառավարման տարածքային մարմինների թույլտվությամբ:

Հուշարձանների տեղափոխման և փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության հիման վրա:

Նախքան հուշարձանը տեղափոխելը կամ փոփոխելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դրանք կատարելու ընթացքում, լիազորված մարմինը կազմակերպում է հուշարձանի գիտական ուսումնասիրման, չափագրման և լուսանկարման աշխատանքները:

Սույն հոդվածով նախատեսված աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը կատարվում են հուշարձանի տեղափոխման կամ փոփոխման թույլտվություն ստացողի հաշվին:

Հոդված 22. Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը

Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Եթե նշված աշխատանքները կարող են վտանգել այդ տարածքներում գտնվող հուշարձանների պահպանությունն ու անվթարությունը, նախապես, աշխատանքների պատվիրատուի միջոցներով իրագործվում են հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ՝ հետախուզություն, պեղումներ, վերականգնման աշխատանքներ, բացառիկ դեպքերում՝ տեղափոխում և լիազորված մարմնի կողմից առաջարկվող այլ աշխատանքներ:

Հոդված 23. Հասարակայնության աջակցությունը հուշարձանների պահպանության և օգտագործման աշխատանքներին

Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձինք իրենց անմիջական մասնակցությամբ, նախաձեռնությամբ, հովանավորությամբ, նվիրատվությամբ, ֆինանսական և նյութատեխնիկական օգնությամբ կարող են աջակցել հուշարձանների հայտնաբերման, պետական հաշվառման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման աշխատանքներին, կարող են ներկայացնել և քննարկման դնել բնագավառի վերաբերյալ մասնակի կամ համալիր առաջարկներ, ծրագրեր:

1.13. Տնտեսություն

Մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության, թանկարժեք իրերի արտադրության ու ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ:

Արդյունաբերական կազմակերպությունները հիմնականում կենտրոնացած են քաղաքներում: Մարզում առկա են նաև նախկին արդյունաբերական չօգտագործվող տարածքներ և մարզի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների մեջ դեռևս առկա է արդյունաբերական աշխատողների ներուժ, մարզում գերակա խնդիր է զարգացնել արդյունաբերությունը:

Արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը մարզում բնակչության բարեկեցության և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից են:

Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գուղատնտեսությունն են: Մարզի արդյունաբերության զարգացման հեռանկարը կապված է ներքոհիշյալ ճյուղերի զարգացման հետ.

1) գյուղմթերքների վերամշակում,
2) թեթև արդյունաբերություն,
3) թանկարժեք քարերի մշակում, ադամանդագործություն,
4) ձկնաբուծություն,
5) սննդի արդյունաբերություն,
6) վերականգնվող էներգիայի արտադրություն,
7) հանքահումքային արտադրություն,
8) զբոսաշրջություն:

1.13.1. Զբոսաշրջություն

«Մայլեռ» լեռնադահուկային բազմագործառույթ ներդրումային ծրագրի իրականացմամբ մարզի տարածքում ձևավորում է նոր տնտեսական կլաստեր՝ իր ազդեցությունն ունենալով տնտեսության այլ ճյուղերի և բնակչության զբաղվածության վրա:

ՀՀ Արագածոտնի մարզում զբոսաշրջության զարգացումն ունի մեծ հեռանկար, քանի որ մարզում առկա է զբոսաշրջության հիմնական ճյուղերի՝ համակարգված և փոխլրացնող զարգացման համար անհրաժեշտ և մեծածավալ ներուժ: Մարզը կարող է հետաքրքիր լինել ինչպես ներգնա, այնպես էլ՝ ներքին զբոսաշրջության զարգացման համար:

Քանի որ զբոսաշրջության զարգացումը հանդիսանում է ՀՀ Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության գերակա խնդիրներից մեկը, ուստի

զբոսաշրջության զարգացման ծրագրի իրականացման համատեքստում ավելի արդիական է դառնում մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը:

Բնական տարածքների տուրիստական պոտենցիալի զարգացման համար լայն հնարավորություն է տալիս մարզի տարածքով անցնող Քասախ գետի առկայությունը՝ իր շրջակա միջավայրով, կիրճերով, բնության գեղատեսիլ վայրերով:

Զարգացման մեծ հնարավորություն ունի ճանաչողական և ընտանեկան տուրիզմը, մարզում առկա են 1893 պատմամշակութային հուշարձաններ, որոնցից 1329-ը հանրապետական և 564 տեղական նշանակության:

Խոշոր հյուրանոցային օբյեկտներից են՝ Աշտարակ քաղաքում «Աշտարակ» հյուրանոցը, Բյուրական համայնքում «Ամբերդ» հյուրանոցը և «Հյուսիսային Աստղ» հյուրանոց-սպորտային-առողջարանական համալիրը, Արագած համայնքում՝ «Արագած» հյուրանոցը, որտեղ ձմեռային տուրիզմի, լեռնագնացության, հանգստի, առողջարարական սպորտի, ալպինիզմի կազմակերպման մեծ հնարավորություններ կան:

Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կհասնի ցանկալի արդյունքի:

Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերը.

1.քաղաքային տուրիզմ,

2.պատմա-ճարտարապետական տուրիզմ,

3.ձմեռային տուրիզմ

4.արկածային տուրիզմ, գյուղական տուրիզմ և էկոտուրիզմ:

Նշված զբոսաշրջային ուղղությունների զարգացման արդյունքում մարզ այցելող զբոսաշրջիկների թիվը կավելանա շուրջ 20-30%:

Զբոսաշրջության զարգացման համար ՀՀ Արագածոտնի մարզն ունի հետևյալ առավելությունները.

1) Հարմար աշխարհագրական դիրք և տրանզիտային հնարավորություններ,
2) Հարմար տրանսպորտային ենթակառուցվածքներ,
3) Հարուստ պատմամշակութային ժառանգություն,
4) Էկոլոգիապես մաքուր և գեղեցիկ բնություն,
5) Շուրջտարյա զբոսաշրջության կազմակերպման մեծ պոտենցիալ,
6) Յուրահատուկ խոհանոց:

Զբոսաշրջության ոլորտի թույլ կողմերից է՝ տուրիստական ենթակառուցվածքների, ոչ բավարար վիճակ, այդ թվում՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների, ոչ բավարար Նախատեսված է զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղությամբ իրականացնել զգալի ներդրումներ: Այդ միջոցների հաշվին նախատեսվում է հիմնել հանգստի և ժամանցի հասարակական սպասարկման օբյեկտներ, կառուցել և ընդլայնել հյուրանոցային և ռեստորանային համալիրներ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կձևավորվեն առնվազն 100 աշխատատեղ, մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն կունենա:

Փաստաթղթի նախորդ բաժիններում ներկայացված՝ բնական ռեսուրների, պատմաշմակութային ժառանգության, հարուստ կենսաբազմազանության, կլիմայական պայմանների, էկոլոգիական պայմանների ներկայացված ռեսուրսային պոտենցիալն անուղղակիորեն հիմք է հանդիսացել ի թիվս ուղղակի ռեսուրսների՝ լեռնադահուկային

առողջավայրի և դրա հենքի վրա ձևավորված լեռնադահուկային կլաստերի ձևավորման և դրանով պայմանավորված հարակից ոլորտների զարգացման ու համալիր ձևով հարակից բնակավայրերի ու տարածշրջանի ամբողջական տնտեսական զարգացման խթանիչ ուժը դառնալ:

Լեռնադահուկային առողջավայրի առանահերթ փուլի իրականացմամբ արդեն իսկ նկատելի տնտեսական աճը տարածաշրջանում, զբոսաշրջիկների ներհոսքի՝ ինչպես ներքին,այնպես էլ ներգնա հատվածի այցելությունների կտրուկ աճ:

Ենթակառուցվածքների հետագա զարգացմանը զուգընթաց և ծրագրի վերջնական իրականացմամբ կձևավորվի ՀՀ տարածքում լեռնադահուկային ևս մեկ առողջավայր՝ ապակենտրոնացնելով տման տիպի առողջավայրի նկատմամբ պահանջը Ծաղկաձորից դեպի Արագած լեռան լանջին արագ թափ առնող առողջավայր: Ամբողջ ծավայլով առողջավայրի գործառնության դեպքում տարածաշրջանում կստեղծվեն տարբեր ուղղվածության և մասնագիտացման աշխատատեղեր՝ նպաստելով տարածաշրջանի բնակչության կենսական պայմանների բարելավմանը, կրթական և առողջապահական ոլորտների զարգացմանը և բնակչության ընդհանուր բարեկեցությանը:

1.13.2. Հատուկ պահպանվող տարածքներ

Տարածքում գտնվում է միայն մեկ հատուկ պահպանվող տարածք՝ «Արագածի ալպյան արգելավայրը»: Այն հիմնադրվել է 1959 թ-ին, ընդգրկում է 300 հեկտար տարածք: Վերջինիս որդեգրած / նպատակը Քարի լճի և հարակից տարածքների ապահովումն է ալպյան բուսականությամբ: Բացի այդ՝ «Արագածի ալպյան արգելավայրի» ընդգրկած տարածքը (9,446 հա) առաջարկվել է որպես «Զմրուխտ» էկոլոգիական ցանցի տարածք: Պետական արգելավայրը և նրա հարակից տարածքներն ընդգրկում են Արագած լեռան բոլոր գագաթներն ու խառնարանները:

Գլուխ 2

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2.1. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը

2.1.1. Զբոսաշրջային ոլորտ

Զբոսաշրջիկները տարբերվում են նաև ըստ իրենց պահանջների՝ կախված իրենց ակտիվությունից և այլ գործոններից: Դրանք են՝ խաղաղ հանգստի կողմնակիցներ (փնտրում են հանգիստ ստրեսներից), հաճույքների կողմնակիցներ, ակտիվ հանգստի կողմնակիցներ (բնության սիրահարներ), սպորտային հանգստի կողմնակիցներ, արկածների սիրահարներ:

2.1.1.1) Մշակութային և ժողովրդա-էթնոգրաֆիական ոլորտը կարող է դրվել զբոսաշրջության հետևյալ տեսակների հիմքում.

ա. գործարարական և ճանաչողական-գործարարական զբոսաշրջություն՝ գործարարների և այլ մասնագետների համար, ովքեր գալիս են տարբեր քաղաքներից և գործարար գործընթացը համատեղում հանգստի և տեղական բնակչության ավանդույթների,

ժողովրդական արհեստներին ծանոթացման, ազգագրական երգի-պարի փառատոներին մասնակցության հետ:

բ.Ինսենթիվ կամ խրախուսական զբոսաշրջությունը, որը հիմնված է ինչպես խմբային այցելությունների վրա՝ էքսկուրսիոն նպատակներով, այնպես էլ տարբեր հիմնարկ-կազմակերպությունների աշխատակիցների ճանապարհորդությունները զբոսաշրջության գոտիներ՝ հանգստի նպատակով,

2.1.1.2) մասնագիտացված զբոսաշրջություն.

ա.մասնագիտացված զբոսաշրջության հեռանկարային տեսակներից է էկոզբոսաշրջությունը: Առաջին հերթին նախատեսվում է զարգացում էկոլոգիապես մաքուր շրջաններում (լքված, բարձրլեռնային գյուղերում, տեղակայված հենց այդպիսի շրջաններում): Այս տեսակը դասվում է զբոսաշրջության զարգացման փոքրամասշտաբ տեսակներին և հանգում է զբոսաշրջիկների ոչ մեծ խմբերի հանգստի կազմակերպմանը ավանդական, հեռավոր վայրերում տեղակայված գյուղերում և տեղաբնակների բնակարաններում:

բ.լիցենզավորված գիտական (հնագիտական պեղումների անցկացում, պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրություններ),

գ.գիտական և ուսումնական զբոսաշրջություն, որը ենթադրում է լեզվի ուսումնասիրություն, ազգագրության, պատմության ուսումնասիրություն, հուշարձանների վերականգնում,

դ.պաշտամունքային՝ կապված եկեղեցիների ու վանքային համալիրների այցելությունների հետ: Այս տեսակի զարգացումը՝ ծիսակարգերի, տոնակատարությունների, կենցաղի և մշակույթի հետ համատեղ կարող է զարգանալ առանձին կազմակերպված վայրերում՝ զբոսաշրջային գյուղերում:

ե.Էթնոգրաֆիական զբոսաշրջություն, հիմնված ժողովրդի կյանքի, ազգային ավանդույթների, ծիսակատարությունների, մշակույթին և ստեղծագործության նկատմամբ պոտենցիալ սպառողի հետաքրքրության վրա (պատմամշակութային արժեք ներկայացնող կառուցվածքները կարող են օգտագործվել որպես նշված միջոցառումների անցկացման համար իրական դեկորացիաներ):

զ.Իրադարձային զբոսաշրջություն, որը հիմնված է որևէ մշակութային կամ սպորտային իրադարձության անցկացումը տվյալ վայրում կազմակերպելու միջոցով զբոսաշրջիկների զանգվածային հոսք ձևավորելու վրա (փառատոներ, մրցույթներ, քաղաքային տոնակատարություններ, օլիմպիադաներ):

է.Էթնիկական զբոսաշրջություն, որը հաշվի է առնում երկրի անցյալը, արտասահմանից գրավելով զբոսաշրջիկների խմբեր, որոնց նախնիները տեղաբնակներ են եղել և որոնց հայրենիքը տեսնելու ցանկությունն են իրականացնում:

ը.Այլընտրանքային զբոսաշրջություն, որը ենթադրում է ծառայությունների ավելի մանր մասշտաբ, առավել ցածր գներ՝ գրավելով առավել լայն խավեր, որոնք իրենք են ընտրում իրենց ժամանցի ձևերը:

Հնագույն ավանդույթների վերածնումը, ազգային տոնակատարությունների կազմակերպված անցկացումը, ծանոթացումը ավանդույթներին, տոնակատարությունների կազմակերպումը նոր տարրերի լրացումով, անտարակույս հետաքրքրություն կներկայացնեն զբոսաշրջիկների համար և կհանդիսանան անհրաժեշտ պայման ժողովրդի պատմությանն ու կենցաղին առավել լիարժեքորեն ծանոթանալու համար: Ներկայումս պահպանված են մի շարք ավանդական տոնակատարություններ ու ծեսեր, և մեծ շուքով նշվում են քաղաքում:

Տոնակատարությունների շրջանակը պետք է լրացվի նաև լրացուցիչ հետիոտն կամ հեծյալ արշավներով, հեծանվաերթերով, կինոնկարների, համերգների, թեմատիկ

երեկոների կազմակերպմամբ (հանդիպում հայտնի մարդկանց՝ երաժիշտներ, նկարիչներ, գրողներ), ազգագրական ժամանցային խաղի, ազգային երգեր, պարերի ուսուցում, մասնակցություն ավանդական արհեստների ուսուցմանը, կերակրատեսակների, խմիչքների պատրաստմանը, նկարչական մրցույթ-ցուցահանդեսների մասնակցություն և կազմակերպում, ազգագրական համույթների ելույթների մասնակցություն, արհեստանոց-կրպակների այցելություններ, հուշանվերների ձեռքբերում:

Զբոսաշրջության միասնական տարածաշրջանային համակարգի կազմակերպման և հաջողությամբ գործառնելու համար անհրաժեշտ կազմակերպչական գործունեությունը նկատառում է պետական և մասնավոր սեկտորների փոխհամագործակցություն.

- համագործակցություն՝ հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, զբոսաշրջության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների միջև՝ տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների լուծման և շրջագայությունների հեշտացման տարաբնույթ միջոցառումների իրականացման ուղղությամբ,
- զարգացման ուրվագծերի մշակում՝ զբոսաշրջության հիմնական ուղղությունների նախանշումով և զբոսաշրջության զարգացման պոտենցիալի գնահատումով,
- նախագծա-հետախուզական աշխատանքներ՝ նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորումով, (ենթակառուցվածքների ձևավորման կամ վերակառուցման հնարավորության գնահատում, ետգնողունակության հասնելու միջոցների և պայմանների որոշում),
- ֆինանսական վիճակի գնահատում, գոյություն ունեցող կամ նախագծվող օբյեկտի վերաբերյալ մանրամասն հաշվետվության ներկայացում,
- շուկայի ուսումնասիրում և մարկետինգի կազմակերպում (օբյեկտի կամ ծառայության արժանիքների ընդգծում, գովազդի մշակում՝ սպառողի մոտ վստահության ապահովումով, գովազդային հաղորդագրության փոխանցման մեթոդների և միջոցների որոշում):
- նախագծերի ֆինանսավորման ուրվագծերի կազմում (ներդրողների և ֆինանսավորման այլ աղբյուրների որոնում, ֆինանսական արդյունքների կանխատեսումներ):

Հստակ կանոնակարգված զբոսաշրջային գործունեությունը 3 հիմնական սուբյեկտների (պետություն, տեղական կառավարման մարմիններ և զբոսաշրջության նախաձեռնողներ) սերտ համագործակցության արդյունք է, որոնք որոշիչ դեր են խաղում զբոսաշրջության ղեկավարման և զարգացման գործընթացում:

Թեև զբոսաշրջության ոլորտում քաղաքականության ընդհանուր սկզբունքներն ու ուղղությունները հաստատվում են պետական մակարդակում, սակայն հենց տեղական իշխանություններն են տեղայնացնում տրված ուղղությունները տեղական պայմաններում, դնում են կոնկրետ նպատակներ և ընտրում դրանց հասնելու ուղիները:

Ներկայումս մեր երկրում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող խնդիրներից ամենանշանակալին սպասարկման ոլորտի անկատարությունն է, ուստի թե պետական, և թե՝ տեղական իշխանությունների կողմից այս ոլորտում գրավչությունը բարձրացնելու կարևորագույն հիմնախնդիրներից են ընդլայնված զբոսաշրջության, սպասարկման, հաստատությունների ցանցի ձևավորման, զբոսաշրջային-էքսկուրսիոն ցուցադրման, օբյեկտների վերանորոգման ու վերակենդանացման ռացիոնալ ուղիների մշակումը՝ զբոսաշրջային-էքսկուրսիոն բարեկարգ երթուղիների կազմակերպմամբ:

Տարածաշրջանում ճանաչողական բնույթի օբյեկտները ստորաբաժանված են երկու ենթախմբի.

- պատմաճարտարապետական հուշարձաններ,
- տնտեսության, գիտության և մշակույթի նվաճումներ:

Մարզի տարածքում զբոսաշրջային ժամանակաշրջանի երկարաձգման նպատակով, կախված առանձին տարածաշրջանների բարենպաստությունից և, հաշվի առնելով տարբեր տարիքային ու պատրաստվածության խմբերի պահանջները, կարող են առաջարկվել տարբեր բարդության երթուղիներ՝ բաղկացած հետևյալ փուլերից.

I փուլ-ժամանում, տեղավորում, գիշերակաց,

II փուլ-մեկօրյա նախապատրաստական արշավ՝ զբոսաշրջության հիմնական կենտրոն վերադարձով,

III փուլ-եռօրյա մարզական արշավ, որի յուրաքանչյուր օրվա ավարտն անց է կացվում զբոսաշրջային, միայն վերջին գիշերն անց է կացվում զբոսաշրջային հանգրվանում,

IV փուլ-նախապատրաստում երկարատև արշավի,

V փուլ-ութնօրյա ճանապարհորդություն, որի երկու օրն անց է կացվում զբոսաշրջային կայաններում՝ գշերակացով, երկու օրը՝ զբոսաշրջային հյուղակներում, նույնը վերադարձի ճանապարհին, և միայն վերջին օրն անց է կացվում զբոսաշրջային հանգրվանում,

VI փուլ-հանգիստ և նախապատրաստում մեկնելու:

<u>Ակնկալվող արդյունք.</u> Զբոսաշրջության զարգացման ծրագրերի իրականացումը կխթանի մարզի տնտեսության այնպիսի ոլորտները, ինչպիսիք են տրանսպորտը, կապը, առևտուրը, շինարարությունը, գյուղատնտեսությունը, սպառման առարկաների արտադրությունը՝ հնարավորություն տալով պետությանը համալրել ինչպես պետական բյուջեն, այնպես էլ այլ մակարդակների՝ համայնքների բյուջեները, ստեղծել աշխատատեղեր՝ բարելավելով բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

2.2. Հեռանկարային զարգացում

<u>Հայեցակարգային.</u> **Հարմարավետ տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությունն ու տարանցիկ երթևեկության հնարավոր աճը նույնպես կարող են նպաստող գործոններ հանդիսանալ զբոսաշրջության զարգացման համար: Միաժամանակ մարզում առկա են զբոսաշրջությանը խոչընդոտող և խանգարող մի շարք գործոններ, որոնց զգալի մասը բնորոշ է ոչ միայն Կոտայքի մարզին, այլ նաև ողջ հանրապետությանը: Սպասարկման ոլորտում առկա ոչ բավարար և ոչ պրոֆեսիոնալ մակարդակը, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը, հասարակական տրանսպորտի անկանոն և ոչ պատշաճ որակի աշխատանքը, բնապահպանական խնդիրները, մարդկանց մի ստվար մասի մենթալիտետը, հյուրանոցային փոքր ֆոնդը, զբոսաշրջային ուղղությունների ինֆորմացիոն բաղադրիչի հատվածային բնույթն ու ցածր որակը, պատմա-մշակութային օբյեկտներին կից անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունն այն հիմնական խնդիրներն են, որոնց ոչ պատշաճ լուծումը կարող է վտանգել մասսայական զբոսաշրջության ապագան մարզում:**

Այն ամենն, ինչ արվում է զբոսաշրջիկներին գրավելու համար, առաջին հերթին պետք է ուղղված լինի և ծառայի տեղական բնակչությանը, այսինքն՝ զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումների առաջնային շահառուները պետք է սկզբում լինեն տեղական բնակչությունը, ապա միայն նոր՝ զբոսաշրջիկները: Զբոսաշրջային ոլորտը մարզում չի կարող զարգանալ ավտոնոմ՝ առանց մարզի բնակչության մասնակցության և առանց նրանց

առօրյա կենցաղի մի մասը կազմելու: Զբոսաշրջիկների ճնշող մեծամասնությունը չի ցանկանում ապրել «ոսկե վանդակում», այլ մեծ ցանկություն է ունենում իր ժամանակն անցկացնել այն միջավայրում, որտեղ և որով ապրում են տեղի բնակիչները: Եթե բնակչության կենցաղը գրավիչ է, ապա զբոսաշրջիկի ուղևորությունը լինում է ավելի իմաստավորված, իսկ տպավորություններն՝ ավելի վառ: Ավելին, նրանց մի մասի մոտ ցանկություն է առաջանում կրկին վերադառնալու և նորից ապրելու այդ կենցաղով: Առավել հետաքրքիր է հենց այն փառատոնը, ծեսը, միջոցառումը, ազգայինի հիմքով գործող ռեստորանը, կամ գյուղական հյուրատունն ու արհեստանոցը, որը բնակչության առօրյա կենցաղի մի մասն է կազմում, քան՝ եթե դա կազմակերպվում է ցուցադրական և արհեստաստեղծ ձևով, միայն զբոսաշրջիկների համար և միայն զբոսաշրջիկների մասնակցությամբ, մեծամասամբ նաև՝ ուռճացված գներով: Բացի այդ էլ՝ բարեկարգ ճանապարհները, մաքուր բնությունը, լավ սպասարկումը, առողջ սնունդն ու սեփական մշակույթին և ավանդույթներին ծանոթանալն, առաջին հերթին, անհրաժեշտ է հենց տեղի բնակիչներին, ապա նոր միայն զբոսաշրջիկներին: Սեփական քաղաքացիները և նրանց շահերը միշտ պետք է լինեն առաջնային:

Վերը նշված ռեսուրսները և ուրիշ շատերը կարող են հիմնական՝ լեռնադահուկային ուղղվածությանը զուգահեռ դառնալ ուղեկցող՝ ագրոզբոսաշրջության, ճանաչողական և այլ ուղղվածության զբոսաշրջային գրավչություններ՝ ձևավորելով բազմագործառույթ զբոսաշրջային կլաստեր, պայմանավորված իրենց գյուղատնտեսական ուղղվածությամբ, արժեքավոր կառուցապատմամբ, պատմամշակութային արժեքներով:

<u>Ակնկալվող արդյունք</u>

- բնակչության սոցիալական մակարդակի բարձրացում
- տնտեսության բարգավաճում:
- Պատմամշակութային ժառանգության, ենթակառուցվածքների բարեկարգում, զարգացում:

Ըստ նախագծի՝ լեռնային համալիրի կառուցման ընթացքում ներգրավված կլինեն շինարարության ոլորտի շուրջ 250 աշխատողներ, իսկ ծրագիրը իրականացնելուց հետո կստեղծվի 1500 հիմնական աշխատատեղ՝ միջինը 180 հազար դրամ աշխատավարձով: Ակնկալվում է, որ լեռնային համալիրը կկարողանա սպասարկել տարեկան մինչև 500 հազար հաճախորդի: Ըստ էության Եղիպատրուշ գյուղի մոտակայքում ստեղծվելու է նոր փոքր քաղաք, որը տվյալ տարածաշրջանի զարգացման նոր հնարավորություններ է բացելու:

2.3. Հատակագծային կառուցվածք (առկա և հեռանկարային)

Բազմագործառույթ առողջավայրի տարածքի կազմակերպման հիմքում դրված են բնությանն առավել ներգծված հատակագծային միավորի ձևավորումը, ինչպես նաև առաջադրված են մի շարք նոր օգտագործումների համար բարենպաստ տեղակայում, ինչպիսիք են խանութներ, ռեստորաններ, գրասենյակներ, հանրային ժամանցային հաստատություններ, սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներ, բնակելի գոտիներ՝ բնակարանային տեսակների ընտրությամբ (տարբերակված գներով, սոցիալական), ինչպես նաև զբոսայգիների և հետիոտն ուղիներ՝ դպրոցների բարենպաստ մատչելիության գոտում, ի վերջո ձևավորելով անվտանգ և գրավիչ միջավայր ինչպես տեղաբնակների, այնպես էլ այցելուների համար:

Հաշվի առնելով նման տիպի առողջավայրերի զարգացման ներկա միտումները՝ դրանց հատակագծային կառուցվածքում համապատասխան գործառնական

վերակազմավորումներով (օր.՝ փողոցների ակտիվության բարձրացում՝ տարբեր գործառնական նշանակության և խառը գործառույթների վերագրմամբ ունենալով տարբեր ուղղվածության փողոցներ, մասնավորապես՝ կոմերցիոն (առևտրական շարքերի, ինչպես նաև ներկա զարգացմամբ ի հայտ եկած հատվածների), վարչական, ժամանցային և այլն:

Հատակագծային կառուցվածքն առավելագույնս ներդաշնակեցվել է ռելիեֆային պայմաններին՝ ձևավորելով տարանջատ քաղաքաշինական գոտիներ՝քոթեջային տիպի կառուցապատման գոտիներից մինչև սակավահարկ (մինչև 6 հարկ) հարկայնությամբ կառուցապատում:

Կազմակերպված են ավտոկայանատեղիներ, հասարակական և սոցիալական սպասարկման հաստատությունների ցրված տեղաբաշխում:

Նախատեսվել են անարգել և հարմարավետ կապեր դեպի սահուղիներ: Տարածքում զգալի տոկոսով ներկայացված են կանաչ տարածքները՝ ինչպես հանրային կանաչ գոտիների տեսքով, այնպես էլ պաշտպանիչ կանաչապատման:

2.4. Բնապահպանական/կանաչապատման խնդիրներ

Հանգստավայրի բարենպաստ բնապահպանական իրավիճակի պահպանման գործընթացում խիստ կարևորվում է տարածքի բնապահպանական հիմնակմախքի ձևավորումն ու հնարավորության դեպքում անընդմեջ համակարգի ապահովումը:

Կանաչ տարածքները հանգստավայրի հատակագծային կառուցվածքում ըստ իրենց նշանակության բաժանվում են երեք տեսակի.

1) ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ,
2) սահմանափակ օգտագործման կանաչ տարածքներ,
3) հատուկ նշանակության կանաչ տարածքներ:

Կանաչ տարածքների առաջին տիպը հանրության կողմից ազատ անարգել օգտագործվող կանաչ տարածքային կամ գծային տարրեն են և կարգավորվում են քաղաքաշինական նորմերով սահմանված չափաբաժիններով՝ յուրաքանչյուր բնակչի համար սահմանված մակերեսով:

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքները քաղաքի սահմաններում առկա գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող տնամերձ այգիներն են, որոնք իրենց առկայությամբ ձևավորում են որոշակի միկրոկլիմայական ֆոն, սակայն չեն հանդիսանում հանրության համար ազատ այցելելի և օգտագործելի տարածքներ:

Հատուկ նշանակության կանաչները դրանք ճանապարհամերձ կամ այլ պահպանության կարիք ունեցող օբյեկտների շուրջ սանիտարապաշտպան նշանակության կանաչ տնկարկներն են, որոնք դարձյալ իրենց նշանակալի ազդեցությունն ունեն քաղաքի սանիտարահիգիենիկ բարենպաստ միջավայրի ձևավորման գործընթացում՝ պահպանելով բնակելի գոտիները մայրուղիների բացասական ազդեցություններից (արտանետումներ, աղմուկ, վիբրացիա), ինչպես նաև բնապահպանական առումով վտանգ ներկայացնող օբյեկտները (հանքեր, աղբավայր, խմելու ջրաղբյուրների սանիտարական պահպանության գոտիներ և այլն) մեկուսացնելով բնակչության կողմից օգտագործվող տարածքներից: Տվյալ տեսակը ևս իր գոյությամբ նպաստում է քաղաքի միկրոկլիմայական բարենպաստ պայմանների ապահովմանը:

Վերոնշյալ տիպերը՝ ներկայացնելով կանաչ գոտիների՝ տարածքային, գծային և կետային բաղադրիչների համալիրը, ձևավորում են բնակավայրի անընդմեջ բնապահպանական հիմնակմախքը, որը ունենալով ելքեր նաև դեպի մերձակա բնական

կանաչ գոտիներ՝ անտառաշերտեր, ձևավորում են բնապահպանական միջանցք կենսաբազմազանության գոյատևման համար:

Բաց կանաչ տարածքների ցանցը հնարավորություն է տալիս թե՛ բնակիչների, և թե՛ այցելուների համար ապահովել բացօթյա գործունեության լայն շրջանակ: Զբոսայգիներն ու բաց կանաչ տարածքները պետք է հասանելի լինեն հետիոտնային կապերի միջոցով կամ կից լինեն հետիոտն ուղիներին:

Լեռնադահուկային առողջավայրի տարածքում կանաչ տարածքների տեղաբաշխումը կկատարվի միասնական՝ ողջ բնակավայրի համար ուրվագծորեն պատկերվող և առանձին հատվածների համար մշակվող մանրամասն դենդրոլոգիական ուրվագծերի հիման վրա՝ ապահովելով ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման (բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները)

Կանաչ միջանցքներ և բաց տարածքների ցանց (կանաչապատման համակարգ)

Կանաչ միջանցքների ցանցի նպատակն է բարելավել կանաչ տարածքների և առկա փողոցների համակարգի փոխկապակցվածությունը: Դա ապահովում է չընդհատվող կանաչ միջանցքներ՝ տեղի կենսաբազմազանության համար:

Բնապահպանական միջանցքները կնպաստեն նաև.

1) բարենպաստ միկրոկլիմայի ձևավորմանը,
2) ստորգետնյա ջրերի մակարդակի կարգավորմանը,
3) ափերի և լանջերի կայունացմանն ու ամրացմանը,
4) գեղագիտական պահանջներին համապատասխան արժեքավոր միջավայրի ստեղծմանը:

2.5. Տարածքի գործառական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ

Հաշվի առնելով գերակշռող գործառական օգտագործումը, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, տարածքը բաժանված է հետևյալ հիմնական գոտիների*.

Բնակավայրերի հողեր, որոնք ըստ գործառական նշանակության դասակարգվում են հետևյալ օժանդակ գոտիների.

1) *բնակելի կառուցապատման,*
2) *հասարակական կառուցապատման,*
3) *խառը կառուցապատման,*
4) *ընդհանուր օգտագործման հողերի,*
5) *այլ հողերի:*

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր:

Անտառային, ջրային և պահուստային հողեր:

Հաշվի առնելով հիմնական գոտիների քաղաքաշինական, բնապահպանական, սեյսմատեկտոնական, ինժեներաերկրաբանական և այլ բնույթի սահմանափակումները ,

վերջիններս դասակարգվել են ըստ գործառական նշանակության և թույլատրված օգտագործումների, հողամասերի ծավալատարածական չափորոշիչների*.

Հասարակական կառուցապատման (գործառույթների) զարգացման գոտիները նախատեսված են բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև համաքաղաքային նշանակության գործառույթների կազմակերպման համար, վարչական և տեղական կառավարման շենքերի կենտրոնացման, գործարարական, ֆինանսական գործունեությունը քաղաքի տարածքում կենտրոնացնելու համար՝ քաղաքի զարգացմանը զուգընթաց:

Խառը կառուցապատման գոտիները նախատեսված են ինչպես բնակելի, այնպես էլ հասարակական կառուցապատման և ընդհանուր օգտագործման համար, առանց որևէ մեկի գերակայության: Հաշվի առնելով նախագծի առանձնահատկությունը՝ փուլային կառուցապատում իրականացնելու վերաբերյալ գլխավորապես խառը կառուցապատման գործառույթը յուրաքանչյուր դեպքում կիրականացվի նույն նպատակային նշանակության համապատասխան գործառնական նշանակությամբ:

Ընդհանուր օգտագործման գոտիները նախատեսված են բնակչության ժամանցի և կապերի (տրանսպորտային և հետիոտն) կազմակերպման համար:

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների տարածքները նախատեսված են համապատասխան ենթակառուցվածքների, դրանց համապատասխան կառույցների տեղակայման համար: Գոտու ռեժիմը նախատեսում է սանիտարական և անվտագության գոտիների սահմանում և պահպանում և հատուկ իրավական ռեժիմների (սերվիտուտների) կիրառում:

Սանիտարական գոտիները նախատեսվում է կանաչապատել՝ աղմուկի ազդեցությունը և մթնոլորտային օդի, հողային և ջրային ավազանների աղտոտվածությունը փոքրացնելու նպատակով:

Անտառային, ջրային և պահուստային հողերն ընդգրկում են անտառտնտեսությանը պատկանող (ինչպես անտառապատ, այնպես էլ ոչ անտառապատ) տարածքները, գետերը, ոռոգման ջրանցքները, աղբրակապման կառուցվածքները, դրանց սանիտարական գոտիները: Գոտու ռեժիմները տրված են նախագծի համապատասխան բաժիններում:

Սանիտարական գոտիները նախատեսվում է կանաչապատել՝ աղմուկի ազդեցությունը և մթնոլորտային օդի, հողային և ջրային ավազանների աղտոտվածությունը փոքրացնելու նպատակով:

2.6. Տրանսպորտային ենթակառուցվածքների հեռանկարային զարգացումը

2.6.1. Արտաքին տրանսպորտ

Չունենալով անմիջական ելք դեպի ծով (նավահանգիստներ)՝ Հայաստանի ճանապարհային ցանցը ծառայում է որպես երկրի ցամաքային հաղորդակցության ուղիների զգալի մասն ապահովող բաղադրիչ՝ ապահովելով հաղորդակցությունը երկրի ներսում ու հարևան երկրների հետ և նպաստելով երկրի տնտեսական զարգացումը: Հիմնական ուղղությունները հարակից երկրների հետ հետևյալն են՝ Վրաստանի հետ հյուսիսում և Իրանի հետ հարավում:

Հաղորդակցուղիների արդյունավետ, բարեկարգ, կենսունակ ու կայուն ցանցի ձևավորումը կնպաստի առևտրի, ներդրումների ու աշխատատեղերի աճին՝ խթանելով տարածաշրջանային համագործակցությանն ու բարձրացնելով երկրի մրցունակությունը։

2.6.2. Փողոցային ցանց և ներքին տրանսպորտ

Ներածություն

Ներքին փողոցային ցանցի վերաբերյալ բաժնի մշակման հիմնական նպատակն է առաջարկել ինչպես երթևեկության համակարգի ամբողջական տեսլական, այլև դիտարկելու առկա ցանցի վերագնահատման շրջանակները, ձևավորելու առավել հարմարավետ ու անվտանգ հաղորդակցուղիների համակարգ՝ մարդու հիմնական պահանջների բավարարմանն ուղղված, այն է՝ բնակության, աշխատանքի և ժամանցի/հանգստի համար առավել բարձորակ, առողջ ու հարմարվետ քաղաքային միջավայրի կազմավորման նպատակով։

Փողոցային ցանցին ներկայացվող հիմնական պահանջներն են

Ձևավորել բնակչության համար հարմարավետ, անվտանգ և ապահով կենսամիջվավայր՝ հաղորդակցուղիների զարգացած ցանցով,

Խթանել երթևեկության բոլոր հիմնական և այլընտրանքային տեսակները. ձևավորել ապահով ցանց երթևեկության տարբեր տեսակների համար՝ ապահովելով բնապահպանական առումով բարենպաստ միջավայր (արահետներ, հեծանվաուղիներ ու անտառապատ տարածքներ), տարածքում ձևավորել կազմակերպված ավտոկայանատեղիներ՝ հանրային տարածքների հարևանությամբ և բնակելի թաղամասրեի համար,

Ուսումնասիրվել են տարածքում մոտորացված ու ոչ մոտորացված փոխադրամիջոցների ու հետիոտների համակեցության հնարավորություններն ու հարմարավետ կայանատեղիների համակարգի ստեղծման հնարավորությունները։

Ներքին փողոցային ցանցի վերաբերյալ մոտեցումներում առաջարկվել են լուծումներ՝ ձևավորելու փողոցային ցանցի և երթեկության համակարգի ամբողջական հեռանկարը՝ ձևավորելու բնակչության կենսագործունեության պահանջներն առավելագույնս բավարարող և միջավայրի շարժունակության հարմարավետությունն ապահովող հաղորդակցության ուղիների արդյունավետ համակարգ՝ հաշվի առնելով բնակչության տարբեր խմբերի շահերը և տրանսպորտի բոլոր տեսակները։ Դիտարկվել են տարբեր փոխադրամիջոցների՝ հանրային ու այլընտրանքային տրանսպորտի օգտագործման ու հետիոտների համակեցության հնարավորություններն ու հարմարավետ կայանատեղիների համակարգի ստեղծումը։

Ճանապարհափողոցային ցանցն անհրաժեշտ է նախագծել միասնական համակարգի տեսքով՝ հաշվի առնելով ճանապարհների և փողոցների դերն ու նշանակությունը, տրանսպորտի ու հետիոտնի անցուդարձը, տարածքի ճարտարապետահատակագծային լուծումներն ու կառուցապատման բնույթը։

Նոր նախագծվող ճանապարհների և փողոցների հաշվարկային հարաչափերը պետք է ընդունել ըստ գործող նորմերի պահանջների (շարժման մեկ շերտի հարաչափերը համաքաղաքային նշանակության փողոցների համար՝ 3.75 և 3.5 մ, շրջանայինի համար՝ 3.5, տեղական նշանակության փողոցների համար՝ 3.0 մ)։

Փողոցների և ճանապարհների լայնական կտրվածքի տարրերը սահմանվում են հաշվարկով, ելնելով տրանսպորտային միջոցների և հետիոտնի հեռանկարային անցուդարձից, լայնական պրոֆիլի սահմաններում նախատեսված տարրերի (երթևեկային

մասեր, ստորգետնյա հաղորդակցուղիների անցկացման տեխնիկական գոտիներ, մայթեր, կանաչապատման գոտիներ և այլն) կազմից՝ հաշվի առնելով նաև սանիտարահիգիենիկ ու քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները։

2.7. Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ

ՀՀ կառավարության 2021 թվականի N 1246-Ա որոշմամբ հավանություն է տրվել Արագածոտնի մարզում լեռնային հանգստավայրի կառուցման «Մայլեռ» ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին՝ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տարածքում 2080 հեկտար ընդհանուր մակերեսով (ակտիվ օգտագործման մակերեսը՝ մոտ 580 հա) հողամասում իրականացվելիք ներդրումային ծրագրին: Ներդրումային ծրագիրը միտված է Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության բազմազանության ու զարգացման ապահովմանը, ինչպես նաև բնակչության մեջ առողջ ապրելակերպի հաստատմանը և համահունչ է ՀՀ կառավարության կողմից որդեգրած տնտեսական զարգացման ռազմավարությանը:

Հանգստավայրի տարածքներում բարենպաստ և ենթակառուցվածքներով ու հանրային տարածքներով հագեցած կենսամիջավայրի ձևավորմանն ուղղված կատարվել են հողատեսքերի մի շարք նպատակային և գործառնական փոփոխություններ, որոնք արտացոլված են ստորև ներկայացվող նպատակային նշանակությունների փոփոխությունների աղյուսակներում: Փոփոխությունները ներկայացված են ըստ գերակայությունների՝ առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային: Դրանց համապատասխան կատարվել են նաև փոփոխություններ հողատեսքերի հաշվետվություններում, ինչն արտացոլված է տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակներում:

Տարածքում ինչպես սույն նախագծի շրջանակում՝ հեռանկարային զարգացման հետ կապված զարգացումներով պայմանավորված նպատակային նշանակությունների փոփոխությունների արդյունքում բացասական ազդեցություններով (արտանետումներ, աղմուկ, վիբրացիա, վիզուալ աղտոտում և այլն) տարածքներից բնակվելու գոտիները սահմանազատելու նպատակով նախատեսվում է իրականացնել մեղմման միջոցառումներ՝ պաշտպանիչ ծառատնկումներ, պաշտպանիչ էկրան և այլն (կախված կոնկրետ իրադրությունից և տարածքային հնարավորություններից)։

Տվյալ նպատակային նշանակությունների փոփոխությունների աղյուսակը հանդիսանում է ի լրումն 2023 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու և Արագածոտնի մարզպետի Որոշումներնով հաստատված Արագածոտն-1 միկրոռեգիոնաալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթով Եղիպատրուշ բնակավայրի եհռանկարային զարգացման համար նախատեսված հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների աղյուսակի և տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակի։

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները[35] (Արագածոտն 1 միկրոռեգիոնալ փաստաթղթի շրջանակում կատարված)				
Հողամասի	Առկա նպատակային և		Գլխավոր հատակագծում փոփոխված	

[35] *Եղիպատրուշ բնակավայրի հեռանկարային զարգացման հողամասերի փոփոխություններն ու տեխնիկատնտեսական ցուցանիշները հաստատվել են Ապարան համայնքի ավագանու և մարզպետի որոշումներով:*

N գծագրի վրա	գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Հատուկ պահպանվող տարածքների հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների	
ՀԷ-1	*Պատմական և մշակութային (գերեզմանոց)*	1.68	*Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոց)*	1.68
Ընդհանուր		1.68		
	Բնակավայրերի հողեր, որից՝			
			Բնակավայրերի հողեր	
ԲԲ-1	*Այլ հողեր*	0.06	*Բնակելի կառուցապատման*	0.06
Ընդհանուր		0.06		
	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝			
			Հատուկ պահպանվող տարածքների հողեր	
ԳՀ-1	*Արոտավայր*	0.12	*Պատմական և մշակութային*	0.12
Ընդհանուր		0.12		
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների	
ԳԷ-1	*Արոտավայր*	0.12	*Կոմունալ ենթակառուցվածքների*	0.12
Ընդհանուր		0.12		
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝			
			Բնակավայրերի հողեր	
ԱԲ-1	*Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների*	0.15	*Բնակելի կառուցապատման*	0.15
Ընդհանուր		0.15		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Բնակավայրերի հողեր, որից՝			
			Բնակավայրերի հողեր	
ԲԲ-1	*Այլ հողեր*	0.2	*Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ*	0.2
Ընդհանուր		0.2		
	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝			
			Հատուկ պահպանվող տարածքների հողեր	
ԳՀ-1	*Արոտավայր*	0.73	*Հանգստի համար նախատեսված*	0.73
ԳՀ-2	*Այլ հողատեսքեր*	0.4	*Հանգստի համար նախատեսված*	0.4
Ընդհանուր		1.13		
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝			
			Բնակավայրերի հողեր	
ԳԲ-I	*Վարելահող*	0.33	*Բնակելի կառուցապատման*	0.33
ԳԲ-2	*Վարելահող*	0.85	*Բնակելի կառուցապատման*	0.85

Ընդհանուր	*1.18*

Եղիպատրուշ բնակավայր				
Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները Մայլեռ լեռնադահուկային առողջավայրի շրջանակում				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
Առաջնահերթ միջոցառումներ (0-5 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից			
			Բնակավայրերի	
ԳԲ-23	*վարելահող*	10.71	խառը կառուցապատման	10.71
ԳԲ-24	*այլ հողատեսք*	0.38	խառը կառուցապատման	0.38
ԳԲ-25	*այլ հողատեսք*	8.95	խառը կառուցապատման	8.95
ԳԲ-26	*վարելահող*	0.38	խառը կառուցապատման	0.38
ԳԲ-27	*վարելահող*	8.21	խառը կառուցապատման	8.21
ԳԲ-28	*այլ հողատեսք*	0.22	խառը կառուցապատման	0.22
ԳԲ-29	*վարելահող*	1.44	խառը կառուցապատման	1.44
ԳԲ-30	*վարելահող*	0.39	խառը կառուցապատման	0.39
ԳԲ-31	*վարելահող*	5.32	խառը կառուցապատման	5.32
ԳԲ-32	*այլ հողատեսք*	0.58	խառը կառուցապատման	0.58
ԳԲ-33	*վարելահող*	8.17	խառը կառուցապատման	8.17
ԳԲ-45	*վարելահող*	6.59	խառը կառուցապատման	6.59
ԳԲ-46	*վարելահող*	6.02	խառը կառուցապատման	6.02
ԳԲ-47	*այլ հողատեսք*	11.66	խառը կառուցապատման	11.66
ԳԲ-48	*այլ հողատեսք*	5.62	խառը կառուցապատման	5.62
ԳԲ-49	*այլ հողատեսք*	0.86	խառը կառուցապատման	0.86
ԳԲ-50	*այլ հողատեսք*	3.84	խառը կառուցապատման	3.84
ԳԲ-51	*այլ հողատեսք*	0.26	խառը կառուցապատման	0.26
ԳԲ-52	*խոտհարք*	0.23	խառը կառուցապատման	0.23
ԳԲ-53	*վարելահող*	2.32	խառը կառուցապատման	2.32
ԳԲ-54	*այլ հողատեսք*	2.44	խառը կառուցապատման	2.44
ԳԲ-55	*վարելահող*	1.88	խառը կառուցապատման	1.88
ԳԲ-56	*այլ հողատեսք*	20.02	խառը կառուցապատման	20.02
ԳԲ-57	*վարելահող*	7.23	խառը կառուցապատման	7.23
ԳԲ-58	*վարելահող*	9.59	խառը կառուցապատման	9.59
ԳԲ-59	*վարելահող*	9.25	խառը կառուցապատման	9.25
ԳԲ-60	*վարելահող*	6.54	խառը կառուցապատման	6.54
ԳԲ-61	*վարելահող*	3.10	խառը կառուցապատման	3.10
ԳԲ-62	*վարելահող*	1.59	խառը կառուցապատման	1.59
ԳԲ-63	*վարելահող*	2.97	խառը կառուցապատման	2.97
ԳԲ-64	*վարելահող*	5.29	խառը կառուցապատման	5.29
ԳԲ-65	*վարելահող*	1.52	խառը կառուցապատման	1.52
ԳԲ-66	արոտավայր	6.49	խառը կառուցապատման	6.49

ԳԲ-67	*խոտհարք*	32.50	խառը կառուցապատման	32.50
ԳԲ-68	*վարելահող*	4.25	խառը կառուցապատման	4.25
ԳԲ-69	*վարելահող*	3.10	խառը կառուցապատման	3.10
ԳԲ-70	*վարելահող*	3.04	խառը կառուցապատման	3.04
ԳԲ-71	*վարելահող*	5.43	խառը կառուցապատման	5.43
ԳԲ-72	*վարելահող*	0.63	խառը կառուցապատման	0.63
ԳԲ-73	*վարելահող*	0.08	խառը կառուցապատման	0.08
ԳԲ-74	*վարելահող*	0.38	խառը կառուցապատման	0.38
ԳԲ-75	*այլ հողատեսք*	0.72	խառը կառուցապատման	0.72
ԳԲ-76	*վարելահող*	11.55	խառը կառուցապատման	11.55
ԳԲ-77	*վարելահող*	12.84	խառը կառուցապատման	12.84
ԳԲ-78	արոտավայր	7.74	խառը կառուցապատման	7.74
ԳԲ-79	*վարելահող*	4.92	խառը կառուցապատման	4.92
ԳԲ-80	*վարելահող*	1.27	խառը կառուցապատման	1.27
ԳԲ-81	*վարելահող*	0.77	խառը կառուցապատման	0.77
ԳԲ-82	*վարելահող*	6.06	խառը կառուցապատման	6.06
ԳԲ-83	*վարելահող*	0.80	խառը կառուցապատման	0.80
ԳԲ-84	*այլ հողատեսք*	0.81	խառը կառուցապատման	0.81
ԳԲ-88	*վարելահող*	0.61	խառը կառուցապատման	0.61
ԳԲ-89	*վարելահող*	0.38	խառը կառուցապատման	0.38
ԳԲ-90	*այլ հողատեսք*	0.10	խառը կառուցապատման	0.10
ԳԲ-91	*վարելահող*	0.38	խառը կառուցապատման	0.38
ԳԲ-92	*վարելահող*	0.38	խառը կառուցապատման	0.38
ԳԲ-93	*վարելահող*	1.38	խառը կառուցապատման	1.38
ԳԲ-94	*վարելահող*	1.34	խառը կառուցապատման	1.34
ԳԲ-95	*վարելահող*	0.86	խառը կառուցապատման	0.86
ԳԲ-96	*վարելահող*	0.47	խառը կառուցապատման	0.47
ԳԲ-97	*վարելահող*	0.90	խառը կառուցապատման	0.90
ԳԲ-98	*խոտհարք*	0.10	խառը կառուցապատման	0.10
ԳԲ-99	*վարելահող*	0.68	խառը կառուցապատման	0.68
ԳԲ-100	*վարելահող*	1.57	խառը կառուցապատման	1.57
ԳԲ-101	*վարելահող*	0.15	խառը կառուցապատման	0.15
ԳԲ-102	*վարելահող*	6.67	խառը կառուցապատման	6.67
ԳԲ-103	*վարելահող*	1.92	խառը կառուցապատման	1.92
ԳԲ-104	*վարելահող*	1.19	խառը կառուցապատման	1.19
ԳԲ-105	*վարելահող*	0.86	խառը կառուցապատման	0.86
ԳԲ-106	*վարելահող*	0.82	խառը կառուցապատման	0.82
ԳԲ-107	*վարելահող*	0.51	խառը կառուցապատման	0.51
ԳԲ-108	*այլ հողատեսք*	3.65	խառը կառուցապատման	3.65
ԳԲ-109	*վարելահող*	2.44	խառը կառուցապատման	2.44
ԳԲ-110	*վարելահող*	0.94	խառը կառուցապատման	0.94
ԳԲ-111	*վարելահող*	1.02	խառը կառուցապատման	1.02
ԳԲ-112	*վարելահող*	7.63	խառը կառուցապատման	7.63
ԳԲ-113	*այլ հողատեսք*	0.08	խառը կառուցապատման	0.08
ԳԲ-114	*այլ հողատեսք*	0.06	խառը կառուցապատման	0.06
ԳԲ-115	*այլ հողատեսք*	0.07	խառը կառուցապատման	0.07
ԳԲ-116	*խոտհարք*	0.77	խառը կառուցապատման	0.77

ԳԲ-117	*վարելահող*	1.35	խառը կառուցապատման	1.35
ԳԲ-118	*վարելահող*	1.54	խառը կառուցապատման	1.54
ԳԲ-119	*վարելահող*	1.30	խառը կառուցապատման	1.30
ԳԲ-120	*վարելահող*	0.68	խառը կառուցապատման	0.68
ԳԲ-121	*վարելահող*	0.97	խառը կառուցապատման	0.97
ԳԲ-122	*վարելահող*	0.65	խառը կառուցապատման	0.65
ԳԲ-123	*այլ հողատեսք*	0.52	խառը կառուցապատման	0.52
ԳԲ-124	*այլ հողատեսք*	0.33	խառը կառուցապատման	0.33
ԳԲ-125	*այլ հողատեսք*	0.23	խառը կառուցապատման	0.23
ԳԲ-126	*այլ հողատեսք*	0.79	խառը կառուցապատման	0.79
ԳԲ-127	*այլ հողատեսք*	0.87	խառը կառուցապատման	0.87
ԳԲ-128	*վարելահող*	0.57	խառը կառուցապատման	0.57
ԳԲ-129	*այլ հողատեսք*	0.58	խառը կառուցապատման	0.58
ԳԲ-137	*այլ հողատեսք*	0.25	խառը կառուցապատման	0.25
ԳԲ-139	*այլ հողատեսք*	4.12	խառը կառուցապատման	4.12
ԳԲ-140	*այլ հողատեսք*	2.25	խառը կառուցապատման	2.25
ԳԲ-141	*այլ հողատեսք*	0.52	խառը կառուցապատման	0.52
ԳԲ-142	*այլ հողատեսք*	0.26	խառը կառուցապատման	0.26
ԳԲ-144	*արոտավայր*	7.35	խառը կառուցապատման	7.35
ԳԲ-145	*վարելահող*	0.45	խառը կառուցապատման	0.45
ԳԲ-146	*այլ հողատեսք*	0.14	խառը կառուցապատման	0.14
ԳԲ-147	*վարելահող*	0.35	խառը կառուցապատման	0.35
ԳԲ-148	*վարելահող*	0.04	խառը կառուցապատման	0.04
ԳԲ-149	*այլ հողատեսք*	0.57	խառը կառուցապատման	0.57
ԳԲ-150	*խոտհարք*	0.18	խառը կառուցապատման	0.18
ԳԲ-151	*այլ հողատեսք*	0.09	խառը կառուցապատման	0.09
ԳԲ-152	*վարելահող*	0.37	խառը կառուցապատման	0.37
ԳԲ-153	*խոտհարք*	2.71	խառը կառուցապատման	2.71
ԳԲ-154	*խոտհարք*	2.11	խառը կառուցապատման	2.11
ԳԲ-155	*խոտհարք*	0.16	խառը կառուցապատման	0.16
ԳԲ-156	*խոտհարք*	1.28	խառը կառուցապատման	1.28
ԳԲ-157	*խոտհարք*	1.70	խառը կառուցապատման	1.70
ԳԲ-158	*խոտհարք*	1.07	խառը կառուցապատման	1.07
ԳԲ-159	*խոտհարք*	0.85	խառը կառուցապատման	0.85
ԳԲ-160	*խոտհարք*	0.84	խառը կառուցապատման	0.84
ԳԲ-161	*խոտհարք*	1.50	խառը կառուցապատման	1.50
ԳԲ-162	*խոտհարք*	0.82	խառը կառուցապատման	0.82
ԳԲ-163	*խոտհարք*	1.10	խառը կառուցապատման	1.10
ԳԲ-164	*խոտհարք*	0.27	խառը կառուցապատման	0.27
ԳԲ-165	*խոտհարք*	0.39	խառը կառուցապատման	0.39
ԳԲ-166	*խոտհարք*	1.90	խառը կառուցապատման	1.90
ԳԲ-167	*խոտհարք*	0.95	խառը կառուցապատման	0.95
ԳԲ-168	*խոտհարք*	0.95	խառը կառուցապատման	0.95
ԳԲ-169	*խոտհարք*	0.95	խառը կառուցապատման	0.95
ԳԲ-170	*խոտհարք*	4.16	խառը կառուցապատման	4.16
ԳԲ-171	*խոտհարք*	4.61	խառը կառուցապատման	4.61
ԳԲ-172	*խոտհարք*	0.16	խառը կառուցապատման	0.16

ԳԲ-173	*խոտհարք*	0.48	խառը կառուցապատման	0.48
ԳԲ-174	*խոտհարք*	0.63	խառը կառուցապատման	0.63
ԳԲ-175	*խոտհարք*	0.97	խառը կառուցապատման	0.97
ԳԲ-176	*խոտհարք*	0.90	խառը կառուցապատման	0.90
ԳԲ-177	*խոտհարք*	1.50	խառը կառուցապատման	1.50
ԳԲ-178	*խոտհարք*	1.63	խառը կառուցապատման	1.63
ԳԲ-179	*խոտհարք*	0.59	խառը կառուցապատման	0.59
ԳԲ-180	*խոտհարք*	0.55	խառը կառուցապատման	0.55
ԳԲ-181	*խոտհարք*	0.36	խառը կառուցապատման	0.36
ԳԲ-182	*խոտհարք*	0.79	խառը կառուցապատման	0.79
ԳԲ-183	*խոտհարք*	0.10	խառը կառուցապատման	0.10
ԳԲ-184	*խոտհարք*	0.57	խառը կառուցապատման	0.57
ԳԲ-185	*խոտհարք*	0.30	խառը կառուցապատման	0.30
ԳԲ-186	*խոտհարք*	0.21	խառը կառուցապատման	0.21
ԳԲ-187	*խոտհարք*	0.48	խառը կառուցապատման	0.48
ԳԲ-188	*խոտհարք*	1.22	խառը կառուցապատման	1.22
ԳԲ-189	*խոտհարք*	1.19	խառը կառուցապատման	1.19
ԳԲ-190	*խոտհարք*	1.91	խառը կառուցապատման	1.91
ԳԲ-191	*խոտհարք*	0.85	խառը կառուցապատման	0.85
ԳԲ-192	*խոտհարք*	0.53	խառը կառուցապատման	0.53
ԳԲ-193	*խոտհարք*	0.79	խառը կառուցապատման	0.79
ԳԲ-194	*խոտհարք*	0.84	խառը կառուցապատման	0.84
ԳԲ-195	*խոտհարք*	0.45	խառը կառուցապատման	0.45
ԳԲ-196	*խոտհարք*	1.23	խառը կառուցապատման	1.23
ԳԲ-197	*խոտհարք*	1.06	խառը կառուցապատման	1.06
ԳԲ-198	*խոտհարք*	1.33	խառը կառուցապատման	1.33
ԳԲ-199	*խոտհարք*	1.24	խառը կառուցապատման	1.24
ԳԲ-200	*խոտհարք*	5.83	խառը կառուցապատման	5.83
ԳԲ-201	*խոտհարք*	0.04	խառը կառուցապատման	0.04
ԳԲ-202	*այլ հողատեսք*	0.32	խառը կառուցապատման	0.32
ԳԲ-203	*այլ հողատեսք*	0.25	խառը կառուցապատման	0.25
ԳԲ-204	*վարելահող*	0.14	խառը կառուցապատման	0.14
ԳԲ-205	*վարելահող*	0.08	խառը կառուցապատման	0.08
ԳԲ-206	*վարելահող*	0.39	խառը կառուցապատման	0.39
ԳԲ-207	*վարելահող*	0.35	խառը կառուցապատման	0.35
ԳԲ-208	*արոտավայր*	7.35	խառը կառուցապատման	7.35
ԳԲ-209	*այլ հողատեսք*	0.44	խառը կառուցապատման	0.44
ԳԲ-210	*այլ հողատեսք*	1.40	խառը կառուցապատման	1.40
ԳԲ-211	*այլ հողատեսք*	0.72	խառը կառուցապատման	0.72
ԳԲ-212	*այլ հողատեսք*	0.77	խառը կառուցապատման	0.77
ԳԲ-213	*այլ հողատեսք*	0.63	խառը կառուցապատման	0.63
ԳԲ-214	*այլ հողատեսք*	0.21	խառը կառուցապատման	0.21
ԳԲ-215	*այլ հողատեսք*	0.24	խառը կառուցապատման	0.24
ԳԲ-217	*այլ հողատեսք*	0.27	խառը կառուցապատման	0.27
ԳԲ-218	*այլ հողատեսք*	0.19	խառը կառուցապատման	0.19

ԳԲ-219	*այլ հողատեսք*	0.19	խառը կառուցապատման	0.19
ԳԲ-220	*այլ հողատեսք*	0.12	խառը կառուցապատման	0.12
ԳԲ-221	*այլ հողատեսք*	0.97	խառը կառուցապատման	0.97
ԳԲ-222	*այլ հողատեսք*	0.10	խառը կառուցապատման	0.10
ԳԲ-223	*այլ հողատեսք*	0.10	խառը կառուցապատման	0.10
ԳԲ-224	*այլ հողատեսք*	0.06	խառը կառուցապատման	0.06
ԳԲ-225	*այլ հողատեսք*	0.08	խառը կառուցապատման	0.08
ԳԲ-226	*այլ հողատեսք*	0.18	խառը կառուցապատման	0.18
ԳԲ-227	*այլ հողատեսք*	0.07	խառը կառուցապատման	0.07
ԳԲ-228	*այլ հողատեսք*	0.06	խառը կառուցապատման	0.06
Ընդհանուր		**394.930**		
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ԳԷ-1	արոտավայր	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-2	*խոտհարք*	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-3	*խոտհարք*	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-4	արոտավայր	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-5	արոտավայր	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-6	արոտավայր	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-7	*վարելահող*	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-8	արոտավայր	0.120	տրանսպորտի	0.120
ԳԷ-9	արոտավայր	0.440	տրանսպորտի	0.440
ԳԷ-10	*այլ հողատեսք*	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-11	արոտավայր	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-12	*վարելահող*	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-13	արոտավայր	0.060	տրանսպորտի	0.060
ԳԷ-14	արոտավայր	0.125	տրանսպորտի	0.125
ԳԷ-15	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-16	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-17	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-18	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-19	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-20	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-21	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-22	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-23	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-24	արոտավայր	0.0015	տրանսպորտի	0.0015
ԳԷ-25	արոտավայր	0.004	տրանսպորտի	0.004
ԳԷ-26	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-27	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-28	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-29	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010

ԳԷ-30	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-31	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-32	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-33	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-34	արոտավայր	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-35	*խոտհարք*	0.001	էներգետիկայի	0.001
ԳԷ-36	*վարելահող*	0.003	էներգետիկայի	0.003
ԳԷ-37	*այլ հողատեսք*	0.005	տրանսպորտի	0.005
ԳԷ-38	*վարելահող*	0.150	տրանսպորտի	0.150
ԳԷ-39	*այլ հողատեսք*	0.047	տրանսպորտի	0.047
ԳԷ-40	*խոտհարք*	0.010	տրանսպորտի	0.010
ԳԷ-41	*վարելահող*	0.030	տրանսպորտի	0.030
ԳԷ-42	*այլ հողատեսք*	0.049	տրանսպորտի	0.049
ԳԷ-43	*վարելահող*	0.300	տրանսպորտի	0.300
ԳԷ-44	*այլ հողատեսք*	0.012	տրանսպորտի	0.012
ԳԷ-45	*խոտհարք*	0.024	տրանսպորտի	0.024
ԳԷ-46	*այլ հողատեսք*	0.006	տրանսպորտի	0.006
ԳԷ-47	*վարելահող*	0.210	տրանսպորտի	0.210
ԳԷ-48	*այլ հողատեսք*	0.970	տրանսպորտի	0.970
ԳԷ-49	*վարելահող*	0.170	տրանսպորտի	0.170
ԳԷ-50	*այլ հողատեսք*	0.040	տրանսպորտի	0.040
ԳԷ-51	*վարելահող*	0.046	տրանսպորտի	0.046
ԳԷ-52	*այլ հողատեսք*	0.040	տրանսպորտի	0.040
ԳԷ-53	*վարելահող*	0.510	տրանսպորտի	0.510
ԳԷ-54	*այլ հողատեսք*	0.004	տրանսպորտի	0.004
ԳԷ-55	*վարելահող*	0.143	տրանսպորտի	0.143
ԳԷ-56	*վարելահող*	0.570	տրանսպորտի	0.570
ԳԷ-57	*այլ հողատեսք*	0.510	տրանսպորտի	0.510
ԳԷ-58	*այլ հողատեսք*	0.055	տրանսպորտի	0.055
Ընդհանուր		**5.9705**		
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի հողերի	
ԲԲ-1	բնակելի կառուցապատման	1.96	խառը կառուցապատման	1.96
ԲԲ-2	բնակելի կառուցապատման	0.71	խառը կառուցապատման	0.71
ԲԲ-3	բնակելի կառուցապատման	0.54	խառը կառուցապատման	0.54
ԲԲ-4	բնակելի կառուցապատման	0.43	խառը կառուցապատման	0.430
ԲԲ-5	բնակելի կառուցապատման	1.09	խառը կառուցապատման	1.09
ԲԲ-6	բնակելի կառուցապատման	0.51	խառը կառուցապատման	0.51
ԲԲ-7	բնակելի կառուցապատման	0.17	խառը կառուցապատման	0.17
ԲԲ-8	բնակելի կառուցապատման	1.21	խառը կառուցապատման	1.21
ԲԲ-9	բնակելի կառուցապատման	2.00	խառը կառուցապատման	2.00
ԲԲ-10	բնակելի կառուցապատման	0.61	խառը կառուցապատման	0.61
ԲԲ-11	բնակելի կառուցապատման	0.67	խառը կառուցապատման	0.67
ԲԲ-12	այլ հողեր	0.22	խառը կառուցապատման	0.22
ԲԲ-13	այլ հողեր	0.33	խառը կառուցապատման	0.33
ԲԲ-14	բնակելի կառուցապատման	0.06	խառը կառուցապատման	0.06

ԲԲ-15	բնակելի կառուցապատման	0.11	խառը կառուցապատման	0.11
Ընդհանուր		**10.62**		
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից՝			
ԱԲ-1	պահեստարանների	0.10	խառը կառուցապատման	0.10
Ընդհանուր		**0.10**		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի	
ԳԲ-1	*վարելահող*	0.38	խառը կառուցապատման	0.38
ԳԲ-2	*այլ հողատեսք*	0.62	խառը կառուցապատման	0.62
ԳԲ-3	*վարելահող*	0.11	խառը կառուցապատման	0.11
ԳԲ-4	*վարելահող*	0.22	խառը կառուցապատման	0.22
ԳԲ-5	*վարելահող*	0.60	խառը կառուցապատման	0.60
ԳԲ-6	*վարելահող*	0.43	խառը կառուցապատման	0.43
ԳԲ-7	*այլ հողատեսք*	1.44	խառը կառուցապատման	1.44
ԳԲ-8	*վարելահող*	2.98	խառը կառուցապատման	2.98
ԳԲ-9	*վարելահող*	31.88	խառը կառուցապատման	31.88
ԳԲ-10	*վարելահող*	8.24	խառը կառուցապատման	8.24
ԳԲ-11	*այլ հողատեսք*	0.29	խառը կառուցապատման	0.29
ԳԲ-12	*այլ հողատեսք*	2.99	խառը կառուցապատման	2.99
ԳԲ-13	*վարելահող*	2.67	խառը կառուցապատման	2.67
ԳԲ-14	*վարելահող*	0.17	խառը կառուցապատման	0.17
ԳԲ-15	*վարելահող*	0.93	խառը կառուցապատման	0.93
ԳԲ-16	*այլ հողատեսք*	0.03	խառը կառուցապատման	0.03
ԳԲ-17	*վարելահող*	3.10	խառը կառուցապատման	3.10
ԳԲ-18	*այլ հողատեսք*	0.37	խառը կառուցապատման	0.37
ԳԲ-19	արոտավայր	1.72	խառը կառուցապատման	1.72
ԳԲ-20	*այլ հողատեսք*	5.17	խառը կառուցապատման	5.17
ԳԲ-21	*այլ հողատեսք*	0.59	խառը կառուցապատման	0.59
ԳԲ-22	*այլ հողատեսք*	0.12	խառը կառուցապատման	0.12
ԳԲ-34	*վարելահող*	15.18	խառը կառուցապատման	15.18
ԳԲ-35	*վարելահող*	12.57	խառը կառուցապատման	12.57
ԳԲ-36	*խոտհարք*	0.05	խառը կառուցապատման	0.05
ԳԲ-37	*այլ հողատեսք*	9.25	խառը կառուցապատման	9.25
ԳԲ-38	*վարելահող*	1.87	խառը կառուցապատման	1.87
ԳԲ-39	*վարելահող*	0.65	խառը կառուցապատման	0.65
ԳԲ-40	*վարելահող*	1.09	խառը կառուցապատման	1.09
ԳԲ-41	*այլ հողատեսք*	0.05	խառը կառուցապատման	0.05
ԳԲ-42	*խոտհարք*	0.09	խառը կառուցապատման	0.09
ԳԲ-43	*վարելահող*	8.61	խառը կառուցապատման	8.61
ԳԲ-44	*վարելահող*	8.07	խառը կառուցապատման	8.07
ԳԲ-85	*խոտհարք*	0.79	խառը կառուցապատման	0.79

ԳԲ-86	*վարելահող*	2.09	խառը կառուցապատման	2.09
ԳԲ-87	*վարելահող*	1.54	խառը կառուցապատման	1.54
ԳԲ-130	*այլ հողատեսք*	1.39	խառը կառուցապատման	1.39
ԳԲ-131	*այլ հողատեսք*	3.24	խառը կառուցապատման	3.24
ԳԲ-132	*այլ հողատեսք*	3.65	խառը կառուցապատման	3.65
ԳԲ-133	*այլ հողատեսք*	2.99	խառը կառուցապատման	2.99
ԳԲ-134	*այլ հողատեսք*	0.46	խառը կառուցապատման	0.46
ԳԲ-135	*այլ հողատեսք*	0.69	խառը կառուցապատման	0.69
ԳԲ-136	*այլ հողատեսք*	0.46	խառը կառուցապատման	0.46
ԳԲ-138	*այլ հողատեսք*	3.57	խառը կառուցապատման	3.57
ԳԲ-143	*այլ հողատեսք*	1.02	խառը կառուցապատման	1.02
ԳԲ-216	*խոտհարք*	0.49	խառը կառուցապատման	0.49
Ընդհանուր		144.91		

	Տեխնիկատնտեսական ցուցանիշներ (Արագածոտն 1 միկրոռեգիոնալ փաստաթղթի շրջանակում կատարված) և Մայլեռ լեռնադահուկային առողջավայրի շրջանակում				
	Ցուցանիշը	**Չափման միավորը**	**Փաստացի**	**Առաջնահերթ**	**Հեռանկարային**
	1	2	3	4	5
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	**հա**	**3804.62**	**3804.62**	**3804.62**
	Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**78.06**	**473.24**	**619.33**
	բնակելի կառուցապատման	հա	60.86	51.0	52.18
	հասարակական կառուցապատման	հա	1.41	1.41	1.41
	խառը կառուցապատման	հա		405.65	550.56
	ընդհանուր օգտագործման,	հա	8.71	8.71	8.91
	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա			
	այլ տարածքներ	հա			
	այլ հողեր	հա	7.08	6.47	6.27
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**12.11**	**11.86**	**11.86**
	արդյունաբերական օբյեկտների	հա		0.00	0.00
	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	11.77	11.62	11.62
	պահեստարանների	հա	0.34	0.24	0.24
	ընդերքի օգտագործման	հա			0.00
	էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	**հա**	**12.71**	**20.481**	**20.481**
	էներգետիկայի	հա	0.01	0.014	0.014

	կապի	հա	0.12	0.120	0.120
	տրանսպորտի	հա	6.36	12.327	12.327
	կոմունալ ենթակառուցվածքների	հա	6.22	8.02	8.02
	Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**3.55**	**1.99**	**3.12**
	բնապահպանական	հա			
	հանգստի համար նախատեսված	հա		0	1.130
	պատմական և մշակութային	հա	3.55	1.99	1.99
	Հատուկ նշանակության հողեր	**հա**	**0.3**	**0.3**	**0.3**
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**3161.55**	**2760.41**	**2613.19**
	վարելահող	հա	756.2	557.86	453.3
	բազմամյա տնկարկներ	հա	*5.9*	5.90	5.90
	խոտհարքներ	հա	130.9	39.78	38.36
	արոտավայր	հա	2052.38	2021.65	2019.2
	այլ հողատեսքեր	հա	216.17	135.22	96.43
	Անտառային հողեր	հա	**327.6**	**327.600**	**327.600**
	Ջրային հողեր	հա	**208.74**	**208.74**	**208.74**
	գետեր	հա			
	ջրամբարներ	հա			
	լճեր	հա	208.53	208.53	208.53
	ջրանցքներ	հա	0.21	0.21	0.21
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա			

2.1. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

2.1.1. Ջրամատակարարում

ՀՀ Արագածոտնի մարզի ոչ բոլոր բնակավայրերի ջրամատակարարումն է իրականացվում մասնագիտացված ընկերության կողմից:

Ըստ "Վեոլիա ջուր" ընկերության տրամադրված տեղեկատվության՝ սպասարկվում է միայն Ապարան քաղաքը: Համայնքի գյուղական բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է լոկալ աղբյուրներից՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շահագործվող ջրամատակարարման համակարգերով, որոնց զգալի մասը կարիք ունի հիմնանորոգման:

Գոյություն ունեցող վիճակի վերլուծության ամփոփում

Առկա վիճակի վերլուծության արդյունքում արձանագրվել են խմելու ջրամատակարարման ոլորտին առնչվող հետևյալ խնդիրները.

1) ջրատարների և ջրամատակարարման բաշխիչ ցանցերի մաշվածություն (կորուստների բարձր տոկոս) կամ բացակայություն,
2) խմելու ջրի հաշվառման բացակայություն, ոչ արդյունավետ օգտագործում,

3) անհրաժեշտ քանակով ջրապաշար ամբարելու համար համապատասխան ծավալով, պահանջվող նիշերի վրա տեղակայված ջրամբարների բացակայություն,
4) ջրամատակարարման կառավարման ոչ բավարար իմացություն:

Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ջրապահանջը

Բնակավայրի համար խմելու ջրամատակարարման համակարգը նախատեսվում է՝

1) բնակչության, ինչպես նաև համայնքի տարածքում իրականացվելիք ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվող համալիրի ակնկալվող 75000 հանգստացողների խմելու-տնտեսական նպատակով պահանջարկը,
2) արտադրական այն օբյեկտների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր,
3) բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության, ինչպես նաև հանգստավողների խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակն ընդունվել է 200 լ/օր/մարդ:

Արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրաքանակն ընդունվում է բնակչության ջրապահանջի 15%-ի չափով (ըստ ՇՆևԿ 2.04.02.84):

Ստորև աղյուսակում տրված է Եղիպատրուշ բնակավայրի խմելու-տնտեսական, արտադրական և հակահրդեհային կարիքների համար պահանջվող հաշվարկային ջրապահանջը (ներառյալ նաև հոսակորուստները).

Հաշվարկային ջրապահանջը

N	Բնակավայրի անվանումը	Հեռանկարային բնակչության և հանգստացողների քանակը	Ջրա-սպառ-ման նորմը	Ջրապահանջը				
				Խմելու-տնտե-սական	Արտա-դրա-կան (15 %)	Հակահր-դեհային կարիք-ներ	Հոսակո-րուստ-ներ (30 %)	Ընդա-մենը
		մարդ	**լ/օր**	մ³/օր				
1	*2*	*3*	***4***	***5***	*6*	***7***	***8***	*9*
1	Եղիպատրուշ /Բնակավայր/	808	150	121.2	18.2	81	36.4	256.8
2	“Մայլեռ” հանգստա-վայրի հանգըս-տացողներ	75000	100	75000	-	108	22500	97608
	Ընդամենը							97864.8

Շուրջօրյա ջրամատակարարում, ինչպես նաև անհրաժեշտ հակահրդեհային ելք ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բնակավայրում ունենալ որոշակի ջրապաշար, որն իր մեջ ներառում է ծավալային երեք բաղադրիչ՝ $W_կ$ (կարգավորման), $W_{հհ}$ (հակահրդեհային), $W_{վթ}$ (վթարային): Պահանջվող ընդհանուր ծավալը ($W_{ընդ}$), որն անհրաժեշտ է նախատեսել յուրաքանչյուր համայնքում, ձևավորվում է այս երեք բաղադրիչների հաշվարկային արժեքների գումարից՝ $W_{ընդ}=W_կ+W_{հհ}+W_{վթ}$:

Խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները

N	Բնակավայրը	Կարգավոր-ման ծավալ $W_կ$	Հակահրդեհա-յին կարիքներ $W_{հհ}$	Վթարային ծավալ $W_{վթ}$	Ընդհանուր պահանջվող ծավալ $W_{ընդ}$

		$մ^3$			
1	Եղիպատրուշ /Բնակավայր/	95	81	158	334
2	“Մայլեռ” հանգստա-վայրի հանգըս-տացողներ	3294.9	216	5491.5	9002.4

Ջրամատակարարման նախատեսվող համակարգերը և գոտիները

Ջրամատակարարման համակարգերը նախատեսվում են կենտրոնացված. բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար նախատեսելով նոր ՕԿՋ-ներ, որտեղից խմելու ջուրը բնակչությանը կտրվի ինքնահոս եղանակով :

Ջրամատակարարման գլխավոր փողոցային ցանցերն անհրաժեշտ է նախատեսել օղակային՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով: Փակուղային կարող են լինել 200 մ-ից պակաս երկարություն և 100 մմ-ից պակաս տրամագիծ ունեցող ջրագծերը:

Խողովակաշարերի թեքություններն ընդունել ոչ պակաս 0.001, հարթ ռելիեֆի պայմաններում՝ 0.0005:

Խմելու որակի ջուր տեղափոխող խողովակների տեղադրման խորությունը պետք է նախատեսել.

1)0.5 մ-ով ավելի, քան գրունտ ներթափանցող զրոյական ջերմաստիճանի հաշվարկային խորությունն է,

2)կոյուղու խողովակաշարերից ուղղաձիգ ուղղությամբ 0.4 մ-ով բարձր:

Հաշվի առնելով, որ ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, օղակային խողովակաշարերի տրամագծերը պետք է նախատեսել 100 մմ-ից ոչ պակաս:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Ջրամատակարարման համակարգերի համայնքային կառավարումն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել այդ համակարգերի պատշաճ շահագործման և պահպանման կազմակերպություն (ՇևՊ), որը կունենա համապատասխան վերապատրաստում անցած աշխատակիցներ:
2) Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:
3) Բնակչությանն ու հանգստացողներին անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով առաջարկվում է գյուղի բնակչությանը սպասարկող 2x180 $մ^3$ ծավալով ՕԿՋ-ների նախատեսում, հանգստավայրի համար՝ ընդհանուր 9000 $մ^3$ ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում.
4) խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:
5) Ջրամատակարարաման համակարգում (գլխամասային կառույցներ, ՕԿՋ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:
6) Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:

7) Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:
8) Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:
9) Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1) Ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում:
2) Ջրամատակարարման համակարգի հուսալիություն:
3) Հոսակորուստների կրճատում:
4) Ջրի սպառման արդյունավետության բարձրացում:
5) Բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում:
6) Խմելու ջրի հաշվառում, ինչը կբերի ջրօգտագործման կուլտուրայի բարելավման, ինչպես նաև կխթանի բնակիչների ջրօգտագործման ռեժիմի փոփոխությանը:
7) Խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

2.1.2. Ջրահեռացում

2.1.2.1)Կենցաղային և արտադրական կոյուղի

Ըստ Վեղիաջուր ընկերության տրամադրած տեղեկատվության՝ կոյուղացված է միայն Ապարան քաղաքը /65 տոկոսով/, սակայն կոյուղու համակարգով հեռացվող հոսքաջրերի վարակազերծման հարցը լուծված չէ: Չի գործում Ապարան քաղաքի կոյուղու մաքրման կայանը: Կոյուղու համակարգով հեռացվող հոսքաջրերը լցվում են Քասախ գետը՝ առանց մաքրման և վարակազերծման՝ մեծ վտանգ ներկայացնելով վարակիչ հիվանդությունների տարածման տեսանկյունից:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել հանգստավայրը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Ինքնահոս ջրահեռացման խողովակների տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս.

- փողոցային ցանցի համար՝ 200 մմ, թեքությունը՝ 0.007,
- ներթաղամասային կենցաղային և արտադրական կոյուղու ցանցի համար՝ 150 մմ, թեքությունը՝ 0.008:

Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր կամ ոռոգման համակարգ:

Ստորև աղյուսակում տրված է կոյուղու (կոմունալ-կենցաղային և արտադրական) հեռացման ենթակա հոսքաջրերի հաշվարկային ելքերը:

Եղիպատրուշ բնակավայրում ներկայումս՝ ինչպես համայնքի մյուս գյուղական բնակավայրերում, կոյուղու կենտրոնացված համակարգ առկա չէ: Բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններով:

Հաշվի առնելով Մայլեռ հանգստավայրի ժամանակավոր բնակչության քանակը՝ ստորև աղյուսակում տրված է գյուղի և առողջավայրի գումարային բնակչության համար կոյուղաջրերի հաշվարկ և նախատեսվող մաքրման կայանների հզորությունները:

Կոյուղու հաշվարկային ելքերն ու մաքրման կայանների հզորությունը

N	Բնակավայրի անվանումը	Հեռանակա-րային	Հեռացման ենթակա հոսքաջրերի քանակը մ³/օր

		բնակչության քանակը (մարդ)	Կոմունալ-կենցաղային	Արտադրա-կան	Ընդամենը
1	*2*	*3*	*4*	***5***	*6*
1	Եղիպատրուշ /Բնակավայր/	808	121.2	16.4	137.6
2	“Մայլեռ” հանգստավայրի հանգըս-տացողներ	75000	75000	-	75000
	Ընդամենը				75137.6

2.1.2.2)Հեղեղատար կոյուղի

Հեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Սույն նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Հեղեղատար ցանցերը՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Անձրևաջրերի հեռացման փակ համակարգի դեպքում խողովակաշարերի տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս՝ 250 մմ փողոցային ցանցի համար, 200 մմ՝ ներթաղամասային ցանցի համար:

Անձրևաջրերի հեռացման բաց համակարգի դեպքում երթևեկելի ասֆալտապատ ճանապարհերի ճամփեզրերի, առանձին խրամառուների (կյուվետ) և ջրահեռացման առվակների թեքությունները համապատասխանաբար ընդունել ոչ պակաս 0.003, 0.005 և 0.003:

Սեղանաձև հատվածքով կյուվետների և ջրահեռացման առվակների նվազագույն չափերն անհրաժեշտ է ընդունել՝

1)հատակի լայնությունը՝ 0.3 մ,

2)խորությունը՝ 0.4 մ:

Անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս կարող է ենթարկվել մաքրման: Անձրևաջրերի մաքրումը կարող է իրականացվել ինչպես առանձին մաքրման սարքավորումներով, այնպես էլ կենցաղային և արտադրական կոյուղու հոսքաջրերի հետ համատեղ՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ՝ որոնք հնարավորություն կստեղծեն մակերեսային հոսքաջրերը կուտակել և միայն կենցաղային կոյուղու ամենաքիչ հոսքի ժամերին մղել կոյուղու համակարգ՝ դրանք

մաքրման կայանում լրիվ մաքրման ենթարկելու համար:

Նախագծային առաջարկություններ

1) բնակավայրի /այդ թվում և հանգստավայրի/ լրիվ կոյուղացում, կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի նախատեսում:
2) Կենցաղային կոյուղուն զուգահեռ հեղեղատար կոյուղու նախատեսում:
3) Կոյուղու կեղտաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պաշտպանելու պահանջները: Ըստ ՇՆևԿ 2.04.02-85-ի 6.1 կետի պահանջների՝ կեղտաջրերը պետք է անցնեն լրիվ կենսաբանական մաքրում և ունենան հետևյալ ցուցանիշը՝ ԹԿՊլրիվ=6 մգ/լ:
4) 75000 մ³/օր ընդհանուր հզորությամբ նոր, ժամանակակից տեխնոլոգիաներով կոյուղու կենսաբանական մաքրման կայանի նախատեսում՝ բնակավայրի ցածրադիր հատվածում (դրանց քանակի և տեղակայման վայրերի ընտրությունը կիրականացվի աշխատանքային նախագծերի շրջանակում՝ առանձին գործառույթների կոնկրետ տեղադիրքերի ճշգրտման արդյունքում), ապահովելով ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերով սարհմանված 500 մ սանիտարապաշտպանիչ գոտին կամ :

Վերոնշյալ սարքավորումները բաղկացած են շղթայաբար իրար միացված տեխնոլոգիական տարրաների ցանցից, որոնցում իրականացվում են կոյուղու հոսքաջրերի փուլային մաքրման գործընթացներ: Կոյուղու հոսքաջրերը հաջորդաբար մուտք գործելով բազմաշերտ պոլիմերային ծածկույթով մետաղից, պոլիէթիլենից կամ պոլիպրոպիլենից պատրաստված տարրաների մեջ, ենթարկվում են կենսաբանական մաքրման (98 %), որից հետո կարող են բաց թողնվել բաց ջրահոսքեր կամ ոռոգման համակարգեր՝ խթանելով կրկնակի ջրօգտագործումը:

<u>Կեղտաջրերի մաքրման համակարգեր. մաքրման կայանների տեսակները, կիրառման առանձնահատկությունները</u>

Կեղտաջրերից թափոններն ու խառնուրդները հեռացնելու համար կոյուղու համակարգերում օգտագործվում են տարբեր տեսակի մաքրման կայաններ: Սա օգնում է պաշտպանել շրջակա միջավայրը մարդու կողմից արտադրված թափոնների աղտոտումից: Այս տեսակի օբյեկտները խստորեն կարգավորվում են տարբեր սանիտարական չափորոշիչներով և այլ փաստաթղթերով, որոնք պարտադիր են ինչպես մասնավոր տնային տնտեսությունների, այնպես էլ կազմակերպությունների համար:

Կոյուղու համակարգի ցանկացած կառուցում ենթադրում է մաքրման կայանների օգտագործում, որոնց մեջ ուղղվում է կեղտաջրերը: Դրանք օգտագործվում են ինչպես լոկալ, այնպես էլ քաղաքային կեղտաջրերի հեռացման համակարգերում: Քանի որ Ապարան քաղաքի կոյուղու համակարգին Մայլեռ հանգստավայրի կոյուղաջրերի միացումը հնարավոր չէ իրականացնել՝ մեծ հեռավորության և ռելիեֆային բարդ պայմանների պատճառով, հետևաբար դիտարկվում է լոկալ՝ գործարանային տիպի մաքրման կայան(ներ)ի տեղադրումը՝ աշխատանքային նախագծի փուլում կոնկրետ մակնիշը, դրա հետ կապված՝ հզորությունը, հետևաբար և քանակը, համապատասխան տեղադիրք(եր)ը, կանխորոշելուց հետո:

<u>Կեղտաջրերի մաքրման մեթոդներ</u>

Հաշվի են առնվում կեղտաջրերի կազմի մեջ գերակշռող աղտոտիչների տեսակները: Նման հեղուկը մաքրելու համար օգտագործվում են հետևյալ մեթոդները.

1) Մեխանիկական, որը ներառում է նստվածք և զտում;
2) Կենսաբանական, որի դեպքում օրգանական նյութը քայքայվում է միկրոօրգանիզմների ազդեցության տակ.

3) Ֆիզիկաքիմիական, որը ներկայացված է ֆլոտացիայի, կլանման և այլ նմանատիպ մաքրման մեթոդներով:

Որոշ դեպքերում կարող է պահանջվել կեղտաջրերի լրացուցիչ ախտահանում՝ օգտագործելով օզոնացում, ուլտրամանուշակագույն ճառագայթում և այլն:

<u>Կենցաղային կեղտաջրերի մաքրման կայաններ</u>

Այս տարրերը օգտագործվում են բնակելի գոտիներում արտադրվող կեղտաջրերի մշակման համար: Քանի որ նման ջուրը սովորաբար պարունակում է ավելի մեծ քանակությամբ օրգանական միացություններ, ընտրվում է կենսաբանական մաքրում:

<u>Մաքրման կայանների շահագործման սկզբունքը</u>

Գործողության սկզբունքը ամենահեշտը ուսումնասիրելն է կենցաղային կեղտաջրերի օրինակով: Գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից.

<u>Մեխանիկական նստվածք</u>: Այն աշխատում է ձգողականության սկզբունքով, երբ բոլոր կախված նյութերը նստում են, և դրանցից մաքրված կեղտաջրերը անցնում են:

<u>Անաէրոբ կենսաբանական օգտահանում:</u> Նստվածք ստացած օրգանական խառնուրդները խմորվում են անաէրոբ բակտերիաների միջոցով: Առաջանում են մեթան, ջուր և այլ պարզ միացություններ:

<u>Աերոբիկ կենսաբանական սանացիա:</u> Այս տեսակի մաքրման վրա ազդում են երկու բաղադրիչ՝ աէրոբ մանրէներ և օդ:

Այս երեք փուլերը թույլ են տալիս մաքրել կեղտաջրերը 98%-ով: Հետևաբար, դրանք կարող են թափվել ջրային մարմիններ կամ տարածքից դուրս այլ տարածքներ կամ երկրորդային օգտագործման (օգտագործվել ոռոգման) նպատակով:

2.1.3. Ոռոգման խնդիրները

Մարզի ջրի հիմնական աղբյուրը Քասախ գետն է, որի ջրաչափական դիտարկումները կատարվում են 1934 թվականից: Քասախ գետի միջին բազմատարյան հոսքը կազմում է 89.0 մլն.խմ, նվազագույնը 52.0 մլն.խմ, առավելագույնը 0.01% ապահովվածության ելքերը կազմում են շուրջ 150 խմ/վրկ:

Քասախ գետի ջրավազանի մակերեսը կազմում է 56 կմ^2:

Գետի նվազագույն ելքը Ապարանի ջրամբարի գետավազանում կազմում է 1.5 խմ/վրկ, իսկ ջրաբերուկների ծավալը տարեկան կազմում է 3.94 հազ.խմ:

Տարածաշրջանի սեյսմիկ ուժգնությունը կազմում է 9 բալ:

Մարզի գյուղատնտեսական ոռոգելի հողատեսքերի մակերեսը կազմում է 54.1 հազ.հա

Մարզում կառուցված է 31 ջրամբար գումարային 108.0 մլն.խմ ծավալով:

Գրունտային ջրերը գտնվում են շուրջ 50մ խորության վրա:

2.1.3.1. Տեխնիկական այլ առաջարկություններ

Ոլորտում առկա խնդիրների լուծման համար հատկապես կարևոր է ոռոգման արդյունավետ եղանակների ներդրումը, ինչը կնպաստի ոռոգման ջրի նպատակային օգտագործմանը:

Ոռոգման համակարգերը պետք է բաղկացած լինեն ջրամբարներից (գլխամասային հանգույց), ջրանցքների համակարգից (մայրուղային ջրանցք, առանձին ճյուղավորումներով բաշխիչ ցանց), որոնց միջոցով հնարավոր կլինի կանոնավոր ոռոգում իրականացնել տարբեր եղանակներով (մակերեսային՝ ակոսներով, շերտերով, խողովակաշարերի միջոցով, անձրևացման, կաթիլային):

<u>ԱՌԱՋԱՐԿ – 1</u>

<u>Ոռոգման փակ համակարգ</u>

Նախկինում և այժմ նույնությամբ գործող ոռոգման ջրի բաց տիպի համակարգերի (մետաղական կամ ասբեստե կիսախողովակներ, բետոնե կամ հողային հունով առուներ) գործարկումը դարձել է անարդյունավետ, քանի որ դրանցով տեղափոխվող ջրի 25-30 տոկոսը կորուստներն են կազմում:

Իրավիճակի լիցքաթափման, այն է՝ կանոնավոր ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև համակարգի վերահսկման և ոռոգման ջրի կորուստների դեմն առնելու նպատակով նախատեսվում է ոռոգման «ԲԱՑ» համակարգից անցում կատարել ոռոգման «ՓԱԿ», ջրաչափերով կահավորված ջրամատակարարման համակարգին, ինչը հնարավորություն կտա ապահովել ջրի արդյունավետ օգտագործումն ու հավասարաչափ բաշխումը:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գրեթե բոլոր համայնքներում, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որոնք կանցնեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

ԱՌԱՋԱՐԿ – 2

Կաթիլային ոռոգման համակարգ

Մի շարք երկրներում ոռոգելի երկրագործության մեջ լայնորեն կիրառվող կաթիլային ոռոգումը հիմնված է բույսի արմատային համակարգին ջրի անմիջական մատուցման սկզբունքի վրա, ինչը բացառում է ջրի անհարկի վատնումը:

Կաթիլային ոռոգումը հորինվել է որպես բերքի ավելացման հիմնական միջոց՝ ջրի ոչ մեծ ծախսերի դեպքում: Ոռոգման այս տիպն իդեալական է ցանկացած տիպի բույսերի համար և կիրառվում է ինչպես մասնավոր ֆերմերային տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբներում:

Կաթիլային ոռոգման համակարգի հիմնական տարրը հանդիսանում է կաթիլային խողովակը, որն իրենից ներկայացնում է բացվածքներով խողովակ:

Կաթիլային ոռոգման խողովակներն, ի տարբերություն սովորական խողովակների, տնտեսող են, ջուրն անմիջապես հասնում է արմատներին, ինչն ապահովում է որակյալ ոռոգում: Ջրի ծախսերը 3-4 անգամ քիչ են, կորուստները՝ երեք անգամ քիչ, իսկ դրա յուրացման արդյունավետությունը՝ կրկնակի անգամ ավելի:

Խողովակները կարող են լինել տարբեր, բայց էությունը մեկն է. Կայունացված պոլիէթիլենից խողովակն ընկած է հողի վրա ակոսների երկայնությամբ, և մատակարարում է ջուր կաթոցիկի միջոցով: Փոքր ճնշման դեպքում՝ կաթիլային, մեծի դեպքում՝ միկրոշիթերով:

Կաթիլային ոռոգումը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացումը: Կաթիլային ոռոգման համակարգը կարող է օգտագործվել.

1) Բոլոր տեսակի մրգատու այգիների համար (խաղող, սեխ, ձմերուկ և այլն):
2) Բոլոր տեսակի բույսերի (բամբակ, արևածաղիկ, և այլն) և ծաղիկների աճեցման համար:

3) Բոլոր տեսակի բանջարեղենների աճեցման համար (վարունգ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, պղպեղ, և այլն):
4) Հատկապես ջերմոցներում, որտեղ կաթիլային համակարգը թույլ կտա իրագործել կայուն, տարիների ընթացքում խնդիր չհարուցող ոռոգում:

Կաթիլային ոռոգման առավելությունները.

1)Հողի օդափոխություն (քամահարում)

Կաթիլային համակարգի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո: Հողում եղած թթվածինը հնարավորություն է տալիս արմատային համակարգին ակտիվորեն գործելու:

2)Արմատային համակարգ

Արմատային համակարգը զարգանում է զգալիորեն ավելի լավ, քան ցանկացած այլ ոռոգման դեպքում՝ կենտրոնանալով կաթոցիկների շրջանում և վերածվելով ակտիվ արմատային թելիկներց բաղկացած առատ զանգվածի:

3)Մնուցում

Լուծված պարարտանյութերը ոռոգման հետ տրվում են անմիջապես արմատային համակարգին, ինչի արդյունքում տեղի է ունենում սնուցող նյութերի ինտենսիվ յուրացում: Սա շոգ տարածաշրջաններում պարարտացման ամենաարդյունավետ եղանակն է:

4)Բույսերի պահպանություն

Բույսերի տերևները չեն խոնավանում ինչպես անձևացման ժամանակ: Փոքրանում է հիվանդությունների տարածման հնարավորությունը, քանի որ մանրեասպան միջատները չեն լվացվում տերևներից:

5)Ագրոտեխնոլոգիա

Կաթիլային ոռոգումը թույլ է տալիս հողի մշակում, սրսկում և բերքահավաք իրականացնել ցանկացած ժամանակ՝ անկախ ոռոգումից, քանի որ շարքերի միջև ընկած հողատարածքները սեզոնի ողջ ընթացքում չոր են մնում:

Որոշ երկրներ հաջողությամբ անցում են կատարել կաթիլային ոռոգման համակարգին, որը թեև զգալիորեն տնտեսում է ջրային ռեսուրսները, սակայն դեռևս բավականին ծախսատար միջոց է:

Հաշվի առնելով, որ երկրի պարենային անվտանգության երաշխավորը՝ գյուղատնտեսությունն է, ուստի ոռոգման համակարգը կարգավորելը պետության կայացման լուրջ նախադրյալ է, հետևաբար և կաթիլային ոռոգման համակարգի նախատեսումը ևս արդարացված է:

2.1.4. Էներգամատակարարում

2.1.4.1. Էլեկտրամատակարարում

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում:

Ստորև աղյուսակում տրված է տեղեկատվություն ՀՀ Արագածոտնի մարզով անցնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ տնօրինության բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի վերաբերյալ:

Հ/Հ	Գծի կարգավարական անվանումը	Լարումը /կվ/	Երկարությունը /կմ/	Համայնքը, մարզը
1	Աշնակ-1	220	38.6	Արմավիր-Արագածոտն
2	Աշնակ-2	220	38.6	Արմավիր-Արագածոտն
3	Անուշ	110	29.8	Արմավիր-Արագածոտն
4	Բջնի	110	47.3	Արմավիր-Արագածոտն-Կոտայք

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է 10/0.4 կՎ լարման տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով:

Ստորև աղյուսակում տրված է ներկայումս համայնքում առկա էլեկտրամատակարարման համակարգերի տեխնիկական բնութագրերն ու էլեկտրաէներգիայի օգտագործման վերաբերյալ քանակական ցուցանիշներն ըստ բնակավայրերի /ըստ «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մասնաճյուղի տրամադրած տեղեկատվության/.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ (ԱՊԱՐԱՆ) ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ										
Բնակավայր	Գլխավոր սնուցող ենթակայաններ				10/0.4 ենթակայաններ			Էլ.էներգիայի տարեկան գումարային ծախսը,այդ թվում		1 մարդու փաստացի տարեկան սպառումը
	Անվանում	Լարումը ԿՎ	Հզոր-ը ԿՎԱ	Տեղա կայման-վայրը	Առկա տրանս-ֆորմա-տորների քանակը	Հզորութ-յունները ԿՎԱ	Տեղակայման վայրը	Կոմունալ կենցաղային	Արտա-դրական	
գ.Եղիպատրուշ	Հարթավան 35/10	10	4000	գ.Հարթավան	1	250	գ.Եղիպատրուշ	228282	22549	1951
					1	250	գ.Եղիպատրուշ	92108	45050	1842

Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշված է որպես հզորությունների գումար՝

ա.կոմունալ-կենցաղային պահանջներ, հասարակական, կուլտուր-կենցաղային շինություններ, հանգստի օբյեկտներ, արտաքին լուսավորություն,

բ.արտադրական օբյեկտների բեռնվածություններ:

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հաշվարկները կատարվել են ըստ հեռանկարային բնակչության և հանգստացողների քանակի:

Համաձայն ՇՆևԿ 2.07.01-89-ի՝ գյուղական բնակչության համար մեկ մարդու էլեկտրաէներգիայի սպառման տարեկան խոշորացված ցուցանիշը 950 կվտ.ժամ է, տարվա օգտագործվող ժամերի քանակը՝ 4100 ժամ:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրի էլեկտրամատակարարման հեռանկարային կարիքները բավարարելու համար պահանջվող առավելագույն հզորությունների, ինչպես նաև համայնքում առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

Բնակավայրերի հեռանկարային պահանջվող առավելագույն հզորություններն ու առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

N	Բնակավայրերի անվանումները	Հեռանկարային Բնակչության և հանգստացողների քանակը (մարդ)	Մեկ մարդու համար պահանջվող էլ. Էներգիայի քանակը (կվտ.ժամ/տարի)	Էլ. Էներգիայի գումարային ծախսը (հազ. Կվտ.ժամ/տարի)			Տարվա օգտագործվող ժամերի քանակը (ժամ)	Պահանջ-վող առավել-ագույն հզորությունը (կՎԱ)	Առկա Տրանս-ֆորմատորա-յին ընդհա-նուր հզորությունը (կՎԱ)
				Բնակչ.+ հան-գըստա-ցողներ	Արտադր. 15 %	Կորուստ 30 %			
1	Եղիպատրուշ գյուղ	808	950	767.6	115.14	230.28	4100	271.47	500
2	Մայլեռ հանգստավայր	75000	-//-	71250	10687.5	21375	-//-	25198	
Ընդամենը		75808		72017.6	10802.64	21605.28		25469.64	

Տրանսֆորմատորների առկա և հաշվարկային հզորությունների համեմատությունը ցույց է տալիս, որ ներկայում առկա տրանսֆորմատորային ենթակայանները, որոնք հիմնականում տեղակայված են գյուղի տարածքում և նախատեսված են գյուղի բնակչության կարիքները բավարարելու համար, հեռանկարում ևս կարող են բավարարել բնակչության հեռանկարային պահանջարկը, սակայն նախատեսվող հանգստավայրի հեռանկարային պահանջարկն ապահովելու նպատակով անհրաժեշտություն կլինի լրացուցիչ հզորությունների նախատեսում (կիրականացվեն աշխատանքային նախագծերի շրջանակում՝ առանձին գործառույթների կոնկրետ տեղադիրքերի ճշգրտման արդյունքում):

2.1.5. Գազամատակարարում

Ըստ ՏԿԵ նախարարության 03.12.2025 թվականի N 02/21/8834-2025 գրությանը կից Արագածոտնի ԳԳՄ N30-01-07/1762 գրությամբ ներկայացված նկատառումների՝ Եղիպատրուշ բնակավայրի տարածքում “Գազպրոմարմենիա” ՓԲԸ-ի կողմից անհատույց օգտագործման պայմանագրով շահագործվում և սպասարկվում է գյուղի ողջ գազահամակարգը: Ստորև ներկայացվում է գազահամակարգի ընդհանուր ցանկը.

ՀՀ	D (մմ)	L (գ/մ)		
1	2	3	4	
1	219	21	վ/գ	մ/ճ
2	159	1088	վ/գ	ց/ճ
3	108	203	վ/գ	մ/ճ
4	108	310	վ/գ	ց/ճ
5	89	11	վ/գ	մ/ճ
6	89	1165	վ/գ	ց/ճ
7	76	158	վ/գ	ց/ճ
8	57	1766	վ/գ	ց/ճ
9	ՊԷթ 90	8100	ս/գ	մ/ճ
10	Հաշվիչ հանգույց TZ G-160			
11	ՊԳԿԿ-50 1 հատ			

Նախագծային առաջարկություններ

1) Էլեկտրական համակարգի արդիականացում, վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխան:
2) Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:
3) Համակարգերի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:
4) Հին փայտյա հենասյուների փոխարինում նոր, բետոնե սյուներով:
5) Արտաքին լուսավորության նախատեսում բոլոր փողոցներում:
6) Բնակավայրերի տարածքով անցնող բարձր լարման հոսանքալարերի անվտանգության գոտիների առանձնացում, դրանց օգտագործման սահմանափակումների, ռեժիմների սահմանում:
7) Մայլեռ ծրագրի շրջանակում լեռնադահուկային հանգստավայրի տարածքում թվով հինգ նոր էլեկտրական ենթակայանների նախատեսում, որոնց տեղադիրքը նշված է նախագծի գրաֆիկական մասում:
8) Ջերմամատակարարման և տաք ջրի արտադրության առումով անհատական ջեռուցման կաթսաներին այլընտրանք կարող են հանդիսանալ արևային ջրատաքացուցիչները և էներգիայի սեփական կարիքների արտադրության համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերը:

2.1.5.1. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ

21-րդ դարի սկզբին ողջ աշխարհը գնում է հանքային ռեսուրսների խիստ տնտեսման և միաժամանակ այլընտրանքային էներգիայի աղբյուրների հայտնաբերման ուղղությամբ: Ընդ որում որոշ զարգացած երկրներ վաղուց են անցել այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման պրակտիկային ոչ միայն տնտեսական, այլև՝ բնապահպանական դրդապատճառներով:

Հայաստանի Հանրապետությում արտադրվող էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրներ համարվում են ատոմակայանը և ջերմային էլեկտրակայանները: Եթե հաշվի առնենք, որ ջերմակայանները աշխատում են գազով, ինչը ներկրվող էներգետիկ ռեսուրս է և կախվածություն է առաջացնում արտաքին աշխարհից, ապա Էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրի՝ ատոմակայանի, աշխատանքի դադարեցման արդյունքում ողջ հանրապետությունը կարող է կանգնել էներգետիկ սովի առջև:

Հաշվի առնելով մարզի կլիմայական պայմանները՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան:

Արևային ճառագայթմամբ աշխատող համակարգերի անվնաս ու անաղմուկ տեխնոլոգիայի հուսալիությունը, բաղադրամասերի երկարակեցությունը հաստատվել են տարիների ընթացքում և սկզբնական մեծ ներդրումները, որոնք պահանջվում են արևային համակարգերի գործարկման համար, արդարացնում են իրենց, ինչով էլ հենց հիմնավորվում է դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Որպես առավելություն հարկ է նշել նաև, որ արևային կոլեկտորների կիրառման համար առանձին տարածքներ հարկավոր չէ զբաղեցնել, քանի որ դրանք կարելի է տեղադրել անմիջապես շենքերի տանիքներին:

Հաշվի առնելով, որ ածխաջրածնային վառելիքը տարեցտարի թանկանում է, ուստի այլընտրանքային էներգետիկայի զարգացումն ավելի ձեռնտու է:

Արեգակնային էներգիան անսպառ և հուսալի աղբյուր է, որը տալիս է էներգետիկ անկախություն և չի աղտոտում շրջակա միջավայրը:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերի տեղակայման նպատակով արդեն իսկ իրականացվում են որոշ ծրագրեր, մասնավորապես՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» մասնակցությամբ Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում իրականացվում է «Էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը:

Հայաստանի կառավարությունը նախատեսում է աստիճանականորեն ընդլայնել այսպիսի ծրագրերի իրականացումը, խրախուսելով որ յուրաքանչյուր շինություն ունենա ջեռուցման և տաք ջրի արտադրության իր անհատական համակարգը՝ հիմնված վերականգնող էներգետիկ ռեսուրսների վրա:

Ըստ ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ.) նախատեսվում է վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում, որը, հաշվի առնելով դրանց՝ նվազագույն ծախսումներով էլեկտրաէներգիայի արտադրական հզորությունների զարգացման պլանի մաս կազմելու հանգամանքը, հանդիսանում է էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկը: Արևային կայանների կառուցումը, հանդիսանալով տնտեսապես ամենաշահավետը Հայաստանի պարագայում, հաշվի առնելով առկա ռեսուրսները և այս տեխնոլոգիայի զարգացման միտումները ողջ աշխարհում, կլինի գերակա մնացած տեսակների նկատմամբ՝ հաշվի առնելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները:

ՀՀ կառավարությունը նպատակ ունի մինչև 2026 թվականները արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասցնել 10%-ի, ինչը նշանակում է, որ կունենանք 1.2 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրանք արևային կայաններց, ինչի համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր 700 ՄՎտ արևային կայանների դրվածքային հզորություններ՝ ներառյալ ինքնավար կայանները:

ՀՀ կառավարության ծրագրերի ենթատեքստում Եղիպատրուշ բնակավայրի համար այլընտրանքային էներգիայի աղբյուրներն առավել քան հանձնարարելի են՝ հաշվի առնելով

առևային ռադիացիայի և պարզ օրերի քանակը: Բնակավայրի էներգիայի ընդհանուր ծախսի և հատկապես ձևավորվող լեռնադահուկային Մայլեռ առողջավայրի էներգետիկ կարիքների որոշակի հատվածի կամ ամբողջական սպառումը այնընտրանքային էներգիայի աղբյուրների հաշվին իրականացնելու միջոցով ինչպես բնակավայրը, այնպես էլ առողջավայրը ապահովված կլինեն կանաչ էներգիայի կիրառման հնարավորությամբ: Վերականգնվող էներգիայի արտադրությունը հիմնականում դրական երկարաժամկետ ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա, քանի որ այն կրճատում է հանածո վառելիքի վրա հիմնված էներգաարտադրությունը՝ դրանով իսկ կրճատելով ջերմոցային գազերի (green house gases) արտանետումները: Այլընտրանքային էներգիայի այլ տեսակների համեմատ արևային էներգիան ունի մի շարք առավելություններ: Նախ՝ էլեկտրաէներգիա արտադրելու համար արևային մոդուլները հումք և սպառվող նյութեր չեն պահանջում, միայն արևի լույսը բավական է՝ գեներացիայի համար: Արևային էներգիայի ինքնավար համակարգերը չունեն շարժվող մեխանիզմներ, ինչը զգալիորեն մեծացնում է հուսալիությունը շահագործման ընթացքում: Արևային մոդուլները չեն վնասում շրջակա միջավայրը և կենդանիներին: Հաշվի առնելով լեռնադահուկային առողջավայրի ռեկրեացիոն ուղղվածությունը՝ այլընտրանքային էներգիայի աղբյուրները համահունչ են հիմնական մոտեցումներին:

Ի լրումն, առողջավայրի էսքիզային առաջարկների վերջնամշակման շրջանակում առաջարկվում է շենքերի և շինությունների տանիքները կազմակերպել արևային վահանակների տեղադրման համար բարենպաստ անկյամբ:

Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սել/ՄՏՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ):

Մարզի բնակավայրերը 98%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով (օպտիկամանրաթելային և եթերային-շարժական): Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզում լարային հեռախոսակապ ապահովում է «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ) և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն (Ռոստելեկոմ ապրանքանիշ): Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի բնակավայրերի 88%-ը:

2.1.6. Աղբահանություն

Ըստ մարզպետարանի տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող տարածաշրջանի բնակավայրերի աղբահանությունն իրականացվում է համայնքապետարանի կողմից և հավաքված աղբը տեղափոխվում է համայնքի վարչական տարածքում գործող աղբավայր:

Աղբահանությունը մասնագիտացված բեռնատարներով իրականացվում է միայն քաղաքային բնակավայրերում, մասնակի կերպով, իսկ գյուղական բնակավայրերում միայն հարմարեցված տեխնիկական միջոցներով /ինքնաթափեր, լաֆետներ, այլ/:

Ապարանի տարածաշրջանի աղբահանությունն իրականացվում է համայնքապետարանի կողմից և հավաքված աղբը տեղադրվում է իրենց վարչական տարածքներում գործող աղբավայրում:

Ստորև ներկայացված է 11 հիմնական աղբավայրերի ցանկը.

ՀՀ Արագածոտնի մարզի 11 հիմնական աղբավայրեր				
Ապարան/Շենավան/	աղբավայր	0.7	Արագած Արայի	Համայնքի վարչական

			Ափնագյուղ	տարածքից հյուսիս-արևելք, հեռավորությունը բնակավայրից 4 կմ, Ապարանի ջրամբար տանող ճանապարհի հարակից տարածքում
			Եղիպատրուշ	
			Երնջատափ	
			Ծաղկաշեն	
			Հարթավան	
			Շողակն	
			Շենավան	
			Ջրամբար	
			Վարդենուտ	
			Քուչակ	

Առաջարկություն

Աղբահանության աշխատանքների բարեփոխման նպատակով նպատակահարմար է մարզում ստեղծել ժամանակակից չափանիշներին համապատասխան երկարաժամկետ և հեռանկարային, տարածաշրջանային աղբավայր՝ իր բոլոր ենթակառուցվածքներով, որը նպաստավոր պայմաններ կստեղծի աղբի վերամշակման արտադրություն հիմնելու համար:

